Գիրքը լուսապատճենահանվել է

"ՀամաՀայկական Էլ. Գրադարան"

կայքի` www.freebooks.do.am

կողմից եւ ներկայացվում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ՆՈՒՅՆՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ՆԵՐԴՐՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԱՐԱՃՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ ԼՈՒՍԱՊԱՏՃԵՆԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՑ՝

**www.freebooks.do.am**

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:

ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:




ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

# ՀԱՅ
# ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱ

# ՀԱՅ
# ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱ

«Ս. ՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ— 1985

# ՀԱՅ ԹԱՏԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Դասական երկը գեղարվեստական մնայուն երևույթ է, ժամանակի անողոք քննությանը ոչ միայն ազգային, այլև միջազգային չափանիշների դիմացող արժեք։

Հայ թատերագրությունը ևս ստեղծել է այդպիսի արժեքներ։ Ճիշտ է, շատ չեն այսպիսի բեմական երկերը հայ գրականության մեջ, բայց քիչ էլ չեն, եթե նկատի առնենք, որ աշխարհիս ամենամեծ գրական մշակույթների մեջ էլ դրանք սակավաթիվ են մյուս տեսակների գործերի համեմատ։

Ըստ ժամանակագրության՝ դրանցից առաջինը Գաբրիել Սունդուկյանի «Պեպո» կատակերգությունն է, որ բեմ է հանվել 1871-ին, նշանավորելով ռեալիստական թատերագրության և բեմական արվեստի հիմնադրումը հայ թատերական մշակույթի պատմության մեջ։

Կատակերգությունն ունեցել է աննախադեպ հաջողություն։ Դրա մեջ մեծ դեր ուներ այն պարագան, որ պիեսի կոնֆլիկտը ժամանակաշրջանի տնտեսական-սոցիալական, ուստի նաև մարդկային-բարոյական հարաբերությունների հարազատ արտացոլումն էր. նորահայտ առևտրա-վաշխառուական կապիտալը անողոքաբար քայքայում էր այն ամենը, ինչ ավանդական էր ու նահապետական, վերացնում էր ազնիվ խոսքի վրա հիմնված տնտեսական միամիտ հարաբերությունները, ավելի ու ավելի մեծացնում նյութական բարիքների բևեռացումը հասարակության վերնախավերում և ըմբոստություն հարուցում ներքին խավերի մեջ։

Պեպոն այդ ըմբոստության կրողը, սոցիալական ինքնագիտակցության հասած աշխատավորի առաջին կերպարն է հայ ոչ միայն թատրոնում, այլև բովանդակ գրականության մեջ։ Եվ արդարության ու ճշմարտության այդ իսկական ասպետի կերպարը դուրս եկավ ազգային շրջանակներից։ Զուր չէր, որ պիեսի առաջին ներկայացման մասնակիցներից մեկը՝ Միհրդատ Ամրիկյանն ասել էր «Պեպոն հայերեն կխոսի, բայց միայն հայ չէ, այլ ամեն ազգություն է»։ Դրանով պետք է բացատրել, որ ստեղծումից ի վեր, ավելի քան հարյուր տարի, պիեսը ներկայացվում է ոչ միայն հայ բեմում։

Թատերագիրն իր պիեսում հասել է նպատակադրված գաղափարի՝ մարդկային շիտակության և արդարության հակադրության գեղարվեստական բացահայտման՝ հոգեբանորեն հիմնավորված կատարելապես և բնավորությունների էությանը հարազատ կատարելապես. Կարծում ենք նույնիսկ, որ եթե նման հարաբերության գեղարվեստական-դրամատուրգիական փայլուն լուծումների եվրոպական մի հավաքածու ստեղծվի, Գաբրիել Սունդուկյանի գլուխգործոցն իր պատվավոր տեղը կունենա դրա մեջ։

Մինչև Մուրացանը հայ թատերագիրները հայրենասեր հերոսուհու շատ կերպարներ էին առաջարկել բեմական արվեստին, բայց նրանցից ոչ մեկը չի ունեցել Ռուզանի բարոյական ներքին ուժը, հերոսական վարքագծի հոգեբանական հիմնավորումը: Դա է, հիմք տվել հայ թատրոնի պատմաբան Վահրամ Թերզիբաշյանին անելու այսպիսի ստույգ ընդհանրացում. «Մուրացանը հայրենասիրության գաղափարը մարմնավորեց մի հերոսուհու մեջ, որը բարձրանում է որպես տիպար հայ պատմական ողբերգության բազմաթիվ հերոսուհիների շարքում: Մինչև Մուրացանը մենք գիտենք միայն նահատակ վկայուհիներ, ինչպիսիք են Հռիփսիմեն, Սանդուխտը, Շուշանիկը, որոնց հոգեկան ամբողջ բովանդակությունը սահմանափակված էր կրոնի և բարեպաշտության շրջանակներով: Մուրացանից առաջ հայ դրամատուրգներից ոչ մեկը չի տվել հայրենասեր աղջկա տիպարը այնպիսի խորությամբ ու գեղարվեստական ուժով, ինչպես Մուրացանը»:

Գլխավոր հերոսուհու այդ բարձր նկարագիրն է գրավել հայ բեմի նշանավոր դերասանուհիներին, նաև մեծն Սիրանույշին, անձնավորելու Ռուզանի կերպարը, հայրենասիրությամբ համակելու ժամանակակիցներին: Քննադատության մեջ ծագող վեճերը մի կողմ թողած, հայ թատրոնը հարյուր տարի է, ահա, իր խաղացանկում տեղ է տալիս «Ռուզան» պատմական դրամային, որ չէր կարող տեղ չգտնել նաև այս գրքում:

Ինչպես ասացինք, Սունդուկյանի բազմաթիվ պիեսներից «Պեպոն» է հայ դասական թատերագրության առաջին երկը, որ ճանաչում գտավ ազգային սահմաններից դուրս: Այդպիսի բախտի արժանացած երկրորդ պիեսը, ըստ ժամանակագրության, Հակոբ Պարոնյանի «Պաղտասար աղբար» կատակերգությունն է (1886):

«Պեպո» և «Պաղտասար աղբար»՝ Թիֆլիս և Կոստանդնուպոլիս քաղաքներում ստեղծված այդ պիեսների բեմական պատմությունները յուրովի արտացոլում են հայ թատրոնի երկու ճյուղերի ճակատագիրն անցյալ դարավերջի Ռուսաստանում և Թուրքիայում:

Այն ժամանակ, երբ Սունդուկյանի բոլոր պիեսները, առաջինից մինչև վերջինը բեմ են հանվել ու խաղացվել շարունակ, Պարոնյանը կարոտ է մնացել իր պիեսները բեմում տեսնելուն. 80-ական թվականներից մինչև 1908-ի պետական հեղաշրջումը սուլթանական մայրաքաղաքում հայերեն ներկայացումներն արգելված էին խստագույնս:

«Պաղտասար աղբար» կատակերգությունը բեմ է հանվել ստեղծվելուց տասը տարի անց՝ արևելահայ թատրոնում և դարձել հայկական խաղացանկի ամենաբանուկ պիեսներից մեկը: Տարիների ընթացքում կատակերգության արժեքն ընդգծվեց ու գնահատվեց ավելի ու ավելի, և մեր օրերում արդեն բեմ հանվեց նաև ուկրաինական (Լվով), ռուսական (Մոսկվա), վրացական (Թբիլիսի), ադրբեջանական (Բաքու) թատրոններում.

Ո՞րն է այդ հարատև հաջողության գաղտնիքը: Չէ՞ որ պիեսն այլ բան չէ, քան այր, կնոջ և սիրեկան ավանդական եռանկյունու մի յուրահատուկ արտացոլումը, այն էլ՝ չափազանց սերտորեն կապված Պոլսի հայկական միջավայրի բարքերի ու կենցաղի հետ:

Գաղտնիքն այն նոր բովանդակությունն է, որ դրամատուրգն ի հայտ է բերել այդ ավանդական, թերևս ամենից շատ ծեծված, չարչարված սյուժեի մեջ: Եվ այդ բովանդակությունը, որքան էլ կապված իր ժամանակի կոնկրետ միջավայրի բարքերի հետ, իր մեջ կրում է «համերժական» մի լիցք: Դա գեղարվեստական-դրամատուրգիական բացահայտումն է այն իրողության, երբ արդար ու միամիտ անհատը մեծագույն ջանք ու եռանդ է թափում իր արդարությունը հաստատելու համար, բայց որքան ավելի է ջանում, այնքան ավելի է հեռանում նպատակից, որովհետև չի հասկանում, թե որքան անպետք են իր գործադրած միջոցները՝ փայտե սրեր, որոնք փշրվում են բութ անտարբերության և միտումնավոր վերաբերմունքի քարակոփ պարիսպներին դիպչելով: Մարդը տեսնում է, որ օրը ցերեկով սպիտակը սև են դարձնում, սևը՝ սպիտակ, նորից ու նորից բացատրում է, թե ինչն ինչոց է, մինչդեռ նրան ասում են «հանցավո՛ր ես դուն», «արդարանալու հույս

թյան վերաբերմունքը նորվեգ թատերագրի պիեսների նկատմամբ, հատկապես Բեռնարդ Շոուի անհագ հիացմունքը Իբսենի պիեսներով, նրա հարցադրումներով)։ Ուստի և այն պատահական, որ Ալ. Շիրվանզադեն՝ 900-ական, 10-ական թվականներին հայ բեմում ամենից շատ խաղացվող թատերագիրը նույնպես կրել է Իբսենի ազդեցությունը, վկայում է և այդ տարիների հայ թատերագրությունն ու թատրոնը գտնվել են ժամանակաշրջանի բեմական արվեստի առաջապահ դիրքերում։ Այդ ազդեցությունն ամենից ակներև զգացվում է Շիրվանզադեի ընտանեկան դրամաների («Իշխանուհին», «Եվգինե», «Ունե՞ր իրավունք», «Արմենուհի») վրա։ Սակայն թատերագրի գլուխգործոցը՝ «Պատվի համար» դրաման, դուրս է այդ շարքից։ Դրա ստեղծման անմիջական ազդակն այլևս կյանքն էր, ժամանակաշրջանի անդրկովկասյան իրականությունն իր սոցիալ-տնտեսական տեղաշարժերով։

«Պատվի համար» դրաման ևս արտացոլում է ոչ այլ ինչ, քան նյութական-տնտեսական և բարոյական-ընտանեկան հարաբերությունների փոխազդեցությունը, «մարդիկ և դրամի իշխանությունը» վաղածանոթ թեման այն վաղածանոթ մեկնությամբ, թե ինչպես մոլի շահի ձգտումը, դառնալով անզիջմանելի կիրք, ավերում է մարդու մարդկային նկարագիրը, նրա մեջ սպանում խիղճն ու ազնվությունը։ Քրիստոսի ծնունդից ի վեր երևի ոչինչ այնքան դրամաներ չի ծնել կյանքում և այնքան դրամատուրգիական գրվածքների նյութ չի մղել, որքան «ոսկե հորթի» պաշտամունքը։ Նաև հայ գրականության մեջ, ուր նման կոլիզիան արծարծվել է հարյուրավոր գրվածքներում։ Բայց Ալ. Շիրվանզադեի «Պատվի համար» պիեսն առանձնանում է այդ բոլորից թեմայի արտահայտման հոգեբանական խորքով, բացառիկորեն ցայտուն բնավորություններով, թատերագրական վարպետությամբ։

Բայց ինչո՞ւ է դրաման կոչվում «Պատվի համար»։

Այս հարցի պատասխանի մեջ պետք է որոնել երկի գաղափարը և դրա արտահայտման վարպետությունը։ Թատերագիրն այնպես է հյուսել դրաման, որ բոլոր գործող անձանց վարքագիծը պայմանավորել է պատվի հասկացողությամբ և հենց դա էլ դարձել է դրամայի գործողությունն առաջ մղող գսպանակը՝ պիեսում ամենից շատ հոլովվող «պատիվ» բառը։ Միայն թե՝ նրանցից ամեն մեկն այդ բառն ըմբռնում է յուրովի։

Անդրեաս Էլիզբարյանը դիմում է ոճրի՝ քաղաքում հայտնի մարդու, աչքի ընկնող կապիտալիստի պատիվը փրկելու համար։ Նրա գործակից և աջակից Սաղաթելն այսպես էլ ասում է. «Իհարկե՛, այստեղ պատվի՛ խնդիր կա, փողն ի՞նչ...»։

Էլիզբարյանի ավագ որդին՝ Բագրատը, նոր տիպի այն կապիտալիստը, որն ուզում է դառնալ «հզոր ֆինանսական սյուն, մեկն այն հսկաներից, որոնց ձեռքումն է ժամանակի ամենամեծ ուժը՝ կապիտալը», պատվի նույն հասկացողությունն ունի՝ փաստաթղթերը պետք է ոչնչացնել հանուն պատվի։ Այդպես է մտածում նաև Ռոզալիան՝ մեծահարուստի մյուս դուստրը, մի թեթևամիտ արարած, որին կյանքում ոչինչ չի հետաքրքրում իր արդուզարդից բացի։

Պատվի քրիստոնեական սրբակրոն հասկացողությամբ է ապրում Էլիզբարյանի կինը՝ Ռանանայի աստվածավախ դուստր Երանուհին։ Պատվի հասկացողությամբ է առաջնորդվում Օթարյանը՝ տարիներ շարունակ Էլիզբարյաններն արհամարհանքով են նայել իրեն, ստորացրել իբրև իրենց հաշվին կրթություն ստացող ուսանողի։ Եվ ահա գտնված փաստաթղթերով նա ուզում է ապացուցել իր արդար իրավունքը և փրկել իր, իրենց ընտանիքի պատիվը։

Պատվի բարձրագույն ըմբռնումը թատերագիրը տեսնում է Մարգարտի մեջ, այն երիտասարդ կնոջ, որի համար պատիվը բարձր է ամեն մի նպատակից ու ձգտումից. դա ազնիվ հոգու այն օրգանական, անհրաժեշտ հատկությունն է, առանց որի չի կարելի ապրել, [illegible] ապրել այս աշխարհում։ Դա է հերոսուհու դրաման սկզբից ի վեր և պատվի բիրտ

Արի սրան ավելացնենք և այն, որ հեղինակն իր դրամայում, հոգի աշխատավորի [illegible] խորունկ իմացությամբ, պատկերել է գեղջուկների մի ամբողջ շարք [illegible], ինչպես նաև նրանց դասը պաշտպանող երիտասարդ փաստաբանի, որ, ի վերջո, [illegible] և անցնում իրեն հեղափոխական, եթե աչքի առաջ ունենանք, որ [illegible] կենդանի բնավորության հատկանիշներ և նրանց [illegible] միասնական [illegible] մեջ, ապա «Ժայռ» դրամայի ճանաչողական և [illegible] կդառնա

1910 [illegible] թվականներին եվրոպական և ռուսական թատերագրությունն ու թատ- [illegible] սիմվոլիստական ուղղությամբ. Հայ բեմն ու բեմական գրականու- թյունն [illegible] այստեղ նույնպես հայ թատերագրության մեջ [illegible] կարող է գնահատվել միջազգային չափանիշներով [illegible] Շանթի «Հին աստվածներ» դրամային, որ գրվել է Երևանում 1909 [illegible] բեմ է հանվել 1913-ին Թիֆլիսի Արտիստական թատրոնում՝ [illegible]

«Հին աստվածներ» [illegible] գեղագիտական մթնո- [illegible] Սրանց է [illegible] թատերագրության մեջ [illegible] պատրանքների և [illegible] միջոցները, բնականաբար, [illegible] սիմվոլիստական բնույթ:

Այդ [illegible] հայկական միջա- վայրում

[illegible] երկու դարձերու սա- [illegible] կրում էին [illegible] Հայկական [illegible] ծառանում էր ընդդեմ [illegible] հնազանդում ու համակերպում քարոզող քրիս- տոնեության [illegible] պատմական աղետալի ճակատագրի պատճառների, [illegible] կառուցված բնության, որին բախվելով փշր- վում [illegible] դարեր ի վեր փայփայված հույսերը:

[illegible] այդ ժամանակ է, որ արևմտահայ պոեզիան մղվեց դեպի [illegible] նախաքրիստոնեական հեթանոս ժամանակները՝ այնտեղ որոնե- լով [illegible] հերոսին Այդ ժամանակ է, որ Ավետիք [illegible] գրեց իր նշանավոր պոեմը՝ «Աբու-Լալա Մահարին»՝ բուրժուական քաղա- քակրթությունը [illegible], մարդուն ստորացնող ու ստրկացնող, ամեն ինչ մերժող հզոր [illegible] արաբական միջնադարյան բանաստեղծի հպարտ կերպարանքով

[illegible] «Հին աստվածներ» դրաման արդյունք էր հայկական միջավայրի տված [illegible] և միջազգային ազդեցությունների բարդ խաչաձևման

Բայց ինչո՞ւ «Հին աստվածներ»: Դրանք այն հեթանոսական աստվածներն են, որոնք, ի [illegible] քրիստոնեական աստծու, քարոզում էին ոչ թե հնազանդություն, այլ [illegible] ոգու և մարմնի ազատություն, պայքար ու մաքառում, հաղթանակ ու [illegible]

«Հին աստվածները» տիպիկ սիմվոլիստական դրամա է իր հարցադրումներով ու [illegible], իր ամբողջ գեղարվեստական հյուսվածքով, ուր շատ էլ հստակ չէ՝ իրա- [illegible] ավելի շատ, քան տեսիլները և որտեղ է ավարտվում իրականն ու [illegible] առասպելականը: Վանահայրը, Իշխանուհին, Աբեղան, Սեդան և մյուսները [illegible] սիմվոլիստական դրամայի հերոսներ են՝ մտածումի ու զգացումի, սիրո և պար-

և անկեղծության պահերին «Միշտ ինձ իրեն-իրեն կռվում էի, Կովի միջին խելք միտս էլ չի, թե կռվում եմ»: Բայց նա չի էլ կռվում, այլ նայում է, թե ուրիշները ինչպես են կռվում և ի՞նչ է դարձնում իր կենսափիլիսոփայությունը. «... Ի՞նչ խելք, ի՞նչ ճարպկություն, ի՞նչ զառանցանք Բա՛խտն է բանը, բա՛խտը: Բա՛խտ ունես—քե՛ֆ արա, ճո՛նն է ...»

Ահա ծեր բռնակալի անկեղծությունը, որ հասնում է ցինիզմի և ցինիզմը՝ հասած անկեղծության: Ծանոթ, շա՞տ ծանոթ երևույթ պատմության դառնահամ էջերից:

Սա է ընդհանրացումը՝ Քաջնազարական թագավորությունը մարդկային հիմարության և վախի վրա բարձրացող թագավորություն է.

1923-ին գրված պիեսում Դերենիկ Դեմիրճյանն, ասես, ընդհանրացրել է ոչ միայն նախորդ պատմության էջերում բազմած բազմաթիվ տիրակալների փորձը, այլև կանխել է ... հետագան, երբ այս կամ այն անունով բռնակալները նորանոր սյուրպրիզներ պիտի մատուցեին մարդկությանը՝ ժողովուրդների անպատմելի աղետների ներքո ...

Բնական է, նման մի պիես չէր կարող իր ստեղծագործությունը չգտնել համաշխարհային գրականության ու թատերագրության մեջ: Առաջնակարգ գեղարվեստական երկեր են ստեղծվել այդ թեմայով և մեր կարծիքով, Դերենիկ Դեմիրճյանի «Քաջ Նազար» գործը մեջ վերջին տեղը չի զբաղեցնում: Իսկ գեղարվեստական գործը դա ոչնչով չի զիջում, ասենք Ալֆրեդ Ժարիի «Արքա Ուբյու կարծեռան» պիեսին: «Քաջ Նազար», թեև, ... գեղարվեստական պիեսի պատմական ... ունի, բայց ունի հոգեբանական ավելի խոր ... ավելի բնական զարգացում:

Վերջին պատերազմական երկու տասնամյակին ... է գտնել այս համատեքստում, Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկ» ողբերգությունն է՝ ամենից բարձրարժեքը պատմական ողբերգություններից, որ հայ հեղինակները գրել են երբևէ: Իր գրական-դրամատիկական արժեքով Նաիրի Զարյանի գործը զգալիորեն տարբերվում է Արա Գեղեցիկի և Շամիրամի առասպելի այն բազմաթիվ մշակումներից, որ արել են օտար և հայ հեղինակները: Սա ոչ թե արևելյան զգայացունց սիրավեպ է, բուռն կրքերի հանդես ինչպես առասպելը մատուցվում է ավանդաբար, այլ դասական ողբերգության բոլոր պահանջները բավարարող մի վեհացունց հայրենասիրական երկ:

Ոչինչ ավելի բնորոշ չէ դասական ողբերգությանը, որքան հակադրությունը ներքին պարտականության և զգացմունքների միջև: Նույնն է և «Արա Գեղեցիկում», ուր այդ ողբերգական ծանր հակամարտությունը հանգեցել է հայրենասիրական բովանդակությամբ: Այսպես է խոսում Արան իր հոգին պաշարած հակառակ ուժերի պայքարի մասին.

*Երկու պատկեր, երկու կերպ այրվում են իմ հոգում՝*
*Նուարդ և Շամիրամ. Նուարդ և Շամիրամ*
*Մեկը մի պահ մարում է, մյուսն է բորբոքվում,*
*Կամ միասին և դեմ առ դեմ են փոթորկվում՝*
*Պառակտելով իմ սիրտը ... Ո՞ւր գնամ .*

Այս ներքին մաքառումն, ի վերջո, ավարտվում է հօգուտ Նուարդի, նույնն է ասել, թե հօգուտ հայրենիքի:

Սա է հայրենիքի անմնացորդ սերն է, երկի բովանդակ պաթոսը՝ խորապես պայմանավորված նաև ստեղծման ժամանակով (1944), երբ գերմանական հորդաների դեմ մղվող մահու և կենաց պայքարը հասել էր իր գագաթնակետին: Դիմելով հեռու հեռավոր ժամա-

ԳԱԲՐԻԵԼ
ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ

# ՊԵՊՈ

կատակերգություն
3 գործողությամբ

Երբ ես մտադրապես պատմեցի քեզ Պեպոյի բովանդակության գլխավոր միտքը, այն օրից սկսած՝ դու էլ ձեռք չվեր առար ինձանից. սովորի պես հետևում էիր ինձ՝ աշխատելով շուտով և շուտով հանել իմ գլխից քո սիրական Պեպոյին և գրչի տալ իմ խոսքերը:

Եվ ահա, 1870 թվի սկզբում, դու, ըստ սովորականին, վեր առար թուղթ ու գրիչ, և ես սկսեցի թելադրել քեզ Պեպոն, որը թեև շուտով ընդմիջվեց, բայց հիշյալ թվի նույն ամսին միևնույն ձևով շարունակվեց և վերջացավ Կրծանիսում:

Թերթելով այժմ Պեպոյի սկզբնական օրինակը, ես գտնում եմ, որ համարյա ամբողջ պիեսը քո ձեռքով է գրված, բացի մի քանի տեսիլներից, որ քո բացակայության ժամանակ օգնել են ինձ պ. Զաքարիա Բաբանասյանցը և մեր թատրոնի տաղանդավոր աշխատակից պ. Հովհաննես Ամերիկյանը:

Շնորհակալություն հայտնելով հիշյալ անձանց, նամանավանդ պ. Ամերիկյանին, որ ուրիշ շատ անգամ ևս օգնել է ինձ իմ թատրոնագրական ասպարեզում, ես չեմ կարող մոռանալ այն աշխատանքն ու անձնանվիրությունը, որ դու կրել ես՝ թե՛ ներկա հեղինակության, և թե՛ այլ գրվածքներիս մեծ մասի մեջ: Բայց այժմ խոսքս միայն Պեպոյի մասին է:

Քանի՛ և քանի անգամ՝ գործդ թողած, ամառային շոգ պապանաքին. ոտով եկել ես Կրծանիս և գնացել. քանի և քանի անգամ հետդ խորհրդակցել եմ, օգուտներ քաղել քո խորհուրդներից և ձանձրացրել քեզ իմ ծանր ու բարակ մասլահաթներով, քանի՛ և քանի անգամ ամբողջ ժամերով, գրիչը ձեռքիդ, անշարժ նստած ես եղել սեղանիս առաջ՝ ձևացնելով քեզ մեկ գրող մեքենա, երբ ես հեղինակելով՝ բոլոր իմ շարժվածքների ազատությունն եմ վայելել. քանի՛ և քանի անգամ երբեմն արագությամբ թերթեր ես լցրել իմ խոսքերով և սեպ-սեպ հանություն ցույց տալով, ուժ ես տվել ինձ շարունակելու, երբեմն էլ հոնքերդ տաքելով՝ կամ տասն անգամ կրկնել ես միևնույն վերջին խոսքերս, կամ լուռ ու մունջ մնացել, առանց մեկ բառ արտասանելու՝ կամենալով արգելք չլինել մտքիս ընթացքին: Ո՞վ գիտե՝ ի՛նչ մտքեր են ծագել քո մեջ այն ժամանակ, ի՛նչ մտքեր ես կլանել, ի՛նչ մտքեր զոհել, երբ ես, ուղեղս փորելով, աշխատելիս եմ եղել իմ միտքն արտահայտել, իմ խոսքերը գեղեցկացնել: Միով բանիվ՝ քո կամքը ենթարկել ես իմ կամքին, քո սովորությունները իմ սովորություններին, քո ժամանակն իմ ժամանակին, քո աշխատանքն իմ աշխատանքին. և այս բոլորը, բոլորը միայն նրա համար, որ Պեպոն շուտով լույս տեսնի, դու քո սիրելի թատրոնի համար մեկ նոր պիես ճարես:

Մտաբերելով անցյալը, մտաբերելով այն ժամերը, երբ Պեպոն գըր-

տարեցիր և կատարում ես ցարդ՝ բեմի վրա: Դու տվիր նրան շունչ և կենդանություն, քո խաղը գերազանցեց գրվածքից. իսկ պ. Ամերիկյանը, որ ներկայացնում էր Պեպոյի հակառակորդի պատկերը, և մյուս մասնակցող անձինք իրանց համեմատավոր խաղով օգնեցին մեզ ավելի պարզ ցույց տալու հարստահարված Պեպոյի համակրական ոգին:

Այն ծափահարությունք, այն ընդունելությունք, որ առաջին ներկայացման օրը ստացա հանդիսականներից թատրոնում, ես արդեն բաժանել եմ քեզ և քո ընկերների հետ: Այժմ թո՛ւյլ տուր ինձ, սիրելի՛ Գևորգ, խնդրել քեզ՝ ընդունել և այս նվազ նվերս իբրև նշանակ քո չափազանց աշխատության և հարկ՝ քո անսահման սիրույն դեպի մեր թատրոնը:

Քո ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆՑ

Թիֆլիզ
Դեկտեմբերի 1876

## ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՑ

*ԱՐՈՒԹԻՆ—60 տարեկան, միջին հասակով և կազմվածքով. երեսը կարմիր, [illegible] ածելած։ Սև ներկած կարճ մազեր, հաստ հոնքեր և խուզած բեխեր։ Եվրոպական հագուստ։ Սպիտակ շապիկ, գունավոր փողկապ, նույնպիսի ժիլետ և պանտալոն։ Սև սերթուկ և գլխարկ-ցիլինդր։ Ոսկե ժամացույց ոսկե շղթայով։ Գործ է ածում գունավոր մետաքսե թաշկինակ, փոքրիկ դեղին սաթե համրիչ և ծոցի մեջ պորտմոնե։ Շարժվածքը, ման գալն ու խոսվածքը ծանր։ Ըստ երևույթին պատվավոր անձն։*

*ԷՓԵՄԻԱ— 30 տարեկան, գեղեցիկ և վայելչակազմ կին, շեկ մազերով։ Եվրոպական մոդայի ամենաշքեղ բաց-կապույտ հագուստ, վրացնակ գլխով (չիքիլա, ոսկեկար ճակատագլուխ և այլն)։ Զարդարված է ոսկե ժամացույցով, երկար շղթայով և զանազան ակնեղեններով։ Պարանոցին կարմիր բանտ։ Խոսակցությունը, շարժվածքը և ման գալը արագ ու կրակոտ։ Շատ է քրքջում։*

*ՊԵՊՈ—35 տարեկան, թուխ և գեղեցիկ դեմքով, բարձր հասակով, ամուր կազմվածքով և լայն կրծքով։ Սև կարճ մազեր, ճակատի վրա բերած բարակ հոնքեր և բեխեր. երեսն ածելած։ Ունի երկու ձեռք Թիֆլիզի բուն լոթու հագուստ՝ մինը հասարակ, մյուսը զարդի։ Առաջինն է՝ չթե կամ սպիտակ շապիկ մուգ-կապույտ դոշլուղ, սև ղայթանով բոլորած. սև նաշուրի արխալուխ։ Լեզգու սև շալից չոխա առանց զարդարանքի. միևնույն շալից լայն շալվար ծայրերի ներսի կողմը զանգյալի մեջ չարչուրաղով ամրացրած, սև ղափաղավոր լափչիններ արծաթե նեղ քամար. կարմիր մորթե երկար գդակ, ծայրը փոքր ինչ ներս ծալած կարմիր բամբակե թաշկինակ։ Զարդի հագուստն է՝ մետաքսե կարմիր դոշլուղ և սև արխալուխ, երկուսն էլ բարակ ոսկեթելով բոլորած. դավայունի դեղին չոխա, սև լայն յափարիշով զարդարած նույն կտորից լայն շալվար, ծայրերը վերոհիշյալ ձևով ամրացրած սպիտակ ղափաղավոր լափչիններ կանաչ ղայթաններով. Բուխարու սև գդակ, ծայրը կտրած Իմերեթու մետաքսե գուտիկ կապույտ բամբակե թաշկինակ։ Քայլը հաստատ, ձայնը քաղցր և ազդու, շարժվածքն ու խոսակցության ձևերը բուն ժողովրդական։ Միշտ գլխարկով, բացի նշանակած տեղերից։*

*ՇՈՒՇԱՆ—50 տարեկան, այրի կին. միջին հասակով և հաճելի դեմքով։ Վրացնակ հասարակ հագուստ։ Մե տակ (ցածր կապած) գլուխ (սև ճակատ-ագլուխ, սպիտակ հաստ յայար և փաթաթելու)։ Սև տերնոյից կամ ալպակայից հասարակ դերիա, կուրծքը ծած-*

# ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

*Բեմը ներկայացնում է հին ձևի աղքատիկ սենյակ թարեքներով, դոլաբներով, լուսամուտով և երեք դռնով՝ աջ, ձախ և դիմացը։ Ձախ կողմը (հանդիսականների կողմից) գորգով ծածկած տախտ նահալով և մութաքաներով, իսկ աջ՝ հասարակ սեղան, գունավոր սփռոցով ծածկած։ Սենյակի այս անկյունում մի թոկ կա կապած։ Դոլաբներում և թարեքների վրա դարսած են հինօրյա պղնձե, կավե ու փայտե ամաններ ու զանազան ձևի գինու բաժակներ։ Մի քանի հասարակ աթոռներ լրացնում են սենյակի կարգը։ Կեսօր է։*

## Տեսիլ առաջին

ՇՈՒՇԱՆ, տախտի վրա նստած, գուլպա է գործում, ԿԵԿԵԼ, սեղանի մոտ, աթոռի վրա նստած, շտապով կար է անում, առջևը կարի գույնզգույն բոխչա.

ՇՈՒՇԱՆ— *Չիս իմանո՞ւմ, քա՛։*

ԿԵԿԵԼ— (Թել վերցնելով բոխչից) *Ա՛յ, էս էլ պրծնիմ, դեդի։*

ՇՈՒՇԱՆ— *Թո՛ղ, մի քիչ դնջացի, ի՛ժում պրծի։*

ԿԵԿԵԼ— *Չի ըլի, դեդի, է՛, հորես տերը գու ջա։*

ՇՈՒՇԱՆ— *Նրա աճկն էլ կարիմ, խիստ շատ է տալի՛։*

ԿԵԿԵԼ— *Բանն էլ էտ է, է՛ դեդի. ինչրու նրա գալը դիփ հազիր վուր ըլի, էլ թամամ գինը չի տա։ Խո դի՛դիս ինչ անուստուձն է։*

ՇՈՒՇԱՆ— *Ախար, աճկիդ լուսը խո չի՞ս կանա հանի. սաղ գիշեր, էնց բանե, չիս քնի ու ջեր վո՛ւրդի էր ծեքը, վուր էլի բանի նստեցար։*

ԿԵԿԵԼ— *Ի՞նչ անինք, դեդի, խղճի հացը էժան չէ ճարվում։*

ՇՈՒՇԱՆ— *Հե՛րիք արա, հե՛րիք, վուրթի։ Ջա՛նդամը միր գլուխը, վունցոր ըլի կու ապրինք։*

ԿԵԿԵԼ— *Էս սահաթիս, դեդի ջան, ա՛յ, աստուձ գիդենա քիչ է մնացի։*

ԳԻՔՈ— Հա՛, բան ունիմ ասելու

ՇՈՒՇԱՆ— (Ծնկանը խփելով) Վո՜ւյ, քոռանամ յես, ի՞նչ խաբար է։

ԳԻՔՈ— (Ուղղվելով) Ի՞նչ նաբա՞ր...

ՇՈՒՇԱՆ— Հա՛։

ԳԻՔՈ— Լավ խաբար չէ, Շուշան։

ՇՈՒՇԱՆ— (Ավելի վախեցած) Ի՞նչ է, խի՞խավիլ է՞։

Կեկելը, կարը թողնելով, վախեցած նայում է նրանց։

ԳԻՔՈ— (Զարմացած) Ո՞վ է խիխավի. ի՞նչ իք ասում։

ՇՈՒՇԱՆ— Պե՛պոն. բաս չէ խի՞խավի։

ԳԻՔՈ— (Երեսը խաչակնքելով) Տե՛ր օղորմած աստուձ. էտ յիս չիմ իմանում, ի՞նչ իք ասում։

ՇՈՒՇԱՆ— Ախար, իրիգուն կեսգիշիրին դամբը վիկալավ, գնաց ու ջեր չէ տուն էկի։

ԳԻՔՈ— Վա՛, օխնած հոքի, վախեցա. նա ի՞նչ խիխավիլու ահ ունե... էն ի՞նչ Քուռը պիտի ըլի, վուր նրան ախտե։

ՇՈՒՇԱՆ— Բաս ի՞նչ խաբար էիր ասում։

ԳԻՔՈ— Ի՞նչ խաբար էի ասո՛ւմ...

ՇՈՒՇԱՆ— Հա՛, մե չո՛ւտո ասա, թե աստուձ կու սիրիս։

ԳԻՔՈ— Մո՛ւլափ, է՛. մի քիչ հա՛մփիրութին ունեցի, հեր օխնած։ Աստուձ շատ բանիր է գրի մարթու ճակտին՝ վախտ կա ուրախութին, վախտ կա տխրութին։

Գրպանից հանում է բրախոտի տուփը։

ԿԵԿԵԼ— (Առանձին) Ինչկլի կոսե, իմն ինձ կու հասնի։

ՇՈՒՇԱՆ— Միզ համա խո զարթնի տխրութինը աստուձ ուրիշ բան չէ տվի։

ԳԻՔՈ— Ի՞նչ անիս. Շուշան, աստձու ձեռին է՝ ուրախութինն էլ, (Հոտոտում է) տխրութինն էլ... (Կրկին հոտանջում է և բրախոտ քաշում) ...ր մ... է՛է... Վունցոր աստուձ դուզե, էնենց կուլի մարթու բանը։

ՇՈՒՇԱՆ— Նրա կամքն ըլի, ի՞նչ անինք։

ԳԻՔՈ— Է՛տենց է, է՛տենց, Շուշան... Ախար, էսօր առուտեհան լավ բան չիմացա. էլ չդինջացա, ինչրու չգնացի ու ձիր փեսի հիդ դեմուդեմը չխոսեցա։ (Կեկելին) Շատ հարց ու բարով արավ քիզ, ա՛յ Կեկել։ (Կեկելը թեթև գլուխ է տալիս Գիքոյին, առանձին աչքերը սրբում է և կարը ...ումակում) Խիստ իմ կարոտի, կո՛սե... (Քթախոտ քաշելով) Հը՛մ... ...

Կեկելը նույն միջոցին դարձյալ սրբում է աչքերը։

ՇՈՒՇԱՆ— Հալեցիր ու մաշեցիր խոմ, Գիքո. մե ասա՛ ու պրծի, է՛լի։

ԳԻՔՈ— Գիդիս ի՞նչ է, Շուշան. (Ձայնը ցածրացնելով) մե ախչկաա դուս զրկե ախար, է՞։

ՇՈՒՇԱՆ— (Ցածր) Նա իր բանին է, ի՞նչ կու իմանա. ցա՛ծր ասա։

ԳԻՔՈ— Վուր իմանա, լավ չի, Շուշան, է՞. չի՛ս գիդի թե խիկարն (Ցուցամատը ճակատին տանելով) ինչիր է ասում չատու վրա։

ՇՈՒՇԱՆ— Խիկարն ո՞վ է, քա՛. նա՛ էլ խառն է չատումը։

ԳԻՔՈ— (Միծաղելով) Հը՛, հը՛, հը՛, հը՛... (Միծաղը դառնում է հազ) հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ...

ՇՈՒՇԱՆ— (Առանձին) Ա՛յ, աստծու կրակ, թե ասիս ու պրծնիս։

ԳԻՔՈ— (Հազը շարունակելով) Խիկարը, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ... փիլիսոփա... էր. հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ... (Պեպոն կուլիսի ետևից երգում է՝

«Շարա՛բի Շամ շուգա սաթ
Շուրհի նա դարագ»)

ԿԵԿԵԼ— (Առաջ վազելով և ուրախ) Ա՛յ, Պեպոն։

## Տեսիլ Գ

ՆՐԱՆՔ, ՊԵՊՈ

ՊԵՊՈ— (Երգը շարունակելով, ներս է մտնում դիմացի դռնից՝ գլխարկով, ճասարակ ու ճազուստով, թևքերը ետ ծալած, դամբը (ոտկան) ուսին և առջևը գոտկից կապած կարմիր թաշկինակում կենդանի ձկներ)։

«Արաղի քիշմիշ սաթ,
Բար դար փիալա,
Գեալ ալլաշ»*

ԿԵԿԵԼ— Անկեներուս խո ջուր կտրեցիր, Պեպո։

ՇՈՒՇԱՆ— Ինչի՞ գիդիս, տո՛, կէհաս ու կու կորչիս։

ՊԵՊՈ— (Ուրախ) Վա՛, է՛սենց վուր չանիմ, աստուծ մանանա խո չէ՞ ղրկիր զրկում միզ համա... Օ՛, Գիքո, լավ վուխտ իս էկի։ Մե մուրծևք

---

* Պարսկերեն է. Գինին Դամասկոսի է եղել,
Կասկածանք չկա,
Հյութը քիշմիշի է,
Վե՛ր առ փիալան,
Բաց Անեն, Ո՛վ նատիր։

ԳԻՔՈ— Էրկուսը մեռի լավ է, Պեպան, թե սատուն կու տա։

ՊԵՊՈ— Տո՛, է՛ոդադա տարի է ապրում իս աշխարքումն ու չի՞ս գիդի, վուր փո՛ւղը սատուն չէ բաժնո՛ւմ։ Թո՛ղ սատուն մենակ ջան տա ւ'արթու, փո՛ւղ է ու փուղ։ (Դամբը բաց անելով) Փո՛ւղով իմ սար է՛ս։ (Իր կրծքին խփելով) Ա՛յ, սաղ ըլի... (Կռացած դամբը զննում է) Օ՛, հո՛, հո՛, հո՛, հո՛... ինչ դամբ է՛. էնդադա գցեցի, էլի սաղ սալամաթ է մնացի... Պետրե-Մորեվի պես տիղ չի ըլի. փռում էի թե չէ՜, զը՛մ-զը՜մ, դուս էին գալի լոթիքը խըլպըլտալի։ Խալխը վուր խիք ունենա, էսանց էլ բան ու գործ չի ունենա։ Էն վուր գցում իս... ու նուրս յուս քաշիլը, սիրտդ՝ դը՛նգդը՜նգ կոսիս թե մահ ու կինքդ պիտի բաժնի։ Թե մութ գիշիր էլ է, հենց գիդենաս սատդիրը հիդդ մալահաթ ըլին ունում, ու թե լուս է խոմ՝ կոսիս լուսնիակը գլխիտ փարվնի պես կանգնած է լոթին... Էշխումն էլ վուր տուն իս գնում ու վուտնիրտ էլ բաց է ըլում, ու մե բաշ փռում իս... Օ՛հ, չե՛նի կի ձիրի մե... (Ձեռվից զցում է դամբը Գիքոյի գլխին, Գիքոն մնում է մեջը) Օ՛հ, օ՛հ, օ՛հ... Գիքո, ինչ ձուգն ի՛ս, արդի պղինձ պիտի ըիլ։

Ծիծաղում է

ՇՈՒՇԱՆ— (Ծիծաղելով) Տո, բա՞ դըռս կտունք է։

ԳԻՔՈ— (Ազատվելով) Տո՛, վախեցա, է՛յ. էս ի՞նչ հանգի հանաք է։

ՊԵՊՈ— (Դամբը նայելով) Բաս դիփ մե՞ գլուխ խո չիմ լաց ըլի.. Միրաս վուր դարդին սուր տամ, լուրի պես կու տրաքի։

ԳԻՔՈ— Չէ՛, ասյինց, մի քիչ անդնչում իս։

ՊԵՊՈ— (Դամբը թոկի վրա փռելով) Բաս չէ ու քի պես հում-հում խաշլամա կուլիմ. բունութին քնթեմես ծըծլալի դեվեր ըլի գալի ու ինչ-րու մե բան ասիմ, ուխտի լոխմի պես խոսկիրը բերնումս ծամում ըլիմ... (Ծիծաղում է) հա՛, հա՛, հա՛, հա՛...

ԳԻՔՈ— Հե՛յ գիդի, Պեպան։

ՇՈՒՇԱՆ— Տո՛, քա՞նի ասիմ, մե անդաձ դի ախպր, է՜. սիրտս շուտ ըկալ. ինչոր փիս խաբար է իմացի միր փեսի դեյիրը։

ՊԵՊՈ— (Վախենալով) Ի՞նչ փիս խաբար։

ԳԻՔՈ— Մե նստի, Պեպան, հենց ասիմ։

ՊԵՊՈ— Էսենց էլ լավ իմ, ասա՛։

ԳԻՔՈ— Չէ՛, վուր նստիս, ուփրո լավ կուլի։

ՊԵՊՈ— (Նստելով) Տե՛ր օղորմած սատուն։ (Մոտ է քաշում մեկ աթոռ և նստում Գիքոյի ձախ կողմը) Հը՜, է՛ս էլ նստեցա։

ԳԻՔՈ— Մո՛ւլափ, է՜. տաքնալով բան չի դառնա, ախպր։ Պիտի միտք անինք, թե վո՛ւնց ստկինք բանին։ (Որոնում է բախտի տուփը) Ինչ լավ, տո՛, էստի էր։

ԳԻՔՈ— Ջեր անգաճը բաղմնչու արավ, ամա վիրչը կոտրվեցավ ու իմացածս ղուրթ դուրս էկավ։ Կինաղամ լիզուս փուրը ննգավ, չսօրվան անմահ պատառաքը գիդենա։

ՇՈՒՇԱՆ— Վո՜ւյ, գեդինը պատռե ու նրան դեվեր տանե վո՜ւյ։

ՊԵՊՈ— (Բարկանալով) Վա՜, ղժվի՞լ իս, թե՜ հանաք իս անում։

ԳԻՔՈ— Իմ հոգին գիդենա։

ՊԵՊՈ— Տո՜, իժում նա ի՞նչ ասավ։

ԳԻՔՈ— Նա էլ էն ասավ, վուր յիս ձիր Կեկելին խիստ իմ ուզում, կոսե, ամա բանը վուր գլուխ չէ գալի, կոսե, յիս ի՞նչ անիմ, կոսե։

ՇՈՒՇԱՆ— (Երկու ձեռքով ծնկներին խփելով) Մտի՜կ էն աննամուսին, է՜։

ՊԵՊՈ— (Բարկանալով) Վո՞ւնց թե գլուխ չէ գալի։

ԳԻՔՈ— Էնենց, էլի՜, ասում է՝ ինչի՞ ինչ խոստացիլ իք, չիք տալի, կոսե։ (Հոգվոց հանելով) Է՜հ, աստուձ։

ՊԵՊՈ— Վո՞ւնց թե չինք տալի... Տո՜, գա՞նա ինքը չի դիդի բանի զո-րութինը՜։

ԳԻՔՈ— Յիս ինչրու վո՞ւր մե օրը մնամ, կոսե։

ՇՈՒՇԱՆ— Ո՞ւր է մնում, ո՞վ է ասում նրան վուր մնա։ Թո՜ղ ուղե, խոստացածն է՜նդի չէ՜։ Յիփոր դուս գու քա, իրն է ու իրը... աստուձ անե քու դիվանն, Ա՜րութին։

ԳԻՔՈ— Նա էլ էտ է ասում, Շուշան, է՜. յիս ասում է ախչիկ իմ ուզի, կոսե, դավի-դառաքա խոմ չի՜մ անում, կոսե։ (Գլուխը շարժում է։)

ՊԵՊՈ— Տո՜, էտունք դիփ մետի խո հարուր ջեր խոսիլ ինք. հիմի նո՜ւր չար, նո՜ւր բարի՜։

ԳԻՔՈ— Բանն էլ էն է, Պեպո ջան, վուր նա ասում է՝ էտ բանն, ասում է, տարիք կու քաշե, կոսե, ու յիս էլ չիմ կանա համփիրի, կոսե. կնի՜կ ո՛գիլը խիստ իմ ուզում սրտով, կոսե։ (Աղաղակում է) Մի՜ղա քիզ, աստուձ, միղա՜... էս իմ միրիկի պատիժն է դիփ։

ՇՈՒՇԱՆ— Մե խոսկով ասա՜, Գիքո, վուր Կեկելին թողնում է, էլի՜...

ՊԵՊՈ— Ու բանը մո՜շլա է ըլում։

ԳԻՔՈ— Թե էս սահաթիս փուղը չճարեցինք, մոշլա արած է ու մոշլա արած։

ՊԵՊՈ— Իստա՞կ։

ԳԻՔՈ— Ի՜ստակ, ի՜ստակ։

ՊԵՊՈ— (Զարացած վեր է թռչում տեղից և մի քանի քայլ առաջ նետվելով՝ ձեռքը ձեռքին խփում) Վա՜յ, քու տղիս տղա... (Ետ դառնալով դիմում է Գիքոյին՝ ձեռքերը առաջ տանելով) Տո՜, իժում ի՞նչ անիր։

ԳԻՔՈ— (Հետ քաշվելով, վեր է կենում տեղից) Դուն ինձ ասա՜, էլ ի՞նչ պիտի անի։

## Տեսիլ Ե

ՊԵՊՈ— (Մենակ, մի փոքր լռությունից հետո) *Ուրիշ ա՛խչիկ կուզի՞ս. բաս Պեպոն մեռավ, է՞լի... Տեսնիմ վո՞ւնց իս ուզում...* (Նորից լռություն) *Չէ՛, Պեպո, դուն հալալ տղա իս, հալալութինը սիրում իս, քու բանումն էլ հա՛լալ կաց։ Ինչո՞վ է սուտ քի մոդ քու փեսեն. խո՛ստացիլ իս, պիտիս կատարի քու խոսկը.. Թե գլխիտ գդակ ունիս, պիտիս տաս. Թեգուզ կաշիտ պլոկվի, թեգուզ հոքիտ դուս գա, պիտիս տաս... Ամա վո՞ւրդի ճարիմ էն զա՛հրումար փուլը.. Ո՞վ կու տա ինձ էնղադա...* (Նայում է պատերին) *Ո՞վ ինչ կու տա էստուր. գիփ մեռի վուր գրավ դնիմ, գիփ մեռի վուր ծախիմ՝ տուն, տիղ, շուր ի՞նչ կու տան... Կիսի կեսն էլ չի դուս գա.. Է՛ս էր վիրջն, է՞լի, էս էիր ուզում, է՞լի, Արութին. Էստու համա էիր չարչըրում, է՞լի, ինչըու հիմի... Աշխրքումը պիտի խայտառակ ըլիմ, է՞լի... Էլ իմ ննգրտերանց էրեսին վո՞ւնց մտիկ անիմ. Ի՞նչ կոսին։* (Գլխարկը ճակատին է խփում) *Փո՛ւ քու նամուսին...*

## Տեսիլ Զ

ՆԱ, ԿԵԿԵԼ

ԿԵԿԵԼ— (Շփոթված ներս մտնելով ձախ դռնից) *Էս ի՞նչ խաբար է, Պեպո։*

ՊԵՊՈ— (Գլխարկը վերցնելով և թափ տալով) *Վուչինչ, ի՞նչ խաբար պիտի ըլի։*

ԿԵԿԵԼ— *Ի՞նչ իս ինձանեն թախկացնում..* (Լալով) *Ցիս իմացա, գիդի իմացա, Պեպո.*

ՊԵՊՈ— (Գլխարկը ծածկելով) *Ի՞նչ իմացար, Կեկել, ի՞նչ իս լաց ըլում։*

ԿԵԿԵԼ— (Թաշկինակով սրբում է աչերը և կսկիծով) *Իմացա, Պեպո ջան, իմացա. էս ահաթիս գեղէն ու Գիքոն վուր գնացին... Նրանց խոսիլն իմացա. ինձ թո՞ղնում իս ..*

ՊԵՊՈ— *Մո՛ւլափ, մո՛ւլափ, Կեկել, ջեր էլի աստուծ օղորմած է...*

ԿԵԿԵԼ— *Աստուծ շատ վուխտ է՝ խռով է կացի իմ գլխին, էլ ի՞նչ օղորմած է... Խալխումն ինձ պաշ անեն, գիփունքը չնահանլուրին, իժում ինձ թողնե ու գնա ո՛ւրիշին ուղե՞... Է՞ստու համա սրտիցծից ինձ ասսո՞ւծ.. Միթամ անմիդ փալաս էի, քուչեն գցեցին. միթամ քուչի ցիխ իմ, թո՛ղ վուտի տակը կոխչուրին... Վա՛յ իմ նամուսին.* (Լաց է լինում և աչքերը սրբում):

ԿԱԿՈՒԼԻ— Հը՛, է՞լի տեսիլ ես նրանցը՛։ Հի՛ոու կացի, թե ախպեր ես։

ՊԵՊՈ— Թո՞ղնում ես, վուր հի՛ոու կենա՞մ։

ԿԱԿՈՒԼԻ— Արի՛, մե-մե ստաքան գցենք ջեր հալա, թե անդիկորը չեն կորչի ու կու տեսնես... Վաղ ու վաղ ինձ մոդ էլ խիստ չուստ-չուստ էին գալի, ամա (Խփում է կես-թունգանոցին) դիզը գթա... Հանց պուզիրը տեսնում իմ թե չէ՝ շաբա՛շ (Վրա է քաշում կես-թունգանոցը, հետո երգում է բայաթի).

«Ազիզմ, նաշար, աղլամա,
Գյուն ըըր, գեշար աղլամա.
Բու դաֆի թարս բաղլիան»

ՊԵՊՈ— (Գլուխը շարժելով, կիսաձայն ու թիվ) «Բիր գյուն աշար, աղլամա»։

ԿԱԿՈՒԼԻ— (Շարունակելով երգը, վերջացնում է բայաթին) «Բիր գյուն աշար, աղլամա»*։ Աբա՛, (Կես-թունգանոցը առաջարկելով Պեպոյին) տի՛ս թե թրի սես չկտրե։

ԿԱԿՈՒԼԻ— Է՛յ։

ԿԱԿՈՒԼԻ— Ջխկո՞ւմ. տեսնում իմ խիստ մի՛նձիրն են էկի, է։ Հը՞, վո՞ւնց ես... (Թաշկինակը և գինու ամանը դնում է սեղանի վրա և ձեռքերով պտղեր ներկայացնում) էս էսղադա պո՛ւզիրը... Հը՞... ջեր արթուրմեքը սարքիլ ի՛ն թե չէ։ Ախար, կու ճանչնամ ի՛նչ պտուղ էլ ես, է՞։

ՊԵՊՈ— Հանաքի վուխտը չէ, Կակուլի, թե աստուծ կու սիրես. բողազներուս դուս է կտրվում։

Վեր է կենում տեղիցը։

ԿԱԿՈՒԼԻ— Վա՛հ, ի՞նչ խաբար է։

ՊԵՊՈ— Էլ ի՞նչ խաբար պիտի ըլի, բեզնամ ինք ըլում. քվիրս թողնում ին։

ԿԱԿՈՒԼԻ— Փեսե՞ն։

ՊԵՊՈ— Բաս ուրիշ ո՞վ կուլի։

ԿԱԿՈՒԼԻ— Է՛յ։

ՊԵՊՈ— Աստուծ գիդենա։

ԿԱԿՈՒԼԻ— Վա՛յ, յիս նրա... Արի գնանք ծեծինք. Պեպո. մի՛ ալիղուլի ծեփիմ էս սհաթիս, վուր սապոկի կրնգի վրա յիրիք ջեր վրա ու

---

* Թուրքերեն է՝

Սիրելիս, ա՛նճար, մի՛ լար,
Օր է, կանցնի, մի՛ լար.
Այս դուռը թարս կողպողը
Մեկ օր բաց կանե, մի՛ լար։

ԿԱԿՈՒԼԻ— Էէէ՜... ա՛յ, թուրմե ի՛նչ բան է էլի... Տո՛, Պեպո, ինքն Արութինը չըլի՞ գողցի էն բարաթը։

ՊԵՊՈ— Է՜հ, ի՞նչ խս սարսաղ-սարսաղ դուս տալի, տո՛, միր ղութումը նա ի՞նչ դավի ունեբ։

ԿԱԿՈՒԼԻ— Բաս ո՞վ կու գողներ, Պեպո։

ՊԵՊՈ— Վուր գիդենամ, խո միզ համա էլ լավ կուլի։

ԿԱԿՈՒԼԻ— Կո՞ւլի քու հերը հիդը տարավ, տո՜։

ՊԵՊՈ— Մինք էլ էտենց ինք ասում. կուլի շուր հաքցնելիս հիդը դնաց։

ԿԱԿՈՒԼԻ— Մտի՛կ է՜... Աբա էն կինքումը թա՛մաշա արա, Պեպո, թե ի՛նչ կոնին աղա Արութինին։ Չուրս-չուրս սատանեն վուր բարաթն աշխվը կու ձքին, վա՛յ, վա՛յ, վա՛յ, դե՛դի ծծիր, դո՛ւն բարեխոս... Նետայի մե թամաշա անիլ տան, Պեպո ջան, թեգուզ հենց էտու խաթիր կէհամ դժուխքը։ (Մեծաղում են) Տո՛, հանաքը դենը, էլի լա՛վ պտռտեցեք, կուլի գթնըվի։

ՊԵՊՈ— Տակն ու վրա ինք արի տուն ու տիղը, ի՞նչս ասում։

ԿԱԿՈՒԼԻ— Իժում էն գոմշի գլուխն էլ գիդե՞, վուր բարաթը կորիլ է՜։

ՊԵՊՈ— Գիդե, վուր չէ տալի, է՜։

ԿԱԿՈՒԼԻ— Տո՛, խո գի՞դե վուր պարտ է։

ՊԵՊՈ— Բա՛ս չի գիդի՜։

ԿԱԿՈՒԼԻ— Դե՛, տա, է՜։

ՊԵՊՈ— Անկճիտ բամբակը հանե՛, տո՛. էն մարթն ասում է թե՝ միտս չէ, կասե, դավթըրներումս չիմ գթնում, կասե, բարաթը բի, ասում է, ու փո՛ւղը տար, կասե։

ԿԱԿՈՒԼԻ— Աստուծ գիդենա, Պեպո, զարթնի դնքսիլը ուրիշ ճար չկա։ Դուն ինձ թո՛ղ. էն Օրթաճալեմեն վուր յիդ է գալի, ձեռնիրը էհենց դարսած, (Ձեռքերը ետևն է դարսում և մի քանի քայլ անցնում Արութինի նման) հե՛ստիկ շինիմ, հե՛ստիկ շինիմ, վուր սեփիլի բայաթի կանչիլ տամ յիս նրան։

ՊԵՊՈ— Էրանի՜ քիզ, Կակուլի, վուր քուր չունիս մարթու տալու։

ԿԱԿՈՒԼԻ— Էտու համա էլ դարդ չէի անի. ձիզ պես կուպեծներու էդնեն չէի ննգնի։ Վիրջի կինտոյին կու փո՛խիմ նրանց հի՜դ։ Միզ վուր ստիղծիլ է աստուծ, թռչունքի հանգն է ստիղծի՝ օր դադինք, օր ուտինք, էլ մեռնելիս անդերձի գլուխ ո՞վ ունե, տո՜։

ՊԵՊՈ— Լա՛վ է, լա՛վ, խիլքիտ մի՛ զոռ տա, հերիք է. գնա՛ էն մուրծեքը մորթոտե՛, նստինք մե-մե թիքա չոռլամիշ ըլինք, իժում տեսնինք՝ աստուծ ի՛նչ է տալի։

ԿԱԿՈՒԼԻ— *Մե ձո՛ւգն էփիմ, մե ձուգն էփիմ, Պեպո ջան։* (Գնալով) *Քեփըդ բաց ըլի։*

Մտնում են դիմացի դռնից՝ Շուշանը դաբիրայով և Գիքոն գլխարկով ու ձեռնափայտով։

## Տեսիլ Ը

ՆՐԱՆՔ, ՇՈՒՇԱՆ, ԳԻՔՈ

ԿԱԿՈՒԼԻ— *Բարո՛վ, դեդի ջան։*

Պեպոն անշարժ և հետաքրքրությամբ նայում է Շուշանին։

ՇՈՒՇԱՆ— (Կակուլուն) *Ա՛պրիս, վուրթի։*

ԿԱԿՈՒԼԻ— *Օ՜հ, ա՛ղա Գիքո, բարով յիս ու դուն։* (Առաջ գալով և Պեպոյին՝ ցածր) *Սրա վրա լավ ղոնաղ չգթա՞ր, տո՛։*

ՊԵՊՈ— *Մո՛ւլափ...* (Շուշանին) *Ի՞նչ իմացաք։*

Կակուլին Գիքոյի ետևից նրա նման իբր թե քրախտ է քաշում, բայց իսկույն դադարում է և ուշադրությամբ լսում խոսողներին

ՇՈՒՇԱՆ— *Էլ ի՛նչ իմացա. գնդինը պատռե ու ինձ դեվեր տանե։ Թե էսօր չճարեցինք, Պեպան ջան, էս գիշիր դիփ մեռի մոշլա է ըլում... Ա՛յ յիրգնքեն աննիս մագիերն, Արութին։* (Դաբիրան վեր առնելով) *Նա խո էսօր չի տա ու, ուրիշ տիղ ո՞վ ինչ կու ավտա միզ։ Էլի հոքուն վրա հասա էն կապկտրած Նաթելին, թե չէ էն է, վիրչի խոսկն էր տանում նուր ախչկա տիրուշմեն էն միր սիվերես փեսի մոդ։ Սատանեն անե նրա դիվանը, հրա՜։*

ՊԵՊՈ— *Տո՛, փեսիմեն ի՞նչ իս ուզում. ինչ խոստացիլ ինք պիտի տա՛նք թե չէ։ Նա էլ մարթ է, գլխին գդակ ունե ծածկած, միզմեն էլ վո՞ւրդի խափվի. աշխարքն ալան թալան խո չէ՞.. էնղադա ասի, վուր մո՛ւլափ, դեդի, ջեր փուղը դուս գա, իժում էինք նշնի. ամա ձիր օխտեմեն ո՞վ գու քա... Ի՛նչ հաջաթ ու, ո՛ւր կու կորչի ու, Արութինը միր միխկն ի՛նչ կոնե ու, հա՛շա խոմ չի ուտի ու. դե՜, գնա՛ առ, տեսնիմ վո՞ւնց իս առնում։*

ԳԻՔՈ— (Նստելով սեղանի մոտ և երկար ճոգվոց հանելով) *Ա՛խ, իմ գողալ բարա՜թ... յարաբ վո՞ւնց կորար։*

Խփում է ծնկանը։

ՊԵՊՈ— *Ջե՛նդ, Գիքո, թե չէ, մասաբս գիդենա, ինչ ջիգրն ունիմ, դիփ քիզ վրա կու հանիմ էս սահաթիս։ Դուն վուր չէիր խառնվի էս բանումը, էս խայտառակութինն էլ չէր գա միր գլուխը. ջհա՜նդամը փուղի գլուխը, նրա մոգոնողին էլ ի՛նչ ասիմ։*

ԳԻՔՈ— *Ա՛խ, Պեպո, վուրթի, չիս գիդի թե սիրտս ի՛նչ հանգն է փոթաթի*

*ՇՈՒՇԱՆ— Էրեգ զանգուկը դրի։*

*ԿԱԿՈՒԼԻ— Ցիս էլ գա՞մ, Պեպո։*

*ՊԵՊՈ— Չէ՛, դուն գնա՛ բանդ տիս. էս սահաթիս գալիս իմ։*

Դուրս է գնում աջ դռնից։

*ԿԱԿՈՒԼԻ— Դուն գիդիս...* (Խփելով իր կրծքին), *Ա՜խ, Արութի՜ն, յիս թե քու օխտեմեն չէկա ու կու տեսնիս...*

Դուրս է գնում դիմացի դռնից։

## Տեսիլ Թ

ՇՈՒՇԱՆ, ԳԻՔՈ

*ԳԻՔՈ—* (Նստած սեղանի մոտ, քթախոտ քաշելով)— *Է՜հ, աստո՛ւծ, օրհնվի քու դադաստանը։*

*ՇՈՒՇԱՆ—* (Նստում է տախտի վրա և ձայնը երկարացնելով) *«Ա՛խ, աստո՜ւծ, վա՛խ, աստո՜ւծ, վուրին կու տա՜ս սելով փետ, վուրին չիս տա՜ ցախ, ա՛ստուծ»։*

*ԳԻՔՈ— Հա՜, հա՛, Շուշան։*

*ՇՈՒՇԱՆ— Է՛հ, օրհնվի նրա դազգահը. վուրին էնդադա դովլաթ է տալի, վուր իր դովլաթը չէ կանացի մարսի, ու վուրիմեն օրվան թիքեն խլում է ու էն էլ դովլըթավուրին է տալի... Փա՛ռք իրան, իր կամքն է. հալբաթ միր ճակտին էս էր դրած։*

*ԳԻՔՈ—* (Մոտենալով սփռոցին) *Էլի աստուծ օղորմած է, Շուշան...* (Վերցնելով դոշը և գլուխը շարժելով) *Ի՜նչ զիամաթ իմքին է՜։*

Դոշը կրկին իր տեղն է դնում

*ՇՈՒՇԱՆ—* (Առանձին) *Քու ա՛ճկն է...* (Գիքոյին) *Էլ ի՛նչ օղորմած է, ջուրն էկի՛լ է ու միզ տարիլ է։ Էն անաստուծը վուր էլի մե բան մոգոնի ու փողը չտա էսօր, յարաբ ի՞նչ կուլի միր չարին. ճլե՞րք կու ընգնի խիղճ ախչիկս։ Թավաթ օրն օրվան վրա հալվում է, էլ ի՞նչը կու ապրեցնե նրանց* (Լացով) *Խի՛ղճ իմ Կեկել, նորչի արիվդ պիտի փչանա, էլի՛, թագի մագիներ սիվ գերեզմանը պիտի մտնիս...*

Լաց է լինում.

*Մինչը փառավոր ման գուքէիր... դրոշկա, կալասկա, ձիանիր կու սարքեիր, քյանուհինգ ինձպեսին գլխիդ ղարավաշ կու կանգնեցնեիր... Ա՛յ, էն չախը կոսեի քիզ՝ մարթ ես, Պեպո, ի՜նչ մարթուն պիտի... ի՜նչ քեփդ գուզեր, է՛ն սհաթին կու ճարեիր... էն չախը դիփունքը քիզ գլուխ կու տէին, կու մեծրեին, պատիվ կու տէին ու մեկս մեկու գլո՛ւխ կու կոտրեին, վուր քու աճկը նրանց վրա քաղցր ըլի։*

Դուրս է գնում դիմացի դռնից։

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՎԱԾԻ

*ԳԻԳՈԼԻ— Ումը հարցրի, վրես ծիծաղեցան. կա՞կլի տոլ էլ, ասում է, կլուբնիկ կուլի, կոսե՞։*

*ՍԱՄՍՈՆ— Հալբաթ կուլի, վուր ասավ...* (Տնտղելով զամբյուղը) *մնացածը դիփ բերի՞ր։*

*ԳԻԳՈԼԻ— Դի՛փ, դի՛փ. ամա էն մունդռեկ կլուբնիկը չճարեցի։ Էքուցութին կի մե տիղ խոստացան, կույի ճարինք, կոսե։*

*ՍԱՄՍՈՆ— Հոքուն կու վրա հասնի. ղոնաղլուղութինը էսօր է, էքուց խո չէ՞։*

*ԳԻԳՈԼԻ— Բաս ի՞նչ անիմ, Սամսոն ջան։ Ձի ըլի՞, վուր առանց էն յոլա գնա բանը՞։ Հեստի բալիք իմ բերի, վուր ամեն մեկը կոսիս գոմշի աճկն ըլի։*

*ՍԱՄՍՈՆ— Թե ինձ կու հարցնիս, Գիգոլի, առանց էտ բալին էլ փուրը լավ կու կշտանա, ամա ախչիկ-պարնի խասիաթը գիդիմ, վուրդիոր ըլի, պիտի ճարիս. Կալոնիումը, Նեմենցներու բաղերումը, է՛նդի հարցրու։*

*ԳԻԳՈԼԻ— Հոքիս դուս եկավ, ի՞նչս ասում... Դուն գնա՛ իմաց արա...* (Նստում է նույն տեղը, իսկ Սամսոնը գնում է դեպի ձախ դուռը) *Խի՛ստ զաթրեցա։*

Նայելով այն դռան կողմը, ճանկարծ տեղից վեր է թռչում։

## Տեսիլ Բ

ՆՐԱՆՔ, ԷՓԵՄԻԱ

*ԷՓԵՄԻԱ—* (Դուրս գալով նույն (ձախ) դռնից, ամենաշքեղ հագուստով և ակնեղեններով զարդարված) *Օ՛հ, չարա էլա՞վ. է՛սենց ուշանալն էլ ի՛նչ է։ Հորես ղոնաղնիրը մոդ կուլին. յի՞փը պիտի վրա բերիմ, էլի աշխրքի բան կա։*

*ԳԻԳՈԼԻ— Հենղաղա ման իմ էկի, ախչիկ-պարուն, աստուձ գիդենա, էլ ծնգներումս ջան չկա։*

*ԷՓԵՄԻԱ— Ջա՛նդ դուս գա, մա՛ն արի. բաս յի՞ս ման գա՞մ։ Աքա՛, յի՛դ դարսե, տեսնիմ ի՛նչ իս առի։*

Նստում է։

*ԳԻԳՈԼԻ—* (Զամբյուղը բերում դնում է էփեմիայի մոտ, առջևը չոքում է մեկ ծնկան վրա և մեկ-մեկ ցույց տալիս նրան միջի իրեղենները) *Ա՛յ, ախչիկ-պարուն. էս շանփանսկիքը տասնութ աբասեն պակաս չտվին բոթլիկեն. յիրիք բոթլն է, թե ավելանա, մեկը պիտի յիդ վիկալնին, էնենց իմ բարիշած. էս էն կարմիր լիկորը, ֆրանցուզիմեն առա, չուրս ու տաս շահի առավ անիծածը. էս սարդինկեքը, պե՛րվի սորտ, թամամ կես*

*ԳԻԳՈԼԻ*— (Կարկանդակը վերցնելով) *Տանում եմ, տանում, ախչիկ-պարուն... (Փնթփնթալով) Ցիս էլ չիմ իմանում, ինչ իմ անում։*

Շտապով դուրս է գնում դիմացի դռնից։

## Տեսիլ Գ

ԷՓԵՄԻԱ, ՍԱՄՍՈՆ

*ՍԱՄՍՈՆ*— *Իստակ շշկլեցրիր, ախչիկ-պարուն։*

*ԷՓԵՄԻԱ*— (Հոնքերը կիտած այս ամբողջ տեսիլում) *Քիզ ո՞վ է հարցնում, էրնէկ գիդենամ. դուն տա՛ր էստունք կարքի բի ու չա՛լիշ արի ինձ չամանչեցնիս էսօր, Սամսոն, թե չէ, էլ ինձմեն չիս պրծնի։*

*ՍԱՄՍՈՆ*— *Դիփ լավ կուլի, ախչիկ-պարուն։*

*ԷՓԵՄԻԱ*— *Ինչ ասիլ իմ, լա՛վ միտդ պահէ. դի՛փ լազաթով ըլի, ամեն բանը իր վուխտը մոդ գա. մե խոսկով՝ մա՛զը մազեմեն չանց կացնիս։*

*ՍԱՄՍՈՆ*— *Դի՛փ, դի՛փ, ախչիկ-պարուն։*

*ԷՓԵՄԻԱ*— *Ու դուն էլ է՛նենց հաքի, վուր դիփունանց աճկը վրեն մնա. սոսանի ատլաս արխալուխը, սիպտա չերքեզկեն, մաչեքը կարքով յիդ կու ծալիս, էրծըթե քամարը...*

*ՍԱՄՍՈՆ*— (Խոսքը կտրելով) *խանչալն էլ կապի՞մ, ախչիկ-պարուն...*

*ԷՓԵՄԻԱ*— (Շարունակելով) *Բաս, քա՛, էնդուր խո չբախշեցի վուր զանդկումդ պահիս. խա՛նչալն էլ կապէ ու* (Ձախ ձեռքը աջ ուսից կրծքի վրա տանելով մինչև ձախ կողքը) *սապիրիս ծամլեն էլ չինե՛։ Մե խոսկով՝ դիփունի մոդ լա՛զաթի էրևա, վուր դիփունքն ասին, վուր մարթ [illegible] ու մարթու տանն իս ղուլուղ անում։*

*ՍԱՄՍՈՆ*— *Վո՞ւր օրը լազաթով չիմ էլի, ախչիկ-պարուն։*

*ԷՓԵՄԻԱ*— *Քու գլխի պատռվիլը գիդենա. մեկ էլ հի՛մի իս լազաթով. աքա էտ ի՞նչ կարգ է, լեվրելելը ման իս գալի։ Քա՛նի ջեր իմ քիզ ասի, վուր էտենց ինձ մոդ մի՛ տուն գա. օմքին տեսնե ի՞նչ կասե Ջլ-իր կանա դոշիտ կոճկնիրը կապի՛։ Լաքիեն պիտի լաքիա ըլի։ Անէ՛ իրդ րա՛ց արա, էլի՛. տեսնում իս խալխի լաքիեքը վունց ին ժաժ գալի. դուն էլ է՛նենց ժաժ արի, էլի՛. նրանցմեն պակաս մարթու վուրթու մոդ ի՞ս, թե ի՛նչ է։*

*ՍԱՄՍՈՆ*— *Ջեռիս բան ունիմ, ախչիկ-պարուն, խո տեսնում իս։*

*ԷՓԵՄԻԱ*— *Տուտուց-տուտուց մի՛ խոսի. յիս քիզ ինչ ասում իմ, դուն ի՛մը լսե։ Մե խոսկով, իստակ, կարքի, քաղաքավարի տուն ու դուս կո-*

ՍԱՄՍՈՆ— *Ա՛յ, աղա, Գիգոլին էստունք էրի էս սահաթիս. էլ ինչի համա էլ դրգից նրան ախչիկ-պարունն ու ինձ հրամայլում էր, վուր էստունք տիղավուրիմ։*

ԱՐՈՒԹԻՆ— *Հա՜... Դե՛, տի՛ղավուրե, էլի՜. էլ ի՞նչ իս շինում։ Ինչի՞ր է էտի։*

ՍԱՄՍՈՆ— *Խմիչկ է, մրքեղեն է, զակուսկեք է։*

ԱՐՈՒԹԻՆ— (Զամբյուղը զննելով) *Օ՜հ, օ՜հ, օ՜հ, օ՜հ, կոսխս շահ-զադի փուրթիք ունենանք մեձրած։ Դե՛, տա՛ր...* (Սամսոնը կամենում է վերցնել զամբյուղը) *Ի՛նչ իմ ասում. քա՞նի սրիքոր իս պատրաստում։*

ՍԱՄՍՈՆ— *Ախչիկ-պարունը հրամայեց, վուր դրուստ քսանուչուրս սրիքոր ըլի դարսած, կոսե։*

ԱՐՈՒԹԻՆ— *Ախչկաս մոդ իտ չըրգի՞ց քիզ։*

ՍԱՄՍՈՆ— *Չէ՛, ա՛ղա, վունչինչ չէ ասի։*

ԱՐՈՒԹԻՆ— *Բա՛ս էրկու սրիքոր էլ ավելցո՛ւ ու էս սհաթիս գնա՛ ախչկաս էլ ու փեսիս էլ խնդրե, վուր շնուրհ բերին ու իմ մազիեր կոսխս՝ թե չին գա, խիստ բեդամադ կուլիմ, ասա... Դե՛, գնա՛, շուտ, քա՛նդ տիս, մի՛ ուշանա։*

ՍԱՄՍՈՆ— (Վերցնելով զամբյուղը) *Է՛ս սահաթիս, ա՛ղա։*

Դուրս է գնում աջ դռնից՝ մեջքը ծռած զամբյուղի ծանրությունից։

## Տեսիլ Զ

ԱՐՈՒԹԻՆ— (Մենակ, գլխարկը վեր առնելով և դնելով սեղանի վրա)

*Սհաթի յի՛րիքին էլ ճաշ կուլի՜... է՜հ, մա՛խլաս։* (Հայելումը զննում է յրան) *Չէ՛, ջեր էլի լավն իմ․ ի՞նչ․․․ պակաս. քոյխս շիմշատ է հենց դեղինաս, էրեսիս ռանգը, կոսխս, կարմիր վարթ ըլի, մազերս էլ սիվ սաթ, ինչ անիմ թե ներկած է. ո՞վ ինչ գիդի՝ ինչ խաբար է։* (Նստելով բնկողմարանի վրա) *Ջեհել կնգա պես մարթու ջահելացնող վունչինչ չի ըլի աշխըրքումս. մարթու տարին էլ, քեփն էլ գիփ կնգամեն է։ Օղորմած հոքի իմ առջի կնիկն էլ լավ աթմարթի էր, ամա քա՞նի լազաթը չէր գիդի։ Ինչի՞ նման էր էն չախը. հիմի մարթ իմ էրեւում, ինչ մարթուն սիրտի։ Ճա՛մ ջիհել ֆրանտ տղա էրնեկ կուլի տայի ինձ. .* (Տապկի թևնոցները տնտղելով) *Փըրա՜, սիպտա ձո՛ւն է՛, վո՞րդի էր էստունք...* (Հոգվոց հանելով) *Ամա էս մե բանը կի լավ չէ ըլում, վուր էսղադա փուղիր է մխսիլ տալի*

ԷՓԵՄԻԱ— (Շարունակելով) Միթամ դիղիլ իմ քիզ, խիլքետ արիւ իմ, քուրթու պես վուրթենն ուզում իմ, էնթենն իմ գցում քիզ... վուխչ կայինքտ ուզում իմ զավթի յիս, ու հա՞կառակը յիս ի՞մ... էլ կա՞նամ յիս նրանց էրեսը տեսնի՛. աթմորթին կու հա՞մփիրի էստո՛ւնք։

ԱՐՈՒԹԻՆ— էլի դուն պիտի համփիրիս. հե՛ր օխնած. էս ահաթիս ծնող իս հիշվում նրանցը։

ԷՓԵՄԻԱ— Յի՞ս իմ ծնող հիշվո՛ւմ... Նրանց համա յիս ծնող կի չիմ, դո՛ւշման իմ. գե՛լ իմ, շո՛ւն իմ, կա՛տու իմ... (Լաց լինելով) Սի՛վցիլ էր իմ օրը ու էս տուն վուտս տուն չէի դրի։ Ի՞նչ կունիմ էս փա՛ռքը, էս պա՛տիվը, էս շո՛ւրիրը, էս ա՛կնեղիննիրը. Թո՛ղ էլի իմ տանը ննգած էի էլի՝ քա՛ղցած, ծա՛րավ, հացի հա՛սրաթ ու էս օրը չէի տեսի յիս...

Ընկնելով բազմոցի վրա լաց է լինում։

ԱՐՈՒԹԻՆ— Լա՛վ է, լա՛վ, Փեփել ջան. (Լացի ձայնով) սիրտս մի՛ պատռի... յիս էլ լավ գիդիմ ի՛նչ պտուղնիր ին. ամա ասում էի, միթամ խալխի խոսելու չդառնանք։

ԷՓԵՄԻԱ— Խալխն ի՛նչ գուզե ասե. նրա խոսելու հիդ վուր մարթ ննգնի, ո՞ւր կէհա... Խալխն էն էլ է ասում, վուր հա՛շաքար իս միթամ, շա՛տ օմքնու իս զընի միթամ. արա էս ա՞վտալու է՛...

Վեր է կենում։

ԱՐՈՒԹԻՆ— Վրես շառիր ին մոգոնում...

ԷՓԵՄԻԱ— (Շարունակելով) Վուր միթամ պա՛ռավ իս դուն...

ԱՐՈՒԹԻՆ— (Նեղանում է և ճագում) Հո՛ւ...

ԷՓԵՄԻԱ— (Շարունակելով) Մի՛թամ մազիրդ ներկում իս...

ԱՐՈՒԹԻՆ— (Արկին ճագում է) Հո՛ւ, հո՛ւ...

ԷՓԵՄԻԱ— (Շարունակելով) Մի՛թամ ինձ խափում իս։ Ո՞վ կու ավտա. Թո՛ղ խալխն ի՛նչ գուզե ասի։

ԱՐՈՒԹԻՆ— (Հազից խեղդվելով) Խալխը տուտուց է, Փեփել. դուն չի՞ս գիդի վուր ջեհել ի՞մ... Վո՞ւր ջեհելը կուլի ինձ վրա ղոչաղ։

ԷՓԵՄԻԱ— Աբա՛, յիս վո՞ւր մեկին հասկացնիմ։

ԱՐՈՒԹԻՆ— Տո՛, դուն էն սարսաղներուն ասա՛, վուր պառավ ղոչաղը լավ է, կանց ջեհել դամբլեն։ (Իր մազերը բռնելով և գլուխը մոտ տանելով) Աբա՛, էս նե՞րկած է՛։

ԷՓԵՄԻԱ— (Արութինի գլուխը բռնելով և ժպտալով) Դուշմանը շատ բան կոսե, Արտուշկա ջան։ (Համբուրելով գլուխը) Մա՛նուշակի հոտ է գալի՛։

ԱՐՈՒԹԻՆ — *Օ՜հ, քու հո՛գուն մեռնիմ, Փեփել ջան...* (Գրկում համբուրում է) *Սաղ աշխարքը շուռ կու տաս դուն...*

ԷՓԵՄԻԱ— *Գիդիս ի՞նչ ասիմ, Արտուշկա ջան...* (Ձեռքը դնելով Արութինի ուսի վրա): *Միր հալիլեքն է՛լ պետկը չէ, մոդեն անց է կացի. մե տիղ տե՛ս ի՛մ, չուխար քառսունհինգ թուման ին ասում...* (Արութինը, առանձին, դեմքը ծամածռում է) *Ուզում էի բեհը տա, ամա առանց քի հարցնելու գաբեդվա չարի։*

ԱՐՈՒԹԻՆ— (էփեմիայի բշին ձեռք տալով) *Շա՛տ օյինբազն իս։*

ԷՓԵՄԻԱ— *Գեթադվա, Արտուշկա ջան։*

ԱՐՈՒԹԻՆ— (Մտածելով և բարձր) *Քառսունհինգ թումա՞ն...*

ԷՓԵՄԻԱ— *էն շենքի իմքինը բաս պա՞կաս կուլի, չա՛։*

ԱՐՈՒԹԻՆ— *էնդու վրա հիմի ք՞իչ ցածրն ըլի, ի՞նչ հաջաթ։*

ԷՓԵՄԻԱ— *Աբա՛, վի՛ս էկադրեբա. էնդու վրա ցածրը խոմ միրիրն է... ամա վուր պետկը չէ... խաչը գիդենա, ամանչում իմ, վուր էրեսս մեջը տեսնում իմ։*

ԱՐՈՒԹԻՆ— *Տո՛, հոքիս հանեցիր խոմ... դիփ տակն ու վրա արիր ճըղանցոբեն։ Ախար՝ էս զալեն պետկը չէ... էս մեբիլը պետկը չէ... էս պանավեսկեքն է՛սենց չէ... էս գդակդ փոխե... էս դիմիկիտոնի մազեր պլա՛տնո հաքի ..*

ԷՓԵՄԻԱ— (Փաթաթվելով) *Թե ինձ կու սիրիս, Ա՛րտուշկա ջան։*

ԱՐՈՒԹԻՆ— *Քիզ վուր չիմ սիրի, բաս ո՞ւմն իմ սիրում...* (Փոքր լռությունից հետո) *Ամա դուն էլ դուրթ խի՞ստ իս սիրում ինձ, Փեփե՛լ։*

ԷՓԵՄԻԱ— *Զարթնի քիզ ո՞վ ունիմ աշխրքումը. իմ հոքին ու մարմինը դուն իս, իմ շունչն ու կենթանութինը դուն իս։*

ԱՐՈՒԹԻՆ— *Օ՞չով աճկումդ չէ գալի՛։*

ԷՓԵՄԻԱ— *Աբա՞, մի՞խկ չէ, Արտուշկա ջա՛ն, ի՞նչս ասում, ախչիկը քի պես մարթ ունենա ու նրա աճկումն էլի օ՞մքին գու քա աշխրքումը՞։*

ԱՐՈՒԹԻՆ— *Բե՛րիլ տու, բե՛րիլ տու հալիլեքը,* (Համբուրելով) *գենացվալե՛ սուլշի։*

ԷՓԵՄԻԱ— (Փաթաթվելով) *Աբա՛, ո՞վ կանա ասի, վուր դուն գոփող ու գժլող իս։*

Արութինի փողպատն ու շապիկը ուղղում է։

ԱՐՈՒԹԻՆ— *Խիստ իս ֆրանտացնում, ամա քու կարմիր բանտի պես չի ըլի, Փեփել։*

ԷՓԵՄԻԱ— (Շարունակելով) *Մո՛ւպափ։* (Ավարտելով գործը, փոքր ինչ հեռանում է Արութինից և այնպես նայում նրան) *Աբա՛, վո՞ւր ֆրանտը կուլի քի պես։*

## Տեսիլ Թ

ՆՐԱՆՔ, սկզբում նաև ՍԱՄՍՈՆ

ԷՓԵՄԻԱ— (Գիգոլուն) *Բա՛ս բան չունի՞մ... Մո՛ւլափ էստի։* (Սամսոնին) *էս կլուբնիկը տա՛ր սարդափն ու էս պիրոժնին էլ վազերումը լա՛վ բաբաթ շինե։* (Սամսոնը վերցնում է) *Է՛լի դուշիտ կոճկնիրը բաց տուն էկար ինձ մո՞տ։ Աստուծ գիդենա, վիրչի գամն իմ ասում, թե մեկ էլ տեսիլ իմ քիզ էտենց, էլ մի սահաթ չիմ պահի քեզ։*

ԳԻԳՈԼԻ— (Առանձին, գլուխը շարժելով) *Օ՛հ, օ՛հ, օ՛հ, կրա՛կի կտուր է՜։*

ՍԱՄՍՈՆ— *Բանումն էի, ախչիկ-պարուն։*

ԷՓԵՄԻԱ— (Բարկանալով) *Ջո՛ւղաբ էլ է տալի։* (Արութինին) *Արա՛, պահելու է՞։*

Գիգոլի, առանձին, թափ տալով օձիքը

ԱՐՈՒԹԻՆ— (Սամսոնին սպառնալով) *Հըա՜, մո՛ւղայիթ կաց... Դե՛. գնա՛ բանիտ, էլ ի՞նչ իս էտի կանգնի։* (Սամսոնը գլուխը շարժելով դուրս է գնում աջ դռնից, զամբյուղն ու կարկանդակը ձեռքին: Հետո էփեմիային, ցածր) *Ախար, ձեռին բան ունե խիղճը, տեսնում իս քրտնքումը ծըլծըլում է. ըա՞ս էմարթլեքի։*

ԷՓԵՄԻԱ— (Շարունակելով) *Չէ՛, խիստ է խարաբ ըլում, ախար, է՜։ Էսօր դուշը բաց տուն էկավ, էքուց առանց արխալուխի կու տուն գա։ Բըչի համարցակութինը վի՞ս էկադրեքա։ Մե-մե ախչիկ-պարուն էլ կա, իրանց բըչի հիդ մասլահաթնիր ին անում, գի՛դիս՝ յիս էս հանգի բանիր չիմ սիրի։ Լաքիևն պիտի լաքիա ըլի։*

ԱՐՈՒԹԻՆ— *Լա՛վ է, լավ, էս մեկը բախշե՛. յիս կու խրատիմ իրան.* (Առանձին) *Բախտավոր մարթ իմ, յիս ու իմ հոքին...* (Գնալով ձեռները ետևը դարսած և ճամրիչը ձեռքին. կես ճանապարհից կիսաձայն երգում է)
*«Պիրզեղ գաքվս խալի, շավ շավի թվալի։*
*Նախվա մուրս շենի»։*

Դուրս է գնում ձախ դռնից:

## Տեսիլ Ժ

ԷՓԵՄԻԱ, ԳԻԳՈԼԻ

ԷՓԵՄԻԱ— *Չէ՛, մե հենց ասըրիս. Գիգոլի. հասկացրո՛ւ էն լպստածին, վուր քաղաքավարի կենա. իմանում ի՞ս, ի՛նչ իմ ասում։*

*ԳԻԳՈԼԻ— Ի՞նչ ես ուզում, ախպեր, ի՞նչ բան ունիս։*

*ՊԵՊՈ— Հալբաթ բան ո՞ւնիմ, վուր էկիլ իմ. էլի՜, վա՜։*

*ԳԻԳՈԼԻ— Ջի ըլի՞, վուր մինք էլ իմանանք։*

*ՊԵՊՈ— Ի՞նչ կու ավելնա քիզ. դուն գնա աղա Արութինին իմաց արա, վուր յիս էստի իմ։*

*ԳԻԳՈԼԻ— Ախպար, դուն ո՞վ իս։*

*ՊԵՊՈ— Յի՞ս...* (Նստելով ընկողմարանի վրա) *յիս իմ։*

*ԳԻԳՈԼԻ— Վա՜...*

## Տեսիլ ԺԳ

ՆՐԱՆՔ, ԱՐՈՒԹԻՆ

*ԱՐՈՒԹԻՆ—* (Ներս վազելով ձախ դռնից) *Ի՞նչ խաբար է, ի՞նչ խաբար։*

Տեսնելով Պեպոյին, մնում է սառած։

*ՊԵՊՈ—* (Վեր կենալով տեղից, գլխարկը վեր է առնում և գլուխ տալիս) *Բա՜րի աջողում, ա՜ղա Արութին։*

*ԱՐՈՒԹԻՆ—* (Գիգոլուն, ցածր) *Դուն գնա՛ բանդ տես։*

*ԳԻԳՈԼԻ—* (Առանձին) *Ղո՜ւրթ, հալիլեքը։*

Դուրս է վազում դիմացի դռնից։

## Տեսիլ ԺԴ

ՊԵՊՈ, ԱՐՈՒԹԻՆ

*ԱՐՈՒԹԻՆ— Հը, ո՞ւր իս էկի, ախպեր։*

*ՊԵՊՈ— Ա՜յ, համեցե՜ք, նստի՜։*

Ինքը մոտ քաշելով մի աթոռ, նստում է։

*ԱՐՈՒԹԻՆ—* (Նստելով ընկողմարանի վրա, առանձին) *Իմ տանը սա է մոհբաթ անում ինձ։* (Պեպոյին) *Ախպար, էս չախն ո՞ւր իս էկի։*

*ՊԵՊՈ— Կուշտը քաղցածին ի՞նչ է հարցնում... Բողազս մի՛ դուս կտրի, ա՜ղա Արութին. թե էս ահաթիս չիս տա. վարցկ կոնիս, վուր ինձ սպանիս էստի էվետ։*

էս սահաթիս շտվինք, քվիրս թո՛ղնում ին, ո՛ւրիշ ախչիկ ին ուզում էս գիշիր: Ախար, մե աստծու այեաղ դադաստանը մի՛տդ բի, է՜... խո քիզ էլ կու խոսեցնին էնդի, ինձ էլ. ի՞նչ ջուղար կու տաս, վուր չիս տալի:

ԱՐՈՒԹԻՆ— Փի՜ե... (Մտածմունքի մեջ է ընկնում) Այեաղ դադաստանը գիդենա վուր դրուստ միտս չէ էտ պարտկը:

ՊԵՊՈ— Յիս ասում իմ դրուստն, էլի՜. ինձ չիս ավտո՞ւմ:

ԱՐՈՒԹԻՆ— Վա՜, էտ վո՞նց կուլի, Պեպան. ամեն մարթ վուր գա ու էտենց խոսի, տասը միլիոն էլ վուր ունենամ, մե օրումը կու հատնի: Չէ՛, ախպեր, միր առուտրի հեսաբը էտենց չէ:

ՊԵՊՈ— (Վեր կենալով տեղից և գլխարկը ծածկելով) Բաս չի՛ս տալի, է՛լի:

ԱՐՈՒԹԻՆ— Պարտկով կի վունչինչ տալացու չիմ, ախպեր. ամա քու խո մարթու տալի՜, ջո՛ւխտ աճկիս: (Ծոցից հանում է պորտմոնեն) Ըա՛հա. (Թղթադրամ տալով) Վարցկ բան է, բռնի՛, ախպեր:

ՊԵՊՈ— (Գլխարկը վեր առնելով, գլուխ է տալիս) Ա՛յ, աստուծ վուրթիքդ զորացնի:

Առնում է փողը:

ԱՐՈՒԹԻՆ— Է՛տ հինգ թումա՛ն... համբրի՛, (Պեպոն գնալու վրա է) դրուստ հինգ թուման է... Հինգ թուման էլ, յուքնո՛վս ա՛նցկացի, էնդի կու տան. էս սհաթիս օմքին կու ղրգիմ: Գնա՛, ախպեր, աստուծ բարի վայելում տա:

ՊԵՊՈ— (Փողին նայելով և շփոթված) Հի՛նգ թուման ու հինգ թումա՜ն... (Լռություն. հետո գլխարկը ծածկելով) Մնա՜ցածը... Ախար իմ քվիր համա հարուր թուման ինք խոստացի:

ԱՐՈՒԹԻՆ— Յիս ի՞նչ անիմ, վուր խոստացիլ իք. բեհեսաբ նամաղուլ իք արի, վուր խոստացիլ իք. ո՞ւմ փուղն էիք խոստանում, վուր խոստացիլ իք: Մարթ իր լհեֆի գորա կու ձքե վո՞տը թե չէ: Դուք էլ վուր հարուր-հարուր թումնիր իք խոստանո՜ւմ, էլ ուրիշն ի՞նչ անե: Էս ի՞նչ խաբար է՛լավ աշխարհքն, ա՜խպեր. էլ օչովու համա չափս ու ձիվ չկա:

ՊԵՊՈ— Միր բանը մինք գիդինք, պարուն, ձիր բանը դուք. խոստացիլ ինք, միր փուղն ինք խոստացի, քիզ ի՞նչ դավի:

ԱՐՈՒԹԻՆ— Խոստացիլ ի՛ս ու տար ի՛րան տու, է՛լի. էլ ի՞նչ իս ուզում:

ՊԵՊՈ— Իս տուր, վուր տամ, է՜. ախար էս վուր տալիս իս, մասխարա իս գցո՞ւմ, թե ի՛նչ խաբար է:

ԱՐՈՒԹԻՆ— Ա՛րի ու սրապիսներուն վա՛րցկ արա: Տո՛ ինչո՞վ չիս իմանում, վուր վունչինչ պարտ չիմ յիս ձիզ ու էտ էլ ինչոր տալիս իմ, հոքուս համա բախշում իմ:

ԷՓՐԵՄԻԱ— *Դո՛ւս արեք, դո՛ւս արեք։*

ԱՐՈՒԹԻՆ— *Դո՛ւս, դո՛ւս, ասում իմ։* (Ծառաներին) *Դո՛ւս արեք. չիք իմանո՞ւմ։*

Ծառաները հարձակվում են Պեպոյի վրա

ՊԵՊՈ— *Դո՞ւս...* (Ծառաներին նորից մղելով:) *Դե՜նը, դե՛նը։* (Ծառաները փոքր ինչ հեռանալով, կանգնում են դիմացի դռան առաջ: Արութինին) *Փուղիրս հաշա իս ուտում, ու դո՛ւս էլ իս անում, է՛լի...* (Լռություն) *Դո՞ւս կէթամ, դո՞ւս կէթամ, չարիս ի՞նչ է, զոռը քունն է, տեղը դուն իս էստի... Ամա լավ գիդացի, պարուն Արութին, էս արարմունքը քիզ չի մնա... վի-րիվն աստուծ կա, քնթեմետ կու հանե քու անօրինութինը...* (Ծառաներին հրելով) *Դե՛նը, դե՛նը...*

Դուրս է գնում դիմացի դռնից:

ԱՐՈՒԹԻՆ— (Պեպոյի ետևից ծառաներին) *Գնացե՛ք, գնացե՛ք հետը, վունչինչ չտանե, վունչինչ չփախցնե։*

Ծառաները դուրս են վազում Պեպոյի ետևից

## Տեսիլ ԺԶ

ԱՐՈՒԹԻՆ, ԷՓՐԵՄԻԱ

ԱՐՈՒԹԻՆ— *Է՛սենց էլ լպստած։*

Կռանում է և փողերը հավաքում

ԷՓՐԵՄԻԱ— *Գի՞ժ է էն մարթը, թե էս ի՞նչ խաբար է... էլախտ էլ էնենց վախեցրուց։*

ԱՐՈՒԹԻՆ— (Փողերը ծոցը դնելով) *Արի՛ ու սրապիսներուն վա՛րցկ արա հիմի։*

ԷՓՐԵՄԻԱ— *Էս ի՞նչ բան է, ախպեր, չի՛ս ասի՛։*

ԱՐՈՒԹԻՆ— *Աստուծ վկա, գիդե նրա գլուխը, քուր իմ մարթու տա-լի, կոսե. յիս ի՞նչ անիմ վուր մարթու է տալի։*

ԷՓՐԵՄԻԱ— *Բաս էն ի՞նչ էր ասում, թե փուղիրս հաշա իս ուտում, կոսե։*

ԱՐՈՒԹԻՆ— *Աբա՛, քիմեն չիմ արմընում, էփրեմիա՜. փո՛ւղ հաշա ուտիմ ու էն էլ նրա՛ պես մարթունը՞, չիս ճանչնում ի՞նձ։*

ԷՓՐԵՄԻԱ— *Էտ փուղիրը վուր ծո՞ցդ դրիր, նրա՞նը չէր բա՞։*

ԷՓՍՄԻԱ— (Հանկարծ փոխելով և ուրախ) *Հալի՜լե՜քը...* (Շտապով գնում է. կես ճանապարհից Արութինին, հափշտակված) *Մե՛ ա՛րի, մե արի, Արտուշկա ջան, տի՛ս թե ինչ հալիլեք է, ի՛նչ ա՛նտիկա, նե՛ժնի հալիլեք...* (Կանչելով) *Սա՛մսոն, Սա՛մսոն...*

Շտապով դուրս է գնում դիմացի դռնից: Գիզոլին և Սամսոնը՝ որ դուրս է վազում աջ դռնից, հետևում են նրան:

## Տեսիլ ԺԸ

ԱՐՈՒԹԻՆ— (Մենակ, յուրյունից հետո)

*Տո՛, ղո՛ւրթ, ի՞նչ օյին էկավ գլխիս էն լոթի պաժարնին... էլ մինձ ու պստիկ չկա աշխրքումը... էն հանգի ախկատ ղաղոն վրես է՛նենց բղավի՜,* (Ման գալով) *էն հանգի խո՛սկիր ասե՞...* (Հայեացքը ուղղվում է) *Բո՛շացավ, բո՛շացավ աշխրքի բանը...* (Հեռանում է հայելիից) *Պարտ իս, կրսե... Գժվի՛լ է՛... ի՛նչ պարտկ, ի՛նչ փլա՛ն, ի՛նչ փստան... Ո՞վ ասավ, վուր պարտ իմ... ո՞վ գիդե, վուր պարտ իմ... Թե պարտ իմ, ինչի՞ ինչկըլի լսօր յիղ չիմ տվի... Յա նրան վուր տամ, մեկէլներուն ի՞նչ ասիմ... Նրանք ի՞նչ գեթ ին արի... չէ՛,* (Նստում է) *վո նչիչ պարտ չիմ... սուտ շա՛ռիր ին մոգոնում... Թե պարտ իմ, ինչի՞ բարաթ չունե... Վո՞ւրդի է... ո՞վ ունե. ի՞նչ բարաթ... Բարաթ չկա՜... գնա՜ցիլ է... ջնջվի՛լ է... թե չէ էլ ի՞նչ օրութին է... Ամա էն լոթի պաժարնին պիտի ամեն տիղ բղավի, վուր փո՛ւղ իմ պարտ ու յիղ չիմ տափ՜...* (Վեր է թռչում տեղից) *Չէ՛, չէ՛, էփեմիեն դրուստ է ասում... Պիտի յիս բղավիմ, յիս պիտի հարայի տամ, ա՛շխարք ու յիրգիր զարթեցնիմ, վուր ի՛նձ՝ ի՛նձ պես աղա մարթուն էսենց ա՛նպատիվ արին, էսենց շա՛ռիր ին գցում վրես... Մո՛ւլափ, յիս քիզ կու շանց տամ, լոթի պաժարնի։*

Դուրս է գնում ձախ դռնից

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՎԱԾԻ

ՇՈՒՇԱՆ— *Ախար, էտ ղադա արտըսունք կուլի, վուրթի՛, խո քամվեցար խատակ։*

ԿԵԿԵԼ— *Բաս ի՞նչ անիմ. դոշիս հենց գիդիմ աղաքար է պառկած... էս արտըսունքն է ինձ օտկում մե քիչ, թե չէ դարդու խիխտվում իմ։*

ՇՈՒՇԱՆ— *Դա՛րդ ցավի գա ու աստծու պատիժի էն սիվսրտովը։ Աժե՞ վուր էտղադա դարդ ես անում նրա համա՞։*

ԿԵԿԵԼ— *Աշխրքումը բեդնամ էլա, գլուխս դուս կտրվեցավ, էլ տոլի ու սծորի էրեսին չիմ կանացի մտիկ տա. էս ա՛պրիլ է՞։*

ՇՈՒՇԱՆ— (Նստելով Կեկելի մոտ աթոռի վրա) *Մի՛ դարդ անի, Կեկել ջան, մի՛ դարդ անի. աստուծ ողորմած է, կուլի նրա վրա լավ մարթու է ռաստ բերում քիզ։*

ԿԵԿԵԼ— *Մարթու աճկն էլ կարիմ. նրանք խճպտանք ունի՞ն, նրանք հո՛քի ունի՞ն... Ինձ սպայ արավ ու իմ պաշը տարավ ո՛ւրիշին էրիտ...* (Գլխին խփելով) *Գեդինը պատռե ու ինձ դեվեր տանե։ Էլ յիս յիրգնքի էրես վո՞ւնց պիտի տեսնիմ։*

ՇՈՒՇԱՆ— *Աբա՛, դուն վուր էստունք ես անում, Կեկե՛լ, յիս ի՞նչ անիմ...* (Լաց լինելով) *Մինն չի՞մ. բա յիս վո՞ւնց դիմնամ՝ իմ սիվ ու մութ օրին մե կուռը, քիզ մեկէլին... Էտ հանգի օրինակնիր շատ է էլի, վուրթի. մենակ միզ համա խո չէ ստիղծած աշխարքը։ Քա՛նի միզպեսնիրը կան, քա՞նի միզ վրա վա՛տթարն ասա, հացի հասրաթ ածած ի՛ն, մե թիքա հացին էրնեկ ին տալի, դունն դուռը ախկատութին ին անում ու էն թիքա հացը՝ թե հազրենը մեկը տալիս է, մնացածնիրը կի՛նծումը խփելով դուս ին անում... Միզ խո աստուծ մե թիքա ավիլ է. փա՛ռք իրան. ի՞նչ անիս, հալբաթ միր ճակտին էս էր գրած։ Էլի փա՛ռք տանք իրան, աղանչանք անինք, վուր էստու վրա վատթար օրին չռաստ բերի միզ. իմ Պեպոյին ջան տա, վուր ինչ թիքա միզ տալիս է նրա ձեռով, էն թիքեմեն էլ չզրգե միզ։*

ԿԵԿԵԼ— *Էրնեկ աստուծ ինձ մա՛հ տա, ուրիշ վունչիչ չիմ ուզում։*

ՇՈՒՇԱՆ— (Մոտենալով և գրկելով Կեկելին) *Մի՛ ասի, մի՛ ասի, Կեկել ջան.* (Նստելով կողքին) *միխկ է աստծու մոտ, գնա՛ ցվալըս դեղեն։*

ԿԵԿԵԼ—(Շուշանի գրկում) *Ա՛խ, դեդի ջան...*

Լուռ լաց է լինում Տեսարան:

## Տեսիլ Գ

ՆՐԱՆՔ, ԳԻՔՈ

ԳԻՔՈ— (Ներս մտնելով դիմացի դռնից գլխարկով և ձեռնափայտով) *Վա՞յ, օ՛խնած հոքիք, զարթնի էտ՝ բա՞ն ու զուրձ չունի՞ք։*

ԳԻՔՈ— Յիս էլ էտ իմ ասում, Շուշան, է՞։ Տի՛ս հիմի, էդ դարդի տիր ի՛նչ ուրախութին է գալիս։ (Շուշանը զարմացած նայում է) Արմընում իս, գա՞նա, Շուշան. Վուրն է՛ն չախը թա՛մաշա արա, յիփոր դիփ կոսիմ։ (Գրպանից հանում է փոստի մի կապտագույն բաց ծրար, որի վրա երեվում են կարմիր զմռսե կնիքներ, և աջ ձեռքով բարձրացնելով) Ա՛յ։

ՇՈՒՇԱՆ— Էտ ի՞նչ է։

ԳԻՔՈ— Ի՛նչ է՞... Է՛ն է, է՛ն, Շուշան։

ՇՈՒՇԱՆ— Վուր չի՛մ իմանո՞ւմ։

ԳԻՔՈ— Ա՛յ կու իմանաս. համփիրութինը բաժնելիս աստուծ քիչ փային կնիկարմատին էրիտ։ Հիմի ի՛նչ համփիրութին տվիլ է քիզ աստուծ, դիփ մեռի մող արա ու ծանըր ու բարակ ինձ ա՛նգաճ դի, վուր լիզուս չխառնվի։

ՇՈՒՇԱՆ— (Առանձին) Յա՞րաբ էս հանգի էլ մա՛րթ կուլի՞։

ԳԻՔՈ— (Շարունակելով) Գիդիս ի՞նչ է, Շուշան... Օղորմած հոքի քու մարթը՞...

ՇՈՒՇԱՆ— (Երկար ու ձիգ կոկորդային ձայնարկությամբ հառաչելով) Ը՞հը՞հ...

ԳԻՔՈ— (Գրպանից թաշկինակը հանում է և աչքերը սրբում: Լացի ձայնով) Աստուծ օղորմի, աստուծ հոքին լուսավորե. լավ մարթ էր, անումով մարթ էր խիղճը։ Քանի՛ ջեր է ձիով Գանջա գնայի ու էկի օղորմած հոքին։

ՇՈՒՇԱՆ— (Հոգվոց հանելով) Ա՛խ, ա՛խ, ա՛խ...

ԳԻՔՈ— Է՛հ, փո՛ւչ աշխար, Շուշան։

ՇՈՒՇԱՆ— Իժո՞ւմ։

ԳԻՔՈ— Հա՛... (Դադար) Մահեմեն մե քանի օր առաջ, յիս խոմ դիփ կշտին էի, գիդիս, օթախի դռնիրը կոխպիլ էրիտ, մնացինք յիս ու օղորմած հոքին..

Աչքերը սրբում է։

ՇՈՒՇԱՆ— (Տխուր) Մի՞տս է։

ԳԻՔՈ— (Ձեռքով իր բերանը ծածկելով) Մո՛ւլափ... Ջիբեմեն բալնքնիրը հանից ու էն ձիր սիվ պստի ղութին ուչից, յիս էլ մող տարա. սա բաց արավ, էս թուխտը հանից ու ինձ էրիտ։ Անդերձ արավ, վուր ինչրու վիրչի ժամանակը վո՛ւնց քիզ իմաց անիմ, վո՛ւնց Պեպոյին։ Պեպոս, ասում է, ջեհել է, կոսե, վա՛յ թե՛ փչացնե, կոսե, ու իմ Շուշանը կնիկարմատ է, կոսե, վայ թե Պեպոյի ճանգը գցե, կոսե։ Ինչրու վուխտը չգա, կոսե, վունց մեկին մի՛ ասի, թե դուն ունիս. կոսե։ (Տարից հանում է մի ծալած սպիտակ հին թուղթ և, մատնացույց անելով, լացի ձայնով. ու բարձր) Իմ Կեկելի բա՞ժինքը էստումն է, կոսե։

ԳԻՔՈ— (Քիթը սրբում է) *Չիս գիտի, թե ի՞նչ օյին էկավ գլուխս։*

ՇՈՒՇԱՆ— *Էլ մի՛ ծրծռեցնի, թե քու աստուծ կու սիրես։*

Մուրճակը գցում է տախտի վրա

ԳԻՔՈ— *Չէ՛ ,ա՜յ, էս սհաթիս, քիչ է մնացի... Էտ բարաթը վուր տա՛լիս էր օղորմած հոքին, շատ ասի, թե իմ բանը չէ. էդ հանգի ծանդր բիռն, ասի, վրես մի՛ շալկի, ասի, էլ դնջութին չիմ կանա ունենա, ասի. ամա չարավ... Հալալ մարթ իս, Գիքո, կոսե,* (Լացի ձայնով) *զարթնի քիզ ճար չունիմ, կոսե... Է՜հ, չարես ի՞նչ էր, դուն ինձ ասա՛. վիկալա բարաթն ու մե յիրիք-չուրս օրվան էյնեն հոքին լրիտ խի՛ղճը... աստուծ հոքին լուսավորե,* (Աչքերը սրբելով և լաց լինելով) *բարեխոս ըլի իր Կեկելի համա։*

ՇՈՒՇԱՆ— (Աչքերը սրբելով, երկար հոգվոց է հանում) *Ը՜հ, հը՛, հը՛, հը՛...*

ԳԻՔՈ— *Է՜հ, մա՛խլաս. դիփ մահի վուրթիք ինք... Վո՞ւրդի էի՞։*

ՇՈՒՇԱՆ— *Վուր բարաթն էրիտ ջրատարը*

ԳԻՔՈ— *Հա՛, էրիտ... Առա, տարա տուն, պահեցի... Մե-մե մարթ կա խազինա է պահում. յա՜րաբ նրա քունը վո՞ւնց է տանում գիշիրով... Պահեցի... Հին սիգելնիր ունեի էրեկլե-Պարնի վախտվան... Յիս խո վարթնի մե քոխին ուրիշ վունչիչ չունիմ. ամա էնենց պահում էի էն սիգելնիրը, մարթու խանդիխան կարթացնիլ էի տալի, դուր էր գալի խոսկիրը... Դուն չիս տեսի՛, Շուշան... Ջե՛ր աստծու անումն է գլխին գրած, իժում Քրիստոսինը, իժում Հոգի սուրփը. գալիս է, ա՛ղա ջան, իժում ավետարանիչնիրը, սրփիրը, գի՛փ մե-մեկ, մե-մեկ, է՜նղադա օրհնանք, է՛նղադա բանիր... Էհ՜, գնա՜ց դիփ մեռի... Հա՜յիփ, հա՜յիփ միր ժամանակ...*

ՇՈՒՇԱՆ— *Էտ խի՛ստ հիռու գնացիր, Գիքո։*

ԳԻՔՈ— *Հիռու կի չէ, խի՛ստ մոտկացա... Ախար հենց էն սիգելնեռումը պահեցի էդ բարաթն, է՜։ Կապեցի, դրի զանդկիս քունջը, բալնիքն էլ ջիբեմես չէի հիռացնում։ Ամիս չէր անցկենա, վուր մե էրկու ջեր զանդուկս չէի բաց աքի ու կապուցկս չէի անդղի։ Ամանաթի պես գժվար վունչիչ չկա աշխրքումը։ Աստուծ, աստուծ էի անում, վուր Կեկելի բախտը մե վախտի բաց ըլի, ու բաց էլ արավ խոմ աստուծ... Մե օր էլ՝ բաց անիմ զանդուկս, տեսնիմ սաղ կապուցկը չկա։ Հա՜յ գես, հա՜յ դեն՝ չկա՛, չկա՛, չկա՛... Զարթնի էս՝ մե քանի հատ էլ հնուց, շատ հնուց, ա՜յ, սի-փուղ ունեի, էն սի-փուղն էլ հիդը գում ու կլան է էլի՜. մեկէլ բանիրը կի զանդկումը իր տեղը անշարժ, սաղ-սալամաթ գարսած է... Ախպեր, թե գող էկա՜վ, կանց հին գրոշնիրն էր տանում, թաղա փո՛ւղն էր տարի՜... Էրկու թուման ավել գիփ թաղա՝ Նիկալայի գրըզըղան մանեթնիր ունեի. թե սատանա մտավ զանգուկս, էն վո՞ւնց տուն գնաց ու գուս էկավ, վուր մե տիղ ծակ*

նում, հին բանիրը ինչի՞ն է պետկ։ Անց կացավ, գնաց... Գնայու վուխտը՜...

ՇՈՒՇԱՆ— Նրա գնալը մե յիրիք ամիս կույի, գա՞նա։

ԳԻՔՈ— Հա՜, էտենց էլ։ Սա, մի՜ տափ, բալնիքս չիբեմես կու հանե, յիս ո՞վ գիդի՝ ինչ էրազումն էի էն չախը, աղավարի զանգուկս բաց կոնե, կապուցկն ու հին փուղիրը կու ծալըպե, զանգուկը յիդ կու կոխպե, բալնիքը չիբս կու դնե ու՝ հայդե՜... Սրի ու հիմի դուն ինձ լը՛քի տաս, տեսնիմ թե ինձ վրա ղոչաղի ձեռնեմեն ի՛նչ կու դուս գեր... Ախպար, մարթու խոսկը կու իմանան չեր, Շուշան, իժում ղնամիշ կոնին, թե ղնամիշ անելու է. թե չէ լը՛քին ի՞նչ անե, վուր ինձ լըքի իս ասում, Շուշան։

ՇՈՒՇԱՆ— Իժո՞ւմ։

ԳԻՔՈ— Իժում էլ է՛ն, վուր էտ բարաթը փոշտով ղրգիլ է հիմի ու մե կարաբաղին էլ մասխարությիննիր է գրի վրես... Քու սիգելնիրը, կոսե, Փանգստում ղրգեցի, կոսե, ու սի-փուղերու համա, ասում է, թե գո՛ղիս՝ մե մենդալ կու ղրգին քիզ համա, կոսե, ու էս բարաթն էլ, ասում է, յիդ քիզ փեշքաշ, ասում է...Գիրն էլ հորեսա էտատումն է, թե զուղիս... Ա՛յ... (Դանդաղ վեր կենալով, գնում է դեպի Շուշանը):

ՇՈՒՇԱՆ— (Նույն միջոցին) Գեդինը պատռվի ու նրա տատանին դե՛վեր տանե, ը՞հրա՜։

ԳԻՔՈ— (Առաջարկելով ծրարը Շուշանին) Տի՛ս, թե սուտ իմ ասում։ Մե դավի-դառաբա էլ էս փակեթի դուս բերիլն էր էսօր. ջա՛նս գնաց շատ դես ու դեն ննգնելեն։

ՇՈՒՇԱՆ— Տա՛ր, տա՛ր, ինձ հարկավուր չէ, էլի քի պետկը զու քա. առանց էտ էլ ավտում իմ քիզ։

ԳԻՔՈ— Աբա՜, Շուշան, յիս ի՞նչ միղ ունիմ։

ՇՈՒՇԱՆ— Կեկելս կի մեռնում է ու ի՞նչ անիմ թե միղ չունիս։

ԳԻՔՈ— Աստուծ օղորմած է, Շուշան, աստուծ օղորմած է։

ՇՈՒՇԱՆ— Աստուծ միր աճկը հանից ու պրծավ, էլ ի՞նչ օղորմած է։

ԳԻՔՈ— Մի՛ սափ, Շուշան, մի՛ սափ, նրա գարսողությինը օչով չի կանա իմանա .. Հալբաթ նրա կամքն էսենց էր։

ՇՈՒՇԱՆ— Փա՛ռք իրան, ի՞նչ անինք։

ԳԻՔՈ— (Նստելով նույն աթոռի վրա) Լավ մարթ վուր էլիլ էր, խո փուղի համար չէր թողնի Կեկոյին։

Ծրարը պահում է

ՇՈՒՇԱՆ— Յիս էլ միթամ էտ իմ ասում դիփ, ամա էլ ի՞նչ փայիդա. նամուսներուս կտրվեցավ, սիրաթներուս գնաց, աշխարքի համա դեռ ու մասխարա ինք դառի։ Էլ ո՞վ զուգե իմ Կեկելին... Խի՛ղճ իմ Կեկելս... (Լաց լինելով) Նորշի արիվը փչանում է...

ԿԱԿՈՒԼԻ— (Ուրախ) *Ղո՞ւրթ... Գթա՞ք...* (Վեր թռչելով) *Վա՛, յիս ձիր հոգո՛ւն մեռնիմ... Ա՛յ հրաշկ... Իժում էտ վո՞ւնց էլավ, վո՞ւնց զըթնըվեցավ։*

ՇՈՒՇԱՆ— *Ա՛յ, ճամփին կոսե։*

ԿԱԿՈՒԼԻ— *Սա գթավ, սա՞...*

ՇՈՒՇԱՆ— *Հա՛, հա՛...*

ԿԱԿՈՒԼԻ— (Փաթաթվելով Գիքոյին) *Ջա՛րդ տանիմ յի՛ս, Գիքո ջան, արա լոթին դուն իս հիմի, ա՛յ. հոգումս նստեցնիմ քիզ հորեսի դենը, իմ հերն իս դուն հիմի...*

ԳԻՔՈ— *Իմ տարսը դառնաս, վո՛ւրթի։*

ԿԱԿՈՒԼԻ— (Շտապով և ցածր) *Սաղ ըլիս, Գիքո ջան...* (Բարձր) *Դե՛, վի՛ կաց, էլ մի՛ ուշացնի... հը՞մ, Արութին,* (Կրծքին խփելով) *տեսնինք հիմի՝ ի՞նչ իս ասում, ի՞նչ իս էլի մոգոնում...* (Գիքոյի թևից բռնելով) *Արա՛, Գիքո ջան, հը՛ա...*

ՇՈՒՇԱՆ— *Ա՛խ, ա՛ստուծ, ա՛ստուծ։*

ԿԱԿՈՒԼԻ— (Շուշանին) *Դարդ մի՛ անի, դևդի ջան, աստուծ օղորմած է։*

ՇՈՒՇԱՆ— *Գնացե՛ք, շտապեցե՛ք, վունչիչ չանին Պեպոյին։*

ԿԱԿՈՒԼԻ— (Վեր քաշելով Գիքոյին) *Վա՛, հե՛ր օխնած, մի՞խած իս էտի։*

ԳԻՔՈ— (Վեր կենալով) *Ա՛յ, գնա՛նք, գնա՛նք...* (Պատրաստվում է քթախոտ քաշելու) *Տեսնիմ թե վո՞ւնց է հաշա ուտում հիմի։*

ԿԱԿՈՒԼԻ— (Ձեռքից խլելով քթախոտի տուփը) *Տո՛, արի ճա՛մփին քաշե, է՛լի, վա՛։*

Թևից բռնած շտապով տանում է։

ԳԻՔՈ— (Գնալով) *Ո՛ւհ, ո՛ւհ, ո՛ւհ...*

ԿԱԿՈՒԼԻ— (Փաթաթվելով) *էլ զահրուզըթի չիմ ասի, քի մատաղ, Գիքո ջան։*

Դուրս են գնում դիմացի դռնից

## Տեսիլ Զ

ՇՈՒՇԱՆ, հետո ԿԱԿՈՒԼԻ

ՇՈՒՇԱՆ— (Մենակ, կանգնած) *Ցա՛րաք ի՞նչ ես ուզում միզմեն, ա՛ստուծ, ի՞նչ գեթ ունիմ քի մոտ։ Ջեր անկս հանեցիր, մարթուս խլեցիր, իժում ախչկաս բախտը քար ու քանդ արիր, հիմի էլ ի՞նչ ես պատրաստում իմ սիվ ու մութ օրի համար։ Խղճա՛, ա՛ստուծ խղճա՛. վունչիչ չիմ ուզում*

## Տեսիլ Թ

### ՆԱ, ԿԵԿԵԼ

*ԿԵԿԵԼ*— (Ներս գալով ձախ դռնից) *Էկա՞ր, Պեպո։*

*ՊԵՊՈ— Էկա ու գնում իմ. մե քանի վուխտ մնա՛ս բարով։*

*ԿԵԿԵԼ— Ո՞ւր իս գնում, ի՞նչս ասում։*

*ՊԵՊՈ*— (Հեզնորեն և ժպիտն երեսին) *Տաք տիղ, մայինց մինք տեղ չունինք ո՛ւ...*

*ԿԵԿԵԼ— Չիմ իմանում՝ ի՛նչս ասում։*

*ՊԵՊՈ*— (Վեր կենալով) *Բիրթն ին տանում ինձ, Կեկել։*

*ԿԵԿԵԼ*— (Վախեցած) *Ինչի՞։*

*ՊԵՊՈ*— (Սենյակի մեջտեղը մնացած աթոռը դնելով իր տեղը) *Էնենց, խաթրիշուն։*

*ԿԵԿԵԼ— Վա՛, Պեպո ջան, ի՞նչ իս ասում։*

*ՊԵՊՈ— Հանաք չիմ անում, Կեկել. մի՛ վախենա, փունցոր ըլի յոլա կէհաք։ Ո՞ւր է դեդեն, տանը չէ՞։*

*ԿԵԿԵԼ— Էս սհաթիս գու քա. համբուրելու գնաց էստի մոտիկ։*

*ՊԵՊՈ— Խի՛ղճ դեդա...*

*ԿԵԿԵԼ— Ախպար, մե դրուստ խոսի, Պեպո, է՜, բիրթումն ի՞նչ բան ունիս։*

*ՊԵՊՈ— Վունչինչ...* (Դառը ժպիտով) *Շատ դամբ զցելեն կուռդ դաթրեցավ, կոսե. գնա՛ հիմի մե՛ քիչ դնջացի, կոսի։*

*ԿԵԿԵԼ— Ա՛խ, Պե՛պո ջան, ջիգարս մի՛ պատռտի, թավաթ էրած իմ ու խորված։*

*ՊԵՊՈ— Հինգ հազար էլ էրվիս ու խորվիս, ո՞վ է հարցնում։ Վճռած բան է, պիտի գնամ բիրթը։*

*ԿԵԿԵԼ— Ինչի, ո՞ւմ խաթիր. ի՞նչ իս արի։*

*ՊԵՊՈ*— (Դառնորեն) *Գո՛ւղութին։*

*ԿԵԿԵԼ— Դո՛ւն գուղութի՛ն։ Չէ՛, չէ՛, Պեպո, ասա՝ ի՞նչ բան է, խո հոգիս դուս էկավ։*

*ՊԵՊՈ— Թո՛ւղ դուս գա, իմն էլ հիդը, ումն ի՞նչ կու պակսի. շա՛տ հարկավուր է խալխին քու հոքին, յա իմը՜։*

*ԿԵԿԵԼ*— (Աչքերը սրբելով ու լացի ձայնով) *Ա՛խ, Պեպո ջան, ի ո սպանեցիր ինձ*

*ՊԵՊՈ— Սպանողը սպանից, յիս ի՞նչ անիմ։*

*ԿԵԿԵԼ— Ո՞վ, ախպար*

*ՊԵՊՈ— Ո՞վ... Ա՛ղա Արութինը...* (Դառը ծիծաղում է) *Հը՜, հը՜, հը՜...*

ԱՐՈՒԹԻՆ— Դիփ մեկ է, Գիքո, մե տեսնիմ թե էտ ի՞նչ թուխտ է։

ԳԻՔՈ— Ա՛յ, ինչ թուղթ է, ա՛ղա Արութին։ (Ձեռքը գրպանն է տանում և հանում ծխախոտի տուփը) Չէ՛, էս չէր, ամա դիփ մեկ է... (Քաշում է) Հը՛մ... Ա՛յ, (Պահում է ծխախոտի տուփը և մուրհակը հանում) դուն մե քիչ ՚ի՛ռու կանգնի, ա՛ղա Արութին։

Ինքը հեռանում է դեպի տախտը·

ԱՐՈՒԹԻՆ— Վա՛. վա՞խենում իս, վուր չխլի՞մ. աշխարքն ալան թալան խո չէ՞։

ԳԻՔՈ— Չէ՛, չէ՛, ա՛ղա Արութին, էտ վո՞ւնց կոնիս, դա՞նա դուն է՛տ հանգի մարթ ի՞ս. ամա էս թուխտը խիստ փաթերակավուր իմքին է։ Ասում իմ ձեռդ չդիպչի։ (Բաց անելով մուրհակը) Ա՛յ, տի՛ս (Հեռվից ցույց տալով) էս է՞։

ԱՐՈՒԹԻՆ— (Գլուխը մոտեցնելով մուրհակին) Աբա՛, աբա։

ԳԻՔՈ— (Մատնացույց անելով) Վա՛յ, ա՛յ «չեմի վալի*, Արութին Չիմչիմովի»։

Զարմանք Տեսարան

ԱՐՈՒԹԻՆ— (Շփոթվելով և կակազելով) Է՛տ... է՛տ . (Ձեռքը մեկնելով) Ի՛մ... ի՛մ... ձեռքն է՞։

ԳԻՔՈ— (Մոտեցնելով մուրհակը) Բաս իմն է։

ԱՐՈՒԹԻՆ— (Ճանաչելով մուրհակը, առանձին) Էս ի՞նչ ջիրգնուց պատիժ էր... (Ձեռները առաջ տանելով) Մե լավ տեսնիմ...

ԳԻՔՈ— (Մուրհակը հեռացնելով) Մո՛ւլափ, աղա ջան, է՞։ Ախար, էն դադա վուր ասում էիր թե ջիս վկա իմ, վուր սպրտ իս, սո՛ւտ էի ասո՞ւմ. ամա վուր քու օխտեմեն չեկա, ջիս ի՞նչ անիմ։ (Աղաղակելով) Գոհանա՞մ քու դադաստանին, ա՛ստուծ։

ԱՐՈՒԹԻՆ— (Կամենալով մուրհակը խլել) Մե տեսնիմ, ասում իմ...

ԳԻՔՈ— (Գրպանը դնելով մուրհակը) Է՛, ա՛ղա Արութին, ձե՛ռը քի-կալ, քու հոգին օղորմի։ Ասում իմ վուր փաթերակի թուխտ է, է՛։ Էս ահա-թիս զու քա Պեպոն, Կակոյին մե նամուսով կու գթնե նրան։ Դուն էսափ մո՛ւլափ տու, մե գնամ Շուշանին իմաց անիմ

Ճանապարհից ետ նայելով Արութինին, դուրս է գնում ձախ դռնից·

## Տեսիլ ԺԱ

ԱՐՈՒԹԻՆ—(Մենակ երկար ժամանակ սառած կանգնած է, հետո ուշքի գալով)

Է՛ս հանգի էլ օյի՞ն... Շատ բան է էկի գլուխս, ամա էս թահարը չէ էկի.. վո՞ւրդանց լուս ննգավ էս անիծած բարաթը... վո՞ւնց լուս ննգավ...

* Վրացերեն—Իմ պարտքն է։

ՊԵՊՈ— *Իմ բարիշխը ինչի՞տ է հարկավուր, ա՛ղա Արութին. դուն մինձ մարթ, չիս մե խիղճ օղորմելի, դուն հարուստ, չիս աղկատ...* (Հեգնորեն) *Վա՛խենում իս, վուր իմ մագիեր քիզ շլրգին բիրթը՛. թե՞ ճոնիրդ դողում է ինձմեն։*

ԱՐՈՒԹԻՆ— *Տո՛, չիս ուզում իմ քիզ լավութին անի։*

ՊԵՊՈ— *Ի՞նչ ձեռնեմեա էկավ, խո ա՛րիր. փուղ էիր պարտ՝ հաշա կերար, էկա տունդ՝ խնդրելու, տանեա դուս արիր, վիրչը բիրթն էլ իս ղրգիլ տալի, ուրիշ ի՞նչ լավութին պիտի դուս գա ձեռնեմեա, ա՛ղա Արութի՛ն։ Էկիլ իս վուր մա՛սխարա գցիս ի՛նձ։ Հերի՛ք է, հե՛րիք, պարուն... Գնա՛, գնա՛, աստծուն փա՛ռք տու, վուր իմ տանն իս ու իմ օճըռքի տակն իս գթնըվում, թե չէ էս էրած սրտիս վրա էլ սաղ չէիր պրծնի իմ ձեռնեմեն... Միտտ է՞... խո մի՛տտ է՝ ինչ հանգի դուս արիր ինձ քու տանեմեն... էն արարմունքը քի՛զ կու սազ գէր, քի՛զ, ա՛ղա Արութին։ Ցիս քիզ խնդրում իմ, համեցեք գնա՛, չափա քաշե, վի՛ կաց, հորես կու տանին ինձ, էլ վուխտ չկա, ուզում իմ մորս ու քվիրս բարովիմ։*

ԱՐՈՒԹԻՆ— *Տո՛, էդ բանը իմ ձե՛ռին չէ՛. էլ չղրգիլ տամ քիզ բիրթը, ուրիշ ի՞նչ իս ուզում։* (ՊԵՊՈՆ զարմացած նայում է, իսկ դրսից լսվում է ԿԱԿՈՒԼՈՒ ձայնը) *Էկա՞վ։*

## Տեսիլ ԺԳ

ՆՐԱՆՔ, ԳԻՔՈ, ԿԱԿՈՒԼԻ

ԳԻՔՈ— (Դիմացի դռանը, Կակուլուն) *Կորիլ ին, կորիլ. օչով չկան։*

ԿԱԿՈՒԼԻ— (Ներս գալով, Գիքոյին) *Տո՛, ա՛յ Պեպոն, ի՞նչ իս ասում։*

ԱՐՈՒԹԻՆ— (Տեսնելով Կակուլուն, առանձին) *Ի՛լի էս պաժարնին։*

ԳԻՔՈ— (Ներս գալով) *Էս վո՞ւնց էկար, Պեպան, վուր չտեսա։* (Արութինին) *Ա՛յ ա՛ղա Արութին, հիմի կու տա՞մ,* (Մատնացույց անելով Պեպոյին) *թե կոսե։ Է՛տ դուն, է՛ս սա։*

ՊԵՊՈ— *Էս ի՞նչ խաբար է, չիմ իմանում։*

ԿԱԿՈՒԼԻ— *Վա՛, աղա Արութինի մոդ դուն իս խոսում ու մի՛վ իս հարցնո՛ւմ։*

Գիքոն անցնում է բեմի ձախ կողմը։

ՊԵՊՈ— *Սրա ասածը խո ուփրո չիմ իմանում։* (Հեգնորեն) *Էկիլ է՝ բա՛րիշինք կոսե։*

ԿԱԿՈՒԼԻ— (Ծաղրելով) *Հա՜...* (Հեգնորեն գլուխ տալով Արութինին) *Բաս մե լավ շնորհակալութին անինք։*

**ԳԻՔՈ**— *Ղո՛ւրթ վուր էրազ, Պեպո ջան։ Չիս գիդի թե...*

**ԱՐՈՒԹԻՆ**— (Առանձին) *Է՛ս ղաղա էլ խայտառակութի՛ն։*

**ԿԱԿՈՒԼԻ**— (Մատնացույց անելով Գիքոյին) *Սրան թե խոսեցրիր, Պեպո, օխտը դիվի հեքիաթի վրա էրգար է էտ բարաթի տակը։*

**ՊԵՊՈ**— *Ախար, էս վո՞ւրղանց լուս ընգավ։*

**ԳԻՔՈ**— (Նստելով թախտի վրա և պատրաստվելով պատմելու) *Ա՛յ, Պեպան ջա՛ն, վունց էր...*

**ԿԱԿՈՒԼԻ**— (Գիքոյի բերանը ձեռքով ծածկում է) *Սո՛ւ, սո՛ւ, դուն սո՛ւս, Գիքո ջան...* (Պեպոյին) *Էտ վունցոր լուս ընգավ, իժում կոսինք. ամա դուն էտ անաստծուն թա՛մաշա արա։*

Արութինը սարսափելի դրության մեջ է.

**ՊԵՊՈ**— (Թեթև նայում է Արութինին և իսկույն դարձնելով հայացքը մուրհակի վրա, վերցնում է գլխարկը և դեպի երկինք աղաղակում) *Գոհանա՛մ քի, տե՛ր. գիփունի դաղաստանի վրա քու դաղաստանն է էլի ղուրթ...* (Գլխարկը ծածկելով, Գիքոյին) *Սի՛րտս իմանում էր ախար, է՜...*

**ԳԻՔՈ**— *Գիդե աստուծ, վուր յիս միդ չունիմ, Պեպո ջան...*

Կակուլին ձեռքով իր բերանը ծածկելով, հորդորում է Գիքոյին լռել։

**ՊԵՊՈ**— *Իմ բարի հրիշտակն իս դուն էս սհաթիս, Գիքո ջա՛ն, ի՛նչս ասում։*

Լուռ և անշարժ նայում է Արութինին երկար ժամանակ։

**ԳԻՔՈ**— (Նույն միջոցին, ցածր ձայնով) *Բարի հրիշտակն ըլի քու քոմա՛գը, վուրթի։*

Երկար լռություն։ Պատկեր։

**ՊԵՊՈ**— (Մանր մոտենում է Արութինին և մուրհակը ցույց տալիս) *Էս կու ճանչնա՞ս, ա՛ղա Արութին...* (Երկար և լուռ նայելով երեսին, գլուխը շարժում է) *Հի՛մի իմ իմանում քու էստի գալը... Լա՛յիղ արիր, հա՜... Թե՛ կոսե վունչիշ պարտ չիմ, թե՛ վուր օրթում հավատ արիր, թե՛ վուր վուրթկերանցով օրթում կերար... Է՞տ է քու օրթումն, էլի՜. է՞տենց իս ամեն օր օրթում ուտում, էլի. է՞տով իս աշխրքին խափում, էլի՛, է՞տ օրթումներով իս մոդ արի էտ ղաղա փուղն, էլի՜... Ա՛յ, խոռո՞վ կենա քի՛լ յու օրթումնիրը... Ամեն մե քու օրթումը օ՞րթունք կարվի ջանումս ու ջանդ ծակծկվի, վուր հոքիտ էգեբա յիրգնքի լուս տեսնէ...* (Ավելի մոտենալով) *Չէ՛, չիս ամանչո՞ւմ... Խճղտանքը խո դադարկ քամի է քիզ ամա.* (Մուրհակը նորից ցույց տալով) *Է՛ս ի՞նչ է, ի՛նչ. էստուրն ի՞նչ*

ՊԵՊՈ— *Կըհամ ըիրթը, կէհամ, յիս քու օղորմութինը չիմ ուզի ու* (Մուրհակը ցույց տալով) *էս փուղիրը առանց քու ասելու էլ կու առնիմ։*

ԱՐՈՒԹԻՆ— *Գժութին մի՛ անի, Պե՛պան* (Ձեռքը ծոցը տանելով) *Ա՛ռ էս փուղիրտ, ասում իմ։* (Պեպոն գլուխը շարժում է) *Ա՛ռ մե իմքին էլ ավելցնիմ. հը՞, ի՞նչ ղաղա... մե հինգ թուման ավելցնի՞մ... տա՞ս... քսա՞ն...*

ՊԵՊՈ— (Որ արհամարհանքով նայում է Արութինին, դիմում է Կակուլուն) *Մտի՛կ իս անո՞ւմ, Կակուլի, մտի՛կ իս անում սրա՞ն. ինչրու հիմի գլուխկն էլ չէր տալի ու հիմի ավելցնում էլ է... Է՛սենց ին, ա՜յ, դի՜փ էսենց ին. քանի օշով չի գիդի, հախն էլ ին կտրում ու յիփոր վախենում ին՝ յանն աշքարանա, է՛սենց ին ժաժ գալի, ա՛յ, է՛սենց, վուր անումներուն չկտրվի միթամ։*

ԿԱԿՈՒԼԻ— (Պեպոյին, ցածր) *Տո՛, ա՛ռ, ա՛ճկը հանե, ու դրա չիգրը* (Տոմսըկը ցույց տալով) *յիս գիդիմ էտ ղա՛լբի ղուլաբինը։*

ՊԵՊՈ— (Շարունակելով Արութինին) *Ցիս քու բախշիշը չիմ ուզում. ա՛ղա Արութին, տար ա՛ճկդ դի. ամա ա՛ճկդ կու հանիմ ու գլուխկը, վուրդիոր ինձ էս սհաթիս տեցիր, է՛նդի կու առնիմ, է՛նդի. թո՛ղ դիփունքը ճանչնենան՝ ի՛նչ մարթ էլ իս, թո՜ղ դիփունքն իմանան քու արարմունքը. էստու համա բիրթը կի չէ, թեգուզ հո՛ւրումը կու նստիմ, հո՛ւրումը։*

ԿԱԿՈՒԼԻ— (Պեպոյին) *Ը՞, յիս քու խիլքին ի՛նչ ասիմ։*

ԱՐՈՒԹԻՆ— *Բոնե՛, խսուն թուման ավելցնիմ։*

ԿԱԿՈՒԼԻ— (Մոտենալով Արութինին) *Բի՛, յիս բարիշեցնիմ։*

ՊԵՊՈ— (Կակուլուն հետ մղելով) *Քու բանը չէ, Կակուլի։*

ԿԱԿՈՒԼԻ— (Հետ գնալով) *Ա՛յ սարսա՛ղ։*

Կրկին անցնում է բեմի ձախ կողմը։

## Տեսիլ ԺԵ

ՆՐԱՆՔ, ՇՈՒՇԱՆ, ԳԻՔՈ

ՇՈՒՇԱՆ— (Կարիքայով դիմացի դռան շեմքում, Գիքոյին, որ հետևում է նրան) *Վո՛ւյ, քոռանամ յիս, ղուրթ իս ասո՞ւմ, Գիքո՛...* (Առաջ գալով և կարիքան վերցնելով) *Վո՞ւրդի է, վո՞ւրդի մեր հոքեհանը... Սա է՞..*

Կարիքան դնում է տախտի մոտ դրած աթոռի վրա, իսկ Գիքոն գնում, կանգնում տախտի մոտ։

ՊԵՊՈ— *Սա՛, սա՛, դէդի. ա՛յ միր բախտավուրողը։*

ՇՈՒՇԱՆ— (Արութինին, շտապով) *Ա՛յ գեդինը պատռվի ու քիզ գե-*

ԳԻՔՈ— (Պեպոյին) *Տո՛, հա՛դիր բարիշի՛ս։*

ԿԱԿՈՒԼԻ— (Շուշանին) *Ասա՛, դեդի, վուր բարիշի, հադիր ավել է տալի։*

ՇՈՒՇԱՆ— *Իր ա՛ճկը դնե ավելին, թաք Պեպոյիս ձեռը չտա։*

ԿԵԿԵԼ— *Բա՛րիշի, Պեպո ջան, բա՛րիշի։*

ԱՐՈՒԹԻՆ— *Ա՛րի կոտրվի, Պեպան, բա՛րիշինք։*

ՊԵՊՈ— *Ա՛րի բարիշինք, ա՛րի.. Ա՛րի գնանք, վուրդիոր ինձ էս ահա-թիս ստեցիր, ա՛րի մեկ էն դի էս բարաթը շանց տամ, մե էրեա վուր սուտը յիս չիմ, թեգուզ գլխկեմեն էլ մե իմքին քիզ փեշքաշ... Ա՛րի, է՛լի, ա՛րի։*

ՇՈՒՇԱՆ— (Արութինին) *Գնա՛, գնա՛, վունցոր միր էրեսը սիվցրիլ իս, թո՛ղ հիմի քու էրեսը սիվնա։*

ՊԵՊՈ— *Ա՛րի, է՛լի։*

ԱՐՈՒԹԻՆ— *Էտ վուր ուզենամ, խո էս ղադա էլ աղաչանք չիմ անի։*

ՊԵՊՈ— *Ը՛ը, գո՛ւղ, ավազա՛կ...*

ԿԱԿՈՒԼԻ— (Առանձին, կիսաձայն և կրծքին խփելով) *Վո՛ւյ մե՛...* (Դիմացի դուռը դրսից բախում են։ Լռություն։ Մոտենալով դռանը և փոքր ինչ բաց անելով, որպես թե մեկի հետ խոսում է) *Հա՛, էստի է։* (Առաջ վազելով, Պեպոյին) *Տո՛, գժվիլ ի՞ս, քո՛ւթահ արա, պրիստավն է։*

ԿԵԿԵԼ, ՊԵՊՈ, ՇՈՒՇԱՆ— (Միասին) *Պրիստավը՞։*

ԳԻՔՈ— *Պրիստավը՞։*

Պատկեր։

ԱՐՈՒԹԻՆ— *Ի՛ս տու բարաթս, Պեպան, թե չէ բիրթն ին տանում։*

ՊԵՊՈ— *Հաշաթ չէ, կէհամ բիրթը, կու նստիմ. էնդի խո չիմ մեռնի... Մե օր կու ազատվիմ ախար, էլի՞ վաղեն հիռու չէ։ Շա՛տին իս խափի էսենց, շա՛տի գլխին իս օյին էկի էսենց, շա՛տի բողազն իս դուս կարի էսենց, ու յիս Պեպոն չիմ ըլի, թե դիփունանց ջիգրը չիմ հանի... Սա՛ղ աշխըրքումը էրեսդ մուր կու շինիմ... Մնա՛ս բարով, դեդի... մի՛ լաց ըլի, Կեկել, աստուձ օղորմած է, խղճի ճակտին էսենց է գրած։*

Կակուլին կամաց-կամաց գնում է դռան մոտ և հետզհետե պահապանի դիրք բռնում

ԱՐՈՒԹԻՆ— (Սաստիկ շփոթված և առանձին) *Ի՞նչ անիմ՝ հի՛մի։*

ԿԵԿԵԼ— (Փաթաթվելով Պեպոյին) *Մի՛ գնա՛, Պե՛պո ջան, մի՛ գնա՛։*

ՇՈՒՇԱՆ— (Պեպոյին, մյուս կողմից)— *Ի՞նչ իս անում, Պե՛պո, ի՛րան սիվցրու էտ սիվ ու մուխ բարաթը։*

ՊԵՊՈ— *Իրան տամ, վուր սրա մա՛սխարեն դառնա՞մ... վուր խալխի անկսումը սո՛ւտը յիս էրևամ, ղուրթը սա՞... բիրթի ահու գլո՛ւխս ծախի՞մ...*

## ՄՈՒՐԱՑԱՆ

# ՌՈՒԶԱՆ ԿԱՄ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ՕՐԻՈՐԴ

Պատմական դրամա,
5 արարվածով
(ինը պատկեր)

# ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

## ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

**Ջալալ իշխանի պալատում սրբատաշ քարերից շինված մի սրահ կամարակապ առաստաղով, նեղ և սրածայր պատուհաններով, որոնք ագուցած են գույնզգույն ապակիներով։ Սրահն ունի երկու հակադիր սրակամար դռներ։ Պատերի մոտ դըրված են հնատարազ աթոռակներ ու բազմոցներ. վերջինները ծածկված են մետաքսով։**

**Սրահի հատակը ծածկված է գորգերով։**

### Տեսիլ Ա

**ԱՍՊՐԱՄ և ՍՈՒՐԻԿ**

*ԱՍՊՐԱՄ— Ինչո՞ւ համար ես հետաքրքրվում, Սուրիկ։*

*ՍՈՒՐԻԿ— Նրա համար, որ դու սովորություն չունիս օրիորդ Ռուզանի կացարանը հաճախելու, իսկ վերջին օրերս բոլոր ժամանակդ այս սրահներումն ես անցնում։*

*ԱՍՊՐԱՄ— Այդ դու արդեն նկատե՞լ ես։*

*ՍՈՒՐԻԿ— Ոչ միայն ես, այլև պալատի ծառաները։*

*ԱՍՊՐԱՄ— Օ՛, այդ լավ չէ։ Ես չէի կամենալ, որ իմ քայլերը ուրիշները գիտենին։*

*ՍՈՒՐԻԿ— Գիտե՞ս, Ասպրամ, փասյաններն էլ ճիշտ քեզ նման են մտածում. գլուխները խրում են ձյունի մեջ և կարծում են թե՝ որսորդի աչքերից ծածկվեցին։*

*ԱՍՊՐԱՄ— էհ, ի՞նչ անենք։ Կինը հո փասյանից ավելի չի կարող մտածել։*

*ՍՈՒՐԻԿ— Ինչո՞ւ չէ, երբեմն սատանայից ավելի։*

*ԱՍՊՐԱՄ— Ինչ որ Պապաք իշխանը թելադրում էր ինձ։*

*ՍՈՒՐԻԿ— Օրինա՞կ։*

*ԱՍՊՐԱՄ— Գովում էի շարունակ Համտուն իշխանին՝ հիշելով նրա բարեմասնությունները, հռչակված անունը, նրա զորությունը, քաջասրտությունը, հարստությունը, խելքը, գեղեցկությունը։ Պատմում էի առասպելներ այնպիսի օրիորդների մասին, որոնք, իբր թե, խելագարվելու չափ սիրահարվել են Համտունին, բայց որոնց հայրը իշխանը մերժել է սառնությամբ։ Ի վերջո հայտնեցի թե՝ Համտունը սիրում է միայն գեղեցիկ Ռուզանին, որից եթե մերժվի, անպայման պիտի քաշվի կուսակրոնություն ընդունելու։*

*ՍՈՒՐԻԿ— Եվ ի՞նչ օգուտ այդ զրույցներից։*

*ԱՍՊՐԱՄ— Նախ այն՝ որ Ռուզանն այսպիսով կընտելանա այն մտքին թե՝ Ներսեհից զատ կա և մի ուրիշ արժանավոր իշխան, որ հետամուտ է յուր սիրույն։ Երկրորդ՝ նա ինքն իրեն կսկսե համեմատություններ անել Ներսեհի և Համտունի մեջ և վերջինին ավելի գերազանց գտնելով՝ նրան էլ կընտրե փեսա։*

*ՍՈՒՐԻԿ— Բայց չէ՞ որ մեծ իշխանը Ռուզանի ձեռքը Ներսեհին է խոստացել։*

*ԱՍՊՐԱՄ— Այդ նշանակություն չունի։ Հենց որ Համտունն իմացավ, թե Ռուզանի սրտում բացվել է յուր համար մի փոքրիկ անկյուն, նա իսկույն փոխել կտա մեծ իշխանի որոշումը։*

*ՍՈՒՐԻԿ— Բայց բացվե՞լ է այդ անկյունը։*

*ԱՍՊՐԱՄ— Արդեն։*

*ՍՈՒՐԻԿ— Ի՞նչ ապացույց ունիս։*

*ԱՍՊՐԱՄ— Ահա՛, թե ինչ։ Ներսեհ իշխանի բացակայության պատճառը մինչև այսօր ծածկել են Ռուզանից՝ վախենալով թե՝ միգուցե նա անհանգստանա իմանալով, որ յուր փեսացուն գնացել է թաթարների դեմ կռվելու։ Պապաք իշխանի խորհրդով ես օրիորդին հայտնեցի թե՝ Ներսեհ իշխանը Խոխանաբերդ չէ գալիս այն պատճառով, որ մեծ իշխանը մերժել է նրան յուր ձեռքը։ Օրիորդն այս նորությունը լսեց անտարբերությամբ։*

*ՍՈՒՐԻԿ— Եվ առանց հուզվելո՞ւ։*

*ԱՍՊՐԱՄ— Առանց հուզվելու։*

*ՍՈՒՐԻԿ— Օ՜, այդ չափազանց է։*

*ԱՍՊՐԱՄ— Հապա, ի՞նչ էիր կարծում։ Այժմ իմացիր, թե՝ ի՞նչ փայտից են լինում տաշած այդ իշխանուհիները։*

*ՍՈՒՐԻԿ— Եթե այդպես է, ուրեմն ոսկիները կստանաս։*

ՍՄԲԱՏ— Ապրես իմ քաջ. ուրեմն դու կերթաս Ներսեհի ետևից։

ՍՈՒՐԻԿ— Իմ նժույգը, տեր, սրընթաց է քամու պես, երկու ժամվա մեջ նա կհասցնի ինձ Մռավ։

ՍՄԲԱՏ— Կպատրաստվես և կսպասես իմ հրամանին։ Այժմ պատմիր ինձ քո լուրերը։ (Խամենում է նստել, բայց մի ոտնաձայն գրավում է նրա ուշադրությունը) Ո՞վ է գալիս այստեղ։

ՍՈՒՐԻԿ— (Նայելով նրա կողմը) Պապաք իշխանը՝ օրիորդի դայակի հետ։

ՍՄԲԱՏ— Որ այդպես է, հեռանանք. մենք կխոսենք իմ սենյակում

(Դուրս են գալիս աջ դռնով)։

## Տեսիլ Դ

### ԹԵՆԻ և ՊԱՊԱՔ

(Ներս են մտնում ձախ դռնով)

ԹԵՆԻ— Այստեղ, Պապաք իշխան, կարող եմ մի փոքր հանգստանալ։

ՊԱՊԱՔ— (Աթոռը մոտեցնելով) Հրամմե, մայր Թենի, այս սրահի վերելքն, արդարև, շատ բարձր է։

ԹԵՆԻ— Այո՛, ամեն անգամ երբ վերադառնում եմ եկեղեցուց, այս քարե սանդուղքները հոգնեցնում են ինձ։ (Մի փոքր հանգստանալուց հետո շարունակում է) Հա, ո՞ւմ էի ասում այդ միության ես դեմ եմ։ Նորեք չէի կամենալ, որ իմ պահած ու պաշտած Ասղանը այդ ծորոզեսուցում գնար։ Ի՞նչ մեղքս ծածկեմ տանելով ասում եմ Ներսեհ իշխանին։

ՊԱՊԱՔ— Եվ իրավունք ունիս։ Ասում են թե՝ դրա մայրը մեծ թշնամություն է արել քեզ։

ԹԵՆԻ— Օ՜, և ի՜նչ թշնամություն նա ուղղակի գժբախտացրեց ինձ։ Լսե՞լ ես այդ պատմությունը։

ՊԱՊԱՔ— Լսել եմ. ասում են այնքան ժամանակ շատ գեղեցիկ ես եղել, այնպես որ Հանդարբերդի Վախթանգ իշխանը տեսնելով քեզ՝ հրապուրվել է քո գեղեցկությամբ և ուզեցել նշանվել։ Բայց նրա քույրը, որ այս Ներսեհի մայրն է եղել, չարախոսել է քո մասին, ասելով թե՝ Թենին տարիքով մեծ է և բարքով դաժան. Վախթանգը քրոջ զրպարտության հավատալով հրաժարվել է քեզնից։

ԹԵՆԻ— Այո. և այդ չարաբաստիկ դեպքից հետո՝ հայրս հիվանդացավ ու մեռավ։ Նա պատվասեր մարդ էր և չկարողացավ յուր դստեր անարգանքը տանել։

ՊԱՊԱՔ— Դու գիտես, որ յոթ երկար տարիներ ես գերի էի Թաթարստանում և միայն երկու տարի է, ինչ վերադարձել եմ մեր երկիրը։

ԹԵՆԻ— Գիտեմ։

ՊԱՊԱՔ— Իմ գերության միջոցին՝ Ներսեհի հայրը անիրավաբար խլել էր այրի մորս ձեռքից Մոփափորի իմ կալվածները և մեռնելուց հետո թողել այն յուր որդուն՝ իբրև իր սեփական ժառանգություն։ Երբ ես վերադարձա՝ աշխատեցի համոզել Ներսեհին ճանաչել իմ իրավունքը և վերադարձնել ինձ իմ կալվածները, բայց նա չլսեց և իմ խնդիրն ու բողոքը թողեց անուշադիր։ Ինը տարի է՝ ինչ իմ տունը մի դանգ չէ ստացել այդ կալվածներից։

ԹԵՆԻ— Իսկ այդ խնամությունը ի՞նչ կապ ունի քո դրկանքի հետ։

ՊԱՊԱՔ— Իմ հույսը Ջալալ իշխանի վրա էր։ Նա յուր ազդեցիկ միջնորդությամբ կարող էր վերադարձնել տալ ինձ իմ հայրենի ժառանգությունը։ Բայց այժմ, երբ Ներսեհն առնում է Ռուզանին, Ջալալն այլևս չի ցանկանում յուր միջամտությամբ դրկանք պատճառել փեսային։ Մյուս կողմից էլ Ներսեհն աներոջ զորության վրա վստահանալով՝ այսուհետև ավելի ես համառությամբ պիտի դիմադրե ինձ։ Այս պատճառով, ահա՛, ես դեմ եմ այդ միության։

ԹԵՆԻ— Իրավունք ունիս. այս ամուսնությունը վնաս կբերե քեզ։

ՊԱՊԱՔ— Բայց եթե դու ինձ օգնես, ես վնասից կազատվեմ, իսկ դու՝ քո ատելիից։

ԹԵՆԻ— Ամենայն սիրով, բայց ի՞նչ կարող եմ անել։

ՊԱՊԱՔ— Ահա՛ թե ինչ։ Համտունը, ինչպես գիտես, եկել է Խոխանաբերդ Ռուզանի ձեռքը խնդրելու, բայց հայրը անպատճառ պիտի մերժե նրան, առարկելով, որ յուր դուստրը սիրում է Ներսեհին։ Այս պատճառով, ահա, ես որոշեցի գործը կարգադրել այնպես, որ Ռուզանը ինքը ընտրե Համտունին իրեն փեսա։ Եվ գործ դրած հնարներս հաջողվել են. Ռուզանի սիրտը այժմ գրավված է միայն Համտունով։

ԹԵՆԻ— (Ընդհատելով Պապաքին) Այդ մի ավետիք է, Պապաք իշխան. ո՞ւր էր թե Ներսեհը չերևար այլևս այս ամրոցում։ Բայց ես Ռուզանի մեջ փոփոխություն չեմ նկատել. միգուցե սխալվում ես։

ՊԱՊԱՔ— Ռուզանը ծածկամիտ է և չէր բացվիլ քո առաջ. բայց ես ապահով եմ, որ հմտությամբ եմ գործել։

ԹԵՆԻ— Ի՞նչ ես արել իսկապես։

ՊԱՊԱՔ— Պատմությունը երկար է, հետո կզրուցեմ։ Այժմ ինձ հարկավոր է քո շուտափույթ օգնությունը։

ԹԵՆԻ— Այսի՞նքն։

## Տեսիլ Զ

### Նույնք և ՍՄԲԱՏ

*ՍՄԲԱՏ*— (Մտնելով) *Ողջույն, տյար Գագիկ։*

*ԳԱԳԻԿ*— *Ողջույն, իշխան։*

*ՍՄԲԱՏ*— *Ես քեզ էի որոնում։*

*ԳԱԳԻԿ*— *Ծառա եմ հրամանիդ։*

*ՍՄԲԱՏ*— *Այս պալատում, բարեկամ, պատրաստվում է մի խռովություն, որի մեջ, կարծեմ, մաս ունիս և դու։*

*ԳԱԳԻԿ*— (Իբր զարմանալով) *Մի խռովություն, որի մեջ մաս ունիմ և ե՞ս։*

*ՍՄԲԱՏ*— *Այո՛։*

*ԳԱԳԻԿ*— *Ինքնագործության մեջ, Սմբատ իշխան, կարի համարձակ ես։*

*ՍՄԲԱՏ*— *Ես համարձակ եմ լինում՝ երբ վտանգը տեսնում եմ վերահաս։*

*ԳԱԳԻԿ*— *Քաջի պատասխան է, բայց ի՞նչ խռովության մասին է խոսքդ։*

*ՍՄԲԱՏ*— *Այն, որ Համտունը պատրաստվում է հարուցանել։*

*ԳԱԳԻԿ*— *Ես ոչինչ չգիտեմ։*

*ՍՄԲԱՏ*— *Դու նրա խորհրդատուն ես և ոչինչ չգիտե՞ս։*

*ԳԱԳԻԿ*— *Բարի գործի համար ես ամենքի խորհրդատուն եմ։*

*ՍՄԲԱՏ*— *Բայց մի սիրահոժ միություն քանդելը մի՞թե բարի գործ է։*

*ԳԱԳԻԿ*— *Միություն քանդե՞լը... Ոչինչ չեմ հասկանում, կարո՞ղ ես պարզ խոսել։*

*ՍՄԲԱՏ*— *Ինչո՞ւ չէ, այդ իմ թուլությունն է։*

*ԳԱԳԻԿ*— *Ուրե՞մն։*

*ՍՄԲԱՏ*— *Հասան-Ջալալ-Դոլան յուր Ռուզան աղջիկը մի՞ մարդու հետ պիտի ամուսնացնե, թե՞ երկու։*

*ԳԱԳԻԿ*— *Եթե քրիստոնյա է՝ մեկ։*

*ՍՄԲԱՏ*— *Իսկ եթե կռապաշտ լինե՞ր։*

*ԳԱԳԻԿ*— *Դարձյալ մեկ։*

*ՍՄԲԱՏ*— *Արդ, ամենքին հայտնի է, որ նա յուր դուստրը խոստացել է Ձորոգետի Ներսեհ իշխանին։ Ինչո՞ւ ուրեմն Համտունը յուր երկիրը թողած՝ նստել է այստեղ և սպասում է Ջալալին՝ նրա աղջկա ձեռքը խնդրելու համար։*

*ԳԱԳԻԿ*— *Ես Համտունի խնամակալը չեմ, իրենից հարցրու այդ։*

*ՍՄԲԱՏ*— *Բայց Համտունը եկել է խոխոնարարդ քո խորհրդով։*

## Տեսիլ Ը

### ՍՄԲԱՏ և ՀԱՄՏՈՒՆ

ՀԱՄՏՈՒՆ— (Մտնելով) *Ողջույն, իշխան, ների՛ր, որ խանգարում եմ քո մենավոր մտածությունները։*

ՍՄԲԱՏ— *Շնո՛րհ արա, տե՛ր Համտուն, ավելի լավ է քեզ հետ խոսակցել, քան միայնակ մտորել։*

ՀԱՄՏՈՒՆ— *Այո՛, միայնությունը վատ է ազդում և ի՛նձ վրա. մանավանդ այս ամրոցում, ուր, կարծես, ինձ համար դարբնվում է մի դժբախտություն։ Չգիտեմ ինչո՞ւ, ինձ այնպես է թվում թե՝ այս կամարները պիտի փլչեն իմ գլխին։ Կարծես մինը շարունակ, արդյոք չար ոգի՞, թե՞ պահապան հրեշտակ՝ շշնջում է իմ ականջում թե՝ հեռացիր սրահներից, այստեղ ոչ մի բարիք չէ սպասում քեզ։*

ՍՄԲԱՏ— *Բայց դու գտնվում ես մեր ամենից բարի և ամենից առաքինի իշխանի հարկի տակ։*

ՀԱՄՏՈՒՆ— *Այդ ես գիտեմ. իմ կասկածը դրա մասին չէ. ինձ անհանգստացնում է քո երեկվա գուշակությունը։*

ՍՄԲԱՏ— *Այն որ ասացի թե՝ իշխանը կմերժի՞ քեզ։*

ՀԱՄՏՈՒՆ— *Այո՛։ Եվ ինձ այժմ տանջում է ոչ միայն այն միտքը, թե չի պիտի կարենամ նպատակիս հասնել, այլև այն թե՝ ի՞նչ մեծ գանձ եմ կորցրել իմ անհոգության շնորհիվ։*

ՍՄԲԱՏ— *Իշխան, իզուր ես մտածում կորստյան մասին ա՛յն գանձի, որն երբեք չես ունեցել։*

ՀԱՄՏՈՒՆ— *Չեմ կարող չմտածել։ Ես նմանում եմ ա՛յն անհոգ կալվածատիրոջ, որ յուր գետինը մի չնչին գնով վաճառել է դրացուն, իսկ սա այդ գետնում գտել է ոսկու հանք։ Քանի դեռ իմ երկրումն էի, գիտեի որ Ջալալ-Տոլան ունի մի աղջիկ, որ գեղեցիկ է և որի հետ ամուսնանալու տոհմական իրավունք ունիմ ես։ Այն ժամանակ, արդարև, չէի մտածում այդ աղջկա վրա։ Բայց բարի մարդիկ նախանձ գրգռեցին իմ մեջ. Այդ նախանձն այժմ տոչորում է ինձ։*

ՍՄԲԱՏ— *Մարդիկ ասացիր։ Մի՞թե Պապաք իշխանից զատ մի ուրի՞շն էլ խոսել է քեզ Ռուզանի մասին։*

ՀԱՄՏՈՒՆ— *Պապաք իշխանի՞ց... դու ուրեմն գիտե՞ս այդ մարդու անունը։*

ՍՄԲԱՏ— *Գիտեի ավելի վաղ, քան ինքը կկարծեր։*

*ՀԱՄՏՈՒՆ— Զգիտեմ, շփոթված եմ։ Ես եկա այստեղ Պապաքի հետ խոսելու, նա է կապել այս հանգույցը, նա ինքն էլ պիտի լուծե։ Զգիտե՞ս ուր է նա։*

*ՍՄԲԱՏ— Քիչ առաջ այստեղ էր և խոստացավ վերադառնալ։*

*ՀԱՄՏՈՒՆ— Կխոսեմ նրա հետ առանձին։*

*ՍՄԲԱՏ— Եթե այդպես է, ուրեմն չեմ խանգարիլ ձեզ։ Խոսեցեք, ինչ կամենում եք։ Միայն թե դու, ազնիվ իշխան, մի մոռանար իմ խորհուրդը։ Եթե քո սերն ու իրավունքը կարող ես զոհել հասարակաց բարվույն, ապա զոհիր քաջությամբ, և ամեն բերան կօրհնե քեզ սրտագին։*

*ՀԱՄՏՈՒՆ— Կաշխատեմ, Սմբատ իշխան, ստանալ քո սիրտն ու զգացմունքը։ Բայց եթե իմ ջանքն ապարդյուն անցնե և խելքը սրտիս վրա իշխել չկարենա՞...*

*ՍՄԲԱՏ— Այն ժամանակ, իհարկե, կհաշտվիմ այն մտքի հետ թե՝ մարդը հրեշտակ չէ... Թող աստված օգնե քո ջանքերին։ Պետք է շտապել ճամփել Սուրիկին։*

(Արագ դուրս է գնում)։

## Տեսիլ Թ

*ՀԱՄՏՈՒՆ—* (Միայնակ) *Ի՞նչ տարօրինակ զգացմունք է այս։* (Ձեռքը դնելով սրտին) *Ի՞նչ կա այստեղ. ինչո՞ւ չէ հանգստանում.. Արդյոք մի աններևույթ ձեռք սեղմե՞լ է սրան յուր բռան մեջ, թե՞ սեգ իշխանուհու աչքերն են հարվածել։ Եվ ի՞նչ. մի՞թե սա է սերը... Օ՜, ոչ, սերը երկնքից է իջնում. նրան աստված է վառում. իսկ այստեղ հրդեհում է մի դժոխք, որ գեերը կարող են բորբոքել...*

## Տեսիլ Ժ

**Նույնք և ՊԱՊԱՔ**

*ՊԱՊԱՔ—* (Մտնելով) *Ի՞նչ է պատահել քեզ, իշխան, դու այսօր ավելի տխուր ես, քան երբևիցե տեսել եմ քեզ։*

*ՀԱՄՏՈՒՆ— Հույսս արդեն հատել է. ինձ թվում է թե՝ երկար և ապարդյուն սպասեցի։ Մնում է միայն հեռանալ։*

## Տեսիլ ԺԳ

### Նույն, ՊԱՊԱՔ, ՌՈՒԶԱՆ և ԹԵՆԻ

ՊԱՊԱՔ— (Մտնելով Ռուզանի նետ) *Այո՛, իշխանուհի, հենց խսկույն կամենում էի բարձրանալ քո դստիկոնը և խնդրել իշխանի կողմից* (Ցույց տալով Համտունի վրա), *որ հաճեիր թույլ տալ իրեն՝ ներկայանալ քեզ։*

*ՌՈՒԶԱՆ— Ուրախ եմ, որ այդ նեղությունը չեմ պատճառել քեզ։* (Համտունին դառնալով) *Ինչո՞վ կարող եմ ծառայել իշխանին։*

*ՊԱՊԱՔ— Տյար Համտունը, կարծեմ, կարիք ունի քո խորհրդին։*

ՀԱՄՏՈՒՆ— (Ռուզանին) *Եթե մեծաշուք օրիորդը կհաճի նվիրել ինձ մի քանի վայրկյա՞ն...*

*ՌՈՒԶԱՆ— Բարի խորհրդի համար պատրաստ եմ զոհել մի ժա*[illegible]

*ԹԵՆԻ— Իսկ ես, դստրիկս, մինչև դուք կխոսեք, կիջնեմ մատուռ մի փոքր աղոթելու...* (Պապաքին) *Պապաք իշխան, կարո՞ղ ես ինձ օգնել։*

*ՊԱՊԱՔ— Սանդուղքներից իջնելո՞ւ, ամենայն սիրով։ Ով որ հաճախ չէ աղոթում՝ նա պետք է մի բանով ծառայե աղոթողներին, որպեսզի նրանց աղոթքից շահվի և ինքը. տուր ինձ քո ձեռքը, մայր Թենի։* (Թենիի թևն առնելով՝ դուրս են գալիս):

## Տեսիլ ԺԴ

### ՀԱՄՏՈՒՆ ԵՎ ՌՈՒԶԱՆ

ՌՈՒԶԱՆ— (Թենիի ետևից նայելով) *Բարեպա՜շտ կին։ Օրը քանի անգամ է սա մատուռ իջնում աղոթելու։*

*ՀԱՄՏՈՒՆ— Երջանիկ է, ով հանգիստ խիղճ ունի և կարող է աղոթել։*

*ՌՈՒԶԱՆ— Այո՛, իմ դայակը բախտավոր է այդ կողմից։ Բայց .. ներողություն, ես իշխանի այցելության պատճառը չհարցրի։*

*ՀԱՄՏՈՒՆ— Իմ այցելության պատճառը, ազնիվ օրիորդ, է իրավունքի մի բռնաբարումն, որի համար եկել եմ պաշտպանություն խնդրել քեզանից։*

*ՌՈՒԶԱՆ— Իրավունքի բռնաբարո՞ւմ... տարօրինակ դարձված է այդ, տյա՛ր Համտուն։ Եթե իրավունքը Սյունյաց իշխանինն է և բռնաբարողը նրանից հզոր մեկը, ապա դժվար թե մի կին կարողանա պաշտպանել քեզ։*

*ՀԱՄՏՈՒՆ— Զալալ մեծ իշխանի աղջիկը, օրիորդ, Սյունյաց տան հարսը պիտի լիներ, բայց որի՞ն են նրա համար փեսացու ընտրել։*

*ՌՈՒՋԱՆ— Իմ մասի՞ն է քո խոսքը։*

*ՀԱՄՏՈՒՆ— Այո, օրիորդ. Սյունյաց իշխանը տոհմական իրավունք ունի քեզ յուր հարսնացուն անվանելու։*

*ՌՈՒՋԱՆ— Իրավո՞ւնք, տե՛ր աստված, իրավո՞ւնքն է ուրեմն ամուսնության շաղկապը։*

*ՀԱՄՏՈՒՆ— Ոչ, իշխանուհի. ամենից առաջ՝ սրբազան սերը։ Բայց երբ այդ սիրով լցված ազնիվ սիրտը մերժվում և արհամարհվում է, այն ժամանակ, արդեն, երևան է գալիս իրավունքի խնդիրը։*

*ՌՈՒՋԱՆ— Եվ ո՞վ է իրավատերը։*

*ՀԱՄՏՈՒՆ— Ես, որ միևնույն ժամանակ քո երկրպագուն եմ և ստրուկը։*

*ՌՈՒՋԱՆ— Երկրպագիր միայն Կատարյալին. իսկ ստրկությունը անարգ արհեստ է։* (Վսեմությամբ) *Քեզ վրա, Համտուն իշխան, ավելի մեծ համարում ունեի։*

*ՀԱՄՏՈՒՆ— Այդ համարումը չպետք է նվազի. որովհետև անարգ մարդը չէր կարող քեզ պաշտել, որովհետև...*

*ՌՈՒՋԱՆ—* (Ընդհատելով) *Որպեսզի չնվազի, թույլ տուր, որ քո սիրո մասին ուրիշ բացատրություններ չսեմ։*

*ՀԱՄՏՈՒՆ— Իշխանուհի, թող որ խոսեմ, թող որ առ քեզ տածած իմ զգացմունքն արտահայտեմ, թող որ ասեմ թե՝ սիրում եմ քեզ...*

*ՌՈՒՋԱՆ—* (Տեղից վեր կենալով) *Իշխա՛ն. ների՛ր, որ ավելին չեմ կարող լսել։ Գուցե իմ ընտանեկան կրթությունը, կամ կանացի երկչոտությունս է պատճառ, որ Սյունյաց իշխանի սիրո խոստովանությունը դողալով եմ լսում. բայց այդ այդպես է։ Իմ ապագա բախտի տնօրինության իրավունքն իմ սիրելի ծնողներին է պատկանում. ես հնազանդում եմ նրանց հրամանին՝ ինչպես երկնառաք պատգամի. հետևապես ինքս իմ մասին որոշում անել չեմ կարող։*

*ՀԱՄՏՈՒՆ— Բայց եթե քո հայրը ցանկանա յուր ընտրությամբ քեզ դժբախտացնել, միթե ոչ մի բողոք չի՞ պիտի բառնաս նրա դեմ։*

*ՌՈՒՋԱՆ— Ես հավատում եմ իմ հոր առ իս ունեցած սիրույն, ուստի և իմ ապագայի վերաբերմամբ նրա փորձառությունն ու հեռատեսությունն ավելի գին ունի իմ աչքում, քան իմ անփորձ զգացմունքները... Թող որ այս խնդրի մասին վերջինը լինի մեր տեսակցությունը։* (Վայելչաբար զգուխ տալով՝ շուռ է գալիս դեպի դուռը):

*ՀԱՄՏՈՒՆ— Օրիորդ, զարմանալի մի խոսք։*

ՋԱԼԱԼ— Այս դարը, որի մեջ ապրում ենք, սիրելի Ռուզանս, արտասուքի, արյան ու թշվառության դար է։ Ինչպես Հայաստանի բոլոր մանր իշխանությունները, նույնպես և իմ երկիրը շրջապատված է թշնամիներով, դրա՛նցից մինն ու վտանգավորը որ թաթարաց վայրենիների ցեղն է, բռնած ուներ մինչև այժմ Խաչենի սահմանը և հարմար առիթի էր սպասում իմ երկիրը մտնելու և այն հիմնահատակ անելու։ Իմ հպատակներն ամե՛ն օր երկյուղի ու սարսափի մեջ էին, և նրանց իշխանը, որ քո դժբախտ հայրն է, չէր կարողանում զենքի զորությամբ ապահովություն բերել յուր հպատակներին։ Նրանց գլխին կախված էր փորձության սուրը։

ՌՈՒԶԱՆ— Աստվա՜ծ իմ... Եվ այդ ամենի մասին ոչինչ չե՞ք հայտնել ինձ։

ՋԱԼԱԼ— Այո՛, Ռուզան. և ահա՛ այս էր պատճառը, որ երբ Ներսեհը մի ժամանակ առաջ եկավ ինձ մոտ ձեր ամուսնության նկատմամբ իմ վերջնական համաձայնությունն ստանալու, ես նրան ասացի. «Որդյակ իմ, քեզ հայտնի է իմ իշխանության ու ժողովրդի արդի անապահով դրությունը. դու գիտես, թե ի՛նչ վտանգ կարող է հասնել նրանց, եթե գեթ մի օր ինքս ինձ տամ անհոգ զվարճության։ Իմ երկրի սահմանը բռնող թշնամին արծվի սրատեսություն և շան հոտառություն ունի. բավական է իմ կողմից փոքր զանցառություն և ահա՛ նրա գնդերը կբռնեն մեր բլուրները, իսկ այն երկիրն, ուր նրանց ոտքն է կոխում, կանաչ չի բուսուցանում։ Իմ դստեր ամուսնությունը, ասացի, մի հասարակ հանդեսով չի անցնիլ. իսկ իշխանական տան վայել խրախճանքով պարապելու ես ժամանակ չունիմ, համբերիր, ասացի, մի առ ժամանակ, մինչև իմ այս թշնամին յուր ոտքը հեռանա և իմ երկրի մեջ կտիրե ապահովություն. այն ժամանակ ես կօրհնեմ ձեր միությունը և մեր բոլոր ժողովուրդը կմասնակցի այդ ուրախությանը»։

ՌՈՒԶԱՆ— Եվ Ներսեհն, իհարկե, խոստացավ համբերել։

ՋԱԼԱԼ— Այո՛։

ՌՈՒԶԱՆ— Իսկ այդ խոստումը մի՞թե կարող էր արգիլել նրան քեզ սովորականին մեջ այցելելու։

ՋԱԼԱԼ— Կարող էր արգիլել, եթե նա չերթար քո և յուր երջանկության խոչընդոտները բառնալու։

ՌՈՒԶԱՆ— Ուրեմն նա գնացել է մեր թշնամու դե՞մ պատերազմ։

ՋԱԼԱԼ— Այո՛, պատերազմ։ Եվ աստծո աջը զորավիգ կլինի նրան։

ՌՈՒԶԱՆ— Անշուշտ։ Բայց ես զարմանում եմ, թե ինչո՞ւ Ներսեհը մի խոսք անգամ չասաց այդ արշավանքի մասին, երբ վերջին անգամ եկավ յուր հրաժեշտն ինձ տալու։

Եվ ինչո՞ւ, չեմ հասկանում, մի՞թե ես այս գերդաստանի անդամը չէի և չի պիտի գիտենայի թե՝ ինչե՞ր են գործվում իմ հոր իշխանության մեջ, իմ տանը, իմ շուրջը. ինչո՞ւ պիտի ծիծաղեի ես այն ժամանակ, երբ իմ հոր սիրտը արտասվում էր թաքուն... մի՞թե ես նրան չէի՞ կարող օգնել. մի՞թե ես ոչինչ չէի՞ կարող զոհել... (Լսվում է շչուկ և՛ գալարափողի ձայն, Ռուզանը դիմում է դեպի պատուհանը) Այս ի՞նչ ձայներ են...

## Տեսիլ Գ

Նույն և ՇԱՆՈՒՅՇ

ՇԱՆՈՒՅՇ— (Շտապով ներս վազելով) Տիրուհի՛, ուրախ լուր...

ՌՈՒԶԱՆ— Ի՞նչ կա. Շանույշ. ի՞նչ աղմուկ է այս։

ՇԱՆՈՒՅՇ— (Ուրախությունից շնչասպառ) Ներսեհ իշխանը, տիրուհի..

ՌՈՒԶԱՆ— (Շտապով ընդհատելով) Ի՞նչ, նա եկա՞վ... (Անհանգիստ)։ Ասա շուտ, նա եկա՞վ...

ՇԱՆՈՒՅՇ— Այո՛, տիրուհի. փողերը նրա գալուստն են ավետում։

ՌՈՒԶԱՆ— (Խնդագին) Ա՜հ, աստված իմ. շնորհակալ եմ քեզանից, դու երջանկության նոր աղբյուր բացիր ինձ։ (Դառնալով Շանույշին) Բայց ո՞ւր է նա, Շանույշ, չէ՞ գալիս ինձ մոտ...

ՇԱՆՈՒՅՇ— Ահա, նա, տիրուհի։

## Տեսիլ Դ

(Ներս է մտնում ՆԵՐՍԵՀ)

ՌՈՒԶԱՆ և ՆԵՐՍԵՀ

ՌՈՒԶԱՆ— Ներսեհ, սիրեցյալդ իմ, այս որքա՜ն անհանգստություն պատճառեցիր ինձ։

ՆԵՐՍԵՀ— Ների՛ր ինձ, բարի Ռուզանս, որ մեր երջանկությունը ապահովելու համար՝ այս անգամ քեզանից գաղտուկ գործեցի։

ՌՈՒԶԱՆ— Եվ եթե ավելի երկարեր բացակայությունդ, սրտիս տրոփյուն թևնեն պիտի ընկճվեի։

ՆԵՐՍԵՀ— Ա՜, մի՞թե չգիտեիր թե՝ ուր էլ որ լինիմ, քեզ համար կապրիմ։

ՌՈՒԶԱՆ— Այո՛, բայց պատերազմի դաշտո՞ւմ...

## Տեսիլ Ե

**Առաջինները, ՋԱԼԱԼ, ՄԱՄՔԱՆ, ԹԵՆԻ, ՋԱՔԱՐԵ, ՍՄԲԱՏ, ԳԱԳԱԿ, ՀԱՄՏՈՒՆ, ՈՒՄԵԿ**

*ՋԱԼԱԼ*— *Իշխաններ, դուք ճանաչում եք այն երիտասարդին* (Մատնացույց անելով Ներսեհի վրա)։ *Յուր մանկության հասակից, ճանաչում եք և նրա հինավուրց ազգատոհմը։ Սրա նախնիքը հայտնի էին իրենց հավատարմությամբ դեպի մեր թագավորները և անձնվիրությամբ՝ դեպի հայրենիքը։ Ինչպես տեսնում եք, արժանավոր որդին հետևում է յուր նախահայրց շավղին։ Նա այսօր հաղթական վերադառնում է ա՛յն ասպարեզից, ուր դուք վաղուց գործում էիք, և ուր գործել են յուր նախնիք։ Թաթարաց ա՛յն հզոր բանակը, որ մեր սահմանում գտնվելով՝ ահ ու սարսափ էր ազդում խաչենի ժողովրդին, Ներսեհ իշխանի շնորհիվ իսպառ ջնջված է, իսկ նրա գլխավորները՝ գերված ու կապված։ Այսպիսով, ուրեմն, մեր երկրի խաղաղությունը ապահովված է երկար, և այս բարիքը մենք պարտական ենք իշխան Ներսեհին։ Ցանկանալով արժանապես վարձատրել նրա այս արիության գործը կամենում եմ այդ առթիվ ստանալ իշխանուհվո և ձեր հաճությունը, իշխաններ։*

*ՄԱՄՔԱՆ— Վարձատրիր իշխանին այնպիսի պարգևով, որին արժանի է յուր ցույց տված ծառայությունը. ես դրա համար տալիս եմ իմ սրտագին հաճությունը։*

*ՋԱՔԱՐԵ— Հայրենիքի օգտին նվիրած ծառայությունը արժանի է միշտ լավագույն վարձատրության։ Ես համաձայն եմ քո մտադրության հետ։*

*ԻՇԽԱՆՆԵՐ— Մենք ևս, մենք ևս։*

*ՋԱԼԱԼ*— (Հանդիսաբար մոտենալով Ներսեհին) *Որդյակ իմ, դու արժանի ես ա՛յն պարգևին, որը վաղուց հետե սահմանված է եղել քեզ համար, բայց որը տակավին հանձնված չէ եղել քեզ հանդիսաբար։ Այդ պարգևը դու ամենաթանկագինն ես համարել բոլոր բարիքներից։ Եվ ահա՛ իմ հատուկ ցանկությամբ և իշխանուհվո և մեր հարգելի իշխանների հաճությամբ ես տալիս եմ քեզ այն իբրև մրցանակ քո փառավոր հաղթության։* (Բռնելով Ռուզանի ձեռքը և հանձնելով Ներսեհին) *Ահա՛ նա։*

*ՆԵՐՍԵՀ*— (Զգացված) *Դու ինձ ամենաերջանիկը կացուցիր աշխարհում, մեծ իշխան։*

*ՋԱԼԱԼ*— (Գրկելով երկուսին և համբուրելով) *Դուք արժանի եք միմյանց, որդյակներս։*

ՊԱՊԱՔ— Ինչո՞ւ Ջալալից։ Քո հակառակորդը Ներսեհ իշխանն է։

ՀԱՄՏՈՒՆ— Իսկական հերոսը չի մերկացնում սուրը սինլքոր զինվորի դեմ, որին կարող է ընկճել լախտի մի հարվածով։ Իմ համազոր հակառակորդը Ջալալ իշխանն է, նրա հետ էլ ես իմ հաշիվը կտեսնեմ։

ՊԱՊԱՔ— Նշանադրությունը եղավ, այժմ արդեն ուշ է վրեժխնդրության վրա մտածել։

ՀԱՄՏՈՒՆ— Վրեժն երբ էլ լուծվի, հաճույք կպատճառե լուծողին։

ՊԱՊԱՔ— Բայց այսուհետև այլևս ի՞նչ վրեժ կարող ես լուծել։

ՀԱՄՏՈՒՆ— Ինչ վրե՞ժ, օ՜, ես գիտեմ, թե ինչ. ես արդեն որոշեցի։

ՊԱՊԱՔ— Սպանե՞լ տալ Ջալալին։

ՀԱՄՏՈՒՆ— Երբեք։ Ով որ սպանում է հակառակորդին, նա ազատում է նրան տանջվելուց։ Ջալալը պիտի ապրի, որպեսզի Համտունի ստեղծած չարիքներից շարունակ տանջվի։

ՊԱՊԱՔ— Բայց ի՞նչ ես որոշել անել։

ՀԱՄՏՈՒՆ— Լսիր, Պապաք, դու գուցե պատմությունից գիտես, որ իմ նախնիքներից մինը՝ Անդոկ նախարարը, պարսից Շապուհ թագավորից կրեց մի անարգանք. այն է՝ արքայական սեղանի վրա՝ Հայոց նախարարաց կարգին մեջ՝ փոխանակ երրորդ գահն ստանալու, տասն և չորրորդը ստացավ։ Անդոկ այդ նախատինքը չկարողացավ տանել և պարսից հզոր թագավորից յուր վրեժն առավ՝ նրա տերության մայրաքաղաք Տիզբոնն ավերելով և հրդեհելով։ Ես այդ հպարտ մարդու սերունդներից եմ և գիտեմ նրա չափով վրեժ առնելու արհեստը։

ՊԱՊԱՔ— Բայց Անդոկի վրիժառությունը սոսկալի հետևանքներ ունեցավ։ Սյունյաց բարեշեն նահանգը ավերակ դարձավ այդ պատճառով։

ՀԱՄՏՈՒՆ— Գիտեմ։ Գուցե իմ վրիժառությունն ևս նույն հետևանքն ունենա։ Ես Սյունյաց տոհմի վերջին շառավիղն եմ։ Ա՛յն ձեռքը, որ իմ կյանքի թելը կկարճե, կանհետացնե աշխարհից նաև Սյունյաց անունը։ Բայց ինձ համար միևնույն է. ավելի լավ է մեռնել, քան անպատիվ ապրել։ Ես չի պիտի կարողանամ իմ զայրույթը զսպել։ (Լսվում է երաժշտության ձայներ) Մինչև որ այս (Ցույց տալով դեպի երաժշտության կողմը) ստեղծվող երջանկությունը չխանգարեմ։

ՊԱՊԱՔ— Բայց ինչո՞վ։

ՀԱՄՏՈՒՆ— (Անուշադիր) Այո՛, իմ աչքերը չեն կարող անտարբեր նայել այն տեսարանին, երբ քահանան այս միությունը օրհնելով իմ օրինական հարսնացուն կհանձնե ձորոդեցի Ներսեհին. այդ տեսարանը չպետք է տեղի ունենա։

*ՀԱՄՏՈՒՆ*—*Հոգ չէ, խաչենի գինին նորից կտաքացնե, գնանք։*

*ՊԱՊԱՔ*— (Դժվարանալով) *Ավելի լավ է, որ միասին չմտնենք դահլիճ։*

*ՀԱՄՏՈՒՆ*— *Բարի. ուրեմն դու գնա առաջ, իսկ ես կգամ հետո։*

*ՊԱՊԱՔ*— (Առաջանալով և ինքն իրեն) *Արժանի վրեժ է, եթե լուծվի, բայց ես թող սրան համախոհ չճանաչվիմ։* (Դուրս է գնում)։

## Տեսիլ ԺԲ

*ՀԱՄՏՈՒՆ*— (Միայնակ) *Հիմա՛ր կնամարդ. չէ կամենում ինձ հետ միասին մտնել մարդկանց մոտ, որպեսզի հետո մեղսակից չհամարվի ինձ։* (Գլուխը շարժելով) *Հապա, անմի՛տ. ի՞նչ էիր մտածում, որ նախանձի դժոխքը վառում էիր այստեղ։* (Ցույց տալով սիրտը) *Մի՞թե Համտունին էլ համարում էիր մի Պապաք, որ հակառակորդի հետ կռվեր՝ կանանց հետ դաշնակցելով։ Չէ, բարեկամ, հավաքնում միայն աղվեսն է շահատակում, իսկ առյուծի համար կա անեզր անապատ, ուր նա խեղդում է ոչ թե հավ, կամ խլուրդ, այլ վագր ու հովազ։ Եթե հարկ կա վրեժ առնելու, ապա պետք է այնպես անել, որ այդ վրիժառությունից աշխարհը սասանի...* (Դուրս է գնում)։

ՎԱՐԱԳՈՒՅՐ

### Երգչուհիներ

*Եվ հայ սրտի խաղաղություն՝*
*Սուր թշնամվույն աշխարհավեր։*

### Բոլորը միասին

*Օ՜ն, աղջիկներ, պատրաստեցեք մեզ պաշար՝*
*Զմռան սաստիկ ուժի դեմը առնելու,*
*Իսկ դուք, տղայք, սրեցեք սուր և տապար՝*
*Մեր թշնամյաց կառափները ջարդելու։*

*ՋԱԼԱԼ*— (Բաժակը ձեռքին) *Սիրելի բարեկամներ, անդրանիկ դստերս ամուսնությունից հետո՝ անցել են արդեն յոթ երկար տարիներ, և բոլոր այդ ժամանակ մեր լեռներում դեռևս չէ կատարվել մի խրախճան։ Իմ սիրելի փեսայի քաջարության շնորհիվ այսօր, ահա, առաջին անգամ, ցնծության երգեր են հնչում այս կամարների տակ։ Անցան ամառ, աշուն և ձմեռ. ահա՛ վերջանում է նաև մեր լեռների գեղեցիկ գարունը, և սակայն մեր ժողովուրդը գտնվում է տակավին ապահովության մեջ։ Այսօր, ուրեմն, մենք տոնում ենք ոչ միայն իմ դստեր ու փեսայի հարսանիքն, այլև մեր ժողովրդի խաղաղության տարեդարձը, որ բոլորել է Ներսեհ իշխանի շնորհիվ... Ուրեմն, սիրելիներս, առաջին բաժակը նվիրենք ամուսնացող զույգի և ժողովրդյան բարեկենդանության կենացը։*

*ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ*— (Բաժակները բարձրացնելով) *Ամուսնացող զույգի և ժողովրդյան բարեկենդանության կենացը։*

*ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ*— (Ձայնակցում է հանդիսականներին:)

*ՈՒՄԵԿ*— (Շտապով տեղից բարձրանալով) *Սպասեցեք, իշխաններ.* (Դառնալով Ջալալին) *մեծափառ տեր, իմ իրավունքը բռնաբարված է. Ես բողոքում եմ քեզնից քո արդարության առաջ։*

*ՋԱԼԱԼ*— (Ծիծաղելով) *Ի՞նչ. մի՞թե ես քո դեմ մի անիրավություն արի։*

*ՈՒՄԵԿ— Այո՛, տեր, բախտը մեզ տալիս է երկու «կենաց բաժակ» դատարկելու առիթ. իսկ դու այնոնց միացնում ես մի բաժակի մեջ։ Ես տաճարապետ եմ քո մեծության հրամանով, ուստի պահանջում եմ, որ այդ «կենացները» զատ-զատ դատարկվին։*

*ՋԱԼԱԼ— Իրավունք ունիս։ Ուրեմն առաջ ժողովրդի բարեկենդանության կենացը։*

*ՌՈՒԶԱՆ— Իսկ ես համարձակ կասեմ՝ թե ով փախչում է ապրելու համար, նա արդեն մեռնում է կենդանվույն։*

*ՄԱՄՔԱՆ— Իրավունք ունիս, զավակս։ Եվ իրավ, ի՞նչ կլիներ մեր վիճակը, եթե Ումեկ իշխանը յուր այս տարօրինակ խոհեմությամբ հրամանատար լիներ մեր զորքերին։*

*ՈՒՄԵԿ— Հավատա՛, իշխանուհի, ամեն ինչ խաղաղությամբ կվերջանար։ Ի՞նչ հարկ կա կովել զորեղի դեմ ա՛յն ժամանակ, երբ ինքդ ես զգում քո թուլությունը։ Այդպիսի դեպքում կամավոր պարտությունը հավասար է հաղթության։*

*ԶԱՔԱՐԵ— Տեր տաճարապետ, քո քարոզը գեղեցիկ կհնչեր մի կուսանոցում, բայց դու նստած ես զինվորների հետ։*

*ՈՒՄԵԿ— Ճշմարիտ զինվորը չի վհատիլ իմ խոսքերից։*

*ԶԱԼԱԼ— Որպեսզի չվհատի նաև սուտ զինվորը, ապա վարի՛ր պաշտոնդ առանց փիլիսոփայելու։*

*ՈՒՄԵԿ— Բյուր ներողություն, մեծ իշխան։* (Սառաներին) *Մատռվակնե՛ր, լցրեք բաժակները գինով։* (Բաժակը ձեռին՝ տեղից բարձրանալով և հանդիսականներին դառնալով) *Բարեկամներ, խմենք այժմ մեր սիրարժան հարսի և հարգարժան փեսայի կենացը. մաղթենք իշխանազուն ամոլներին երկար կյանք, մշտավառ սեր, անսպառ երջանկություն...*

*ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ— Կեցցե՛ն իշխանազուն ամոլները։*

*ՈՒՄԵԿ— Եվ երջանիկ սիրահարները։* (Երաժիշտներին) *Երաժիշտներ, ձայնակցեցե՛ք մեր ուրախությանը։*

(Երաժշտությունը նվագում է)։

**Խումբը երգում է**

*Երբ ծագում է մեզ արևը լուսավոր,*
*Հայ տղաներ, սթափեցեք ձեր քնից,*
*Լծեք եզինք, առեք գութանն ու արոր*
*Եվ փութացեք դաշտը հերկել ցողալից։*
*Իսկ երբ հեռվից մեր թշնամին երևի,*
*Հայ տղաներ, թողեք արորն ու եզինք,*
*Հարձակվեցեք թշնամու դեմ կատաղի,*
*Կովեցեք քաջ և փրկեցեք հայրենիք։*

*ՈՒՄԵԿ—* (Դառնալով դեպի Պապաք) *Պապաք իշխանը լուռ է և տխուր։* (Հանդիսականներին) *Բազմականներ, ո՞վ արդյոք ձեզանից կարող է պատճառն ասել, թող խոսե, ես նրան մի զարդյուն նժույգ կընծայեմ։*

ՋԱՔԱՐԵ— (Պատուհանից նայելով) *Ա՜յս ինչ է... Սպասեցեք, իշխաններ, սպասեցեք...* (Գլուխը բռնած նա է գալիս)։

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ— (Թափվելով Ջաքարեի վրա) *Ի՞նչ կա, իշխան, ի՞նչ պատահեց քեզ։*

ՄԱՄՔԱՆ— (Վախեցած և շտապով) *Սիրելի տա՜գր...*

ՋԱԼԱԼ— *Ի՞նչ եղավ քեզ, եղբայր իմ...*

ՌՈՒԶԱՆ— *Այս ի՞նչ է, աստված իմ։*

## Տեսիլ Գ.

### Առաջինները և մի գուժկան

Որ մտնում է քրտնաթոր, շնչասպառ և օձիքը պատառած

ՊԱՊԱՔ— (Տեսնելով գուժկանին և ինքն իրեն) *Հա՜, ուրեմն չեմ խաբված։*

ՋԱԼԱԼ— (Բոլորին լսելի ձայնով) *Ա՜հ... գուժկա՜ն...*

ԲՈԼՈՐԸ— (Բոլորը սարսափած ետ նայելով) *Գուժկա՜ն...*

ՌՈՒԶԱՆ— (Հարելով Ներսեհին) *Աստվա՜ծ իմ։*

ՄԱՄՔԱՆ— (Սարսափած) *Այս ի՞նչ է պատահել։*

ՋԱԼԱԼ— (Գուժկանին) *Ի՞նչ պիտի գուժես, թշվառական, ասա՛ շուտ։*

ԳՈՒԺԿԱՆ— (Բոլորին լսելի ձայնով) *Ջարմաղան զորապետի եղբայր Ջուլան ահագին բանակով հասել է Առջաձոր. նրա գնդերից մի քանիսը դիմում են այս ամրոցը, իսկ ասպատակները ցրվեցան դեպի գյուղերը։ Թշնամու անցած տեղերը Գետաբակ, Շամքոռ, Բարդավ, ավերված և բնակիչները սրե անցած են։*

ՋԱՔԱՐԵ— (Վշտահար) *Աստվա՜ծ իմ, աստված իմ, այս ի՞նչ արիր դու։* (Ընկնում է աթոռի վրա)։

ՄԱՄՔԱՆ— *Այս ի՞նչ լսեցի, այս ինչ թշվառություն հասավ մեզ։*

ՌՈՒԶԱՆ— *Ներսե՛հ... հայր իմ...*

ՆԵՐՍԵՀ— *Հանգիստ եղիր, Ռուզանս, չարժե մի լուրից այդպես շուտ այլայլվել։*

ԹԵՆԻ— *Օ՜, մեր մեղքերի համար պատժում է մեզ աստված...*

ՋԱԼԱԼ— (Կատաղի բարկությամբ) *Աստվա՜ծ իմ, աստվա՜ծ իմ, աստված իմ, այս ի՞նչ հարվածներ ես բերում մեր գլխին... Մի՞թե, արդարև, այս պատիժները կրելու չափ հանցավոր ենք քո առաջ... պակա՞ս է, արդյոք, Հավիտենականի գութը, թե՞ չարարվեստ դժոխքն երկինքն է*

# ԱՐԱՐՎԱԾ ԵՐՐՈՐԴ

*Տեսարանը ներկայացնում է Խոխանաբերդ ամրոցի տակ մի հովտաձև դաշտավայր՝ մի կողմից բարձրացած բլրակով, որի ստորոտում զարկած է զորապետի շքեղ ու ընդարձակ խորանը։ Նրա մեջ նստած են Ջոլա և Բուրա-Նուրին, ետևները կանգնած ունենալով մի-մի սպառազինյալ թիկնապահ։ Խորանի հատակը ծածկված է գորգով, որի վրա ձգված են մի քանի թավշյա օթոցներ։ Դրանցից մինի վրա չոքած է Համտունը։ Զորապետի խորանից հեռու, դաշտավայրի երկարությամբ, զարկած են զորքերի բազմաթիվ վրաններ, որոնց մոտերքը անցուդարձ են անում զինվորները։*

## Տեսիլ Ա

ՋՈԼԱ, ԲՈՒՐԱ-ՆՈՒԻՆ, ՀԱՄՏՈՒՆ, երկու թիկնապահ

**ՋՈԼԱ**— (Համտունին) *Այո, Ջալալ-Դոլան այս անգամ արդեն գործել է այնպիսի հանդգնություն, որը մենք նրան չի պիտի ներենք։ Համարձակվել թաթարաց զորքերը ջարդե՞լ, այն զորքերը, որոնք իմ եղբոր՝ Չարմաղանի ամենաընտիր գնդերն էին կազմո՞ւմ. այդ աններելի է հավիտյան։*

*ԲՈՒՐԱ— Եվ հանդգնել մեր գնդապետներին բանտարկել յուր ամրոցո՞ւմ։*

*ՋՈԼԱ— Արդյոք ձեր լեռներում ի՞նչ էին մտածում մեր մասին։ Մի՞թե կարծում էին թե՝ թաթարաց ուժը սպառվել, կամ նրանց սուրը հողի մե՞ջ է թաղվել։*

*ՀԱՄՏՈՒՆ— Ո՛չ այս և ո՛չ այն, պայծառափայլ տեր։ Մեր լեռներում բոլորն էլ գիտեն, որ թաթարաց ուժը անսպառ է, և նրանց սուրը՝ միշտ փայլուն և հատու։ Միայն իշխաններն են, որոնք երբեմն թեթև հաջողություններից շլանալով՝ մոռանում են պարտ ու պատշաճ հարգանքը տալու թե՛ հզոր իշխաններիդ* (Գլուխ խոնարհելով) *և թե՛ մեծ խանին։ Եվ եթե այդ իշխանների մեջ գտնվում են այնպիսիները, որոնք ձեր մեծությանց զորությունը ճանաչելով՝ ծառայում են խանին հավատարմությամբ, դրանք էլ, դժբախտաբար, ծաղրի են ենթարկվում ստահակ իշխանների կողմից։*

*ՋՈԼԱ— Այդպիսի ջերմեռանդ և մեզ հավատարիմ իշխաններից մինը դու ես, հավատացած եմ։*

ՀԱՄՏՈՒՆ— Ո՛չ, տեր իմ. նրանցից մի երկուսն յուր ազգակիցներն են, որոնք գրեթե միշտ գտնվում են իշխանի հետ, մյուսները հրավիրված են, որովհետև իշխանը հարսանիք ուներ։

ՋՈԼԱ— Հարսանի՞ք։

ՀԱՄՏՈՒՆ— Այո՛։

ՋՈԼԱ— Որդի՞ն է ամուսնացնում։

ՀԱՄՏՈՒՆ— Ո՛չ, տեր իմ. որդիքն անչափահաս են. նա ամուսնացնում է դուստրը։

ՋՈԼԱ— Ո՞ւմ հետ։

ՀԱՄՏՈՒՆ— Զորագետի Ներսեհ իշխանի, որի համար ասացի թե՝ ձեր բանակը ջարդողն էր։ Նա Ջալալի աղջիկն առնում է իբր մրցանակ յուր հաղթության։

ՋՈԼԱ— Մի՞թե. ուրեմն մենք նրա համար ավելի լավ հարսանիք կանենք, քան կարող է անել Հասան-Ջալալը։

ԲՈՒՐԱ— (Խղճահարվելով) Բայց ինչ որ էլ լինի, հորեղբայր, պետք է խոստովանել՝ որ մեր արշավանքը վատ ժամանակ պատահեց։ Ես, գոնե, չէի կամենալ՝ այսքան անգթաբար խանգարել մի ուրախություն։ Ես խղճում եմ Ջալալին։

ՋՈԼԱ— Քեզ պես երիտասարդին բնական է խղճահարվիլը. բայց երբ իմ հասակը կառնես, այն ժամանակ կցանկանաս ավելի արդարությամբ պատժել՝ քան թուլությամբ խղճահարվիլ։

ՀԱՄՏՈՒՆ— Ճիշտ ես հրամայում, տեր. որովհետև Ջալալը նույնպես կարող էր խղճալ ձեր զորքերին և չկոտորել տալ նրանց. բայց նա հակառակն արավ, համոզված լինելով թե՝ արդարությամբ պատժում է յուր թշնամիներին։

ՋՈԼԱ— Կեցցես, իշխան, դու արժանի ես Աղվանից տիրապետը լինելու. և ես այդ պատվին կարժանացնեմ քեզ։ Միայն ասա, իրա՞վ, որ լսածիս չափ մեծ գանձեր ունի ձեր Ջալալ-Տոլյան։

ՀԱՄՏՈՒՆ— Գրեթե այնքան, որքան կարող էր ունենալ մեծափառ խանը։

ՋՈԼԱ— Ճշմարի՞տ։

ՀԱՄՏՈՒՆ— Ստել քո մեծության առաջ ինչպե՞ս կհամարձակվիմ։

ՋՈԼԱ— (Ուրախությամբ) Ա՜հ, ուրեմն մենք այս բերդի ստորոտից հեշտությամբ չենք հեռանա։ Մենք կբանանք Ջալալի սնդուկները և կհրամայենք հենց իրեն՝ իշխանին, փոխադրել յուր գանձերը մեր լայն բանակները։

ԲՈՒՐԱ— Հորեղբայր, միթե կարծում ես, թե այդ գանձերի մեջ լա-

ԲՈՒՐԱ— Իրավունք ունիս։ Բայց քանի որ, քո ասելով, այդքան զորություն կա Ջալալի բերդում, ուրեմն ո՛չ մեր զորքերը նրա բերդը կառնեն, և ո՛չ էլ ես՝ նրա աղջիկը։

ՀԱՄՏՈՒՆ— Երկար պաշարումը կստիպե նրանց անձնատուր լինել։

ԲՈՒՐԱ— Նախ՝ մենք չենք կարող երկար ամիսներով նստել այս բերդի տակ։ Երկրորդ՝ պաշարյալները կարող են համառել և սովից մեռնել.

ՋՈԼԱ— Ավելի լավ. թող բոլորը կոտորվին։ Այն ժամանակ մեր զորքերը անաշխատ կառնեն բերդը։

ԲՈՒՐԱ— Բայց ես չեմ կամենում, որ այն աղջիկը ևս սովից մեռնի ամրոցում։

ՀԱՄՏՈՒՆ— Ուրեմն, եթե ինձ կլսեք, ես ձեզ կտամ մի խորհուրդ, որով հեշտությամբ ձեր նպատակին կհասնեք։

ՋՈԼԱ— Ասա՛ տեսնեմ։

ՀԱՄՏՈՒՆ— Հրամայեցեք այս շրջակա հայ գյուղերից հավաքել հազար հոգի, կին թե տղամարդ, աղջիկ թե երիտասարդ, մանուկ թե ծեր. Դրանց բոլորին ձեռնկապ կանգնեցնել տվեք այս հովտում, որ հանդիպակաց է Ջալալի պալատին։ Հազար կապյալների ետևում թող կանգնեն հազար սուսերամերկ զինվորներ։ Ապա պատգամ ուղարկեցեք Ջալալին և հայտնեցեք նրան ձեր մեծության հրամանը, այն է՝ հանձնել ձեզ բերդը և յուր դուստրը։ Եթե կհամաձայնի՝ բարի, եթե ոչ՝ հենց որ պատգամավորը կվերադառնա բացասական պատասխանով, իսկույն կհրամայեք հազար կապյալները կոտորել։ Այս միջոցը դուք գործ կդնեք ամեն օր, մինչև որ կամ Ջալալը յուր հպատակների կոտորածը դադարեցնելու համար կհանձնե ձեզ բերդը և կամ նրա իշխանները ապստամբելով՝ ամրոցը կմատնեն ձեզ։

ԲՈՒՐԱ— Այդ հնարը լավ է, բայց չափազանց անգութ է։

ՀԱՄՏՈՒՆ— Քո մեծությունը չէ ճանաչում հայի համառությունը։

ՋՈԼԱ— Անշուշտ, որովհետև այս առաջին անգամն է, որ սա գործ ունի ձեր կամակոր ազգի հետ։

ԲՈՒՐԱ— Լավ, թող այդպես լինի։

ՋՈԼԱ— (Դառնալով յուր թիկնապահին) Ջափա՛ր, շուտով հասիր մեր պաշարող զորքերին և ասա Գիուգ զորապետին, որ հարձակումը դադարեցնե. ապա թող գյուղերից ժողովել տա հազար հոգի և ամեն բան կարգադրե այնպես, ինչպես իշխանն ասաց։ Դեհ, շուտ։

ՋԱՓԱՐ— Այս րոպեին, տե՛ր։ (Դուրս է գնում)։

*այստեղ կգտնեիք այնպիսի դիմադրություն, որի նմանին Թաթարը չէ հանդիպել ոչ մի տեղ։*

*ՋՈՀԱ*— (Բուրային) *Ինչպե՞ս ես գտնում այս հայի խորհուրդը, որ ինձանից ու քեզանից ավելի լավ է ճանաչում յուր ազգն ու իշխաններին։*

*ԲՈՒՐԱ*— (Անուշադիր աչքերը խորանի դռանը սևեռած) *Քո խոստման համաձայն՝ իրեն նպաստավոր, իսկ մեզ՝ աննպաստ։ Բայց ահա գալիս է Ջալալի պատգամավորը, թող նրան լսենք։*

*ՀԱՄՏՈՒՆ*— (Ինքն իրեն) *Չէ հաջողվում։ Ի՞նչ հիմարություն արի Ռուզանի անունը հիշելով։* (Դեպի դուռը) *Ա՜հ, Զաքարե իշխանը...*

## Տեսիլ Գ

Առաջինները, ԶԱՔԱՐԵ, հինգ ընծայակիրների և մի դրոշակրի հետ

*ԶԱՔԱՐԵ*— (Մտնելով և խորը գլուխ տալով, որի ժամանակ դրոշակիրը դրոշը խոնարհում և այնպես պահում է մինչև խոսակցության վերջը) *Տեր զորապետ, տե՛ր Նուին, իշխան Հասան-Ջալալ-Դոլան խոնարհ բարեկամությամբ ողջունում է ձեր մեծության մուտքը մեր երկիրը։ Եթե այսօրվանից ձեր մի քանի գունդերը հարձակված չլինեին մեր բերդի վրա, մենք ձեր գալուստը կընդունեինք իբրև շնորհաբեր այցելություն խանի հեռավոր կալվածներին։— Բայց որովհետև այդ հարձակումը տեղի ունեցավ, ուստի մենք ստիպվեցանք պաշտպանվել։ Բայց իշխան Ջալալ-Դոլան բնավ չէ ցանկանում սրով դիմադրել խանի զորքերին, ըստ որում նրան ծանոթ է ձեր սրի ուժը և հաջողությունը։ Ուստի խոնարհելով ձեր զորության առաջ, իմ բերանով խնդրում է, որ բարեհաճեք նվիրել իրեն ձեր թանկագին բարեկամությունը և յուր երկրից հանել ձեր զորքերը։ Դրա փոխարեն նա խոստանում է յուրաքանչյուր տարի վճարել վեհափառ խանին ձեր կողմից որոշված հարկը։ Իսկ առայժմ խնդրում է ընդունել այս* (Ցույց տալով ընծաները) *առհավատչյան։*

*ՋՈՀԱ*— *Ես ընդունում եմ Հասան-Ջալալի ուղարկած ընծաները.* (Ընծայակիրները ընծաները դնում են գետնին) *և նրա խոնարհած դրոշը բայց սպասում եմ, նաև բերդի բանալիներին և յուր դուստր Ռուզանին, իմ եղբորորդի Բուրա-Նուինին* (Ցույց տալով Բուրային) *կնության համար։ Սրանք ղրկելուց ետ՝ նա յուր իշխաններով կիջնե իմ բանակը՝ անձամբ յուր իշխանությունը իմ ձեռը հանձնելու, որովհետև ես այն պիտի տամ առավել արժանավոր* (Ցույց տալով Համտունին) *մարդու...*

ԶՈԼԱ— *Հոգիդ կքաղեն հենց այս րոպեին։* (Կոչելով դեպի դուրս) *Զինվորներ։* (Ներս են թափվում մի քանի սուսերամերկ զինվորներ)։ *Սատակեցե՛ք այդ անզգամին։* (Զինվորները բարձրացնում են սրերը, Զաքարեն աներկյուղ կանգնած է նրանց մեջ)։

ԲՈՒՐԱ— (Շտապով վեր թռչելով տեղից և բարկացած դեպի զինվորները գոչելով) *Դարձրե՛ք սրերը իրենց պատյանները։* (Զոլային)։ *Հորեղբայր, ինչո՞ւ չես հարգում զինաթափ ծերությունը։ Մի՞թե մենք իրավունք ունենք սպանել ա՛յն մարդուն, որ մեր մեծահոգության վրա վստահանալով՝ մտել է մեր վրանը իբրև մի ապահով տեղ։* (Զինվորներին) *Դո՛ւրս կորեք և չհամարձակվեք այսուհետև սուր բարձրացնել անզեն մարդու վրա։* (Զինվորները դուրս են գնում)։

ԶՈԼԱ— (Բարկությամբ և ինքն իրեն) *Ահա՛ իմ եղբոր անմտության հետևանքը... ո՞վ է տեսել, որ մի համբակ այս իրավունքը բանեցնե...*

ԶԱՔԱՐԵ— (Բուրային) *Գերազնիվ տեր, մատուցանում եմ քեզ իմ անկեղծ հարգանքը։ Դու արժանի ես իշխելու, որովհետև մեծահոգի ես և գիտես հարգել պատգամավորի իրավունքը։ Եթե մենք սուր ի ձեռին կռվելու լինինք քո դեմ, դարձյալ քո արժանիքը պիտի մեծարենք... մնաս բարյավ։* (Դուրս է գնում յուրայիններով)։

ԶՈԼԱ— (Բարկությամբ բորբոքված) *Բուրա՛, դու անարգեցիր քո հորեղբորն օտարի և յուրայինների առաջ։*

ԲՈՒՐԱ— *Ընդհակառակը, հորեղբայր, ես քեզ ազատեցի մի անպատվությունից, որ նաև մեր սուրն ու անունը պիտի արատավորեր։*

ՀԱՄՏՈՒՆ— (Ինքն իրեն) *Այս էլ բավական է, որ Զալալի աղջկան Թաթարստան կուղարկեմ։*

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՋԱԼԱԼ— (Մտախոհ և տխուր) *Պետք է չտապել, այո՛։ Բայց խնդիրն այն է, որ չտապելով էլ չենք կարող ելք գտնել։*

ՋԱՔԱՐԵ— *Դանդաղելով նույնպես չենք շահի ոչինչ։*

ՈՒՄԵԿ— *Ուրե՞մն։*

ՋԱՔԱՐԵ— *Պետք է որոշենք թե՝ չարիքներից ո՞րն է փոքրագույնը, և այն էլ ընտրենք։*

ՋԱԼԱԼ— *Թշնամու պահանջը պարզ է, երկուսից մինը պիտի զոհենք՝ կա՛մ ժողովուրդը, կա՛մ իմ Ռուզանը։*

ՄԱՄՔԱՆ— (Վշտահար) *Իմ Ռուզա՞նը... Օ՜, մի ասեք այդ, մի՛ արտասանեք նրա անունը։*

ՋԱԼԱԼ— *Ուրեմն որոշեցեք. ո՞րն է փոքրագույնը...* (Ամենքը լուռ են) *ինչո՞ւ չեք խոսում...* (Դառը ժպիտով) *Հո ամենքդ գիտեք, որ մի հատ ոսկին ավելի քիչ արժե, քան թե հազարը։*

ՋԱՔԱՐԵ— *Եղբա՛յր իմ...*

ՋԱԼԱԼ— *Անանիա Շիրակացին*[1] *անշուշտ կտարակուսեր, եթե նրան ասեի թե՝ իմ մի ոսկին ավելի արժե, քան ուրիշների նման հազարը... Իսկ դո՞ւք, դո՞ւք ինչ եք ասում։*

ՋԱՔԱՐԵ— *Սիրելի եղբայր, ժողովուրդը նույնպես բաղկանում է իշխանի հարազատ որդիներից. հայրը չպետք է խտիր դնե յուր զավակների մեջ։*

ՋԱԼԱԼ— *Ուրեմն, քո կարծիքով պետք է մեկը զոհել՝ որ հազարը փրկվի։*

ՋԱՔԱՐԵ— *Արդարությունն ու պարտքս հրամայում են ասել՝ այո՛։*

ՋԱԼԱԼ— (Եռանդով և վշտահար) *Ուրեմն ե՛ս եմ միայն, որ մեղանչում եմ պարտքի և արդարության դեմ... Օ՜, ինչպես հեշտ է դատապարտել... բայց եկեք առաջ կուրծքս պատռեցեք՝ հանեցեք այստեղից ծնողի սիրտը և նրա փոխարեն դրեք իշխանինը. այն ժամանակ գուցե հայրը չզգա ոչինչ, և իշխանն յուր դուստրը զոհե ժողովրդին* (Դառնությամբ)... *Ո՞վ արդյոք ձեզանից կարող է բանալ այս տախտակն, որ աստված ամրացրեց*

ՋԱՔԱՐԵ— *Հիշի՛ր Հեփթայեին, սիրելի եղբայր...*

ՋԱԼԱԼ— *Հեփթայեն յուր աղջիկը զոհեց աստծուն, իսկ ես պիտի զոհեմ զարշելի թաթարին։*

ՋԱՔԱՐԵ— *Այս զոհն էլ, անշուշտ, աստված է պահանջում։*

ՄԱՄՔԱՆ— (Հուզված) *Մի՛ ասիր այդ, սիրելի տագր, աստված անիրավ զոհ չի պահանջիլ։*

---

[1] *Հայտնի թվաբան յոթերորդ դարում։*

թյամբ կելնեն նաև դաշտը, բայց նրանց կհետևի բազմաթիվ թշնամին։ Հինգ հարյուր զինվորը չէ կարող ճակատել մի բյուր զորքի դեմ. նա փախուստ կտա կամ իսպառ կջնջվի։ Բացի այդ, մենք զորաժողովի համար պետք ունենք ժամանակի. մինչդեռ թշնամին կազմ է և պատրաստ. նա ոչ միայն կխանգարե մեր զորք ժողովելն, այլև Խաչենը կավերե հիմնովին. նա սուր կքաշե անպաշտպան ժողովուրդը և գյուղերն ամեն տեղ կդարձնե մոխրակույտ։ Այս ամենը պետք է դուք աչքի առաջ ունենաք։

ՋԱԼԱԼ— Այդ ամենը, հարկավ, ես հաշվել էի վաղուց, այդ պատճառով էլ խոնարհեցա և իմ իշխանական հպարտությունը զոհեցի ժողովրդի փրկության։ Ես նվեր ղրկեցի թշնամուն իմ գանձի մեծ մասը և, իբրև հպատակ, խոստացա հարկ տալ խանին. բայց նա այդ ամենը առ ոչինչ դրեց։

ԶԱՔԱՐԵ— Այդպես արավ Ջոլան։ Բայց Բուղա-Նոյինը, որ, ըստ երևույթին, ավելի իրավունքներ է վայելում, քան ծերուկ հորեղբայրը, խոստացավ ազատել ժողովուրդը սրածությունից և թողնել քեզ պատվով քո իշխանության մեջ...

ՋԱԼԱԼ— Բայց դրա համար խնդրում է իմ դուստրը իբրև փրկանք։

ԶԱՔԱՐԵ— Այո՛։

ՋԱԼԱԼ— Օ՜, և ի՜նչ քիչ բան է խնդրում։ Եվ Հասան-Ջալալը պիտի ստորացնե իրեն ա՛յն աստիճան, որ յուր իսկ ձեռով հանձնե թաթարին յուր հրեշտակ աղջկա՞ն։ Ոչ. այդ չի լինի։ Ես կամենում էի, արդարև, ձեր բոլորի խորհուրդը լսել, որպեսզի իմանայի, թե քանի՞սը ձեզնից իրավունք են տալիս հորը՝ պաշտպանել դստերը։ Այժմ գոհ եմ տեսնելով, որ միայն դո՛ւ ես զլանում ինձ այդ իրավունքը, սիրելի եղբայր։ Եվ դու, իհարկե, կատարում ես քո պարտքը։ Բայց ես վճռել եմ. ես բաց աչքերով չեմ մատնիլ իմ գառը՝ անգութ գազանին. թող թաթարն յուր սուրը նախ այս կուրծքը խրե և ապա թե մարմնիս վրա կոխելով՝ իմ գանձն հափշտակե։

ՆԵՐՍԵՀ— Մենք նրա սուրը կփշրենք յուր իսկ գլխի վրա։

ՍՄԲԱՏ— Ուրեմն, վճռված է, կանչենք թշնամու պատգամավորին և հայտնենք նրան մեր պատասխանը։

ՋԱԼԱԼ— Հրամայի՛ր կանչել։

ՍՄԲԱՏ— (Գնալով դեպի ձախ դուռը և վարագույրը բանալով) Բարապա՛ն, ներս բեր պատգամավորին։

ԶԱՔԱՐԵ— Քանի դեռ ուշ չէ, նորեն մտածեցեք. ձեր պատասխանը տալուց առաջ թող խոհեմությունն առաջնորդե ձեզ։

ՋԱԼԱԼ— Խոհեմությունը մինչև այժմ չօգնեց մեզ, եղբայր. գործենք այժմ անխոհեմությամբ. գուցե այդպիսով բախտը ծիծաղի մեզ։

ՌՈՒԶԱՆ— (Հանդիսավոր) Գիտեմ. բայց նրանց ես պիտի ազատեմ։

ՋԱԼԱԼ— Օ՜հ, աղջիկս...

ՆԵՐՍԵՀ— Ռո՛ւզան, ի՞նչ ասացիր։

ՄԱՄՔԱՆ— Ի՜նչ եմ լսում։ (Դիմում է դեպի Ռուզանը) Դստրի՛կս, ի՜նչ ես խոսում։

ՌՈՒԶԱՆ— Ի՞նչ, մի՞թե կարծում էիք, թե ձեր խռովության ու վրդովման պատճառները գաղտնի պիտի մնային ինձնից։ Ես բոլորն իմացա։ Թեպետ ինձ արգելեցիք ներկա լինել ձեր խորհրդարանում. սակայն ա՛յս հասարակաց աղետի ժամանակ՝ ես չէի կարող ձեր հրամանը ճշտությամբ կատարել։ Ես պահվեցա այս վարագույրի ետև (Ցույց է տալիս աջ դռան վարագույրը) և բոլորը լսեցի։ Ես գիտեմ, թե ո՞վ է այն անձն, որ Համտուն իշխանի սրտում դավաճանություն է հղացել. թե ո՞վ է նա, որ բռնավոր Ջուլայի՝ մեր երկիրը արշավելուն պատճառ է դարձել, և որ հազար անմեղ կապյալների կոտորելուն էլ պատճառ պիտի դառնա... այդ թշվառն ես եմ. ես ինքս էլ, ուրեմն, իբրև հանցավոր, պատիժը կկրեմ։

ՋԱԼԱԼ— Աղջի՛կս, ի՜նչ ես կամենում անել։

ՌՈՒԶԱՆ— Ես պարզ խոսեցի, սիրեցյալ հայր. ես պիտի զոհվիմ. ինձ պիտի ղրկեք թշնամու բանակն և հանձնեք բռնավորին, որովհետև քո իշխանության և ժողովրդի բախտն այդ անձնազոհությունից է կախված։ Իսկ ես այնքան թուլասիրտ չեմ, որ իմ հայրենիքին այսպիսի մի զո՜հ բերելու համար վայրկյան անգամ տատանիմ։ Ես վճռել եմ։

ՋԱԼԱԼ— Երբեք, ես այդ չեմ անիլ։

ՌՈՒԶԱՆ— Բայց, հայր իմ, եթե դու չանես, ես պարտավոր եմ անել և դրա համար արդեն քո հրամանն ունիմ։ Քանի դեռ փոքր էի, ուսուցանում էիր ինձ՝ սիրել հայրենիքը իմ անձից ավելի, և նրա բարօրության համար զոհել ամենը, ինչ որ ունիմ թանկագին։ Արդ, հասել է ժամը քո պատվերը կատարելու. մի՞թե դու այժմ հակառակը պիտի խրատես...

ՄԱՄՔԱՆ— Ա՜հ, բավական է, Ռուզա՛ն, մի՛ խոսիր, ես ցնորվում եմ...

ՌՈՒԶԱՆ— Քո մի հատիկ դստեր համար ես ցավում, մայր իմ, այնպես չէ՞... Հապա ի՞նչ անեն ա՛յն հարյուրավոր մայրերը, որոնց որդիները մի քանի ժամից պիտի զոհվին անգութ դահիճների սրին։ Ի՞նչ պիտի անեն այն հարյուրավոր հարսունք, որոնք մի ժամից պիտի այրիանան։ Ո՞վ պիտի խնամե և մխիթարե այն հազարավոր մանուկներին, որոնք մի օրում պիտի որբանան... Մի՞թե արդարություն է, որ այսքան հոգիները քո դստե՞րը զոհվին։ Ավելի լավ չէ՞, որ դրանց բոլորին ազատելու համար զոհվիմ միայն ես։ Եվ մի՞թե դո՛ւք, որ ազգի տերն եք ու պաշտպանը, պիտի զլանա՞ք նրան այդ կարևոր շնորհը։

ՌՈՒԶԱՆ— (Ընդհատելով) Իսկ դրան հետևող կրկնապատիկ թըշվառությո՞ւնը, իսկ թշնամու ահագին բանա՞կը։

ՆԵՐՍԵՀ— Ես դրանց դեմ ոտքի կհանեմ բոլոր Արցախը. գեղացիների բրերով միայն կջնջեմ այն բանակն, որ դու ահագին ես անվանում։ Անցած մի քանի օր, և Ջոլայի զորքերը անհետացած կլինեն մեր սահմաններից։

ՌՈՒԶԱՆ— Դու այդ չես կարող անել, սիրելի Ներսեհ։

ՆԵՐՍԵՀ— Եթե դժոխքի կատաղիներն անգամ զինվեն իմ դեմ, ես չի պիտի հաղթահարիմ։ Այս կուրծքի մեջ, ուր բաբախում է մի սիրտ քեզ սիրելու համար, սնանում է և մի առյուծ՝ քեզ պաշտպանելու համար։ Քանի դեռ շնչում եմ, քանի դեռ արյուն է վազում իմ երակներում, և քանի այս բազուկը կորովի է, ես թույլ չեմ տալ, որ բռնավորի պիղծ ձեռքերը մոտենան քեզ։ Բայց երբ ես անկարող կլինեմ քո անիրավ ճակատագիրը ջնջելու, երբ ես իմ քաջերով կընկնեմ պատերազմի դաշտում, այն ժամանակ, Ռուզան, ազգի փրկության սեղանի վրա դու կհանես քո ողջակեզը։ Ուրեմն դեռ այժմ մենք կերթանք գործելու։ (Շարժվում է դեպի առաջ):

ՌՈՒԶԱՆ— (Հրամայաբար) Ներսե՛հ (Ներսեհը կանգ է առնում, Ռուզանը շարունակում է մեղմով) Ներսե՛հ, իմ հոգվո անգին հատոր, գիտես, որ քեզ սիրում եմ. սիրում եմ իմ բոլոր հոգվով, իմ սրտի բոլոր կարողությամբ։ Մինչև այսօր դո՛ւ էիր իմ մտածմունքը, դու էիր իմ հրճվանքը, դու էիր իմ սիրո և հիացման առարկան... օ՜, հիշում եմ՝ ինչպե՜ս մեր անուշ զրույցների և զբոսանաց ժամերում՝ ինձ թվում էր, թե աշխարհն էլ չունի վշտեր, թե ցավերն ու չարիքները վերացել են երկրից։ Ինչպե՜ս ես քեզմով հպարտանում էի և քո ապագա կենակցությունն ինձ հետ՝ համարում բախտի մեծագույն մի շնորհ. զի հավատում էի՝ թե այդ միությամբ մեզ համար պիտի բացվի երջանկության այն աղբյո՛ւրն, որից հավասարապես պիտի ըմպեն թե՛ մենք, թե՛ մեր հարազատները և թե՛ ժողովուրդը... Բայց ահա՛ ատված անօրինեց այլ կերպ։ Նա փակեց մեր առաջ երանության դուռը և բացավ փորձության մի փշալից ճանապարհ, որով պիտի անցնենք։ Անցնենք, ուրեմն, առանց դժգոհության, զի ոչ ոք կարող է աստծո խորհուրդները քննել կամ գուշակել թե՝ այս ամենը չէ ինչպես բարիք, որ նա գրկել է մեզ վշտերի կերպարանքով... Խոնարհե՛նք նրա սուրբ կամքի առաջ և մեզ վիճակված դառն բաժակը քամենք կամակար։ Իրա՛վ, սա մեր սրտին կբերե տանջանք, բայց և ժողովրդին կտա փրկություն։ Ուրեմն և դու, սիրեցյալդ իմ, քաջացիր և կրիր քո բաժին զրկանքն և հենց այդ զրկանքում քո վարձը որոնիր, զի մեզնից ոչ ոք ունի իրավունք՝ ժողովրդի ազատությունն յուր բախտին զոհելու։

# ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

*Ամրոցի մատուռի սյունազարդ գավիթը, որի վրա բացվում է մատուռի դուռը։*

## Տեսիլ Ա

### ՊԱՊԱՔ և ԹԵՆԻ

*ՊԱՊԱՔ— Ռուզանն իմաստուն որոշումն էր արել երկիրը թշնամուց ազատելու համար․ բայց հայրն արգելեց նրան այդ որոշումն իրագործելու։*

*ԹԵՆԻ— Այդ ես իմացա և չեմ մեղադրում իշխանին․ ոչ մի ծնող չի հոժարիլ յուր սիրած աղջիկը մատնել թշնամուն։*

*ՊԱՊԱՔ— Բայց միևնույն է, թշնամին վերջ ի վերջո կտիրանա նրան։*

*ԹԵՆԻ— Կտիրանա՞։ Ինչպե՞ս։*

*ՊԱՊԱՔ— Իշխաններն արդեն ելնում են Զոլայի դեմ․ այդ կնշանակե՝ թե նրանք գնում են ուղղակի մահվան առաջ, վասնզի թշնամին բազմաթիվ է և մեր հինգ հարյուրին կջարդե մի ժամում։ Այնուհետև նա բերդը ամեն կողմից կպաշարե և կառնե անաշխատ։ Այստեղ գտնվողներին, իհարկե, սուր կքաշե, իսկ Ռուզանին կտանե յուր հետ։*

*ԹԵՆԻ— Դու սարսափեցնում ես ինձ, իշխան։*

*ՊԱՊԱՔ— Այո՛, ա՛յդ կլինի մեր ճակատագիրը․ ամենքին կկոտորեն։*

*ԹԵՆԻ— Ամենքի՞ն, և նույնիսկ կանա՞նց։*

*ՊԱՊԱՔ— Կանանցից երիտասարդներին գուցե գերի տանեն, բայց պառավներին մյուս աշխարհը կուղարկեն։*

*ԹԵՆԻ—* (Սարսափահար) *Ի՞նչ անենք, ուրեմն, իշխան, փրկության մի ճանապարհ չորոնե՞նք։*

*ՊԱՊԱՔ— Փրկության միակ ճանապարհը կլինի այն, որ գտնվի մեկը, որ հորդորե Ռուզանին յուր որոշումն իրագործելու։*

*ԹԵՆԻ— Ի՞նչ հարկավոր է հորդորել, քանի որ նա ինքը պատրաստ է զոհվելու․ բանն այն է, որ նրան արգելում են։*

*ՊԱՊԱՔ— Նա կարող է փախչել։*

*ԹԵՆԻ— Բայց բերդի դռները փակված են ամուր․ իսկ ամեն ելքի մոտ դրված են պահապաններ։*

*ՊԱՊԱՔ— Այս մատուռի ավանդատունն ունի մի պատուհան, որ նայում է դեպի կաղնիների անտա՛ռը։ Այդ պատուհանից հեշտությամբ կարելի է իջնել։*

*ԹԵՆԻ—* (Մտածելով) *Այդտեղ, արդարև, կա այդպիսի մի ելք։*

ՌՈՒԶԱՆ— (Շանույշին) Շանույշ, դու գնա՛. ես կաղոթեմ և կվերադառնամ Թենիի հետ։

ՇԱՆՈՒՅՇ— Թող աստված լսի քո աղոթքը, իմ բարի տիրուհի։ (Հեռանում է):

## Տեսիլ Դ

### ԹԵՆԻ և ՌՈՒԶԱՆ

ՌՈՒԶԱՆ— (Հուզված) Թենի, մա՛յր Թենի, այս ի՞նչ վիշտ հասավ մեզ... ամեն բան իմացար, այնպես չէ՞...

ԹԵՆԻ— Այո՛, զավակս...

ՌՈՒԶԱՆ— Այժմ ասա՛, ի՞նչ անեմ, ո՞ւր դիմեմ իմ դժբախտ գլուխը ողբալու համար։

ԹԵՆԻ— Հանգստացի՛ր, որդյակս, աստված ողորմած է. նա չի գլանալ մեզ յուր օգնությունը։

ՌՈՒԶԱՆ— Հանգստանա՞մ... օ՜, մի ասիր այդ, Թենի. ինչպե՞ս կարող եմ ես հանգստանալ, քանի որ գիտեմ, թե մի քանի ժամից մահն իմ պատճառով յուր ահռելի շնչով պիտի մոտենա հազար անմեղների. քանի որ գիտեմ, թե մի քանի ժամից բյուր հայի բերան անեծք պիտի կարդա իմ անվան... Օ՜, ինչո՞ւ մայրս ինձ ծնեց, ինչո՞ւ ինձ կյանք տվող վայրկյանը՝ չեղավ ինձ մահաբեր... իսկ այժմ ինչո՞ւ արգելեցին ինձ. ինչո՞ւ թույլ չտվին այս թշվառությունը բառնալու.. Մի՞թե ես կկամենայի մատնել ինձ գազանին, եթե չիմանայի, թե իմ հայրն անկար է՝ յուր երկիրը փրկելու։

ԹԵՆԻ— Սիրելի զավակս, դու, արդարև, կամեցար բարի գործ կատարել, քո կոչն, անշուշտ, հաճելի կլիներ աստծուն. բայց ի՞նչ արած, ծնողների սիրտն էլ քարից չէ տաշած, նրանք չէին կարող թույլ տալ քեզ՝ այդ անել։

ՌՈՒԶԱՆ— Իսկ դու, մայր Թենի, չէ՞ որ այս գործը կարևոր ես համարում։

ԹԵՆԻ— Անշուշտ, որդյակս, լավագույն է, որ մարդ ինքը միայն մեռնի, քան յուր պատճառով հազարավորներ։

ՌՈՒԶԱՆ— (Փարվելով Թենիին) Օհ, շնորհակալ եմ, մայր Թենի. ուրեմն դու ինձ կօգնես այս սուրբ գործի մեջ, այնպես չէ՞։

ԹԵՆԻ— Կօգնե՞մ... ինչո՞վ, աղջի՛կս։

ՌՈՒԶԱՆ— Ցույց կտաս ինձ մի փախստյան ճանապարհ

*Թենի։ Երբ իմ զոհաբերության գնով փրկված կլինի այս երկիրը, ա՛յն ժամանակ ես կօգտվիմ քո այս նվերից՝ անհավատ գազանին չմատնվելու համար... այժմ մնաս բարյավ։* (Շտապով մտնում է մատուռը և դուռը ետ դնում)։

*ԹԵՆԻ— Բայց դու... իշխանուհի...*

## Տեսիլ Ե

*ԹԵՆԻ—* (Միայնակ) *Չլսեց, աստված իմ...* (Շվարած)։ *Ի՞նչ արի ես, արդյոք չսխալվեցա՞. արդյոք նա չշփոթեցրե՞ց ինձ... Մի՞թե ցույց պիտի տայի ճանապարհը... բայց Պապաքն ասաց, թե մեր բոլորի փրկությունը կախված է նրա զոհաբերությունից։ Այո՛, այդպես է. բայց մատանի՞ն... մի՞թե պետք է տայի նրան. Արդյոք դրանով մի ոճիր չգործեցի...* (Մտածում է) *Կարծեմ՝ ոչ. ընդհակառակն... եթե Ռուզանը զոհում է իրեն՝ մեզ ազատելու համար, ապա ես էլ ազատում եմ նրա արդար հոգին։ Թող ուրեմն իմ խիղճը չտանջե ինձ իզուր...*

ՎԱՐԱԳՈՒՅՐ

մեկի անդունդ. ոչ ոք այդտեղից անցնել չի կարող։ Իսկ այստեղից (Ցույց է տալիս ճակատակ կողմը) սկսում է մեծ հովիտը, որի վրա բանակած է թշնամին։ Եթե մի քայլ այն կողմն անցնեմ, նրա դժոխային գունդերը կերևան։ Ինձ մնում է եկածս ճանապարհով կրկին վերադառնալ (Պատահմամբ նայում է բարձր և տեսնում է Ռուզանին)։ Ահա նա... ահա՜... Ո՜հ, աստված իմ, շնորհակալ եմ քեզանից... տե՛ս ինչպե՛ս աներկյուղ դիմում է նա դեպի յուր դահիճը։ Սածկվիմ այստեղ, մինչև նա կիջնի։ (Քաշվում է մացառի ետևը) Ո՜հ, աստված իմ, խնայի՛ր նրան, ուժ տուր իմ բազուկներին՝ զորով դարձնել նրան յուր ծնողների գիրկը։

ՌՈՒԶԱՆ— (Իջնելով դեպի բեմը և մի քանի քայլ մնացած՝ կանգ առնելով զառիվայրի վրա) Ինձ չէին կամենում թողնել. ինձ արգելում էին. իմ պատճառով ուզում էին ժողովուրդը զոհել և սզո մեջ թողնել բյուրավոր ընտանիքներ։ Ո՛չ. այդ բոլորի փոխարեն նշանակված զոհը ես եմ և ես միայն կզոհվիմ։ Մի քանի վայրկյան ևս, և ես կհասնեմ թշնամուն, իմ ձեռքը կտամ բռնավորին և սրա փոխարեն կստանամ իմ հոր և յուր ժողովրդյան ազատությունը... Իսկ այնուհետև անելիքս որոշված է. այդ մասին այլևս մտածելիք չունիմ... Բայց... (Տատանվելով որոշման մեջ) Ո՜հ, ինչպե՜ս դժվար է՝ թողնել իմ եռկրց մայրս կիսամեռ, հայրս սգավոր, փեսաս սրտաբեկ... հեռանալ սիրելիներից. հեռանալ հայրենիքից... և այս ծաղիկ հասակում խամրիլ խորշակահար... Ա՜հ, ծնկներս ծալվում են... (Բռնում է ժայռից)։ Աստվա՜ծ իմ, ուժ տուր ինձ. արիացրո՛ւ ինձ՝ այս լուծը մինչև ի վերջ տանելու... (Հեկեկում է և ապա մի քանի քայլ առաջանալով՝ բացականչում)։ Բայց ի՞նչ եմ անում... Ինչո՞ւ եմ ուշանում. չէ՞ որ բանբերից առաջ պիտի հասնեմ զոհերին... (Առաջանում է դեպի այն կողմը, ուր պահված է Նաժիշտը)։

ՇԱՆՈՒՅՇ— (Պահված տեղից ելնելով) Բայց ես չեմ պիտի թողնեմ, տիրուհի։

ՌՈՒԶԱՆ— (Վեր թռչելով) Ա՜հ, Շանո՛ւյշ, դու այստե՞ղ ես. այդ ինչպե՞ս եկար և ինչո՞ւ։

ՇԱՆՈՒՅՇ— Ո՜հ, տիրուհի. դու չպիտի գնաս թշնամու մոտ, դու պիտի խղճաս քո ծնողներին։

ՌՈՒԶԱՆ— Այդ դո՞ւ պիտի սովորեցնես ինձ, խե՛ղճ աղջիկ։ Դարձիր ամրոցն առանց ուշանալու. դու այնտեղ կհարկավորվիս։

ՇԱՆՈՒՅՇ— Բայց ո՞ւմ պիտի հարկավորվիմ. իմ միակ տիրուհին այստեղ է. ես եկա նրան ծառայելու. ես նրան պիտի օգնեմ ամրոցը բարձրանալու։

ՌՈՒԶԱՆ— Այդ նեղությունը քեզ չի պիտի տամ, Շանույշ, դարձի՛ր, ասում եմ քեզ. մի՛ ուշացնիր ինձ։ Մինչև թշնամուն հասնելը դեռ բավա-

սարսափում։ Տե՛ս, բոլոր հովիտը և գետափը ծածկված է թշնամու վրաններով։ Իսկ այս շքեղ խորանը, որ այսքան մոտ է մեզ, բռնավորի՞նը չէ՞ արդյոք։ Նայի՛ր, սուսերամերկ պահապանները դժոխքի հրեշների պես հսկում են նրա դռանը։ Իսկ այս կողմը, տե՛ս, կանգնած են կապույտները, ո՜հ, որքան շատ են. յուրաքանչյուրի գլխին շողում է մի սուսեր. Նայի՛ր և սարսափիր... Իսկ այն ծերունիները. այն փոքրիկ տղաները. այն կանայքը... բոլորն էլ ձեռնկապ... Նրանք լալիս են, այնպես չէ։ Իսկ այդ ատույգ երիտասարդների խումբը, որ գլխակոր կանգնած է դահիճների առաջ... Օ՜հ, այս տեսարանը կտրատում է իմ սիրտը... Բայց, աստված իմ. ահա և Համտունը՝ գարշելի դավաճանը. տե՛ս՝ ինչպես է ճեմում յուր զոհերի առաջ։ (Ետ քաշվելով) Շանույշ, էլ ժամանակը հասավ, համբերելու ուժ չմնաց։ Մինչև այժմ սրտիս մեջ տրոփ և ոտքերումս մի դող էի զգում. այժմ, ընդհակառակն, արիություն եկավ վրաս. ես այլևս չեմ սարսափում բռնավորի առաջն ելնելու։ Այս թշվառներն ազատելու և դավաճանը պատժել տալու հույսը լցնում է իմ սիրտը ուրախությամբ։ Այժմ ես կերթամ. միայն բարյավ... (Առաջանում է)։

ՇԱՆՈՒՅՇ— Բայց ես սպասում էի թե՝ այս ամենը կսարսափեցներ քեզ, տիրուհի։

ՌՈՒԶԱՆ— (Ետ գալով) Բայց ոչ. Նայի՛ր ինձ. տե՛ս թե՝ գեղեցի՞կ եմ ես, գեղեցի՞կ եմ այնքան, որ բռնավորի սիրտը շարժել կարողանամ։ Նայի՛ր ինձ. ուղղի՛ր իմ մազերը. ուղղի՛ր հագուստներս. թող բռնավորը հիանալու չափ գեղեցիկ գտնե ինձ։

ՇԱՆՈՒՅՇ— (Անզգայաբար ուղղելով նրան) Դու գեղեցիկ ես, տիրուհի, գեղեցիկ՝ ինչպես հրեշտակ. բայց էլ ինչո՞ւդ է պետք գեղեցկությունը։

ՌՈՒԶԱՆ— Բռնավորի աչքերն ու միտքը կուրացնելու... Այժմ դու դեպի ամրոցն՝ ե՛ս դեպի զոհերը։ (Առաջանում է)։

ՇԱՆՈՒՅՇ— (Վերջին անգամ արգելելով) Տիրուհի՛...

ՌՈՒԶԱՆ— (Ուժգին հրելով Շանույշին) Հեռո՜ւ, ասում եմ քեզ, համառ աղջիկ։ (Վազում է դեպի բեմի խորքը)։

ՇԱՆՈՒՅՇ— (Ընկնելով գետնին) Ա՜հ, ամեն բան վերջացավ...

ՎԱՐԱԳՈՒՅՐ

## Երկրորդ պատկեր

Մարաց բանակը (Տե՛ս երրորդ արարվածի տեսարանը)։ Զորապետի խորանից քիչ հեռու կանգնած են մի շարք կապույտներ։

ՀԱՄՏՈՒՆ— *Քաշի՛ր լեզուդ, գարշելի պառավ, ապա թե ոչ սուրս կլռեցնե նրան։*

ՊԱՌԱՎ— *Իսկ սատծո անեծքի ձայնը ինչո՞վ պիտի լռեցնես։*

ՀԱՄՏՈՒՆ— (Սուրը քաշելով) *Դու շարունակո՞ւմ ես։*

## Տեսիլ Բ

### Առաջինները և ԲՈՒՐԱ

ԲՈՒՐԱ— (Հեգնությամբ ժպտալով) *Իշխան... դահճի պաշտոնը կամենում ես թեթևացնե՞լ։*

ՀԱՄՏՈՒՆ— (Ետ քաշվելով) *Քեզ հայհոյողների թիվը կամենում եմ պակասեցնել, տե՛ր։*

ՊԱՌԱՎ— (Ինքն իրեն) *Վա՜տ և խաբեբա։*

ԲՈՒՐԱ— *Արևս վկա, իմ հոր պալատում դեռ մինչև այսօր քեզ չափ հավատարիմ մեկը չտեսա։*

ՀԱՄՏՈՒՆ— *Մարմնավոր իշխաններին հավատարիմ լինել մեր կրոնն է մեզ պատվիրում։*

ԲՈՒՐԱ— (Հեգնությամբ) *Քո հայրենակիցների մեջ, երևի, միայն դո՛ւ ես այդ կրոնը պաշտում։*

ՊԱՌԱՎ— *Միայն դա՛ է, որ անարգում է այն։*

ՀԱՄՏՈՒՆ— (Կատաղի նայացքով) *Լեզո՛ւդ, անզգամ պառավ։*

ՊԱՌԱՎ— *Պիտի անիծեմ քեզ, մինչև իմ վերջին շունչը։*

ՀԱՄՏՈՒՆ— *Այդ շունչը երկար չի տևիլ։*

ԲՈՒՐԱ— *Ուրեմն մի՛ վշտացնիր նրան, իշխան։*

## Տեսիլ Գ

### Առաջինները և ԶՈԼԱ

ԶՈԼԱ— (Մտնելով) *Բուրա, դու անծանոթ էիր հայի կամակորության։*

ԲՈՒՐԱ— *Այստեղ մի փոքրիկ օրինակը տեսա։*

ԶՈԼԱ— *Ավելի մեծը պիտի տեսնես։*

ԲՈՒՐԱ— *Ի՞նչ է պատահել։*

ԶՈԼԱ— (Դեպի ետ նայելով) *Արու, այստե՛ղ արի։*

ԲՈՒՐԱ— (Անհամբեր) *Ջալալն իմ առաջարկությունը մերժե՞ց։*

ԲՈՒՐԱ— (Բարկությամբ) Լռեցե՛ք, թշվառականներ։ (Դահիճներին) Դահիճնե՛ր, ձեր գործը տեսեք։

## Տեսիլ Ե

**Առաջինները և ՌՈՒԶԱՆ**

ՌՈՒԶԱՆ— (Շտապով և շնչասպառ բեմը մտնելով և ձեռքը դեպի դահիճները պարզելով ճչում է) Ահ, ոչ, սպասեցեք... (Բոլորը ցնցվում են):

ԲՈՒՐԱ— (Դահիճներին) Սպասեցե՛ք։

ՀԱՄՏՈՒՆ— (Առանձին) Ա՜հ, Ռուզանը... բախտս անիվը դարձավ...

Ա ԾԵՐՈՒՆԻ— Իշխանուհի, Ռուզան, դու այստե՞ղ...

ԲՈՒՐԱ— (Զարմացած) Ռուզա՞ն...

ՋՈԼԱ— (Համտունին՝ հետաքրքրությամբ) Ո՞վ է այս կինը։

ՀԱՄՏՈՒՆ— (Հուզված) Նա է...

ՋՈԼԱ— Բայց ո՞վ։ (Հարցական հայացքով նայում է կես՝ Համտունին և կես՝ Ռուզանին):

ՌՈՒԶԱՆ— (Առաջ գալով) Հասան-Ջալալի աղջիկ Ռուզանը։

ՋՈԼԱ— (Զարմացած) Հասան-Ջալալի աղջի՞կը...

ՌՈՒԶԱՆ— Այո՛, նույն ինքը։ (Դառնալով Բուրային) Զարմազան մեծ զորապետի որդի Բուրան դու լինելու ես, անշուշտ։

ԲՈՒՐԱ— (Համեստությամբ) Այո, քո բարեկամը։

ՌՈՒԶԱՆ— Գուցե այս րոպեին, բայց ոչ առաջ։

ՋՈԼԱ— (Համտունին) Այս կինը կախարդելու է եղբորորդուս։

ՌՈՒԶԱՆ— (Բուրային) Դու պատգամավոր էիր ուղարկել հորս մոտ և պահանջել ինձ՝ քեզ կնության, հակառակ դեպքում պիտի կոտորեիր այս անմեղներին։

ԲՈՒՐԱ— Այո՛, իշխանուհի։

ՌՈՒԶԱՆ— Երկու օր առաջ սկսված էր իմ հարսանիքը։ Ես պիտի ամուսնանայի այն երիտասարդ իշխանազնի հետ, որին երկար ժամանակից ի վեր սիրում եմ։ Բայց ձեր անակնկալ հարձակումը մեր ուրախությունը փոխեց տխրության...

ԲՈՒՐԱ— (Ցույց տալով Համտունին) Այս իշխանը կարող է վկայել, որ ես ցավել եմ դրա համար։

քեզ պես ղավակներ։ Իսկ քեզ կտանեմ Թաթարաց երկիրն՝ այնտեղի մեծագույն զարդը դարձնելու համար։

ՌՈՒԶԱՆ— Դրա համար քեզանից խնդրելիք ունեմ։

ԹՈՒՐԱ— Իմ բոլոր իշխանությունս տալիս եմ քո ձեռքը. հրամայիր, ինչ կամենում ես։

ՌՈՒԶԱՆ— Ես խնդրում եմ քեզանից նախ՝ այս կապյալների և իմ հոր իշխանության մշտական ազատությունը և ապա (Դառնալով դեպի Համառունը և հանդիսաբար նրան մատնացույց անելով) այս դավաճանի գլխատումը։

ԹՈՒՐԱ— (Դեպի դահիճներն ու զորականները) Արձակեցե՛ք բոլոր կապյալներին և թողե՛ք նրանց։ (Ռուզանին) Իսկ քո հորը, տիրուհի, հենց այս վայրկյանից ազատ եմ հայտարարում յուր բացարձակ իշխանության մեջ։ Ինչ վերաբերում է այս իշխանին (Ցույց տալով Համառունի վրա), որին ես երբեք չհարգեցի, նա կգլխատվի մի քանի րոպեից։ (Դառնալով դահճապետին) Դահճապետ, այս ապիրատի գլուխը մի ժամից կուղարկես Ջալալ իշխանին։

ԴԱՀՃԱՊԵՏ— (Մոտենալով Համառունին և ձեռքը նրա ուսին զարկելով) Գնանք, բարեկամ, իմ գործն էլ թեթևացավ։ (Դուրս է տանում նրան)։

Ա ԾԵՐՈՒՆԻ— (Ծնկաչոք դեպի Ռուզանը) Ազնիվ իշխանուհի, մենք պատրաստ էինք քեզ համար զոհվելու, իսկ դու այս ի՞նչ արիր... (Ծերունուն ձայնակցում են բոլոր կապյալները իրենց օրհնություններով)։

ՌՈՒԶԱՆ— Ինչ որ ես արի, նույնը սովորեցրեք ձեր զավակներին անել, և ձեր հայրենիքը կազատվի ցավերից։

ՎԱՐԱԳՈՒՅՐ

*տալիս եմ քեզ, ահա՛, մի ժամ ժամանակ։ Բայց գիտցի՛ր, որ դա կլինի վերջինը։ Այդ ժամն անցնելուց հետ՝ դու պիտի երջանկացնես ինձ քո սիրաշունչ համբույրներով։* (Դուրս է գնում)։

*ՌՈՒԶԱՆ—* (Աչքերը խոնարհած) *Թող այդպես լինի, տե՛ր...*

## Տեսիլ Բ

*ՌՈՒԶԱՆ—* (Միայնակ) *Ահա՛, հասավ ժամը վերջին պարտքը կատարելու, կյանքին և աշխարհին վերջին բարև տալու... Օ՛ն, ուրեմն, սի՛րտ իմ, զորացի՛ր և գործի՛ր, պարտքերից ծանրագույնը կատարի՛ր քաջությամբ։ Այն խաչը, որ մինչև այստեղ հոժարամիտ կրեցիր, այժմ պիտի փառավորես քո կյանքի գնով... Թո՛ղ երկյուղն այլևս՝ արիությունդ տեսնելով. թող մահն ամոթից կարմրի քո առաջ...* (Հանում է մատանին և գոհարը բարձրացնելով՝ նայում է տակը պահված թույնին) *Դո՛ւ, որ այդքան փոքր ես և, սակայն, ահավոր զորություն ունիս քո մեջ. դո՛ւ, որ եղծանում ես արարչի հրաշակերտը՝ նրա երակների արյունը սառեցնելով և զգացմունքների անոթը փշրելով, անշուշտ, ստեղծված ես ո՛չ միշտ չարիքներ ծնանելու համար, և ո՛վ դիմում է քո օգնությանը՝ չէ միշտ հանցավոր և անիծապարտ... Երբ բախտի չար կամքով դառնանում է սրտի անուշ քաղցրությունը, երբ բռնության շնորհիվ սիրո արքայությունը փոխվում է դժոխքի, երբ ապականությունը զորանալով՝ սպառնում է առաքինությանը նախատական կորուստ, այն ժամանակ դու, ո՛վ մահաբեր թույն, դառնում ես տենչալի և արդա՛ր հոգվույն և եթե նրան բաժանում ես մարմնից և սատար լինում երկինք վերանալու, դրանով արդեն գործում ես բարիք՝ ազատելով հոգին մեղսածին կապերից։* (Մատանին խրում է ոսկյա գավաթի մեջ) *Օ՛ն, ուրեմն, իջի՛ր հատակն այս ջրի, որ հոսել է իմ երկրի կուսական լեռներից. հաղորդի՛ր սրան քո բոլոր զորությունը, թունավորի՛ր սրա վերջին կաթիլը, որպեսզի սա սրտիս բերե հավիտենական քուն և փրկե հոգիս սիրատանջ վշտերից...* (Տեղից բարձրանալով՝ նայում է հեռուն)։ *Այժմ մնաք բարով, հայրենի լեռնե՛ր, հայրենի երկի՛նք, հայրենի արև՛, ձեզ վրա նայում եմ ես վերջին անգամ և ձեզ նվիրում իմ ետին շունչը, իմ օրհնությունը... Մնաս բարով և դու, հայո՛ց ժողովուրդ, քեզ սիրեցի ես կաթոգին սիրով և քո փրկության սեղանի վրա* (Բարձրացնում է թունալից գավաթը) *դնում եմ, ահա՛, իմ ողջակեզը... Ընդունի՛ր այս զոհը և աղոթիր ատա-*

## Տեսիլ Դ

Ներս են վազում մի խումբ փախստականներ

ԲՈՒՐԱ— *Այս ի՞նչ է, փախստականնե՞ր...*

ՄԻ ՓԱԽՍՏՅԱ— *Տեր Նուրին, հայերը սաստիկ թափով մեզ ցրվեցին։*

ԲՈՒՐԱ— (Զայրացած) *Թշվառականներ, դուք համարձակվում եք փախչել, երբ մենք դեռ նոր ենք սուրը մերկացնում։*

ՓԱԽՍՏՅԱ— *Տեր իմ, անկարելի է դիմադրել։*

ԲՈՒՐԱ— *Քաշի՛ր լեզուդ, կնամա՛րդ,* (Մյուսներին և զորականին) *օ՜ն, ամենքդ հառա՜ջ։* (Սուրը հանելով դիմում է բեմի խորքը):

ՋՈԼԱ— *Հառաջ, օ՜ն հառաջ...* (Հետևում է Բուրային):

(Զորքերը գոռալով հետևում են նրանց)

## Տեսիլ Ե

*Բեմից դուրս սկսվում է ընդհարումը, շփոթ, աղաղակ, զենքերի շաչյուն, իրար հետևից մտնում են բեմը փախստականներ, որոնք խմբակներով փախչում են այս ու այն կողմ։ Ապա երևում են հայոց ու թաթարաց ախոյաններ, որոնք մենամարտելով մտնում են բեմը, ուր ոմանք ընկնում, և ոմանք փախուստ են տալիս։ Սրանց հետևվում են ուրիշ ախոյաններ, որոնք նույն ձևով կռվելով անցնում են բեմից։ Լսվում են մոտեցող թմբուկների ու փողերի հնչյուններ, հաղթական աղաղակներ։ Ներս են մտնում հայոց իշխանները՝ Ջալալ, Զաքարե, Ներսեհ, Ամրամ, Ռուէլ, իրենց թիկնապահներով, նրանց հետևում են զորախմբերը։*

ՋԱԼԱԼ— (Ներսեհին) *Հապա, իմ քաջ, առաջ անցիր, Ռուզանն գտի՛ր։*

ՆԵՐՍԵՀ— (Դիմելով դեպի առաջին պատահած վրանը) *Այս վրանը դատարկ է։*

ՋԱԼԱԼ— (Ցույց տալով կանանոցը) *Ահա՛ կանանոցը, այնտե՛ղ որոնիր։*

ՆԵՐՍԵՀ— (Կանանոցի վարագույրը քաշելով) *Ահա այնտեղ է ձեր սիրո հրեշտակը։* (Մոտենալով Ռուզանին) *Ողջույն քեզ պաշտելիդ իմ։*

ՋԱԼԱԼ— (Ներս վազելով) *Այստեղ է Ռուզանս* (Փարվելով աղջկանը). *ո՜վ իմ անգին զավակ։*

ՌՈՒԶԱՆ— (Դժվարությամբ բարձրանալով գահավորակի վրա) *Ներսե՜հ, հայր իմ, դուք այստե՞ղ... Ո՜վ ամենազոր աստվա՜ծ..*

ՋԱԼԱԼ— (Անհանգստությամբ) *Այս ի՞նչ է, դու հիվանդ ես, սիրելյա՜լ զավակս։*

ՋԱԼԱԼ— (Սարսափահար) *Դո՞ւ... թու... նավորեցի՞ր քեզ... ո՜վ անբախտ զավակ...*

ՆԵՐՍԵՀ— (Հուսահատաբար) *Ո՜վ զարհուրելի գույժ. ինչո՞ւ երկինքը չէ փլչում մեր գլխին...*

ՌՈՒԶԱՆ— *Մի՛ տխրիք և մի՛ հուսահատիք... ես երջանիկ եմ, որ պիտի մեռնեմ ձեր գրկերում...*

ՋԱԼԱԼ— (Վշտահար) *Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ կամեցար մեռնել... մի՞թե բավական չէր քո փախուստը...*

ՌՈՒԶԱՆ— *Օ՜, հայր իմ, մի՛ կշտամբիր ինձ... եթե ես չփախչեի, եթե ես չզո՞եի ինձ, թշնամին չէր հեռանալ քո բերդի ստորոտից...*

ԶԱՔԱՐԵ— (Տխրահուշակ) *Եվ մենք չէինք կարող զորաժողով անել և երկրի փրկությունը սրով ձեռք բերել։*

ՍՄԲԱՏ— (Առանձին) *Ճշմարիտ է ասում, սա ինքն է մեր փրկիչը...*

ՆԵՐՍԵՀ— (Հուզված) *Բայց մեզ փրկելուց ետ ինչո՞ւ կամեցար մեռնել...*

ՌՈՒԶԱՆ— (Նվազածայն) *Որպեսզի թշնամու ձեռը չփարեր քո հարսնացուին...*

ՋԱԼԱԼ— *Մի՞թե չգիտեիր, որ քո հայրը չէր թողնել քեզ նրա ճանկերում։*

ՌՈՒԶԱՆ— *Գիտեի. բայց չուզեցի որ թշնամին ճանաչեր ինձ իբրև գործիք դավադրության... Կամեցա, որ աշխարհն իմանա թե՝ հայ աղջիկը կարող է զոհվել, բայց երբեք խաբել...*

ՋԱԼԱԼ— (Լալագին) *Ո՜վ իմ աննման զավակ...*

ՈՒՄԵԿ— (Իշխաններին) *Բայց ո՞վ մատակարարեց սրան թույնը։*

ՌՈՒԶԱՆ— *Մի բարի հոգի...*

ՍՄԲԱՏ— *Ահա՛ այս գավաթի մեջ է մեզ ամենքին հայտնի Թենիի մատանին։*

ՆԵՐՍԵՀ— (Վեր թռչելով) *Թենիի մատանի՞ն...* (Մռնչում է դիվալու):

ՋԱԼԱԼ— (Զարհուրագին) *Թենիի մատանի՞ն... Օ՜, որդեսպան* (Ռուզանին). *ուրեմն այդ պառա՞վը մատակարարեց քեզ թույնը...*

(Ամենը սարսափի բացականչություններ են անում):

ՌՈՒԶԱՆ— *Նա մի բարի գործ կատարեց. ներե՛ր նրան, հայր իմ...*

ՋԱԼԱԼ— (Զայրագին) *Ներել նրան. օ՜, ոչ. միակ և առաջին արյունը, որ պիտի թափվի իմ ամրոցում կլինի այդ ժանտ պառավի արյունը...*

ՌՈՒԶԱՆ— (Վերջին շնչում) *Ների՛ր նրան, հայր իմ, քեզ խնդրում է զավակդ յուր վերջին շնչում...*

ՋԱԼԱԼ— *Բայց նա...*

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆ

# ՊԱՂՏԱՍԱՐ ԱՂԲԱՐ

Կատակերգություն երեք արարքով

# ԱՐԱՐՔ ԱՌԱՋԻՆ

(Թատրոնը կներկայե ընդարձակ և ճոխ կարասիներով զարդարված սրահ մը, աջ և ահյակ երկ-երկու սենյակ, պարտեզի և փողոցի վրա պատուհաններ, միջին դուռ մը)։

## Տեսիլ Ա.

*ԱՆՈՒՅՇ—* (Փողոցին վրա պատուհանին առջև նստած թաշկինակ ի ձեռին)։

ԿԻՊԱՐ, հետո ՍՈՂՈՄԷ

*ԿԻՊԱՐ— Տիկի՛ն, գործելու ժամ է և ո՛չ լալու, սրբե՛ արտասուքդ և վայրկյան մ'ինձի մտիկ ըրե՛։*

*ԱՆՈՒՅՇ—* (Աչքերը սրբելով) *Կխոստանա՞ս ուրեմն պաշտպանել զիս։*

*ԿԻՊԱՐ— Վատությանց ամենեն սոսկալին գործած կըլլայի, եթե վայրկյան մ'իսկ մտաբերեի լքանել, թողուլ զքեզ, զոր տասն տարիներե հետե պաշտած եմ և որուն երկիր պիտի պագնեմ հավիտյան։ Հանդարտ եղի՛ր, ամեն վարպետություն պիտի բանեցնեմ ի դերև հանելու համար ամուսնույդ բոլոր հնարքներն և պիտի ստիպեմ զինքն հուսահատելու և նույնիսկ քեզմե ներումն խնդրելու։*

*ԱՆՈՒՅՇ— Դյուրավ հուսահատողներեն չէ, մանավանդ թե սովորականեն ավելի համառ ըլլալով՝ բոլոր ճիգը պիտի թափե զիս վատահամբավելու համար... Ա՜հ, սիրելիդ իմ Կիպար, ինձ ամենեն ավելի ցավ պատճառողն անբարոյականության հանցանոք ամբաստանված Դատաստանական խորհրդո ներկայանալու փափուկ կետն է և...*

*ԿԻՊԱՐ— Անբարոյականության նշույլն անգամ չեմ նշմարեր ես. աստված մի՛ արասցե, որբոց իրավո՞ւնքն հափշտակած ես, այլոց ժառանգությո՞ւնն կորզած ես, գողությո՞ւն ըրած ես, մա՞րդ սպաննած ես... բնավ երբեք, քավ լիցի... այլ պարզապես էրիկդ չես սիրեր և անոր տեղ*

*ԱՆՈՒՇ— Կխոստանամ։*

*ԿԻՊԱՐ — Անհավասիկ իմ հրահանգներս. նախ...*

*ԱՆՈՒՅՇ—* (Ամուսնույն գալը տեսնելով պատուհանեն) *Երթամ, ահա կուգա։*

*ԿԻՊԱՐ— Գնա՛, վերջը կտեսնվինք... Կամ Սողոմեին հետ կը ղրկեմ քեզ հրահանգներս։*

*ՍՈՂՈՄԵ— Բաժնվեցեք... վազելով կուգա...* (Անույշ կմեկնի) *Քիչ մը խրատեիք ու հորդորեիք զինքն, որ շատ չի հուզվի։*

*ԿԻՊԱՐ— Կամաց կամաց կը վարժվի...*

*ՍՈՂՈՄԵ— Երեկ գիշեր տեսնելու էիք խեղճն... դիմանալու բան չէր... ժամերով լացավ... քուկին Պաղտասար աղբարդ ալ խենթ կով դարձած էր... կատղած էր. բան մ'ալ ըլլա՞ր գոնե... փառք աստուծո, ի՞նչ կա բարկանալու, մարդ աստուծո, կերակո՞ւրդ պատրաստված չէր, լաթե՞րդ լվացված չէին... անկողի՞նդ շտկված չէր... տուն եկար, շենքով շնորհքով կերակուրդ կեր, գնա՛ տեղդ պառկե՛... չէ, չէ, առաջվնե ի վեր բծախնդիր է Պաղտասար աղբարն... պզտիկ բանի մը համար շուտ մը կրակ կկտրի...*

*ԿԻՊԱՐ— Այս անգամվանը բոլորովին բծախնդրություն է։*

## Տեսիլ Բ

### ԿԻՊԱՐ ԵՒ ՊԱՂՏԱՍԱՐ

*ՊԱՂՏԱՍԱՐ—* (Արագաքայլ մտնելով) *Ինձի Պաղտիկ կըսեն...* (Առ Սողոմե) *Դուրս գնա՛, դուռն ալ գոցե՛ և թող մի՛ տար, որ ուրիշ մարդ ներս մտնե, շո՛ւտ ըրե, շո՛ւտ, դուրս գնա, շուտ... Ներեցե՛ք, պարոն Կիպար, զձեզ կանչել տալուս համար։ Երբ մարդս փորձանքի մը կհանդիպի, բնականաբար իր ամենեն մոտ բարեկամներուն կդիմե, անոնցմե խելք սորվելու համար։ Սարսափելի փորձանք մ'եկավ գլուխս. երեկ իրիկվնե ի վեր խելքս կորուսած եմ, ո՛չ ըրածս գիտեմ, ո՛չ ըսածս. ընտանեկան գաղտնիք մ'ունիմ քեզ հաղորդելու, քեզ՝ որ միակ բարեկամս ես, քեզ՝ որու անկեղծությանը կատարելապես վստահ եմ։*

*ԿԻՊԱՐ— Շնորհակալ եմ, այդ ձեր ազնվությունն է։*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Ես ամեն մարդու գաղտնիք չեմ բանար, թեպետև դրսեն կոշտ ու ապուշ մեկը կերևամ, բայց առաջ աստված, թշնամիս ալ կճանչնամ, բարեկամս ալ, ինձի Պաղտիկ կըսեն, գործս գիտեմ ես։*

*ԿԻՊԱՐ— Այո՛։*

*Աճապարե՛, գնա՛, սորվե՛, եկուր... սա երկու լիրբն ալ գատարաններ քաշ-
ցիմ այսօր, որ հասկնան, թե ինձի պես մարդու մը պատիվն արատավոր-
րելը դյուրին չէ։*

*ԿԻՊԱՐ— Ի տեսություն։* (Մեկուսի) *Նախ և առաջ փութանք մեր գոր-
ծը կարգադրելու։* (Կմեկնի)։

## Տեսիլ Գ

ՊԱՂՏԱՍԱՐ, ետքը ՕԳՍԵՆ ու ՍՈՂՈՄԵ

*ՊԱՂՏԱՍԱՐ— Ի՞նչպես վազելով կերթա իմ գործիս համար, մարդ
մը, որ ինձի համար հոգին կուտա. բարի, պարկեշտ, ազնիվ ու վստահելի
անձ մը, որու նմանն գտնելը խիստ դժվար է ժամանակիս մեջ...*

*ՍՈՂՈՄԵ—* (Դրսեն) *Թող չեմ տար որ մտնես։*

*ՕԳՍԵՆ—* (Դրսեն) *Պիտի մտնեմ։*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Օգսենն է, մոռցանք այս...*

*ՍՈՂՈՄԵ—* (Դրսեն) *Ո՛չ։*

*ՕԳՍԵՆ—* (Դրսեն) *Այո՛։* (Դուռը ճրելով կրանա ու կմտնե) *Ի՞նչ խայ-
տառակություն է աս, Պաղտասար աղբար։*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Ներեցե՛ք, խելքս գլուխս չէ...*

*ՕԳՍԵՆ— Պաղտասար աղբար, ի՞նչ խայտառակություն է աս։*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Հանցանքն իմս է...*

*ՕԳՍԵՆ— Ի՞նչ նախատինք, ի՞նչ անարգանք, ի՞նչ թշնամություն է աս,
Պաղտասար աղբար, զիս տուն կհրավիրեք և ձեր աղախնույն կպատվի-
րեք, որ ներս չընդունի զիս։*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Մոռցա...*

*ՕԳՍԵՆ— Ի՞նչը մոռցար։*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Պատվիրել...*

*ՕԳՍԵՆ— Ի՞նչ ըսել է պատվիրել։*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Որ թող տա։*

*ՕԳՍԵՆ— Ի՞նչ կնշանակե որ թող տա. ի՞նչ հարաբերություն ունի, որ
թող տա իմ հարցմանս հետ... որ թող տա եղեր...*

*ՊԱՂՏՍՍԱՐ— Ձեզի ներս մտնել։*

*ՕԳՍԵՆ— Ոչինչ, խոսքեր, անպիտան արդարացումներ... խնդիրը
ծանր է, փաստաբան մը, իրավագետ մը, արդարության գործակատար
մը բռնաբարված է, նախատված է, անարգված է, պատվո գոհացում,
փոխարինություն կպահանջեմ։ Գիտե՞ք, որ օրենքը քսան ոսկվո տուգա-*

չմտնեին… օրիորդը տեսնելու պես հրապուրվեցա և կամաց-կամաց հափշտակվեցա անոր գեղեն, շարժվածքեն, ձևերեն, խոսելու և մանավանդ խնդալու եղանակեն, ուստի բարեկամիս հարցուցի թե կճանչնա՞ր այդ աղջիկն… բարով խերով չհարցնեի… բարեկամս պատասխանեց, թե կճանչնար զինքն, թե որբ մ'էր, թե հեզ, բարեբարո, խոնարհ, խոհեմ, կրթված, դաստիարակված աղջիկ մ'էր, թե զայն կնության առնողն մեծ բարիք մը պիտի գործեր, թե աղքատությենե պիտի փրկեր զայն։

Քանի մ'օր ետքն ազգականներուս և քանի մը բարեկամներուս դիմեցի… բարով խերով չդիմեի… և անոնց կարծիքն իմանալ ուզեցի։ Ամենքն ալ պատասխանեցին, թե անգյուտ գանձ մը գտեր էի և թե առանց ժամանակ կորսնցնելու աշխատեի վայելել այդ գանձը։ Այս տեղեկության վրա անմիջապես խոս-կապ տվի, շաբաթ մ'ետքը նշանտվությունն կատարեցի և երեք օրեն հետո հարսնիքը։

ՕԳՍԵՆ— Ասանկ լավագույն հանձնարարություններ ունեցող կին մը, ի՞նչպես անբարոյականության մեջ կգլորի ուրեմն։

ՊԱՂՏԱՍԱՐ— Ի՞նչ փույթ ինձ, թե ինչպես գլորած է. ես կուզեմ միայն, որ իմ տանս պատիվն պահեմ, տունես վռնտեմ այդ լիրբ կինն՝ զոր ինքս կողակից չեմ ընդունիր բնավ և կպնդեմ նաև, որ իր արժանի պատիժն կրե։

ՕԳՍԵՆ— Կխնդրեմ, մի՛ հուզվիք այնքան, խնդիրը փափուկ է, պաղ արյամբ խորհինք և տեսնենք, թե ինչպե՞ս են օրինաց տրամադրություններն այս մասին։

ՊԱՂՏԱՍԱՐ— Ազգային Հիվանդանոց ղրկել, շղթայով կապել, անոթի պահել, ամեն գիշեր ծեծել, ոսկորները ջարդուբուրդ ընել և աշխարհես վերցնել ասանկ լիրբ և անպատիվ կիները։

ՕԳՍԵՆ— Զսպավորեցեք ձեր լեզուն։ Առանց օրինաց վճիռն ստանալու իրավունք չունիք այդ կնոջ լիրբ և անպատիվ ըսելու. ձեր տիկինն դեռ պարկեշտ ու պատվավոր կին մ'է աշխարհի և օրինաց առջև։

ՊԱՂՏԱՍԱՐ— Պարկե՞շտ… պատվավո՞ր… կին մը, որ վատահամբավ տունե մը դուրս ելած է…

ՕԳՍԵՆ— Այդ անպատիվ դուռն կոտրելով ու խորտակելո՞վ ներս մտած է, թե դուռը բաց գտնելով ներս մտած է։

ՊԱՂՏԱՍԱՐ— Ինչո՞ւս պետք, բավական է, որ մտած է հոն։

ՕԳՍԵՆ— Ինձի պետք է այս պարագան, կաղաչեմ, որ ըսեք։

ՊԱՂՏԱՍԱՐ— Տեր ողորմյա. ի՞նչ գիտնամ ես… բայց դուռը կոտրելու և խորտակելու հարկ չկա։

ՕԳՍԵՆ— Ապա ուրեմն բաց գտած է դուռն ու ներս մտած է, ահա թեթևացուցիչ դեպք հանցանաց մը… տեսա՞ք…

ՊԱՂՏԱՍԱՐ— Ի՞նչպես կրնա կին մը բարի նպատակով խաբել, մատնել յուր էրիկն։

Ի՞նչ խայտառակություն է աս... ես հերը կանիծեմ այդ Նրբացուցիչ դեպք հանցանացին ալ, հնարողին ալ... իմ կինս, իմ ընկերս, իմ կողակիցս, իմ լծակիցս ինձմե զատ ուրիշ անձ մը սիրած է, եղեռն, ոճիր գործած է, կախվելու արժանի է...

ՕԳՍԵՆ— Շատ կաճապարեք վճիռ տալու. համբերեցեք որ օրենքն խուզարկե, հետազոտե, քննե, սերտե և ուսումնասիրե այն պատճառներն, որ ստիպած են կինդ սիրական մ'ունենալու։ Թերևս իրավունք ունի ուրիշ մը սիրելու։ Թողեք ուրեմն, որ սերտեմ խնդիրն, որպեսզի չկորսնցնենք դատը։ Դուք կուզեք, որ ձեր վկայության վրա անմիջապես պատժվի ձեր տիկինը։ Կարելի չէ այդ։ Շատեր ձեզի պես իրենք զիրենք անմեղ կարծելով, դատ վարած են իրենց կնոջ դեմ և ինքյանք հանցավոր և պարտավոր ելած են դատարանեն։

ՊԱՂՏԱՍԱՐ— Ըստ ձեզ անմե՞ղ է ուրեմն կինս։

ՕԳՍԵՆ— Ըստ իս այժմ ամեն ինչ մթության մեջ է. չեմ ըսեր, թե կինդ անմեղ է, ի վերա այսր ամենայնի չեմ ալ պնդեր, թե մեղավոր է. ոչ կրնամ արդարացնել կամ դատապարտել կնոջդ սիրականը, ոչ ալ կրնամ համարձակիլ վճռելու, թե հանցավորն դուք եք։

ՊԱՂՏԱՍԱՐ— Հավանականություն կա՞, որ ես ալ հանցավոր ըլլամ այս խնդրույն մեջ։

ՕԳՍԵՆ— Ամեն բան հավանական է։

ՊԱՂՏԱՍԱՐ— Ըսել է թե այդ կինն կարելի չէ այսօր Փրկիչ գնել։

ՕԳՍԵՆ— Անհնար է։ Նրբացուցիչ դեպք հանցանաց այնչափ հառաջ գնացած է, որ եթե կինդ բարի նպատակով մը սիրած է ուրիշ մը, այսինքն՝ ի նպաստ ազգային հառաջդիմության և լուսավորության, կամ հօգուտ որբեր, հաշմանդամներ, ծերեր, անկարներ, աղքատներ ու անանկըներ պատսպարելու գովելի և ազգօգուտ ձեռնարկի մը, կինդ, ըսեմ, լրագրաց մեջ կանցնի, գովեստներ, դափնյա պսակներ կընդունի, որովհետև մասնավորին շահն ընդհանուրի շահուն զոհելու դյուցազնությունն ունեցած է, և այս պարագային մեջ...

ՊԱՂՏԱՍԱՐ— Ե՞ս եմ ուրեմն հանցավորն։

ՕԳՍԵՆ— Իսկ ընդհակառակն՝ եթե սիրեր տգեղ կամ ձեր հակառակիր անձ մը՝ բնականաբար կծանրացներ հանցանքը, թողունք օրենքն, հասարակաց կարծիքն կդատապարտեր զինքն, ըսելով. «Գոնե սիրածն գեղեցիկ երիտասարդ կամ համակիր մե՞կն ըլլար»։

ՊԱՂՏԱՍԱՐ— Վաղը կրնա՞նք Փրկիչ գնել։

ՕԳՍԵՆ— Անկարելի է։ Իսկ եթե դուք ձեր կնոջն անհավատարիմ

սորվելու, մեծ հայրս ալ խելացի էր, մենք ցեղով սաանկ ենք, բնականեն փաստաբան ենք և անմիջապես կհասկնանք, թե որու քովն է իրավունքը...

## Տեսիլ Զ

ՊԱՂՏԱՍԱՐ և ԱՆՈՒՅՇ

*ԱՆՈՒՅՇ— Ալ չեմ կրնար հանդուրժել անարգանացդ...*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Տակավին երես ունի՞ս դիմացս ելնելու։*

*ԱՆՈՒՅՇ— Ես կուզեմ, որ հիմա անմիջապես բաժնվինք։*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Եթե քիչ մը խիղճ ու ամոթ ունենայիր՝ պիտի երթայիր սենյակիդ մեջ մազերդ փետտելու և...*

*ԱՆՈՒՅՇ— Ինչո՞ւ մազերս փետտեմ եղեր... մանավանդ թե մազերուս անուշահոտ յուղեր պիտի քսեմ ապերախտ մարդու մը ձեռքեն փրկվելուս համար։ Ափսոս, բյուր ափսոս քեզի բարձր դասու ընկերության մեջ մտցնելուս համար. կարգված ժամանակդ շենքով շնորհքով բարև մը տալ չէիր գիտեր. ավա՜ղ այն ջանից, զոր գրի վրադ դնելով չրտկելու, մարդու պես հագվեցնելու համար, ավա՜ղ այն հոգերուն, զոր յարձի քեզի պարել սորվեցնելու համար. կարգված տարիդ շիտկե-շիտակ քալել անգամ չէիր գիտեր. ափսոս, ափսոս իմ զոհողությանցս... հիմա կարգվելեդ ի վեր է, որ քիչ մը մարդ ճանչցար. առաջ լայն վարտիքովդ ու երկար վերարկուովդ խոհարար կնմանեիր, այնպես որ ամենքը Պաղտասար աղբար կկանչեին քեզի, և այսօր, որ քիչ մը մարդու կարգ անցար, ես անառակ եղա, անպատիվ եղա, այնպես չէ՞...*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Մեր ցեղը քիչ մը ապերախտ է...*

*ԱՆՈՒՅՇ— Ինձի պես կնիկ մը քեզի համար շատ էր ու ծանր, գիտեի, որ չպիտի կրնայիր տանել զիս, որովհետև դարուս լուսավորության ոգին ըմբռնած չէիր, որովհետև կինն իբրև ստրուկ կնկատեիր, այս ամենը գիտեի, բայց կհամբերեի, անիծելով միայն այն օրն, ուր խոսք տվի քեզի հետ ամուսնանալու։*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Բարով խերով չտայիր...*

*ԱՆՈՒՅՇ— Դրացիներս կջանային համոզել զիս, որ չկարգվիմ հետդ. այն մարդի կտորին հետ ի՞նչպես պիտի ապրիս, կըսեին, իսկ ես կպատասխանեի իրենց, թե նշանածս աղեկ մարդ է։*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Բարով խերով չըլլայի...*

ԱՆՈՒՅՇ— Իրեն համար ատելութենե ուրիշ զգացում չունիմ։

ՊԱՂՏԱՍԱՐ— Սատանե մ'ավելի զզվելի է ինձ։

ԿԻՊԱՐ— Մտիկ ըրեք, խնդրեմ...

ԱՆՈՒՅՇ— Այդ առաջարկությունն մի՛ ըներ, կաղաչեմ։

ՊԱՂՏԱՍԱՐ— Այս գործին մեջ մի մտներ։

ԿԻՊԱՐ— Ամուսնության մեջ ասանկ պարագաներ կրնան պատահիլ. խոհեմությունը կպահանջե, որ...

ՊԱՂՏԱՍԱՐ— Հանցավորը պատժվի։

ԱՆՈՒՅՇ— Այո, ես ալ կպահանջեմ, որ հանցավորն պատժվի և հասկընա, թե կինն ստրուկ չէ։ Ենթադրենք վայրկյան մը, թե սիրական մ'ունիմ իրոք և դնենք, թե սիրական մ'ունենալս հայտնվեցավ, ի՞նչ ընթացք բռնելու պարտավոր էր... ամեն բան տակնուվրա՞ ընել, փաստաբաններո՞ւ դիմել, պոռա՞լ, կանչե՞լ...

ՊԱՂՏԱՍԱՐ— Այո, այո։

ԿԻՊԱՐ— Պարտավոր էիր նախ կինդ կանչել...

ԱՆՈՒՅՇ— Պաղարյամբ խոսիլ...

ԿԻՊԱՐ— Գործն իրմե ստուգել...

ԱՆՈՒՅՇ— Առանց բարկանալու...

ԿԻՊԱՐ— Եվ եթե իրոք սիրական մ'ունի...

ԱՆՈՒՅՇ— Ներել ու խրատել...

ԿԻՊԱՐ— Որ ուրիշ անգամ...

ԱՆՈՒՅՇ— Ասանկ պակասության մեջ չգտնվի...

ԿԻՊԱՐ— Եվ եթե երկրորդ անգամ գտնվի...

ԱՆՈՒՅՇ— Երկրորդ անգամ ներել...

ԿԻՊԱՐ— Խրատել, հորդորել...

ԱՆՈՒՅՇ— Եվ ըսել, թե աղեկ բան չէ...

ԿԻՊԱՐ— Սիրական մ'ունենալը...

ԱՆՈՒՅՇ— Ուրիշ սիրականներ ալ ունենալու կառաջնորդե...

ԿԻՊԱՐ— Եվ թե շատ սիրականներ ունենալն...

ԱՆՈՒՅՇ— Հաճո չթվիր ամուսիններուն...

ԿԻՊԱՐ— Վերջապես շարունակ բարոյախոսելով...

ԱՆՈՒՅՇ— Հորդորելով...

ԿԻՊԱՐ— Համոզելով...

ԱՆՈՒՅՇ— Խրատելով...

ԿԻՊԱՐ— Ջախելով...

ԱՆՈՒՅՇ— Շոյելով...

ԿԻՊԱՐ— Սպառնալով...

*ԱՆՈՒՇ— Մեռնիլ...*

*ԿԻՊԱՐ— Այս չէ՞ ըլլալիքը...*

*ԱՆՈՒՇ— Պարապ տեղ բերանս կհոգնեցնեմ... այս մարդը չի համոզվիր։*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Ես ներող էրիկներեն չեմ։*

*ԿԻՊԱՐ—* (Պաղտասարին ականջին ի վար) *Բերնեն բան մը չկրցի առնել։*

*ԱՆՈՒՇ— Կաղաչեմ, մի՛ ստիպեր զինքն, որ հաշտվի, վասնզի ես ուխտած եմ ընավ չսիրել զինքն։*

*ՊԱՂՏԱՍԱՐ—* (Ցած առ Կիպար) *Միշտ աշխատե սա սիրականին անունն սորվելու* (Բարձր) *Հաշտությունն անկարելի է. պարապ խոսքեր մտիկ ընելու ժամանակ չունիմ. երթամ փաստաբան գտնելու և խնդիրը Դատաստանական խորհրդո ատյանը հանելու* (Կմեկնի)։

## Տեսիլ Ը

ԿԻՊԱՐ և ԱՆՈՒՇ

*ԿԻՊԱՐ— Հաստատապես որոշած է գլխուն մեջ դրածը կատարել. ապուշը կկարծե, թե Դատաստանական խորհրդո դիմելով ուզածը ընել պիտի տա. վերջը պիտի զղջա, բայց ի՞նչ օգուտ, զմեզ պիտի հոգնեցնե քիչ մը։ Վնաս չունի, բավական է, որ մենք համաձայնությամբ գործենք և իրարմե չի բաժնվինք։ Տարակույս չկա, որ բարևը պիտի կտրե ինձմե, երբ սորվի թե նույն օրն մեկտեղ էինք Պայծառին տունը, թող կտրե, առիթ մ'ալ տված պիտի լինի ինձի քեզի հետ ավելի սերտ կապով կապվելու։*

*ԱՆՈՒՇ— Փաստաբանն չե՞նք կրնար մեր կողմը շահիլ...*

*ԿԻՊԱՐ— Փաստաբաններու մեծ մասն արդարությունն և իրավունքը հոն կգտնե, ուր շատ ոսկի կտեսնե, սակայն չեմ կարծեր, որ Օգսենն այս մասին վերաբերի։ Եթե հաջողիմ իրեն հետ համաձայնություն մը գոյացնել, աղեկ. եթե ոչ՝ դատիդ պաշտպանությունն ես պիտի ստանձնեմ ու պիտի շարունակեմ խաղալ մեր խաղերը։ Դուք այժմ վստահ ըլլալու եք, որ հասարակաց կարծիքը մեզի նպաստավոր պիտի ըլլա։*

*ԱՆՈՒՇ— Մեծապես շնորհակալ եմ, սիրելիս, որ կխոստանաս քաջությամբ պաշտպանել զիս և այս զոհողությունդ կկրկնապատկե սերն, զոր ունիմ քեզի համար...*

## Տեսիլ Ժ

### ՆՈՒՅՆՔ և ՊԱՂՏԱՍԱՐ

*ՊԱՂՏԱՍԱՐ— Ի՞նչ է... ի՞նչ կա...*

*ՕԳՍԵՆ— Այո, առանձին տեսակցություն մ'անհրաժեշտ պետք է։*

*ԿԻՊԱՐ— Առանձին տեսակցություն մը բնավ հարկավոր չէ։*

*ՊԱՂՏԱՍԱՐ—* (Առ Կիպար) *Անիկա փաստաբան է, խիստ մի՛ խոսիր հետը։*

*ԿԻՊԱՐ—* (Հրելով Պաղտասարը) *Դուն մի՛ խառնվիր, խնդիրը ուրիշ կերպարանք առած է։*

*ՕԳՍԵՆ— Փոխանորդիս կինն է՛, ինչո՞ւ թույլ չես տար, որ հետը խոսիմ երկու վայրկյան։*

*ՊԱՂՏԱՍԱՐ—* (Առ Օգսեն) *Ան ալ բարեկամ է, մի՛ վշտացներ...*

*ՕԳՍԵՆ—* (Հրելով Պաղտասարը) *Խնդիրը քեզմե ելած է, դուն մի՛ խառնվիր մեր գործին։* (Առ Կիպար) *Դուրս պիտի ելնեք, եթե ոչ...*

*ՊԱՂՏԱՍԱՐ—* (Առ Կիպար) *Քիչ մը դուրս ելիր, նայինք, ի՞նչ պիտի ընե...*

*ԿԻՊԱՐ—* (Հրելով Պաղտասարը) *Դուրս պիտի չելնեմ բնավ և կհրամայեմ, որ դուն ելնես դուրս...*

*ՕԳՍԵՆ— Հիմա իմաց կուտամ առ որ անկ է։*

*ԿԻՊԱՐ— Երթաս բարով։*

(Պաղտասար մեյ մը Կիպարին և մեյ մը Օգսենին կերթա և խոսիլ կուզե մեջերնին համաձայնություն գոյացնելու համար, և երկուքեն ալ հրվելով կմերժվի սույն տեսիլին մինչև վերջ)։

*ՕԳՍԵՆ— Ի պարտ ու պատշաճ տնօրենություն։*

*ԿԻՊԱՐ— Կոնակդ տեսնեմ։*

*ՕԳՍԵՆ— Հետևաբար և բնականաբար, հետևանքն չկրնար նպաստավոր ըլլալ քեզի համար։*

*ԿԻՊԱՐ— Բարեկամիս կինն առանձին ձգելու եմ եղեր Ձեր մեծապատիվ փաստաբանին հետ։*

*ՕԳՍԵՆ— Իմ նպատակս բարի է...* (Առ Պաղտասար, որ ուժով կքաշեր թևեն) *Գնա ըսե, սատկածդ սիրես, դուն ի՞նչ քիթդ կխոթես այս խնդրույն մեջ, թող տուր որ խոսիմ։*

*ԿԻՊԱՐ— Թող տուր, որ փաստաբանե, փաստաբանական պարտքը կպահանջե եղեր, որ առանձին տեսակցություն մը ունենա եղեր պաշտպանյալին կնոջ հետ։* (Առ Պաղտասար, որ ձեռքով Կիպարին բերանը գո-

ՕԳՍԵՆ— Օձի պես կսողոսկիք ամեն տուներու մեջ և ո՛ր տունն որ ըլլաք, այն տան պատիվն ու խաղաղությունն ալ ձեզի հետ մեկտեղ կել-նեն, խաբեբաներ, դավաճաններ...

ՊԱՂՏԱՍԱՐ— Կաղաչեմ, Հերիք է ալ... սա կարևոր հայտնություն-ներն...

ՕԳՍԵՆ— Եթե իշխանություն ունենայի շղթաներու տակ կոչնչացնեի ձեզի պես երիտասարդները։ Ի՞նչ պատիվ կրնա ունենալ քեզի պես արա-րած մը, որ տասը տարիե ի վեր մտերիմ բարեկամիդ՝ Պաղտասարին կինը կսիրես, տասը տարիե ի վեր։

ՊԱՂՏԱՍԱՐ— Պաղտասարի՞ն... ի՞նչ կլսեմ... տասը տարիե ի վեր...

ՕԳՍԵՆ— Ապուշին մեկը գտեր ես և ուզածիդ պես խաղցեր ես, նեն-գավոր։

ՊԱՂՏԱՍԱՐ— Ուրիշ Պաղտասար է... մեկենիմեկ կարծեցի, թե ես եմ ու...

ՕԳՍԵՆ— Եթե ես ըլլայի Պաղտասար աղբարին տեղ, զքեզ բզիկ-բզիկ կընեի...

ՊԱՂՏԱՍԱՐ— Պաղտասար աղբար ըսավ... չեմ հասկնար...

ՕԳՍԵՆ— Ինքնիրմե անցած ու ցնդած մարդ մը խաբելը դժվար չէ. եկուր զիս խաբե. թշվառական, չվառական։

ՊԱՂՏԱՍԱՐ— Սա Պաղտասար աղբարն ո՞վ է արդյոք..., ի՞նչ ավա-նակ մարդ է եղեր...

ՕԳՍԵՆ— Ծվ սակայն օրինաց ամենեն խիստ տրամադրությանց հա-մաձայն դատապարտել պիտի տամ զքեզ իբրև ոճրագործ և պիտի ջանամ փրկել տիկին Անուշը...

ՊԱՂՏԱՍԱՐ— (Պոռալով), Հերիք, պարոն փաստաբան, հերիք, մոտ եկուր, որ զիրար հասկնանք... սա կարևոր հայտնություններեն զրուցե ինձ։

ՕԳՍԵՆ— Հայտնություններ մնա՞ց ըլլալու... ամեն բան հայտնվե-ցավ արդեն. կնկանդ սիրականը Կիպարն է...

ՊԱՂՏԱՍԱՐ— Կիպա՞ր ըսիր։

ՕԳՍԵՆ— Այո, Կիպար։ Սակայն հանդարտե, անոր քթեն բերնեն պի-տի հանեմ բոլոր ըրածները։ Արդեն շատոնց ի վեր քննով էի հետը և բնավ չէի ախորժիր բռնած ընթացքեն. առիթը ներկայացավ, որ փաստաբա-նության բոլոր թույները թափեմ վրեժս լուծելու համար իրմե։ Ծն ուրեմն, գործի սկսինք։ Նախ և առաջ իմ պաշտոնի աշխատությանցս փոխարեն հա-տուցանելի վարձուց քանակությունն որոշենք։ Մենք, փաստաբաններս, սովորություն ունինք երեք վճարումով ընդունիլ մեր վարձքը. առաջին վճա-րումը կկատարվի գործին սկիզբը, երկրորդը տեղի կունենա գործին մի-ջոցը, երրորդը գործին կատարածը...

*մար հանձնաժողով մը կկազմե, այս հանձնաժողովն ալ խնդիրն ուսումնասիրելու համար մասնաժողով մը կկազմե, որ մասնախումբ մը կկազմե խնդիրը մանրամասնորեն սերտելու և տեղեկագրելու համար, այս մասնախումբն ալ օժանդակ մասնախումբ մը կընտրե, որպեսզի իրեն օգնե, այս օժանդակ մասնախումբն ալ յուր ճյուղերը կունենա խնդիրն յուր բոլոր ճյուղերով քննելու համար և այս ճյուղերուն յուրաքանչյուրն ալ մեկ-մեկ մասնաճյուղեր կունենա, որ խնդիրն յուր մասնաճյուղերովը քըննելեն վերջը կհանձնեն իրենց ճյուղին, ճյուղն օժանդակ մասնախումբին, օժանդակ մասնախումբն՝ մասնախումբին, մասնախումբն մասնաժողովին և այս խնդիրը կերթա հոն՝ ուսկից ճամփա ելած էր, հետո նորեն կուգա Դատաստանական խորհուրդը, ուր կկատարվի դատավարությունը։ Երթանք...*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Աս ինչ երկար ճամփորդություն է...*

## ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՔԻՆ

*մեջ. յուր անհավասարմությունն հաստատված է. հետևաբար և բնակա-նաբար հարկ է, որ բաժնվինք իրարմե և ըստ օրինի արտոնենք զիս ուրիշ կին մ'առնելու։*

*ՕԳՍԵՆ— Կեցցե՛ս։*

*ԴԱՂՏԱՍԱՐ— Շատ պատիվ պիտի ընեմ իրենց, որպեսզի գատս աղեկ քննեն։ Խահվե, գինի, անուշ, օղի, օշարակ...*

*ՕԳՍԵՆ— Կարծեմ կուգան... եկան...*

## Տեսիլ Բ

ՆՈՒՅՆՔ և ՓԱՅԼԱԿ, ԵՐԿԱԹ, ՍՈՒՐ (Դռան առջև)

*ՓԱՅԼԱԿ—* **(Առ Երկաթ)** *Մտեք, կաղաչեմ։*

*ԵՐԿԱԹ—* **(Առ Սուր)** *Կխնդրեմ, անցեք։*

*ՍՈՒՐ—* **(Առ Փայլակ)** *Առաջ դուք մտեք։*

*ՓԱՅԼԱԿ— Ինձի չվայլեր ձեզմե առաջ մտնել։*

*ԵՐԿԱԹ—* **(Առ փայլակ)** *Պատշաճից օրենքը կպահանջե, որ ամենեն ետքը ես մտնեմ։*

*ՍՈՒՐ—* **(Առ Երկաթ)** *Բնավ երբեք, չենք ընդունիր։*

*ՓԱՅԼԱԿ—* **(Առ Սուր)** *Դուք մտեք ուրեմն նախ և առաջ։*

*ՍՈՒՐ—* **(Առ Փայլակ)** *Չեմ ընդունիր, դուք ինձմե նախապատիվ եք։*

*ՓԱՅԼԱԿ—* **(Առ Սուր)** *Ձեր ազնվությունն է որ այսպես կարծել կուտա ձեզ։*

*ՍՈՒՐ—* **(Առ Փայլակ)** *Ձեր ազնիվ զգացումներն են, որ այդպես խորհիլ կուտան ձեզ։*

*ՓԱՅԼԱԿ—* **(Առ Սուր)** *Ձեր առ իս ունեցած համակրությունն է, որ այնպես խոսիլ կուտա ձեզ։*

*ՍՈՒՐ—* **(Առ Փայլակ)** *Ձեր զգացմանց փափկությունն է, որ...*

*ԵՐԿԱԹ—* **(Առ Սուր)** *Ժամանակ չանցունենք, մտեք, կաղաչեմ։*

*ՍՈՒՐ—* **(Առ Երկաթ)** *Դուք մտեք։*

*ԵՐԿԱԹ— Ոչ, թող տեր Սուրը մտնե։*

*ՍՈՒՐ— Ոչ, թող տեր Փայլակը մտնե։*

*ՓԱՅԼԱԿ— Ոչ, ես կարգս գիտեմ։*

*ՍՈՒՐ— Երեքնիս մեկեն մտնենք, օն։* **(Երեքը մեկեն կմտնեն և ատյանին առջև կուգան)։**

*ՓԱՅԼԱԿ— Նստելու համար ալ ժամանակ չանցունենք, կաղաչեմ* **(Նստին)։**

**ՓԱՑԼԱԿ**— *Ոչ ալ պարտավոր էի իմ քիմքս ձեր քմաց համաձայնեցնել։*

**ԾՐԿԱԹ**— *Անտարակույս, որչափ քիմք՝ այնչափ գինի։*

**ՓԱՑԼԱԿ**— *Որչափ խնձոր՝ այնչափ քիմք։*

**ԾՐԿԱԹ**— *Բայց մեծամասնությո՞ւնը...*

**ՓԱՑԼԱԿ**— *Մեծամասնությունն իմ քովս է։*

**ԾՐԿԱԹ**— *Ո՛չ։*

**ՓԱՑԼԱԿ**— *Ա՛յո։*

**ՍՈՒՐ**— *Կաղաչեմ, փակեցեք այս խնդիրն։*

**ԾՐԿԱԹ**— *Ո՞ւր լսված է, եղբայր, ճերմակ գինիով դեղձ ուտել։*

**ՊԱՂՏԱՍԱՐ**— (Դռան առջև) *Մտնե՞նք։*

**ՓԱՑԼԱԿ**— (Ոտքի ելնելով)։ *Ինչո՞ւ կաճապարեք, ազգը մեզի ամսական չտար ձեր գործերը կարգադրելու համար. մենք ազգասիրաբար, անձնըվիրաբար հանձն առած ենք հոս գալու և ձեր խնդիրը քննելու։ Մենք գործի տեր մարդիկ ենք, մենք զավակներ ունինք, որոնց ապրուստ և հագուստ հոգալու պարտավոր ենք, և այսօր մեր գործերն երեսի վրա թողլով եկած ենք հոս ձեր ամուսնական խնդիրը քննելու. մենք ձեր ծառան չենք, հասկացա՞ք. մենք ձեր գերին չենք, հասկցա՞ք. մենք ձեր ստրուկը չենք, հասկցա՞ք. դուք պարտավոր եք մեզի երախտագետ ըլլալ, սակայն մենք ձեր երախտագիտությունն ալ չենք ուզեր, այլ կփափաքինք միայն, որ ազատ թողուք զմեզ գործելու. համբերեցեք ուրեմն, որ լմնցնենք ատենական գործողություններն և ներս կանչենք զձեզ։* (Պաղտասար կմեկնի)։ *Ես ճերմակ գինի կխմեմ, եղբայր, օրենքը կդատապարտե՞ ճերմակ գինի խմողները։*

**ԾՐԿԱԹ**— *Ինչո՞ւ դատապարտե, սիրելիս։*

**ՓԱՑԼԱԿ**— *Ի՞նչ կուզես, ուրեմն։*

**ՍՈՒՐ**— *Վերջացուցեք։ Ատյանը բացված է։* (Գրպանեն թուղթեր հանելով) *Մեր գրասեղանի վրա երեք թուղթ կա։ Առաջինն տեր Կիպարի կողմե տրված է։ Այս թուղթով տեր Կիպարը կբողոքե տեր Պաղտասարի կողմեն հերյուրված զրպարտության մը դեմ և պատիվ կպահանջե. տեր Կիպար ամբաստանված է եղեր տեր Պաղտասարի կնոջ սիրականն ըլլալու հանցանոք։ Երկրորդն ստորագրված է տիկին Անուշեն, որ չկրնալով հանդուրժել էրկան կողմե հաճախ տեղի ունեցող գանակոծությանց և հայտնելով միանգամայն, թե վերջին գանակոծությամբ յուր թևն կոտրած է՝ կխնդրե, որ էրիկն երաշխավորության ներքև դրվի, երաշխավորություն մը, որ ապահովե տիկինն, թե չպիտի սպանվի էրիկեն։ Երրորդն է տեր Պաղտասարին, որ յուր կնոջ անբարոյականության մեջ գտնվիլն հայտնելով, կուզե, որ արձակե զայն և ուրիշ կին մը առնու։ Ըստ ի՛ս, առաջնություն տալու է տիկին Անուշի խնդրագրույն, որ թեև երկրորդ է թվականի կար-*

ՓԱՅԼԱԿ— Ի՜նչ հեզություն։

ՍՈՒՐ— Եվ սանկ ընտիր կիներն բարբարոսներու ձեռք կմնան ընդհանրապես։ Վա՜հ, տեր Պաղտասար, վա՜հ, որ սանկ կին մը ունիս և երջանկությունդ չես զգար։

ՊԱՂՏԱՍԱՐ— (Մեկուսի) Եթե չճաթիմ, աղեկ։

ՍՈՒՐ— Այս վայրկյանես աշխատե երաշխավոր մը գտնել, եթե ոչ այս տունը մտնելու չես։

ԵՐԿԱԹ— Այո։

ՓԱՅԼԱԿ— Իմ կարծիքս ալ այս է։

ՊԱՂՏԱՍԱՐ— Կինս անհավատարիմ գտնված է յուր պաշտոնին մեջ։

ՍՈՒՐ— Քեզի քանի-քանի անգամ ըսվեցավ, որ անձնականության չդարձնես խնդիրն։

ԵՐԿԱԹ— Ի կարգ հրավիրեցեք զինքն։

ՊԱՂՏԱՍԱՐ— Յուր անհավատարմությունն հաստատված է։

ՓԱՅԼԱԿ— Խնդրեն դուրս խոսիլն արգիլյալ է։

ՊԱՂՏԱՍԱՐ— Հետևաբար...

ՍՈՒՐ— Մի՛ խոսիր։

ՊԱՂՏԱՍԱՐ— Եվ բնականաբար...

ՍՈՒՐ— Խոսք չունիս։

ՊԱՂՏԱՍԱՐ— Հարկ է, որ բաժնվինք իրարմե...

ՍՈՒՐ— Խիստ միջոցներ ձեռք առնելու պիտի ստիպվիմ։

ՊԱՂՏԱՍԱՐ— Եվ ըստ օրինի արտոնեք զիս...

ՍՈՒՐ— (Զանգակն ուժգին հնչեցնելով) Լռե՛...

ՊԱՂՏԱՍԱՐ— Ուրիշ կին մ՚առնելու... կինս անհավատարիմ...

ՍՈՒՐ— Քանի մը վայրկյան դադար։ (Անդամք սենյակը կքաշվին):

ՊԱՂՏԱՍԱՐ— Գտնված է յուր պաշտոնին մեջ. յուր անհավատարմությունն հաստատված է. հետևաբար և բնականաբար հարկ է, որ իրարմե բաժնվինք և արտոնեք զիս ուրիշ կին մը առնուլ։

ԱՆՈՒՅՇ— (Բարձրաձայն) Ա՜յ... ա՜յ... ա՜յ... օգնություն...

## Տեսիլ Դ

ՆՈՒՅՆՔ և ԿԻՊԱՐ

ՍՈՒՐ— Ի՞նչ է, ի՞նչ եղավ։

ԱՆՈՒՅՇ— Ա՜հ... ա՜հ...

ՓԱՅԼԱԿ— Ի՞նչ ունիք, տիկին։

ԱՆՈՒՅՇ— Ա՛հ... ա՛հ...

ՍՈՒՐ— Հանուն մարդասիրության կաղաչեմ ձեզ, տեր Կիպար, որ սա խեղճ կինն առնեք և սա սենյակը տանիք, որ քիչ մը հանգստանա, չե՞ք տեսներ, նստելու կարողություն չունի։ Կաղաչեմ քիչ մը խնամք տարեք։

ԵՐԿԱԹ— Ես ալ կխնդրեմ հանուն գթության, որ քովեն չբաժնվիք զի մի գուցե վայրենի գազանն նորեն վրան հարձակի։

ՓԱՅԼԱԿ— Կհուսամ, թե մեր երեքին սիրույն համար հանձն կառնեք այս նեղությունն։

ԱՆՈՒՅՇ— Ա՛հ... ա՛հ...

ԿԻՊԱՐ— (Վարանելով) Բայց... կարծեմ թե...

ՍՈՒՐ— Վարանելու ժամանակ չէ, կաղաչեմ շուտ ըրեք։ (Կիպար վերցնելով Անույշը կտանի) Դուռը գոցեցեք։

ԵՐԿԱԹ— Եվ դուն հոս պիտի մնաս. մինչև որ ելնենք, անպիտան։ (Սենյակը կփակվի):

ՓԱՅԼԱԿ— Տեղեդ չպիտի երերաս, գազան։ (Սենյակը կմտնե):

ՍՈՒՐ— Հոս մեր ելնելուն պիտի սպասես, վայրենի։ (Սենյակ կմտնե):

## Տեսիլ Ե

ՊԱՂՏԱՍԱՐ— (Առանձին) Ըսելիք չմնաց, աս բոլոր դռները գոցեց։ Անպիտան, գազան, վայրենի եղա. ինչո՞ւ, որովհետև անհավատարիմ կինե մը բաժնվիլ կուզեմ։ Սակայն ի՛նչ որ ըսեն, ինչ որ ընեն, միշտ իմս է իրավունքը. պիտի հայտնվի անշուշտ, թե այդ լիրբ կնոջ ո՛չ թևը կոտրած եմ, ո՛չ ալ խղդել ուզած եմ զինքը։ Չպիտի հուսահատիմ բնավ և պիտի աշխատիմ հաստատել, թե այդ կինն խորամանկ է, ստախոս է և անբարոյական. պիտի ջանամ, նույնիսկ մեծ կորուստներ ընելով բաժնվիլ այդ օձեն։ Մեր փաստաբանեն ալ բան մը չհասկցա որ...

## Տեսիլ Զ

ՆՈՒՅՆ և ՍՈՂՈՄԵ (խոհանոցի հագուստով)

ՍՈՂՈՄԵ— Ի՞նչ կա, ի՞նչ եղավ, ի՞նչ եղեր է...
ՊԱՂՏԱՍԱՐ— Ոչինչ։

ՊԱՂՏԱՍԱՐ— Ի՞նչ խաղեր են ասոնք։

ՍՈՂՈՄԷ— Մեկու մը բան չըսի, բայց հիմա որ տեսա, թե խեղճ կինը կչարչարես, ա՛լ չկրցի համբերել, անամոթ մարդ։ (Կերթա)։

## Տեսիլ Ը

ՊԱՂՏԱՍԱՐ, ՓԱՅԼԱԿ, ԾՐԿԱԹ, ՍՈՒՐ, ԿԻՊԱՐ, ԱՆՈՒՅՇ

ՍՈՒՐ— Ճշմարիտը խոսելով, չկրցինք վայլեցնել ձեզի, որ գեղեցիկ կին մ'ունենալով զիջանիք այդ սպասուհվույն քծնիլ։

ՓԱՅԼԱԿ— Շիտակը մարդուս հավատալիքը չգար։

ՍՈՒՐ— Ինչ որ է, փակենք այս խնդիրն ալ և ատյանը բանանք։ (Զանգակը հնչեցնելով) Ատյանը բացված է. խոսքը ձերն է, տեր Կիպար։

ԿԻՊԱՐ— Տեր Պաղտասար այնպիսի զրույցներ տարածեր է հրապարակի վրա, որք պատիվս արատավորելու և զիս մարդկային ընկերության մեջ մտնելու անարժան էակ մը ցույց տալու հանգամանքն ունին։ Կխնդրեմ, հարցնեիք տեր Պաղտասարին, թե ե՞րբ ըսած եմ իրեն, թե յուր կինը կսիրեմ։

ՍՈՒՐ— Խոսքը ձերն է, տեր Պաղտասար։

ՊԱՂՏԱՍԱՐ— Ի՞նքը պիտի ըսեր, թե կսիրե կինս։

ՍՈՒՐ— Կի՞նդ ըսավ։

ՊԱՂՏԱՍԱՐ— Ոչ։ -

ՍՈՒՐ— Ո՞վ ըսավ ուրեմն։

ՊԱՂՏԱՍԱՐ— Վատահամբավ տան մը մեջ զիրար սիրելն հաստատեցինք։

ՍՈՒՐ— Վկաներ ունի՞ք։ Ո՞վ տեսած է ատոնց զիրար սիրելը։

ՊԱՂՏԱՍԱՐ— Ով տեսա՞ծ է։

ՍՈՒՐ— Այո։

ՊԱՂՏԱՍԱՐ— Վատահամբավ տան մը մեջ...

ՍՈՒՐ— Վատահամբավն բավական չէ. զորավոր ապացույցներ պետք է հաստատելու համար տեր Կիպարի հանցանքն, և մենք համոզվելու ենք, որպեսզի ըստ այնմ որոշենք անօրինվելիք պատիժը։

ԿԻՊԱՐ— Կխնդրեմ, որ պահպանեք պատիվս, և մաքրեք զիս սարսափելի արատե մը։ Ինքը ուրիշ կնոջ հետ կարգվելու համար ազատ է ցրպարտել յուր կինն իբրև անհավատարիմ, և կինն ալ կարող է ինքզինքն պաշտպանել. բայց չեմ ընդունիր, որ ատանկ զրպարտություն մը գործիք ըլլամ։ Հատուցում կպահանջեմ։ Գոնե երեք հարյուր ոսկի տալու է ինձ, որ սրբվիմ այս աղտեն։

ԿԻՊԱՐ— Ութը լմնցուց ինը պիտի մտնա։

ՓԱՅԼԱԿ— Քալած ժամանակ կցատկե՞ միշտ։

ԿԻՊԱՐ— Այո։

ՓԱՅԼԱԿ— Անոր վրա կայնիլն քիչ մը դժվար է, բայց հորդ համար աշխարհիս ամենեն դյուրին բանն է. շիտակը ես կվախնամ։ (Առ Սուր) Ցատկած ժամանակը տասը կանգուն վեր կբարձրանա և քսան կանգուն անդին կնետե ինքզինքը։ Շատ աղեկ ձի մ'է։ (Առ Կիպար) Քանի՞ առած է այդ ձին։

ԿԻՊԱՐ— Քսան և հինգ ոսկի։

ՓԱՅԼԱԿ— Բայց եթե այսօր ծախելու հանե՝ կարծեմ քառասուն ոսկի կուտան։ Տեր Պաղտասար, տեսա՞ծ եք այդ ձին։

ՊԱՂՏԱՍԱՐ— Տեսած եմ։ (Մեկուսի) Այդ սատկելիք ձիուն խոսքն ո՞վ հանեց։

ՓԱՅԼԱԿ— Ի՞նչպես է։

ՊԱՂՏԱՍԱՐ— Աղեկ է։ (Մեկուսի) Սատանան տանի։

ՓԱՅԼԱԿ— Այդ ձիով նապաստակ որսալու երթալու է։ (Առ Պաղտասար) Նապաստակ կերած ունի՞ք։

ՊԱՂՏԱՍԱՐ— Ոչ։

ՓԱՅԼԱԿ— (Առ Երկաթ) Կըսեն թե միսը քիչ մը թթու է։

ԵՐԿԱԹ— Այո, անհամ է, բայց եթե աղեկ համեմվի՝ կուտվի։

ՍՈՒՐ— Ես բնավ կերած չունիմ։ Դուք կերած ունի՞ք, տեր Երկաթ։

ԵՐԿԱԹ— Ոչ, քանի մ'անգամ լորամարգի կերած եմ։

ԿԻՊԱՐ— Անոր միսը պատվական է։

ՓԱՅԼԱԿ— Եփելու վրա է գործը։

ՍՈՒՐ— Բնականաբար եթե խնամքով պատրաստվի...

ԵՐԿԱԹ— (Առ Պաղտասար) Ժամավաճառ չըլլանք, ի՞նչ պիտի պատասխանեք, պիտի համառի՞ք ձեր պահանջմանց մեջ թե պիտի հաճիք հաշտությամբ վերջացնել այս խնդիրն։

ԿԻՊԱՐ— Ես յուր անձնականին հետ բան չունիմ. կհարգեմ զինքն իբրև բարի և պատվավոր մարդ, այսուամենայնիվ կպահանջեմ, որ խնդիրն ըստ օրինի քննվի և յուր լուծումն ստանա։

ՍՈՒՐ— Տեր Պաղտասարն ալ բարի մարդ է, ան ալ կհարգե զձեզ. կերևի թե թյուրիմացություն կա ձեր մեջը։

ՊԱՂՏԱՍԱՐ— Ի՞նչ թյուրիմացություն... աչքերովս տեսա...

ՍՈՒՐ— Թյուրատեսություն ուրեմն...

ՓԱՅԼԱԿ— Կարծեմ թե վրան քիչ մ'ալ գինի կսրսկեն եփ ելած ժամանակը։

ԵՐԿԱԹ— Հաշտվեցեք, հաշտվեցեք, տեր Պաղտասար։

*ՓԱՅԼԱԿ— Ձեռքս խղճիս վրա դնելով կրնամ վկայել, թե մեր ստանձնած պաշտոնն խղճի մտոք կկատարենք և այսօր բավական գործ տեսանք։ Բայց ի՞նչ օգուտ, մեր մեջ գործ տեսնողն ալ չտեսնողին հավասար պատիվ կվայլե։*

*ԵՐԿԱԹ— Եթե ազգային մյուս ժողովներն, խորհուրդներն, հանձնաժողովներն և այլն մեզի պես աշխատեին՝ ազգն քանի մը տարվան մեջ զգալապես կհառաջդիմեր։ Բայց ո՞վ պիտի ճանչնա մեր երախտիքը...*

*ՓԱՅԼԱԿ— Գոցենք այս կետը և Սողոմեն կանչենք։* (Զանգակը հնչեցնելով) *Սողոմե, Սողոմե, Սողոմե...* (Սողոմե կմտնե) *Տիկին Սողոմե, դուն տանտիկին մեկն ես, մեզի սանկ քիչ մ'օղի, կտոր մ'ապուխտ, կտոր մը պանիր, կտոր մը...*

*ՍՈՂՈՄԵ— Գլխուս վրա, հիմա, անմիջապես։* (Մեկուսի) *Երթամ շուտ մը կատարեմ իրենց հրամանն, որ ներկա գտնվիմ մեր ապուշին խաղացվելիք նոր խաղին։* (Բարձր) *Հիմա, շուտ մը...* (Կմեկնի):

*ՓԱՅԼԱԿ— Մի՛ ուշանար։*

*ՍՈՒՐ— Կուզե՞ք որ Պաղտասարին անբաստանագիրն ընթեռնում։*

*ԹԱԳՈՒՀԻ—* (Դուրսեն) *Կախաղան ելնելու կին մ'ես դուն։*

*ՄԱՐԹԱ—* (Դուրսեն) *Աստուծմե չվախցա՛ծ, չամչցա՛ծ...*

*ԹԱԳՈՒՀԻ—* (Դուրսեն) *Ստախո՛ս։*

*ՓԱՅԼԱԿ— Ի՞նչ աղմուկ է աս։*

*ՄԱՐԹԱ—* (Դուրսեն) *Գավարար։*

*ՊԱՂՏԱՍԱՐ—* (Դուրսեն) *Ի՞նչ կա... ինչո՞ւ կքաշկռտեք զիս...*

*Թող տվեք օձիքս։*

## Տեսիլ Ժ

ՆՈՒՅՆՔ, ԹԱԳՈՒՀԻ, ՄԱՐԹԱ և ՊԱՂՏԱՍԱՐ

*ԹԱԳՈՒՀԻ—* (Պաղտասարին թևեն քաշելով) *Եկուր տես մեր գործը մաքրե՛։*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Ի՞նչ գործ։*

*ՍՈՒՐ— Ինչո՞ւ կպոռաք, տիկիններ, ի՞նչ կուզեք։*

*ԹԱԳՈՒՀԻ— Տանս խաղաղությունն ավրեց, պոռալու բան է, Պաղտասար աղբար, սուտ չպիտի խոսիս։*

*ՄԱՐԹԱ— Եղածին պես պատմե թող, ի՞նչ իրավունք ունիս տանս դուռն ափ առնելու և փողոցեն անվայել խոսքեր ընելու ինձի։*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Շնորհակալ եմ յուր ըրած ծառայություններեն և կըրաբեմաղթեմ, որ ձեր կինն ալ անանկ ծառայություններ ընե ձեզի. բայց գինի չեմ կրնար խմել։* (Մեկուսի) *Ծառայություննե՜ր...*

*ՍՈՒՐ— Պատշաճից օրենքն կպահանջեր, որ խմեիք. ձեր այս վարմունքով կհաստատեք ձեր տիկնոջ անմեղությունը։*

*ՓԱՅԼԱԿ— Կխմեմ ի կենդանություն ներկայից։*

*ԵՐԿԱԹ— Կխմեմ ի կենդանություն բացակայից։*

*ԱՆՈՒՅՇ— Բաժակ կառաջարկեմ պատվարժան հանձնաժողովը անդամոց օրերուն երկարության համար։* (Կխմեն):

*ԿԻՊԱՐ— Օ՛ն, խմենք հանձնաժողովո մեծապատիվ անդամոց օրերուն երկարության համար։* (Կխմեն):

*ՍՈՒՐ— Մեկնելու ժամ է։*

*ՓԱՅԼԱԿ— Այո, երթանք։*

*ՍՈՒՐ—* (Առ Պաղտասար) *Դուք մինչև որ երաշխավոր մը ցույց տաք՝ չեք կրնար այս տան մեջ մնալ։*

*ԵՐԿԱԹ— Եվ այս վայրկյանեն դուրս ելնելու եք։*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Ինչո՞ւ, տունն իմս չէ՞, ո՞վ կխառնվի այս տունին։*

*ՍՈՒՐ— Չեմ կարծեր, որ ստիպեք զմեզ խիստ միջոցներու դիմելու։*

*ԱՆՈՒՅՇ— Ես ետ կառնեմ խնդիրս և կաշխատիմ միջոց մը գտնել ինքզինքս պաշտպանելու յուր հարձակմանց դեմ։*

*ՍՈՒՐ— Շատ լավ, ահա կմեկնինք մենք։*

## Տեսիլ ԺԲ

ՊԱՂՏԱՍԱՐ, ԱՆՈՒՅՇ, ՄԱՐԹԱ, ՍՈՂՈՄՆ

*ՄԱՐԹԱ—* (Խնդալով) *Հահ, հահ, հահ...*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Ինչո՞ւ կխնդաս...*

*ՍՈՂՈՄԵ— Հահ, հահ, հահ...*

*ԱՆՈՒՅՇ—* (Խնդալով) *Հահ, հահ, հահ, ինչո՞ւ կխնդաք։*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Աներեսներ։* (Երեքը մեկեն կխնդան) *Զամչցածներ, լի՜րբեր... ո՜ւհ....*

*ՍՈՂՈՄԵ— Դյուրի՞ն է կին մը զրպարտել և աշխարհի առջև ծաղր ու ծանակ ընել։ Գնա տիկնոջդ ձեռքը համբուրե՛, հաշտվե՛ հետը, եթե ոչ դեռ շատ կքաշես. կինը թողուլ ուզողն շատ խաղերու պատրաստվելու է։* (Կմեկնի):

*ՄԱՐԹԱ— Մնաք բարով, Պաղտասար աղբար, ի տեսություն։* (Կմեկնի)

ՕԳՍԵՆ— Իրենց արժանապատվությու՞նը վիրավորեցիր։

ՊԱՂՏԱՍԱՐ— Ոչ։

ՕԳՍԵՆ— Իմ հրահանգացս համաձայն չշարժեցա՞ր։

ՊԱՂՏԱՍԱՐ— Շարժեցա։

ՕԳՍԵՆ— Հո՞գ մի՛ ըներ ուրեմն, անկարելի է, որ կորսնցնենք այս դատը։ Մասնաճյուղն քննեց այսօր մյուս խնդիրն և կարծեմ թե նպաստավոր է մեզի։ Իմացածիս նայելով, պիտի տեղեկագրե, թե Կիպար Անույշի հետ գտնված է այն վատահամբավ տան մեջ։

ՊԱՂՏԱՍԱՐ— Իրա՞վ կըսեք։

ՕԳՍԵՆ— Վայրկյանե վայրկյան լուր կսպասեմ։

ՊԱՂՏԱՍԱՐ— Կարծես թե քիչ մը սիրտս բացվեցավ. ա՜հ, հոս ըլլալու էիք և տեսնեիք ինչե՛ր դարձավ...

ՕԳՍԵՆ— Ինչե՞ր։

ՊԱՂՏԱՍԱՐ— Վերջը կպատմեմ, միայն սա չափն ըսեմ քեզի, որ կի-ներեն վախնալ սկսա... կին մը տեսնելուս պես կարծես գլխուս վրա պաղ ջուր կթափեն...

ՕԳՍԵՆ— Համբերություն և հարատևություն... սանկ դատեր շահելն շատ դյուրին չէ։

## Տեսիլ ԺԴ

### ՆՈՒՅՆՔ և ՍՈՒՐ

ՍՈՒՐ— Ի դիմաց հանձնաժողովիս, պատիվ ունիմ ձեզ հաղորդելու, թե վաղը հոս պիտի գտնվինք վերջնական որոշում տալու համար ձեր խնդրույն, որ ուրիշ գույն առավ։

ՊԱՂՏԱՍԱՐ— Ի՞նչ գույն առավ։

ՍՈՒՐ— Մինչև հիմա ունեցած գույնը փոխեց, ավելին չեմ կրնար ըսել. վստահ եղեք, որ մենք արդարությունը պիտի պահպանենք։

ՊԱՂՏԱՍԱՐ— Շնորհակալ եմ։

ՍՈՒՐ— Հանձնաժողովույս սույն որոշումն հաղորդվեցավ նաև ձեր կնոջ. որոշում մ'որ փողոցի վրա արվեցավ մասնաճյուղին տեղեկագրին [illegible]ակացության վրա և զոր գրով հաղորդելու համար ժամանակ կպակսեր, պաշտոնապես գիտեք ուրեմն այժմ, թե վաղը հոս պիտի գտնվինք։

ՊԱՂՏԱՍԱՐ— Բարի եկաք, հազար բարի։

ՕԳՍԵՆ— Չե՞ք պատասխաներ հիսուն ոսկվո մասին։

ՊԱՂՏԱՍԱՐ— Ի՞նչ պատասխանեմ։

ՕԳՍԵՆ— Եթե այդ գումարը հիմա չվճարես, կինդ կարդարացնեմ և զքեզ դատապարտել կուտամ։

ՊԱՂՏԱՍԱՐ— Եկուր տամ, եղբայր։

ՍՈՂՈՄԵ— Քսակդ տուր իրեն, լմննա երթա։

Վերջ երկրորդ արարին

ՊԱՂՏԱՍԱՐ— Տունս կքանդես և կհարգե՞ս իմ անձս։

ԿԻՊԱՐ— Ո՞վ կըսե, թե կքանդեմ ձեր տուն, ենթադրելով, թե կսիրեմ ձեր կինն, ուրիշ բան մը ըրած չեմ ըլլար, այլ պարզապես սկզբունք մը պաշտպանած կըլլամ, բայց այս սկզբունքը ձեր սկզբանց կհակառի եղեր. վնաս չունի, թող սկզբունքները կռվին...

ՊԱՂՏԱՍԱՐ— Սկզբունք։

ԿԻՊԱՐ— Այո՛, պետք է, Պաղտասար աղբար, անհրաժեշտ պետք է ժամանակիս հառաջադիմության հոսանքին մեջ նետվիլ, եթե կուզենք հանգիստ ապրիլ։ Տասնեիններորդ դարն ողջ-ողջ կրակի մեջ նետվելու չդատապարտեր այն երիտասարդն, որ յուր մտերիմ բարեկամին կինը սիրելու կդատապարտվի բնութենե։ Դարուս քաղաքակրթությունն կորսնե այն պատճառներն, որոնց համար երիտասարդն ստիպված է յուր բարեկամին կինը սիրելու...

ՊԱՂՏԱՍԱՐ— Այդ աղվոր խոսքերը պահե՛ դատաստանական խորհրդո առջև ըսելու համար, անզգա՛մ... կինս գլխե կհանես, աշխարհի առջև գլխս ծաղր ու ծանակ կընես, տունս կկործանես և առանց ամչնալու կըսես, թե սկզբունք մը կպաշտպանես...

ԿԻՊԱՐ— Այո՛, և այս փաստերս կհայտնեմ զքեզ ցավալուս համար, զքեզ համոզելու համար, որ ես քաշվիս այդ դատեն, ուր քեզի համար հաջողության բնավ հույս չկա... ի տեսություն...

## Տեսիլ Բ

ՊԱՂՏԱՍԱՐ, հետո ՕԳՍԵՆ

ՊԱՂՏԱՍԱՐ— Պիտի սորվիս դուն սկզբունք պաշտպանելը... այսչափ ալ աներեսություն բնավ տեսած ու լսած չունեի... թե որ ես ատանկ հանցանք մը գործեի, աստված մի՛ արասցե, փողոց ելնելու պիտի ամչնայի... աս հիմակվան երիտասարդներն շատ համեստություն չեն տար կոր ամչնալու... զգուշություն ալ կրնան կոր և բարեգործություն ընողներեն ավելի ազատ, ուրախ և զվարթ կմտնեն կոր ընկերություններու մեջ... դարուս ոգին ասանկ կպահանջե եղեր։

ՕԳՍԵՆ— Ի՞նչ ջուրի վրա են գործերը...

ՊԱՂՏԱՍԱՐ— Ինչպես որ գիտեք։ Ամուսնալուծության անդամները պիտի գան, խնդիրը պիտի քննեն և պիտի տեղեկագրեն Դատաստանական խորհրդո, ուր պիտի ներկայանանք դատվելու համար։

ՕԳՍԵՆ— Շատ լավ։ Թեպետև վստահված եմ դատս, այսուամենայնիվ պետք չէ զառողանալ և խիստ լեզու գործածել ամուսնալուծության ան-

ՊԱՂՏԱՍԱՐ— (Ի ծունր և բազկատարած) Կ'աղաչեմ...

ՕԳՍԵՆ— Քթիդ ծակերը քիչ մը բացվին...

ՊԱՂՏԱՍԱՐ— Խնայեցե՛ք գերդաստ...

ՕԳՍԵՆ— Խնայեցեեեեեեեեեեեք գերդաստանիս պատվույն...

ՊԱՂՏԱՍԱՐ— Խնայեցե ե ե ե ե ե ե ե ե ե ե եք գերդաստանիս պատվո յն...

ՕԳՍԵՆ— Բերանդ ալ կես բաց պիտի մնա չխոսած ժամանակդ, քթիդ ծակերն միշտ ընդլայնին պիտի...

ՊԱՂՏԱՍԱՐ— Խնայեց ե ե ե ե ե ե ե ե ե ե ե եք։

ՕԳՍԵՆ— Հերիք է ալ...

ՊԱՂՏԱՍԱՐ— ...եք իմ կենացս...

ՕԳՍԵՆ— Կամաց-կամաց պիտի մոտենաս հանձնաժողովի անդամոց, որպես թե անտեսանելի զորություն մը զքեզ մղեր...

ՊԱՂՏԱՍԱՐ— Եվ իրավունք ըրե՛ք, Տյարք իմ։

ՕԳՍԵՆ— Լավ։

ՊԱՂՏԱՍԱՐ— Եղբարք իմ։

ՕԳՍԵՆ— Երկրպագություն...

ՊԱՂՏԱՍԱՐ— Գթացե՛ք...

ՕԳՍԵՆ— Գլուխդ ձեռներուդ մեջ։

ՊԱՂՏԱՍԱՐ— Գթացե՛ք։

ՕԳՍԵՆ— Քիչ մը յալ։

ՊԱՂՏԱՍԱՐ— Հի, հի, հի... գթացե՛ք... հի, հի, հի։

ՕԳՍԵՆ— Շատ աղեկ ըրիք։

ՊԱՂՏԱՍԱՐ— Քանի մ'անգամ ալ ինքնիրենս վարժություն կընեմ... բայց կհոգնի կոր մարդ...

ՕԳՍԵՆ— Պատճառն այն է, որ գթության առջև ներկայանալու համար կատարվելիք ձևակերպությունները քիչ մը դժվար են։ Շատ փաստաբաններ կարևորություն չտալով ասոնց, կկորսնցնեն իրենց դատերը։

ՊԱՂՏԱՍԱՐ— Շնորհակալ եմ, որ սորվեցուցիք ինձի։ Այս ձևակերպությունները կատարելեն ետքը, դատն անպատճառ վաստկինք պիտի, այնպես չէ՞։

ՕԳՍԵՆ— Այո՛։

ՊԱՂՏԱՍԱՐ— Այդ անգամ կինն ալ գիտե՞ արդյոք այս ձևակերպությունները։

ՕԳՍԵՆ— Չեմ կարծեր... այսուամենայնիվ ջանա, որ կատարել չտաս իրեն։

ՊԱՂՏԱՍԱՐ— Իմ կարծիքս ալ աս է։

ՓԱՅԼԱԿ— Թեպետև կան ինչ-ինչ դեպք նրբացուցիչ հանգամանաց...

ՊԱՂՏԱՍԱՐ— Ոտքերնիդ պագնեմ, այդ ինչ-ինչը չկա։

ԵՐԿԱԹ— Ըստ որում կին մ'և աղջիկ մը խաբել ուզեր էք...

ՊԱՂՏԱՍԱՐ— Սուտ է։

ՓԱՅԼԱԿ— Այսուամենայնիվ Հանձնաժողովս նախ պիտի զբաղի ձեզ ձեր կնիկեն բաժնելու խնդրով և հետո ձեռք պիտի առնու մյուս խնդիրը։

ՊԱՂՏԱՍԱՐ— Մյուս խնդիրը սուտ է։

ՍՈՒՐ— Ձեր վկայությունը բավական չէ։

ԵՐԿԱԹ— Կարդացեք ուրեմն մեր տեղեկագիրն։

ՍՈՒՐ— Սքանչելի տեղեկագիր մ'եղավ։

ՓԱՅԼԱԿ— Բոլոր հանցանքը կնոջ վրա կթողու։

ՍՈՒՐ— Թեև մենք պարտականություն չունինք բնավ ձեզ կարդալու տեղեկագիրն, որ Դատաստանական խորհրդույն ուղղված է, սակայն ցույց տալու համար, թե Հանձնաժողովս ինչ անաչառությամբ և արդարությամբ քննած է խնդիրն, կկարդանք ձեզ անոր եզրակացությունը։ (Կկարդա): Արդ, նկատելով, որ Պաղտասար աղբարի և կնոջ միջև անհամաձայնություն ծագած է ինչ-ինչ պատճառներու համար, որոնց հայտնութ ունն զանց կընե Հանձնաժողովս, նկատելով, որ այդ անհամաձայնությամբ Պաղտասար աղբարի և կնոջ միջև համաձայնություն չկա, որոշեց անոնց բաժանումը հետևյալ պայմաններով. Պաղտասար աղբար ոտք չպիտի կոխե տունը·

ՊԱՂՏԱՍԱՐ— (Որ ծունկ չոքած էր, ոտքի կելնե) Ի՞նչ կըսեք...

ՍՈՒՐ— (Շարունակելով) Եվ ամբողջապես կնոջը տրամադրության ներքո պիտի թողու զայն։ Պաղտասար աղբար ամսե ամիս երեսուն ոսկի պիտի վճարե յուր տիկնոջ, որպեսզի սա կարենա այդ գումարով յուր ապրուստը հոգալ և պատվավոր կերպով ապրիլ։

ՊԱՂՏԱՍԱՐ— Այս կնիկը նորէն ինձի կուտաք կոր...

ՍՈՒՐ— (Շարունակելով) Եվ այդ վճարումն պատվավոր երաշխավորությամբ ապահովելու պարտական պիտի ըլլա։ Իսկ այն պարագային մեջ, ուր կինն ուզե վերստին յուր էրիկն ընդունիլ՝ Պաղտասար աղբար ոևէ ընդդիմադրություն ընելու իրավունք պիտի չունենա։

ԵՐԿԱԹ— Զհավնեցա՞ք այս եզրակացությունը...

ՊԱՂՏԱՍԱՐ— Հավնելո՞ւ բան է... պատիժն ինձի տվեր եք...

ՓԱՅԼԱԿ— Կուզեիք, որ կինն անօթութենե մեռցնեի՞նք։

ՊԱՂՏԱՍԱՐ— Ո՛չ, բայց...

ՍՈՒՐ— Եթե ձեր կինն օր մը գա ձեր ձեռքը համբուրե ու մեղա ըսե, դարձյա՞լ պիտի չընդունիք զինքը։

տասանելով այնպե՛ս, որպես թե աոջևի երկու ակռաներն ինկած բլլային)
*Կեցե՛ք, Տյարք իմ, անմեղ մի զոհ կերթա ինձի համար... ես էի, որ Կիպարի հետ այդ տունեն դուրս կելնեի և ոչ թե Պաղտասար աղբարիս կինը։*

*ՍՈՒՐ— Դո՞ւք էիք։*

*ԱՆՈՒՅՇ— Ես։*

*ՓԱՅԼԱԿ— Դիտեցե՛ք որչափ կնմանի Անույշի։ Քիչ մ'ավելի ճերմակ է և ընքվիններն ավելի սև և ավելի հաստ։*

*ԵՐԿԱԹ— Այդպես է, կարծես թե երկվորյակ են. ասոր ձայնն ավելի հաստ է և կսեթևեթե։*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Ո՛չ, ո՛չ, աս չէր... իմ կինս էր։*

*ՍՈՒՐ— Արդարությունն վերջապես երևան եկավ։*

*ԵՐԿԱԹ— Աղեկ որ տեղեկագիրն տված չենք։*

*ԱՆՈՒՅՇ— Կխնդրե՛մ, խնայեցե՛ք այդ կնոջ պատվույն, ազատեցե՛ք զինքն այս անխիղճ մարդեն, այս վայրենի մարդեն։*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Ի՞նչ խոսքեր են ասոնք։*

*ԱՆՈՒՅՇ— Ես կճանչնամ զքեզ, ինչպես նաև քու ամուսնական հավատարմությունդ։*

*ԵՐԿԱԹ— Պաղտասար աղբար, ի՞նչ կըսե։*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Մի՛ հավտաք, սուտ է...*

*ԱՆՈՒՅՇ— Ինքը շատ աղեկ կճանչնա զիս։*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Առաջին անգամն է, որ կտեսնեմ։*

*ԱՆՈՒՅՇ— Սակայն ես կրնամ հաստատել, թե զիս ալ գլխե հանողը դուն ես, թե դուն ես պատճառ իմ թշվառությանս։ Անգո՛ւթ մարդ... ինքզինքդ բարեպաշտ ու միամիտ ցույց տալ կուզես, բայց զիս ալ չես կարող խաբել։ Բացեք, Տյարք իմ, աջ թևը և տեսեք հոն կարմիր նշան մը։*
(Կբանան ու կգտնեն կարմիր նշանը):

*ՍՈՒՐ— Ես կպատռեմ այս տեղեկագիրը։*

*ԵՐԿԱԹ— Ի՞նչ խաբեբա մարդ է եղեր աս։*

*ԱՆՈՒՅՇ— Ո՛հ, գթացե՛ք խեղճ կնոջ, այդ առաքինի կնոջ...*

*ՓԱՅԼԱԿ— Երթա՛նք, բարեկամ, երթա՛նք. և դուն ալ պատրաստվե բանտ երթալու, ոճրագործ...*

*ԵՐԿԱԹ— Ազգային իշխանության հետ այսպես խաղալը շատ սուղի պիտի նստի ձեզի։ Ա՛լ ամեն բան հայտնված է։*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Թող չեք տա՛ր, որ ես ալ խոսիմ... ասոնց բոլորը վարպետություն է. նենգություն է, խորամանկություն է, ես այս կերպարանքով կին չեմ ճանչնար... կնոջս կողմե պատրաստված խաղեր են ասոնք*

*ՍՈՒՐ— Լռե՛, անպիտան, լռե՛։*

## Տեսիլ Զ

ՆՈՒՅՆՔ և ԿԻՊԱՐ

*ԵՐՎԱԹ— Կիպարն եկավ ահա։*

*ԱՆՈՒՅՇ— Կաղաչեմ, ըսեք ինձ, իրա՞վ է, թե դուք [illegible]*

*ԿԻՊԱՐ— Ի՞նչ հարցում է այդ.*

*ԱՆՈՒՅՇ— Թե տիկին Անուշը կսիրեք։*

*ԿԻՊԱՐ— Միթե կարելի՞ է ձեզմե բաժնվիլ և դրժել խոստմանցս։ Ո՛չ, կխնդրեմ, ուրիշ անգամ այդ տեսակ հարցում մի՛ ուղղեք ինձի, եթե չեք ուզեր սիրտս վիրավորել։ Դուք իմ միակ երջանկությունս եք, իմ հույսս եք, իմ կյանքս եք, իմ հոգիս եք, և ի՞նչպես կրնամ մերժել զքեզ։* (Կգրկե Անուշը):

*ՊԱՂՏԱՍԱՐ—* (Բարկությամբ) *Ի՞նչպես հանձնաժողով եք դուք...*

*ԿԻՊԱՐ— Եվ ամեն բան պատրաստված է քանի մը օրեն մեր ամուսնության հանդեսը կատարելու և չար լեզուները կարճելու համար։ Բայց ի՞նչ հարկ ստիպեց զձեզ հոս գալու։*

*ԱՆՈՒՅՇ— Անմեղ կնոջ մը պատիվը պաշտպանելու հարկը, տիկին Անուշը պաշտպանելու պետքը, որուն սիրականն կկարծե զձեզ Պաղտասար աղբարը։*

*ԿԻՊԱՐ— Հիմա կհասկնամ... հիմա միտքս կուգա, թե ինչպես Պաղտասար աղբար ունեցած է այդ սխալ կարծիքը... կարծեմ, թե կնոջ տիկին Անուշին նմանցուցած է։*

*ԱՆՈՒՅՇ— Ոչ թե միայն նմանցուցած է, այլ կպնդե, որ ես տիկին Անուշ ըլլամ։*

*ՍԱԻՐ— Ասոր պնդելուն ո՛չ կարևորություն կուտամ։*

*ԿԻՊԱՐ— Դուք տիկին Անո՞ւշն եք եղեր... խեղճ մարդ...*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Դու ես խեղճ մարդ։*

*ԿԻՊԱՐ—* (Սն Բուր) *Կարծեմ, թե այդ մարդուն ուղեղը վնասված է և բարեսիրական գործ մը կատարեք, եթե Փրկիչ դնեք զինքն ու բժշկաց տո՛ւնը տանենք.*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Ես խենթ չեմ։*

*ԵՐՎԱԹ— Ես ալ կամաց-կամաց կսկսիմ կարծել, թե ուղեղի պզտիկ խանգարություն մ'ունի այդ մարդը։*

*ՓԱՅԼԱԿ— Երկու տող նամակով մը Փրկիչ դրկելու է ուրեմն զինքն. [illegible] խեղճ մարդուն։*

*ՊԱՂՏԱՍԱՐ— Խե՞նթ եք, ի՞նչ եք։*

*ՍԱԻՐ— Քիչ մը զուսպ եղեք, Պաղտասար աղբար։*

ԿԻՊԱՐ— Այո՛, որովհետև նախապես անոնց յուրաքանչյուրին հետ մասնավոր տեսակցություններ ունեցա և խոստացա զոհ ընել զիրենք։ Պատիվդ անարատ պահելու համար ըրի ինչ որ կարող էի ընել։ Ջան-քերս ապարդյուն չմնացին։

ԱՆՈՒՇ— Երախտապարտ թողուցիր զիս, սիրելի Կիպար. առանց քեզի կարելի չէր ինձ պատրվակել հանցանքս։ Աշխարհի առջև նախա-տանաց արժանի, կզզվելի էակ մը պիտի ճանչցվեի և ո՛վ գիտե ինչ տխուր կյանքի մը մեջ անոք և անօգնական պիտի տառապեի…

ԿԻՊԱՐ— Երևակայական դժվարություններու վրա տրտմելու հարկ չկա։ Ամեն վտանգ անցած է, սակայն մեր պաշտոնը դեռ լրացած չէ։ Պեն-յակդ ընա՛ երեսդ լվա, խնկական զենքդ ստացի՛ր, հագուստդ փոխե՛ և ինձի սպասե՛։

ԱՆՈՒՅՇ— Կհնազանդիմ։ Ի տեսություն։ (Կմեկնի):

## Տեսիլ Ը

ԿԻՊԱՐ— Գործը թեև հաջող երևույթ մ'ունի առայժմ, սակայն կրնա փոխվիլ, եթե մեր խոստումը չկատարենք և չվճարենք այն նվերներն, զորս խոստացանք և որոնց միայն պարտավոր ենք մեր խնդրույն հաջողությունը։ Հիմակվնե աշխատինք ուրեմն այդ նվերները Պաղտասար աղբարեն փրցնելու միջոցներուն վրա խորհիլ։

## Տեսիլ Թ

ԿԻՊԱՐ, ՓԱՅԼԱԿ, ՊԱՂՏԱՍԱՐ

ՓԱՅԼԱԿ— Ասանկ պարագաներու մեջ խոհեմությամբ վարվիլ հարկ է. սխալ մը որքան շուտ ուղղվի, այնքան փոքր կըլլա վնասը։ Կշնորհավորեմ ուրեմն զձեզ, որ վերջապես ճանչցաք ձեր սխալն և որոշեցիք ող-ջել պատն՝ հաշտվիլ ուզելով ձեր կնոջ հետ, որ կանանց դասուն մեջ իր առաքինությամբն կփայլի։

ՊԱՂՏԱՍԱՐ— Այո՛, այո՛։ (Մեկուսի) Ես գիտեմ ըներիքս։

ՓԱՅԼԱԿ— Այս եղանակով գայթակղություն կբառնա ի միջո, չար [illegible] բերանածին և հանձնաժողովս ալ ինքզինքն բարեբախտ կհա-

լին յուր կինն էր, այնքա՞ն նմանություն ուներ յուր կնոջ հետ և թե ժամանակներին աչքը դիտել հարկ էր զանոնք իրարմե որոշելու համար։

ԿԻՊԱՐ— Այս իմաստով շարադրված տեղեկագիր մը կարող է միայն կործանված պատիվ մը վերականգնել։

ՓԱՅԼԱԿ— Եվ անցյալն իբրև ոչ եղյալ համարել տալ։

ԿԻՊԱՐ— Այո՛, պարզապես թյուրատեսություն մը։

ՓԱՅԼԱԿ— Այո՛, կատարյալ թյուրատեսություն։

ԿԻՊԱՐ— Մանավանդ թե առավել քան զթյուրատեսություն։

ՓԱՅԼԱԿ— Եվ սատնկ թյուրատեսության մը համար ո՞ր պատվավոր մարդ կրնա մեղադրել Պաղտասար աղբարը։

ԿԻՊԱՐ— Ոչ ոք։ Մարդս սխալական է։

ՓԱՅԼԱԿ— Մանավանդ թե ամեն մարդ անգամ մ'ալ պիտի տեսնե իր աչքով, թե քանի նախանձախնդիր է Պաղտասար աղբար յուր պատվույն։

ԿԻՊԱՐ— Անտարակույս։ (Մեկուսի) Երթանք նվերներն ու Թագուհիին ու Մարթային տրվելիք վարձքն ճարելու ճամփա մը գտնել։ (Կերթա)։

ՓԱՅԼԱԿ— Այս կերպով ձեր պատիվն ավելի ևս պիտի բարձրանա։

ՊԱՂՏԱՍԱՐ— Մեծապես շնորհակալ եմ։ (Մեկուսի) Երևանց հաշտվելու է և այս դժոխքին ուրիշ մեկ ելքը փնտռելու է։

ՓԱՅԼԱԿ— Եվ առաջվնե ավելի սիրով պիտի ապրիք երջանկության մեջ, որ շատերու նախանձը պիտի շարժե։ Ամուսնության մեջ պզտիկ վեճերն երբեմն սերն ավելցնելու կծառայեն։ Փոհ եղեք, որ սատնկ պզտիկ վեճ մ'ունեցաք։

## Տեսիլ Ծ

### ՆՈՒՅՆՔ, ԵՐԿԱԹ, ԱՆՈՒՅՇ

ԵՐԿԱԹ— Թյուրատեսության վրա հիմնված սխալ մը վերջապես կուզգվի ի մեծ գոհունակություն հանձնաժողովույս. զույգ մը սիրասուն ամուսիններ որք թյուրատեսության պատճառով քիչ մը ժամանակ բաժնըված էին իրարմե՝ կուգան այժմ վերստին միանալ։

ԱՆՈՒՅՇ— Կխնդրեմ, միացման վրա մի՛ խոսիք։ Ուխտ ըրած եմ այսուհետև առանձին ապրիլ։

ՓԱՅԼԱԿ— (Առ Պաղտասար) Գնա՛ ներումն խնդրել։

ԵՐԿԱԹ— Առանձին ապրելու համար ստեղծված չեք դուք, տիկին։

## Տեսիլ ԺԱ

ՊԱՂՏԱՍԱՐ— (Առանձին) *Այսպե՛ս են եղեր աշխարհիս գործերը․․ բռնությամբ Փրկիչ կտանին կոր իբրև խենթ... Անգամ մը հոն երթալեն վերջը իբրև խենթ, աշխատե՛ ու աշխատե՛, որ խենթ չըլլալդ հաստատես, որո՞ւ պիտի հասկցնես... Եթե հաշտվելու համար խոսք չտայի՝ մինչև հիմա խենթերու քովը գնացած պիտի ըլլայի... Ա՛լ համոզվեցա, թե այս անպատիվ կնիկեն բաժնվիլ կարելի չէ, բայց որովհետև անպատիվ ապրիլն ալ անհնար է ինձ, քիչ մը ժամանակ ալ ակռաներս կսխմեմ. գործերս ուզածիս պես կկարգադրեմ և օր մը կելնեմ Ամերիկա կփախչիմ... ուրիշ ճար չկա։ Վա՜յ անոնց, որ իմինիս պես կնիկ ունին, աստված ողորմի... իրավունքն ու արդարությունն իմ հետս ըլլան ու չկարենամ դատը վաստկիլ, իրավ, կամ խենթենալու բան է, կամ ճաթելու։ Մեկ թյուրատեսությամբ այնչափ հայտնի անիրավություններ գործեցին, որ դիմանալու բան չէ։ Աս իմ կնիկս է կըսեմ կոր, ու չեն ամչնար կոր ինձի պատասխանելու, թե կնոջդ նմանող կնիկ մ'է տեսածդ։ Իրավունքը մտիկ ընել չուզողին ուզածիդ չափ խոսե, ի՞նչ օգուտ ունի։ Բայց վնաս չունի, այս թյուրատեսությունն հիմա իմ ալ գործիս կուգա, գոնե մինչև որ գործերս կարգադրեմ՝ իրավունք կունենամ բարեկամացս ըսելու, թե խարված եմ կին մը կնոջս նմանցնելով, մինչդեռ եթե թյուրատեսություն չըլլար՝ այս օրվնե պարտավոր էի փախչիլ։*

## Տեսիլ ԺԲ

### ՆՈՒՅՆ և ՕԳՍԵՆ

ՕԳՍԵՆ— *Կհուսամ, թե դատդ նպաստավոր կերպով վերջացուցիր և պատժել տվիր այդ լիրբ կինը։*

ՊԱՂՏԱՍԱՐ— *Կխնդրեմ, մաքուր բռնեցեք ձեր լեզուն, իմ կինս լիրբ չէ։*

ՕԳՍԵՆ— *Ի՞նչ է ուրեմն յուր էրիկն մատնող կինը։*

ՊԱՂՏԱՍԱՐ— *Կինս բնավ մատնած չէ զիս։*

ՕԳՍԵՆ— *Խենթեցա՞ք։*

ՊԱՂՏԱՍԱՐ— *Ամենևին։*

ՕԳՍԵՆ— *Ո՞վ էր ուրեմն Կիպարը սիրողը։*

ՍՈՒՐ— Տարակո՞ւյս կա։

ՊԱՂՏԱՍԱՐ— (Պոռալով) Գնացե՛ք սըկե, եթե ոչ հիմա կերթամ հավատքս կփոխեմ։

## Տեսիլ ԺԵ

### ՆՈՒՅՆՔ և ԿԻՊԱՐ

ԿԻՊԱՐ— Ի՞նչ աղմուկ է այս։

ՄԱՐԹԱ— Ինչո՞ւ խաբեց զիս, ես անոր խաղալի՞քն եմ։

ԹԱԳՈՒՀԻ— Ասոր պատճառավ աղջիկս արյուն կփսխե կոր։

ՄԱՐԹԱ— Իմին ալ կուրծքս բռնված է։

ԿԻՊԱՐ— Կերևի թե կատակ մ՛ըրած է ձեզի Պաղտասար աղբարն։

ՊԱՂՏԱՍԱՐ— Չեմ ճանչնար զիրենք։

ՄԱՐԹԱ— Չե՞ս ճանչնար։

ԹԱԳՈՒՀԻ— Ստախոս։

ԿԻՊԱՐ— Հեռացե՛ք, ես կկարգադրեմ ձեր գործը։ (Առ Պաղտասար) մեյ-մեկ գումար տալով վերջացնելու

ՊԱՂՏԱՍԱՐ— Ինչո՞ւ տամ։

ԿԻՊԱՐ— (Ցած առ Պաղտասար) Ո՞վ պիտի երթա գա դատարաններ, ասոնց հետ դատվելու համար. ձեր պատվույն չիյնար ասոնց հետ ելնել իյնալ։ (Առ Թագուհի և Մարթա) Գնացե՛ք, գնացե՛ք, ես կարգադրեցի ձեր գործը։

ՄԱՐԹԱ— Վստա՞հ ըլլա՞մ, թե պիտի կարգվի հետս։

ԹԱԳՈՒՀԻ— Պատվույն վրա խոսք տվա՞վ աղջիկս առնելու։

ԿԻՊԱՐ— Պիտի ջանամ՝ որ երկուքդ ալ գոհ ըլլաք։ (Թագուհի և Մարթա կմեկնին):

ՍՈՒՐ— Շնորհակալ եմ, պարոն Կիպար, որ կարգադրեցիր այս խընդիրը։ (Կմեկնի):

ԿԻՊԱՐ— Ուրիշ վճարումներ ալ կան ընելու, զանոնք ալ կկարգադրեմ ես, Պաղտասար աղբար, դուք հոգ մի՛ ըներ։

ՊԱՂՏԱՍԱՐ— Շնորհակալ եմ, շնորհակալ եմ ձեր անձնվիրությանն (Կմեկնի):

ՇԻՐՎԱՆԶԱԴԵ

# ՊԱՏՎԻ ՀԱՄԱՐ

դրամա 4 արարվածով
1904 թ.

# ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

*Բեմը ներկայացնում է Անդրեաս և Բագրատ Էլիզբարյանների պարապելու սենյակը, որ բռնում է սեփական տան վերին հարկում անկյունային դիրք՝ բնակարանի և գրասենյակի միջև։*

*Միջին մեծության սենյակ։ Աջ[1] պատի մեջ դեպի փողոց երկու մեծ լուսամուտներ, որոնց մեջտեղում դրած է Անդրեասի գրասեղանը, վրեն, բացի գրելու պարագաներից, համարակալ, հեռախոսի ապարատ և էլեկտրական շարժուն լամպար։ Սեղանի քով, պատի կողմում մի մեծ բազկաթոռ, մյուս կողմում մի հասարակ աթոռ։*

*Խորքի պատի մեջ երկու դռներ, մեկը բեմի կենտրոնական ուղղությամբ, դեպի գրասենյակ, մյուսը բոլորովին ձախ, գրեթե անկյունում, դեպի նախասենյակ։*

*Ձախ պատի մեջ էլ դռներ, որոնք տանում են դեպի բնակարան։ Այս դռների մոտ ավանցսենա Բագրատի գրասեղանը, վրան, բացի սովորական պարագաներից, գրելու գործիքներ, գծագրություններ և մի քանի մասնագիտական գրքեր՝ ինժեների համար։ Սեղանի հետևում երկաթե դրամարկղ։ Խորքում, դեպի աջ—վառարան։*

*Պատերի տակ աթոռներ։ Հատակի աջ կողմը ծածկված է գորգով։ Լուսամուտները վարագուրված են։*

## Տեսիլ 1

### ՍԱՂԱԹԵԼ և ԿԱՐԻՆՅԱՆ

Վարագույրը բարձրանալիս, Սաղաթելը, Անդրեասի գրասեղանի բով կանգնած, հեռախոսով խոսում է։ Խորքի դռները բացվում են, ներս է մտնում Կարինյանը և սկսում է Անդրեասի գրասեղանի վրա շատ դանդաղ ինչ-որ փնտրել։ Այս դռները բացվելիս հեռու երևում է մի բարձր հաշվեսեղան, որի բով կանգնած պարապում է մի երիտասարդ։ Մերթ ընդ մերթ երևում են և ուրիշ ծառայողներ, նաև այցելուներ, որոնք այս ու այն կողմ են անցնում զբաղված դեմքերով։ Գործողության ընթացքում, մինչև գրասենյակի փակվելը, այնտեղից լսվում են համարակալի չխկչխկոց և հեռախոսի զանգակի հնչյուններ։

[1] Աջ և ձախը ընդունել հանդիսականների կողմից։

տանջանքից։ Հա, ի՞նչ էի ուզում հարցնել, այսօր Օթարյանն եկե՞լ է այստեղ։

*ԿԱՐԻՆՅԱՆ*— *Ոչ։*

*ՍԱՂԱԹԵԼ*— *Էհ, գոհություն աստծու։* (Տերողորմյան տրորում է և հառ քաշում):

*ԿԱՐԻՆՅԱՆ*— *Ասացեք, խնդրեմ, ի՞նչ է պատահել այդ երիտասարդի և պարոն Անդրեասի մեջ։*

*ՍԱՂԱԹԵԼ*— *Այդ երկար պատմություն է։ Բայց մեր գործը չէ։*

## Տեսիլ 2

ՆՈՒՅՆՔ և ՍՈՒՐԵՆ

*ՍՈՒՐԵՆ*— (Ներս է մտնում շտապով ձախ դռնից վերարկուով ու գլխարկով) *Պապան այստեղ չէ՞։ Ավելի լավ։* (Սաղաթելին) *Քեռի, ի սեր աստծու, տո՛ւր ինձ իսկույն երեք հարյուր ռուբլի։*

*ՍԱՂԱԹԵԼ*— (Տերողորմյան գրպանը դնելով) *Հեհ հե՛, էլի վաղից գլխիս։* (Սուրենին) *Ի՞նչ է պատահել, էլի բարկացած ես։*

*ՍՈՒՐԵՆ*— *Հարցուփորձի ժամանակ չէ։ Ինձ ձեռաց երեք հարյուր ռուբլի փող է հարկավոր։*

*ԿԱՐԻՆՅԱՆ*— *Երևի, էլի բակարայում տանուլ եք տվել։*

*ՍԱՂԱԹԵԼ*— *Բան չէ, առուտուրում վնաս է արել։ Սրանք կամ բակարան է, կամ թխլիկ-թխլիկ մամզելները։*

*ՍՈՒՐԵՆ*— (Գրգռվելով Կարինյանի դեմ) *Պարոն Թանաքլզող, այդ ձեր գործը չէ, խնդրեմ անկոչ վերահսկողի դեր չկատարեք։ Քեռի, եթե այս րոպեին երեք հարյուր ռուբլի չունենամ—կխայտառակվեմ։ Պատվի խնդիր կա մեջտեղ։ Եթե ինձ սիրում ես—մի՛ ուշացնիր։*

*ՍԱՂԱԹԵԼ*— *Շատ եմ սիրում, Սուրեն ջան, բայց որ փող չկա, ի՞նչ անեմ։ Քեզ հայտնի է, որ այժմ հորդ գործերը եղբայրդ է կառավարում։* (Տերողորմյան գրպանից հանում է):

*ՍՈՒՐԵՆ*— *Եղբայրս, եղբայրս, ամեն տեղ նա ինձ խանգարում է։ Բայց թող սպասի, մի օր ատամներս ցույց կտամ նրան։*

*ՍԱՂԱԹԵԼ*— *Է, նա այն պտուղներից չէ, որ քո ատամներից վախենա։*

*ՍՈՒՐԵՆ*— (Անհամբեր) *Տալո՞ւ ես փող, թե՞ չէ։*

*ՍԱՂԱԹԵԼ*— *Այ եղբայր, ես ի՞նչ անեմ, ահա նա, սնդուկը, սա էլ դու, համեցեք, վերցրու, ի՞նչ ես յախից կպել։*

*ՍՈՒՐԵՆ*— *Բանալին տուր։*

ճար, քինաքինա, ամբողջ դեղատունը։ Պակասում է բժիշկը։ Հապա, տեսնենք ուր է ցավդ, որ բժշկենք։ Ահա, օօ՛, այստեղ երեք հարյուր էլ կա, հինգ էլ, տասն էլ։

ՍԱՂԱԹԵԼ— (Ամբողջ ժամանակ անճանգիստ, աշխատում է փողամանը խլել) Այդ խոժ ափաշկարա կողոպտել է նշանակում։ Տեսնո՞ւմ ես, Արիստակես, օրը ցերեկով։

ԿԱՐԻՆՅԱՆ— (Մեկուսի) Ավելի լավ է այդպես կողոպտել, քան թաքուն, թաքուն գողանալ, ինչպես դու։

ՍՈՒՐԵՆ— Մի վախենար, ավելի չեմ վերցնիլ։ Այն, ցվայ, դրայ, հերիք է։ (Փողերը դնում է գրպանը, փողամանը վերադարձնում է Սաղաթելին) Ստացի՛ր թանդարանդ, ֆի, մաղո՛ւթի հոտ է փչում։

ՍԱՂԱԹԵԼ— (Փողամանը ծոցը դնելով) Կարող եմ ասել, որ էլի լավ պրծա…

ՍՈՒՐԵՆ— Շնորհակալություն։ Այժմ պատիվս փրկված է։ Անիրավները չէին ուզում ինձ հետ ապառիկ խաղալ։ Աուֆվիդերզեհե՛ն։ (Ուզում է գնալ):

ՍԱՂԱԹԵԼ— Ամոթ չլինի հարցնելը—բաս վե՞քսելը։

ՍՈՒՐԵՆ— Գրիր քեզ հայտնի պայմանով. կստորագրեմ, բայց տես Նելլոկի տոկոս չբարդես վրեն։ (Քայլերն ուղղում է դեպի նախասենյակ):

ԿԱՐԻՆՅԱՆ— (Գլուխը շարժելով անցնում է գրասենյակ):

## Տեսիլ 8

### ՍՈՒՐԵՆ, ՆՐԱՆՈՒՀԻ և ՍԱՂԱԹԵԼ

ՆՐԱՆՈՒՀԻ— (Գալիս է ձախ դռներից տնային հագուստով, առանց գլխարկի։ Հուզված է) Կա՛ց, մի գնար։

ՍՈՒՐԵՆ— (Կանգ է առնում) Է, մամա, հերիք է ինչքան լացուկոծ բարձրացրիր, ես ներվային մարդ եմ։

ՆՐԱՆՈՒՀԻ— (Սաղաթելին) Դու նրան փող տվեցի՞ր։

ՍՈՒՐԵՆ— Այո, մամա, եղբայրդ ավելի բարի գտնվեց, քան դու և իմ սրտից։

ՆՐԱՆՈՒՀԻ— Հե՛տ վերցրու, Սաղաթել, հե՛տ վերցրու։ Փողը նրան փողոցից, փողոցները գցեց։

ՍՈՒՐԵՆ— Լավ, մամա, հին երգդ երգելու տեղը չէ, գրասենյակից կգամ։ (Գրասենյակի դռները ծածկում է):

*ՍԱՂԱԹԵԼ— Ասում էր, որովհետև քահանա էր, իսկ մենք աշխարհականներ ենք, մե՞զ ինչ։*

*ԵՐԱՆՈՒՀԻ— Վախեցիր ահեղ դատաստանից, Սաղաթել։ Մի՛ պաշտիր փողը կուռքի պես։*

*ՍԱՂԱԹԵԼ— Քույր, սատծու պատիժն էլ, վարձքն էլ այս աշխարհումն է։ Ահեղ դատաստան-մատաստան չկա։*

*ԵՐԱՆՈՒՀԻ—* (Զարհուրած) *Կա, անհավատ, կա։*

*ՍԱՂԱԹԵԼ— Դե հ՜ը, կա, թող լինի։ Բայց հարցրու մեծ որդուդ, տես նա ինչ է ասում։ Բանից դուրս է գալիս, որ մյուս կյանք ասածդ էլ անբախտ մարդիկ են հնարել՝ իրանց այրված սիրտը մխիթարելու համար։ Որդիդ է ասում, լսո՞ւմ ես, ասում է՝ գիտության խոսքն է։*

*ԵՐԱՆՈՒՀԻ— Անիծվի ձեր գիտությունը։*

*ՍԱՂԱԹԵԼ— Ինչո՞ւ։ Որ այն հոտած փիյի մոմի տեղ մեզ պայծառ էլեկտրական լո՞ւյս է տվել։ Ասա խնդրեմ, երկաթուղի, շոգենավ, տելեգրաֆ, տելեֆոն, գրամոֆոն գիտությո՞ւնն է հնարել, թե՞ քո տերտերները։*

*ԵՐԱՆՈՒՀԻ— Զուր չեն ասում, թե տերտերի որդին անհավատ կլինի։*

*ՍԱՂԱԹԵԼ— Ախ, Երանուհի, դու մարդուցդ հիսուն տարով հետ ես մնացել։ Խելքի եկ, բաց արա աչքերդ, տես ի՛նչպես են ապրում մյուս հարուստների կանայք։ Ուտում են, խմում, քեֆ անում, ամեն ամառ գնում են արտասահման, իսկ դու վազում ես... Ահեղ դատաստան։* (Փոքրիկ պաուզա) *Մի նոր բան էլ այն փոքր աղջիկդ է հնարել—Մարգարիտը. ճշմարտությո՜ւն։ Երեկ սկսեց գլխիս ավետարան կարդալ, «Քեռի, մարդիկ պարտավոր են ճշմարտությունով ղեկավարվել»։*

*ԵՐԱՆՈՒՀԻ— Վատ բան է ասել, հա՞։*

*ՍԱՂԱԹԵԼ— Գիտես, սիրելիս, մեր հանգուցյալ հոր նման ճշմարիտ մարդ հազիվ թե լինի այս քաղաքում։ Բայց ի՞նչ թողեց մեզ համար։ Վերջին կոպեկի կարոտություն, սով։ Մեռավ թե չէ, սկսեցինք սրան-նրան ձեռք պարզել։ Դեռ փառք սատծու, որ դու մի քիչ գեղեցիկ էիր, բախտը քեզ այս տունը գցեց։ Ի՞նչ պիտի անեինք, եթե Էլիզբարովը քեզ հետ չամուսնանար։ Հանգուցյալը մի արհեստ էլ չէր սովորեցրել ինձ։ Ուզում էր, որ ես էլ տերտեր դառնամ, այսինքն՝ իր նման քաղցածի մեկը։ Չէ, քույր, ոչ քեզ եմ հավանում, ոչ Մարգարիտին։ Ապրել չգիտեք։ Այ, մեծ աղջիկդ, լեզու է գալիս, աշխարհի բերանն է պատռում։ Տեսնո՞ւմ ես տուն ու տեղդ ինչպես է կարգի գցել, ինչ շիկ է բանեցնում։ Մախլաս, դու իսկի նման չես միլիոնատերի կնոջ։ Էհ, թողնենք, կարծեմ, Անդրեասի ձայնն է։*

ԵՐԱՆՈՒՀԻ— (Հառաչելով) *Ոչինչ։*

ԱՆԴՐԵԱՍ— *Փառք աստծու, կարծեցի էլի պիտի սկսես նախատել ինձ։*

ԵՐԱՆՈՒՀԻ— *Ես քեզ ե՞րբ եմ նախատել։*

ԱՆԴՐԵԱՍ— *Դո՞ւ։ Դու երեսուն տարի է շարունակ նախատում ես ինձ։ Ես քեզ լավ եմ ճանաչում, դու իմ առաջին թշնամին ես։* (Վեր է կենում և սկսում անցուդարձ անել):

ԵՐԱՆՈՒՀԻ— *Չեմ իմանում ինչով եմ քո թշնամին։*

ԱՆԴՐԵԱՍ— *Ինչո՞վ։ Քո մտքերով։ Դու երբեք իմ մասին լավ բան չես մտածել։* (Լռություն) *Ի՞նչ է խոսել քեզ հետ Օթարյանը։*

ԵՐԱՆՈՒՀԻ— *Արտաշե՞սը։ Ոչինչ։ Ինչ որ քեզ հետ է խոսում, նույնն էլ ինձ հետ։*

ԱՆԴՐԵԱՍ— *Ի՞նչ ես կարծում, նա ինչպիսի տղա է։*

ԵՐԱՆՈՒՀԻ— *Նա օրինավոր տղա է, շատ օրինավոր, համեստ, խելոք...*

ԱՆԴՐԵԱՍ— *Լավ, լավ, մի՛ երկարացնիր, գովելդ ավելորդ է...*

ԵՐԱՆՈՒՀԻ— (Հառաչում է):

ԱՆԴՐԵԱՍ— (Գրգռվելով) *Լսի՛ր, հազար անգամ ասել եմ, էլի եմ կրկնում, թո՛ղ այդ հառաչանքներդ, ախ ու վախդ։ Քո դեմքի վրա, աչքերիդ մեջ, ամեն մի խոսքիդ տակ ես զգում եմ նախատինք։ Քո տխրությունն ինձ կատաղեցնում է։ Ես շատ լավ գիտեմ, որ դու սովերի պես նայում ես ինձ. ծուռ եմ դնում ասս թե՞ ուղիղ, ումի՞ն զրկեցի, ումի՞ց ավելորդ վերցրի, ումի՞ն պակաս տվեցի։ Թո՛ղ ինձ հանգիստ, դու իմ խի՞ղճն ես, ինչ է։ Չի հարկավոր, կարոտություն չունեմ։ Իմ մեջ խիղճ էլ կա, հոգի էլ, աստված էլ...*

ԵՐԱՆՈՒՀԻ— (Տարակուսանքով) *Ոչինչ չեմ հասկանում ասածներիցդ։*

ԱՆԴՐԵԱՍ— *Ա՜ա, շատ լավ ես հասկանում։* (Անհանգիստ նայելով ժամացույցին) *Արդեն երկու ժամն է։ Չեկավ այդ տղան։*

ԵՐԱՆՈՒՀԻ— (Զսպելով իրեն) *Տա՞նն ես ճաշելու։*

ԱՆԴՐԵԱՍ— *Իհարկե, ա՞յդ ինչ հարց է։*

ԵՐԱՆՈՒՀԻ— (Խորհրդավոր) *Ո՞վ գիտե քո բանը։*

ԱՆԴՐԵԱՍ— *Այ, տեսնո՛ւմ ես, հենց այդ «ով գիտե»-ի տակ սատանան է նստած։ Նախատինք, միշտ նախատինք։ Օձի նման է կծում։ Հե-[illegible] Աստվածոտից դեռ շատ պես անոթի եմ։ Գնա, ճաշ պատրաստիր։ Մի աման էլ Արտաշեսի համար դիր։ Ես նրան ճաշի եմ պահելու։ Լավ խոսիր նրա հետ, այդ ինձ հարկավոր է։ Եթե Բագրատը տանն է, ուղարկիր այստեղ։* (Երանուհին գնում է ձախ դռներով):

նը, իմս է այն, միմիայն իմս։ Իսկ այդ լակոտն եկել է ու ասում է, «Տուր ինձ կեսը»։ Փա՜հ, գժվել եմ, որ տամ։ Եթե գժվել եմ, ինչո՞ւ չեն ինձ գժատուն տանում։ (Գռգռվում է) Համեցեք, այս էլ ձեզ բարեգործություն։ Որդեգիր եմ վերցրել հոր հիշատակի համար, ուսում տվել, մարդ շինել, տարիներով պահել եմ մորն ու քույրերին, ի՞նչ է այսօր վարձս։— Քոռ ապերախտություն։

*ՍԱՂԱԹԵԼ*— *Լավ, քիչ խառնիր արյունդ։ Մի կերպ ռեխը կկապենք, կգնա։*

*ԱՆԴՐԵԱՍ*— *Իհարկե, պետք է ռեխը կապել։ Ես խոմ չեմ կարող նրա հետ դատարան գնալ։ Կգցի ինձ մի թոկից փախած ադվակատի ձեռք, արի ու ազատվիր...*

*ՎԱՐԴԱՆ*— (Ներս է մտնում նախասենյակից։ Հագած է սև արխալուղ, դեղնագույն պիջակ արխալուղից կարճ, մեջքին արծաթյա գոտի։ Խոսում է շատ անփույթ, Շամախու բարբառով) *Ան Արտաշեսը եկալ ա, ուզում ա քեզ տեսնի։*

*ԱՆԴՐԵԱՍ*— *Խնդրի՛ր։* (Վարդանը նեա է գնում) *Սաղաթել, դու անցկաց գրասենյակ, հետո կգաս։*

*ՍԱՂԱԹԵԼ*— (Գնում է գրասենյակ, դռները ծածկելով)։

*ԱՆԴՐԵԱՍ*— (Նստում է իր բազկաթոռի վրա, ուշքը ժողովելով և դեմքին սիրալիր արտահայտություն տալով)։

## Տեսիլ 7

ԱՆԴՐԵԱՍ, ՕԹԱՐՅԱՆ, հետո ԲԱԳՐԱՏ, ավելի ուշ՝ ՍԱՂԱԹԵԼ

*ՕԹԱՐՅԱՆ*— (Ներս է մտնում նախասենյակից, հանդարտ և քաղաքավարի գլուխ է տալիս)։

*ԱՆԴՐԵԱՍ*— (Սիրալիր) *Բարով, որդի։ Այդ ի՞նչ է, դու մեզ մոռացե՞լ ես։*

*ՕԹԱՐՅԱՆ*— (Սեղմելով Անդրեասի ձեռը) *Երեկ ձեր տանն էի։*

*ԱՆԴՐԵԱՍ*— *Հա՞, բաս ինձ չեն ասել։ Նստի՛ր, այսօր մեզ մոտ ես ճաշում։ Մի քիչ խոսենք, հետո կանցնենք այն կողմ։ Գործ ճարեցի՞ր։*

*ՕԹԱՐՅԱՆ*— (Նստում է Անդրեասի գրասեղանի քով, երեսը դեպի հասարակություն) *Այո, մի քանի մասնավոր դասեր։*

*ԲԱԳՐԱՏ*— (Գալիս է ձախ դռներից երկայն կոշիկներով և նավթի բծերով ծածկված պիջակով։ Նկատելով Օթարյանին, թեթև ցնցվում է, սառը գլուխ է տալիս, նստում է ձախ գրասեղանի քով և անմիջապես սկսում է

ԱՆԴՐԵԱՍ— (Գրգռված) *Ասացի, որ այդ քո գործը չէ, մի խառնվիր։*

ԲԱԳՐԱՏ— *Բայց, հայրիկ, իմ ինքնասիրությունը վիրավորված է։ Թույլ տուր նրան մի քանի հարցեր առաջարկել։* (Դառնում է Օթարյանին) *Ես կկամենայի իմանալ, դուք բավարարվա՞ծ եք մեզանից, թե՞ ոչ։*

ՕԹԱՐՅԱՆ— (Զսպված) *Այո՛։*

ԲԱԳՐԱՏ— *Ո՞վ է ձեզ խնամել և բարձր ուսում տվել։*

ՕԹԱՐՅԱՆ— (Զսպված) *Ձեր հայրը։*

ԲԱԳՐԱՏ— *Ո՞վ է տարիներ շարունակ պահպանել և կերակրել ձեր մորն ու քույրերին։*

ՕԹԱՐՅԱՆ— *Ձեր հայրը։*

ԲԱԳՐԱՏ— *Եվ այդ բոլորը խոստովանելուց հետո հանդգնում եք լինել երախտամո՞ռ։ Եվ այդ բոլորից հետո, դու, հայրիկ, պահանջում ես, որ ես սա՞ռը վերաբերվեմ այդ մարդուն։*

ԱՆԴՐԵԱՍ— *Ես ասում եմ, որ այդ քո գործը չէ։ Դու ոչինչ չես հասկանում։*

ՕԹԱՐՅԱՆ— (Բազրանին) *Լսեցե՛ք, պարոն, ձեզ հետ ես այսօր մտադիր չէի հաշվի նստելու, բայց, որովհետև ստիպում եք, կխոսեմ։ Այո, ես էլիզբարյանների խնամքով մեծացած մարդ եմ։ Դուք ինը տարի պահել ու պահպանել եք ինձ, մորս ու քույրերիս։ Բայց ինչպես—այդ միայն ինձ է հայտնի։ Այն, ինչ որ ես եմ զգացել տարիների ընթացքում, չէր ցանկանալ զգալ ոչ մի ինքնասեր մարդ։ Դուք ձեր ամեն մի կոպեկի մեջ թույն եք սրսկել և այնպես տվել ինձ...*

ԱՆԴՐԵԱՍ— *Պարտական մնամ, եթե արած լավությունններս գոնե մի անգամ էլ երեսովդ տված լինեմ։*

ՕԹԱՐՅԱՆ— *Բայց մի՞թե պիտի խոսեիք, որ ես զգայի իմ ողորմելի դրությունը։ Այո, իմ վերաբերմամբ դուք արտաքուստ քաղաքավարի եք եղել։ Բայց այն, ինչ որ խոսքերով չեք արտահայտել, արտահայտել եք ձևերով, աչքունքով, շարժումներով։ Դուք ինձ ստորացրել եք իմ աչքում ամեն անգամ, խայթել եք իմ ինքնասիրությունը լուռ, ինչպես, ներեցեք ասել, մի կարիճ...*

ԲԱԳՐԱՏ— (Հեգնորեն) *Զարմանալի է, որ տարիներ շարունակ լռել եք և նոր եք միայն ձայն բարձրացնում։*

ՕԹԱՐՅԱՆ— *Ախ, լռել եմ, որովհետև խնայում էի մորս ու քույրերիս։ Գիտեի, որ եթե ձայն բարձրացնեմ, պիտի զրկեք նրանց մի կտոր հացից։ Ես մտածում էի այսպես. «Կքաշեմ մի կերպ այս վիրավորանքը և մի օր, բոլոր պարտքերս վճարելով էլիզբարյաններին, կթեթևանամ հոգով»։ Մայրս էլ է լռել։ Բայց հարցրեք, ի՞նչ լռություն է եղել այդ։* (Անդրեասի կողմ) *Ամսական քսանուհինգ ռուբլի տալով քսանուհինգ անգամ նախա-*

*տպրել ես ուզում, բայց չունիս։ Ի՞նչ, մտածել ես մտածել ու այդ բանը հնարել...*

ՕԹԱՐՅԱՆ— (Վրդովման նշան է անում)։

ԱՆԴՐԵԱՍ— *Մի՛ տաքանար, որդի, խոսենք հանդարտ։ Է՛հ, ինչ արած, շատ եմ օգնել հորդ հիշատակի համար, էլի կօգնեմ։ Արի ստացիր ինձանից մի քանի հազար ռուբլի, թուղթ տուր, որ ինձանից պահանջ չունիս և ինձ էլ ու քեզ էլ ազատիր գլխացավից։*

ԲԱԳՐԱՏ— (Դրականապես) *Երբե՛ք։ Ես թույլ չեմ տա մի կոպեկ անգամ տալ նրան։*

ԱՆԴՐԵԱՍ— *Մեղա քեզ, տեր աստված. վերջապես, ձայնդ կտրելո՞ւ ես, թե՞ չէ։*

ՍԱՂԱԹԵԼ— (Մի կողմից կամացուկ Բագրատին) *Թող տա, դու չես հասկանում։*

ԲԱԳՐԱՏ— (Չլսելով Սաղաթելին) *Այդ անկարելի է։ Փող առաջարկել այդ մարդուն, կնշանակե վախենալ նրանից։ Թող դիմի դատարան, ես ինքս քեզ կպաշտպանեմ նրա զրպարտության դեմ, որովհետև համոզված եմ, որ նա քեզ զրպարտում է։*

ՕԹԱՐՅԱՆ— *Զգուշացեք, պարոն, այդ խոսքերը կարող են թանկ նստել ձեզ։*

ԲԱԳՐԱՏ— *Ա՛հ, թողեք այդ ֆրազները։ Ես ձեր բարոյական ուժը լավ եմ ճանաչում և զուր չեմ միշտ ձեզ արհամարհել։ Սակայն ինչու ավելորդ խոսքեր շռայլել, ահա կարճ կտրական իմ խոսքը. արեք, ինչ որ կարող եք, ես ձեր հակառակորդն եմ։* (Շտապով իր գրասեղանից վերցնում է մի քանի թղթեր) *Քեռի, ես գնում եմ գործարան։ Պատվիրիր Զեյլմանին, որ խողովակները շուտով ուղարկի։ Հայրիկ, ինձ ճաշի չսպասեք։* (Արագությամբ հեռանում է նախասենյակի դռներով, ձգելով Օթարյանի վրա մի արհամարհական հայացք):

ՍԱՂԱԹԵԼ— (Մեկուսի) *Աֆարիմ տղա, կրակի կտոր է։*

## Տեսիլ 8

ՆՈՒՅՆՔ- առանց ԲԱԳՐԱՏԻ, հետո ՄԱՐԳԱՐԻՏ

ԱՆԴՐԵԱՍ— *Տեսնում ես, որդի, էլի մենք, հին մարդիկս ավելի բարի ենք, քան դուք, նորերդ։ Արի, քարը փեշիցդ թափի, ստացիր երեք հազար ռուբլի, հաշտվենք։*

ՕԹԱՐՅԱՆ— *Էլ ուրիշ ասելիք չունի՞ք։*

*ՕԹԱՐՅԱՆ— Ա՜խ, Մարգարիտ, թո՛ղ այդ երեխայական ձևերը, դու նման չես ուրիշ կանանց։*

*ՄԱՐԳԱՐԻՏ— Բայց դու ինձ հետ վարվում ես ինչպես մի երեխայի հետ. ո՞ւր են քո խոսքերը, թե միմյանց սիրող անձանց մեջ չպիտի լինի ոչ մի գաղտնիք։ Այդպե՞ս ես կատարում երդումդ։*

*ՕԹԱՐՅԱՆ—* (Շփոթված) *Բայց կան գործեր, որոնց հետ դու չպիտի ծանոթանաս։ Քո սիրտը դեռ շատ մանուկ է։* (Նորից բռնում է նրա ձեռը և ջերմ սեղմում)։

*ՄԱՐԳԱՐԻՏ— Իսկ ես կարծում էի, թե չկա գործ, որ քեզ վերաբերվի և ինձ ոչ։* (Ձեռը խլելով) *Թո՛ղ ինձ, դու ինձ վիրավորում ես։* (Երեսը դարձնում է) *Դա անգթություն է սիրող կնոջ վերաբերմամբ։*

*ՕԹԱՐՅԱՆ— Ի՞նչ արած, վիրավորված ինքնասիրությունն երբեմն անգութ է լինում։*

*ՄԱՐԳԱՐԻՏ— Վիրավորված ինքնասիրությո՞ւնը։ Ո՞ւմ ինքնասիրությունն է վիրավորվել։ Քո՞նը։ Ո՞վ է վիրավորել։ Հա՞յրս, թե՞ եղբայրս։* (Դադար) *Բայց դու լռո՞ւմ ես։ Դու ինձանից դարձնո՞ւմ ես երեսդ։ Բավական է, մի՛ փորձիր համբերությունս։ Ես ատում եմ կեղծիքը, հասկանո՞ւմ ես։ Ասա պարզ և անկեղծ, ի՞նչ է պատահել։ Ա՛, հասկանում եմ։ Դու խոսել ես հորս հետ իմ մասին, խնդրել ես նրա համաձայնությունը։ Մերժել է... Բայց ոչ, ի՛նչ եմ ասում։ Հայրիկը սիրալիր էր դեպի քեզ։ Վերջապես, նրա մերժումը չի կարող քեզ վիրավորել, քանի որ ես սիրում եմ քեզ և իմ գլխի տերը միմիայն ես եմ։* (Դադար) *Սպասի՛ր, իմ մեջ ծագեց ուրիշ կասկած։ Դու նրա հետ խոսել ես իմ... Բայց ոչ, դու ընդունակ չես այդ տեսակ անվայել սակարկության։ Վերջապես, ասելո՞ւ ես, թե ոչ։*

*ՕԹԱՐՅԱՆ— Դու բռնություն ես գործ դնում իմ կամքի վրա, Մարգարիտ։ Կրկնում եմ, կան բաներ, որոնց հետ դու չպիտի ծանոթանաս։*

*ՄԱՐԳԱՐԻՏ—* (Եռանդով) *Ոչ, ասում եմ։ Մազի չափ գաղտնիք չպիտի ունենաս ինձանից։ Կամենում ես, այս պայմանով սիրիր ինձ, ոչ— կարող ես հեռանալ։ Ուրիշ տեսակի փոխադարձ սեր ես չեմ ընդունում։*

*ՕԹԱՐՅԱՆ—* (Մի վճռական շարժում անելով) *Ա՛հ, թող լինի, ինչ որ լինելու է։ Միևնույնն է, անհնարին է քեզանից թաքցնել։*

*ՄԱՐԳԱՐԻՏ—* (Գրեթե շնչասպառ) *Հապա՞, հապա։*

*ՕԹԱՐՅԱՆ— Ասա՛ ինձ, Մարգարիտ, սիրո՞ւմ ես հորդ։*

*ՄԱՐԳԱՐԻՏ— Ե՞ս, իմ հո՞րը։* (Դրական և ջերմագին) *Այո՛։*

*ՕԹԱՐՅԱՆ— Ոչ միայն իբրև զավակ, ոչ միայն արյունակցի սիրով, այլև գիտակցորեն։*

*ՄԱՐԳԱՐԻՏ— Չեմ հասկանում միտքդ։*

*ՕԹԱՐՅԱՆ— Ուզում եմ ասել, հարգո՞ւմ ես նրան ինչպես մարդու։*

***ՋԱՐՈԻՀԻ***— **(Երևում է ձախ դռների մեջ)** *Ձեզ ճաշի են սպասում։*

***ՄԱՐԳԱՐԻՏ***— *Իսկույն։*

***ՋԱՐՈԻՀԻ***— **(Գնում է հետ)։**

***ՕԹԱՐՅԱՆ***— *Համաձայնվիր, որ այլևս իրավունք չունիմ այս տունն այցելելու։*

***ՄԱՐԳԱՐԻՏ***— *Ոչ, ընդհակառակը, պետք է այցելես։ Դու իմ սերը թունավորեցիր, դու էլ պարտավոր ես բժշկել այն։ Այժմ կարող ես հեռանալ, բայց վաղը դու կտաս ինձ բացատրություն։*

***ՕԹԱՐՅԱՆ***— **(Գլուխ է տալիս և արագ քայլերով գնում է նախասենյակ)։**

***ՄԱՐԳԱՐԻՏ***— **(Թույլ քայլերով գնում է դեպի ձախ և, կանգ առնելով, հենվում է դռներին)։**

**Վարագույրն իջնում է հանդարտ**

*պես, քշի հա քշի։ Ալ մաղաղին չը մնաց չըմտանք, ալ պեան չմնաց—չառնի։ Իստեղ միտիկ արա ա, կասես քի յարմուկա յանք սարքելու։*

*ԶԱՐՈՒՀԻ—* (Հետաքրքրված զավաթն ու անձեռոցիկը դրել է ոսկեզօծ աթոռներից մեկի վրա և կապոցները տնտղում է) *Դերիացու, էլի դերիացու, կոուժովներ, էլի կոուժովներ, ղոնթիկ, վեյեր, շալ, պերչաթկաներ, մի դյուժին։ Հապա տեսնեմ ինչպիսի գլխարկ է։*

*ՎԱՐԴԱՆ—* (Թղթարկղը հեռու պահելով) *Հե, հե, հեռի կաննիր, ասալ ա իսկի մարդի ցույց չտաս։ Բերանիդ ջուրը քի քինյա։ Հեարյաս ինքն ա՛լ կյամ ա։*

## Տեսիլ 2

### ՆՈՒՅՆՔ և ՌՈԶԱԼԻԱ

*ՌՈԶԱԼԻԱ—* (Ներս է մտնում ճախասենյակից գլխարկով և վերարկուով) O, mon Dieu, *հոգնեցի։ Ման եկա, ման եկա, հազիվ կարողացա իմ ճաշակով մի քանի բաներ գտնել։ Այն օրից, որ Պարիզը տեսել եմ, էլ այստեղ ոչ մի բան չեմ հավանում։* (Վարդանին) *Հիմա՛ր, ինչո՞ւ ես հատակի վրա գցել։* (Զարուհուն) *Վերցրու, տար իմ սենյակը։ Գլխարկը թող այստեղ։* (Առնում է Վարդանից թղթարկղը և դնում սեղանի վրա)։

*ԶԱՐՈՒՀԻ—* (Վարդանի օգնությամբ կապոցները տանում է խորքի ձախ դռներով և իսկույն վերադառնում են)։

*ՌՈԶԱԼԻԱ—* (Մոտենում է հայելուն և հրճվանքով նայում իրան։ Հետո վերցնում է իր գլխարկը և դնում սեղանի վրա)։

*ԶԱՐՈՒՀԻ—*<br>*ՎԱՐԴԱՆ—* } Սպասում են հրամանի։

*ՌՈԶԱԼԻԱ—* (Բաց է անում թղթարկղը, դուրս է բերում անազին կարմիր փետուրով մի սպիտակ գլխարկ և հիացած նայում) *Հապա մեկ էլ տես-[illegible] լավ է սազում։* (Դնում է գլխին և նայում հայելուն) *Հըմ, օրիորդ Իլյուրյանն ուզում էր ինձ հավատացնել, որ մոդելը միայն իր համար է բերված։ Կարծեմ, վատ չէ, ա՞, Զարուհի։*

*ԶԱՐՈՒՀԻ— Ույ, օրիորդ, ինչպե՜ս է սազում, ինչպե՜ս։*

*ՎԱՐԴԱՆ— Կասես, նուռնի ծաղիկ իլի, յա լալազար։*

*ԶԱՐՈՒՀԻ— Ով գիտե, քան մանեթ եք տվել...*

*ՌՈԶԱԼԻԱ—* (Արհամարհանքով) *Ֆիդո՜ն, հիմա ամեն մի մակլերի աղջիկ էլ քսան մանեթանոց գլխարկ է հագնում։ Պարիզից է բերել տված, արժե հիսուն ռուբլի։*

### ՌՈԶԱԼԻԱ և ՄԱՐԳԱՐԻՏ

*ՄԱՐԳԱՐԻՏ*— (Ներս է մտնում հագնված համեստ, բայց ավելի լավ, քան առաջին արարվածում: Ձեռքին պահած է մի անկազմ գիրք։ Չի կարդում)։

*ՌՈԶԱԼԻԱ*— (Տաղրելով) *Իսկ և իսկ Մարգարիտա—Ֆաուստ օպերայից. գրքույկը ձեռքումդ, համեստ, ամոթխած, պակասում է ճախարակը։ Երանի գիտենայի, ինչ ես գտնում ընթերցանության մեջ։* (Զգվում է գահավորակի վրա)։

*ՄԱՐԳԱՐԻՏ*— *Որտե՞ղ էիր։* (Գիրքը դնում է ձախ կողմի սեղանի վրա և նստում):

*ՌՈԶԱԼԻԱ*— *Օհ, էլ մի հարցնի, հոգնեցի։ Գլխարկս, վերջապես, ստացա։ Հետո կտեսնես, ինչ հիանալի բան է։ Այսօր ծախսեցի մոտ 300 ռուբլի։ Հայրիկը բարկանալու է, բայց ինչ արած, բոլորը հարկավոր բաներ են։*

*ՄԱՐԳԱՐԻՏ*— *Ռոզալիա, մինչև ե՞րբ պիտի այդպես անհաշիվ շռայլես։*

*ՌՈԶԱԼԻԱ*— *Օհո, դու ինձ հանդիմանո՞ւմ ես։*

*ՄԱՐԳԱՐԻՏ*— *Եթե կամենաս—այո, քո շռայլությունն արժանի է հանդիմանության։*

*ՌՈԶԱԼԻԱ*— (Հեգնաբար) *Մի՜թե, ա՜յ, ա՜յ, ա՜յ։ Եթե նախանձում ես ինձ, ինքդ էլ կարող ես շռայլել։ Ի՞նչն է քեզ խանգարում։*

*ՄԱՐԳԱՐԻՏ*— *Երևի, կա մի բան, որ խանգարում է։*

*ՌՈԶԱԼԻԱ*— *Օհո, այսօր դու բավական հետաքրքրական ես։ Ապա, բարեհաճիր ասել, տեսնենք, էլի ի՞նչ է պատահել։ Դեմքդ շատ խորհրդավոր է.*

*ՄԱՐԳԱՐԻՏ*— *Ռոզալիա, հասկացիր, վերջապես, ինչ է կատարվում այս տանը։ Չի կարելի հանգիստ հոգով շռայլել այն փողերը, որոնց վրա ծանրանում է մի մեծ մեղադրանք։* (Վեր է կենում):

*ՌՈԶԱԼԻԱ*— (Վեր է կենում արագությամբ) *Բայց ո՞վ է այդ մեղադրանք դնողը։ Ո՞վ։ Քո Արտաշես Օթարյա՞նը։ Մի կեղտոտ և անամոթ զրպարտի՞չ։*

*ՄԱՐԳԱՐԻՏ*— (Մեղմ հանդիմանությամբ, բայց վրդովված) *Ռոզալիա...*

*ՌՈԶԱԼԻԱ*— *Բավական է, մի համարձակվիր պաշտպանել նրան իմ մոտ։ Քեզանից առաջ ես եմ ճանաչել նրան։ Ես ատում եմ այդ մարդուն։ Ատում եմ հոգուս բոլոր ուժով։ Նա ապերախտ է, ինչպես օձ, որին մեր*

*ես կատաղել իմ դեմ, թշնամանալ ինձ, բայց այդ ոչինչ նշանակություն չի ունենա ինձ համար։* (Հեռանում է)։

*ՄԱՐԳԱՐԻՏ— Ա՜խ, թող ով ինչ ուզում է անի, ինձ համար միևնույնն է։ Ես կլսեմ միայն իմ խղճի ձայնին։ Ես կարծում եմ, որ չի կարող լինել ոչ որդիական և ոչ մի ուրիշ սեր՝ սուտ և խաբեբայության մեջ։*

*ՋԱՐՈՒՀԻ—* (Սեղանատան դռներից) *Նախաճաշը պատրաստ է։*

*ՌՈԶԱԼԻԱ— Գնանք։ Հայրիկն իսկույն կգա։ Դու պարտավոր ես քո հիմարությունները թաքցնել նրանից։*

*ՄԱՐԳԱՐԻՏ— Ես ախորժակ չունեմ։*

*ՌՈԶԱԼԻԱ—* (Ատելությամբ լի մի հայացք ձգելով Մարգարիտի վրա, անցնում է սեղանատուն)։

*ՄԱՐԳԱՐԻՏ—* (Մնում է բեմի ձախ կողմում մտածմունքների մեջ)։

## Տեսիլ 4

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՆԴՐԵԱՍ, ԲԱԳՐԱՏ և ՍԱՂԱԹԵԼ

Վերջին երեքը ներս են մտնում նախասենյակից։

*ԱՆԴՐԵԱՍ— Մի հակառակիր ինձ։ Ինչպես ասում եմ, այնպես էլ պետք է լինի։ Կրակը յուղով չեն հանգցնիլ։*

*ԲԱԳՐԱՏ— Եթե միայն կրակ է։ Դատը մենք կտանենք, քանի որ նա փաստեր չունի։ Թող պահանջի օրենքով։ Երբ քաղաքացիական դատը կվերջացնենք, մեր կողմից կսկսենք նրա դեմ քրեական դատ։ Այս անհրաժեշտ է քո, իմ և մեր ամբողջ գերդաստանի պատվի համար։*

*ԱՆԴՐԵԱՍ— Որ վզովս թոկ գցես, նրա հետ դատի չեմ դուրս գալ։*

*ԲԱԳՐԱՏ— Հայր, մանուկ հասակիցս քեզանից անդադար լսել եմ, որ քո հարստությունը վաստակել ես արդար քրտինքով։*

*ԱՆԴՐԵԱՍ—* (Գրգռվելով) *Ասել եմ, ասել եմ, էլի եմ ասում, բայց դու մի՛ կրկնիր։ Այդ տղան ինձ զրպարտում է, բայց ես էլի ուզում եմ նրա հետ հաշտվել։*

*ԲԱԳՐԱՏ— Չեմ հասկանում, բոլորովին չեմ հասկանում։*

*ԱՆԴՐԵԱՍ— Սաղաթել, գնա, գրասենյակից մի մարդ ուղարկիր, որ շուտով նրան կանչեն այստեղ։*

*ՍԱՂԱԹԵԼ—* (Գնում է նախասենյակի դռներով)։

*ԱՆԴՐԵԱՍ—* (Նոր միայն նկատում է Մարգարիտին, որ ամբողջ ժամանակ, կանգնած ձախ պատի տակ, ուշադիր դիտում է նորը) *Աա, դու*

*գնացեք, ձեր աշխատանքով ապրեցեք։ Այստեղ մտիկ արեք. տեսեք ինչ տուն ու տեղ են սարքել։ Ինչի՞ս է հարկավոր այս ոսկեզօծ կահկարասին։ Ո՞վ եմ ես, ո՞ր խանի կամ իշխանի տղան։ Հե՜, մի նախկին գյադա, պանիր ու հացով ապրած լակոտ։ Ինչո՞ւ եք ինձ քանդում։ Դուք եք մեղավոր, որ Օթարյանը կպել է յախիցս։ Այո, այո, դո՛ւք։ Նա տեսնում է, որ դուք տակնուվրա եք անում իմ հարստությունը, ուզում է ինքն էլ ձեզ պես շռայլել։ Դուք ինձ համար թշնամիներ եք ստեղծում...*

*ՄԱՐԳԱՐԻՏ*— (Հանդարտ լալիս է)։

*ԱՆԴՐԵԱՍ— Լա՛ց, էլի արտասուք։ Հոգիս բերանս բերիք, խեղդեցիք, սպանեցիք։ Հերի՛ք է, հեռացիր. ես ատելով ատում եմ արտասուքը։ Անդրեաս Էլիզբարովի մոտ ոչ լաց եղեք, ոչ ծիծաղեցեք։*

*ՄԱՐԳԱՐԻՏ*— (Բարձր ձայնով հեկեկալով, անցնում է իր սենյակը)։

*ԵՐԱՆՈՒՀԻ— Ինչպես սիրտ արիր նրան վիրավորելու։ Նա աստծու գառն է։*

*ԱՆԴՐԵԱՍ— Աստծու գա՛ռը, հորդ պես։ Ես ատելով ատում եմ աստծու գառներին։ Տվեք ինձ սադայելին. ես նրա հետ ավելի հեշտությամբ կհաշտվիմ, քան աստծու գառների հետ։ Գնացե՛ք, ի՞նչ եք ագռավների պես գլխիս հավաքվել, ինձ խոմ չեք թաղում, ինձ ուզում են միայն կողոպտել, տկլորել, փողոցները ձգել։ Գոնե դուք խնայեցեք ինձ։ Դեհ, կորեք. հա՛յդա։* (Նստում է աջ կողմի բազկաթոռներից մեկի վրա)։

*ԵՐԱՆՈՒՀԻ—*<br>*ԲԱԳՐԱՏ—* } Անցնում են սեղանատուն։

*ՌՈԶԱԼԻԱ*— (Մնում է բեմի վրա)։

## Տեսիլ 6

### ԱՆԴՐԵԱՍ և ՌՈԶԱԼԻԱ

*ԱՆԴՐԵԱՍ*— (Նստած է խորին մտածողության մեջ և տանջվում է)։

*ՌՈԶԱԼԻԱ*— (Ուզում է մոտենալ ու խոսել, բայց չի վստահանում)։

*ԱՆԴՐԵԱՍ*— (Հառաչում է, ձեռը զարնելով սեղանի) *Ա՜հ...*

*ՌՈԶԱԼԻԱ— Հայրիկ, ի՞նչն է քեզ այդպես տանջում։*

*ԱՆԴՐԵԱՍ*— (Գլուխը բարձրացնելով, անտարբեր)։ *Քո բանը չէ։*

*ՌՈԶԱԼԻԱ— Ներիր, հայրիկ, քո հոգսերը վերաբերում են և քո՛ զավակներին։*

*ԱՆԴՐԵԱՍ*— (Դարձյալ անտարբեր)։ *Ես հոգս չունիմ։* (Ներվային ու արագությամբ ոտքի կանգնելով) *Բան ունի՞ս ասելու։*

ՌՈԶԱԼԻԱ— (Դուրս է գալիս անմիջապես Ֆրոշ հետևից, Ֆանի մի վայրկյան կանգ է առնում, նայում է և անցնում սեղանատուն, դռները ծածկելով):

ԱՆԴՐԵԱՍ— *Առաջ եկ, լակոտ աղջիկ։ Հայրը որդու վրա չի՞ կարող բարկանալ, ինչ է։ Հե՞․ բաս ի՞նչ կանեիք դուք, երես առածներ, եթե մեր ծնողների պես ծնողներ ունենայիք։ Հայրս վզակոթիս որ տալիս էր— աչքերիցս պեծեր էին թռչում։ Դե լավ, բա՛ց արա աչքունքդ, ծնողի դեմ ոխ չեն պահի։*

ՄԱՐԳԱՐԻՏ— *Հայրիկ, ես քո դեմ ոխ չունիմ։*

ԱՆԴՐԵԱՍ— *Այ, օրհնյալ լինես, աղջիկս։ Ես գիտեմ, որ դու բարի սիրտ ունիս, դեհ, արի հաշտվենք։* (Մոտենում է և ճակատը համբուրում) *Բայց ես էլի քեզ վրա բարկացած եմ։ Գիտես ինչ, աղջիկս, դու հորդ հետ անկեղծ չես։*

ՄԱՐԳԱՐԻՏ— (Զարմացած նայում է հորը) *Անկե՛ղծ...*

ԱՆԴՐԵԱՍ— *Ինչո՞ւ ես զարմանում։*

ՄԱՐԳԱՐԻՏ— *Հայր, առաջին անգամն եմ ես քեզանից այդպիսի բան լսում։ Դու երբեք ինձ արժանի չես համարել այդ տեսակ խոսակցության։*

ԱՆԴՐԵԱՍ— *Որովհետև դու ինքդ քեզ հեռու ես պահում ինձանից։ Դու, երևի, մտածում ես, էհ, իմ հայրը մի ագահ և խորամանկ վաճառական է, չարժե, որ սիրտս բաց անեմ նրա առաջ։*

ՄԱՐԳԱՐԻՏ— *Ոչ, հայրիկ, սխալվում ես, հավատացնում եմ քեզ։ Ես միշտ պատրաստ եմ եղել քեզ հայտնել իմ բոլոր մտածմունքները, ամենայն անկեղծությամբ, միայն թե արժանի համարեիր ինձ լսելու։ Բայց դու... դու միշտ սանձահարել ես իմ լեզուն քո մռայլ բնավորությամբ։*

ԱՆԴՐԵԱՍ— (Ուրախ ձևանալով) *Այո՞։ Ապրես զավակս։ Դե, որ այդպես է, ասա ինձ, ինչո՞ւ այս քանի օրերս տխուր ես։*

ՄԱՐԳԱՐԻՏ— (Շփոթվելով) *Չգիտեմ... ես... տխուր չեմ։*

ԱՆԴՐԵԱՍ— *Այ, տեսա՞ր։ Դու կեղծել չես սիրում, բայց հիմա կեղծեցիր։ Ուզո՞ւմ ես, որ քո տեղ ես պատասխանեմ։ Դու տխուր ես, որովհետև վերջերս քեզ հավատացրել են, թե քո հայրն ազնիվ մարդ չէ։*

ՄԱՐԳԱՐԻՏ— *Հայրի՛կ...*

ԱՆԴՐԵԱՍ— *Այո, սիրելիս, դու ինձանից թաքցնել չես կարող։ Ես մարդու մի շարժումից կարող եմ իմանալ, թե նա ինչ է մտածում իմ մասին։ Հապա, պատմիր, տեսնեմ, ինչեր է ասել քեզ իմ մասին քո սիրած երիտասարդը...*

ՄԱՐԳԱՐԻՏ— (Բոլորովին շփոթվում է ու կարմրում):

ԱՆԴՐԵԱՍ— *Լա՛վ, մի ամաչիր։ Բոլորը հայտնի է ինձ։ Մի՛ վախենար, չեմ բարկանում։ Ես Արտաշեսին վատ տղա չեմ համարում։ Եթե*

# Տեսիլ 8

## ՍՈՒՐԵՆ և ՍԱՂԱԹԵԼ

*ՍՈՒՐԵՆ— Այո, քեռի, երևակայել չես կարող, թե ինչքան ծիծաղելի էր Աբուլովը, քաղաքի առաջին քեֆ անողն և ամենից շատ ծախսողը, հան-կարծ մնում է թատրոնի դռների մոտ քիթը քաշ։ Իսկ քո քրոջ որդին բռնում է գեղեցկուհի Աղավնայի թևից և կառք նստեցնում։*

*ՍԱՂԱԹԵԼ— Ամոթ չլինի հարցնելը— այդ ի՞նչ պարծենալու բան է։*

*ՍՈՒՐԵՆ—* (Ոգևորված շարունակելով) *Ամենքի ուշադրությունը մեզ վրա է, բոլորը նայում են նախանձով։ Աբուլովի աչքերից կրակ է թափ-վում։ Կրակոտ Ալի-Բաբան կառքը թռցնում է, մեզ կայծակի արագու-թյամբ բերում է Գրանդհոթել։ Ծառաները ձեռքի ոտքի են ընկել։ Սեղանը պատրաստ է։ Հյուրերը սպասում են․․*

*ՍԱՂԱԹԵԼ— Ամոթ չլինի հարցնելը— ի՞նչ հյուրեր։*

*ՍՈՒՐԵՆ— Ինձ նման գարդիմաններ։ Մեզ ծափահարում են։ Կառ-քից ծառաները բերում են թատրոնում ստացված փունջերը—կեսն իմ նվիրածն է։ Աղավնան հիացած է նվերներից։ Երբեք այդպիսի բենեֆիս չի ունեցել։ Հետո ի՞նչ քեֆ, ի՞նչ քեֆ։ Շամպանիան ջրի պես է հոսում։ Խմում եմ Աղավնայի կենացը, հետո իմը։ Մեկ, երկու, երեք, հանկարծ ես սեղանի [illegible] եմ։ Կծում եմ Աղավնայի ոտը։ Նա, ծիծաղելով ու ծվվալով, նայում է ներքև։ Ոտքի եմ կանգնում գեղեցկուհու կոշիկը ձեռքիս, լցնում եմ շամ-պանիայով և խմում եմ նրա կենացը։ Ոգևորությունն անասելի է։ Աղ-ավան սքանչացած է, ասում է, առաջին անգամն եմ տեսնում ձեզ նման երկրպագու գեղարվեստի։ Ահ,* շարժանտ մերվեյլ… *Կին չէ, այլ դիցուհի…* (Ձեռք զարկելով Սաղաթելի ուսին) *Այժմ, քեռի, նրա սիրտն իմն է ամ-բողջովին։* (Ձեռք զարկելով Սաղաթելի փորին) *Կկամենա՞ս, ծանոթացնեմ, [illegible], տաքինի Բաղդասար…*

*ՍԱՂԱԹԵԼ— Գնա բանիդ է։ Դու ինձ այն ասա, ի՞նչ նստեց այդ քեֆը։*

*ՍՈՒՐԵՆ— Համեմատաբար, ոչինչ, դատարկ բան— վեց հարյուր ռուբլի։*

*ՍԱՂԱԹԵԼ—* (Զարմացումից հետ թռչելով) *Փա՞հ, քո տունը չքանդ-վի [illegible].*

*ՍՈՒՐԵՆ— Կծեց, հա՞։*

*ՍԱՂԱԹԵԼ— Վեց հարյուր մանե՞թ, մի գիշերո՞ւմ։ Դե լավ, ամոթ չլինի [illegible] ե՞րբ ես վեքսելներս այնա անելու։*

*ՍՈՒՐԵՆ— Երբ որ պայմանավորված ժամանակը կգա, այնա կանեմ։*

ապրակ Վարդանին էլ կարմիր չերքեզի է հագցրել ու առաջքը նստացրել։ Հերիք չէ, որ անունդ Գյուլում է, փոխել ես Ռոզալիայի, հիմա էլ իշխանուհու շիկ ես բանեցնում։ Հե՞ն, զալլաք էլիզբարի թոռ։ Թողեք, աստված սիրեք, ամենքդ ինձ համար ծիծաղելի եք, բացի խղճալի մայրիկից։

ՄԱՐԳԱՐԻՏ— Դուրս է գալիս ծոր սենյակից։

ՍՈՒՐԵՆ— Եթե ձեր մեջ կա մեկը, որ կարող է ինձ նախատել, ահա սա է։ (Ցույց է տալիս Մարգարիտին)։

## Տեսիլ 10

### ՆՈՒՅՆՔ և ՄԱՐԳԱՐԻՏ

ՌՈԶԱԼԻԱ— Ինչ ասել կուզի, երևելի ռեկոմենդասիոն է։

ՍՈՒՐԵՆ— (Կծու) Համենայն դեպս, արժե Օթարյանի համակրանքից զրկվելուն։

ՌՈԶԱԼԻԱ— Մայրիկ, զսպի՛ր նրան։ Նա ինձ վիրավորում է։ (Սուրենին) Սուտ է, նա ինքն է զրկվել իմ համակրանքից։

ՍՈՒՐԵՆ— Այո, այն օրից, երբ զգացել ես, որ դու չես նրա հավանելին։ Իսկ առա՞ջ, երբ ուսանող է՞ր։ Քիչ էր մնում նրա անունով մոմ վառեիր։ Այս այնքան ճիշտ է, որքան այն, որ այս րոպեիս իմ գրպաններում մեծ դատարկություն կա։ (Հաղար) Ո՞րտեղ է հայրիկը։

ԲԱԳՐԱՏ— Քո բանը չէ։

ՍՈՒՐԵՆ— Հե, թաքցրեք ինձանից, բայց ես ամեն բան գիտեմ. գայլը թակարդ է ընկել, իր թաթերն է կրծոտում։

ԲԱԳՐԱՏ— Կարծեմ, դու սկսում ես չափից անցնել։

ՌՈԶԱԼԻԱ— Նա հարբած է, չարժե հետը խոսել։

ՆՐԱՆՈՒՇԻ— Գժվել է։

ՍՈՒՐԵՆ— Էհ, ի՞նչ եք ամեն կողմից պաշտած մտիկ անում։ Ամբողջ քաղաքն է խոսում։ Պետք է բամբասանքներին վերջ տալ։ Երկուսից մեկը կամ Օթարյանը ճշմարիտն է ասում, կամ զրպարտում է։ Եթե զրպարտում է, պետք է պատժել։ (Բագրատին) Աա՞, վախենո՞ւմ ես, դողո՞ւմ ես, ապտարանո՞վ ես սպառնում։

ԲԱԳՐԱՏ— (Վիրավորված և վրդովված) Վախկոտը նա է, որ մի կնոջ պատճառով ապտակ է ստանում և կուլ տալիս։

ՍՈՒՐԵՆ— Ձայնդ կտրիր, շուն։ (Հարձակվում է վրեն)։

ՆՐԱՆՈՒՇԻ— (Ընկնում է որդիների մեջ) Ամոթ, տեր աստված։

ՄԱՐԳԱՐԻՏ— Աստված իմ, և սա ընտանիք է...

ԵՐԱՆՈՒՀԻ— (Որ նստել է աջ կողմի բազկաթոռներից մեկի վրա) Ոչինչ, որդի, մի՛ նեղանար։ Այստեղ մի փոքրիկ ընտանեկան խռովություն պատահեց։ Ռոզալիան վշտացած է։

ՕԹԱՐՅԱՆ— Եթե ես որևէ բանով մեղավոր եմ նրա առջև, պատրաստ եմ ներումն խնդրել։

ԵՐԱՆՈՒՀԻ— էհ, ուշադրություն մի՛ դարձրու, երեխա է, չի հասկանում։ Նստի՛ր, ինչպե՞ս է մայրդ

ՕԹԱՐՅԱՆ— (Զսպելով իրեն) Շնորհակալ եմ, մայրիկ, դուք շատ բարի եք դեպի մեզ։

ԵՐԱՆՈՒՀԻ— Ես քեզ սիրում եմ հարազատ որդուս պես։ Ուրախ եմ, որ մեծացել ես և օրինավոր մարդ դարձել։ Լսել եմ, որ քո և իմ մարդու մեջ ինչ-որ վեճ է բացվել։ Այդ ինձ շատ է ցավեցնում, որդի, շա՜տ...

ՕԹԱՐՅԱՆ— Մայրիկ, ինչ էլ որ պատահի, իմ սերն ու հարգանքը դեպի ձեզ չի պակասի։ Դուք բարձր եք բոլոր վեճերից։

ԵՐԱՆՈՒՀԻ— էհ, օրհնյալ լինես։ Իմ ցանկությունն էլ այն է, որ բարեկամ մարդիկ հաշտ ապրեն, փողի համար չմոռանան աստծուն։

ՋԱՐՈՒՀԻ— (Գալիս է օրիորդների սենյակից՝ սեղանատուն անցնելու) Տիրուհի, օրիորդը ձեզ խնդրում է։ (Անցնում է սեղանատուն և իսկույն բեմով վերադառնում է օրիորդների սենյակը՝ ձեռքին մի գրաֆին ջուր և դատարկ բաժակ):

ԵՐԱՆՈՒՀԻ— էհ, էլի երևի հիստերիկան սկսվեց։ (Շտապով գնում է օրիորդների սենյակը):

## Տեսիլ 18

### ՄԱՐԳԱՐԻՏ և ՕԹԱՐՅԱՆ

ՕԹԱՐՅԱՆ— (Անհամբեր մոտենալով Մարգարտին) Ի՞նչ է պատահել այստեղ, ասա՛։

ՄԱՐԳԱՐԻՏ— Սովորական խռովություն։ Սուրենն ընդհարվեց Ռոզալիայի և Բագրատի հետ ու միմյանց վիրավորեցին։

ՕԹԱՐՅԱՆ— Բայց ե՞ս ինչով եմ մեղավոր, որ քույրդ ինձ անպատվեց։

ՄԱՐԳԱՐԻՏ— Ներողամիտ եղիր, Ռոզալիան չգիտե իրան զսպել։ Ես համոզված եմ, որ հետո ինքը կզղջա։ (Ջարուհին, որ այդ միջոցին, օրիորդների սենյակից դուրս գալով, գրաֆինն ու բաժակը ձեռքին անցնում է սեղանատուն) Ինչպե՞ս է։

*ՕԹԱՐՅԱՆ— Շատ լավ, ես քեզ դուրս կբերեմ այդ երկգիմի դրու-թյունից։*

*ՄԱՐԳԱՐԻՏ— Այո, այո, դուրս բեր։*

*ՕԹԱՐՅԱՆ— Կներկայացնեմ քեզ իմ բոլոր ապացույցները։*

*ՄԱՐԳԱՐԻՏ— Ես հենց այդ մասին էի ուզում քեզ խնդրել։*

*ՕԹԱՐՅԱՆ— Թող այդպես լինի։ Ինձ համար քեզանից ավելի մեծ դատավոր չի կարող լինել։ Բավական է, որ դու, միայն դու, ասես եղբորդ, թե ես ձրիակեր չեմ եղել, և ես պատրաստ եմ հրաժարվել իմ ժառանգու-թյունից։ Ես կարող էի դատարանի դիմել, բայց այդ չեմ անում միայն քո պատճառով։ Ուրեմն դու եղիր մեր դատավորը։*

*ՄԱՐԳԱՐԻՏ— Շնորհակալ եմ, անչափ շնորհակալ։ Եվ հավատա, որ ես կլինեմ արդար դատավոր։*

*ՕԹԱՐՅԱՆ—* **(Թեթև ցնցումով)** *Ահ, հենց այդ է, որ ինձ սարսափեց-նում է։*

*ՄԱՐԳԱՐԻՏ— Ինչո՞ւ...*

*ՕԹԱՐՅԱՆ— Մարգարիտ, տո՛ւր ինձ խոսք, որ երբ ճշմարտությունը կպարզվի քեզ համար—չես ընկճվիլ նրա դաժանությունից։*

*ՄԱՐԳԱՐԻՏ— Մի՛ առաջարկիր ինձ ոչ մի պայման։ Դու ինքդ ես ինձ սովորեցրել ճշմարտությունը ամեն բանից գերադասել։ Բե՛ր այդ թղթե-րը, ես ուզում եմ վերջին կասկածը հեռացնել իմ սրտից։ Եվ չեմ թաքց-նում, որ ում կողմ էլ լինի արդարությունը—ինձ է կործանելու, որովհետև անդունդը ում որ բացվի—իմ և հորս մեջ, թե՛ իմ և քո մեջ—ես եմ գլոր-վելու այնտեղ։ Բե՛ր այդ թղթերը. ես պահանջում եմ սիրող կնոջ իրա-վունքով։*

*ՕԹԱՐՅԱՆ—* **(Մինչ Մարգարիտն արտասանում է իր խոսքերը, Օթար-յանը տանջվում է և կռվում իր հետ: Երբ Մարգարիտը վերջացնում է, լռու-թյուն)** *Շատ լավ, ես կբերեմ։* **(Վեր է կենում):**

*ՄԱՐԳԱՐԻՏ— Հենց այսօր։*

*ՕԹԱՐՅԱՆ— Մի քանի րոպեից հետո ես այստեղ կլինեմ։* **(Գնում է նախասենյակի դռներով):**

*ՄԱՐԳԱՐԻՏ—* **(Ուղեկցում է նրան մինչև դռները, ապա գալիս է բեմի կենտրոնը):**

## Տեսիլ 14

### ՄԱՐԳԱՐԻՏ և ՍՈՒՐԵՆ

*ՍՈՒՐԵՆ—* **(Ներս է մտնում ձախ դռներից)** *Չկարողացա քնել։ Հան-գիստ չեմ։ Մարդու հոգեկան տրամադրությունը զարմանալի [illegible]*

*ՄԱՐԳԱՐԻՏ*— *Իր սենյակում։*

*ՍՈԻՐԵՆ*— *Նա փող կունենա։* (Դիմում է դեպի խորքի ձախ դռները)

*ՄԱՐԳԱՐԻՏ*— *Այդքան վիրավորելուց հետո ուզում ես դիմել նրա՞ն։*

*ՍՈԻՐԵՆ*— (Կանգ է առնում) *Այո՛, այդ դատարկ բան է։ Նա գիտե, որ իմ սիրտը բարի է, լեզուս է միայն չար։ Կհաշտվենք, դժվար չի։ Մի քիչ կշոյեմ, կգովեմ գեղեցկությունը, իսկույն կկակղի։*

Мрачная душа моя,

рвется она вдаль..

(Երգելով անցնում է օրիորդների սենյակը):

## Տեսիլ 15

ՄԱՐԳԱՐԻՏ և ՕԹԱՐՅԱՆ, հետո ԱՆԴՐԵԱՍ

*ՕԹԱՐՅԱՆ*— (Ներս է մտնում նախասենյակից, այս անգամ վերարկուով) *Ահա, սիրելիս, բոլորը։* (Տալիս է մի ծրար) *Այստեղ է իմ պատիվը, ինքնասիրությունը և ամբողջ կարողությունը։*

*ՄԱՐԳԱՐԻՏ*— *Շնորհակալ եմ, դու մեծ հավատ ես ընծայում ինձ։*

*ՕԹԱՐՅԱՆ*— *Այս տեսակ հավատը քո շորժնական երբայրն անշուշտ կհամարի հիմարություն։ Սակայն, այդ ինձ համար նշանակություն չունի։ Ես սիրում եմ քեզ, ուրեմն և պետք է հավատամ։*

*ՄԱՐԳԱՐԻՏ*— *Որքա՛ն բարի ես դու և վեհանձն, Արտաշես։*

*ՕԹԱՐՅԱՆ*— *Միայն քո սիրո համար։* (Համբուրում է):

*ՄԱՐԳԱՐԻՏ*— *Վաղը կամ մյուս օրը դու բոլորը հետ կստանաս, թող իմ խոսքը քեզ համար գրավական լինի։*

*ՕԹԱՐՅԱՆ*— *Բավական է այդքանը։ Ցտեսություն։*

*ՄԱՐԳԱՐԻՏ*— *Ցտեսություն։* (Ուղեկցում է նրան մինչև նախասենյակի դռները).

*ԱՆԴՐԵԱՍ*— (Երևում է իր սենյակի դռների մեջ):

*ՄԱՐԳԱՐԻՏ*— (Վերադառնում է բեմի կենտրոնը և ուզում է գնալ իր սենյակը):

*ԱՆԴՐԵԱՍ*— (Իբր թե Օթարյանին չի նկատել) *Այն ո՞վ էր։*

*ՄԱՐԳԱՐԻՏ*— *Ահա, հայրիկ, ամեն ինչ այստեղ է։ Այժմ ես կիմանամ ով է ձեզնից արդարը և մեղավորը։*

*ԱՆԴՐԵԱՍ*— *Ապրի՛ս, զավակս։ Քննիր և տես։* (Համբուրում է նակատը).

(Գնում են յուրաքանչյուրը իր սենյակը):

*տեղ չես տեսնիլ ոչ պորտֆելի և ոչ ռուբլու հերոսներին, այսինքն՝ ոչ իրավաբաններին և ոչ բժիշկներին։*

ՄԱՐԳԱՐԻՏ— *Ինչպես երևում է, շատ մեծ կարծիք ունես քո մասնագիտության մասին։*

ԲԱԳՐԱՏ— *Եռանդի, խելքի և ժամանակիս իսկական ներկայացուցիչներն ինժեներներն են։ Կգա՞ս, թե չէ։*

ՄԱՐԳԱՐԻՏ— *Ես տրամադրություն չունեմ երեկույթ գնալու։*

ԲԱԳՐԱՏ— *Զզվեցի սկզբից ևեթ այդ խոսքը—տրամադրություն։ Մարդուս իրանից է կախված այսպես կամ այնպես տրամադրել իրան։ ԱՀ, այս անիծվածը չի կապվում։*

ՄԱՐԳԱՐԻՏ— (Մոտենում է, օգնում փողկապը կապելու) *Քեզ համար հեշտ է այդ ասել։ Դու հաշտվում ես կյանքի բոլոր հանգամանքների հետ։*

ԲԱԳՐԱՏ— *Եթե, իհարկե, հանգամանքներն արժանի չեն դիմադրության։ Հակառակ դեպքում գիտեմ առողջ դատողությամբ կռվել նրանց դեմ։* (Մարգարիտն ուղղել է Բագրատի փողկապը) *Շնորհակալ եմ։* (Նայելով եղունգներին) *Գիտես, սիրելիս, մեր ժամանակի միակ դերիշխանը բանականությունն է։ Այս տեսակետից ես չեմ կարող արդարացնել վերջին ժամանակվա քո տխրությունը, որ արդեն սկսել է բողոքի ձև ստանալ։*

ՄԱՐԳԱՐԻՏ— *Կկամենայի ես էլ ուրախ լինել քրոջս պես, թռչկոտել, ինչպես անհոգ թռչուն։ Կկամենայի ոչնչի մասին չմտածել, բացի իմ անձնական զվարճություններից։ Բայց, ի՞նչ արած, չեմ կարող։* (Հառաչելով, արմունկները հենում է դաշնամուրին):

ԲԱԳՐԱՏ— (Հեգնաբար) *Սիրահարվա՞ծ ես, տանջվում ես մի անջուգական երիտասարդի, մի աննման իդեալիստի համար։* (Լուռ) *Բավակա՞ն է, Մարգարիտ. Ես չունիմ իրավունք քեզ հանդիմանելու, բայց այլևս լռել չեմ կարող։ Բավակա՞ն է։ Թող երեխայությունը։ Դու չափահաս օրիորդ ես, պետք է հասկանաս, որ չունիս իրավունք սիրելու քո հարազատ ծնողի գրպարտչին։*

ՄԱՐԳԱՐԻՏ— (Գլուխը բարձրացնելով) *Իսկ եթե նա գրպարտիչ չէ, այն ժամանա՞կ։*

ԲԱԳՐԱՏ— *Դու համոզվա՞ծ ես։*

ՄԱՐԳԱՐԻՏ— (Իրականապես և եռանդով) *Ավելի քան համոզված եմ։*

ԲԱԳՐԱՏ— *Քույր, ինձ թվում է, որ քո ուղեղը սկսում է խանգարվել։ Տիմար սիրո զգացումը հարբեցրել է քեզ։ Եթե այդպես շարունակես, ես քեզ էլ կատեմ, ինչպես ատում եմ նրան։*

## Տեսիլ 2

### ԱՆԴՐԵԱՍ և ՍԱՂԱԹԵԼ

*Գալիս են նախասենյակից*

*ԱՆԴՐԵԱՍ— Նա աղջիկ չէ ինձ համար, դատավոր է։ Ամբողջ գիշեր աչքերս չեմ փակել, ամբողջ օրը տանջվել եմ։ Ես կարծում էի, որ այդ թղթերը կորած են։ Էհ, ասում էի, կնիկ է խելքը բան չի կտրիլ։ Ք՞իչ է պատահել, որ կանայք իրանց մարդուց մնացած հարկավոր թղթերն այրել են։ Բայց այդ մեկը հիմարներից չի եղել. պահել է, որ այսօր որդին գլխիս փորձանք բերի։ Նա չի խնդրում, Սաղաթել, այլ, հոգեհանի պես պահանջում է, որ վիզս ծռեմ այդ լակոտի առջև, մեղա գամ և տամ նրան կարողությանս կեսը։*

*ՍԱՂԱԹԵԼ— Դու ինքդ աչքովդ տեսա՞ր այդ թղթերը։*

*ԱՆԴՐԵԱՍ— Տեսա, բաս չէ՞։ Նա ցույց տվեց մոր մոտ։ Կանգնեց հեռվում, մեկ-մեկ կարդաց, հիշեցրեց բոլորը և հետո իսկույն ծալեց իր գրասեղանի մեջ։*

*ՍԱՂԱԹԵԼ— Իհարկե, մայրն էլ պակասը լրացրեց, պատմելով աղջկան իր գիտեցածը։*

*ԱՆԴՐԵԱՍ— Օ՜օ, քույրդ սատանա պատիժն է իմ գլխին։ Ինձ պատասխանելու տեղ, ավելի խայտառակեց աղջկա մոտ։ Ես կատաղեցի, հարձակվեցի վրեն, որ տեղնուտեղը խեղդեմ նրան։ Բարեբախտաբար, Մարգարիտը ժամանակին մեջ ընկավ, չթողեց։ Նա փաթաթվեց մոր վզին։ Պետք է տեսնեիր, ինչպես էր լաց լինում։ Դիակիս վրա էլ նա այնքան արտասուք չի թափիլ։ Եվ հետո, երբ ուշքի եկավ, ի՜նչ խոսքեր, տե՜ր աստված, ի՜նչ լեզու։ Հայրիկ, ասում է, մոլորվել կարելի է, բայց պետք է զղջալ, չզղջալն ավելի մեծ անազնվություն է։ Ումի՞ց է սովորել այդ բաները։*

*ՍԱՂԱԹԵԼ— Ումի՞ց։ Իհարկե, հենց այդ լակոտից։ Դեռ աստված գիտե էլի ինչեր սովորեցրած կլինի։*

*ԱՆԴՐԵԱՍ— Փորձեցի ինձ արդարացնել։ Ասացի, ընկերս մեռնելիս սափերը գին չունեին, եկամուտ չէին բերում, ի՞նչ կարող էի տալ որբերին։ Ասացի, հետո են թանկացել, իհարկե, իմ բախտից, որովհետև եթե հանգուցյալը բախտ ունենար—չէր մեռնիլ։ Բայց ես խոմ իմ ընկերոջ որբերին չեմ մոռացել։ Ես օգնել եմ, հիմա էլ ուզում եմ օգնել, միշտ կօգնեմ, ձեռք կմեկնեմ։ Ոչ, ասում է, դու պարտավոր ես տալ նրանց բոլորը, ինչ որ*

## Տեսիլ 8

### ՄԱՐԳԱՐԻՏ, ԲԱԳՐԱՏ և ՌՈԶԱԼԻԱ

Դուրս են գալիս միաժամանակ օրիորդների սենյակից

ԲԱԳՐԱՏ— (Հուզվել է) *Բոլոր կասկածներս փարատվեցին, վտանգն անխուսափելի է։*

ՌՈԶԱԼԻԱ— (Հագնվել է պարահանդեսի համար: Ձեռնոցներն է հագնում) *Ես էլ ասում եմ քույրս երեկ ինչ թղթեր էր քրքրում և ինձ տեսնելիս թաքցնում։ Ինչ ասել կուզի, երևելի սիրահարական նամակներ են — պայմանագրեր, առևտրական թղթեր, ֆի՜։* (Մոտենում է հայելուն և դիտում իրան):

ԲԱԳՐԱՏ— (Մտազբաղ, ձեռները մեջքին դրած, անցել է բեմի աջ կողմը) *Ասա՛ ինձ, Մարգարիտ, կարո՞ղ ես այդ թղթերը մի քանի օր պահել մոտդ։*

ՄԱՐԳԱՐԻՏ— *Ոչ։*

ԲԱԳՐԱՏ— *Ինչո՞ւ։*

ՄԱՐԳԱՐԻՏ— *Ես խոսք եմ տվել վաղը վերադարձնել նրան։*

ԲԱԳՐԱՏ— *Ես կարծում եմ, նախքան վերադարձնելը, հարկավոր է մի լավ մտածել։*

ՄԱՐԳԱՐԻՏ— *Ի՞նչ ես ուզում ինձանից, պարզ ասա։*

ԲԱԳՐԱՏ— (Տատանվելով) *Ինձ թվում է, որ խելացի բան չէ մի այսպիսի զենք վերադարձնել մեր հակառակորդին։*

ՄԱՐԳԱՐԻՏ— *Ի՞նչ. ուրեմն, դու պահանջում ես, որ ես...*

ԲԱԳՐԱՏ— (Սառը) *Որ դու այդ թղթերը չտաս Օթարյանին։*

ՄԱՐԳԱՐԻՏ— (Վրդովվելով) *Ուրեմն դո՞ւ... Ամաչիր կրծքիդ նշանից, Բագրատ։*

ԲԱԳՐԱՏ— (Գրգռվելով) *Էհ, թո՛ղ այդ դատարկ ֆրազները, ի սեր աստծու։ Ես գիտեմ, որ այդ պարոնը քո գլուխը մտցրել է մի քանի վայրիվերո մտքեր։ Բայց մենք ասպետների դարում չենք ապրում։*

ՄԱՐԳԱՐԻՏ— (Դառն հեգնությամբ) *Կարծես, մեծ ասպետություն է տարրական ազնվություն, հասարակ մարդկային խիղճ ունենալը։*

ԲԱԳՐԱՏ— *Խղճի և ազնվության մասին ամեն մարդ իր գաղափարն ունի։ Էականն այն է, որ եթե այդ թղթերն անցնեն Օթարյանի ձեռքը, ես կզրկվեմ իմ գործարանից։ Իսկ այդ կնշանակե՝ ծովը նետել իմ բոլոր ծրագիրները։ Դու շատ լավ գիտես, որ ես այդ գործարանով հիմք եմ դնում իմ ապագա ուժին, ազդեցությանը և բախտավորությանը։ Ես ուզում*

**ԲԱԳՐԱՏ**— (Նույն մեղմ տոնով) *Գոնե վաղը մի՛ հանձնիր։ Սպասիր մի քանի օր, միասին խորհրդակցենք։ Դու խելոք ես, չես կամենալ մեզ մեր թշնամու ձեռքը գցել։*

**ՄԱՐԳԱՐԻՏ**— *Ահա մեր մայրը, թողեք, տեսնենք, նա ինչ է ասում։*

## Տեսիլ 4

ՆՈՒՅՆՔ, ԵՐԱՆՈՒՀԻ, հետո ԶԱՐՈՒՀԻ

**ԵՐԱՆՈՒՀԻ**— (Առաջ է գալիս, ձեռքերը ծոցը դրած, տխուր) *Այսքան տարի այդ մարդու արարքները թաքցրի երեխաներիցս, աստծուն է հայտնի ինչ տանջանքներով։ Գիշեր-ցերեկ մտածել եմ այդ բանի մասին։ Ժամանակ-ժամանակ բերան եմ բաց արել խոսելու, խոսքս կարել է զոռոցով։ Լռել եմ ու կրակս ներսումս պահել։*

**ՄԱՐԳԱՐԻՏ**— *Լսո՞ւմ եք։*

**ԲԱԳՐԱՏ**— *Մայրիկ, դու շատ ես լարված հայրիկի դեմ։*

**ԵՐԱՆՈՒՀԻ**— (Տրտմությամբ) *Սուս, դու ոչինչ չգիտես։ Հայրդ իր հոգին ծախել է սադայելին։ Երեկ գիշեր երազումս տեսա հանգուցյալին։ Կանգնած էր մեր դռների մոտ, վիզը ծուռ, ձեռքը ծոցը դրած, դեղնած, մաշված։ Նա ասում էր. «Երանուհի, դու խոմ գիտես, որ մենք եղբայրներ ենք եղել, միասին ենք աշխատել այդ հարստությունը, ինչո՞ւ ես թողնում, որ նա երեխաներիս զրկի մի կտոր հացից»։ Ա՜խ, շատ եմ ուզեցել չթողնել, բայց ո՞վ է ինձ լսել։ Բագրատ, Բագրատ, ինը տարի է այդ մարդը գերեզմանից անիծում է մեզ։*

**ԲԱԳՐԱՏ**— (Գրգռված) *Մեռելների անեծքի վրա երկու արշին հող է ծանրանում։*

**ԵՐԱՆՈՒՀԻ**— *Ախ, մի՛ խոսիր եղբորս պես, մեղք է։ Մենք ամենքս պարտական ենք ահեղ դատաստանի առաջ։ Ես էլ եմ պատասխանատու, որ չեմ կարողացել հորդ հեռացնել չար ճանապարհից։ Ես դողում եմ սարսափից։*

**ՄԱՐԳԱՐԻՏ**— (Հազիվ կարողանալով հուզմունքը զսպել) *Ոչինչ, մայրիկ, հանգստացի՛ր։ Հայրիկը բարի է, խելոք է, նա իր սխալը կուղղի։*

**ԵՐԱՆՈՒՀԻ**— (Ձեռքով հուսահատական շարժում է անում) *Է՜հ, որ մեկը...*

**ԶԱՐՈՒՀԻ**— (Ներս է մտնում սեղանատնից) *Կլուբից ձեզ տելեֆոնով խնդրում են։*

**ԲԱԳՐԱՏ**— *Ա՜հ, այդ երեկույթն էլ։ Ես մոռացա, որ կարգադրիչ եմ։*

*ՄԱՐԳԱՐԻՏ*— *Շնորհակալ եմ։*

*ՍՈՒՐԵՆ*— *Սրանով էլ վերջացավ մեր բանակցությունը։ Այժմ լսեցեք իմ կարծիքը. ախար,* черт его дери, *ես էլ ընտանիքի անդամ եմ։ Եթե ապացուցված է, որ մեր հայրը զրկել է Օթարյանին, ամենքս պարտավոր ենք պահանջել, որ նա զրկվածներին բավարարություն տա։*

*ՄԱՐԳԱՐԻՏ*— *Մայրիկ, լսո՞ւմ ես ինչ է ասում։*

*ՍՈՒՐԵՆ*— *Էհ, ի՛նչ ես մայրիկին խոսեցնում իմ մասին։ Նա ինձ վրա խաչ է գրել։ Ես շաղատան եմ, փչացած։ Բայց թող հայտնի լինի ձեզ, որ շուտով կհրաժարվեմ իմ բաժին ժառանգությունից, քան կհամաձայնվեմ, որ մարդիկ երեսիս ասեն. «Դու կողոպտիչի որդի ես»։ Այս մեկն արդեն վճռված է և ստորագրված։* (Սիգար է վառում):

*ԻՐԱՆՈՒՀԻ*— *Խելքս քեզանից բան չի կտրում։ Համ այդ ես ասում, համ էլ ինքդ կողոպտում ես հորդ։*

*ՍՈՒՐԵՆ*— *Ա՜, դու մուրհակների մասի՞ն ես ակնարկում։ Մամա, աստված վկա, ես չեմ հնարել այդ բանը, այլ քեռիս, քո պատվարժան եղբայրը։ Նա, օօ՜, նա Շեյլոկի խնամին է։ Նա ինձ պարտք է տալիս միայն այն պայմանով, որ մեկին հինգ—տասը ստանա հորս մահից հետո։ Բայց ագահությունը երբեմն մարդուն հիմարացնում է։ Այժմ իմ պատվարժան քեռին վախենում է, որ հայրիկից շուտ կճանապարհվի ի վերին Երուսաղեմ։ Մամա, մի նեղանար, եղբայրդ մարդ չէ, այլ գայլի ախորժակից և աղվեսի խորամանկությունից կազմած վինեգրետ։ Իսկ ես թեև անառակ եմ, բայց ջենտլմեն եմ։ Երեկ Բագրատն ինձ վակ-կոտ անվանեց։ Իբր թե ապտակ եմ կուլ տվել։ Ուզո՞ւմ ես իմանալ, ինչու եմ կուլ տվել։*

*ԻՐԱՆՈՒՀԻ*— *Ես չեմ ուզում լսել այդ բաները, չեմ ուզում։*

*ՍՈՒՐԵՆ*— *Ոչ, այս մեկը լսի՛ր։ Ես ապտակը ստացել եմ մի շատ պատվական կնոջ պատճառով։ Եթե կուլ չտայի պիտի կռվեի, եթե կռվեի, այդ կինը պիտի խայտառակվեր։ Լսիր, ինչպես պատահեց։*

*ԻՐԱՆՈՒՀԻ*— (Ականջները փակելով) *Չեմ ուզում լսել, չեմ ուզում։*

*ՍՈՒՐԵՆ*— *Դե լավ, թող մնա։ Լսեցի՞ր։ Մարգարիտ, հայրիկը պարտավոր է իր անունն ազատել խայտառակությունից։* (Ժամացույցին նայելով) *Օ՜, տասնմեկն է, ես ուշացա...*

*ԻՐԱՆՈՒՀԻ*— *Էլի ո՞ւր ես գնում կես գիշերին, անառակ...*

*ՍՈՒՐԵՆ*— *Աստղերն ուսումնասիրելու։ Աղլովան ինձ սպասում է։ Ողջ եղի՛ք։* (Գնում է նախասենյակի դռներով, երգելով):

*ՄԱՐԳԱՐԻՏ*— *Տեսա՞ր, մայրիկ, շաղատան որդին ավելի ազնիվ է դատում, քան խելոքը։*

ԱՆԴՐԵԱՍ— (Կեղծ բարկանալով) *Բա՛ս ինչո՞ւ ես ճրագները վառել։* (Զարուհին ուզում է գնալ) *Խանումդ ի՞նչ է անում։*

ԶԱՐՈՒՀԻ— *Հենց հիմա պառկեց։ Էլի գլխացավը բռնել է։*

ԱՆԴՐԵԱՍ— *Պրծանք, այդ էր պակաս։ Կանչի՛ր այստեղ Մարգարիտին։*

ԶԱՐՈՒՀԻ— *Նա քնած է։*

ԱՆԴՐԵԱՍ— *Քնա՞ծ։ Այդպես շո՞ւտ։ Լա՛վ, գնա՛։ Մենք կլուբ ենք գնում, ասա՛ խանումիդ։ Դու էլ կարող ես հանգստանալ։ Ես ինքս դռները կփակեմ։ Հարկավոր չես։ Հանգցրո՛ւ սեղանատան ճրագները, դուք տնտեսություն ասած բանը չգիտեք։ Կարծես ես փող եմ կտրում կամ մարդ կողոպտում, որ ամեն ինչ շռայլում եք։ Գնա՛։*

ԶԱՐՈՒՀԻ— Գնում է սեղանատուն: Փոքր անցած, այնտեղ տիրում է մթություն:

ՍԱՂԱԹԵԼ— *Մեկը հիվանդ է, մյուսը քնած, աստված ինքն է օգնում քեզ։*

ԱՆԴՐԵԱՍ— *Ահ մի՛ հիշիր այս րոպեին աստծու անունը։ Նա ավելի կբարկանա մեզ վրա։ Հըմ, լավ էր, չէ՞, որ ասացի, թե կլուբ ենք գնում։ Տես, ով կա նախասենյակում։* (Սաղաթելը նայում է դեպի նախասենյակ) *Դռները կողպիր։* (Հուշիկ քայլերով մոտենում է Մարգարտի սենյակի դռներին և ականջ դնում· Նայում է իր գրպանի ժամացույցին և վերադառնում բեմի կենտրոնը):

ՍԱՂԱԹԵԼ— (Նախասենյակը նայելուց հետո դռները ծածկել է) *Այնտեղ ոչ ոք չկա։ Ավելի հարմար ժամանակ չէիր կարող ընտրել։* (Տերողորմյան դնում է գրպանը) *Ինչի՞ մասին ես մտածում։*

ԱՆԴՐԵԱՍ— *Երբ սատանան մարդու գլխի մեջ մի չար միտք է մտցնում, սրտի մեջ էլ մի ահ է գցում։ Ծածկի՛ր սեղանատան դռները։* (Սաղաթելը ծածկում է) *Կարծես, այնտեղից աչքեր են նայում մեզ։ Մոտս կաց։* (Նստում է բազկաթոռներից մեկի վրա):

ՍԱՂԱԹԵԼ— (Գալով բեմի առաջ) *Է՛հ, շատ բաներ ես արել, արա այդ մեկն էլ։*

ԱՆԴՐԵԱՍ— (Կիսաձայն) *Արե՛լ։ Ես մենակ չեմ արել, դու էլ միշտ հետս ես եղել։ Է՛հ, էլի հորդ կերպարանքն եկավ, կանգնեց աչքիս առջև ու ասում էր. «Չարը չարության ճանապարհում կկորչի»։*

ՍԱՂԱԹԵԼ— *Էհ, դու էլ ժամանակ գտար հորս հիշելու։*

ԱՆԴՐԵԱՍ— *Հիսունվեց տարեկան մարդ եմ, Սաղաթել, գլխովս հազար ու մի փորձանք է անցել։ Երդում եմ կտրել, միամիտներ եմ խաբել, խեղճեր եմ գոփել ու կողոպտել, երեք անգամ կաշառքով ազատվել*

*մեկը, քաղցածությունից ստիպված, գողացել է մի փալասի կտոր։ Սուս Հեռանանք։*

*ՍԱՂԱԹԵԼ*— (Մոտենում է աջ կողմի առաջին դռներին, մի վայրկյան կանգ է առնում և անհետանում):

*ԱՆԴՐԵԱՍ*— Հետևում է նրան:

*ՄԱՐԳԱՐԻՏ*— (Դուրս է գալիս գիշերային սպիտակ հագուստով, նայում է աջ ու ձախ այլայլված, նկատում է հորը, որ այդ պահին արդեն դռների մոտ է: Ուժգին ցնցվում է ու ճչում թույլ) *Հայրի՜կ։* (Մի քանի քայլ առաջ է վազում և բարձր ճչում) *Հայրի՜կ։*

*ԱՆԴՐԵԱՍ*— Դռների միջից սարսափահար հետ է նայում և անհետանում:

*ՄԱՐԳԱՐԻՏ*— Հեկեկալով ընկնում է հատակի վրա:

Վարագույրն իջնում է հանդարտ

*ԲԱԳՐԱՏ*— *Լավ, հեռացե՛ք։ Ես չեմ սիրում, երբ մարդիկ աշխատում են ինձ բան սովորեցնել։ Ցտեսությո՜ւն։*

*ԿԱՐԻՆՅԱՆ*— (Գնում է գրասենյակ դժկամակ դեմքով: Մի փոքր անցած այնտեղ տիրում է մթություն):

## Տեսիլ 2

ԲԱԳՐԱՏ ԵՒ ՍԱՂԱԹԵԼ

*ԲԱԳՐԱՏ*— (Անհամբեր) *Քեռի, այժմ ասա տեսնեմ, ի՞նչ նորություն կա։*

*ՍԱՂԱԹԵԼ*— *Գոհություն աստծու, ամեն բան կարգին է։* (Հանդարտ ոտքի է կանգնում, ուղղելով արխալուղի փեշերը)։

*ԲԱԳՐԱՏ*— *Օթարյանն եկե՞լ է այստեղ։*

*ՍԱՂԱԹԵԼ*— (Ուսերը վեր քաշելով) *Ես ինչ գիտեմ, խոմ պահապան չեմ։* (Սկսում է ծանր քայլերով անցուդարձ անել):

*ԲԱԳՐԱՏ*— *Անհրաժեշտ է իմանալ, տեսնվե՞լ է նա Մարգարտի հետ։*

*ՍԱՂԱԹԵԼ*— *Կարող է տեսնված լինել, կարող է չլինել, աստծու բանն է։*

*ԲԱԳՐԱՏ*— *Ես չեմ կարողանում ամբողջ օրը Մարգարտին հանդիպել։ Չգիտեմ ինչու, նա փակվել է իր սենյակում և ոչ ոքի չի ընդունում։*

*ՍԱՂԱԹԵԼ*— *Աստծու բանն է։*

*ԲԱԳՐԱՏ*— *Առհասարակ այսօր մեր տանը տարօրինակ տրամադրություն է տիրում։ Նկատեցի՞ր, հայրիկը որքան փոխված էր ճաշի ժամանակ։ Ես երբեք նրան այդպես անկապ խոսելիս չեմ տեսել։ Նա սովորականից ավելի էր գինի խմում։ Այդ արթուն մարդը, կարծես ուզում էր գլտամամբ հարբել։*

*ՍԱՂԱԹԵԼ*— *Աստծու բանն է։*

*ԲԱԳՐԱՏ*— *Քե՞զ ինչ է պատահել, չեմ հասկանում։ Այսօր շատ շուտ-ուտ ես հիշում աստծու անունը։*

*ՍԱՂԱԹԵԼ*— *Ես աստծուն միշտ հիշում եմ։ Դու էիր, որ ուզում էիր ինձ շեղել նրա ճանապարհից քո ուսումնական բացատրություններով։*

*ԲԱԳՐԱՏ*— (Կանգ է առնում և նայում նրան խորը, խորը) *Դու ինձ հանդիմանո՞ւմ ես։ Այդ վատ չէ, վատ չէ։ Ես ինքս պատրաստվել էի քեզ մի լավ նախատինք տալու։*

*ՍԱՂԱԹԵԼ*— *Նախատինք տալո՞ւ ի՞նձ։ Ինչո՞ւ համար, ի՞նչ եմ արել։*

*ԲԱԳՐԱՏ*— (Մոտենալով, ձեռը դնում է նրա ուսի վրա և կես բարեկամաբար, կես լուրջ) *Արի, պատվելի քեռի, խոստովանիր, որ դու շատ ցանկանայիր համոզվել, որ* (Ձեռը դեպի երկինք բարձրացնելով) *այնտեղ ոչինչ չկա։*

վատ չի լինի գնալ կլուբ և մի պուլկա պրեֆերանս խաղալ։ Վաղուց է չեմ եղել այնտեղ։ Հը՞մ, ի՞նչ կասես, պարոն ինժեներ

ԲԱԳՐԱՏ— Շատ ուրախ եմ, որ ուզում ես հասարակության մեջ երևալ։ Կլուբ չգնալը չար լեզուներին հազար ու մի բամբասանքի նյութ է տալիս։ Բայց ես զարմանում եմ, որ այդպես հանգիստ ես։

ԱՆԴՐԵԱՍ— Ինչո՞ւ չպիտի հանգիստ լինեմ։ Փառք աստծու, խոմ տունս կրակ չի ընկել կամ վեքսելներս պրոտեստ չեն անում (Անհանգիստ նայում է դեպի այն դռները, ուսկից դուրս է եկել)։

ԲԱԳՐԱՏ— Երեկ դու այդպես չէիր խոսում։

ԱՆԴՐԵԱՍ— Երեկը երեկ էր, այսօրը—այսօր։ Սաղաթել, այդ տերողորմյան տուր ինձ։ (Սաղաթելը տալիս է) Էհ, փառք քեզ աստված, մեծ է քո ողորմությունը։ (Նստում է իր գրասեղանի մոտ)։

ԲԱԳՐԱՏ— Հայրիկ, ուրեմն, դու այլևս չե՞ս վախենում Օթարյանից։

ԱՆԴՐԵԱՍ— (Ծիծաղում է նյարդային, արհեստական ծիծաղով) Հի՛, հի՛, հի՛, լսեցի՞ր, Սաղաթել։ Ասում է Օթարյանից չե՞ս վախենում։ (Արդյուն) Ո՞վ է Օթարյանը։ Ե՞րբ եմ ես նրանից վախեցել կամ ումի՞ց եմ վախեցել։ Անդրեաս Էլիզբարովը վախեցող պտուղներից չէ։ (Դարձյալ նայելով ձախի դռների կողմը) Սաղաթել, տես ով կա այն սենյակում։ (Բագրատին) Հիմար բաներ ես խոսում։

ՍԱՂԱԹԵԼ— (Նայել է ձախ դռներով դեպի ներս) Այստեղ ոչ ոք չկա։

ԱՆԴՐԵԱՍ— Աչքիս մեկն երևաց սպիտակ հագուստով, երկայն մազերով։ Ծածկիր այն դռները։ Օթարյան—չէ, շուն, կատու, մուկ, խլեզ։

ԲԱԳՐԱՏ— (Ուշադիր դիտել է հորը) Զարմանում եմ։ Երեկ դու համարյա սարսափում էիր Օթարյան անունից, այսօր ծաղրում ես նրան։ Իսկ ես, ընդհակառակը, երեկ նրան արհամարհում էի, այսօր չեմ կարող։

ԱՆԴՐԵԱՍ— Այդ քո գործն է։ Ինչ ուզում ես, արա։ Դեհ, Սաղաթել, գնո՞ւմ ենք կլուբ, թե չէ։

ՍԱՂԱԹԵԼ— (Համաձայնության նշան է անում)։

ԲԱԳՐԱՏ— Երեկ երեկոյան ես Մարգարիտի մոտ տեսա և կարդացի այն թղթերը, որոնց գոյությունը քեզ հայտնի է։ Եթե Մարգարիտն այդ թղթերը վերադարձրել է Օթարյանին, չգիտեմ ինչպես կարելի է հանգիստ լինել։

ԱՆԴՐԵԱՍ— Դու կարող ես այդ մասին չմտածել։ Գործարանդ կիսատ չի մնալ։

ԲԱԳՐԱՏ— (Ուրախացած) Ինչպե՞ս, հայրիկ, բացատրի՛ր, չէ՞ որ գործը որքան քեզ, նույնքան էլ ինձ է վերաբերում։

ԱՆԴՐԵԱՍ— (Վրդովված) Դադարելո՞ւ ես, թե՞ չէ։ Գլուխս տրաքացրիր։ Ես այսօր տրամադրություն չունիմ այդ մասին խոսելու

ԱՆԴՐԵԱՍ— Լավ, հետո կտամ։

ՍԱՂԱԹԵԼ— Ոչ, ոչ, հիմա, հետո կուրանաս։ Ես քեզ ճանաչում եմ։

ԱՆԴՐԵԱՍ— (Կատաղելով) Հետո, ասում եմ։

ՍԱՂԱԹԵԼ— (Նայում է նրան ուռ և խորհրդավոր ձայացքով) Դո՛ւ գիտես։

ԱՆԴՐԵԱՍ— (Հասկանում է նրա միտքը) Ա՜, սաղաթել, դու հորդ գերեզմանն էլ տակնուվրա կանես մի ոսկու համար։ (Մոտենալով գրասեղանին) Տուր ինձ մի կտոր թուղթ։

ՍԱՂԱԹԵԼ— Ես արդեն ինքս գրել պատրաստել եմ, մնում է, ստորագրես։ (Հանում է իր փչակից մի գրած թուղթ և տալիս է նրան)։

ԱՆԴՐԵԱՍ— (Թուղթը կարդալով) Սատանա, նոտարիուսի պես է գրել։ Հինգ հարյուր սաժեն։ Քաղաքի կենտրոնում ամենալավ տափերից մեկը։ Շատ է, այսքանը չեմ կարող տալ։

ՍԱՂԱԹԵԼ— (Սառն) Խոստացել ես։

ԱՆԴՐԵԱՍ— Շատ է ասում եմ։ Կեսը նվիրելու եմ քաղաքային ուսումնարանի համար։ Վաղուց են խնդրում ինձ այդ մասին։

ՍԱՂԱԹԵԼ— Լավ բարեգործություն է, ուրիշի հաշվով։ Ստորագրի՛ր։

ԱՆԴՐԵԱՍ— Շատ է, ասում եմ։

ՍԱՂԱԹԵԼ— (Սառնությամբ ձեռը մեկնելով, որ թուղթը վերցնի) Դո՛ւ գիտես։ Ես կարծում էի, որ ազնիվ վաճառականն իր խոսքի տերը պիտի լինի։

ԱՆԴՐԵԱՍ— (Ատամները կրճտելով) Ա՜, գազա՜ն։ (Ստորագրում է)։

ՍԱՂԱԹԵԼ— (Թուղթը վերցնում է, կանխապես ստորագրությունը ցամքիչով չորացնելով, և ծոցը դնում) Շնորհակալ եմ։ Այժմ կարող ես ինձ վրա հույս դնել։ Դե լավ, քիչ մտածիր։ Մեղքն այն ժամանակ է մեղք, երբ հայտնի է հասարակությանը։ Իսկապես, ի՞նչ ես արել։ Մի քաղցած գողի ատամները հանել ես—պրծավ գնաց։ Թող այժմ գոռա, ինչքան ուզում է, թե Էլիզբարովը նրա հորը կողոպտել է։ Փաստեր կպահանջենք։

ԱՆԴՐԵԱՍ— (Ականջ է դրել ուշադիր այնպիսի դեմքով, որից երևում է, որ շատ ցանկանում է համոզվել) Այո՛, փաստեր կպահանջենք։ Թող այժմ գնա դատարան։ Այժմ ես եմ նրա դատավորը։ «Պարոն, կասեմ նրան, դատավորների առաջ, հաստատիր, քո՞ր ապացույցներ և ժառանգություն ստացիր»։ Նա ապացույցներ չունի, հա՛, հա՛, հա՛, չունի, կորել են, ան-[illegible]։ Եվ ես կթքեմ նրա երեսին. վրեժս կառնեմ։ Օ՜օօ, Սաղաթել, ես շատ եմ տանջվել։ (Բաց է անում բանալիով գրասեղանի արկղը) Ահա, այստեղ է նրա լեզուն, գոռոզությունը, նրա հոգին։ (Հանում է ծրարը և համբուրում) Երեկ ես էի նրա ձեռքում, այսօր նա է իմ ճանկերում։

ՍԱՂԱԹԵԼ— Այրիր, կորչեն, ինչո՞ւ ես պահում։

ՕԹԱՐՅԱՆ— (Զարմացած, մի քանի վայրկյան լուռ դիտել է նրան) Զարմանալի է, բոլորովին անհասկանալի...

ԱՆԴՐԵԱՍ— (Սառը նայելով իր ժամացույցին) Ի՞նչն է զարմանալի, պարոն փիլիսոփա։

ՕԹԱՐՅԱՆ— Ձեր խոսակցության եղանակը, ձեր դեմքի հեգնական արտահայտությունը, ձեր սառնությունը։

ԱՆԴՐԵԱՍ— (Տաքանալով) Բաս ինչպես կհրամայես խոսեմ, աղաս, հը՞։ Ուզում ես, որ վիզս ծռեմ, վախենամ, աղաչեմ, պաղատեմ։ (Լուրջ և խիստ) Հերիք է։ Դու չհասկացար պատիվդ։ Ես խոնարհվեցի քրիստոնեաբար, դու գլխիս նստեցիր։ Համբերությունն էլ չափ ունի։ Այժմ կարող ես գնալ, ուր ուզում ես. իմ տան դռները քեզ համար փակ են։

ՍԱՂԱԹԷԼ— (Առանձին Անդրեասին) Մի տաքանար, լավ չէ։

ՕԹԱՐՅԱՆ— (Հուզված և ապշած մի քանի վայրկյան լուռ նայում է) Սհա թե ինչ։ Ուրեմն, կաշկանդված լեզվի կապերը քանդվե՞լ են։ Ուրեմն երեկվա օրն այստեղ մոռացվե՞լ է։ Այսօր իմ առջև փակում եք այն դռները, որոնց երեկ բաց լիք անում կրունկների վրա։ Ասացեք, պարոն Անդրեաս, դուք ինձ ուզում եք վիրավորել իսկապես, թե՞ կատակ եք անում։

ԱՆԴՐԵԱՍ— Ես գյադա-գյուդաների հետ կատակ չեմ անում։

ՍԱՂԱԹԷԼ— Անդրեաս, Անդրեա՛ս...

ԱՆԴՐԵԱՍ— (Վրդոված) Թո՛ղ ինձ, բավական է ինչքան երես տվեցի լակոտի մեկին։

ՕԹԱՐՅԱՆ— (Կատաղի) Պարո՛ն...

ԱՆԴՐԵԱՍ— Գոռա՛ որքան ուզում ես։ Ձայնդ յոթերորդ երկինք կբարձրանա, բայց աստծուն չի հասնի։ Շարունակիր էլի, ինչո՞ւ ես լռել։ «Դուք ինձ օգնելով, ինձ վիրավորել եք։ Ես ինքնասեր մարդ եմ, տանջվել եմ։ Դուք իմ փողերով եք ինձ որդեգրել։ Ձեր հարստության կեսն իմն է։ Տվեք» Անպատկառ։ Ահա վեց ամիս է ես զրկվել եմ իմ հանգստությունից, քնից, ախորժակից։ Քո տարածած սուտ լուրերը տանջում էին ինձ գիշեր-ցերեկ։ Քո պատճառով մարդիկ սկսել էին համարել գող և քիչ էր մնում երեսիս թքեին։ Քառասուն տարվա մեջ աշխատած անունս ու պատիվս ոտնատակ էին լինում։ Այժմ... այժմ բավական է։ Դու սպառնում ես ինձ դատի կանչել։ Համեցե՛ք, ճանապարհը բաց է, կարող ես գնալ։ Իսկ իմ տան դռները փակ են քո առջև և հավիտյան չեն բացվի։

ՍԱՂԱԹԷԼ— (Մեկուսի) Այս մարդն ինքն իր գործը փչացնելու է։

ՕԹԱՐՅԱՆ— (Լսել է մերթ զարմացմամբ, մերթ վրդովվելով, մերթ [illegible]) Ո՞վ այդ համարձակ լեզվով խոսողը Անդրեաս էլիզբարյա՞նն է, նա, որ աշխատում էր ինձ մի քանի հազար ռուբլով կաշառել, որպեսզի ես հրաժարվե՞մ իմ արդար պահանջից։ Դուք ինձ մինչև անգամ

## Տեսիլ 6

### ԱՆԴՐԵԱՍ, ՄԱՐԳԱՐԻՏ և ՍԱՂԱԹԵԼ

Հետո առանց Սաղաթելի

*ՄԱՐԳԱՐԻՏ*— (Դուրս է գալիս ձախից և կանգ է առնում դռների առջև։ Գունատ է, դեմքի վրա երևում են անքնության և հոգեկան տանջանքների հետքեր)։

*ԱՆԴՐԵԱՍ*— (Տեսնելով նրան, ուժգին ցնցվում է, բայց և արագությամբ իշխում է իրան)։

Մի քանի վայրկյան պատկերավոր լռություն։

*ԱՆԴՐԵԱՍ*— (Կանգնած է բեմի մեջտեղում)։

*ՄԱՐԳԱՐԻՏ*— (Կանգնած է ձախ դռների մոտ և չի նայում հորը)։

*ՍԱՂԱԹԵԼ*— (Անցել է բեմի աջ կողմը և տերողորմյան ձեռին նայում է առաստաղին)։

*ՄԱՐԳԱՐԻՏ*— (Ուզում է խոսել, բայց նեղված է Սաղաթելի ներկայությունից) *Քեռի, մայրիկը կարծեմ ուզում էր քեզ տեսնել։*

*ՍԱՂԱԹԵԼ*— (Մեկուսի) *Ցանում է ինձ։* (Հանդարտ քայլերով անցնում է աջից դեպի ձախ և դուրս է գալիս ձախ դռներով։ Ճանապարհին հատակի վրա տեսնելով ինչ-որ թուղթ, վերցնում է և դնում Բագրատի սեղանի վրա)։

*ՄԱՐԳԱՐԻՏ*— (Սաղաթելին ճանապարհ դնելով, դռները հետևից ծածկում է)։

*ԱՆԴՐԵԱՍ*— *Լսեցի հիվանդ ես, ինչո՞ւ ես վեր կացել։*

*ՄԱՐԳԱՐԻՏ*— (Այնքան կլանված է իր մտքերով, որ գրեթե չի լսում) *Հայրիկ, նա եկավ ինձ տեսնելու, չկարողացա նրան ընդունել։ Երրորդ անգամն է գալիս այսօր, ես փախչում եմ նրանից։ Հայրիկ, տո՛ւր ինձ միջոց նրան պարզերես հանդիպելու։*

*ԱՆԴՐԵԱՍ*— *Չեմ հասկանում, ինչ ես ուզում ինձանից։*

*ՄԱՐԳԱՐԻՏ*— (Դողդոջուն ձայնով, բայց հաստատ) *Ազնվություն։*

*ԱՆԴՐԵԱՍ*— *Ես այն եմ, ինչ որ կամ, ոչ ավելի, ոչ պակաս։ Դու չես կարող ինձ խրատել։*

*ՄԱՐԳԱՐԻՏ*— *Մի՛ տանջիր ինձ, հայրիկ, ես չեմ կարող դիմանալ քո անպատվությանը։*

*ԱՆԴՐԵԱՍ*— *Եթե անպատիվ բան էր, ինչո՞ւ ինձ ստիպեցիր անել։*

*ՄԱՐԳԱՐԻՏ*— *Ես ուզում էի անունդ խայտառակությունից ազատել։*

*ԱՆԴՐԵԱՍ*— (Խառն հեգնական ծիծաղով) *Ազատե՞լ։ Ոչ, ընդհակա-*

կոտ քայլերով, և ես հետևեցի քեզ։ Այնտեղ, դահլիճում, քո սարսափած դեմքի վրա կարդացի իմ դատավճիռը։ Դա ինձ համար կայծակի հարված էր։ (Երեսը դարձնելով, աշխատում է արտասուքը զսպել):

ԱՆԴՐԵԱՍ— Երազ չէ, բան ինչ է։ Երեկ ամբողջ գիշերը ես տանը չեմ եղել։ Քեռիդ վկա է...

ՄԱՐԳԱՐԻՏ— Հայրիկ, եթե ինձ չես խնայում, խնայիր քեզ։ Սիրտս վկայում է, որ այդ թղթերը պետք է քո գլխին մի փորձանք բերեն։

ԱՆԴՐԵԱՍ— Դե, հերիք է, համբերությունս մի կտրիր, ես սկսում եմ կատաղել։

ՄԱՐԳԱՐԻՏ— Ա՜խ, այլևս քո սպառնալիքներից չեմ վախենում։ Իմ ամենամեծ պատիժը երեկվա քո արածն էր։

ԱՆԴՐԵԱՍ— (Կատաղած) Դե դո՛ւրս, դո՛ւրս, անպատկառ։ Դու կարող ես ինձ որդեսպան դարձնել։

ՄԱՐԳԱՐԻՏ— Հայրիկ, մի՞թե չես մտածում, որ ես կարող եմ քո գողությունը պատմել բոլորին, առանց քեզ խնայելու։

ԱՆԴՐԵԱՍ— Մինչև բերանդ բաց անելը, ես այդ հանդուգն լեզուդ տակահան կանեմ և կշպրտեմ շներին։ Դե՛հ, կորի՛ր, քանի որ սատանան ինձ չի հաղթել։

ՄԱՐԳԱՐԻՏ— (Հուսահատ) Աստված իմ, ի՞նչ անեմ։ Նա սիրտ չունի։ Հայրիկ, սիրելի թանկագին ծնող, տո՛ւր ինձ այդ թղթերը։ Այսօր ես պարտավոր եմ նրանց վերադարձնել իրենց տիրոջը։ Ես ազնիվ խոսք եմ տվել։ Նա այնտեղ, հյուրասենյակում սպասում է։ Ես փախա նրանից, ինչպես գող։ Տո՛ւր, եթե մազի չափ հարգում ես քո աղջկա պատիվը։

ԱՆԴՐԵԱՍ— Անե՛ծք քեզ, չար սաղայել։ Ասում եմ քեզ, որ իմ մոտ ոչինչ չկա։

ՄԱՐԳԱՐԻՏ— Հայրիկ, դու ինձ լավ չես ճանաչել։ Ես քիչ եմ խոսել, բայց շատ եմ մտածել և զգացել։ Ես պատրաստ եմ կյանքս զոհել պատվիդ համար, բայց պատիվս արատավորել հարստությանդ համար—չեմ կարող, անզոր եմ։ Դու պետք է ազատես ինձ խայտառակությունից։ Այդ քո պարտքն է, որովհետև դու հայր ես։ Տո՛ւր ինձ իմ պատիվը, ես առանց պատվի մի ժամ անգամ ապրել չեմ կարող։

ԱՆԴՐԵԱՍ— (Ատամները կրճտելով) Հեռացի՛ր, աղջիկ, արյունս գլխովս է տալիս։

ՄԱՐԳԱՐԻՏ— Ոչ, չեմ հեռանալ, մինչև որ չստանամ այդ թղթերը։ Կտրիր ինձ մի կտոր հացից, վռնդիր փողոց։ Ես պատրաստ եմ քո վերջին գործակատարի աղախինը դառնալ, պատրաստ եմ դռնե դուռն ընկնել ողորմություն մուրալ, բայց գող հռչակվել, ոչ, այդ չեմ կարող։ Նա ազնիվ է, նա ինձ էլ ազնիվ է համարում։ Նա իմ մասին շատ մեծ գաղա-

## Տեսիլ 7

### ՆՈՒՅՆՔ, ՕԹԱՐՅԱՆ և ԲԱԳՐԱՏ

*ԱՆԴՐԵԱՍ*— (Ձեռքերը մեջքին դրած, կանգնած է պեչի ձախ)։

*ՕԹԱՐՅԱՆ— Վերջապես, տեսա քեզ։ Դու հիվանդ չես և փախչում ես ինձանից։ Լսիր, հայրդ ինձ անպատիվ արավ և դուրս վռնդեց իր տնից։ Ես համարվում եմ ստոր մարդ, որ ուզեցել եմ խաբեբայությամբ կորզել նրա հարստությունը։ Ցույց տուր նրան իմ թղթերը։ Ցույց տուր խսկույն, ես այսպես եմ կամենում։ Ես ստորացած եմ, անպատված։ Ցույց տուր այդ ապացույցները։*

*ՄԱՐԳԱՐԻՏ*— (Լուռ, գունատ, դողդողուն և անշարժ կանգնած է պատի տակ)։

*ՕԹԱՐՅԱՆ— Ահա և եղբայրդ։ Այժմ նա ուրիշ լեզվով է խոսում։ Այստեղ մարդկանց դերերը փոխվել են։ Երեկ հայրդ էր ուզում ինձ կաշառել, այսօր—եղբայրդ։ Գոնե բացատրիր, ինչ է պատահել։* (Լռություն) *Ա՞հ, դու լռո՞ւմ ես, ձայն չե՞ս հանում, կանգնած ես դատապարտյալի պե՞ս։ Երդվում եմ հորս հարստահարված գերեզմանով, կամ դուք եք խելագարվել, կամ ես։* (Մարգարտին) *Ասա՛, այդ ի՞նչ դավադրություն է։ Չէ՞ որ ես քեզ ընտրեցի դատավոր։ Ո՞ւր են իմ ապացույցները։ Բե՛ր այստեղ։*

*ՄԱՐԳԱՐԻՏ*— (Երկար տատանվելով) *Չգիտեմ։*

*ՕԹԱՐՅԱՆ— Ինչ, լսո՞ւմ ես, Մարգարիտ, գնա, բեր այն թղթերը։*

*ՄԱՐԳԱՐԻՏ*— (Մեռելային սառնությամբ) *Ես այրեցի այն թղթերը։ Ահա այնտեղ։* (Ցույց է տալիս վառարանը, երկարատև տանջանքով մի հայացք է ձգում նրա վրա և թույլ քայլերով հեռանում է ձախ դռնով)։

*ՕԹԱՐՅԱՆ*—<br>*ԲԱԳՐԱՏ*— } (Միաժամանակ մոտենում են վառարանին)

*ԲԱԳՐԱՏ*— (Նայում է, փակում է վառարանի դռները և ուրախություն արտահայտում)։

## Տեսիլ 8

### ՆՈՒՅՆՔ առանց ՄԱՐԳԱՐԻՏԻ, հետո ՍԱՂԱԹԵԼ և ՍՈՒՐԵՆ

Պատկերավոր տեսարան

*ՕԹԱՐՅԱՆ*— (Ապշած նայում է մերթ մեկին, մերթ մյուսին) *Այրե՞լ է։ Այ, ես, այդ մի որոգա՞յթ էր ինձ համար։ Մարգարիտը դաշնակից մի*

ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆ

# ԺԱՅՌ

Պիես չորս արարվածով

# ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՎԱԾ

**Սահակ աղա Մանուկյանի տանը Հնամաշ, ծանր կահավորություն. Մեծ սրահ, որի մեջտեղի ապակեպատ դուռը բաց է դեպի մի փոքրիկ պատշգամբ։ Տեսնվում են ծառերը, հեռվում՝ լեռներ. Ձախ կողմից երկու լուսամուտ։ Աջ կողմից մի դուռ՝ դրսի մուտքն է. խորքի աջ անկյունից երկրորդ դուռը՝ տանում է ներքին սենյակները։**

1) ՏԻԿԻՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ, հետո՝ ՍԱՀԱԿ ԱՂԱ

*ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ*— (Վարագույրը բացվելիս տնային հագուստով կանգնած է պատշգամբի վրա, կռացել է դեպի ցած և խոսում է աղախնի հետ) *Հինչ ա՞...* (Լուռ) *Բա ինչի՞, չե՞մ ասել քեզ, որ սահաթը հինգին պատրաստ ըլի...* (Լուռ) *Հի՞նչ... Դե, քիչ քյոմուրը շատ գցիր, էլի՛... Ախ քոռանա՛ս դու, հա՛... Դե փչի՛, փչի՛... Հի՞նչ...* (Լուռ) *Բա՛, աղջի՛, ես քեզ չասի՞ երեկ...*

*ՍԱՀԱԿ*— (Ներսի դռնից դուրս է գալիս, սյուրտուկի մի թևը հագած և մյուսը հագնում է) *Էլի՞ սկսեցիր գոռգոռոցը...* (Գնում է դեպի նա):

*ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ*— (Չի նկատում նրան. միշտ աղախնի հետ) *Հի՞նչ... Դե մի քիչ բարձր խոսի, էլի՛... Շաքարը քի՞չ ա... Քու ի՞նչ բանն ա դա...*

*ՍԱՀԱԿ*.— (Ավելի մոտենում է) *Աղջի՛... Քիչ կամաց խոսե՛ս... Չե՞ս թողնելու, որ տղան քնի...*

*ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ*— (Շարունակում է նույնը) *Հի՞նչ... թո՛... դո՞րդ... Ա՛ս ըփիան...*

*ՍԱՀԱԿ*— (Թևն է բռնում) *Բո՛, աղջի՛... Բա քե՞զ հետ չեմ...*

*ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ*— (Շտապ՝ դառնում է) *Սո՛ւդիան ա գալիս։*

*ՍԱՀԱԿ*— *Դե ի՞նչ անենք, որ գալիս է... Ի՞նչ ես գոռգոռում։*

*ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ*— *Բա որ ես հագնված չե՛մ... էս ի՞նչ ա իմ հալը։*

*ՍԱՀԱԿ*— *Լավ դե՛... Գնա հագնվիր... Մեկ էլ որ ցած խոսաս ու թողնես Սաշային քնի՝ լավ կանես։*

*ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ*— (Գնալով) *Լա՛վ, լա՛վ. էդ խոսքերը դու սուդյին ասա, որ առանց գոռգոռալու չի խոսում։* (Գնում է):

*ՍԱՀԱԿ*— (Հագել է. վրան-գլուխն է շտկում. պատշգամբից նայում է մեկ, հետո գնում է դեպի մուտքի դուռը):

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— (Զարմացած) Ինչպե՞ս... խո քամիներ չկա՞ն գլխումը... Տո՛, գյուղումն էլ եղալի գո՞րծ կլինի... Լավ չե՞ս լսած լինի... Ա՛յ, թող մեկ զարթնի, տես ո՞նց ես նրան հնարքը ցույց տամ... Մենք փորձված ենք... Ըհը՛, էս ա Հոռոմսիմն էլ եկավ... (Ելնում է դիմավորելու):

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ— (Մտնում է հագնված. ժպտուն):

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— (Գնում է դեպի նա) Է՜հ, աչքդ լույս, Հոռոմսի՛մ. հրեն Սաշա՛ն էլ եկավ... էլ քո քեֆին քեֆ չի հասնի... (Ձեռքն է թոթվում):

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ— Աչքդ լուսով մնա... Հա՛, բա՞ս... էսքան տարի աչքս ջուր կտրեց սպասելով:

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— Հիմի խո՛ ամեն ցավ կմոռանաս... Հանաք բան չիմանաս, հա՞... Համալսարանցներն էնպե՛ս գան, որ ի՛նքդ էլ զարմանաս... Զարթնե՞ց...

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ— Զարթնեց. հիմի կգա... (Ամուսնուն) Սամավարը չբերի՞ն... Ասում ես՝ մի գոռա. բա չգոռա՞մ... Մեկ սհաթ ա՝ ասել եմ գցիր...

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— Շո՛ւտ կ գեն, ի՞նչ է եղել որ սկի զանգերն էլ չեն խփել... Առաջին եկողն էլ խո ես եմ, հը՞...

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ— Շնորհակալ ենք. . բա Մարգարի՞տն ինչի չեկավ. չի՞ էլ գալու:

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— Ինչպե՞ս չէ. բա չե՞ս թողնի, որ մեկ զարգարվի...

3) Նույնք և ԿԻՐԱԿՈՍ (ծառան)

ԿԻՐԱԿՈՍ— (Ներս է բերում սամովարը. դրան մոտ): Խանո՛ւմ, ըստե՞ղ դնեմ, թե՞ ներսը:

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ— Ը՛ր, հողե՛մ գլխներդ. լավ ա, որ բերիր... Ըստեղ դիր. Մարգոյին էլ ասա՝ թող գա չայը լցնի:

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— Նոր եկած եղբոր գլխովը պտտելիս կլինի ա՛յ...

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ— Հա՞... Ջահլեն տասում ա. կասես չաչանակ ըլի. [illegible] ա, հա՛ խոսում:

ՍԱՇԱԿ— Թող խոսա. խեղճը ուկի մի շնորհքով ջահիլի երես տես-[illegible].

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— Բա ինչի՞, մենք պառավե՞լ ենք... (Ծիծաղ) [illegible] մեկ Սաշադ գա՝ տեսնենք ե՛ս եմ ջահիլ, թե՞ նա: Ո՞վ գիտի, Մոս-[illegible] ոնց դեղնացրած ըլի նրան:

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ— (Ցավելով) Հա... բայց դե տո՛ղջ ա երևում... [illegible], էն մեր գեղի օդն ու ջուրը կշաղացնի իրան մեկ ամսվա մեջ:

*ՄԱՐԳԱՐԻՏ*— (Վազում է դեպի Թերեզան, համբուրվում են) *Բարև... Ախ ի՞նչ լավ արիր, որ եկար... Ա՛յ, Սաշան...*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— (Լուռ մոտենում է և բարևում)։

*ԳՐԻԳՈՐ*— *Բարև ձեզ... Այ դու բարի՛ ես եկել, Ալեքսա՛ն բեկ... Մեր աչքի-գլխի վրան եկել...* (Թոթվում է ձեռքը)։

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— (Ընդունում է բարևը, ապա մոտենում է Թերեզային)։

*ԹԵՐԵԶԱ*— (Ալեքսանին, ժպտում և համարձակ) *Բարև եք եկել...* (Պարզում է ձեռքը) *Ինձ ճանաչեցի՞ք...*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— *Ինչպե՞ս չէ, օրիո՛րդ... Բայց մի րոպե ապշել էի, թե որքա՛ն փոխված եմ գտնում ձեզ...* (Լուռ խոսակցում են)։

*ԳՐԻԳՈՐ*— (Սահակին) *Աչքդ լույս էլի, Սահա՛կ բեկ... էս է տղեդ էլ եկավ ավարտած, դիպլոմո՞վ... Բաս Հոռոմսի՞մն ուր է։*

*ՍԱՀԱԿ*— *Կգա. դուք համեցեք-նստեք։*

*ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ*— (Լուռ թոթվում է Սահակի ձեռքը, լուռ աչքալուսանքներ ու բարեմաղթություններ խոնարհություններով)։

*ԳՐԻԳՈՐ*— (Մոտենում է Մատվեյ Եգորիչին) *Դուք արդեն այստե՞ղ եք, Մատվե՛յ Եգորիչ... Այսօր երկրորդ անգամն ենք պատահում միմյանց։*

*ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ*— *Ի՞նչ արած, եղբա՛յր, մենք դեռ էլի շա՞տ կպատահենք...* (Խոսակցում են միասին)։

*ԹԵՐԵԶԱ*— (Ալեքսանին) *Չորս տարի է... Երևի արդեն պառավել եմ, չէ՞...*

*ՄԱՐԳՈ*— *Դե, լա՛վ, լա՛վ. քեզանից սիրունն ու ջահելը ո՞վ կա մեր գյուղումը։*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— *Քույրս իրավացի է... Գեղեցկացել եք շատ։*

*ԹԵՐԵԶԱ*— (Ժպտում) *Շնորհակալ եմ կոմպլիմենտի համար... Բայց երևի մոռացել եք, որ 5—6 տարի առաջ ինձ տգեղ էլ եք կոչել, անճոռնի էլ...*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— (Թոթափով) *Եթե արել եմ՝ հանցավոր եմ...* (Շարունակում են լուռ խոսակցել)։

*ՍԱՀԱԿ*— (Տիկին Վարակյանին) *Ինչպե՞ս չէ, իհարկե կսկսի։* (Շարունակում են լուռ խոսակցությունը)։

*ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ*— (Գրիգորին) *Նո՛ւ, եղբա՛յր... Դա արդեն օրենքի գործ է... Եթե թուղթ ունի՞ս... Կանոնավոր մուրհա՛կ...* (Շարունակում են լուռ խոսակցություն)։

*ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ*— (Սահակին) *Բա Հոռոմսի՞մն ինչու չի երևում... Չլինի՞ ներսում պատրաստություն է տեսնում... Ի՞հ, նա էլ... Մենք խո չե՛նք եկել ուտել-խմելու։*

նույն դեմքերն ու մարդիկ... Եվ հետո, եթե գիտենաք, թե որքա՜ն կոպիտ, կեղտոտ են մեր գյուղացիք։

ԱԼԵՔՍԱՆԴՐ— Դուք մոռանում եք, օրիորդ, որ նրքա ամբողջ օրը գործում են. իրենց հանգամանքները չե՛ն ներում մեզ պես հագնվել, լա՛վ ապրել։

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— Նո՛ւ, ֆանտազյո՛ր կասեմ... Տո՛, մեկ հլա ինքդ էլ բնակի՛ր և տես, թե այդպե՞ս է։ Հազարների տեր գիտեմ, որ է՛լի ախոռի պես տան մեջ է ապրում, կեղտոտ հագնվում...

5) Նույնք, Տիկ. ՄԱՆՈՒԿՅԱՆ, ՍԱՀԱԿ և ԿԻՐԱԿՈՍ (Սրանք ներս են մտնում. Սահակը՝ օղի, վարունգ և տանձ ձեռքին, տիկ. Մանուկյանը՝ մուրաբաներ, Կիրակոսը՝ մատուցարան բաժակներով և այլն)։

ԳՐԻԳՈՐ— (Ելնում է և դիմավորում տանտիկնոջ) Ա՛յ բարի տեսանք, տիկի՛ն, աչքներդ լո՛ւյս, որդիդ էլ եկավ վերջապես...

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ— (Շփոթված, մուրաբաները դնում է սեղանի վրա, ձեռք է տալիս, համբուրվում են տիկ. Վարակյանի և Թերեզայի հետ) Շնորհակալ եմ... Բարով ձե՛զ էլ աչքալուսանք անենք... (Թերեզային) Դո՛ւ էլ մի լավ բախտի արժանանաս... (Բոլորին) Համեցե՛ք, համեցե՛ք, Բեյը այս րոպեին... (Մարգոյին) Աղջի, հլա չայը չե՞ս ջինել... (Մառային) Կնա սուխարին էլ բեր... (Հյուրերին) Համեցեք նստեք... (Տղամարդկանց) Մի-մի արաղ... (Ամուսնուն) Բաս հաց ու պանի՞րն ուր ա... (Վազում է դեպի դուռը) Կի՛րակոս, հաց ու պանիրն էլ բեր հետդ...

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— Ա՛յ լավ տանտիկին... Սկի 10 րոպե չքաշեց— ամ մուրաբա, համ խիար, արա՜ղ... (Տիկին Մանուկյանին) Տղիդ տեսնելույը թևեր ես առել-թռչում ես, հա՞, Հոռոմսի՛մ։

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ— Դե բա ի՞նչ անեմ, ա՛ ձեզ մատաղ... Մեկ միհատ տղա ունեմ, նրա գալո՞ւն էլ չուրախանամ... բա ո՞ւր ա ձեր տիկինը Մատվե՛յ...

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— Դե ես ի՞նչ անեմ... Հալբաթ ուր որ է՝ կգա...

ԿԻՐԱԿՈՍ— (Վերադառնում է, բերելով մյուս բաները)։

ՍԱՀԱԿ— (Լցնում է օղի, կինը թեյ է պատրաստում. Գրիգորը ժպիտը դեմքին՝ դիտում է Ալեքսանին և Թերեզային, որոնք Մարգարիտի ընկերակցությամբ՝ խոսում են և ծիծաղում)։

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— (Վերցնում է օղու բաժակը և ձեռքից՝ Ալեքսանին) Իմ սատկածդ կսիրես, Սա՛շա, շա՛տ ժամանակ ունես դեռ՝ ջահել աղջիկների հետ սիլիրիլի անելու. առաջ մեկ պառավների՛ս պառավիր, մեկ նրա՛նց հետ խոսիր... Թերեզան չի փախչիլ, մի՛ վախենա... Երկուսդ էլ կրթված

*ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ*— (Տաքանում է) Постой, постой[1]... *Մե՛նք էլ ենք փաստաբանություն արել, ճառ խոսել...* (Ալեքսանին) *Չէ՛, մեկ դու է՛ն ասա, Սա՛շա. բաս որ չաղ պրակտիկան գա—կմերժե՞ս... Որ հազարներով աղջիկ սիրես—չե՞ս ամուսնանալ, կամ փողը չե՞ս վերցնիլ... Հը՞...* (Հաղթական) *Ասա՛, է՛... Ե՞տ կտաս, կասես՝ չե՞մ ուզում...*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— (Հանդարտ) *Ես անիրավության կողմ չե՛մ լինիլ, գրկողին չե՛մ պաշտպանիլ—թեկուզ հազարներ տան։ Եվ աղջիկն էլ չե՛մ առնիլ, որովհետև նա հարուստ օժիտ ունի...*

*ԹԵՐԵԶԱ— Բրա՛վո... Մատվեյ Եգորիչը հաղթվում է։*

*ԳՐԻԳՈՐ— Այդպե՛ս, հա՛... Ապա՞, Սա՛շա, մեկ լա՛վ դրան...*

*ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ*— Постой *ասում եմ է՛է՛... Սահա՛կ, էդ ըյումկաները մեկ լցրո՛ւ. բողազս չորացավ...* (Կարմրած՝ Ալեքսանին) *Ո՞նց թե հազարներ տան՝ անիրավի կողմը չես բռնիլ... Տո՛, որ ասենք՝ մի մարդասպան գա քեզ մոտ, որ դու էլ հաստատ գիտենաս, թե նա անիրավ է... Մի քանի հազար խոստանա, որ իրեն արդարացնես, պաշտպանես դատարանում—չե՞ս անիլ, կմերժե՞ս... Էլ ինչացո՞ւ պրիսյաժնի ես, որ... կմերժե՞ս։*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ— Կմերժեմ։*

*ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— Թո՛ւյ... Բա դու քո թշնամին ե՞ս... Ե՞րբ է տեսնված, որ փաստաբանը փող շահի իրավացի կողմից. լավ վարձատրություն տալիս են միշտ անիրավները։*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ— Սաստի՛կ սխալվում եք... Անիրավների ձեռքով մեղադրվածներն ավելի շատ են, քան անիրավները, ավազակները... զրկվածներին պաշտպանե՛լն էլ փող է բերում։ Բայց—որը գլխավո՛րն է—ինչքան մեծ բավականություն է զգում մարդ, երբ հաջողվում է կորզել ավազակի, հարստահարողի ձեռքից մի անմեղ զոհ, մի ազնիվ աշխատավորի... Ա՛յ, երբ ինձ գործի մեջ տեսնեք հենց այստեղ, գուցե և ձե՛ր դատարանում...*

*ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ*— (Վախեցած) *Ի՞նչ... չլինի՞ մեր գյուղումն ես ուզում փորձել դալլաքությունը...*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ— Այո՛. ես վճռել եմ այստե՛ղ իսկ մնալ և գործել... Այսպիսի խուլ անկյուններում ավելի շատ են անիրավություններ ու հարստահարություններ, որոնց դեմ կռվել է պետք... Եվ ես, որ սովորե՛լ եմ և զինվել այդպիսի կռվի համար—պարտականություն եմ զգում նախ և առաջ ծառայել ի՛մ հայրենիքին, ի՛մ թշվառ եղբայրներին...*

*ԳՐԻԳՈՐ*— (Կծու) *Ահա՛ թե ի՞նչ... Նոր բանե՛ր ենք լսում...*

---

[1] *Նշանակում է «կաց, կաց»։*

...րենքը չե՞ն գործադրում, վաշխառունե՞ր կան… Թո՛ղ մեկ գան հենց մեր ...խիվը քննեն, թե մի հատ վեքսիլ գտնեն՝ 40 տոկոսով գրա՞ծ… Բաս ...օրե՞նք չգիտեմ, թո՞ւյլ կտամ…

6) Նույնք և ԱՐՇԱԿ (գյուղական տանուտեր)

ԱՐՇԱԿ— (Երևում է դռան մեջ) Բարև ձեզ…

ՍԱՀԱԿ— (Ելնում է, գնում դեպի նա) Ա՛յ, համեցեք, տանուտե՛ր… ...ըներիս-գլխներիս վրա։

ԱՐՇԱԿ— (Սեղմում է նրա ձեռքը և լուռ-շնորհավորում)։

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— Ուռա՜, տանուտե՛րն էլ եկավ…

ԱՐՇԱԿ— (Մոտեցող Ալեքսանին) Բարի եք եկել, պ. Ալեքսա՛նդր։

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— Սաշա՛, մեր տանուտերն է, հա՜. էդպես չա... Դե՛հ, էլ ի՞նչ արած. աշխարհս հիմի չահիլներինն է… Ուսում ...՛ծ է, հա՜… Ներսիսյանո՛ւմն է սովորել. մի քիչ էլ փիլիսոփա է… ...ժպտում):

ԱԼԵՔՍԱՆԴՐ— Իրա՞վ, այժմ դո՞ւք եք մեր տանուտերը։ Շատ ուրախ... Մենք անցյալում քի՛չ ենք հանդիպել, բայց այսուհետև հույս ունեմ, ...աճախ տեսնվենք։

ԱՐՇԱԿ— Ուրախ կլինեմ։ (Դառնում է մոտեցող սանտիկնոջ և, ...ը սեղմելով, լուռ շնորհավորում)։

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ— (Փոխադարձ լուռ շնորհակալություններ)։

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— (Օղու բաժակներով մոտենում է) Ապա՞, տա... ...՛ր, առ մեկ այս. շնորհավորիր, աչքալուսանք արա…

ԱՐՇԱԿ— (ժպտում) Շնորհակալ եմ. հացս նո՛ր կերա։

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— Ոչի՛նչ, սա կմարսեցնի։

ԱՐՇԱԿ— Չէ՛, շնորհակալ եմ… (Ալեքսանին) Երևի երկար չեք մնալ ...մոտ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ— Ընդհակառակն, երկար կմնամ։

ԱՐՇԱԿ— Ամա՛ռն, իհարկե, քաղաքում շա՛տ շոգ է լինում. մեզ մոտ ...

ԱԼԵՔՍԱՆԴՐ— Այո՛. բայց ես ձմեռն էլ կմնամ։ Դեռ շա՛տ կձանձ... ...րոլորիդ, մանավանդ ձեզ։

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— Լսո՞ւմ ես, տանուտե՛ր. Սաշան ուզում է մեր ...գումն սկսել իր պրակտիկան… Ասում է՝ գյուղում թալանում են, ... օրենք հասկացնող… Էլ բան ու գործ չունենք, էլի՜…

ԱՐՇԱԿ— (Զարմացած և հետաքրքրված) Իրա՞վ… Մեր գյուղո՞ւմն ... ուզում գործել… (Ուրախ) Հիանալի՜ բան կլինի։ Որ գիտենաք, թե

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ— (Ոտքի է ելնում) *Գնա՞նք, Գրիգո՛ր, Թերեզան երևի դեռ շա՛տ կմնա այստեղ։*

ԳՐԻԳՈՐ— (Ելնում է) *Հա՞... Հա՛վ, գնանք։* (Սանակին) *Դե՛հ, մեզ մոտ կգաք դուք էլ, իհարկե։ Բարեկամություն անենք։ Սաշային ես շա՛տ սիրեցի... Դե իհարկե, էն որ ասում է, թե գյուղումը կմնա—շատ էլ հավատալու բա՛ն չի. դուք մի՛ տխրեք. գրքեր կարդացած կլինի, բանե՛ր լսած... Նրանց քամի՛ն է։ էդ նոր ավարտածները բոլո՛րը սկզբում բըռթ-բըռթացնում են այսպես... Թող մի քիչ դեռ մնա, զզվի ամեն բանից...* (Տանում է Սանակին մի կողմ և տաք-տաք խոսում հետը)։

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ— (Տիկ. Վարակյանին) *Ինչո՞ւ եք շտապում, մնացեք, երեկոյան մի լավ քեֆ կանենք...* (Մատվեյ Եգորիչին) *Տիկինդ էլ խո չեկավ...*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— *Հա՛... Տեսնես էլի ինչ է պատահել...* (Ելնում է) *Մեկ գնամ տեսնեմ ինչո՞ւ չեկավ։*

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ— *Վո՜ւյ, չէ՛, չէ՛. նստիր, ո՞ւր ես գնում... Ծառային կղրկենք։*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— *Չէ՛, ես կերթամ... Համ էլ մի քիչ ման գամ, շոգ է այստեղ... Հետո է՛լի կգամ. միասին կգանք...* (Վերցնում է գլխարկը) *Թող Սաշան էլ մի քիչ մասլահաթ անի Թերեզի հետ... Ջահիլ են...* (Գրիգորին՝ նշանակալից ակնարկով) *Որ ճրագով փնտրեիր, է՜, այսպես չես գտնի...*

ԳՐԻԳՈՐ— (Ծիծաղելով և իբրև թե նեղացած) *Ի՞նչ եք հրամայում... Թողնե՛նք այդ խոսքերը...*

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ— *Ի՛հ, Մատվե՛յ Եգորիչ, գյուղի աբլակա՜տ...*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— *Գյուղի աբլակա՞տս որն է... Մարդը պրիսյաժնի է, հասկանո՞ւմ ես։ Հազար աբլակատի մի ձեռքով հուպ կտա, ջեբը կդնի...* (Սանակին) *Դե՜հ, ցտեսություն. կգանք... Բաս մեկ լավ քեֆ ենք անում այս երեկո, հա՞, Հռոմսի՛մ։*

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ— *Անպատճառ։ Ասել եմ, որ մի չաղ գառ մորթեն։*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— *Ա՜յ, շատ ապրես... Մե՜կ քեֆ անենք, որ սա՜ղ գեղը հավաքվի գլխներիս...* (Գնում է ծիծաղելով)։

7) Մնացածները, վերջում՝ ԿԻՐԱԿՈՍ (Քիչ լուռ է բեմի վրա Գրիգորն ու կինը՝ կանգնած։ Տիկին Մանուկյանը սեղանն է ժողովում, Սանակը՝ օջին)։

ԳՐԻԳՈՐ— *Էղպե՛ս... Տղա՛դ էլ եկավ... Հիմի էլ խո չե՞ս գանգատվիլ, որ դժվարության մեջ ես, Սանա՛կ բեկ։ Աստուծով լավ փող կաշխատի, պարտքդ էլ կտաս...* (Մոտեցող Սանակին քիչ մի կողմ է տանում) *Բայց*

դանը գնացող կնոջը) *Լսեցի՞ր, ա՛յ կնիկ... Սկի՛ չէի հավատալ։ Գիտե՞ս, մուրհակն ուզում էր պատռի, պարտքս ոչնչացնի։*

*ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ*— (Ապշած) *Ո՞ւյ... Հրա՞շք ես պատմում։*

*ՍԱՀԱԿ*— *Հա՛ս... Ասում է՝ թող Սաշային ղուրբան լինի... Ասում է՝ չե՛մ ուզում, թող մնա, երբ Սաշան աշխատի...* (Խորհրդավոր) *Չէ՛, ինչպես տեսնում եմ, Սաշան կպավ աչքին։*

*ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ*— (Սեղանին է մոտենում և սկսում հավաքել) *Հա՛, ի՜նչ լավ կլիներ։ Թե՛ պարտքիցը կազատվեինք, մեր տունն ու բաղը կպրծացնեինք, թե՛ փող էլ կտար վրան...* (Դառնում է դեպի ներքին դուռը և ձայնում) *Կիրակո՛ս...* (Ամուսնուն) *Հը՞, ճիշտ չե՞մ ասում։*

*ԿԻՐԱԿՈՍ*— (Լուռ՝ մտնում է)։

*ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ*— (Նրան) *Հավաքի՛ր... Գառը մորթեցի՞ր։*

*ԿԻՐԱԿՈՍ*— *Հրամանք ես. քերթում են։*

*ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ*— *Լավ, գնանք պատրաստություն տեսնենք... Սամովարը վերցրու...* (Ինքն էլ բաժակներն է վերցնում) *Հետո կգաս մնացածներն էլ կբերես...* (Գնալիս՝ ամուսնուն) *Հը՞, քեֆդ լավացավ, չէ՞... Ինչ ուզում են՝ ասեն. Գրիգոր աղան լա՛վ մարդ է։* (Դռան միջից) *Սաշան էլ, ինչպես տեսնում եմ, թերևս...*

*ՍԱՀԱԿ*— (Միջամտում է) *Լա՛վ, լա՛վ, հերի՛ք է։ Ի՞նչ ես էլի ամենքին ասում։ Ձենդ փորդ քաշի՝ տեսնենք ի՞նչ կանենք։* (Տիկին Մանուկյանը գնում է)։

*ՍԱՀԱԿ*— (Ձեռքերը շփելով՝ մի քանի քայլ է անում, հետո գնում դեպի պատշգամբ։ Փողոցից լսվում են հեռավոր երգի և երաժշտական գործիքի խուլ ձայներ։ Սահակը մի բան է հիշում. շտապով գնալ է ուզում, բայց դրսից լսվում են ճռճիչների ձայներ։ Կանգ է առնում)։

Տ) Նույն, ԹԵՐԵԶԱ, ԱԼԵՔՍԱՆԴՐ և ՄԱՐԳՈ (ծիծաղելով ու ճռճիչներով ներս են խուժում)

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— (Կիսավին դեպի դուռը) *Այդ չեղա՛վ, օրիո՛րդ. դուք խոսք տվիք ասելու...* (Ներս է գալիս)։

*ԹԵՐԵԶԱ*— (Ներս է մտնում, կոկետությամբ) *Չե՛մ ասել... Դա ի՛մ գաղտնիքն է։*

*ՄԱՐԳՈ*— *Թող չասի. ե՛ս կասեմ։ Քե՛զ համար էր, Սա՛շա, քե՛զ համար։*

*ԹԵՐԵԶԱ*— (Բողոքելով) *Չհավատաք, սո՛ւտ է, դիտմա՛մբ է ասում, որ ինձ կարմրացնի...* (Մարգարիտին, իբր թե բարկացած) *Չա՛ր, չա՛ր...* (Սպառնում է, հետո հարձակվում է Մարգոյի վրա, բայց պինդ գրկում է և համբուրում)։

*ՄԱՐԳՈ— Այո՛, մնա՛, Թերե՛զ. հետո ծառան քեզ կտանի։*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ— Ինչո՞ւ, ինքս կտանեմ... Ուրեմն մնո՞ւմ եք...*

*ԹԵՐԵԶԱ—* (ժպտալով նրան) *էլ ի՞նչ արած, որ այդպես եք ուզո՛ւմ...*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ— Շնորհակալ եմ...* (Հորը): *Հա՛յր, իմաց տուր երգչին, թող մեզ մոտ լինի այս երեկո։* (Թերեզային) *Դո՞ւք էլ սիրում եք այդ երգերը։ Ես շա՛տ եմ սիրում և շա՜տ էլ կարոտել եմ... Նրանց մեջ խոր զգացմո՛ւնք կա...*

*ԹԵՐԵԶԱ— Ե՛ս էլ սիրում եմ. մի քանիսնե՛րն էլ ինքս երգում եմ... Բայց լսենք՝ տեսնենք ի՞նչ է երգում...*

**(Երգը մոտենում է: Երգում են Հ. Հովհաննիսյանի «Արազն եկավ լափին տալով» երգը: Բոլորը լուռ՝ լսում են: Ալեքսանդրը համարյա սիրալիր՝ կպել է Թերեզային, և սա էլ չի քաշվում: Սանակը մեկ-մեկ նայում է և ժպտում: Մարգոն էլ նայում է, հետո բո-թում հորը. որ նայի, և լուռ՝ ծիծաղում է):**

**(Երգը շարունակվում է երաժշտության հետ, և վարագույրը կամաց-կամաց իջնում է)**

**ՎԱՐԱԳՈՒՅՐ**

*խելք ունիս, ամի՛, անսա՛ս տեղդ գնա. Գրիգոր աղան ուզում ա Ալեքսան բեկին իրան փեսա շինի... իմացա՞ր...*

ԲՈԼՈՐԸ— *Բո՜... Ղո՞րդ...*

ՉԱՔԱՐ— *Լսել եմ։ Սրանց ասում էի՝ չէին հավատում... Տեսա՞ր, Բաղդասա՛ր ամի. գե հմի քա՜ղդ էլ գնաց, դու էլ հետը։*

ԲԱՂԴԱՍԱՐ— (Գլուխն է երերցնում) *Բա ասում էին՝ Ալեքսան բեկը ուսում առա՛ծ մարդ ա, գեղացու ցավը գիտի՛, արդարության կողմը կբռնի...*

ՄԱՐԳԱՐ— *Դե արդարությունն էլ է՞ն ա, որ մարդ իր աներոջը դատաստանի չի՛ քաշի, է՛լի... Բա չե՞ս իմանում, որ երկու տեսակ արդարություն կա։*

ԲԱՂԴԱՍԱՐ— *Էդ քո աբլակատ Մարտիրոսը դառավ... Փող չունեցողի համար, ասում ա, ուրի՛շ արդարություն, հարուստի համար՝ ուրիշ։* (Գլուխն է երերցնում) *Բա ինձ ասել են, թե օրենքը ամենքի համար մե՛կ ա...*

ԿԻՐԱԿՈՍ— *Մեկ լինելը՝ մեկ ա. ամա արի տես, որ ինձ ու քեզ համար օրենքով շարժվողները մեկ չեն... Ամա դո՛ւ գիտես. կուզես՝ սպասիր հմի ալեն կգա։*

ՍԵՐՈԲ— *Ե՛ս էլ խնդիրք ունեմ...*

ԿԻՐԱԿՈՍ— *Քոնը իմանում եմ...* (Գնում է դեպի դուռը) *Մի քիչ ըտեղ կացեք, էն ա՝ կգա...*

2) Նույնք և ԱԼԵՔՍԱՆԴՐ

ԱԼԵՔՍԱՆԴՐ— (Ամառվա հագուստով, գլուխը բաց, մտնում է տան դռնից) *Հա՛... Գյուղացի՞ք են...* (Մոտենում է) *Բարև ձեզ։ Երևի ինձ հետ գործ ունիք։*

ԲԱՂԴԱՍԱՐ— *Հրամա՛նք ես, Ալեքսան բեկ... Սո՛ւդի գործ...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ— *Լա՛վ... Համեցեք նստեք...* (Կիրակոսին) *Ո՞ւր ես ...ում. ինձ համար կոֆե բերի՞ր։*

ԿԻՐԱԿՈՍ— *Է՛ն ա բերել ե՛մ... Մարգարիտը կգա՝ կլցնի։* (Գնում է)։

ԱԼԵՔՍԱՆԴՐ— (Նստում է նստարանի վրա) *Համեցե՛ք, նստե՛ք։*

ՉԱՔԱՐ— *Վնա՛ս չունի, աղա՛, ըսենց էլ լավ ա։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ— *Չէ՛, ինչո՞ւ... Ա՛յ, էն աթոռները առեք... Եվ կամ եկեք հենց այստեղ, կողքիս նստեք... Ի՞նչ է, քաշվո՞ւմ եք... Ձեր գյուղացին չե՞մ, թե՞ ես լավ եմ ձեզ համար։*

ՍԵՐՈԲ— *Ինչի՞ լավ, բեկ ղուրբան. մեր Սահակ բեկի տղան չե՞ս. մեր գյուղերումը, մեր աներումը քի՞չ ես խաղացել...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ— *Հա՞... Ավելի՛ լավ... Մենք բոլո՛րս էլ մի երկրի զա-*

ԲԱՂԴԱՍԱՐ— Հա՛, քեզ մատաղ. ասված էլ գիտի (գյուղացոց ցույց տալով) սրա՛նք էլ գիտեն... Մեկ տարի բաղս բերք չտվավ, տո՛ւրք պիտի տայի...

ՋԱՔԱՐ— Ա՛յ Բաղդասար ամի, յանի զո՞ւր չես խոսում. էդ խո ըլելու բա՛ն չի. առել ես, պիտի տաս...

ԱԼԵՔՍԱՆԴՐ— Իհարկե, իհարկե, առել ես, պիտի տաս... Բայց դու ասում էիր, թե 200 մանեթ է դարձել պարտքդ. հա՞։

ԲԱՂԴԱՍԱՐ— Տոկոս եմ տվել, տոկո՛ս... 100 մանեթը երբ առա. չէր տալիս՝ մինչև 150-ի տակ ձեռք չքաշեցի... բաղից-բանից էլ՝ Հարյուրից ավելի տված կըլիմ... էս տարի վեքսիլը թազացրեց—չկարացի տալ—150-ը 200 շինեց... (Գյուղացոց) Ըսենց չի՞, ա՛ խալխը. դուք ու ձեր աստվածը. սո՞ւտ եմ ասում...

ԲՈԼՈՐԸ— Ղորդ, ա, ըտե՛նց ա...

ԱԼԵՔՍԱՆԴՐ— (Գլուխն է Ներերնում) Հը՛մ... վեքսիլի մեջ խո չի՝ գրած, որ Հարյուրը տոկոսն է։

ՋԱՔԱՐ— Բա գրա՞ծ կըլի. գիժ խո չի՞։ Ինչի՞, մենք չե՞նք իմանում, որ դավոնով էդքան տոկոս չի ըլի... ամմա որ Նեղն ա լծո՛ւմ. դու էլ որ պե՞տք ես ունենում...

ԲԱՂԴԱՍԱՐ— Հա՛, քե՛զ մատաղ, նե՛ղն ա լծում... Ասում ա՝ է՛ս ա, կուգես-տամ... Որ վեքսիլն էլ չես ուզում թազացնի—գալիս բողազից ա բռնում, ուզում ա սուդը տա, տունդ ու տեղդ խլի...

ԱԼԵՔՍԱՆԴՐ— Սպասիր... Դու ասացիր, որ 150 ռուբլու էր առաջին վեքսիլդ, երբ թազացրիր... Իսկ Հինը Հետ տվա՞վ քեզ. երբ երկրորդը առավ։

ԲԱՂԴԱՍԱՐ— Չէ... ընչի՞ որ... Կըլի որ ճղած ըլեմ... Հա՛ ամմա. մի-տուր ա, ի՛նքը Հենց ինձ մոտ ճղեց ու զցեց։

ԱԼԵՔՍԱՆԴՐ— (Դառն ժպիտով) Խամությո՞ւն ես արել, ամի՛... Բայց տեսնե՛նք, առաջ մեկ ասա, որի՞ն ես պարտ...

ԲԱՂԴԱՍԱՐ— (Շփոթված և լուռ բիչ, մյուսներին է նայում) Սկի... Ես ճանաչիլ...

ԱԼԵՔՍԱՆԴՐ— (Նա նկատում է գյուղացոց շփոթվելը) Հը՞, էդ ո՞վ է, որ գիտեք ու թաքցնում եք անվանել... Պիտի ասեք, որ գործ սկսե՞մ թե՞ չէ. . ([illegible] մի բան ճիշելով, ոտքի է ելնում, ուշադրությամբ նայում է գյուղացոց, դեմքը մռայլվում է. խիստ) Չլինի՞ էլի...

ԲԱՂԴԱՍԱՐ— (Ոտքի է ելնում, վախեցած) Մի՛ Նեղանալ, քե՛զ մա-[illegible]... Որ իմացա, մտածեցի, թե ուսում առա՛ծ մարդ [illegible] արդարության կողմը պահես...

ԱԼԵՔՍԱՆԴՐ— (Ավելի խիստ) Ուրեմն նա՞ է՝ Գրիգոր աղան...

ԱԼԵՔՍԱՆԴՐ— Ո՞վ է, դարձյա՞լ Գրիգոր աղան։

ՋԱՔԱՐ— Չէ՛, քե՛զ մատաղ, Ավետիսանց Գաբրելն ա...

ԲԱՂԴԱՍԱՐ— Սո՛ւտ ա, ա՛ խալխը, սո՛ւտ ա... Ես ձեզ ասել եմ ու կասեմ, որ Գաբրելը սկի կո՛պեկ չունի, որտեղի՞ց քեզ 500 մանեթ տվավ... Է՛լի Գրիգոր աղան ա... Ա՛յ կտեսնեք. բաղիդ վրա աչք ա տնկել ու Գաբրելի՛ն ա մեջ գցել...

ԱԼԵՔՍԱՆԴՐ— (Մարգարին և Սերոբին) Իսկ դո՞ւք ինչ գործ ունիք... (Հիշելով) Հա՛... ձեր խնդիրը պատրաստել եմ... Ուզածս թղթերը բերի՞ք։

ՄԱՐԳԱՐ— (Հանում է ծոցից թղթեր և տալիս է) Հրե՛ս, բերել ենք...

ԱԼԵՔՍԱՆԴՐ— (Առնում է) Լա՛վ... Երբ գործը կնշանակվի, ձե՛զ էլ իմաց կտամ... Ապահո՛վ եղեք. իրավունքը ձե՛ր կողմն է։

ՍԵՐՈԲ— Այ, աստվա՛ծ քեզ օրհնի... Բաս մենք կպրծնենք, է՛լի...

ԱԼԵՔՍԱՆԴՐ— Անպա՛տճառ։

ՋԱՔԱՐ— Բաս ի՞մ գործը ոնց անենք, Ալեքսա՛ն բեկ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ— Քո՛ գործն էլ ես կվերցնեմ։ Իհարկե դու էլ վկաներ կունենաս... Մի քանի օրից է՛լի եկեք. ես մեկ տանուտերի հետ կխոսեմ, հետո ձեզ կանչել կտամ։

ԲԱՂԴԱՍԱՐ— Բաս գնա՛նք, ա՛ խալխ։ Աստված մեր Ալեքսան բեկին մեզ համար սա՛ղ պահի։

ԱԼԵՔՍԱՆԴՐ— Մի՛շտ եկեք ինձ մոտ ազանց քաշվելու՝ երբ գործ ունենաք։ Մեկ էլ՝ այսուհետև առանց ինձ հարցնելու սկի՛ ձեռք չքաշեք վեքսիլի կամ ուրիշ թղթի... էդ քյաչալից էլ զգույշ կացեք. ասում են, որ Գրիգոր աղայի մարդն է... (Բաղդասարին) Ա՛մի... (Ջաքարին) Դո՛ւ էլ. էս երեկո եկեք ինձ մոտ՝ խնդիրներդ գրեմ և մտածենք, թե ի՞նչ պիտի անենք... Մեկ 5-10 վկաների անուննե՛ր էլ բերեք... Գրիգոր աղան չլինի՝ ո՛վ ուզում է լինի—եթե անիրավ է, ձեռքիցս չի՛ պրծնիլ. միայն թե՝ վկաներ...

ԲՈԼՈՐԸ— Ամենքս, ո՛ղջ գյուղը...

ԱԼԵՔՍԱՆԴՐ— Շատ լավ ուրեմն... Չփախչեք, ա՛յ... իմացե՛ք, որ սրչին թե բռնեցինք, էն ա ռանել ենք։ Թե ձեռքից բաց թողնեք, վայն եկել ու ձեզ տարել է հետո։

ԲԱՂԴԱՍԱՐ— (Ուրախ) Բաց չենք թողնիլ աստծով... Աստվա՛ծ քեզ պահի... Թե բաղս ու տունս ազատեցիր՝ ընտանիքով օրհնող կըլենք։

ԱԼԵՔՍԱՆԴՐ— (Նրա ուսը ծեծելով) Լա՛վ, լա՛վ, ա՛մի։ Օրհնի՛ր դու, որ առաջ տանենք գործը։ Թե չէ՝ շատ էլ հեշտ չի այդ արջին թալակ գցելը... (Ասպանալից) Բայց որ գցեցինք, է՜է՜...

ԲԱՂԴԱՍԱՐ— Այ դու շա՛տ ապրես... էն սուրբ խա՛չը քեզ օգնական. (Բարեմաղթություններով և ուրախ խոսակցելով՝ բոլոր գյուղացիք դուրս են գնում)։

տեսնում ես. թշվառների դառն քրտինքո՛վ է հարստանում այդ մարդը. Ճզմո՛ւմ է ամենքին. կրակ դրել՝ գյո՛ւղն է վառում... Էլ ո՛ր օրվա համար ասում առա. ինչո՞ւ բերնիցդ զրկեցիր և փող ուղարկեցիր ինձ, որ արդարությունը պաշտպանելու համար զինվեմ ու զինավարժվեմ...

ՍԱՀԱԿ— (Միջամտում է) Սպասի՛ր, Սաշա՛, մի տաքանալ... Միթե որ ամեն բան չգիտե՞ս... Գուցե սո՛ւտ են ասում, թշնամությո՛ւն անում... (Տխուր և ինքը իր համոզմանը դեմ) Ա՜խ, գուցե՛, գուցե... Բայց ի՞նչ ասեմ... Հոգուս ինչո՞ւ մեղք բանամ... Ճի՛շտ են, ճի՛շտ՝ բոլորը...

ԱԼԵՔՍԱՆԴՐ— Ահա՛, տեսա՞ր... Դո՛ւ էլ ճշտում ես ուրեմն։ Ես չեմ հասկանում դրանից հետո, թե ինչո՞ւ երկու շաբաթից ի վեր դու արգելում ես ինձ նրա դիմակը պատռելու, նրան դատարան քարշ տալու, ճզմելու և ոչնչացնելու...

ՍԱՀԱԿ— (Հուսահատ) Սպասի՛ր... (Հուզված ելնում է, սեղմում ճակատը: Հետո հանկարծ շուրջն է նայում, վարանում է և հուսկ. ուրեմն, վճռականորեն մոտենում է որդուն. բռնում նրա թևից և՝ խուլ շշուկով) Լսի՛ր, Սա՛շա... Ո՛չ, այլևս չե՛մ կարող ծածկել... Լսիր ի՛նչ կասեմ... Ե՛տ կաց այդ գործից, հանգիստ թող Գրիգոր աղային... (Ավելի հուզված) Եվ կամ, որն ավելի՛ լավ է, գնա՛ քաղաք, թո՛ղ գյուղը, թո՛ղ, խնդրում եմ քեզ, աղաչո՛ւմ եմ, թո՛ղ...

ԱԼԵՔՍԱՆԴՐ— (Ետ է քաշվում զարմացած) Ինչպե՞ս, թողնե՞մ գյուղը... Գնա՞մ... Ձանձրացրի՞ ձեզ արդեն. ինձ վռնդո՞ւմ ես...

ՍԱՀԱԿ— (Նեղացած) Ախ, չէ՛, որդի՛ս, չէ՛. աստված գիտի՛, որ չէ... Ինձ էլ, մե՛զ էլ հետդ տար։ Գնա գործերդ կարգի դիր՝ մե՛նք էլ գանք... Չարի՛ք է այստեղ... Է՛լ չեմ կարող...

ԱԼԵՔՍԱՆԴՐ— Բայց ինչո՞ւ, ի՞նչ է եղել... Ինչո՞ւ ես թաքցնում որդուցդ, ի՞նչ կա... (Բռնում է նոր թևից և քիչ լուռ՝ սպասում. հետո՝ խիստ) Խոսի՛ր, հա՛յր, ուզում եմ իմանալ, վերջապես... (Քիչ լուռ, հետո ծիծաղելով) Կամ գուցե վախենում ես... որ հաղթվե՞մ, նա արդա՞ր դուրս գա և ինձ անպատվի՞... (Քրքիջ) Ինչ վախկո՛տն ես եղել, հա՛յր... (Քաջ) Մի՛ վախենալ, ի՛մ կողմն է արդարությունը՝ թեկուզև հաղթվեմ ես, լռեցնե՛ն ինձ։ Բայց ես կխոսեմ ամեն կերպ, կգոռա՛մ... Եվ վերջապես՝ խամ չեմ ես, գիտեմ օրենքները, փաստե՛ր ունիմ...

ՍԱՀԱԿ— (Ավելի հուզված) Չէ՛, չէ՛... ա՛յդ չէ... (Նստում է և գլուխը ձեռքերի մեջ առնում: Մի վայրկյան լռություն է):

ԱԼԵՔՍԱՆԴՐ— Հա՛յր...

ՍԱՀԱԿ— (Գլուխը բարձրացնում է և պղտոր հայացքով նայում):

*ՍԱՀԱԿ*— (Նույնպես նկատում է նրան։ Ժողովում է իրեն և մնում է տեղում անշարժ)։

*ԳՐԻԳՈՐ*— (Մի վայրկյան փոխնիփոխ զննում է երկուսին էլ. նետում կեղծ ժպիտ դեմքին, սիրալիր) *Բարև ձեզ... Խանգարեցի՞... Սոփի աղջիկս այստեղ է... Այս կողմերիցն էի անց կենում...* (Մոտենում է) *Հը՞... Ի՞նչ է եղել, տխո՞ւր եք... Չլինի՞ կռվել եք։* (Սահակին) *Երևի մի քիչ խի՛ստ ես խոսել հետը, հը՞... Ջահելի հետ խոսելը դեռ չես սովորել...* (Ալեքսանդրին) *Մի՛ նեղանալ, որդի, հա՛յր է. միշտ որդոց լա՛վն են ուզում հայրերը... Համ էլ Սահակ բեկը խելոք մարդ է...* (Նստում է) *Նրա՛ն դու լսիր, վատ բաներ չի՛ ասիլ...*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— (Շարժվում է տեղից և չոր) *Սխալվում եք, մենք չե՛նք կռվել։*

*ՍԱՀԱԿ*— (Տխուր ժպտում է) *Է՜հ, ինչո՞ւ պիտի կռվեինք. խոսո՛ւմ էինք էնպես... Հրամանոցդ չէի՛նք սպասում...*

*ԳՐԻԳՈՐ*— *Հա՛, տեսնո՛ւմ եմ... Ասի՝ մեկ մտնեմ, Սաշի քեֆը հարցնեմ... Բաս ո՞ւր է, մեր աղջիկը ձեզ մո՛տ էր եկել ախր... Ախպե՛ր, էլ Թերեզին պահել չի լինում։ Չգիտեմ, ինչ-որ շատ է սիրել ձեր... Մարգարիտին։ Գիշեր-ցերեկ նրա վրա՛ է խոսում։ Տեղիցը վեր է կենում թե չէ՝ «Գնա՛մ Մարգարիտի մոտ»։ Յա թե չէ՝ «Սե՛րգո, գնա Մարգարիտին ասա՝ ինձ մոտ գա»... Որ բան է, ըստեղ ընկավ, է՛լ տուն վերադառնալ չկա...*

6) Նույնք և ԹԵՐԵԶԱ.

*ԹԵՐԵԶԱ*— (Տան դուռը բաց է անում, կիսովին երևում և շուրջն է նայում, առանց գլխարկի) *Գնացե՞լ են գյուղացիք...* (Ներս է գալիս սանդուղների գլխից) *Ֆո՛ւհ, Ալեքսա՛նդր Սահակիչ, ինչ վա՛տ մարդ եք եղել, [illegible] մարդիկ... Մի ժամ է, որ մեզ ներսը փակել եք...* (Մոտենում է և ձեռք է սեղմում Ալեքսանդրին) *Բա՛րև ձեզ...* (Հորը) *Դու է՞լ այստեղ ես, հայրի՛կ։*

*ԳՐԻԳՈՐ*— *Բո՛ւ, ա՛յ աղջի, մեկ ժամ է այստեղ եմ և նո՞ր ես տեսնում Սաշային.. Չլինի՞ դու էլ նոր ես գալիս։*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— *Ներսն էին. ես այստեղ զբաղված էի։*

*ԹԵՐԵԶԱ*— (Հորը) *Երևակայի՛ր, հայրի՛կ, մի ժամ է, որ այս անտանելի մարդը մեզ ներսում փակել է և արգելել պարտեզ իջնելու— թե ի՞նչ է՝ Ս[illegible] գյուղացիների հետ գործ ունի։*

*ԳՐԻԳՈՐ*— *Հը՞մ, դա՛... Փաստաբան մարդ է, աղջի՛կս. իհարկե, պիտի՛ [illegible]. Երևի գյուղացիները գործե՛ր ունեին հանձնելու...* (Ժպտալով) *[illegible] նրանց ճանապարհին՝ այստեղից գնալիս...* (Ալեքսանդրին) *[illegible] ինչ կասեմ քեզ, Ալեքսա՛ն բեկ։* (Խրատական) *Ինձանից քեզ*

ԹԻՐԻԶԱ— (Թեթևամտությամբ) Է՛հ, Ալեքսանդր Սահակիչ, ինձ թվում է, որ դուք երբեմն ամեն ինչ շա՛տ եք մեծացնում և սրտի մոտիկ վերցնում... (Ժպտալով) Հայրս դրան ասում է «գրքերի քամիներ»... Չեմ կտնում, օրինակ, որ գյուղացիք, Հիրավի, այնպիսի մեծ ցավեր ունենան, որ պետք լիներ ձեր ամբողջ ուշադրությանը և ողորմությանը... (Նկատելով Ալեքսանդրի դեմքի շարժումը) Դուք նեղանո՞ւմ եք ասածներիցս... (Քիչ լուռ) Լա՛վ ուրեմն. այո՛, գուցե ես սխա՛լ եմ... Ո՞վ գիտե... Բացատրեցեք գոնե... Ես գրեթե ոչի՛նչ կամ սխալ գիտեմ այդ բոլորի մասին... (Լուռ) Ինձ միշտ կրկնել են, որ գյուղացիք լավ ո՛ւտում են շինում, լակե՛ն են՝ թեկուզ Հարուստ էլ լինեն... կեղծո՛ւմ են, գիտա՛մբ աղքատ ձևանում, կանգատվում են և ողորմություն Հայցում անտեղի կերպով... Չգիտեմ, ճշմարիտ, թե որքա՛ն իրավացի են այդպես ասողները...

ԱԼԵՔՍԱՆԴՐ— Ձեզ խաբե՛լ են, օրիո՛րդ... Եվ այդ նրա՛ Համար են խաբել, որովհետև տեսել են, որ լա՛վ սիրտ ունիք, կարող եք Հուզվել անիրավություններից... գուցե մինչև իսկ բողոքել, աղմուկ Հանել... Դուք էլ ան[illegible]ամբ չեք կարողացել և կամ չե՛ք ջանացել իմանալու (Քիչ լուռ) Բայց, եթե կուզեք, ես, իբր նմուշ, մի քանի խոսքով նրանց ցավերից մի ամենա[illegible]ը պատկերացնեմ ձեր առաջ...

ԹԻՐԻԶԱ— Խնդրեմ. շնորհակալ կլինեմ... Հիրավի, այժմ մտածում եմ, որ ես չափազա՛նց տգետ եմ մնացել և շուրջս կատարված իրողությունների խորը թափանցելու չե՛մ ճգնել... Եվ դուք այնքա՛ն լավ եք խոսում, որ... ինձ Հաճո՛ւյք է ձեզ լսել... Դե՛հ, խոսեցեք... (Թեթևամտաբար՝ ծիծաղելով) Երևի սոսկալի բաներ եք պատմելու, չէ՞... (Կոկետաբար) Ա՛խ, [illegible] ֆանտազյոր...

ԱԼԵՔՍԱՆԴՐ— (Դեմքը կնճռելով) Ֆանտազյո՞ր... Այդպե՞ս եք Համարում դուք ինձ։

ԹԻՐԻԶԱ— (Ծիծաղելով) Այն Հաստատիչ Մատվեյ Եգորի՛չն է ձեր [illegible] այդպես խոսում։

ԱԼԵՔՍԱՆԴՐ— Իսկ դո՞ւք...

ԹԻՐԻԶԱ— (Նեղանում է) Ե՞ս... ես միայն գտնում եմ, որ դուք... այո՛, [illegible] յուրօ եք և զգայուն... այնպե՞ս, է՛լի... շա՛տ խորն եք մտա[illegible] [illegible]թե այդ լավ է... (Լուռ) Ա՛յ, Հենց այս րոպեիս էլ. այնպե՛ս [illegible] մի ունիք, որ կարծես մի ծա՛նր բան է պատահել... (Տխուր) Ու [illegible] ուզում մասնակից անել ձեր ցավերին... Ե՛վ դեռ ասում եք, որ [illegible] լինենք...

[illegible]ՆԴՐ— Ճշմարիտ է... Այո՛, այս րոպեիս սրտիցս արյուն

*ԹԵՐԵԶԱ— Ներեցեք... Ես ձեզ չե՛մ հասկանում... Իսկ ինչո՞ւ է տալիս. հարկի փոխարե՞ն, կամ գուցե պարտքե՞ր ունի...*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ— Այո՛, պարտք ունի..* (Լուռ) *Մեկից, մի ժամանակ, երբ նեղ օրումն է եղել, պարտք է վերցրել 100 ռուբլի, իսկ ստորագրություն է տվել 150 ռուբլու...*

*ԹԵՐԵԶԱ— Բայց ինչո՞ւ. եթե 100 ռուբլի է վերցրել, ինչո՞ւ է 150 ռուբլու ստորագրություն տվել։*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ— Այլապես՝ պարտք տվողը չէ՛ր համաձայնում տալ. իսկ ծերունին պետք ուներ։*

*ԹԵՐԵԶԱ— Բայց դա խո անիրավությո՛ւն է, անգթությո՛ւն... Մի՞թե այդպիսի մարդիկ կան մեր գյուղում։*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ—* (Ավելի հուզված) *Դեռ լսեցեք...* (Քիչ լուռ) *Երկու տարի անդադար, այդ խեղճ ծերունին իր պարտքատիրոջն է տարել, տոկոսի փոխարեն, այգուց, ցորենից, յուղից... իսկ, վերջ ի վերջո, ստիպվել է մի նոր ստորագրությունով՝ 150-ը դարձնել 200... Եթե չաներ, կխլեին նրա տնուտեղը, ամեն ինչը... .*

*ԹԵՐԵԶԱ—* (Սաստիկ վրդովված՝ ոտքի է ելնում) *Բայց դուք սոսկալի՛ բաներ եք պատմում... Ես մտածո՛ւմ եմ... խե՛ղճ Բաղդասար-ամի... Ինչո՛ւ չէ հայրս չգիտե այդ բոլորը. պիտի հայտնել. պարտավո՛ր եմ, որ օգնեն թշվառին...*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ— Բայց դեռ ավելի սոսկալի՛ն պատմեմ ձեզ...* (Լուռ, խիստ մռայլ) *Դուք, անշո՛ւշտ, դեռ չեք մոռացել Սրբաշեն գյուղի փորձանքը... Մի գիշերվա մեջ ամբողջ գյուղը գրեթե մոխի՛ր դարձավ հրդեհից. տավա՞ր, մա՞րդ... Հիշո՞ւմ եք։*

*ԹԵՐԵԶԱ— Այո՛... ի՞նչ եք ուզում ասել։ Այդ ժամանակ ես Թիֆլիս էի, բայց լսեցի. սարսափելի՛ բան էր։*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ— Այո՛... Դեպքից շատ ժամանակ չի անցել... Ես Թիֆլիսից նո՞ր էի գալիս և պատահմամբ ընկերացա այնտեղ գնացող մի քանի պարոնների հետ, որոնք Թիֆլիսում կազմված օգնություն հասցնող հանձնաժողովից էին ուղարկվել։ Դեպքից իսկո՛ւյն հետո արդեն՝ հաց, հագուստ և ուրիշ օգնություններ էին հասցրել թշվառ և բացօթյա մնացած վիրավորներին ու անոթիներին...*

*ԹԵՐԵԶԱ—* (Ուղիղ նրա երեսին նայելով) *Այո՛... Հա՛յրս էլ, հիշում եմ, երկու հարյուր ռուբլի նվիրեց...*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ—* (Սառը) *Գուցե... Այդ պարոնների հետ մենք, մթնում էր, երբ Սրբաշեն հասանք։ Գյուղացիք նստել էին իրենց խրճիթների մոխիրների վրա, փլատակների առաջ... Կանայք արտասվում էին վիրավորների և մեռածների վրա... Ո՞ղբ, արտասո՞ւք... Սոսկալի՛ տեսարան*

ԳՐԻԳՈՐ— *Երևի ճաշի պատրաստություն է տեսնում...* (Սահակին) *Գնա՛, Սահակ բեկ, մե՛նք էլ ներս գնանք ու մեր էն գործը կարգադրենք... Թող դրանք բատող խոսան, չահիլ են... Մեկ էլ՝ որ դրանց լեզուն մենք չե՛նք հասկանում... Գնա՛նք։*

ՍԱՀԱԿ— *Համեցեք..* (Առաջ է ընկնում և տան դուռը բաց անում)։

ԳՐԻԳՈՐ— (Նայելով այն կողմը և աստիճանների վրայից) *Երբ գնալու լինես, Թերե՛զ, ինձ իմաց տուր։*

ԹԵՐԵԶԱ— *Լա՛վ, հայրի՛կ, մենք այս րոպեիս ներս կգանք...*

ԳՐԻԳՈՐ— (Կանգ առնելով) *Ես խո չասի էգ... Ինչքան քեֆներդ կուզի—չա՛նա խաղեք... Ձերը խո է՛դ է— խո՛սա, հա խո՛սա... էս թա՛տրոն է, էս բա՛լ է... Ես ի՞նչ գիտեմ...* (Ծիծաղում է) *Դրուստ չե՞մ ասում, Ալեքսան բեկ...* (Սահակին) *Գնա՛, գնա՛նք, Սահա՛կ բեկ..* (Ժպտում է և Սահակի ետևից ներս մտնում)։

8) ԹԵՐԵԶԱ և ԱԼԵՔՍԱՆԴՐ

ԱԼԵՔՍԱՆԴՐ— (Սպասում է որ դուռը փակվի, հետո վազում է դեպի Թերեզը ու ձեռները բռնում) *Խոսի՛ր, Թերե՛զ... Ասա՛, մի՞թե դու ինձ չես սիրում, մի՞թե ես սխալվել եմ։*

ԹԵՐԵԶԱ— (Քնքշությամբ կպչում է նրան) *Կամա՛ց խոսիր, Սա՛շա... Դու լավ տեսնում ես...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ— (Գրկում է և զգվում) *Ի՜մ հրեշտակ...* (Հանկարծ թողնում է նրան գրկից և դեմքը կնճռած՝ մի քիչ հեռանում) *Բայց, սպասեցեք .. Ես դեռ ամեն ինչ չեմ ասել... Եվ դա՝ իմ կողմից վա՛տ բան է...*

ԹԵՐԵԶԱ— (Զարմացած և վախեցած) *Ի՞նչ եղավ քեզ... Ա՛հ, գուցե դու ուրիշի...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ— (Արագ միջամտում է) *Ո՛չ, ո՛չ, ա՛յդ չէ՛...* (Քիչ լուռ) *Լսեցե՛ք, օրիո՛րդ... Դուք իմացա՛ք իմ վճիռը... Ես պիտի մնամ գյուղում, լինեմ գյուղացիների պաշտպան, վարե՛մ նրանց արդար դատը... Ինձ հե՞տ կգաք...*

ԹԵՐԵԶԱ— *Միայն ա՞յդ...* (Ապահովված և ժպտուն՝ մոտենում է) *Ես մեծ ուրախությամբ կօգնեմ քեզ այդ ավազակներին կախելու... Եվ ամենից առաջ՝ այդ խե՛ղճ ծերունու դահճին... Դու կարող ես, չէ՞, կարո՞ղ ես...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ— *Հո՛ւյս ունիմ...* (Ավելի լուրջ) *Մի խոսք ևս...* (Դժվարությամբ) *Ի՞նչ կասեիր, օրինակ, եթե այդ վաշխառուն... հա՛յրս լիներ...*

ԹԵՐԵԶԱ— (Սարսափած ետ է քաշվում) *Հա՞յրդ... Դու կատակո՛ւմ ես, Սաշա . Սահակ աղա՞ն, այդ բարի ծերունի՞ն...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ— (Վազում է դեպի նա) *Թերե՛զ, ներե՛ք ինձ...*

ԹԵՐԵԶԱ— (Հեռացնում է նրան) *Ո՛չ... Վաղ թե ուշ՝ պիտի իմանա-յի...Օ՛, ես այժմ սկսում եմ շա՜տ բան հասկանալ... Հորս ստիպումնե՜րը... Ամե՛ն, ամե՛ն ինչ... Բայց սիրեցի... Որքա՜ն, որքա՜ն ամոթալի բան... Ո՛չ, հեռո՛ւ կացեք...* (Ետ է քաշվում) *Թողե՛ք ինձ, մոռացե՛ք և... և եթե կարող եք՝ ներեցե՛ք ինձ...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ— *Թերե՛զ, մի րոպե, մի բա՛ն մտածենք...*

ԹԵՐԵԶԱ— *Ոչի՛նչ... Դուք ասացիք, որ փաստե՛ր ունիք, գյուղացիք բոլո՜րը... Իսկ դուք, դո՞ւք ինչ ունիք նրա դեմ. չէ՞ որ նա ձեզ սիրո՛ւմ է...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ— *Նա մեր պարտատե՛րն էլ է, իմ խե՛ղճ Թերեզ... և մեր այս տո՛ւնը, այգին... Բոլո՛րը գրավ է հորդ մոտ...*

ՄԱՐԳՈ— *Սա՜շա...*

ԹԵՐԵԶԱ— (Ավելի զուսպ) *Այդպե՞ս... Եվ դո՞ւք, և ձեր հա՞յրը... Այժմ ավելի հասկանում եմ հորս վարմունքը... Աստվա՜ծ իմ, որպիսի՞ ստորություն...*

10) Նույնք, Գրիգոր և Սահակ

(Դուռը բացվում է, և դռան վրա երևում են՝ նախ Գրիգորը, ետևից՝ Սահակը):

ԹԵՐԵԶԱ— (Որ տեսնում է հորը, ուղղվում է և երերում) *Հա՛յր... Սա-շան իմ ձե՛ռքն է խնդրում քեզնից...*

ԳՐԻԳՈՐ— (Ուրախ) *Իրա՞վ.. Վա՛հ, այդպես հանկա՞րծ...*

ԹԵՐԵԶԱ— *Եվ ես մերժեցի՛...*

ԳՐԻԳՈՐ— (Դեմքը կնճռելով) *Մերժեցի՞ր... Բայց ինչո՞ւ... Չէ՞ որ դու ինքդ ասացիր, թե սիրում ես նրան և թե իմ ցանկությունը կկատա-[illegible].*

ԹԵՐԵԶԱ— (Բարկությամբ) *Ծածկի՛ր, ծածկի՛ր այդ բոլոր կեղտը... [illegible], որովհետև չե՛մ ուզում քեզ ազատելու գործիքը դառնալ. իբր [illegible] քեզ փրկելու... Ես սիրո՛ւմ եմ Սաշային. բայց եթե մեռնե՛ի իսկ [illegible], և եթե իմանայի, թե դու ի՞նչ բանի գործիք ես դարձրել ինձ...*

([illegible] ընկնում է Մարգարիտի գիրկը, որ նրան ներս է տանում):

(Մի րոպե ամենքը լուռ՝ նայում են միմյանց):

ԳՐԻԳՈՐ— (Բարկությամբ) *Այդպե՞ս ուրեմն, պարո՜ն. դու վճռել ես [illegible] կամքի՞ բռնվել... Փորձի՛ր...* (Զարմիտ ծիծաղով՝ հանում է ծո-ցից մի մուրհակ) *Տե՛ս... Ո՛չ ուշ քան մի ամիս—և այս տունը ի՛մն է...* (Սիձով) *Չգիտեիր այս, հա՞...*

# ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐՎԱԾ

*Գրիգոր աղա Վարակյանի տանը մի հյուրասենյակ՝ հարուստ և ճոխ կահավորությամբ։ Փոքրիկ գրադարան, երկար վարագույրներ լուսամուտներին։ Առավոտյան ժամը 10-ի մոտերն է, բաց լուսամուտից արևի ճառագայթները ներս են ընկել։ Աջ կողմից մի դուռ՝ տանում է դեպի Թերեզայի ննջարանը։ Խորքում՝ մուտքն է։ Թերեզան մի օրորվող աթոռի մեջ նստած՝ գիրք է կարդում։ Բեմի վրա մի քանի րոպե լռություն է։ Դրսից լսվում են խառնիխուռն ձայներ։*

1) ԹԵՐԵԶԱ, տիկին ՎԱՐԱԿՅԱՆ (մայրը)

*ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ*— (Տնային հագուստով և փոշոտ՝ մտնում է և ձեռները իրար խսելով թափ է տալիս այնտեղ ձեռքը) *Վերջացավ…* (Աղջկան) *Բաս մենա՞կ ես կարդում, ա՛ղջի…* (Նստում է մի բազկաթոռի մեջ) *…ա՞տ ես անցկացրել։*

*ԹԵՐԵԶԱ*— (Տխուր և մռայլ) *Չէի կարդում… Դեռ չվերջացրի՞ն..*

*ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ*— *Ի՞նչը. ցորեն դատարկե՞լը… Չէ՛, մի՛շտ բերում են… բայց, դե՛հ, տեղը արել եմ. ծառաները կհսկեն։*

*ԹԵՐԵԶԱ*— (Քիչ լուռ) *Ասա, մայրի՛կ. հայրս գնե՞լ է այդքան ցորենը։ Ինչ պետք է մեզ այդքանը։*

*ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ*— *Ի՛հ, ա՛ղջի… Դե ես ի՞նչ գիտեմ։ Հա՛լբաթ ծախելու համար է։*

*ԹԵՐԵԶԱ*— *Գուցե իր պարտքով տված փողերի տոկոսներն են, չէ՞։*

*ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ*— *Ի՞նչ մեր բանն է այդ, ինչ ուզում է լինի… Հորդ գործերի մեջ ես ո՛չ խառնվել եմ. ո՛չ էլ ուզում եմ խառնվել… Դե՛հ, կարդա տեսնե՛նք… Որտե՞ղ մնացինք։*

*ԹԵՐԵԶԱ*— (Գրքի վրա է նայում և մտազբաղ) *«Տղան հասնում է վիշապի տան առաջ»…* (Հանկարծ մորը) *Ասա՛ խնդրեմ, մա՛յրիկ. յուղ, մածուն, ձու… այդ բոլորը որ այնքան բերում են մեզ—դրա՞նք էլ տոկոսներ են։*

*ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ*— *Զա՞հլես տարար… Մե՞զ ինչ. կուզեն՝ թող տոկոսներ լինեն… Հա՛լբաթ, փող որ պարտք է տվել—խո ձրի չի՞ տվել… Տոկոսը ա՛յդպես է լինում… Կա՛րդա. հետաքրքիր է, թե վիշապը ինչպես ընդունեց տղային։*

*ԹԵՐԵԶԱ*— *Ինչպե՞ս պիտի ընդուներ… Անշուշտ կտոր-կտոր արած կլիներ։*

*ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ*— (Ժպտում) *Հենց է՛դ ա, է՛է… Հեքիաթների մեջ*

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ— (Շփոթված) *Ես էդ չէի իմանում...* (Ակամա նեղացած) *Դե տե՛ղն ա նրան. ինչի՞ ա պարսք անում. թող յորղանի գյորա՛ ստները պարզի...* (Ելնում է և նայում դեպի դուռը)։

ԹԵՐԵԶԱ— *Չլսեցի՛նք, թե միշտապը ինչպես ընդունեց տղային։*

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ— *Դե կարդո՞ւմ ես, որ... Գնամ տեսնեմ կուխնումը ի՞նչ են անում. Մատվեյ Եգորիչը էսօր ճաշին մե՛զ մոտ է գալու։*

ԹԵՐԵԶԱ— *Դատավո՞րը... Իսկ հա՞յրս երբ կերթա նրա մոտ։*

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ— (Զարմացած՝ կանգ է առնում) *Ինչի՞ որ... Երբ կանչի։*

ԹԵՐԵԶԱ— *Երևի շուտո՛վ...* (Մտախոհ՝ նայում է դուրս լուսամուտից)։

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ— (Քիչ նայում է նրան, հետո գլուխն է շարժում և դուրս գնում)։

Դրսում խառն աղմուկը մեծանում է. լսվում է Գրիգոր աղայի բարձր ձայնը։ Հետո աղմուկը ճանկարծ դադարում է, և Գրիգոր աղան է խոսողը՝ դրսից։

ԳՐԻԳՈՐ— (Դռնից) *Լա՛վ, լավ, տեսնե՛նք... Մի քիչ սպասե՛ք...*

ԹԵՐԵԶԱ— (Ցնցվում է, դառնում և գնում է ննջարանը)։

3) ԳՐԻԳՈՐ, Քաշալ ՄԱՐՏԻՐՈՍ

ԳՐԻԳՈՐ— (Մտնում է խորհի դռնից, նայում է շուրջը) *Էս ո՞ւր են մերոնք...* (Գնում է դեպի ննջարանի դուռը և քիչ բաց է անում) *Դու այստե՞ղ ես, Թերե՛զ... Հա՛, կարդո՞ւմ ես։ Լա՛վ, քեզ անհանգիստ չենք անի։* (Փակում է դուռը և Մարտիրոսին) *Դե՛հ, տեսնե՞նք... Նստի՛ր... Ասածներս արի՞ր...*

ՄԱՐՏԻՐՈՍ— *Բա չէի՞ անի։ Կանչեցի ամենքին։ Եկան։ Էնպե՛ս ուրախ էին որ...*

ԳՐԻԳՈՐ— (Չար ժպիտով) *Հիմար լինելուցն է... Նստի՛ր։ Ասա՞, ցույց տուր վեքսիլները... Շա՞տ է։*

ՄԱՐՏԻՐՈՍ— *Հինգ հարյուր մանեթի... Հենց որ փողերը տաս՝ ձեռք կբերեն։*

ԳՐԻԳՈՐ— *Իսկ գրա՞ծն ինչքան է։*

ՄԱՐՏԻՐՈՍ— *Ճիշտ 703 մանեթ... Բոլորը մեկ տարով կամ վեց ամսով.* (Հանում է ծոցից մի կապոց և վերցնում է մեկ-մեկ մուրհակները) *Սա էլ էն մեկը Կարմիր-քարեցի Սարուխանինը։ 150 կտանք՝ մեկ տարով... Մնացածն էլ մյուսն խփած—217 մանեթի։*

ԳՐԻԳՈՐ— *Էլ ինչի՞ յոթը...* (Ժպտալով) *Ամա հասկանում եմ... Սատանան էլ են եղել, հա՞...*

*ուրս գնաս՝ պարտեզում կարդաս, լավ չի՞ լինիլ… Հիմի այստեղ գյուղացիներ կլցվին. նրանց զոզռոցը քեզ կխանգարի։*

*ԹԵՐԵԶԱ*— (Ներսից) *Լավ… Գնամ…*

*ԳՐԻԳՈՐ*— (Աչքով է անում ծառային և ինքը սպասում):

*ԹԵՐԵԶԱ*— (Քիչ հետո դուրս է գալիս և անցնում. չի պատասխանում Մարտիրոսի խոնարհ բարևին: Մյուս դռան մոտ հասնելիս՝ դառնում է հօրը) *Հա՛յր, այդ եկող գյուղացիների մեջ սրբաշենցիք էլ կա՞ն…*

*ԳՐԻԳՈՐ*— (Զարմացած) *Ի՞նչ… Սրբաշե՛նցիք… Չէ. ինչի՞ որ…*

*ԹԵՐԵԶԱ*— *Ոչի՛նչ…* (Գնում է):

*ԳՐԻԳՈՐ*— (Նրա գնալուց հետո կնճռված ու մտախոհ, դառնում է Մարտիրոսին) *Դու բան հասկացա՞ր…*

*ՄԱՐՏԻՐՈՍ*— (Ուսերն է թօթվում) *Բարիշնեն հիվա՛նդ ա երևում…*

*ԳՐԻԳՈՐ*— (Ծառային) *Ասա թող գան հիմի… Խանումին էլ ասա՝ թող մեկ գնա Թերեզի մոտ. .* (Խիստ) *Շա՛ն օրը կգցեմ ձեզ, թե բարիշնի քեֆին կպել եք… Գնա՛…* (Ծառայի գնալուց հետո) *Հիվա՛նդ ա երևում…* (Կնճռոտ և կատաղի) *Է՛ն-է՛ն չ՛ն… արլակատի՛ն…* (Սթափվում է և Մարտիրոսին) *Պրծի՛ր, էլի՞ կա։*

*ՄԱՐՏԻՐՈՍ*— (Խոնարհ) *Մեկը մնաց… Շա՛տ չի. 150—մեկ տարով տված՝ 236 մանեթ… Սիպտակ-շենից։*

*ԳՐԻԳՈՐ*— *Լա՛վ, թող ձեռք քաշեն, երեկոյան բեր ու փողերն ստացիր… Դե՛հ, հիմի դու գնա Բաղդասար ամին, բանը թե գան՝ խոսիր հետները, մինչև ես ըստեղ պրծնեմ։*

*ՄԱՐՏԻՐՈՍ*— (Գնում է դեպ դուրը):

*ԳՐԻԳՈՐ*— *Ամա բաղչեն չմանեք… Ղալմաղա՛լ էլ չհանեք։*

*ՄԱՐՏԻՐՈՍ*— *Չէ, քուչումը կսպասենք, մինչև մյուսները գնան։* (Գնում է):

5) ԳՐԻԳՈՐ, ՄԱՐԿՈՍ, ԳՍԼՈԻՍՏ և ՀԱՅՐՍՊԵՏ (գյուղացիներ)

*ԳՐԻԳՈՐ*— (Մենակ. դեմքը կնճռած և մռայլ) *Ամեն բան ասած կլինի… Սրբաշե՛ն… Հը՛մ… Չլինի՞ դա էլ է պատմել…* (Սպառնալից) *Սպասի՛ր, ես քեզ էնպես թոցնեմ որ…*

*ԳՅՈՒՂԱՑԻՔ*— (Երևում են դռան մեջ, ներս են գալիս և դռան կողքին խոնարհ կանգնում):

*ԳՐԻԳՈՐ*— (Նրանց) *Նե՛րս եկեք… Հը՞, ուզում եք թաղացնի՞…* (Նեղսրտած) *Չէ՛, էլ չե՛մ կարող… Փողերս բերեք ու պրծնի-գնա… Գործերս շատ բան են, գնում քաղաքից. հավիտյա՛ն գնում… էն ա ձեզ նոր տավա՛լ եմ անելու. նրա՛ն գնացեք, թող նա՛ պարտք տա ձեզ… Քանի նա կա—*

*պատճա՞ռ—որ պատվա՛կան մարդկանց անո՛ւնն ա կոտրում, զրպարտում ա... Ցա թե չէ՝ խռովություն ա գցում գյուղումը..*

ԳԱԼՈՒՍՏ— *Ո՞նց կըլի, աղա՛։ Բա ընչի՞, քննություն չե՞ն անի. հենց ընենց մեր ապա՞ծին կկախե՞ն։ Չե՞ն ասի, թե առաջումը գանգատ տվեք ու քննենք... Ցա թե չէ՝ որ թուղթ էլ հենց շինենք—ողջ հասարակությունը ձեռք կքա՞շի. քյոխվան կթո՞ղա. չե՞ն հարցնիլ, թե մարդը ի՞նչ ա արել, որ ուզում էր գեղիցը դուրս քշի...*

ՄԱՐԿՈՍ— *Չէ՛, աղա՛, էտ ըլելու բան չի՛. . չե՛նք կարա. բան չի՛ դուրս գա։*

ԳՐԻԳՈՐ— (Քիչ նրանց է զննում, հետո հանկարծ ժպտում է և ավելի կակուղ) *Ա՜յ թե միամիտ խալխ եք ըլել, հա՜... Հավատացեք, է՞լի, որ իմ ասա՛ծ վեչն ա, թե նա գե՞ղումն ա, յա չէ...* (Խրոխտ) *Տո՛, ըստի մտիկ մեկ տվեք, է՜...* (Գլխարկը վեր է քաշում և ձեռքը ճակատին խփում) *Ա՜յ, ճակատս բա՛ց ա, ո՛չ ոքից վախ չունեմ։ Ո՛չ գողություն եմ անում, ո՛չ ավազակություն... Ընչի՞ց պիտի վախենամ... Հա՛նաք արի, հա՜նաք... Ա՛մա միամիտ խալխ եք...* (Բռնազբոսիկ քրքիջ, հետո լրջանում է) *Հա՛, դե վնա՛ս չունի. էն որ էդքան խնդրում եք, է՛լի ձեզ լավություն կանեմ. հայ-քրիստոնյա ենք, քանի ձեռքներիցս լավություն գա՝ պիտի անենք... Գնացեք մաշալին թազա վեքսիլներ գրել տվեք... Աչքի՛ս վրա. թող փողերս մե՛կ տարի էլ ձեր մոտը պառկի. կորած տեղ չի։*

ԳԱԼՈՒՍՏ— *Աստված քեզ անպակաս անի։ Աստծով... Եկող տարի...*

ԳՐԻԳՈՐ— *Աստծո՛վ, աստծո՛վ... Քյաչալը ցա՛ծումն ա վեքսիլնե՛ր[illegible] կա մոտը* (Գալուստին) *Քոնը ինչքա՞ն ա, Գալո՛ւստ... Հա՛, 125 մանեթ [illegible]... Գրել կտաս 200... Դու էս տարի, գիտե՞ս, բոլորո՛վին մոռացել [illegible]։ Ո՛չ բաղիցդ ես մեզ պտուղ, յա գինի... ոչ զատկին մի գառը... [illegible] փողը հենց ընե՞նց, մո՞ւֆտա պառկի մոտդ... 200 գրել կտաս։*

ԳԱԼՈՒՍՏ— *Վա՜յ, աղա՛, էդ ի՞նչ կրակի մեջ ես գցում ինձ... Բա ես [illegible] էդքան տոկոս տալ... Բա ինձ ընտանիք չո՞ւնեմ... Մարկոսի՞ց էլ [illegible]*

ԳՐԻԳՈՐ— (Բարկությամբ) *Էդ դու որտեղի՞ց իմացար, թե Մարկոսից [illegible] տոկոս եմ առնելու... Համ էլ՝ Մարկոսը մա՛րդ ա, դո՞ւ ինչ ես։ [illegible] տարուն, ծնունդին՝ էլ խոզի ճուտը, է՛լ կարագ, գառը... Ո՛չ մի բա[illegible] չի մոռանում. մարդը գի՛տի լավություն, երա՛խտիք...* (Մարկոսին) *[illegible] մանեթ ա—գրել կտաս 125... 25 մանեթ պակաս... էլ մի՛ ասիլ, [illegible] քյախտիրը բանի՛ տեղ չենք դնում...*

ՄԱՐԿՈՍ— (Գրգռված) *Ի՛մը ի՞նչքան գրել տամ, աղա՛...*

ԳՐԻԳՈՐ— (Դառնալով դեպի նա, զսպված բարկությամբ) *Ըրա՞մ, քո՞... 200 [illegible] գրել կտաս 300... Է՛դ ա, կուզես՝ գրել տուր, չես ուզիլ փողս*

**ԳՅՈՒՂԱՑԻՔ**— (Կծկված՝ անցնում են Թերեզայի մոտով):

**ԹԵՐԵԶԱ**— (Լուռ՝ ճանապարհ է տալիս և կծկված դիմացածներով, լաց լինելու պես՝ նայում է նրանց ետևից և հուզված՝ կրկնում դրան):

**ԳՐԻԳՈՐ**— (Ուզում է բռնել նրան) *Բո ւ... ա՛ղջի, էդ ի՞նչ եղավ քեզ, ե՞... Ո՞ւր է մայրդ...* (Կանչում է դռնից) *Ա՛յ կնիկ, Սաթե՛նիկ...*

**ԹԵՐԵԶԱ**— (Իր ետևում՝ բոլացել էր, նիգ է գործում, ուզզվում է) *Ոչի՛նչ, գլուխս պտտեց... Թո՛ղ ինձ, ես սենյակս կերթամ...* (Գնում է դեպի սենյակը, բայց կես ճանապարհին կանգ է առնում և հանկարծ դառնում դեպի հայրը) *Հա՛յր... ուրեմն... իրա՞վ է այդ բոլորը...*

**ԳՐԻԳՈՐ**— *Ի՞նչը, աղջի՛կս...* (Խիստ) *Դու մեզ լսո՞ւմ էիր... Ի՞նչ ես խառնվում իմ առևտրական գործերի մեջ... Սա առևտո՛ւր է, դիմացինդ՝ կռվիտ, անտաշ գյուղացինե՞ր... նստի՛ր, գնամ մորդ կանչեմ...* (Ուզում է գնալ):

**ԹԵՐԵԶԱ**— (Ուժ տալով իրեն) *Ո՛չ... մնա՛, հա՛յր... խոսե՛լ եմ ուզում քեզ հետ... Այդ դուռն էլ փակիր...* (նստում է):

**ԳՐԻԳՈՐ**— (Ուսերը բարձրելով՝ դուռն է փակում, լուրջ կերպար է ստանում և մոտենում է: Մի րոպե երկուսն էլ լուռ են: Թերեզը գլուխը խոնարհած, իսկ հայրը ուշադրությամբ զննում է նրան):

**ԳՐԻԳՈՐ**— *Ասա՞, ի՞նչ է սանլիքդ... Գործ ունիմ, ասա՛...* (Կատակելապես զսպել է իրեն, խիստ դեմք է ընդունում և նստում) *Խոսի՛ր... Թե փեսանդ ես, քաղաք գնա մորդ հետ... Այդ ասե՛լ եմ քեզ, դու չե՛ս ուզում: Ուզես հենց ա՛յսօր գնա. երեկ կարուսել ես քաղաքին...*

**ԹԵՐԵԶԱ**— (Զարմացած և լուռ՝ նայում է նրան):

**ԳՐԻԳՈՐ**— *Դե ասա տեսնե՞նք... Թե ցավ ունիս և քաղաք չե՛ս ուզում գնալ՝ այստեղի բժիշկը կանչենք... Բայց* (ժպտալով) *չլինի՞ փող է ուզածդ, հը՞... Գիտես, որ չեմ խնայում ոչինչ... Ինչքա՞ն ես ուզում—տամ* (Ձեռքը գրպանն է տանում):

**ԹԵՐԵԶԱ**— (Ցնցվելով ոտքի է ելնում, դեմառդեմ մի րոպե նայում է հորը, հետո խիստ) *Հա՛յր, դու ինձ մի՛շտ երեխայի տեղ ես դնում... Ամեն բանի մե՛րջը կա, հա՛յր...*

**ԳՐԻԳՈՐ**— *Ուրեմն ի՞նչ է ուզածդ, ի՞նչ է սանլիքդ... Չլինի՛ էլի այն խաչիկի մասին է... Սիրո՞ւմ ես նրան—ինչո՞ւ մերժեցիր...* (Հեգնական) *Ցույց եցիր ինը վա՞րձ դառնալ իմ փրկությամբ... փրկությո՞ւն... ինչի՛ց, ումի՞ց... նրանի՞ց, այդ լակոտի՞ց... ավելի շուտ մտածիր ու ազատվել իմ ձեռքից. հասկանո՞ւմ ես. նրան, որի թողը երկինք կբարձրանա... (Լռում է) Թո՛ղ երեխայությունները, Թերե՛զ. կարմիր սանտերի միջից վերցրած խոսքե՛րն էլ թող... Սիրո՞ւմ ես նրան—ինչո՞ւ ես մերժելում. Ընդհակառակն... Տես ես որքա՞ն բարի եմ*

*ԳՐԻԳՈՐ*— (Ներս է մտնում նրանից՝ Բաղդասար, Զաքար, Մարգար և Փաշալ Մարտիրոս) *էդպես, հա՞, Բաղդասար ամի... (Նստում է) Աղա՛, բաս էդքան էլ նամըքո՞ւ կըլեն... Ինձ վրա զա՞նգատ եք ուզում անի, ինձ սո՞ւդն եք ուզում քաշ տա, էս ձեր հալո՞վս... Հա՞յ-գիտի աշխարհ, հա՞յ, տե՛ս, թե ինչ օրերի եք հասել: Սրանց ես լա՛վություն անեմ, փող տամ, խեղճությունից ազատեմ, որդկերանցը սովածությունից քաշեմ հանեմ...* (Մարգարին) *Աղա՛, բաս դու մոռացա՞ր, որ ոտներս ընկել՝ աղաչում էիր... Թո՛ւ ձեր նամուսին, հա՞...* (Զաքարին) *Բաս դո՞ւ, բեհայա՛, դո՞ւ չէիր, որ հլա կնգանդ էլ ուղարկել էիր, լա՛ց, արտասո՛ւք... Հմի ինձնից զանգատ եք անում, է՛լի, ինձ սուդի եք քաշում, հա՞... Տո՛, բաս ուզում եք փողս ո՞ւտի, ո՞ւրանա... Բա ռանձց րա՞ն եք լսել, հը՞...*

*ԲԱՂԴԱՍԱՐ*— (Շփոթված) *Ցանի որ... հանց որ... տո՛կոսը...*

*ԶԱՔԱՐ*— *Էլ ինչի՞ ես նեղանում, ա՛ղա. էն ա սուդը կվճռի, է՛լի, թե մենք քեզ էնքա՞ն ենք պարտական, ինչքան գրած ա վեքսիլումը...*

*ԳՐԻԳՈՐ*— *Փի՜... Տո բաս դո՞ւ չես ձենք քաշել տակին.. Հրես, ա՛յ...* (Հանում է վեքսիլների ծրարը և միջից մեկը դուրս բերում՝ խոսելով միաժամանակ) *Թուր ու թվա՞նքով վախացրի, բոկիցդ հո՞ւպ տվի... Չէիր ուզում, ո՞ւր էիր ձեռքդ քաշում: Հը՞, ըռե՞նց չի, Մարտիրո՛ս...*

*ՄԱՐՏԻՐՈՍ*— *Դե հմի, աղա՛, սխալվել են, ղալաթ են արել, բաշխի... խեղճ մարդիկ են, փող չունին, որ տան...*

*ԳՐԻԳՈՐ*— *Տո՛, որ փող չունեն տան, էլ ո՞ւր են զանգատի գնում: Ինչի՞ մեկ չեկան ինձ մոտ, խնդրեին. «Գրիգոր աղա,— ասեին,— դո՛ւ-րան, չունենք, չե՛նք կարող պարտքներս տալ. խղճա մեզ»... Ես էլ խո մա՛րդ եմ, կնիկ-ղա՛վակ ունիմ, խո ջանավար չե՞մ... Հա՛լբաթ մի բան կանեի. յա թե, ո՞վ ա իմանում.. քրիստոնյա չե՞մ, սիրտ չունե՞մ... Լացը լեզուն, աղաչանքը, ի՞նչ քար սիրտը ասես՝ որ չշարժի. հը՞, Բաղդասար ամի, սրա՞ն ինչ կասես, սո՞ւտ եմ ասում... Ես անգլո՞ւմ մարդ եմ, քեզ քի՞չ լավություն եմ արել...*

*ԲԱՂԴԱՍԱՐ*— *Հանց ո՞ր.. ի՛հարկե, աստված կյանք տա... Ամա դե սում են՝ թազա զա՛կոն... Ցանի որ մենք էլ, դե՛, ուսելու հաց չունենք, ված...*

*ԳՐԻԳՈՐ*— *Տո, ընչի՞ ինձ մոտ չեկար առաջ: Մեկ գայիր, ըռենք դիփ եի . Թե քեզ հետ կռվեի, ուշունց տայի, յա մերժեի—է՛լի գնայիր էն կատի մոտ... Հը՞, հենց հմի, որ էդ ասում ես, յանի ես շա՞տ գիտեի, մ... ի՛ս ա, չես կարողանում պարտքդ տա...* (Լուռ՝ նայում է զյուղացոց և մյուս կողմից հանում է ձեռքի ծրարից երեք մուրհակներ: Գյու-

ԶԱՔԱՐ— (Վախեցած) Ձե՞ռք քաշենք…

ՄԱՐԳԱՐ— էդ ի՞նչ թուղթ ա, որ…

ՄԱՐՏԻՐՈՍ— Պտի ձեռք քաշեք, որ էլ աղիցը պահանջ չլա գանգատ չունեք, որ շնորհա՛կալ եք, որ աղեն ձեզ լա՛վություն ա արել…

ՄԱՐԳԱՐ— Յանի էդ հարկավո՞ր ա… Որ ձեռք չքաշենք՝ չի՞ ըլի…

ԳՐԻԳՈՐ— (Սառը) Թո՛ղ, Մա՛րտիրոս, իրա՛նց կամքն ա. կուզեն՝ ձեռք կքաշեն, չեն ուզի՝ թող գնան, աստված իրանց հետ… Ամա դե շնորհա՛կալ եմ, թե իմանում են իմ արած լավությունը…

ՄԱՐՏԻՐՈՍ— Հա՛լբաթ… Բա ըտենց բա՞ն կըլի՝ էլ ի՞նչ են ուզում. Հա՛մ պարտքներիցը պրծնեն, հա՛մ էլ օրհնող չըլե՞ն, ոտքերդ էլ չպա՞չեն… (Բաղդասարին) Ե՛կ, ե՛կ, ամի՛, ձե՛ռք դիր ըստեղ, որ ո՞վ ա իմանում— …ւլքի բառեղ-բնաեղ խոսաք սղի մրեն…

ԲԱՂԴԱՍԱՐ— Յանի որ… ի՞նչ կա, ձեռք դնեմ… (Մոտենում է և նայ…ում է թղթին, հետո՝ հանկարծ) Դո՛ւ քո աստվածը, քյաչո՛լ, սա խո թագա …ել չի՞…

ՄԱՐՏԻՐՈՍ— (Միծաղում է) Տո ըո՞ռ ես, վերսիլը հաւյարակ թղթից …ել չե՞ս կարում… Հլե՛ն, Զաքարը կարդալ գիտի, թող կարդա՝ հետո …ք քաշեք… (Թուղթը տալիս է Զաքարին) Կարդա՛, Զաքա՛ր։

ԶԱՔԱՐ— (Լուռ կարդում է, հետո դնում սեղանի վրա) Վեքսիլ չի, …նորհակալության թուղթ ա։

ԲԱՂԴԱՍԱՐ— Բաս որ ըտենց ա, մյոհրս դնեմ… (Հանում է գրպա…ից կնիքը, նկույթով բանեցնում, թղթի վրա շունչ փչում և կնքում է)։

ՄԱՐԳԱՐ— Տո՛ւր ե՛ս էլ ձեռք քաշեմ… Աստված աղին կյանք տա, ըն…ի՛ չեմ քաշի։

ԶԱՔԱՐ— (Լուռ առնում է գրիչը և ստորագրում)։

ԲԱՂԴԱՍԱՐ— (Հուզված՝ Գրիգորին) Յանի որ… աղա՛… բա ինչպե՞ս …ւ գանք էս քո լավությունիցը։

ԳՐԻԳՈՐ— (Ելնում է) Սիկ, հինչ… Գնացեք մեկ-մեկ արաղ էլ անուշ …ք, ու աստված ձեզ հետ… Ձեր ավածովը ո՛չ ես կհարստանամ, ո՛չ էլ …ովը՝ կաղքատանամ… Քեֆս ուզեց՝ արի։

ԶԱՔԱՐ— Դե գնանք, ա՛ խալխը.. Ըսենց լավություն սկի՛ մարդ չէր …մեզ…

ԳՐԻԳՈՐ— (Սեղծ համեստությամբ) Քրիստոնյա ենք… Ավետա՛րանն …ում. թե՝ «թող մեզ զպարտիս մեր»… (Մարտիրոսին) Դրանց մեկ …քյա ավելի, Մարտիրոս։

…ԱՐԴԱՏԻՐ— (Բարեմաղթությունններով՝ խառնիխուռն և խռնարհ …ուլխոնով դուրս են գնում)։

# ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐՎԱԾ

*Ալեքսանդրի սենյակը, բավական մեծ։ Աջ կողմում, լուսամուտի առաջ՝ գրասեղան, թղթերով և գրքերով։ Բազկաթոռներ, մի փոքրիկ գրադարան։ Ձախ կողմից մի դուռ՝ տանում է դեպի սրահը։ Խորքում՝ պարտեզից, մուտքի դուռն է։ Ժամը ցերեկվա 11-ն է։*

### 1) ԱԼԵՔՍԱՆԴՐ (մենակ)

(Գրում է քիչ, հետո գրիչը ցած դնում և մտախոհ է ու երազուն) *Ո՛ւրիշ բան է, երբ կռվի ես գնում՝ հայրենիքի ազատության համար կռվի ելնող ոգևորված զինվորի պես՝ զվարթ և ուրախ, գրեթե պարելով... և ուրիշ՝ երբ սիրտդ սեղմված, ճակատդ կնճիռներո՛վ ակոսած, տխուր քայլում ես դեպի կռիվ... կախաղանի գնացող հանցավորի նման...* (Ելնում է և ճեմում, հետո նստում է բազկաթոռի մեջ) *Վայրենին, լինի՛ նույնիսկ լավ ավարի հույսով, գնում է նիզակը ճոճելով, ուրա՜խ աղաղակներով... Իսկ ե՞ս... Ե՛ս նույնպես գնում եմ կռվի, հանուն արդարության ոտնատա՛կ եմ տալիս ամե՛ն արգելք... սակայն ես նիզակս ամենա՛յն զգուշությամբ եմ շարժում, որ սրտի՛ս չդիպնեմ..* (Քիչ լուռ) *Փոքրոգություն է այս, զգո՛ւմ եմ. Նման է սա պարտավորության արդյունքի, բայց ոչ երբեք բուռն համոզման և մե՜ծ զգացմունքի...* (Քայլում է) *Կուզեի մտա՛ծ չլինել այս կռվի մեջ... և կամ՝ ճանաչա՛ծ չլինեի...* (Ընկճված՝ մոտենում է լուսամուտին և կռթնում նրան)։

### 2) Նույն և Կիրակոս (ծառան)

*ԿԻՐԱԿՈՍ*— (Բերում է մի բաժակ սուրճ) *Մատվեյ Եգորի՛չն ա եկել...* (Բաժակը դնում է սեղանի վրա) *Ազի հետ զալումը խոսում են...*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— *Լավ... Տանուտերին գնացի՞ր։*

*ԿԻՐԱԿՈՍ*— *Շատո՜նց... Հմի կգա։* (Գնում է)։

### 3) ԱԼԵՔՍԱՆԴՐ (մենակ)

(Քիչ լուռ) *Հաստատակության համար գործողը չպիտի կապվի ոչ ոքի հե՛տ, ո՛չ .. Իրավո՛ւնք ուներ Թերեզան... Խայտառակված վաշխառուի աղջիկ և խայտառակողի կի՞նը...* (Նայում է լուսամուտից դուրս) *Որքա՜ն էլ համակրելի է, այս գյուղը... Մի՛շտ միևնույն դեմքեր... Ո՛չ մի շրջա՛ն, ո՛չ մի հասարակական կյա՜նք... Մարդ ակամա ենթարկվում է տիրող դան-*

*ժանր է լինում... Բայց ենթադրել, որ դուք ե՛տ կկանգնե՞ք, որ զենքը ցած կդնեք... որովհետև ձեր անձնական վնասնե՞րը...*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— (Վեր է կենում՝ խիստ) *Ո՛չ... ես կանգնել չե՛մ ուզում...* (Ցույց է տալիս մի մեծ թուղթ) *Ահա բողոքը...*

*ԱՐՇԱԿ— Հաշտարար դատավորին, անշուշտ...*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ— Ինչո՞ւ այդպես... Ո՛չ, ես ձեր բերած թղթերին էի սպասում։ Գրիգոր աղան արհեստով վաշխառու է, նրանով հարստացած և բազմաթիվ թշվառություններ գոյացրած... Շրջանային դատարա՛նն է նրա տեղը...*

5) Նույնք և ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ, ՍԱՀԱԿ

*ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ*— (Մտնում է Սահակի հետ։ Ալեքսանդրին՝ դռան մոտից) *Ա՛յ աղա, հերի՛ք է՛է՛... Մի ժամ է սրահում սպասում եմ, որ դուրս գաս... Տանուտերն էլ, խո՛. երևի է՛լի փիլիսոփայական ճառեր է կարդում գլխիդ...*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— (Ձեռք է տալիս) *Ո՛չ, գործերո՛վ էինք զբաղված։*

*ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— Գի՛տեմ, գիտեմ. Սահակ բեկն ասում էր, որ գանգատ ես պատրաստում...* ПОСТОЙ, *եղբայր... մի քիչ լուրջ խոսենք քեզ հետ...* (Նստում է) *Ա՛յ, տանուտերն էլ հազր այստեղ է, հա՛յրդ էլ... Ասա՛ խնդրեմ, ախր ինչո՞ւ ես ուզում չցաված գլուխդ ավետարանի տակ դնել, հո՞... Ախր քո ի՞նչ գործն է վնասվում... Դե՛, մեկ կոլլեգների պես խոսենք... Եղբա՛յր, հազր մեզ համար հա՛նգիստ նստել էինք... Գրիգոր աղան էլ ո՛չ-այնքան անիրավ է, որքան դու ես ենթադրում...*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— (Ընդհատում է նեղացած) *Չէ կարելի արդյոք, Մատվեյ Եգորիչ, որ թողնե՛նք այդ խոսակցությունը։*

*ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— Ինչո՞ւ, ինչո՞ւ, եղբա՛յր։ Քի՞չ աղուհաց ենք կերել Սարգ հետ, որ նրա փորձանքի օրերում անտարբեր մնամ ես... է՛, է՛ տասը տարի՝ միմյանց չան ենք ասել, չա՛ն լսել... Հիմի դու ուզում ես, որ ես չխառնվե՞մ... էդպես չի՞, Սահակ, դու զա՞րմ կանես, որ ես ձենս կտրեմ։*

*ՍԱՀԱԿ— Ի՞նչ ես ասում, Մատվե՛յ. բաս դու որ չխոսես, էլ ո՞վ պիտի խոսի. օրենք հասկացո՞ղ, փորձված բարեկա՞մ...*

*ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— Տո՛-տո՛, եղբա՛յր, մենք խո փորձվա՞ծ ենք օրենքի մեջ...* (Ալեքսանդրին) *Լավ, հիմի արի հենց օրե՛նքից խոսենք... Դու որ գանգատ տաս, ասենք՝ փաստեր էլ գտնես, սուդը քննի— դրանով ի՞նչ հարց պարտքը չի՞ բախշվի. խո գյուղացիները չե՞ն ազատվիլ տալիքներից, որ՝ Ասե՛նք կարողացար հաստատել, որ մեծ տոկոսներ է վերցրել. հե-*

ինչի՞ պետք է քննիչ. մարդասպանությո՞ւն է, քրեական գո՞րծ է, ի՞նչ է...

ԱԼԵՔՍԱՆԴՐ— Գրիգոր աղան արհեստով վաշխառու է և հարստացել է գյուղացոց կողոպտելով ու կեղեքելով... Գործը, ըստ օրինի, կերթա նախ քննիչի մոտ, հետո՝ շրջանային դատարանը...

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— (Բարկությունից կարմրելով) Вот тебе раз!... Սյո՜ւրպրիզ... Ուզում ես ուրեմն մարդուն Սիբի՞ր քշել տաս, կորցնե՞ս... Եվ փաստեր ունի՞ս. փաստե՛ր. թե՞ է՛նպես, զոլամա ասում ես... Խոսք չկա, սյո՜ւրպրիզ... Ակրուժնոյ սո՜ւդ...

ԱՐՇԱԿ— Փաստեր շա՛տ կան։

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— (Նրան՝ բարկությամբ) Երևի դո՛ւ ես տվել, չէ՞... Հը՛մ, լա՛վ է, լա՛վ է... Գյուղացոց էլ երևի արդեն պատրաստել ես... Նո՛ւ, եղբայր, այդ ձեզնից չէի սպասում. ձեր մա՞րդ. ընտանիքի տե՛ր, ակրուժնո՜յ, Սիբի՛ր...

ԱԼԵՔՍԱՆԴՐ— Այժմ Սիբիր չկա այդպիսիների համար. արեստանտսկայա րոտա...

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— (Ճչալով) Տո խո չե՞ս գժվի... էն ձեր մարդո՞ւն, Ռեբեզի հո՞րը... Տո՛ւ, чорт побери! (Բարկությամբ նեմում է)։

ԱԼԵՔՍԱՆԴՐ— Քիչ հանդարտեցե՛ք, Մատվե՛յ Եգորիչ. ինչո՞ւ եք տաքանում, երբ ինքներդ էլ գիտեք, որ այդ մարդու հարստությունը վաշխառությունով է դիզված...

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— Առևտո՛ւր է անում մարդը, խոսք ունի՞ս... Ուրեմն քո կարծիքով պետք է բոլո՛ր վաճառականներին էլ արեստանտսկի րո՞տ ուղարկել... Հե՛նց մեկը Մակարով Գալուստը, ձեր ազգականը... Տո՛, անցյալ օրը, իմ աչքիս առաջ, մանեթանոց շալը երեք մանեթով կապե՛ց մի Թարաքամի գլխին, ետևից էլ մի լա՜վ ուշունց տվավ... Արեստանտսկի րո՞տ ուրեմն, հա՞... (Քիչ հանդարտ մոտենում է) Չէ՛, եղբայր, այդպես խո չի՞ կարելի... Դու կասես՝ թող Թարաքաման խելքը գլխին պահեր ու չխաբվեր. ես էլ կասեմ՝ թող գյուղացիք խելքները գլխին պահեին ու այնքան ավելով մուրհակ չստորագրեին....

ԱՐՇԱԿ— Ուրեմն Սահակ բե՞կն էլ...

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— Հա՛, իհարկե, թող չանե՛ր... Արել է—ո՞վ է մեղավորը... Նրան խո սրով ու հրացանով չպառնացի՞ն, որ ստորագրեց... Սուտո՛ւր է սա. ապրանքս ա՛յսքանով եմ տալիս. կուզե՞ս—առ, չես ուզի— բարով նկար. դե որ առել ես՝ վճարի՛ր... (Քիչ լուռ) Եվ կամ, եղբա՜յր, մարդը վստահությո՞ւն է արել քեզ, որ փո՛ղ է տվել ուսմանդ համար... Գոնե էլի մտածելով՝ դու պիտի խնայես նրան... Նստի՛ր մեկ...

ԱԼԵՔՍԱՆԴՐ— Այսպես էլ լավ է... Միայն դուք մի՛շտ մոռանում եք, որ օրենքով սրուշ տոկոսից ավելի առնողը...

*նից, Սա՛շա. Մատվեյ Եգորիչին էլ նեղացրիր... Լսեցի՞ր Թերեզայի հալը...*
*Ախր մարդը խո քեզ վատություն չի՛ անում, քեզ խո չի՞ նեղացնում...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ— (Խիստ հուզված) *Լռի՛ր, հա՛յր... Թո՛ղ է նստում ինձ իմ ուսումը, իմ սովորածները...*

### 6) Նույնք և ԹԵՐԵԶԱ

*ԹԵՐԵԶԱ*— (Որ սրահի դուռը բաց է արել մեղմությամբ, առաջ է գալիս, նիհար է և գունատ) *Թույլ կտա՞ք ինձ...* (Ընկնում է դռան կողքի աթոռի վրա):

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— (Վազում է դեպի նա) *Թերե՛զ...*

*ԱՐՇԱԿ*— (Միաժամանակ) *Հը՛մ... տարօրինա՛կ է այս*

*ՍԱՀԱԿ*— (Միաժամանակ) *Վա՜հ...*

*ԹԵՐԵԶԱ*— *Ոչի՛նչ. հոգնած եմ միայն... Վախե՛ցի... Քեզ հետ առանձին խոսել եմ ուզում, Սա՛շա...*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— (Հորը) *Հա՛յր...* (Արշակին) *Մի քանի րոպե... Սպասեցեք ինձ սրահում։*

*ԱՐՇԱԿ*— *Ես կգնամ, հետո կգամ։*

*ԹԵՐԵԶԱ*— *Ո՛չ, ինչո՞ւ... երկար չի լինիլ...*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— (Արշակին) *Խնդրեմ... սպասեցեք ինձ հորս հետ... կկանչեմ ես ձեզ...* (Կիսովին գրեթե ջրկել է Թերեզային):

*ԱՐՇԱԿ*— Մի նշանակալից ակնարկ է ձգում Ալեքսանի վրա, և Սահակի հետ դուրս են գնում:

### 7) ԱԼԵՔՍԱՆԴՐ և ԹԵՐԵԶԱ

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— *Թերե՛զ...*

*ԹԵՐԵԶԱ*— *Խնդրեմ, մի բաժակ ջուր տուր ինձ այնտեղից։*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— (Լցնում է և տալիս. սաստիկ հուզված է) *Հանգստացի՛ր, ի սեր աստծո...*

*ԹԵՐԵԶԱ*— (Խմում է, հետո ճիչ չունչ առնում, նայում է [illegible] [illegible] գրասեղանը) *Խոսենք քիչ, Սա՛շա... Երկա՞ր ժամանակ է, որ չենք [illegible].* (Նայում է) *Նայի՛ր ինձ մոտ...* (Քիչ լուռ) *Ինչո՞ւ ես [illegible] [illegible]* (Տխուր ժպիտով) *Փոխված ես գտնում ինձ, չէ՞։*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— *Շա՛տ ես նիհարել... Հիվա՛նդ էիր գուցե...*

*ԹԵՐԵԶԱ*— *Ո՛չ... Բայց այս վերջին օրերս գրեթե չեմ ապրել... Շա՛տ [illegible]... Բայց գուցե արդեն սառել ես. այլևս քո Թերեզը չե՞մ, գուցե...*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— (Ջանալով բարձրացնել նրան) *Հանգստացի՛ր, Թերեզ, սիրտս [illegible]. և էլ ինչե՞ր ես ասում... Քո ձեռքը չէ՞ անցնելն՝ այդ պատ-[illegible] կրակով...*

*ԹԵՐԵԶԱ*— (Ցնցվելով ելնում է, քիչ հետու կանգնում և խիստ) *Այդ [illegible]՝ մեր ընտանեկան պատի՛վն է, հորս մարմինը, հասկանո՞ւմ [illegible]...* (Վճռական) *Ո՛չ, դա իմ ձեռքը չէ, այլ քո, միմիայն քո...* (Քիչ լուռ) *[illegible] ի՛ր, Սա՛շա...*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— (Նստում է տխուր և ընկճված) *Խոսի՛ր...*

*ԹԵՐԵԶԱ*— (Մոտենում է և ձեռքը դնում ուսին) *Դու արդեն սկսե՞լ ես այդ գործը։*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— (Մեղմ) *Դեռ ոչ. բայց...* (Ցույց է տալիս սեղանի վրա) *Ահա՛ թուղթը, որով պիտի սկսի...*

*ԹԵՐԵԶԱ*— (Վազելով դեպի սեղանը) *Ա՛հ...* (Վերցնում է թուղթը) *ու ուշ չէ՞ ուրեմն... Պատռե՛նք այս թուղթը, Սա՛շա, ես քեզ խնդրում եմ, [illegible] եմ ուղղակի...*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— (Գնում է դեպի նա և արգելում) *Ի՞նչ ես անում... Թո՛ղ, մի՛ պատռիր...* (Առնում է թուղթը և մի կողմ դնում)։

*ԹԵՐԵԶԱ*— *Սա՛շա... Եթե դու ինձ սիրում ես, եթե չես ուզում իմ մա-[illegible] -թո՛ղ, պատռի՛ր... Թո՛ղ ուրիշին՝ մտնելու նրա դեմ դատի. դու մի՛ [illegible]... Թող իմ սիրա՛ծը չկոխոտի հորս կյանքը, մեր ընտանեկան պա-[illegible]...*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— *Թերե՛զ... դու ուզում ես ստորությա՞ն, վատությա՞ն [illegible] ինձ...*

*ԹԵՐԵԶԱ*— *Բայց ո՛չ, Սա՛շա, ինչո՞ւ...* (Ժպտում, սիրալիր համոզ-[illegible]) *Ուրիշ փաստաբան չկա՞... Ես խո չե՞մ դրդում քեզ՝ պաշտպա-[illegible]... Ո՛չ... միայն թող դո՛ւ չլինես նրան տրորողը։ Եթե՛ ինձ սիրում [illegible] եթե՛ ուզում ես, որ ես քոնը լինեմ...* (Գգվանքներով և փայփայելով՝ [illegible] է Ալեքսանդրին) *Սա՛շա...*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— *Դու գիտե՞ս ինչ ես առաջարկում ինձ, Թերե՛զ... Կռվի [illegible] առաջ զենքը նետող և փախչողի վա՛տ, ստո՛ր դերն ես առա-[illegible] կատարելու... Եվ այնուհետև, չէ՞ որ ես ինքս հենց առաջի՛նը [illegible] ինձ վրա... Դո՛ւ էլ, դո՛ւ էլ, եթե լավ մտածես—չպի՛տի կարողա-[illegible] այդպես ընկա՛ծ մարդու...* (Վճռականորեն, բայց մեղմությամբ [illegible] նրա գրկից) *Ո՛չ, Թերե՛զ... Ես քեզ սիրում եմ, գիտե՛ ստույգ, [illegible] քեզ ինձ համար երջանկություն չի լինիլ կյանքումս... բայց [illegible] ստորության գնով ես չե՛մ ուզում իմ կյանքը զարդարացնել...* (Քիչ լուռ) *Բայց չէ՞ որ ասում էիր, թե հայրդ քեզ շա՛տ է սիրում, ոչինչ [illegible]... Թո՛ղ ուրեմն բերի բոլոր մուրհակները, որոնց ես կծվեմ մի*

5) Նույնք, ՍԱՀԱԿ, տիկ. ՄԱՆՈՒԿՅԱՆ, ՍԱՐԳԱՐԻՏ, ԱՐՇԱԿ

(Բոլորը վախեցած՝ ներս են թափվում)

*ՍԱՀԱԿ*— (Տեսնելով Թերեզային) *Սա՞շա... Սրա՞ն էլ... Ուրեմն՝ քեզ համար նվիրական ոչի՞նչ չի մնացել...*

*ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ*— *Քե՛զ մատաղ, Թերե՛զ, էդ ի՞նչ եղավ քեզ... Հանգստացի՛ր...* (Բարձրացնում է նրան):

*ՄԱՐԳՈ*— (Միաժամանակ) *Թերե՛զ...* (Գրկում է նրան) *Օ՛, ինչ վա՛տ անճղրը Սա՞շա...*

*ԹԵՐԵԶԱ*— (Կանանց) *Թողե՛ք ինձ, ես չե՛մ ուզում, կմեռնե՛մ ես. կմեռնեմ, որ ազատվեմ...*

*ՍԱՀԱԿ*— *Տե՞ր աստված... ի՞նչ ես խոսում մեռնելու մասին... Հանգստացիր, խո չե՞ս գժվել... Ի՞նչ եղավ, ախր, է՞է՞...*

*ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ*— *Ի՜հ, աղջի դու էլ... հիմար-հիմար մի՛ դուս տա՝ [ի]ն աստվածդ կսիրես... Վե՛ր կաց...* (Ամուսնուց ջուր է առնում և խմեցնում) *էս ջուրը մեկ խմի՞... Ըռե՜նց... Դե հիմի վեր կա՛ց մեկ...*

*ԹԵՐԵԶԱ*— (Խմում է, շփում ճակատը, ելնում է և քայլում դեպի Ալեքսանդրը) *Սա՞շա...*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— (Սառը և քիչ խիստ) *Ի՞նչ ես ուզում այլևս*

*ԹԵՐԵԶԱ*— *Դու մերժո՞ւմ ես ուրեմն, մա՞հս ես ցանկանում... Շա՜տ [լա]վ, Ահա ծնողներիդ մոտ ասում եմ... Թող տանուտե՛րն էլ լսի ինձ... Եթե [դու] հորս կդիպչես՝ իմ մահը կպատրաստես... Վիշապը կընկնի, ճշմարիտ [է], [բ]այց ես... Վշտից... օդի պակասությունից*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ* — *Հիմար բաներ ես ասում, Թերե՛զ*

*ԹԵՐԵԶԱ*— *Պնդո՛ւմ եմ, այդպե՛ս կլինի... Չե՛ս ուզում թողնել, որ [հո]րի՛ շր կոխի հորս թշվառ գլուխը և մեր ընտանեկան պատիվը... դո՛ւ ես [ուզ]ում, դու՝ որին ես սիրում եմ...*

*ՍԱՀԱԿ*— *Իմ ասածն էլ դա չի՞... Մարդը մեզ գոհացնում է, աղջիկը [նրա]ն սիրում է—իսկ դու նրան, այդ ծերունուն, որ գրեթե իր փողո՛վն [է] [մարդ]ամի տված լինում քեզ, ուզում ես քաշիլ ակումբ... սո՞ւդ, արեստանոց [ու] [չգ]իտեմ որտե՞ղ ղրկել...*

*ԹԵՐԵԶԱ*— (Ցնցվում է սուսկումից) *Ա՞յդ է պատիժը... պատիժը՝ վաշ[խառո]ւ...ի համար... Արեստանոցի բռ ա.. հո՞րս...* (Լուռ են ամենքը) *[Ս]...լի ս... Իմ ծերունի հայրը. իր սպիտակ մազերո՞վ, արեստանոցի հա[մ]...վ.* (Բոլյացած՝ նստում է) *Սա՞շա... Ախ որքա՜ն, որքա՜ն կու[զ]ի...ր բաղեխս վերջանալ, չզգալ, չլսե՞լ...*

*[ՏԻԿ.] ՄԱՆՈՒԿՅԱՆ*— *Սա՛շա, բաս դու քա՞ր ես, բա կթողա՞ն, որ խեղճ*

ստորանալ՝ սիրվելու համար... Սերը մուրալ ես չե՛մ ուզում, այլ վերցնել, եթե տալիս են... Ինձ հետ եկողը պիտի ուրանա և՛ մայր, և՛ ընտանեկան շինծու պատիվ, և՝ հա՛յր... մանավանդ երբ այդ հայրը մի ամբողջ հասարակության դահիճն է...

ԹԵՐԵԶԱ— (Հեկեկալով, ձեռքերի մեջ առած երեսը՝ գրեթե փախչում է դուրս): (Մի վայրկյան խոր լռություն է բեմի վրա)։

ԱԼԵՔՍԱՆԴՐ— (Մեկե՛ն թուլանալով՝ նստում է) *Վերջացա՛վ...*

ՍԱՀԱԿ— (Նրան) *Բա, Սա՛շա, էդպե՞ս կանեն... Մե՛զ, ասենք, չես խղճում. էդ խեղճ աղջկա՞ն ինչու ես սպանում. բա դու գո՞ւթ չունես. գյուղացոց ցավերը խաթարա՞ր դարձան մեր գլխին... խո մենակ դու չե՞ս, ուրիշ մա՞րդ չկար...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ— *Թո՛ղ, հա՛յր... Դուք քաղցած չեք մնալ, ո՛չ էլ անտուն...* (Մեղմ) *Վա՛ղն եմ պետք է դուրս գնալ այս տնից...* (Հոգնած՝ խիստ և կտրուկ) *Հա՛յր, եթե այդ մուրհակը դու ե՛տ վերցնես, եթե այդ ողորմությունը դու ընդունես...* (Ոտքի է ելնում) *Իմացի՛ր, դու... այլևս իմ հայրը չես... Ես չե՛մ ուզում, որ մի ավազակ վճարած լինի իմ ուսման ծախքը...*

ՍԱՀԱԿ— (Հուսահատ, գլուխը կախ՝ ետ է քաշվում):

Տ) Նույնք և ԿԻՐԱԿՈՍ, հետո՝ ԲԱՂԴԱՍԱՐ, ՋԱՔԱՐ, ՍԵՐՈԲ և ՄԱՐԳԱՐ

ԿԻՐԱԿՈՍ— (Երևում է դռան վրա) *Բաղդասար ամին, բա՛նը եկել են... ձեր գյուղումը...*

ՍԱՀԱԿ — (Բարկությամբ) *Ի՞նչ... դո՛ւրս տար, շո՛ւտ...*

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ— *Բա ես հո չեմ գլո՛ւխ, ինչի՞ նե՛րս թողիր...* (Գնում է դեպի դուռը):

ԱԼԵՔՍԱՆԴՐ— (Նրան) *Մա՛յր... Սպասի՛ր, ե՛ս եմ խնդրել, որ գան։* (Սառային) *Կանչի՛ր բոլորին։*

ԿԻՐԱԿՈՍ— (Դառնում է դեպի դուրս և կանչում) *Նե՛րս եկեք, աղեն կանչում ա...* (Գնում է):

(Մտնում են գյուղացիք և լուռ՝ կանգնում դռան մոտ)։

ԱՐՇԱԿ— (Նրանց) *Առա՛ջ եկեք... Ինչի՞ եք դռան մոտ մնացել։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ— (Գյուղացոց): *Ա՛յսպես եկեք... Բարև, Բաղդասար ամի.* (Մյուսներին) *Բա՛րև ձեզ։*

ՍԱՀԱԿ— (Արշակին՝ մի կողմ) *Յանի, տանուտե՛ր, էս ի՞նչ ա քո արածը. Գրիգոր տղի հետ ոխ ունես, Սաշայի՞ն ինչի ես մեջ գցում...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ— (Հուզված) Ահա՜ թե ինչ... Ուրեմն մնում եմ միայն ե՞ս գանգատավոր. ուրեմն ձեզ կաշառե՞լ է. դուրս է գալիս, որ ես... Ո՛չ, այս արդեն չափազա՛նց ավազակություն է... (Արշակին) Դուք հասկանո՞ւմ եք, հասկանո՞ւմ եք այս խաղը։

ԱՐՇԱԿ— (Տխուր) Սպասում էի... Հիմար չէ՛ այդ մարդը։

ԱԼԵՔՍԱՆԴՐ— Ո՛չ, ո՛չ, այդ չէ... մնում եմ ե՛ս միայն գանգատավոր... Եվ ահա նա ինչ կասի ինձ քննիչի առաջ. «Ի՞նչ գանգատ ունիք,— կասի,— ապերա՛խտ երիտասարդ, չէ՞ որ իմ փողո՛վս եմ ձեզ ուսում տվել... Ձեր հայրը, կասի,— ո՛չ մի կոպեկ պարտ չունի ինձ, ո՛չ մուրհակ ունի, ո՛չ գրավ... Այդ փողը,— կավելացնի նա,— ես ընծայել եմ նրան... Դիտմա՛մբ էի մուրհակ վերցրել, չե՛մ կամեցել ամաչեցնել նրան, չեմ կամեցել բարեգործությունս ցույց տալ... Մուրհակը առել եմ՝ միայն հորդ անձնասիրությունը չվիրավորելու համար... Թողել եմ, որ հավատա, թե ի՛նքն է քեզ ուսում տվել... ոչ մի՛ պարտք, ոչ մի՛ գրավ... քեզ ուսման ե՛ս եմ տվել, ե՛ս, ապերա՛խտ»... Օ՜, խայտառակություն... (Վեր է ցատկում աթոռից):

ԱՐՇԱԿ— (Գյուղացոց) Թո՛ւ, ի՞նչ մուրտառ խոսք եք եղել, տո՛... Մի-երկու կոպեկով ձեր հոգին կծախեք... Ամո՛թ, ամո՛թ սպիտակ մորուքիդ, Բաղդասա՛ր ամի. ամաչի՛ր տարիքիցդ, ա՛յ Մարգար... (Ալեքսանդրին) Հանգստացեք, իզուր եք հուսահատվում. դեռ ամեն բան կորած չէ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ— Գի՛տեմ, գիտեմ... բայց այս վերջին հարվա՜ծը... Սա ավելի՛ խիստ է, պատի՛վս է արատավորում... (Մեկե՛ն գյուղացոց դառնալով և սպառնալից) Ա՛, դուք կարծում եք, որ եթե չգանգատվե՛ք՝ կազատվե՞ք ձեռքիցս։ Դուք գիտե՞ք, թե կաշառք ուտելով սուտ վկայություն, հանցանք ծածկելը՝ ուր կտանի ձեզ... Ես ձեզ բոլորիդ բռնել կտամ... Դուք չե՛ք գանգատվում, հա՞... Մի բաժակ օղին, ձեր մուրհակների պատառը կազատի՞ ձեզ... Հիմարնե՛ր եք դուք, հիմարնե՛ր... Նա ձեր բերանը փակեց, որ այսուհետև ձեր կաշին ավելի՛ լավ քերթի... Ի՞նչ է, այլևս փողի պետք չե՞ք ունենալու. այլևս ձեր այգին, ձեր հողը միշտ բերքի՞ կլինի... Եվ ահա նա դա՛րձյալ կքերթի ձեզ, խմցրած մի բաժակ օղու, պատռած մուրհակների փոխարեն՝ տասնապատիկ կհանի ձեզնից... Հիմարնե՛ր..

ՄԱՐԳԱՐ— Դե էլ ի՞նչ ես նեղանում, Ալե՛քսան բեկ. Գրիգոր աղեն խո էլ վատություն չի արել... իր բերնո՛վն ասեց, որ հորդ պարտքը բա՛խշում ա, որ իր փողո՛վն ա քեզ ուսում տվել, որ իր աչքի՛կը քեզ կտար, թե [illegible].

ԱՐՇԱԿ— Ձայնդ կտրի՛ր, ախմա՛խ մորուք... Հիմի Գրիգոր աղի խոսքերին հավատում ես, հա՞... Բայց մոռացե՞լ ես, որ անե՛ծք, էլ ու-

*որ այսուհետև գործը փիս բանի... Հը՞, ա՛ խալխը, դրուստ չե՞մ ասում...* (Ավելի մոտենալով և ճամռողական) *Տո՛, ասենք թե աժդահան եկել ա, գլուխը մա՛րդ ա ուզում, որ գեղը կուլ չտա... Սա մի հեքիա՛թ ա... Որ էսօր տվիր՝ կշտացավ, ա՛, բաս էլ չի՞ քաղցածանալու. էլ եա չի՞ գալու ուղի, ու ընտենց սաղ գեղը ուտի՞... Դե՛, Գրիգոր աղան աժդահա ա, է՛լի... էսօր վախությունից ձենը կտրեց, եղ քսեց մեր գլխին, լավ՛մարդ դարձավ... տո՛, բաս հենց ընտենց չե՞ն խաբում մեզ... Բա չե՞ք տեսել՝ տղերքը ո՞նց են խաղում... փիսո՛, փիսո՛... ու բամփաչեն գլխովը տալ՛իս...* (Արշակին) *Հը՞, քյոխվա՛, փի՞ս եմ ասում, ըտե՞նց չի...*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— (Որ զարմացած և հիացմունքով լսել էր) *Ա՛յ, քեզ ճարտարախոս...*

*ԱՐՇԱԿ*— (Սերոբին) *Այ դու շա՛տ ապրես, Սերո՛բ, մարդ ես եղել... էնենց ա, բա ը՞տենց չի*

*ՍԵՐՈԲ*— (Գյուղացոց) *Մեկ էլ որ, ա՛ խալխը, կուզեք ձեռք քաշեք, կուզեք՝ չէ—մեզ վկա են կանչելու, երդո՛ւմ են տալու... Բա ինչի՞, մենք մյլթո՞նի ենք, հայ քրիստոնյա չե՞նք, որ համ էրդում տանք, համ էլ սուտ էլ տանք... Տո՛, յանի որ սուտ էլ խոսանք, պլեսլին հիմա՞ր ա, չի՞ կարա մեր խոսացնելուց՝ մեր սուտը բռնի... էն վախտն էլ խո սիբիրակա՞ն կըլինք... Չէ՛, ախպե՛ր...* (Ալեքսանին) *Գըի՛ր, Ալեքսա՛ն բեկ... Ես չե՛մ կարա ձեռքս ավետարանի վրա դնեմ ու սուտ խոսեմ...*

*ԲԱՂԴԱՍԱՐ*— (Մեղմ) *Թե երդում տալ տվին—յանի որ... ես էլ չեմ կարա սուտ խոսալ...*

*ԶԱՔԱՐ*— *Ալե՛քսան բեկ, չի՞ ըլի, որ ինձ ազատես... Խե՛ղճ մարդ եմ, մի գցիլ ինձ խաթի մեջ...*

*ԱԼԵՔՍԱՆԴՐ*— (Ծիծաղելով) *Տո՛, որ դրուստը խոսես՝ խաթի մե՞ջ կընկնես...* (Գյուղացոց) *Բաս է՞դ էր ձեր արջի ուս գնալը... էլ ի՞նչ էիք մեծ բրդում... Դո՛ւ Բաղդասա՛ր-ամի, ասում էիր, թե կխփե՛նք արջին կքերթենք... Գնացե՛ք, գնացե՛ք ձեզ բոլորիդ վկա կգրեմ... Կտրեցի՛նք ձեր բողոքը, թող ե՛ս ապերախտ լինեմ, թող ամեն ծանրությունն ինձ վրա միայն ընկնի...*

11) Նույնք և ծառաներ

(Վերևի դուռը բացվում է, սենյակն են մտնում, նախ մի ծառայ՝ ձեռքին մեծ ծրար. Հետո երևում են երկու-երեք ուրիշ ծառաներ, հետո՝ Սահակի, տիկ. Մանուկյանի, Ալեքսանդրի և Միքայելի վախեցած դեմքերը):

*ԾԱՌԱ*— Վազում է դեպի Արշակը և պարզում է նրան ծրարը) *Նամակ, Արշակ պարոն... Շտապողակա՛ն է...*

## ԼԵՎՈՆ ՇԱՆԹ

# ՀԻՆ ԱՍՏՎԱԾՆԵՐ

**Հազարամյակ մը**
**մեզմէ առաջ**

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— Ավերակը այս քարերն են, որ քեզիպեսներն են դարսեր. քանդվեր է անոնց դարսածը։ Բայց ի՛նքը կյանքի մեհյանը խորտակում չունի, ինչպես և ինքը կյանքը։ Կթափին քարերը, կփոխվին անունները, բայց իրենք աստվածները կան ու կմնան։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Հոս մեռա՞ն քու աստվածներդ։

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— Հո՛ս ու ամեն տեղ, ուր մարդ իր ոտքը կդնե, հո՛ն են անոնք հավե՛րժ ու անմահ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Հոս մեռա՞ն քու աստվածներդ, և անոնց ավերակներուն վրա ես իմ Աստծուս տաճարը կառուցի։ Նայե, մութին՝ մեջեն դեռ կնշմարվի գմբեթին արդեն կազմվող սրությունը։ Հոն կթագավորե միայն հոգին, հոն կթագավորե միայն Աստծու շունչը...

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— Հոն կթագավորե տանջանքի գործիքն ու մահը։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Տանջանքն է, որ կբարձրացնե հոգին, տառապանքն է, որ կմաքրե։ Եվ կյանքի ամենեն խոր բանը մահն է։

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— Տառապանքը կյանքի խոցն է, իսկ մահը՝ կյանքի քայքայումը։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Քու բերնով կխոսի մանուկ մարդկությունը։

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— Քու բերնով կխոսի ցավագար մարդկությունը։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Հերի՛ք է. ո՞վ ես դուն. որ կհայհոյես։ Հեռացի՛ր, այս կղզիին վրա ալ տեղ չկա քեզի ու քու աստվածներուդ։

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— Այս կղզին ալ նո՛ւյն աշխարհն է, ինչպես ամբողջ աշխարհը։ Երկրպագե՛, մոլորվա՛ծ, հավերժ աստվածներուն։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Հեռացի՛ր։

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— Խոստովանե՛, մոլորվա՛ծ, ու երկրպագե՛։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Հեռացի՛ր։

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— Կուգա օրը ու կխոստովանիս։ (Աներևույթ կըլլա)։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Կնայի շուրջը, անհանգիստ) Ո՞վ էր։ Չքացա՛վ։ Տեսի՞լը, կասկա՞ծ... (Հանկարծ վճռական) Ա՜, երբեք։ Աշխարհքը մուտք չունի այս կղզին։ Աշխարհքը մուտք պիտի չունենա՛ այս կղզին։ Ո՛չ։

Կմտնեն Անտոն, Մովսես ու Տերունի վանականները։

*ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ— Է, ե՞տքը, ե՞տքը։*

*ԱՆՏՈՆ ՎԱՆԱԿԱՆ— Թո՛ղ, թո՛ղ քիչ մը շունչ քաշեմ։ «Ետքը, ետքը» հարցնելը դյուրին է. ետքը սարսափելի էր։ Վա՜յ... կարծես թևերս չարդված ըլլան։* (Կնստի բարձր քարի մը)։

Հաջորդ պատմության միջոցին նոր եղողները կմոտենան պատմողին, այլև կուգան քանի մը բանվոր, Ղազար, Դավիթ, Զաքարիա վանականները և կավելնան ունկնդիրներուն։

*ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ— Խոսե՛, խոսե՛։*

*ՏԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ— Թո՛ղ, տղա՛, թո՛ղ որ ուշքի գա։*

ԱՆՏՈՆ ՎԱՆԱԿԱՆ— (Պահ մը դեմքը կծածկե ձեռքերովը և հանկարծ բանալով) *Կեսեն արդեն անցեր էինք։ Մեյ մը վեր կելլեինք ալիքներուն ծայրը, մեյ մը կիջնեինք անդունդը՝ ամենքն ալ լաստին վրա փակեր էին իրենց տեղը, սփրթներ ու չորցեր։ Ես ու աբեղան կքաշեինք թիերը որքան ուժ ունեինք։ Կամաց մը գլուխս դարձուցի, տեսա՝ կմոտենայինք ափին, բայց ի՜նչ ափ. ալիքները, որ կուգան ու կզարնեն ժայռերուն, կարծես փրփուրի սար ըլլան դեմդ կեցած։ Ի՞նչ մեղքս պահեմ, սիրտս հալեցավ, ըսի՝ վերջացավ։ Բայց հուսահատ ուժ տվի թիերուս. «Յա՜ Հիսո՜ւս Քրիստո՜ս». ըսի՝ «Պինդ նստեցեք, չվախնաք»։ Ես ըսելուս մեյ մըն ալ տեսնեմ ահագին վիթխարի ալիք մը, կարծես հեռուն ցամաքեն փրթեր իյնար շիտակ մեր վրա...* (Ոտքի ելնելով) *Աղ մնացածը... ալ ինչպե՞ս ըսեմ։ Գիտեմ միայն, որ լաստը հանկարծ սաստիկ թեքվեցավ, կախ ինկավ անդունդի բաց շրթունքին. հանկարծ սուր ճիչ մը ու կարծես բան մը ինկավ մեր լաստեն ու սահեցավ այդ փոսը։ «Աղջի՜կս, աղջի՜կս...»։ Բարձրացավ աղմուկ, խրարանցում. ես դեռ հազիվ էի հասկցեր, որ կողքես վեր ցատկեց աբեղան, արագ նետեց վրայեն կապան, ցատկեց ջուրը։ Լաստն ալ ետ ճռճվեցավ, մնացի մեկ թիով, լավ է՝ ալիքը ինքը կքշեր, բայց գիտեմ ուրկեն հա է գալու։ Եվ եթե դուք ժայռերուն վրայեն թոկը ժամանակին չնետեիք՝ կորած էինք մենք բոլորս ալ. կես վայրկյան մը ավելի ուշ, կես վայրկյան մը և վերջացավ...*

*ՏԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ— Աստծու հրա՜շքը։*

*ՄԻՆԱՍ ՎԱՆԱԿԱՆ— Իսկ օրիո՞րդը։*

ԱՆՏՈՆ ՎԱՆԱԿԱՆ— (Հպարտ) *Մեր Աբեղան ազատե՜ց։*

*ՄԻՆԱՍ ՎԱՆԱԿԱՆ— Լողալո՞վ։*

*ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— Այո՛, լողալո՛վ, հանեց ափը։*

**Իսկույն խումբը կբաժնվի երկու մասի, կշարվի ու կկենա խոնարհ։ Կմտնեն Իշխանն ու Վանահայրը, քանի մը հետևորդներ ու վանականներ։**

*ԻՇԽԱՆԸ—* (Ուղիղ դիմելով դեպի շենքը) *Ասի՜կա է ուրեմն քրոջս այնքան սիրած ու փայփայած եկեղեցին։ Կոկիկ ու սիրուն տաճար է։* (Հետևորդներուն) *Ըսի՝ այսօր տեսնեմ պիտի այս եկեղեցին և, ա՜յ, բոլոր բժիշկներուն հակառակ կեցած եմ հիմա հոս ողջ և առողջ։*

*ՎԱՆԱՀԱՅՐԸ— Հանդուգն քայլ էր ըրածդ, իշխա՛ն։*

*ԻՇԽԱՆԸ— Ձեր անապատը ուրիշ է, վանահա՛յր, ուրիշ է դուրսը։ Դուրսը հանդուգն եղողինն է աշխարհը։ Եվ վերջապես մեկ մըն ալ, ո՞վ գիտե, երբ եմ այս կողմերը անցնելու, այնքա՜ն գործ ունիմ և զբաղում։ Չտեսնեի՞ անգամ մը քրոջս եկեղեցին, չհամբուրեի՞ անգամ մը սուրբ սեղանը երթալես առաջ։*

*ՎԱՆԱՀԱՅՐԸ— Վաղը օր չէ՞ր, իշխա՛ն։*

*ԻՇԽԱՆԸ— Վա՞ղը. բայց ես այս իրիկուն մեկնելու եմ Ցամաքաբերդեն։*

*ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ի՞նչ. հիմա նորեն մտադիր ես ծովն անցնի՞ս։*

*ՆԵՐՈԻՆԻ ՎԱՆԱԿԱՆ— Աստված չնե փորձեր, իշխա՛ն։*

*ԻՇԽԱՆԸ— Քա՛վ լիցի։ Դեռ քանի ժամ ունինք. հույս ունիմ ծովը [illegible]մի։*

*ՎԱՆԱՀԱՅՐԸ— Եթե քեզի չես խնայեր, պետք է խնայես զավակդ։*

*ԻՇԽԱՆԸ— Աղջիկս քաջ է։ Քիչիկ մը վախցավ, քիչիկ մըն ալ ձեր Սևանի ջուրեն կուլ տվավ, բան չկա, երիտասարդություն է, կանցնի։ Բայց ինչ որ այսօր տեսավ ու ապրեցավ, ա՜յ, ատիկա չի անցնիր։ Չէ՞ որ իր մանկական հիշատակներուն ահեղ փոթորիկ մը նվիրեցի։*

*ՆԵՐՈԻՆԻ ՎԱՆԱԿԱՆ— Կյանքի հետ չեն խաղար, իշխա՛ն։*

*ԻՇԽԱՆԸ— Ատիկա ըսողը դո՞ւն ես, ծերո՛ւկ։ Այնքա՜ն երկար ես ապրեր, որ մոռցեր ես, թե կյանքն ինքը խաղ մըն է միայն։*

*ՆԵՐՈԻՆԻ ՎԱՆԱԿԱՆ— Կյանքը խաչ մըն է, որդի՛ս, որ պիտի կրենք մեր ուսին, մինչև Տերը կանչե մեզի, Տիրամայրը խնայեց քեզի այս անգամ, բայց այդ մեղքը մյուս անգամ չկրկնես։*

*ԻՇԽԱՆԸ— Եվ շնորհակալ եմ իրմեն, հա՛յր սուրբ, կաշխատիմ պարտքի տակ չմնամ։ Եվ հիմա որ ուխտի եմ եկեր իր տաճարը, չեմ ուզեր եկած ըլլամ դատարկ ձեռքերով։ Կնվիրեմ Տիրամոր այս տաճարին կաղնի դուռ մը բարձրաքանդակ, այլև վարագույր մը ավագ խորանին, որ պիտի ըլլա թավիշ ու ոսկենկար։*

ԻՇԽԱՆԸ— *Աղե՛կ. ես քեզի պարտական մնացի, աղվոր զգացում չէ։ Ես սովոր չեմ եղեր պարտական մնալու։ Ինչևէ. տո՛ւր ձեռքդ. տե՛ս իմինս, ասիկա երբեք տկար չէ եղած մեր թշնամիներուն դեմ ու երբեք ալ անարգար գործ չէ տեսած. արժանի է, որ սեղմես այդ քու ձեռքովդ, որ այսօր ազատեց աղջիկս ալիքներեն։* (Պինդ կսեղմե աբեղային ձեռքը) *Մտնե՛նք, վանահա՛յր, տաճարին ներսը։*

Իշխանը, վանահայրը, ճեմավորները և վանականները չատերը կմտնեն եկեղեցի։

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ— (Կամաց մը բռնելով Աբեղայի թևեն) *Երթա՛նք, մենք ալ երթա՛նք ու քիչ մը հանգստացի՛ր։ Դեռ դժգույն ես բոլորովին և կզգամ մարմինդ, որ դեռ կդողա։*

Կես մը գրկած կտանի դուրս։

5

ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ— (Մոտենալով Ադամ վանականին, խորհրդավոր կերպով) *Հիմա ո՞րքան ժամանակ պետք է պայքարե Աբեղան, որ սա-տարին մուտքը նորեն բացվի իրեն համար։*

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— *Պայքարե՞. ինչո՞ւ համար։*

ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ— *Չէ՞ որ ձեռք է տվեր կնկա։*

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— *Բայց... բայց այս տեսակ դեպք...*

ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ— *Ատիկա միևնույնն է, մեղքը մեղք է միշտ։* (Ավելի խորհրդավոր) *Ես տեսա, երբ իրարու փաթթված դուրս ելան ալիքներուն մեջեն։ Իշխանին մարդիկը գրեթե բռնի խլեցին աղջիկը անոր թևերուն մեջեն։*

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— (Զայրույթով) *Անմիտ բաներ կխոսիս։*

## Երրորդ տեսարան

### ԱԲԵՂԱՅԻՆ ԽՈՒՑԸ, ԳԻՇԵՐ

Ցած ու փոքր սենյակ մը, պատերը անզարդ են։ Ձախակողմը տախտակե պարզ մահճակալ, վրան փռված է փոստ մը. չոր ու կարծր բարձ մը. իսկ կոշտ ծածկոցը կիսովին ինկած է գետին։

Սենյակին մեջտեղը հին կաղնեայ կոճղի մը վրա գածիկ ու լայն գրակալը, գրակալին վրան ալ մեծ ու բաց ձեռագիր մը։

Սենյակին մեկ կողմը փայտե կոպիտ սեղան, վրան փայտե սև խաչ մը, կավե փարչ մը և ճրագը, որ կպլպլա։ Մյուս կողմը սենյակին մուտքն է։

Մահճակալին գլուխը պատեն կախված է Աբեղայի վերարկուն։

ԿՈՒՅՐԸ— *Իսկ ես կտեսնե՛մ, ես կըսե՛մ։*

ԱԲԵՂԱՆ— *Դո՞ւն, կո՛ւյր։* (Երգիծանքով) *Հապա ըսե՛, նայիմ, ինչ որ կտեսնես։*

ԿՈՒՅՐԸ— (Հատիկ-հատիկ) *Լաստին վրա, երբ ձեռքիդ թին ջուրը կպատռեր, ո՞վ էր հոգիիդ մեջ։*

ԱԲԵՂԱՆ— (Վախեցած) *Լռե՛։*

ԿՈՒՅՐԸ— *Որո՞ւն համար այնպես կթպրտար սիրտդ. շրթունքիդ՝ ի՞նչ անուն էր փակված, երբ շուրջդ ամենքը Աստված կկանչեին, երբ դեմդ փոթորիկն էր, որ կծառանար։*

ԱԲԵՂԱՆ— (Սարսափահար) *Երնե՛կ բաց ըլլային աչքերդ, որ չտեսնեիր, չտեսնեիր...*

ԿՈՒՅՐԸ— *Երբ բոլոր հայացքները երկինք էին վերացած, երբ ամենքը կսպասեին վերին օգնության, ո՞ւր էին սեռած քո՛ւ աչքերդ. ո՞վ էր ան, որուն առջևը հոգիդ ծունր էր իջած։*

ԱԲԵՂԱՆ— *Լռե՛, լռե՛. դուն իրավունք չունիս ամեն բան տեսնելու. կարելի չէ ամեն բան տեսնել։*

ԿՈՒՅՐԸ— (Անողոք) *Ըսե՛, ի՞նչ էր ուզածդ, ի՞նչ կփնտրեիր։*

ԱԲԵՂԱՆ— (Աղերսով) *Չգիտեմ, ոչինչ չգիտեմ, հերի՛ք է։*

ԿՈՒՅՐԸ— *Իսկ ծովուն մեջ, երբ ա՛ն օձի մը պես վզիդ փաթթված, իրենը մարմինիդ, շունչը շնչիդ, երբ դուն ամեն ինչ մոռցած աչիքներդ փակեցիր, ըսե՛, նորե՞ն չգիտես, թե ինչ կուզեիր։*

ԱԲԵՂԱՆ— (Երազկոտ) *Ո՛չ, կհիշեմ։ Կհիշեմ, ամբողջ էությամբս կցանկայի՝ որ ալ վերջ չունենար այդ թաց ճամփան, ալ վերջ չունենար այդ կյանքը։*

ԿՈՒՅՐԸ— *Ամբարի՛շտ։*

ԱԲԵՂԱՆ— (Խորտակված) *Բայց ունեցավ իր վերջը։*

ԿՈՒՅՐԸ— *Ու հասար ափը։ Եվ երբ ափին քու բնոդ թևերեդ ու դուն ուժասպառ ինկար ավազին, արդեն դիակ մըն էիր անկենդան։*

ԱԲԵՂԱՆ— *Ճշմարի՛տ է. ինծի այդպես զգացի։*

ԿՈՒՅՐԸ— *Դիակ մըն ես դուն և հիմա։ Մարմին մը, ուրկե ելեր է Աստծու շունչը։*

ԱԲԵՂԱՆ— *Ա՜խ, Աստվա՜ծ իմ, կորուսի հոգիս։*

ԿՈՒՅՐԸ— (Ոտքի ելլելով) *Ինկի՛ր գետին ու կոծե՛. քուրձ հագիր ու ապաշխարե՛. իսկ ամենեն առաջ գնա՛ խուցն վանահոր մոտ ու խոստովանե։*

ԱԲԵՂԱՆ— *Խոստովանի՞մ, վանահո՞րը. ի՞նչը, ինչո՞ւ Ա՜, ամե՛ն, ամեն բան, բայց այդ մեկը երբե՛ք։ Երբե՛ք։ Եվ դուն ալ, հայր սո՛ւրբ, [illegible]...*

ԱԲԵՂԱՆ— *Աստվա՛ծ իմ։*

ԱՂՋԻԿԸ— *Մինա՞կ ես։*

ԱԲԵՂԱՆ— *Ես... ես մինակ եմ մի՛շտ։*

ԱՂՋԻԿԸ— *Ա՛յ. եկա քեզի ընկեր. և եկա այսպես կեսգիշերին, որ մինակ ըլլանք ես ու դուն։ Դո՛ւն, իմ քաջս, իմ արևս, իմ լուսոյս...*

ԱԲԵՂԱՆ— *Հերի՛ք է։*

ԱՂՋԻԿԸ— *Ինչո՞ւ։ Չէ՞ որ ես քեզմով է, որ հիմա կապրիմ, չէ՞ որ դո՛ւն նորեն կյանքս տվիր ինծի. և ի՜նչ քաղցր է այդ կյանքը, որ դուն տվիր ինծի։ Այս քանի-քանի՜ տարի ապրեր եմ ես, ամբողջ տասնյակը տարի, և ես չգիտեի, բնավ չգիտեի, որ չէի ապրեր։ Մի՞տքդ է ցերեկը. հո՛ն, ալիքներուն մեջ. նայե՛, մազերս խոնավ են դեռ, բռնե՛, բռնե՛, շոշափե՛։*

ԱԲԵՂԱՆ— (Ետ-ետ կերթա հափշտակված աղջկան նայելով):

ԱՂՋԻԿԸ— *Բայց գիտե՞ս՝ ի՜նչ ուժեղ թևեր ունիս և ինչպե՜ս ճկուն. իսկ ես դեռ այնպես հուզված եմ, դեռ այնպես հոգնած* (Կուզե նստի Աբեղայի անկողնին):

ԱԲԵՂԱՆ— (Արգիլել ուզելով) *Օրիո՛րդ։*

ԱՂՋԻԿԸ— (Կնստի անկողնին ծայրը) *Ես օրիորդ եմ ծառաներուս համար, ես օրիորդ եմ մեր հպատակներուն համար. իմ տերս ինծի այլ կերպ պիտի կանչե։*

ԱԲԵՂԱՆ— *Սեդա՛։*

ԱՂՋԻԿԸ— *Վա՜յ, դուն գիտե՛ս անունս։*

ԱԲԵՂԱՆ— *Հայրդ քեզի այդպես կանչեց։*

ԱՂՋԻԿԸ— *Այո՛, Սեդա է անունս։ Իսկ ի՞նչ է քու անունդ։*

ԱԲԵՂԱՆ— *Ինծի Աբեղա կկանչեն։*

ԱՂՋԻԿԸ— *Իսկ առա՞ջ, առա՞ջ, երբ դուն աշխարհն էիր դեռ ու աշխարհին։*

ԱԲԵՂԱՆ— *Իմ աշխարհս վանքն է եղեր միշտ, քանի խելքս կհասնի։*

ԱՂՋԻԿԸ— *Աբեղա՞։ Ա՜, ի՜նչ սառն է հոս, ինչպե՜ս կմրսիմ։*

ԱԲԵՂԱՆ— *Կմրսի՞ս։*

ԱՂՋԻԿԸ— *Բան մը տուր վրաս, որ հագնիմ տաքնամ։*

ԱԲԵՂԱՆ— *Ես ոչինչ չունիմ։*

ԱՂՋԻԿԸ— (Առանց գլուխը դարձնելու, ետևը պատեն կախված վերարկուն մատնանիշ ընելով) *Ա՜յ։*

ԱԲԵՂԱՆ— *Վերարկո՞ւս։*

ԱՂՋԻԿԸ— *Ինչպե՜ս կմրսիմ։*

ԱԲԵՂԱՆ— *Վերարկո՞ւս։*

ԱՂՋԻԿԸ— *Կփարանի՛մ։ Բայց չմոռանեցար կյանքդ ինծի տալու [illegible], երբ [illegible] կատղած ալիքներուն մեջը նետեցիր քեզի։*

# ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

## Առաջին տեսարան

**Աղբյուրի գլուխը, ճինավուց վիթխարի ծառի մը ստվերին տակ**

**Սեռունի վանականը նստած է ծառին տակը փայտե նստարանին ու ծնած կերևա: Աղբյուրին մոտիկ խմբված են Ղազար, Մովսես, Դավիթ ու Զաքարիա վանականները և տրացուն կխոսին փսփսուքով ու անհանգիստ: Անոնց քովը կեցած է Արեղան. աչքերը փո- ւին ու կլսե:**

**1**

*ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ— Իրա՞վ է, Նորե՞ն։*

*ՏԻՐԱՑՈՒՆ— Ցատկեր է անկողնին վրա, նստեր է կոկորդին ու սկսեր է խեղդել։*

*ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ— Հիսո՛ւս Քրիստոս։*

*ՏԻՐԱՑՈՒՆ— Խեղճը հազիվ է շունչը ալատեր։*

*ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— Ի՞նչ հակառակեր է չարը հայր Բարսեղին, ա... նիերո՞րդ անգամն է։*

*ԶԱՔԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆ— Ի՞նչ կերպարանքով է եղեր։*

*ՏԻՐԱՑՈՒՆ— Չգիտեմ։ Ըսավ միայն, որ ծծումբի ծուխին պես բարձ- րացեր է ու առաստաղի գերաններուն մեջեն կորսվեր է դուրս։*

*ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ— Անիծվա՛ծը։ Նզովվի ինքն ալ, իր կերպա- րանքն ալ։*

*ՏԻՐԱՑՈՒՆ— Ա՜, սարսափելի է. ազատում չկա իր ճանկերեն։*

*ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— Գիշերները մինչև չնայիմ անկողնիս տակն ու վրա՝ ես երբեք պառկիլ չեմ կրնար։*

*ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ— Ես ալ։ Անցած իրիկուն մտնեմ խուցս ու ի՞նչ տեսնեմ. գորշ սավանին մեջ փաթթված կնկան մը պես կկզեր է անկ- ...նր լեղիս պատռեցավ. իսկույն խաչ հանեցի, աներևութացավ։*

*ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ— Հա՛, այդ նզովից արմատները կուգան կնկա կերպարանքով. կուգան խմբերով ու ալ ինչե՛ր ըսես չեն ըներ, ի՞նչ խայ- տառակություններ, ի՞նչ գայթակղություն...*

*ԶԱՔԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆ— Իսկ ինծի կերևան միշտ մեր գյուղացինե- րու կերպարանքով։ Գինեճյան Ռուբիկը, մեր դրացի Գաբոն, շվի փչող կույր Սիկոն, դհոլ զարնող Մինասը։ Կուգան կհավաքվին գլխուս, ձեռ-*

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ — Մենք մարդ ենք ամենքս ալ, վանահա՛յր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ո՛չ, հա՛յր սուրբ. ով եկեր է հոս ինծի հետ իմ անապատս, պետք է ավելի վեր ըլլա, քան մարդը։ Իսկ չարեն թող վախնա՛ն, ով չէ կտրեր իր բոլոր շղթաները աշխարհքին հետ, իր անցյալին հետ, իր հուշերուն հետ, իր վշտերուն, իր ուրախություններուն։

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ— Իսկ ան ո՞վ է, վանահա՛յր, որ կրցեր է կտրել այդ բոլոր շղթաները։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Հպարտ) Ա՛ն, ով եկեր է այս անապատը, ծերունի՛։

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ— Մենք մարդ ենք ամենքս ալ, վանահա՛յր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ով մարդ է ու միայն մարդ՝ անիկա աշխարհինն է ու թող դառնա աշխարհին. ահա՛ պատրաստ է հայր Անտոնին լաստը։ Ես չկանչեցի ձեզի հոս, որ հավաքվիք ու գևերեն սարսափիք (Ոգևորված կրարձրացնե կրծքեն կախված պարզ խաչը) Հո՛ս Տիրոջ խաչն է, հոս դևեր չկան։

ԲՈԼՈՐԸ— (Ջերմեռանդ խաչ կհանեն):

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Հոս կրքեր չկան, հոս բնազդներ չկան, հոս սուրբ-հոգին է միայն, հոս մի՛տքն է միայն, վեր խոյացող մի՛տքը դեպի ճշմարտությունը, դեպի Աստված։ Այս մեկը աղե՛կ հասկցեք ու սատանաները թողեք աշխարհին։ Դե՛, երթաք խաղաղությամբ և Տերը ըլլա ձեզի բոլորիդ հետ։

ԲՈԼՈՐԸ— Ամե՛ն։ (Կցրվին):

3

Վանահայրը կեցած է մինակ կնայի անոնց ետևեն տխուր գլուխը շարժելով, երբ ետևին կամաց մը կմոտենա Արեգան, կծռի, զգույշ կբարձրացնե Վանահոր փեշը և կհամբուրե.

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Հանկարծ կզգա ու կդառնա ետ) Ի՞նչ կընես, որդիս, ի՞նչ կընես։

ԱՐԵԳԱՆ— Հա՛յր...

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ի՞նչ կուզես, որդի՛ս, ի՞նչ ունիս։

ԱՐԵԳԱՆ— Որքա՜ն բարձր ես դուն, հա՛յր. որքա՜ն, որքան բարձր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Բարձր կձգտինք մենք բոլորս, որդյա՛կ։

ԱՐԵԳԱՆ— (Արհամարհոտ) Ա՜, բոլորս։ Քու ձայնդ ինծի կարծես երկինքեն կուգա. հեռուե՜ն, հեռուե՜ն, վերե՜ն է՜, մենք բոլորս։ Քանի անգամ կ՚ուզեի՝ եղեր եմ քու թևիդ տակը, քու խրատներուդ, քու օրհնանքիդ և եղավ ժամանակ մը, երբ կարծեցի, թե ե՛ս ալ հասնելու եմ այդ բարձունքները...

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Բոլորովին այլայլած կուղղվի և հանկարծ խիստ) *Ինծի նայե՛, տեսնե՛մ, նայե՛ աչքերուս։*

ԱԲԵՂԱՆ— (Կհեկեկա)։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— *Մի՞թե. մի՞թե ճշմարիտ է կասկածս։ Աբեղա՛, նայե՛ աչքերուս։*

ԱԲԵՂԱ— (Կհեկեկա)։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— *Այսպես թո՛ւյլ, այսպես խե՛ղճ... Դո՛ւն, որու հոգին ես որձաքարի պես ամուր կկարծեի, անարատ ու կույս բացառիկ հոգի մը. ու գլուխդ հպարտ ցցած վեր, դեպի երկինք, աշխարհքի ծովուն մեջ, ինչպես իմ այս կույս ու մենավոր կղզիս այս ծովուն մեջ։ Թշվառակա՛ն, խոնարհե՞լ կուզես այդ գեղեցիկ, այդ հպարտ գլուխը ցած, այս ցածի ծովուն դեմ, այն վերերեն, ուր մեր Աստվածն է...*

ԱԲԵՂԱՆ— *Աստված երեսը դարձուց ինծմե։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— *Լռե՛, լռե՛։ Այդպես խախո՜ւտ, այդպես ողորմելի.. առաջին իսկ փորձումի՞ն։*

ԱԲԵՂԱՆ— (Ծունր իջնելով) *Հա՜յր...*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Նա կխաչվի) *Ելի՛ր, ելի՛ր. ես քեզի շատ եմ տեսեր ծունկերուս քովը, բայց ո՛չ այդպես, ո՛չ այդպես։ Ես քեզի այդպես չեմ կրնար տեսնել։ Ելի՛ր, ելի՛ր։*

ԱԲԵՂԱՆ— (Կելլե ոտքի)։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— *Եվ հեռացի՛ր։ Գնա՛, եղի՛ր նորեն այնպես, ինչպես որ էիր, ե՛տքը եկուր ինծի։ Այնպե՛ս, ինչպես որ էիր. այնպե՛ս, ինչպես որ էիր...* (Խոսքը կկտրե ու կկենա անշարժ ու խոժոռ)։

ԱԲԵՂԱՆ— (Լուռ ու գլխահակ կամաց կհեռանա)։

**4**

ՎԱՆԱՀԱՅՐԸ— *Աշխարհքը... աշխարհքն է, որ կուզե մտնել կղզիս։ Ահա սատանաները, հո՛ս այդ աղջիկը... և Աբեղան... իմ Աբեղան... ա՛յդ Աբեղան... Ո՛չ, անկարելի է։* (Դառնալով դեպի վեր. դեպի կղզիին գագաթը) *Է՛յ, դո՛ւն, դո՛ւն, ի՞նչպես է քու անունդ, դո՛ւն, ճերմակավո՛ր. ո՛չ, սա պատահմունք մըն է միայն, չուրախանաս, փիպվա՛ծ մը անցավոր ու պատահական. չուրախանա՜ս...*

*ԽՈՒՄԲ ՄԸ ՄԻԳԱՆՈՒՇՆԵՐ*— (Շրջապատելով ու հեզնելով) *Ա՜խ, այս սիրուն խեղճ մանչը։ Ա՜խ, այս սիրուն խեղճ մանչը։ Ալ անզոր է քու խաչը։*

*ԱՐԵՂԱՆ*— (Նորեն կոտրված) *Ալ անզոր է աղոթքս, ալ անզոր է իմ խաչս։*

*ՉՈՐՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— Ա՜յ, ա՜յ, իզո՜ւր, մի՛ տխրիր։*

*ԱՌԱՋԻՆ ՄԻԳԱՆՈՒՇ— Հոս ուրախ է ամեն իր։*

*ԱՐԵՂԱՆ*— (Սրտնեղ) *Ա՜, ի՞նչ կուզեք. թողե՛ք ինծի։*

*ԵՐՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— Կուզենք հոգիդ առկայծի։*

*ԵՐԿՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— Մենք քեզի գեշ ի՞նչ ենք ըրեր։*

*ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— Գիտե՞ս, բերեր ենք լուրեր։*

*ԵՐՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— Լուրեր, սերեր, սարերով։*

*ԵՐԿՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— Սերը սիրով,*

*սերը սիրով,*
*օրենքն ա՛ս է*
*դարերով։*

*ԱՐԵՂԱՆ*— (Աչքերը շփելով) *Բայց ո՛չ. սա պատրանք է դևի։*

*ԱՌԱՋԻՆ ՄԻԳԱՆՈՒՇ— Դևի՞։*

*ՄԻԳԱՆՈՒՇՆԵՐ*— (Թև-թևի կուտան, մեջ կառնեն Արեղան, կդառնան շուրջը ու կերգեն պարելով)

*Դևի, դևի, թև-թևի,*
*պարենք, երգենք թև-թևի,*
*գուցե սիրտը թեթևի*
*այս անսերի, անթևի։*
*Թևե՜ր, թևեր*
*սի՜ր ու վե՜ր.*
*տվե՛ք թևեր,*
*թռչի վեր։*

*ԱՐԵՂԱՆ*— (Կհարձակվի Երրորդ Միգանուշի վրա)

*Ըսե՛, ըսե՛, դուն ի՞նչ ես,*
*այդպես անուշ կհնչես։*

*ԵՐՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ*— (Ետ ցատկելով թեթև)

*Չէ՛, ո՛չ դև եմ, ո՛չ փերի.*
*քեզի ծովեն լուր բերի։*

*ԱՐԵՂԱՆ— Ուրեմն կա՞ս, կապրի՞ս դուն։*

*Ա՜խ, դուք չքրքրիք։*

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— (Սրտնեղ)

*Թող տուր ինծի. է՜ հերի՛ք։*

ԱԹԵՂԱՆ— Իսկ ե՞րբ թողիր դուն ծովը։
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— Երբ չէր ինկեր դեռ զովը.

*այսօ՛ր, ջերմիկ կեսօրին։*

ԱԹԵՂԱՆ— Թողիր ի՞նքդ, կամովի՞ն։
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— Հայր արևը կանչեց վեր։
ԱԹԵՂԱՆ— Հայր... արև՞ը. հրավե՞ր։

*Եվ ինչո՞ւ։*

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— (Ծիծաղելով ու զարմանքով ընկերներուն) Ինչո՜ւ։

ԱՌԱՋԻՆ ՄԻԳԱՆՈՒՇ — Ձո՜ւ, չո՜ւ։
ՎԵՑԵՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— Ձվելու, չվելու,

*հովերուն հետ պաչվելու։*

ԱԹԵՂԱՆ— Հովերո՞ւն։
ԵՐԿՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— Ա՜յ, ա՜յ, եկա՜ն։
ԽՈՐՔԵՆ ԽՈՒՄԲ ՄԸ— Եկա՛ն, եկա՛ն։
ՉՈՐՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— Հովիկները, հովիկները, փախե՛ք։
ՈՒՐԻՇ ԽՈՒՄԲ ՄԸ— (Ոստոստելով) Եկա՛ն, եկա՛ն, հովիկները։

## 2

Ընդհանուր իրարանցում։ Ներս կրափին հովիկները՝ բարմ ու թեթև պատանիներ խռիվ մազերով, հագուստին զարշ, ծայածոր ու ծածանուտ:

Կրափին ներս տեսարանի խորքեն, կխառնվին միգանուշներուն, կփաթթվին անոնց զույգ-զույգ կամ փաղքերով. և առանց բնավ կանգ առնելու, անոնք ալ իրենց հետ քաշելով, դուրս կելլեն տեսարանի առջևի մասեն ցատկելով, աղմուկով ու ծիծաղով:

Զույգ մը անցնելու պահեն.

ՄԻԳԱՆՈՒՇ— Սպասել ալ որ կուտա՞ք։
ՀՈՎԻԿԸ— Կռվի էինք սարի տակ։
ՄԻԳԱՆՈՒՇ— Ո՞հ, ատ որո՞ւն հետ նորեն։

ԱԲԵՂԱՆ— (Ապշահար կնայի վեր)։

ՃԳՆԱՎՈՐԸ— Է՜յ, քեզի կըսեմ. ի՞նչ բանի ես հոդ։ (Արագ ցած կմագլցի ժայռեն, երևալով ու չհանալով քարերու ցցվածքներուն ետևը։ Հասնելով քարափի կեսերուն կանգ կառնե) Ինչո՞ւ ես եկեր, մա՛րդ, այս անմարդ կողմերը։

ԱԲԵՂԱՆ— Ա՜խ, երևի դուն այն Ճգնավորն ես, որ մեզմե շա՜տ-շատ տարիներ առաջ եկեր էր մինակ այս կղզին ճգնելու։ Բայց չէ՞ որ անիկա մեռած է արդեն, վաղո՜ւց, վաղո՜ւց։

ՃԳՆԱՎՈՐԸ— Իսկ դո՛ւն. դուն մեռած չե՞ս, վաղո՜ւց, վաղո՜ւց։

ԱԲԵՂԱՆ— Ե՞ս։

ՃԳՆԱՎՈՐԸ— Ունայնությո՛ւն։ Դուն ինծի ան ըսե՝ ինչո՞ւ ես եկեր այս անմարդ կողմերը։

ԱԲԵՂԱՆ— Չգիտե՛մ. ինծի բերին։

ՃԳՆԱՎՈՐԸ— Ո՞վ բերավ քեզի։

ԱԲԵՂԱՆ— (Մտածկոտ) Չգիտե՛մ։ Բայց չէ՞ որ քու ճգնարանդ այս ժայռերուն մյո՛ւս կողմն էր, ավելի վե՛րը։

ՃԳՆԱՎՈՐԸ— Բայց հոստեղ է իմ փոսս։

ԱԲԵՂԱՆ— Փո՞ս. ի՞նչ փոս։

ՃԳՆԱՎՈՐԸ— Նայե՛ ոտքերուդ տակը. ունայնության փոսը։

ԱԲԵՂԱՆ— Ունայնությա՞ն։ (Կնայի ոտքերուն տակը, ուր բացված է փորվածք մը գերեզմանի չափ ու ձևով)։

ՃԳՆԱՎՈՐԸ— Զգո՛ւյշ. չքանդե՛ս։

ԱԲԵՂԱՆ— Ճի՞շտ է, Ճգնավո՛ր, որ դուն տեր ու թագավոր ես եղեր ամբողջ ընդարձակ աշխարհներու, պալատներու մեջ ես ապրեր, հարյուրավորներ են ծառայեր քու ամեն մեկ քմայքիդ. վայելքներուդ ու զվարճություններուդ սահման չէ եղեր։ Ճի՞շտ է, Ճգնավո՛ր, ինչ որ կպատմեն։

ՃԳՆԱՎՈՐԸ— Ունայնությո՛ւն։

ԱԲԵՂԱՆ— Կըսեն՝ թողեր ես այդ բոլորը, պալատն ու խրախճան, և իշխանությունն ու փառք. թողեր ես ամեն ինչ, հագեր ես սքեմ, գացեր ես մարդոց մեջ ապաշխարանք քարոզելու. քարոզելու գութ, քարոզելու ողորմածություն, քարոզելու խոնարհություն։ Ճի՞շտ է, Ճգնավո՛ր, ինչ որ կպատմեն։

ՃԳՆԱՎՈՐԸ— Ունայնությո՛ւն։

ԱԲԵՂԱՆ— Ճի՞շտ է, որ ատկե ալ ես կշտացեր, եկեր ես այս մենության մեջ անդորրություն գտնելու, մտածելու հոգիիդ փրկությունը։

ՃԳՆԱՎՈՐԸ— Ունայնությո՛ւն։

ԱԲԵՂԱՆ— (Հուզված) Ճգնավո՛ր, ի՞նչ կխոսիս. ունայնություն և քու գթությո՞ւնդ։

ԱԲԵՂԱՆ— (Գլուխը կբարձրացնէ, կդիտէ թեթև զարմանքով ու տեսակ մը անփույթ) *Դո՞ւն ալ անոնցմե։*

ՔՈՂԱՎՈՐԸ— *Ինծի ինչո՞ւ կանչեցիր։*

ԱԲԵՂԱՆ— *Կանչեցի՞. քեզի՞։*

ՔՈՂԱՎՈՐԸ— *Հոգիդ կանչեց ինծի ու եկայ։*

ԱԲԵՂԱՆ— *Հոգի՛ս։*

ՔՈՂԱՎՈՐԸ— *Ինչո՞ւ է հոգիդ մռայլ։ Ի՞նչ կխորհեիր։*

ԱԲԵՂԱՆ— *Հոգի՞ս։*

ՔՈՂԱՎՈՐԸ— *Ըսէ՛, ու մի՛ ըլլար այդպես տխուր։*

ԱԲԵՂԱՆ— (Փոքր մտածանիշ ընելով) *Ա՛յ, նայե՛։*

ՔՈՂԱՎՈՐԸ— *Աս ի՞նչ է որ։*

ԱԲԵՂԱՆ— *Կյա՛նքը։*

ՔՈՂԱՎՈՐԸ— *Կյա՞նքը. այդ նեղ ու մութ փոսը։*

ԱԲԵՂԱՆ— *Այո՛, ունայնության փոսը։*

ՔՈՂԱՎՈՐԸ— *Ա՜խ, վախցե՛ր ես այդ դատարկ փոսեն։ Կուզե՞ս լեցնեմ։*

ԱԲԵՂԱՆ— (Աշխույժ) *Լեցնե՞ս...*

ՔՈՂԱՎՈՐԸ— *Իսկո՛ւյն. դժվար գործ չէ։* (Կմոտենա, կկենա փոսին գլուխը և կսկսի իր կիսերգը խորհրդավոր կանչող շարժումներով: Եվ վերեն կսկսի մշուշի նման բան մը իջնել վար դեպի փոսը վերջալույսի կարմիր ճառագայթներուն տակ. իջնող մշուշին մեջ աղոտ կնշմարվին կարծես դեմքեր, մարմնի մասեր, տերև, ծաղիկ, կայծեր. գույներ)

*Իջե՛ք, իջե՛ք,*
*երազներ,*
*իջե՛ք զգո՜ւյշ,*
*երազներ,*
*շոյո՛ղ, անո՜ւշ,*
*երազներ,*
*իջե՛ք քնքո՜ւշ*
*երազներ։*
*Ծաղիկ, կանաչ,*
*թարմ հյուսեր,*
*բախտի կարկաչ*
*ու հույսեր.*
*դող ու անցուկ*
*ու կարոտ,*
*ծածուկ արցունք*

ԱԲԵՂԱՆ— (Անոնց ոտքի ձայնէն կբարձրացնէ գլուխը ու ապշած կնայի առջևը) Գնա՜ց... (Կնայի շուրջը, կես մը կելլե ու կնստի)։

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ— Ա՜խ, դո՞ւն ես, Աբեղա՛։ Կաղոթեի՞ր, ինչու՞ այսքան հեռուները։

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Վախցա՛նք։

ԱԲԵՂԱՆ— (Կելլե ոտքի, կնայի անոնց ցրված արտահայտությամբ և հանկարծ ուշադիր կսկսի գետինը բան մը փնտրելու)։

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Ի՞նչ կորոնես, Աբեղա՛։

ԱԲԵՂԱՆ— Ո՞ւր է. ճիշտ հո՛ս պիտի ըլլար։ Ո՞ւր է փոսը, ո՞ւր է այն փոսը։

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Ի՞նչ փոս, Աբեղա՛։

ԱԲԵՂԱՆ— Հա՛, իրա՛վ, մոռցա. չէ՞ որ լեցուց։

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Լեցո՞ւց, ի՞նչը, ո՞վ։

ԱԲԵՂԱՆ— Ան... անիկա. երա՛զը։

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ— (Ժպտուն) Ա՜խ, երա՛զ ես տեսեր։ Քունդ սուրբ էր, հա՞։

ԱԲԵՂԱՆ— Երա՞զ... (Հանկարծ վրա կնետվի Սիմոն վանականին. շոշափելով անոր մարմինը, պինդ-պինդ թափ տալով անոր թևը) Իսկ դո՞ւն... իսկ դո՞ւն... իսկ դո՞ւն...

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ— (Ետ-ետ քաշվելով) Տե՛ր Հիսուս Քրիստոս, դուն խափանես չարը։

ԱԲԵՂԱՆ— Իսկ անիկա՞, իսկ ե՞ս, իսկ այս վա՞նքը, այս անապա՞տը... Ինչպե՞ս իմանամ ո՞րն է քուն, ո՞րն է արթուն. ա՛ն, հոն, անո՜նք, թե՞ հոս, դո՛ւք, ե՛ս...

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Սթափվե՛, Աբեղա՛, սթափվե՛։ Ի՞նչ երազ. ի՞նչ բան. ա՜յ, անիկա Սիմոն հայր սուրբը, անիկա ալ ես՝ մեղավոր ծառաս Աղզիի գագաթն էինք, իջանք սունկ հավաքելու. քարե-քար, ժայռե-ժայռ հեռացանք մինչև հոս. այս կողմերը սքանչելի սունկեր կան. ամբողջ թաշկինակ մը ժողվեր եմ, նայե՜. հրաշալի սունկե-սպաս պիտի ըլլա։

ԱԲԵՂԱՆ— (Հանկարծ) Իսկ եթե դո՞ւ ինքդ սունկ մըն ես միայն, հրաշալի սունկ մը բուսած ժայռի մը ստվերին. և քունիդ մեջ կերազես միայն, իբրև թե վանական մըն ես ու եկեր ես սունկ հավաքելո՞ւ։

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Խելքի եկուր, Աբեղա՛, ինչե՜ր կխոսիս։

ԱԲԵՂԱՆ— (Շարունակելով) Կամ գուցե այն ժայռի ստվերն ես դուն, քարի կտորի մը ստվերը, որ ինկեր ես հոս ու կերազես, թե մեղքերուդ հաղթած սուրբ մըն ես դուն։ Ո՞րն է երազը, ո՞րը արթուն. ըսե՛, եթե գիտես. և ի՞նչ բան է ինքը երազը։

ԱԲԵՂԱՆ— (Անոնց ոտքի ձայնէն կբարձրացնէ գլուխը ու ապշած կնայի առջևը) *Գնա՜ց...* (Կնայի շուրջը, կես մը կելլէ ու կնստի)։

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ— *Ա՜խ, դո՞ւն ես, Աբեղա՛։ Կաղոթեի՞ր, ինչու՞ այսքան հեռուները։*

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— *Վախցա՛նք։*

ԱԲԵՂԱՆ— (Կելլէ ոտքի, կնայի անոնց ցրված արտահայտությամբ և հանկարծ ուշադիր կսկսի գետինը բան մը փնտրելու)։

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— *Ի՞նչ կորոնես, Աբեղա՛։*

ԱԲԵՂԱՆ— *Ո՞ւր է. ճիշտ հո՛ս պիտի ըլլար։ Ո՞ւր է փոսը, ո՞ւր է այն փոսը։*

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— *Ի՞նչ փոս, Աբեղա՛։*

ԱԲԵՂԱՆ— *Հա՛, իրա՛վ, մոռցա. չէ՞ որ լեցուց։*

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— *Լեցո՞ւց, ի՞նչը, ո՞վ։*

ԱԲԵՂԱՆ— *Ան... անիկա. երա՛զը։*

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ— (Ժպտուն) *Ա՜խ, երա՛զ ես տեսեր։ Քունդ տարեր էր, հա՞։*

ԱԲԵՂԱՆ— *Երա՞զ...* (Հանկարծ վրա կնետվի Սիմոն վանականին. շոշափելով անոր մարմինը, պինդ-պինդ թափ տալով անոր թևը) *Իսկ դո՞ւն... իսկ դո՞ւն... իսկ դո՞ւն...*

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ— (Ետ-ետ քաշվելով) *Տե՛ր Հիսուս Քրիստոս, դուն խափանես չարը։*

ԱԲԵՂԱՆ— *Իսկ ասիկա՞, իսկ ե՞ս, իսկ այս վա՞նքը, այս անապա՞տը... Ինչպե՞ս իմանամ ո՞րն է քուն, ո՞րն է արթուն. ա՛ն, հոն, անո՞նք, թե՞ հոս, դո՛ւք, ե՛ս...*

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— *Սթափվե՛, Աբեղա՛, սթափվե՛։ Ի՞նչ երազ. ի՞նչ բան. ա՜յ, անիկա Սիմոն հայր սուրբը, ասիկա ալ ես՝ մեղավոր ծառաս։ Նղլիի գագաթն էինք, իջանք սունկ հավաքելու. քարե-քար, ժայռե-ժայռ հասանք մինչև հոս. այս կողմերը սքանչելի սունկեր կան. ամբողջ թաշկինակ մը ժողվեր եմ, նայե՜. հրաշալի սունկե-սպաս պիտի ըլլա։*

ԱԲԵՂԱՆ— (Հանկարծ) *Իսկ եթե դո՞ւ ինքդ սունկ մըն ես միայն, Հրաշալի սունկ մը բուսած ժայռի մը ստվերին. և քունիդ մեջ կերազես միայն, իբրև թե վանական մըն ես ու եկեր ես սունկ հավաքելո՞ւ։*

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— *Խելքի եկուր, Աբեղա՛, ինչե՜ր կխոսիս։*

ԱԲԵՂԱՆ— (Շարունակելով) *Կամ գուցե այն ժայռի ստվերն ես դուն, ժայռի կտորի մը ստվերը, որ ինկեր ես հոս ու կերազես, թե մեղքերուդ հալված սուրբ մըն ես դուն։ Ո՞րն է երազը, ո՞րը արթուն. ըսե՛, եթե գիտես. և ի՞նչ բան է ինքը երազը։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Է՛, պարանքը կդառնա և առանց ինծի։ Այդ տարիքին մեջ մոր կարիքը չնչին է։ Ես հասցուցեր, պսակեր, կատարեր եմ իմ պարտքս։ Աշխարհին տվեր եմ իմ հարկս. հիմա քիչ մըն ալ իմ հանգիստս ու իմ հոգիս։*

ՊԱՌԱՎԸ— (Գործավարին) *Թո՛ղ, դո՛ւն ալ, քու պարա՛նքդ ալ։ Տիրուհին նահատակ մըն է եղեր իր ամբողջ կյանքը, հիմա կուզես, որ նորեն գար ու իյնար կյանքի անիվին տակ։ Ո՛չ, ալ հերի՛ք է, հանգիստ է պետք և մեզի, գոնե մեր օրերուն վերջինն։ Նայե՛, այս անդորր ու լռիկ մենարանը, ոչ մեկ արքունիքի հետ չեմ փոխեր։*

ԳՈՐԾԱՎԱՐԸ— *Ճի՛շտ է, սիրուն տեղ է Ցամաքաբերդը, սիրուն ու հանգիստ. Սեանի լի՛ճը, դեմի կղզի՛ն։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Եվ վերջապես կուզեմ մոտիկ ըլլամ իմ եկեղեցիիս, որ կշինվի. տե՛ս, աչքիս տակը։*

ԳՈՐԾԱՎԱՐԸ— *Գիտե՛մ իշխանուհիին բարեպաշտությունը. գիտե՛մ անոր գթոտ սիրտն ու առատաձեռնությունը։ Հոս ամեն քայլին անոր ողորմածութենեն կխոսին ու կարեկցությունեն։ Բարերարվածները անշա՛փ, գիտեմ։ Իզուր չէ անշուշտ, որ սրբուհի կկանչեն։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Ժպտուն) *Իրա՞վ։ Թող կանչեն, անունը ոչինչ չի փոխեր։ Բան մը պիտի ընեի՞, թե չէ, այս մենավոր խուլ անկյունը։*

ՊԱՌԱՎԸ— *Մանավանդ տիրուհիիս պես անվերջ հոգատարության ու խնամելու սովոր սրտի մը համար։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Կին ըլլալը՝ հոգ ըսել է, Եղիսա՛, իսկ մայրը՝ խնամք։*

ԳՈՐԾԱՎԱՐԸ— *Հրաման կուտա՞ իշխանուհին, որ մեկնիմ։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Ե՞րբ կուզես՝ ճամփա իյնաս։*

ԳՈՐԾԱՎԱՐԸ— *Այսպե՛ս, ժամե մը։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Աղե՛կ. Աստված հետդ։*

ԳՈՐԾԱՎԱՐԸ— *Առողջ մնա իշխանուհին։* (Կծռի, կհամբուրե խոնարհ անոր ձեռքը ու մեջի վարագույրներեն կելլե դուրս)։

## 2

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Քիչ մը լուռ, և ետքը հառաչանքով) *Է՛, կյանքը որքա՞ն քիչ բան ունի մեզի տալու։*

ՊԱՌԱՎԸ— *Մի՛ տրտնջար. քիչ ունի թե շատ, ինչ որ ունի քեզի տվեր է։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Այդպես կմտածես և դո՞ւն։*

ՊԱՌԱՎԸ— *Ճշմարտությունը ատ է։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Այն ատեն շատ խղճուկ ու աղքատիկ է ինքը կյանքը։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Սյուներում ետևը: Չէ որ... սյունը այսպես... Եղիսա՛, հատակագիծը տա՛ս:

ՊԱՐԱՎԸ— (Որ քիչ մը հեռուն կեցած էր ձեռքերը կրծքին պատկառանքով. կերթա պատի պահարանեն կբերե ոլորած մագաղաթ մը):

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Փռելով մագաղաթը իր փոքրիկ սեղանի վրա) Նստե՛, հա՛յր սուրբ: Ա՜յ, նայե՛:

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ա՛ս քեզի սյուները, աս ալ կո՛ղքը:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Իրա՛վ է: Ինչ կնշանակե, որ այդ կտորը իրականին վրա դեռ չեմ տեսած: Երևակայելը երբեք ան չէ, չնայելով՝ ինչքան, ինչքա՜ն նայեր եմ այս հատակագծին վրա: Գիտե՞ս, հաճախ ամբողջ գիշերներով այդ շենքի մասին կմտմտամ. բոլոր անկյունները, բոլոր մանրամասնությունները, ամեն մեկ քարը: Այնպե՜ս բոլորը մոտ է սրտիս, այնպես կապված է հոգիիս, կարծես ամեն մեկ քարը ես եմ դրեր, ես եմ շիներ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Կատակով) Այո՛, իշխանուհի՛, ես կկարծեի, թե շինողը ես եմ, արդյունքը եղավ՝ որ դուն շինեցիր:

ՊԱՐԱՎԸ— Ճշմարի՛տ է. Մարիամ Աստվածածնի այդ տաճարը իմ Մարիամ իշխանուհիիս ձեռքի գործն է:

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Մտածկոտ) Այո՛, դուն շինեցիր, իշխանուհի՜:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ո՛չ, հայր սուրբ, ես չշինեցի այդ եկեղեցին. մե՛նք շինեցինք այդ եկեղեցին. մե՛նք, ես ու դուն: Միասին ենք խորհեր, միասին ենք ոգևորվեր, միասին ենք կազմեր ու միասին ալ կերպարանավորեր: Եվ այնպես հյուսված է եղեր այդ բոլորը իրարու, որ այժմ բնավ չգիտեմ՝ ո՞րն է որ ինծմե է ծներ և ո՛րը քեզմե: Կհիշե՞ս, հա՛յր սուրբ, մեր այն միասին խորհումներուն ժամերը:

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Կհիշե՛մ, իշխանուհի՛. բախտավոր բան է կառուցելը, մանավանդ տաճար մը, ուր քո Աստվածդ է բնակելու:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Աղվո՜ր ըսիր: (Երազկոտ) Կյանքիս ամենեն քաղցր վայրկյաններն են եղած, երբ մենք միասին այս նույն սեղանին երկու կողմը նստած՝ մեր երևակայության մեջ ստեղծեր, կառուցեր ենք այդ շենքը:

ՊԱՐԱՎԸ— Եվ որու ճակտին քանդակվելու է քու անունդ, դարե-դար պատմելու բոլորին քու բարեպաշտությունդ ու աստվածասիրությունդ:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Թո՛ղ մոր ու դայակի քու այդ սնափառությունդ, Եղիսա՛. ձգե՛ մեզի առանձին ու մի՛ խանգարեր:

ՊԱՐԱՎԸ— (Քրթմնջելով դուրս):

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Երախտապարտ եմ, իշխանուհի։ Մե՛ծ պատիվ մը, որ ես բնավ չեմ հանդգնած երևակայելու։ (Քիչ մը լուռ. վերջը ճերմակեալ գլուխը բարձրացնելով) Միայն... միայն այն Հովհաննեսը, որուն անունը այդքան զարմանալի կերպով դեռ չէ մոռցեր իշխանուհին, այն Հովհաննեսը, ան մեռած է վաղուց։ Իսկ հիմա հոս կեցած է վանական մը, գրեթե ծերունի մը, հեռու արքունիքեն ու ամենքեն, որ եկեր է քեզի հետ կառուցվող շենքի ծախքերու մասին խոսելու։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Հովհաննեսը մեռեր է գուցե քեզի համար, չգիտե՛մ. բայց ո՛չ ինծի։ Ան միշտ կենդանի է եղեր հոգիիս մեջ և կենդանի ալ կմնա։ Անոր պատկերն է, վանահա՛յր, միակ պայծառ կետը իմ ամբողջ կյանքիս մեջ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Բայց ատ ըսողը կին մըն է, որ ամուսին է ունեցեր։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Տեսակ մը ընդհատելով) Եվ խիստ արժանավոր ամուսին մը, որ ես միշտ հարգեր եմ խորապես։ Եվ խորապես ալ տանջվեր, որ հարգանքե տարբեր բան մը անոր տալու անկարող եմ եղեր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Բայց ատ ըսողը կին մըն է, որ զավակներ է ունեցեր։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Խիստ) Ես կատարեր եմ պա՛րտքս։ Եվ շատ ծանր է եղեր սրտիս, որ պարտավորութենես ավելի ոչինչ չեմ կրցեր տալ զավակներուս։ Ունեցեր եմ ամեն ինչ և ամեն ունեցածս տվեր եմ իմ հարազատներուս. բայց բախտավորություն ոչ մեկուն չեմ տվեր և ոչ մեկեն ալ չեմ ստացեր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Կեցած է լուռ և ունքերը կիտած)։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Լսե՛, պետք է ըսեմ բոլորը, որ մեր մեջեն վերնա այս անախորժ լարումը մեկանգամ ընդմիշտ։ Նայե՛, ես պառավ կին մըն եմ, և դուն ինքդ ըսիր քիչ մը առաջ, որ ծերունի ես արդեն. վախնալու ոչինչ չունինք, քաշվելու ալ ոչինչ չունինք, քանի որ մաքուր է մեր խիղճը։ Այս քողարկումը, զգացումներու այս խեղաթյուրումը վայել չէ մեր դեմքին, ո՛չ քու և ո՛չ ալ իմ։ Լսե՛, ինչ որ շրթունքս երբեք չէ արտասանիր և ինչ որ սակայն լեցուցեր է իմ ամբողջ էությունս։ Իմ կյանքիս գորշ երկինքին դուն ես եղեր ինծի համար լույսի աստղը, ապրելու իմաստը. առանց այդ լույսին, առանց այդ մխիթարության, ես չգիտեմ, ինչո՞ւ էի ապրելու։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Ձեռքովը ճակատը սեղմած) Հերի՛ք է, հերի՛ք է...

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Քու պատկերդ է եղեր իմ դեմս մենությանս վայրկյաններուն։ Ինքս ալ աղեկ մը չգիտեմ՝ այն ջերմ աղոթքները, որ սրտես դուրս են հորդեր, ավելի Խաչյալի նկարի՞ն են ուղղված եղեր, թե՞ քու պատկերիդ։ Իրա՛վ է, ես պաշտեր եմ քու պատկերդ իմ Աստծուս հետ միասին։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Եվ չե՞ս վախցեր Աստուծմե։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— *Այո՛, այդ անողոք հուշերն ալ մյուս բոլոր աշխարհային ցավերուս հետ սրտես դուրս քամեցի այն օրը, երբ վրաս առի այս վերարկուն։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Սրտեդ դուրս քամեցի՞ր...*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— *Այո՛, երբ մարեցան բոլոր աշխարհիկ կայծերը։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Ո՛չ, չմարեցան այդ կայծերը։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— *Իշխանուհի՛։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Ո՛չ, կըսեմ քեզի. չմարեցան այդ կայծերը։ Աշխատեցար, որ մարես. աշխատեցար, որ խաբես քեզի. օրոր ըսիր հոգիիդ ու համոզեցիր քեզի, թե մարեր են. բայց չմարեցիր. չէիր կրնար։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Խիստ) *Իշխանուհի՛։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Ցած ձայնով) *Եթե մարեցիր, հապա ի՞նչ է այս եկեղեցին, հապա ի՞նչ է այս մե՛ր եկեղեցին։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Սարսափած եւ քաշվելով) *Լռե՛, լռե՛, իշխանուհի՛։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Ճշմարտությո՛ւնը, վարդապե՛տ։ Մենք այդ եկեղեցին չենք շինած քու բարձրյալ Աստծուդ համար, ինչպես որ միշտ կրկներ ես. մի՛ խաբեր քեզի. այդ եկեղեցին շիներ ենք մենք մեզի համար, մեր սիրու Աստծուն համար։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Խորտակված) *Մարիա՛մ...*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Այո՛. այդ քու եկեղեցիդ նվիրված է ո՛չ թե Մարիամ Աստվածածնին, ան նվիրված է քու Մարիամ իշխանուհիիդ։ Ըսե՛, ճիշտ չէ՞։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Կեցած է լուռ ու գլխահակ)։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Ըսե՛, ճիշտ չէ՞։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Լուռ է ու գլխահակ)։

## 6

Անկյունը հանկարծ կերեւա Ճերմակավորը։

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— *Ըսե՛, ճիշտ չէ՞։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Կցնցվի, կուղղվի ու հայացքը Ճերմակավորին հառած կքարանա)։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Ի՞նչ եղավ քեզի։*

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— *Ըսե՛, որո՞ւն է նվիրված այն եկեղեցին, այն քու նո՛ր շինած եկեղեցին։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Լուռ է)։

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— *Ըսե՛. պե՛տք է որ ըսես, պե՛տք է խոստովանիս։*

# ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ

## Առաջին տեսարան

### Վանահոր խուցը

Ձախակողմը քառակուսի ցած լուսամուտ մը՝ հասարակ տախտակե փեղկով։ Լուսամուտին մեկ կողմը քանի մը շարք դարակ՝ լիքը ամեն մեծության ու ձևի ձեռագիրներով ու մագաղաթներով։ Գրադարանին ու լուսամուտին առջևը փայտե սեղան մը՝ վրան նունեն գրքեր ու այլ մանր իրեր։ Դուռը կողմնակի, գրասեղանին դեմը։

**1**

Բաց լուսամուտեն արևի առատ պայծառ ոսկի շերտ մը ինկած է սենյակի հատակին ու սեղանին. Սեղանին առջևը լույսի այդ ողողումին տակ նստած է Վանահայրը՝ երկու արմունկը սեղանին ու գլուխը թաղած ափերուն մեջ։

Քիչ մը ատեն լուռ է։ Կամաց կբացվի դուռը ու կմտնե Վարպետը՝ աշխատավորի փոշոտ ու աղտոտ հագուստներով։ Քայլ մը կընե դեպի սեղանը ու կկենա։

ՎԱՐՊԵՏԸ— *Ինծի կանչեր էիր, վանահա՛յր։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Անշարժ է)։

ՎԱՐՊԵՏԸ— *Հա՛յր սուրբ, կանչեր էիր ինծի։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Ծանր կբարձրացնե գլուխը ու կնայի դիմացինին) *Ա՛։* (Քիչ մը լուռ) *Դե՛, ըսե՛ նայիմ, հիմա ի՞նչ պիտի ընենք։*

ՎԱՐՊԵՏԸ— *Ի՞նչը, հա՛յր սուրբ։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— *Մենք հիմա ի՞նչ պիտի ընենք այդ շենքը։*

ՎԱՐՊԵՏԸ— *Եկեղեցի՞ն։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Գլուխը կշարժե դրական)։

ՎԱՐՊԵՏԸ— *Այսինքն ինչպե՞ս։ Արդեն գիտես, հա՛յր սուրբ, որ մինչև Աստվածածնի տոնը ավարտած կըլլա գմբեթը. մնացածը երկրորդական բաներ են։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Մտածկոտ) *Մինչև... Աստվածածին։*

ՎԱՐՊԵՏԸ— *Ի՞նչն է, որ քեզի հոգ կպատճառե, վանահա՛յր։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— *Ուրեմն... մինչև Աստվածածին կըլլա ավարտած։ Հը՛մ. Այդպես հաստատ գիտե՞ս։*

ՎԱՐՊԵՏԸ— *Ես իմ խոսքիս տերն եմ, հա՛յր սուրբ։*

*կարճատես աչքերուն։ Բոլոր մեծ հղացումները խավարի ծոցին են գոյա- ցեր, բոլոր մեծ խորությունները միայն խավարի մեջ կարելի է տեսնել։ Եվ այդ ձեր պաշտած լույսը միթե ծնունդը չէ՞ խավարի. ծնունդ մը ու մահ- կանացու մը։ Խավարն է միայն, որ կա ու կմնա անմահ ու հավիտյան։* (Ելած է ոտքի. կխոսի մտածելով)։

## 2

Վանահայրը լռած է ու մտասույզ. լուռ է նաև Վարպետը. կմտնե Աբեղան ու կկենա դրան քովը լուռ ու խոնարհ։

*ՎԱՐՊԵՏԸ— Վանահայրը նոր հրաման ունի՞ ինծի տալու։*

*ՎԱՆԱՀԱՅՐԸ— Այո՛. միայն ո՛չ այս վայրկյանիս. նախ ուրիշ հա- շիվ ունիմ մաքրելու։ Գնա առայժմ։ Շնորհակալ եմ քեզմե. Տերը քեզի հետ։* (Դառնալով Աբեղային) *Դո՞ւն ինչու ես եկեր, Աբեղա՛։*

## 3

*ԱԲԵՂԱՆ—* (Նախ կսպասե մինչև Վարպետի հեռանալը. վերջը գլու- խը ավելի խոնարհելով) *Քեզի խոսելիք ունիմ։*

*ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ամեն մարդ ինք պիտի բանա իր ճամփան, Աբեղա՛։*

*ԱԲԵՂԱՆ— Գիտե՛մ, գիտե՛մ, որ ալ փակ է ինծի համար քու հոգիիդ ճամփան։ Կհասկնամ, որ ասկե ետքը ես քեզի համար անարգ ու անար- ժան արարած մըն եմ, իսկ դուն ալ ինծի համար...* (Կլռե)։

*ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ըսե՛, մի՛ քաշվիր։*

*ԱԲԵՂԱՆ— Կըսեի, եթե գիտնայի։ Ինքս ալ չգիտեմ. կզգամ միայն, որ մենք իրարու անհաշտ թշնամի ենք։*

*ՎԱՆԱՀԱՅՐԸ— Թշնամի՞... Եվ հիմա ատիկա ըսելու համար է, որ եկեր ես ինծի։*

*ԱԲԵՂԱՆ— Ո՛չ։ Ես եկեր եմ ուրիշ բան մը հայտնելու։*

*ՎԱՆԱՀԱՅՐԸ— Խոսե՛։*

*ԱԲԵՂԱՆ— Դուն ըսեր ես, որ հո՛ս, այս կղզին երբեմն ուրիշ աստ- վածներ են ապրեր։*

*ՎԱՆԱՀԱՅՐԸ—* (Իր ցնցումը զսպելով) *Ե՞տքը։*

*ԱԲԵՂԱՆ— Ըսեր ես՝ շա՛տ-շա՛տ տարիներ մեզմե առաջ։*

*ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ե՞տքը։*

*ԱԲԵՂԱՆ— Ըսեր ես՝ հիմա մեռած են բոլորը։*

*ՎԱՆԱՀԱՅՐԸ—* (Լուռ է)։

*ԱԲԵՂԱՆ— Մեռա՛ծ, վաղո՛ւց մեռած։*

*ՎԱՆԱՀԱՅՐԸ— Պնդե՛ գոտիդ, որդի՛ս, կանչե՛ կամքդ ու զո՛ւրս վանե մեջեդ բոլոր այդ հին աստվածները։ Քանդե՛, քանդե՛. եթե պետք ըլլա, քանդե՛ ամբողջ հոգիդ։ Քու հոգիդ ազնիվ է, արժե այդ աշխատանքը։* (Դուռ):

## Երկրորդ տեսարան

### Մեհյանի մը գավիթը

Երկու կողմը երկու շարք բարձր ու հաղթ սյուներ: Ճակատը մեջտեղը լայն ու մեծ կամար մը, որ ծածկված է վարագույրով. Կամարին երկու կողմերը նույնպես սյուներ են, որոնց ետևը քիչ մը տարածություն ու քարե պատ: Կամարի մութ վարդագույն վարագույրին վրա ոսկենկար ճաճանչավոր արև մը:

Վարագույրին առջևը տեսարանին խորքը դրված է քարե փոքրիկ բագին մը, որ կմխա։ Բագնի աջ ու ձախ կողմեն երկար քարե սեղաններ քիչ մը ծուռ դիրքով ու քարե նստարաններ. սեղանները մեջտեղի բագնին հետ միասին պայտի ձև կկազմեն

Սյուներուն առջևը բարձր աշտանակներ ու առկախ ջահեր· Բագինը, սյուները և աշտանակներուն մեջքը բոլորն ալ զարդարված է ծաղիկներու ու կանաչի շղթայով:

**1**

Լույս է միայն երկու ջահ բագնին երկու կողմեն, խորքը. այնպես որ ահագին բարձր սյուները ղողդոջուն կես-մութի մը մեջ է:

*ՍԵԴԱ*— (Ձախ կողմի առջևի սյուներուն ետևեն ետ-ետ ներս կմտնե, միշտ նույն հագուստով, թեքված քիչ մը դեպի առաջ ու երկու ձեռքերը սրտանց կանչելով) *Եկո՛ւր, եկո՛ւր...*

*ԱԲԵՂԱՆ*— (Երևալով) *Սեդա՛, Սեդա՛...*

*ՍԵԴԱ— Եկո՛ւր։*

*ԱԲԵՂԱՆ— Տո՛ւր ինծի իմ հանգիստս, տո՛ւր ինծի իմ աղոթքներս. տո՛ւր իմ վստահությունս բրածիս, կյանքիս, ուժիս։ Ամեն, ամեն ինչ կփլի հոգիս։*

*ՍԵԴԱ*— (Միշտ ետ-ետ դեպի աջ երթալով) *Եկո՛ւր, եկո՛ւր։*

*ԱԲԵՂԱՆ— Ալ չկա՛ ինծի հանգիստ ո՛չ խուցիս մենության մեջ, ո՛չ [illegible], ո՛չ ալ եկեղեցիին կամարներուն տակը։ Սաղմոսներուն մեջեն քու ձայնդ կլսեմ, մութ կամարներուն տակեն քու աչքերդ ինծի կժպտին, խունկի ծուխին մեջեն քու թաց մազերուդ բույրը կզգամ... Ինչո՞ւ, ինչո՞ւ կտանջես ինծի։*

*ՍԵԴԱ— Եկո՛ւր, եկո՛ւր։*

Մեջքներուն սուր: Կանայք հագված են թեթև ու սպիտակ, մազերնուն մեջ իբրև զարդ խառված ունին աստղ մը։

Ամենեն առաջ ներս կմտնեն քանի մը ջահակիր ու խումբ մը աղջիկներ ուրախ ու ոգևորված. ետքը Իշխանը՝ շրջապատված իր մեծերեն. անոնց ետևեն ալ՝ զինվորականներն ու աղջիկները խառն, ուրախության բացականչություններով. ջահակիրներ քովերեն ու ետևեն

*ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲԸ*— (Սյուներեն ներս ոտք դնելնուն պես) *Կեցցե՛ն հաղթողները... Կեցցե՛ն քաջերը...*

*ԲՈԼՈՐ ԿԱՆԱՅՔ— Կեցցե՛ն, կեցցե՛ն հաղթողները։*

Իշխանը կերթա կանգ կառնե բագնին առջևը, բոլորը կխոնարհին անոր ետևը։ Աջ կողմի խորքի սյուներուն մեջեն դուրս կուգա քուրմ մը՝ ներմակներ հագած. ուրիշ երկու քուրմ աջեն ու ձախեն:

*ՔՈՒՐՄԸ*— (Գալով իշխանին ընդառաջ) *Բարի գալուստ իշխանին։ Բարի գալուստ մարտնչողներուն։*

*ԻՇԽԱՆԸ— Եկեր ենք մեր զենքերը դնելու Քաջն Վահագնի բագնին ոտքը ու իր սուրբ ծագումը երկրպագելու։*

*ՔՈՒՐՄԸ— Իր սուրբ ծագումը ձեզի զորավիգ, ձեր թևերը միշտ ամուր, ձեր սուրերը միշտ հատու, ձեր վահանը անխորտակ։ Լույս ու արև Վահագնի օրհնությունը ձեզի հետ, դո՛ւք, որ հաղթողներն եք կյանքի կռվին մեջ. ձերն ըլլա միշտ հաջողությունն ու հաղթանակը։*

*ԶՈՐԱԿԱՆՆԵՐԸ— Հաջողությունը մեզի հետ, հաջողությունն ու հաղթանակը։*

*ԶՈՐԱԿԱՆՆԵՐԸ— Հաջողությունը մեզի հետ. Հաջողությունն ու հաղ-*

*ՔՈՒՐՄԸ— Դեռ բավական ժամանակ կա մինչև մեր լույս Տիրոջ ծնունդը, իշխա՛ն։ Նստեցե՛ք ու հանգստացե՛ք։ Նստեցե՛ք Մեծն Վահագնի ու Մեծն Աստղկան սեղանը։ Նստեցե՛ք ու վայլեցե՛ք, դո՛ւք, որ կռվողներն եք կյանքի մեծ կռվին մեջ, կռվողներն ու հաղթողները. ձե՛րն է հաղթությունը, ձե՛րն է վայելքը։*

*ԶՈՐԱԿԱՆՆԵՐԸ— Մե՛րն է հաղթությունը, մե՛րն է վայելքը։*

*ՔՈՒՐՄԸ— Բացե՛ք, աղջիկնե՛ր, Տիրոջ սեղանը, բացե՛ք Վահագնի ու Աստղկան սեղանը։ Բերե՛ք գինի անապական և ուրախություն, բերե՛ք ձեր գեղեցկությունն ու ձեր նազանքը. բերե՛ք, մինչև արժանանանք երկրպագելու լուսածին Վահագնին ու փրփրածին Աստղկան։ Բացե՛ք, աղջիկնե՛ր, վայելքի սեղանը։* (Իր երկու ընկերներուն հետ կելլե դուրս):

Աղջիկները գինի կլցնեն թասերը մեջտեղի գինիի ավազաններեն: Խոր լռություն:

ԻՇԽԱՆԸ— (Վերցնելով գինիի մեծ եղջյուր մը՝ կերթա կկենա բագնին առջևը, դեմքը դեպի վարագույրը դարձուցած ու գինին բարձր պահած) *Քեզի՛, ով մեծդ Աստված, Վահագն արի, դուն արևը աշխարհի, դուն կյանքն ու աշխույժ, դուն կռիվ և ուժ, դուն լույս ու զատող, ազնիվը զատող, փառքը ազատող, դուն, որ հաղթեր ես վատի, խավարի, ամեն մռայլի, այլև երկնքին, սև ամպ ու թուխպին, դևին, վիշապին, աշխարհի ափին, քեզի՛, այգածին, ճառագայթածին, քեզի կձոնեմ այս վայելքի եղջյուրը՝ լիքը ազնիվ արբեցնող գինիով, դո՛ւն, որ ապրելու ու կռվելու արբեցումը կուտաս մեզի: Տե՛ր, ընդունե՛ մեր ձոնը:* (Մեկ-երկու կաթիլ կթափե կրակին. ուժեղ ու պայծառ բոց):

ԶԱՅՆԵՐ ԱՄԵՆ ԿՈՂՄԵՆ— *Ընդունվա՛ծ է... ընդունվա՛ծ է... ընդունվա՛ծ է...*

ԻՇԽԱՆԸ— (Դառնալով իր տեղը) *Հաղթողի ձոնը հաղթողի բագնին վրա մի՛շտ է ընդունված: Խմե՛նք: Կեցցե՛ կյանքն ու իր կռիվը:*

ԲՈԼՈՐԸ— (Աղմուկով ու իրարանցումով, նստած, կեցած, թասերը իրարու բախելով) *Կեցցե՛ կյանքն ու իր կռիվը:*

Կխմեն ու կնստին. լռություն:

## 5

ԱՐԵՂԱՆ— (Դողդոջուն քայլերով առաջ կուգա, ամչկոտ վարանելով հայացքը գետին, ձեռքը առաջ մեկնած) *Տվե՛ք թաս մըն ալ ինծի: Ես ալ կուզե՛մ:*

Ընդհանուր զարմանք ու խոր լռություն:

ԻՇԽԱՆԸ— *Դո՞ւն հոս ինչ գործ ունիս, սևազգե՛ստ:*

ԱՐԵՂԱՆ— *Տո՛ւր թաս մըն ալ ինծի. ես ալ կուզե՛մ:*

ԻՇԽԱՆԸ— *Այս եղջյուրեն խմել ուզողը կռվեն պետք է, որ գա:*

ԱՐԵՂԱՆ— (Աղաչավոր) *Մե՛կ թաս մը միայն, իշխան, ի՞նչ մեծ բան է որ: Անգամ մը միայն, մեկ ո՛ւմպ մը միայն քու այդ կռվի ու վայելքի եղջյուրեդ:*

ԻՇԽԱՆԸ— (Արհամարհոտ) *Տիրոջ սեղանին վրա, ա՜յ թշվառ, ոչինչ չի ստացվիր աղաչանքով, գնա՛ մուրացիկներուն սեղանը:*

*ԱՐԵՂԱՆ*— (Ամեն հարձակման ավելի ու ավելի խորտակված, ավելի ու ավելի գլուխը վար կկախե ու քայլ-քայլ կքաշվի ետ։ Վերջին խոսքերուն մտած է արդեն իր նախորդ տեղը՝ սյուներուն ետևը ու ալ չերևար)։

## 6

*ԻՇԽԱՆԸ— Թողե՛ք, թողե՛ք կռիվը։ Ես ձոն ունիմ ձոնելու։ Առե՛ք թասերը։*

Բոլորը կլեցնեն։

*ԻՇԽԱՆԸ*— (Եղջյուրը առած կերթա նորեն բագնին առջևը ու գինին վեր բարձրացնելով) *Քեզի՛, ո՜վ, վեհդ դիցուհի, ո՜վ փրփրածին Աստղիկ, դո՛ւն, որ անարատ ես ու սքանչելի, քու ելած փրփուրիդ նման. դո՛ւն վերին գեղեցկություն, դո՛ւն գերագույն հմայք ու քնքշություն, քու տված լույսիդ նման։ Դո՛ւն, որ աղբյուրն ես սիրու, հույսերու և հուզումներու, քեզի օրորող ալիքներուն նման, քեզի՛, ծովածի՛ն, քեզի՛ կնվիրեմ այս վայելքի եղջյուրը՝ լիքը ազնիվ ու արբեցնող գինիով, դո՜ւն, որ գեղեցկության ու սիրու վայելքը, հեշտանքն ու արբեցումը կուտաս մեզի։ Ընդունե՛, դիցուհի՛, իմ ձոնս։* (Մեկ-երկու կաթիլ կթափե կրակին. ուժեղ ու պայծառ բոց)։

*ՁԱՅՆԵՐ ԱՄԵՆ ԿՈՂՄԵՆ— Ընդունվա՛ծ է... ընդունվա՛ծ է... ընդունվա՛ծ է...*

*ԻՇԽԱՆԸ*— (Դառնալով իր տեղը) *Հաղթողի ձոնը մի՛շտ է ընդունված գեղեցկության բագնին վրա։ Խմե՛նք։ Կեցցե՛ գեղեցկությունն ու սերը։*

*ԲՈԼՈՐԸ*— (Աղմուկով ու ծիծաղով, կատակներով, ըմպանակները իրարու բախելով) *Կեցցե՜ գեղեցկությունն ու սերը։*

Կխմեն ու կնստին. լռություն։

## 7

*ԱՐԵՂԱՆ*— (Դուրս կելլե իր անկյունեն և վճռական կմոտենա Հայոց զինվորականին, ձեռքը կդնե անոր ուսին ու կտրուկ) *Տե՛ղ տուր ինծի։*

Ընդհանուր զարմանք։

*ՀԱՅՈՑ ԶՈՐԱԿԱՆԸ— Նորե՞ն, ա՜յ մուրացկան։*

*ՁԱՅՆԵՐ*— *Գինի տվե՛ք հաղթողին։*

*ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԸ*— *Վերցուր անոր թասը։ Հիմա ան ալ քուկդ է։*

*ԱԲԵՂԱՆ*— (Կառնէ Հաստ զօրականի ըմպանակը և կնետէ անոր ետևէն) *Ես չեմ ուզեր ուրիշին խմուկը։*

*ԱՂՋԻԿ ՄԸ*— (Թևը երկարելով) *Ա՛ռ, քա՛ջ, իմ՛ թասս։*

*ԱՂՋԻԿՆԵՐԸ*— (Երկնցնելով իրենց թասերը) *Ա՛ռ իմ թասս... ա՛ռ իմ թասս... առ իմի՛նս...*

*ԱԲԵՂԱՆ*— *Իշխա՛ն, քիչ մը առաջ ես քու եղջյուրդ խնդրեցի, ա՛յն եղջյուրը, որով ձոնդ ձոնեցիր։*

*ԻՇԽԱՆԸ*— (Եղջյուրի միջինը կթափե ու կուտա մոտի աղջկանը լուռ ու հանգիստ) *Լեցո՛ւր ու տուր իրեն։*

*ԱՂՋԻԿԸ*— (Կկատարե ու կուտա ծնկչանքով. խորապես սրտանց) *Ա՛ռ։*

*ԻՇԽԱՆԸ*— *Առաջին թասը, նորե՛կ, գիտցի՛ր, միշտ Վահագնինն է. այդպես է աշխարհի հին օրենքը։*

*ԱԲԵՂԱՆ*— *Առաջին թասը... ձեր այս կյանքի սեղանին առաջին թասը ես կխմեմ... կյանքի ու աշխարհի օրենքովը... ես կխմեմ կովի կենացը, կովի՛, որ վերն է խավարին ու ամպերուն մեջը, ինչպես որ կըսեք, կովի՛, որ դուրսն է, աշխարհի վրա, ուրկե դուք կուգաք. կովի՛, որ հո՛ն է, ծովուն մեջ, փոթորկի ատեն, ուրկե ե՛ս կուգամ։*

*ԱՂՋԻԿՆԵՐԸ*— (Սաստիկ հետաքրքիր, փսփսուքով իրարու) *Ծովե՞ն... ծովե՞ն...*

*ԱԲԵՂԱՆ*— *Թող օրհնվա՛ծ ըլլա կյանքի կռիվը։* (Կխմե):

*ՁԱՅՆԵՐ*— *Անո՜ւշ, անո՜ւշ... Հաջողությո՜ւնը, հաղթանակը միշտ քեզի՛...*

*ԻՇԽԱՆԸ*— *Աղե՛կ։ Լեցո՛ւր երկրորդ թասը։*

*ԱՂՋԻԿՆԵՐԸ*— (Իրար անցած) *Գինի՛, գինի՛։*

*ԱՂՋԻԿԸ*— (Նորեն կլցնե ու կուտա սրտանց) *Ա՛ռ։*

*ԻՇԽԱՆԸ*— *Երկրորդ թասը, նորե՛կ, գիտցի՛ր, միշտ Աստղիկինն է. այսպես է աշխարհի հին օրենքը։*

*ԱԲԵՂԱՆ*— *Երկրորդ թասը... այո՛, Աստղիկի՛նն է. ա՛ն, որ ինչպես կըսեք, ծնավ գեղեցիկ հորդ փրփուրեն, դուրս ելավ սիրարծարծ հուզվող ու եռացող ալիքներեն. ա՛ն, որ փոթորկի անդունդներուն մեջը կգալարի ու կհափշտակե քեզի։ Իշխա՛ն, այս թասը ես կխմեմ քու աղջկանդ կենացը։* (Կխմե):

գույն է տեղ-տեղ դեղին, ծովը լերթ-կարմիր, տեղ-տեղ ծիրանի։ Երգի միջոցին հետզհետե կնշմարվի նոյն արևի մը սկավառակը, որ կբարձրանա կամաց-կամաց։ Երբ կեսին չափը դուրս է ելած ջուրեն՝ արևը կբացվի ոստրեի մը պես ու կափարիչը կիյնա ջուրին երեսը՝ արևի ցոլքին նման։ Ոստրեին մեջը վառ կփայլի աչք խտիղ տվող արծաթ-մարգրիտ փայլով մը։ Եվ այդ վառ փայլին մեջ կեցած է նաղթական Վահագնը մերկ, բարձր, շիտակ, նայք ու առողջ, աջ ձեռքը առաջ պարզած, մազերն ու մորուքը ասորական ձևի և չեկ, աչքերը բոցոտ։ Անոր ձախ կողմը թեթև թեք է ինկած նազանքով ծովային խոտերու ու ծաղիկներու վրա Աստղիկը. սա թեթև մը փաթթված է Վահագնին ու գլուխը հենած անոր մարմնին. իրենք՝ մերկ, նկուն, նուրբ, մազերուն մեջ անագին ադամանդե աստղ մը ու մարմնին վրա մեկ-երկու թել ծովային նուրբ ու երկար սեզ։

Երգեցողությունը կանգ մինչև ոստրեի լրիվ բացումը։ Երբ երգը հանկարծ կկտրվի, կլսվի նորեն չեփորին կանչը ու բոլոր բազմությունը իսկույն կիյնա գետին խորը երկրպագությամբ։ Քուրմերն ու իշխանները կխոնարհին մինչև մեջքը։ Ոտքի կմնա միայն Աբեղան՝ ուղիղ և անշարժ։

*ՔՈՒՐՄԸ*— (Խումբին մեջեն, ահեղ) *Երկրպագե՛, դո՛ւն, չվարած։*

*ԱԲԵՂԱՆ*— (Անշարժ է)։

*ԻՇԽԱՆԸ*— (Սարսափահար ու կիսաձայն) *Երկրպագե՛, անմի՛տ։*

*ԱԲԵՂԱՆ*— (Անշարժ է)։

*ՍԵԴԱ*— (Կերևա հանկարծ բարձր բեմի սանդուղներուն վրա, հանդիստ առաջ կուգա. կկենա ուղիղ Աբեղային դեմը, քնքուշ ու հրամայական) *Երկրպագե՛, երկրպագե՛ ծովուն ու իր աստծուն։*

*ԱԲԵՂԱՆ*— (Նախ գլուխը կթեքե. հետո ծունկերը քիչ-քիչ կծալվին ու հանկարծ կիյնա գետին)։

Սաստիկ դղրդյուն մը. և մեկ անգամեն կկորչի ամեն բան, կտիրե խորին մութ ու լռություն։

Երբ թանձր մութը կսկսի փարատիլ՝ տեսարանը փոխված է։ Հետզհետե բացվող աղոտ լույսին մեջեն կնշմարվի հաստ ու ցած սյուներու զույգ շարք մը տեսարանին ճիշտ մեջ-տեղը։ Եկեղեցի է։ Խորքը կերևա միայն երկու վառ մոմ, որուն առջևը երկու վանական սաղմոս կկարդան փոխնիփոխ։ Անոնց ետևը կիսաշրջանով կեցած են վանականները երեսնին դեպի խորանը։

Մռայլ ու մութ. ընթերցումը տխուր ու միալար։

Լռիկ աղոթող վանականներու շարքին մեջ հանկարծ խլրտում մը կիյնա։

*ՎԱՆԱԿԱՆ ՄԸ*— (Մյուսներուն կռնակեն ծռելով դեպի ետ, փսփսուքով) *Ջո՛ւր, ջո՛ւր, երեսին ջո՛ւր։*

Ձախ կողմի խորքի սյուներուն մեջեն կերևան երկու վանական, որոնք Աբեղային թևերը մտած ու բարձրացուցած կբերեն առաջ։ Աբեղան թույլ ու անզգա։ Մոմերով վանականը կուգա անոնց ետևեն՝ օգնելով։

*ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ*— (Արագ դուրս աջ կողմի սյուներուն մեջեն, կմոտենա Մովսեսին, երբ Աբեղան արդեն անցուցած են, և կիսաձայն) *Ի՞նչ է, ի՞նչ կա, ի՞նչ եղավ։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Գլուխը բարձրացնելով ու նույնպես ճանճիստ) Վար-դապե՛տ, այդ եկեղեցին ո՛չ ոք քանդել չի կրնար։ Ո՛չ դուն, ո՛չ ես, ո՛չ մեկը։ անոր հիմը մեր սրտերուն մեջն է դրված։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Խիստ) Անոր հիմը, իշխանուհի՛, մեղքի վրա է դրված։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ինչպե՞ս թե՝ մեղքի։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Այո՛, մեղքի՛։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Հպարտ) Մեղքը միշտ օտար է եղեր ինծի և միշտ ալ օտար պիտի մնա ինծի։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Կի՛ն, նորե՞ն խաբել կուզես։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Ապշած) Խաբե՞մ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Այո, խաբես ու կեղծես։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ե՞ս։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Դո՛ւն, դո՛ւն։ Ի՞նչ կզարմանաս. դո՛ւն, որ ամբողջ կյանքդ խաբեր ես ու շարունակ կեղծեր։ Խաբեր ես տարիներ ու տարիներ այն մարդը, որ իբրև իր կինը իր տունն է տարեր քեզի. խաբեր ես քու զավակներդ, որոնք շոյանքի կարոտով գիրկդ են վազեր. խաբեր ու կապեր ես բոլոր շրջապատողներուդ աչքերը. խաբեր ես և ինծի, թեև, այո՛, առանց խոստում մը տալու. առանց բառ մը արտասանելու. խաբեր ես և քեզի՛, քեզի քու աչքիդ նահատակ ես նկարեր, դուն, որ մարդդ մեռեր է թե չէ, վազեր եկեր ես հոս՝ ինծի հետ նոր շենք շինելու. քու կեղծիքիդ աստծուն նոր տաճար կառուցանելու։ (Քիչ մը լուռ)։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Կեցած է ծիգ ու հպարտ, ունքերը կիտած. ոչ շարժում, ո՛չ ձայնում)։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Իհարկե, չէ՞ որ քու աստվածդ սերն է։ Ո՛վ սոփեստություն։ Ի՞նչ է սերը. ինչի՞ սեր է Աստված, արունի՞ ու էգի՞։ Կին, մեղանչանք է քու անունդ, կեղծիք է քու հոգիդ ու զգայարանքներդ, քու աշխարհդ։ Մեղքի վրա է շինված այդ եկեղեցին։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ըսի՞ր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ըսի, ինչ որ պարտական էի ըսելու։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Դե՛, բա՛ց է դուռը։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Վիրավորված) Իշխանուհի՛։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ի՞նչ է։ Գնա՛, գնա՛, քանդե։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ատիկա իմ պարտքս է և ես գիտեմ. բայց պետք է, որ դուն ալ կատարես քու պարտքդ։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Այսի՛նքն։ Ի՞նչ է ուզածդ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Պետք է անմիջապես հեռանաս հոսկե, Ցամաքաբերդեն։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Հեռանամ… այդպե՞ս կհրամայես։

*ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Իմ բոլոր հաշիվներս՝ ա՛լ մաքրված են կյանքի մեջ։*

*ՎԱՆԱՀԱՅՐԸ— Մաքրե՛ք ձերին հաշիվները։ Մնաս բարո՛վ, իշխանուհի՛։*

**Իշխանուհին կեցած է լուռ ու անշարժ, մինչ Վանահայրը հանդարտ ու գլխահակ կելլէ դուրս: Իշխանուհին կամաց ու տեսակ մը ակամա կսահի վար ու խորտակված կնստի բազմոցին, ձեռքերը անուժ մեկը բազմոցին վրա նետած, մյուսը՝ գոգը. անկյանք հայացքը կետի մը հառած։**

## Զ

ՊԱՌԱՎԸ— (Մտնելով հակառակ դռնեն) *Մինա՞կ ես։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Տխուր գլուխը ճոճելով) *Մինա՛կ, մինա՛կ...*

ՊԱՌԱՎԸ— *Գնա՞ց։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Ո՞վ։*

ՊԱՌԱՎԸ— *Վանահա՛յրը։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Չգիտե՛մ։*

ՊԱՌԱՎԸ— *Ի՞նչ ըսավ որ։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Ո՞վ։*

ՊԱՌԱՎԸ— *Վանահա՛յրը։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Չգիտե՛մ։* (Քիչ մը լուռ) *Բե՛ր ինծի այն...*

ՊԱՌԱՎԸ— *Ի՞նչը, իշխանուհի։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Հատակագիծը։*

ՊԱՌԱՎԸ— *Եկեղեցիի՞ն։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Տխուր գլխով կընե):

ՊԱՌԱՎԸ— (Դուրս կելլե իր եկած դռնովը և իսկույն ալ կվերադառնա կուտա ոլորը) *Ա՛ռ։* (Ինքը կքաշվի դեպի խաչելությունը):

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Կբանա հատակագիծը, կնայի քիչ մը, կբարձրացնե, կհամբուրե և հանգիստ ու կանոնավոր շարժումներով կսկսի պատռել՝ զսպելով հեկեկանքը, մինչդեռ կուրծքը ուժգին կելևէջե և արցունքները առատ կթափին, առանց ծպտուն մը հանելու):

ՊԱՌԱՎԸ— (Սա նայելով ապշած) *Աս ի՞նչ կընես իշխանուհին։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Ձայնը դողդոջուն) *Չե՞ս տեսներ։ Կպատռեմ։*

ՊԱՌԱՎԸ— *Կպատռե՞ս. ինչո՞ւ։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Ալ... ալ վերջացա՛վ։*

ՊԱՌԱՎԸ— (Ուրախ) *Վերջացա՞վ. ավարտեցա՞վ եկեղեցին։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Այո՛, ավարտեցա՛վ։*

ՊԱՌԱՎԸ— *Ի՞նչ կըսես։ Դե՛, աչքդ լույս իշխանուհիիս. ալ ինչո՞ւ ես վշտացեր։*

# ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐ

## Առաջին տեսարան

**Աբեղայի խուցը. Գիշեր. Ճրագ.**

**I**

Աբեղան պառկած է անկողնին. սնարին կողմը նստած է Կույր վանականը արձանի նման շիտակ: Ոտքին կողմը՝ անկողնի եզերքին նստած է Սիմոն վանականը, որ անընդհատ համրիչ կշրջե, շատ-շատ հորանջելով:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՎԱՆԱԿԱՆ ՄԸ— (Կեցած է սեղանին մոտիկ, կխաղա ճրագին հետ ու կխոսի ծանր-ծանր, խորհրդածելով) *Եվ ինչքա՜ն, ինչքաննե՜ր են սակայն այդպես անմիտ։ Ա՜յ, ամբողջ այդ դուրսինները։ Դժբախտնե՜ր։ Փա՜ռք քեզի, Աստված, որ լուսավորել ես մեր միտքը։*

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆԸ— (Հորանջելով) *Փա՜ռք քեզի, Աստվա՜ծ։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՎԱՆԱԿԱՆԸ— *Մեյ մը ատոնց հարցնող ըլլա՝ ո՞վ մարդ, ի՞նչ ես գտեր այդ ձախողություններու, այդ տաժանակիր աշխատանքի, այդ կարոտություններու, այդ կռվի ու դառնության հովտին մեջ, որուն աշխարհք անունը կուտան։ Այդպես ալ հիմար հաշի՜վ։ Քանի մը խղճուկ վայելքներու, քանի մը չնչին հաճույքներու համար մարդ առնե ու զոհե իր հանդերձյալ կյանքի հավիտենական երանությունը։*

ԱԲԵՂԱՆ— (Պառկած տեղեն առանց դիրքը փոխելու՝ հատիկ-հատիկ) *Հա՜յր սուրբ, տեսե՞ր ես դուն երբեք արևի ծագումը։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՎԱՆԱԿԱՆԸ— *Ի՞նչ։*

ԱԲԵՂԱՆ— *Եղե՞ր ես դուն երբեք արևին տաճարը։*

Երկու վանականները ապշած կնային իրարու։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՎԱՆԱԿԱՆԸ— (Կմոտենա անկողնին ու ձեռքը հիվանդի ճակատին դնելով) *Սա՜ռն է։ Արթո՞ւն ես, Աբեղա՜։*

ԱԲԵՂԱՆ— *Ես արթո՜ւն եմ։ Ես արթնցա, երբ արևը ծագեցավ։ Իսկ դո՞ւք, դո՞ւք...*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՎԱՆԱԿԱՆԸ— *Մենք կխոսինք, Աբեղա՜։*

ԱԲԵՂԱՆ— *Կլսեմ՝ կխոսիք։ Գնա՜, դիտե՜ արևին ծագումը։*

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆԸ— (Ձեռքով նշան կընե, որ հիվանդը հանգիստ թողնե ու պատասխան չի տա. և ինքը ոտքի ելլելով) *Իրա՜վ կըսե, հա՜յր*

ԱՐԵԴԱՆ— Ա՞ս է քու հասկցածդ։ Ինծի քաշողը ինքը լույսն է ու գեղեցկությունը, ինծի քաշողը աստվածներն են։

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ— Բոլոր դևերն ալ երբեմն աստված են եղած, Արեդա՛ն։ Ընկճված աստվածներն են անոնք. պետք է, որ ընկճես։

### 3

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Կմտնե տխուր ու կքուն) Ողջո՜ւյն ձեզի։

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ— (Կելլե դուրս)։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Մոտենալով անկողնին) Ինչպե՞ս ես։ Նոր եկա քաղաքեն. ըսին՝ ինծի կանչեր ես։

ԱՐԵԴԱՆ— Այո՛, կզգամ ծովուն թարմությունը, որ հագուստներեդ կուգե։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Նոր եկա լաստեն։

ԱՐԵԴԱՆ— (Հիացումով) Լաստե՜ն... լաստե՜ն...

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Խոժոռած) Ինչո՞ւ ես կանչեր ինծի։

ԱՐԵԴԱՆ— (Քիչ մը լուռ) Հա՛յր, ես երկրպագեցի հին աստվածներուն։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Դաժան ու խիստ) Շատ բնական է։

ԱՐԵԴԱՆ— Ի՞նչ....

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Անշո՛ւշտ, անշո՛ւշտ, կսպասեի՛։ Չէ՞ որ քեզի խոստացավ իր տակի ձին, իր ձեռքի սուրը ու իր սեփական աղջիկը. գուցե օր մըն ալ, ո՞վ գիտե, իր իշխանական ցուպը։

ԱՐԵԴԱՆ— (Սաստիկ վիրավորված) Հա՛յր...

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Անշո՛ւշտ, շատ բնական է։ Այդ բոլորի համար արժե աստված մը ուրանալ։ (Հանկարծ ու բարկությամբ) Բայց ինծի՞, ինծի՞ ինչու ես կանչեր հոս։

ԱՐԵԴԱՆ— (Հանդիմանորեն) Հապա ո՞վ կանչեի, վանահա՛յր...

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Սխալվե՛ր ես։ Կանչե՛ հայր Անտոնը։

ԱՐԵԴԱՆ— Վանահա՛յր...

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Հայր Անտոնին լաստը միայն կհանե քեզի հոն, ուր քու սիրտդ է։

ԱՐԵԴԱՆ— Կվռնդես ինծի դո՛ւրս։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ես կզրկեմ քեզի քու անիծյալ աշխարհը։

ԱՐԵԴԱՆ— (Դառն ու հանգիստ) Կզրկես ինծի իմ աշխա՜րհը։ Իսկ ո՞վ իրավունք տվավ քեզի՝ ուզած ժամանակդ դուրս քաշես ինծի աշխարհեն, ուզած ժամանակդ ետ նետես աշխարհ։ Ո՞վ քեզի իրավունք տվավ, որ կոտրես հոգիս, կապկպես զգացումներս։ Ո՞վ քեզի իրավունք տվավ, որ հիմա նիհար ես երեսիս հանդիմանություն կկարդաս։

## 5

ԱԲԵՂԱՆ— (Նստած է անկողնին մեջ ծունկերը գրկած. քիչ մը ատեն լուռ ու անշարժ. վերջը հեգնոտ ու գլուխը շարժելով) *Խարխափելով... խարխափելով... և կըսե՝ մոռցի՛ր լաստը։*

ՍԵԴԱ— (Դռան մեջեն հազիվ կնշմարվի) *Մոռցի՛ր, մոռցի՛ր լաստը...*

ԱԲԵՂԱՆ— (Ցնցվելով ու շշուկով) *Սեդա՜...*

ՍԵԴԱ— *Մոռցի՛ր և Սեդան։*

ԱԲԵՂԱՆ— *Ես մոռնամ քեզի՞։*

ՍԵԴԱ— *Մոռցի՛ր ինծի. ես քու մեջի սև դևն եմ։*

ԱԲԵՂԱՆ— *Դուն իմ հոգիիս ճերմակ թևն ես։ Նստեր էի անապատի ավազին վրա տխուր, չոր ու մինակ, դո՛ւն էիր, որ եկար թև տվիր կյանքիս, բնությունը տվիր զգայարանքներուս ու ծովը սրտիս. ծո՛վը, ուրկե արևները կծնին, ուր ես անգամ մը գրկեր եմ քեզի։*

ՍԵԴԱ— *Մոռցի՛ր, մոռցի՛ր այդ բոլորը. դեռ ուշ չէ՛. եղի՛ր նորեն ա՛ն, ինչ որ էիր. մտածե՛. դեռ ամբողջ երեք օր տվին քեզի։*

ԱԲԵՂԱՆ— *Ո՛չ, Սեդա, ո՛չ, ետ դարձ չկա. ո՛չ կրնամ, ո՛չ կուզեմ։ Ես երկրպագեցի քու աստվածներուդ, ես ձոնեցի քու աստվածներուդ, ես խմեցի վայելքի եղջյուրեն։ Ես հիմա միայն քեզի ծարավ եմ, ես հիմա միայն քու գիրկդ կուզեմ։*

ՍԵԴԱ— (Քիչ մը առաջ գալով գրկաբաց) *Եկո՛ւր, ես քուկի՛նդ եմ։*

ԱԲԵՂԱՆ— (Ինքն ալ անկողնին վրայեն առաջ ծռելով) *Սեդա՜... բայց չէ՞ որ դուն երազ մըն ես։*

ՍԵԴԱ— *Եկո՛ւր, դո՛ւն ալ դարձիր երա՛զ մը։*

ԱԲԵՂԱՆ— *Երա՞զ մը։*

ՍԵԴԱ— *Եկո՛ւր նորեն հո՛ն...*

ԱԲԵՂԱՆ— (Վախցած ու հափշտակված) *Ծո՛վը...*

ՍԵԴԱ— *Հո՛ն, ուր անգամ մը գրկեր ես ինծի...*

ԱԲԵՂԱՆ— *Ուր դուն թևերուս մեջ կդողայիր քու մարմնիդ բոլոր մասնիկներովը...*

ՍԵԴԱ— *Ուր ալիքները կդողային ու փոթորիկը կգոռար...*

ԱԲԵՂԱՆ— *Ու զարկերուս տակ փրփուրը կեռար...*

ՍԵԴԱ— *Հո՛ն եկուր, հո՛ն, եթե նորեն գրկել կուզես ինծի, միայն հո՛ն։ Եկո՛ւր, հենց որ նորեն ջրերը հուզվին, հենց որ նորեն ծովը փրփրի։*

ԱԲԵՂԱՆ— (Հետզհետե ծունկի գալով անկողնին վրա) *Այո՛, երբ որ ջրերը հուզվին, երբ որ ծովը փրփրի...*

ՍԵԴԱ— *Եկո՛ւր, փաթթվինք իրարու ու տանիմ քեզի գրկիս մեջ անդունդե անդունդ մթնոլորտե մթնոլորտ, տանիմ քեզի դեպի նոր անծա-*

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ— (Տունեն դուրս ելլելով) *Կեցցի՛ր, հա՛յր սուրբ, կեցցի՛ր։*

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— (Մտածկոտ) *Ճիշտ է. ամբարտավանությունը մեղք է մահացու։*

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— *Մարդս պետք է հեզ ըլլա ու խոնարհ։*

ՎԱՆԱԿԱՆ ՄԸ— *Խոնա՜րհ, խոնա՜րհ...*

Ու երեքը միասին կելլեն դուրս։

ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ— (Տեսակ մը ինքնիրեն) *Վանահայրը խռովեր է եկեղեցիեն...* (Ծիծաղը ափին մեջ խեղդելով անոնց ետևեն կելլե դուրս)։

2

ԱԲԵՂԱՆ— (Միշտ իր ծառին տակը՝ անշարժ)։

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— (Նախորդ խումբեն միակ մնացողը. նախ քիչ մը կմնա մեջտեղը մտածկոտ. ետքը բան չհասկցողի շարժումով կօրօրե գլուխը ու կմոտենա Աբեղային) *Լսեցի՞ր, Աբեղա՛, լսեցի՞ր։*

ԱԲԵՂԱՆ— *Կլսեմ, կլսեմ... Թո՛ղ ինծի, մի՛ խանգարեր՝ որ լսեմ։*

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— (Զարմացած) *Ի՞նչը։*

ԱԲԵՂԱՆ— (Խորքը մատնանշելով) *Ա՜յ, ականջ դի՛ր։*

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— *Ի՞նչ է որ։*

ԱԲԵՂԱՆ— (Խորհրդավոր) *Ջրերը կհուզվին, ջրերը հուզվիլ են սկսեր։*

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— *Է՜, ի՞նչ ընենք. երևի, գիշերը փոթորիկ ենք ունենալու։*

ԱԲԵՂԱՆ— (Սաստիկ հուզվելով) *Փոթորի՞կ, փոթորի՞կ...*

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— (Անտարբեր) *Գուցե՛. եղանակները փոխվեցան։*

ԱԲԵՂԱՆ— (Հանկարծ բռնելով ընկերոջը թևեն) *Ուրեմն այս գիշե՞ր... կկարծես՝ այս գիշե՞ր...*

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— *Այդ ինչպե՜ս կդողաս։ Խե՜ղճ Աբեղա, այն փոթորիկեն ի վեր, երևի, աչքդ վախցեր է։ Հանգստացի՛ր, հանգստացի՛ր։ Եկո՛ւր, երթանք եկեղեցի. աղոթե՛, սիրտդ կթեթևնի։*

ԱԲԵՂԱՆ— (Հանկարծ) *Եկուր երթանք ափը։*

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— *Ա՞փը...*

ԱԲԵՂԱՆ— *Եկո՛ւր, տեսնել կուզեմ փոթորկին գալը։ Բայց... բայց առանձին չեմ կրնար։ Գիտե՞ս, կքաշե, կարծես կքաշե, կքաշե...* (Ամուր կսեղմվի ծառին)։

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— *Աբեղա՛, ավելի աղեկ է՝ երթաս ու պառկիս։ Դեռ իզուր ես ելեր ոտքի։ Տե՛ս, աչքերդ կատարյալ տենդ ունին դեռ։ Երթա՛նք, տանիմ քեզի խուցդ։*

թարախ ծարաւ մը, մեր անցած կյանքի, կռվի ու հուզումներու ամբողջ նույթ ու կպչուն ցանց մը. և ակամա վերհուշներ։ Այս բոլորը դեռ մեզի հետ էր, երբ այս եկեղեցին կշինեինք։ Այդ ծածուկ, քողարկված հուզումներն են շիներ այս եկեղեցին, աշխարհեն անապատ եկած, մեզի հետ ներս սպրդած աշխարհի այդ կտորն է շիներ այս եկեղեցին։ Աշխարհինն է այդ եկեղեցին, մեր Աստծունը չէ՛։ Անոր կամարներուն տակ մենք այլևս աղոթել չենք կրնար. այդ կամարները պետք է քանդվի՛ն։

ՁԱՅՆԵՐ— (Ապշած. սարսափած) Քանդվի՞ն... քանդվի՞ն։

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Մեր եկեղեցին քանդվի՞։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՎԱՆԱԿԱՆ ՄԸ— Մեր նոր եկեղեցին քանդվի՞։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Այո՛. պետք է քանդե՛նք ու շինենք նորը։

ՁԱՅՆԵՐ— (Զարմանք ու հեգնություն) Նո՞րը... նո՞րը...

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Շինենք նո՞րը։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Նո՛րը։ Եվ այդ նոր եկեղեցին պիտի շինենք մե՛նք մենք-ներս։ Աշխարհեն եկած դրամը աշխարհիկ զգացումներու նվերն է, աշխարհեն եկած վարպետները աշխարհիկ հասկացողություն է, աշխարհի արվեստը։ Մարդս ի՛նք միայն կրնա շինել իր Աստծուն նվիրված տաճարը, ի՛ր մեջքովը, ի՛ր ձեռքերովը, ի՛ր խելքովը։ Թե ինչ ձև է ունենալու մեր նոր եկեղեցին, դեռ ես ինքս ալ որոշ չգիտեմ. ա՛յ, կնստինք միասին ու կխորհինք. կխորհինք ու կստեղծենք։

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ— (Հեգնոտ) Մենք ի՞նչ արհեստավորներ ենք, վանահա՛յր. մենք ի՞նչ կրնանք շինել, գիտցո՛ւք, եթե ուզենք ալ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Կա՛մքը. ծերունի՛. ուզե ու կշինես, եթե մանանեխի չափ հավատք ունենաս քու կամքիդ։

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ— Է՜, անցեր են այն ժամանակները։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ո՛չ, չե՛ն անցեր. դեռ չե՛ն եկեր այդ ժամանակները. իմ նոր եկեղեցիիս մեջեն պիտի երթանք դեպի այդ ժամանակները։

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ— Լսե՛, վանահա՛յր. լսե՛ ինծի, ես ծերունի մարդ եմ։ Դուն շատ ես կարդացեր ու խախտեր ես ուղեղդ։ Քու բռնած ճամփադ ծուռ ճամփա է։ Մի՛ չարչարեր գլուխդ, այդ ճամփան հերետիկոսներուն ճամփան է։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Հպարտ) Այդ ճամփան առաքյալներու ճամփան է. այդ ճամփով է անցեր ինքը Քրիստոս։

ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ— Ո՜ւ... կլսե՞ք։

Շշուկ ու վրդովում։

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ— Մի՛ խոսիր այդպես անմիտ, վանահա՛յր։

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Ո՛չ ալ այդպես մեծամիտ։

խաղաղությունը թող ըլլա ձեզի հետ։ Իսկ իմ փնտրածս ատիկա չէ. իմ փնտրածս աշխատա՛նքն է, ներքին անդուլ ու անկաշկանդ որոնումը՝ ներքին անվերջ նվաճումները բարձունքէ-բարձունք, պարիսպէ-պարիսպ, տարակույսներու անդունդներուն վրայէն, ելքերով ու անկումներով. անդադար խոյանք մը դեպի ճշմարտություն։ Գացե՛ք, գացե՛ք ներս դուք ձեր եկեղեցին, ես ալ երթամ շինեմ ի՛մ եկեղեցիս. բայց այս անգամ ե՛ս, միայն ե՛ս, և կերտվածք մը, որ վայել ըլլա իմ Աստծու բնակության, որու կամարներուն տակ իմ խնկելիք աղոթքիս ո՛չ մեկ բառը կեղծ չհնչե, ո՛չ մեկ բառի արձագանքը դատարկ չհնչե։

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— (Ծաղրով) Ասո՞ր պիտի շինես, վանահա՛յր, քու նոր կերտվածքը։

ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ— (Ծաղրով) Ով գիտե՞. գրանի՞տ պիտի ըլլա, թե՞ մարմար։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Գրանիտ ու մարմար, որձաքար ու ամեն տեսակ քար ես կթողնեմ աշխարհի աստվածներուն։ Իմ տաճարիս հիմքը իմ բանականությունս պիտի ըլլա, սյուները իմ կամքս է, ու գմբեթն ալ ըլլալու է հավատքս։

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ— Շատ խախուտ է, վանահա՛յր, նոր շենքիդ հիմքը։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Անփույթ) Խախուտ է՝ կփլի։

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— Ով այն ատե՞ն...

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Կշինեմ նորը։

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ— Բայց ատիկա վե՛րջ չունի։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Կուզեիր, որ վե՛րջ ունենար։ Քանի կապրինք՝ շինենք պիտի. պիտի շինենք մեր Աստծուն իր տաճարը. շինենք ու փլի, շինենք ու քանդենք. շինենք ու շինենք միշտ, բայց երբե՛ք, երբե՛ք չավարտենք։ Հենց որ ավարտի, ալ տաճար չէ Աստծու, այլ... (Եկեղեցին մատնանիշ) կռատուն։

ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ— (Կատաղի) Կհայհոյե, կհայհոյե մեր Աստծուն։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ամենեն սուտ հոգիները միայն հայհոյել կրնան այն Աստծուն, որուն երբեմն երկրպագեր են։ Բայց կտեսնեմ՝ ալ մենք իրար չենք հասկնար։ Մնաք բարով, ձեր Աստվածը ձեզի հետ։

Կուզե երթա՝ Աբեղան առաջ կուգա ու ճամփան կկտրե։

ԱԲԵՂԱՆ— Կեցի՛ր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ի՞նչ է։ Գուցե կուզես նորեն ինծի հետ, Աբեղա՛։ Եկո՛ւր, քու հոգիդ թռիչք ունի, ես գիտեմ։

ԱԲԵՂԱՆ— Կեցի՛ր։ Ըսե՛. քու այդ նոր շենքեդ երևա՞ պիտի արևի ծագումը։

— *Պիտի կորչի՞ս։*
— *Տեղ տուր լանջիս։*
— *Քարի՛ն փակչիս։*
— *Ա՛յ, հասա՛նք, հասանք։*
— *Հոսա՛նք է, հոսանք։*
— *Ի՜նչ վազեր ենք ափե-ափ։*
— *Ի՜նչ ցատկեր ենք չափե-չափ։*
— *Չա՞փ. ի՞նչ չափ։*
— *Անչա՜փ. անչա՜փ։*
— *Չա՜փ, չա՜փ։*
— *Աս թռչիլ է, վազել չէ։*
— *Աս եռալ է, ցատկել չէ։*
— *Կեցի՛ր, կեցի՛ր ու կանչե՛։*
— *Չէ՛, չէ՛, անցի՛ր. աս ա՛ն չէ։*
— *Ա՛ն է։*
— *Ան չէ՛։*
— *Է՜, մեկ չէ՞։*
— *Կանչե՛, կանչե՛։*
— *Մենք պարապ չե՛նք։*
— *Ոչի՛նչ, կանչե՛նք։*
— *Կանչե՞նք։*
— *Կանչե՛նք։*

*ԽՈՒՄԲ ՄԸ ԱԼԻՔ*— (Միաբերան)
*Հե՜յ, ականջե՛.*
*Հույզ ու տենչ է ամեն լանջե,*
*կշառաչե,*
*քեզի ծո՛վն է, որ կկանչե,*
*Հե՜յ, ականջե՛։*
*ՈՒՐԻՇ ԽՈՒՄԲ ՄԸ*— (Հեզնանքով ու ծեռանալով)
*Ա՜, չէ՛, չէ՛, չէ՛.*
*Նստե հողին ու քեզ տանջե։*
*ՆԱԽՈՐԴ ԽՈՒՄԲԻՆ ՁԱՅՆԸ*— (Ավելի ծեռուեն)
*Հե՜յ, ականջե՛.*
*Հույզ ու տենչ է ամեն լանջե...*

Ու քիչ մը ատեն ժայռի ջրվեժին լռություն կտիրե. և ավելի որոշ կլսվի քարերեն փա-րու կի խառ ու խուլ աղմուկը:

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ— *Մահն է քու առջևդ, Թշվառակա՛ն։*

ԱԲԵՂԱՆ— *Մահն ալ ձեր վախն է ու ձեր վախի հնարածը։*

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ— *Աստվա՛ծ իմ, խելագար է։*

ԱԲԵՂԱՆ— *Մահը ո՛ւր է, հո՛ս, ա՛յ, այս ձեր անապատը, այս վախի ու մեռելության կյանքը. իսկ հոն ազատն է. հույզն ու շարժումը. հոն կյանքն է, և ես կուզեմ կյանքին գիրկը...* (Հանկարծ ուժով մը կհրե, կնետե գետին) *Հեռո՛ւ ճամփես։ Ես կուզեմ ապրի՛մ, ապրի՛մ։ Սեղա՛...* (Կնետվի ծովը)։

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ— (Կես մը գետնեն բարձրանալով, սարսափահար ու խեղդված ձայնով) *Կորա՛վ. կորա՛վ իր հոգին...*

## 4

Ժայռերուն մեջեն նետզնետե կհասնին վանականները՝ հագուստ ու մազեր հովերուն։ Բոլորը դուրս. բացի կույրը, որ կմնա մինակ։

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— *Ո՞ւր է, ո՞ւր է։*

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— *Գտա՞ք. ճի՞շտ է. տեսա՞ք։*

ԶԱՔԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆ— *Ո՞ր կողմը անցավ։*

ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ— (Ներս ցատկելով) *Ո՞ւր է. ո՞ւր է։*

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ— (Ծովը մատնանիշ) *Ա՛յ, հո՛ն...*

ԽՈՒՄԲԸ— (Սարսափով, կիսաձայն) *Ծո՛վը...*

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ— *Կորա՛վ իր հոգին։*

ՎԱՆԱԿԱՆ ՄԸ— *Ա՛յ անիծված է այս ժայռը. հոսկե ճգնավոր մըն ալ նետեր է ինքզինքը ծովը։*

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ— (Ուրիշ վանականի մը թևեն կախված, շնչասպառ ու սաստիկ հուզված, թևերը անկարգ խարխափող շարժումներով, առաջ պարզած՝ կմտնե ներս)։

ՎԱՆԱԿԱՆ ՄԸ— *Եկավ իր կո՛ւյրը, իր կո՛ւյրը...*

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ— (Կկենա անշարժ ու ամբողջ հասակովը ուղղվելով, ընդհանուր լռության մեջ) *Իրա՞վ է, իրա՞վ է։*

ԲՈԼՈՐԸ— (Քար լռություն. գլուխները կկախեն վար)։

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ— (Ձեռքերը վեր բարձրացնելով) *Ուրեմն... Աստվա՜ծ իմ։*

ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ— *Այո՛, Աստվա՛ծ։ Աստծու վրեժն էր անիկա։ Նիկողոսին քանդել ուզելը անպատիժ չի մնար։ Մեծի վրեժը ինկավ ամենեն փոքրի գլխուն։*

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ— *Ա՜խ, մեր խեղճ, մեր բարի, մեր մաքուր Աբեղան։*

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

# ՔԱՋ ՆԱԶԱՐ

Հեքիաթ-կոմեդիա հինգ արարով
փոքր-մեծերի և
մեծ-փոքրերի համար

# ԱՐԱՐ ԱՌԱՋԻՆ

## ՔԱՋ ՆԱԶԱՐԻ ՏԱՆԸ

*Տեսարանը ներկայացնում է Նազարի տան բակը։ Ձախակողմը չարդախավոր խրճիթ է, մի պատուհանով և դռնով։ Դիմացը բակի պարիսպն է, որ դեպի աջ ծըռվելով առաջ է ծռվում և հենց այդ անկյունում բակի դուռն է։ Այնուհետև պատը դեպի առաջ է գալիս և վերջանում այնպես, որ աջակողմը մի փոքրիկ հրապարակ է գոյանում։*

*Խրճիթի ձախ անկյունից մուտք է բացվում դեպի նրա հետևը։ Դիմացի պարսպի հետև և աջակողմը անտառ է։ Պարսպի դիմաց պատին լվացքի գույնզգույն շորեր են փռված։*

*Ձախակողմը տան դռան և չարդախի անկյունում մի կամ է դրած, որի հետևը ծակուռ է գոյանում։*

*Օրը թեքվում է դեպի երեկո։ Արևը ցոլում է բակի մեջ, ուր մի չինարի ստվեր է անում։ Շների հեռու հաչոց է լսվում։*

*ՆԱԶԱՐ*— (Ծույլ շարժումներով, գզգզված մազերով, խոշոր հաստալովոր մարդ, երկար բեղեր ունի, կզակը խուզված է։ Մորթին գցել է դռանը և վրան թեք ընկած, կիսաքուն երազում է։ Սթափվելով և առանց ներս նայելու)... *Ուստիա՛ն։*

*ՈՒՍՏԻԱՆ*— (Ջարադեմ, կոպիտ և հաստլիկ կին, կերակուր է խառնում թոնրի մեջ) *Հրամայի՛, աղա՛։*

*ՆԱԶԱՐ— Ուստիան, ի՞նչ եմ ասում, օրը թեքվեց, հը՞։*

*ՈՒՍՏԻԱՆ— Քո՞ն ես, մտի՛կ արա։*

*ՆԱԶԱՐ— Ես էլ էդ եմ ասում։*

*ՈՒՍՏԻԱՆ— Թե որ էդ ես ասում՝ էլ ի՞նչ ես խոսում։*

*ՆԱԶԱՐ— Ասում եմ գնամ գեղամեջ, թալանը բերեմ։*

ՈՒՍՏԻԱՆ— Բո՜ո՜… Թագավոր ես գլխիս, որ չաշխատե՞ս։

ՆԱԶԱՐ— Իմացիր, որ ես չպիտի աշխատեմ. դո՛ւ պիտի աշխատես։

ՈՒՍՏԻԱՆ— Ինչո՞ւ, հողեմ գլուխդ, դու ի՞նչ ես։

ՆԱԶԱՐ— Էնդուր, որ ես ազնիվ եմ։

ՈՒՍՏԻԱՆ— Ո՞նց թե ազնիվ ես։ Էդ էլ նո՞ր հնարեցիր։

ՆԱԶԱՐ— Ի՞նչ պիտի հնարեմ։ Գրքերի մեջ գրած է։ Պապիս պապուպապը թագավոր էր։ Մենք ցեղով ազնիվ ենք։

ՈՒՍՏԻԱՆ— Ցխեմ պապիդ գլուխը։ Ցեղով ազնիվը դու դառար, հա՞։ Չես աշխատում հերիք չի՝ հիմի էլ իմ ազնվությունն ուզում ես ձեռիցս խլես։ Ազնիվը դո՞ւ ես, թե՞ ես։

ՆԱԶԱՐ— Պո, դու է՞լ ազնիվ դուրս եկար։ Դու ի՞նչ ազնիվ ես։

ՈՒՍՏԻԱՆ— Ազնիվը ես եմ։ Դու որ չես իմանում, աշխարհք չի՞ իմանում։

ՆԱԶԱՐ— Էդ ո՞նց եղար ազնիվ, խելքի տոպրակ։

ՈՒՍՏԻԱՆ— Ո՞նց թե։ Ազնիվ որ չէի, էլ իմ հերը ո՞ւր կասեր։

ՆԱԶԱՐ— Ոտներդ քե՛զ քաշի։ «Ազնի՛վ»։ Չհամարձակվե՛ս Նազարի մոտ էդ խոսքերն ասես, մին էլ աշխատանքի անուն տաս։ Սովոր ես վրաս բերան պատռես։ Անունս աշխարհք է դմբդմբացնում։ Մի տես՝ իմ ահից Քյոռօղլին մոտենո՞ւմ է գեղին։ Էդ ո՞ւմ շնորհքն է։ Ա՛յ իմ գործը։ Դու իգիթի պատիվն ի՞նչ ես իմանում։ Ի՜… խոսեցրիր ու գործից գցեցիր։ Ո՛վ է իմանում գեղամիջում ինչ կռիվ է։ Մի գնամ էդ Դաղստանի ավազակների աչքին երևամ, գեղին վնաս չտան։ (Վերցնում է մորթին ու քարշ տալիս դռան հետև՝ վեր է ընկնում վրան):

ՈՒՍՏԻԱՆ— Հավերին քըշ արա, բակը չմտնեն, թե չէ՝ (Ցույց տալով պատուհանը) տեսել ե՞ս պապական դագանակը։ Կարկամդ կճղեմ։

ՆԱԶԱՐ— (Ներս մտիկ տալով) Կաց մի էս կռիվը վերջանա՝ տես թե ինչ հարսանիք եմ սարքում գլխիդ։

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ— (Ներս մտնելով տան հետևի մուտքից) Ուստիա՞ն։

ՈՒՍՏԻԱՆ— Ո՞վ է։ Գյուլզա՞ր։ Առի։

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ— Ի՞նչ ես շինում, ա կնիկ։ Էս ո՞նց է, որ մարդդ տունը չի։

ՈՒՍՏԻԱՆ— Ո՞նց տանը չի։ Հրեն շնթռել է դռան հետև։

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ— (Մի փոքր ցած) Էլի բանի չի՞։

ՈՒՍՏԻԱՆ— Ո՞նց կլինի, որ բանի լինի։ Էսքան կնկա մարդ՝ գնաց աշխարհք թալանեց բերեց տուն, սա ընկած է գլխիս պարապ հացակեր։ Ձեռիցը ոչ թալան է գալիս, ոչ աշխատանք։

ԵՐԵԽԱՆԵՐ— Վախկոտ Նազար։

ՆԱԶԱՐ— Սպասեցեք, ձեր հերը կանիծեմ։

ԵՐԵԽԱՆԵՐ— (Հեռանում են)։

ՆԱԶԱՐ— (Միջոց։ Պառկում է։ Ճանճերն սկսում են անհանգիստ անել։ Քշում է նրանց) *Քշա՜...* (Ծույլ հորանջելով) *Չեն թողնում քնի մարդ։ Ի՜ի՜ի՜... շա՛տ կնիկ, արի մի սրանց քշի. էդ է՞լ ես անեմ։* (Ներս է նայում) *Վա՜յ, գնացե՞լ է։ Ուստիան։* (Ուզում է մորթին վերցնի, ներս գա՝ ծուլանում է և վեր ընկնում)։ *Ի՜ի՜ի՜... բեզարած եմ, թե վեր կենամ։* (Միջոց) *Հիմի մութն էլ կընկնի... ո՞վ է իմանում... գողի, ավազակի տարի է։* (Ճանճերին) *Դե, քշա՜, է՜... իմ ցավն ինձ հերիք չի, դուք էիք պակաս։* (Մորթին դնւյի ներս է քաշում մարմնով և ինքն էլ սողում է ներս) *Ի՜ի՜ի՜... Սատանան ասում է, վեր կաց ու միանգամից ջարդի, պրծի։* (Բարկանալով) *Տո, դուք ում հետ գործ ունեք* (խփելով իրա երեսին), *այ ձեզ, այ ձեզ, այ ձեզ։ Հը, սատկեցի՞ք։ Դե՛, գնացեք։ Քաջ Նազա՜րն եմ, սաղ ու անող եմ։* (Նայելով վայր թափված ճանճերին) *Հը, քանի՞սն են։ Մեկ, երկու, երեք, չորս, հինգ։* (Ծուլանալով) *Դե, էն է հազար սաս, պրծի։* (Գոռում է) *Քաջ Նազա՜րըն եմ, մին զարկեմ, կջարդեմ հազա՜ր։*

ՄԻ ՑՆԴԱԾ ՏԻՐԱՑՈՒ— (Նիհար, գիսախռիվ, մազաղաթե գիրքը կռան տակին ներս է ընկնում)։

ՆԱԶԱՐ— *Ո՞վ է։* (Վեր է թռչում) *Հա՜, տիրացու...*

ՏԻՐԱՑՈՒ— (Զույգ ոտքով տեղում տռտինգ տալով) *Թալեմ բռնեմ, բռնեմ թալեմ։* (Նկատելով Նազարին)։

*Բարեողջույն, եղբայր Նազար,*
*Այդ ի՞նչ այդպես ջարդես հազար։*

ՆԱԶԱՐ— *Ի՜ի՜ի՜... աշխարհքը. ալարում եմ թե վեր կենամ ջարդեմ։*

ՏԻՐԱՑՈՒ— *Ժամանակի՜ նշան է։*

ՆԱԶԱՐ— *Բայց մտքումս դրել եմ, պիտի աշխարհքը ջնջեմ, ճանճերից եմ սկսել։*

ՏԻՐԱՑՈՒ— *Ժամանակի նշան է։*

ՆԱԶԱՐ— *Ահա տես, մեկ զարկեցի, ջարդեցի հազար։*

ՏԻՐԱՑՈՒ— *Ժամանակի՜ նշան է։* (Դիտելով ճանճերին) *Ո՜վ Նազար, այս ճանճերը՝ ճանճեր չեն, այլ դյուցազններ։* (Ոգևորված և հետզհետե [illegible]ագ ու մեծ[illegible]այական) *Դյուցազն մի ահավոր տեսա երազիս, աջին՝ սուր, ձախին՝ դրոշ։ Հայտնեցավ իբրև հուր երկնային և ջարդեց հազար դյու-[illegible]ղին Ողորմությամբ աստուծո, դու ես այդ դյուցազնը։ Ո՜վ կատարած*

(Կրկին ներս է վազում և դուռը խփելով կողպում է։ Իսկույն դուռը ծեծում են) *Ո՞վ է։* (Ականջ է դնում) *Հաջի-Մուրա՞դ։* (Լռություն) *Գոմեշ-Պառա՞ն, դո՞ւ ես։*

ՈՒՍՏԻԱՆ— *Հը՞, սատանաները կերա՞ն։*

ՆԱԶԱՐ— (Խրճիթից դուրս գալով)։ *Բերանդ շաղ մի՛ տա։ Դու չես իմանում ինչ ժամանակ է։ Ինչի՞ ուշացար։ Ո՞ւր էիր։*

ՈՒՍՏԻԱՆ— *Քե՞զ էի հարցնում։*

ՆԱԶԱՐ— *Էս իսկի իգիթի կնկա պատասխան չէր։*

ՈՒՍՏԻԱՆ— *Էնդուր էլ սրտաճաք ներս ընկար, կասես հետևդ ավազակ էր ընկել։*

ՆԱԶԱՐ— *Ի՞նչ պակաս մարդ եմ, որ հետևս ավազակ չընկնի։ Փախչելն էլ մի հունար է, բաս ի՞նչ իգիթ եմ, կփախչեմ է՛լ, կփախցնեմ է՛լ, կզարկեմ է՛լ, կզարկվեմ է՛լ։ Իգիթի բանն էդպես է։ Լավ, լավ, հորդ օղորմի։ Հաց գցի ուտեմ։*

ՈՒՍՏԻԱՆ— *Գրողս կեր։ Շահզադա՞ ես, հրամայում ես։*

ՆԱԶԱՐ— *Ես գիտեմ իմ բանը։* (Նստում է թոնրի ափին։ Ուստիանը ճրագ է վառում, բերում է խոնչան շինարու տակ, հաց է փռում և կերակուր դնում) *Մթնե՛ց... Հը՛մ, աչք աչքի չի գալիս... Ես ասեմ՝ գիշերը գեղին վրա կտան, մեր տունն էլ գեղի ծերին։ Կնիկ, թուրս պատրաստ պահի։*

ՄԻ ՁԱՅՆ— (Դրսից) *Էհե՛յ...*

ՆԱԶԱՐ— (Մտնելով խրճիթը և գլուխը դռնից դուրս հանելով) *Մի տես՝ ո՞վ էր... Դրսի դուռը կողպի՛ր։*

ՈՒՍՏԻԱՆ— (Հանգիստ ուտում է)։

ՁԱՅՆԸ— (Մոտենալով) *Հրես գալի՛ս եմ, հրես գալի՛ս եմ, հրես գալի՛ս եմ...*

ՆԱԶԱՐ— *Ի՛, է՛, է՛... Դուռը չբանաս, արանքից մտիկ արա։* (Ձայնը հեռանում է) *Գնա՛ց...* (Ձայնը ավելի է հեռանում) *Թե մին էլ կգա՝ ես նրան ցույց կտամ։ Երևի չէր իմանում, թե ում դուռն էր գոռում։* (Ականջ է դնում) *Ը՛հ, փախա՛վ... Էս է՝ գեղամիջում հասկացրին իրեն, որ Նազարն էստեղ է։* (Դուրս գալով խրճիթից) *Ձենը Դաղստանի էր։ Ո՞վ է իմանում լեզգի Հաջի-Մուրադն էր։ Ախր ասում եմ ձենը ծանոթ է։ Հա՛յ դիդի, հա՛... ի՛նչ օրեր ենք անցկացրել միասին։ Մի իգիթի կնկա շնորհք չունեցար, թե տուն կանչեիր։ Լավ, էգուց ինքս կերթամ սար, տուն կբերեմ։* (Նստում է և սկսում ուտել)։

ՈՒՍՏԻԱՆ— *Էրնա՛կ ինձ։ Մարդս իգիթ, ես ոսկե պալատում լվլվում եմ։*

ՆԱԶԱՐ— *Տղամարդու պատիվ պահի, ամեն ինչ կլինի։*

ՈՒՍՏԻԱՆ— *Քեզ նման տղամարդը չունենամ էլ՝ կլինի։*

*ՈՒՍՏԻԱՆ— Արի՛ ու։*

**ՆԱԶԱՐ**— (Տեսնելով վայր դրած դագանակը և քաջալերվելով) *Հերսից տրաքվելո՛ւ եմ։ Նա՛լլաթ չար սատանին։ Վախում եմ մի վնաս տամ։ Անզգա՛մ կնիկ* (Դուրս է վազում ծակուտից, բայց հանգիստ մոտենում է հացի սուփրին) *Լա՛վ, ես կռվի գլուխ չունիմ։* (Նստելով) *Մենք ցեղով տղամարդ ենք, կնկա վրա ձեռ չենք բարձրացնի։* (Գդալը վերցնում է և շարունակում է ուտել) *Մի բան լինես՝ վնաս չունի, թե չէ ես կթողնե՞մ, որ վրաս դագանակ վերցնես։ Ո՞ւր է, ահից մի սար էլ չես գալիս, որ տեսնես ոնց եմ ավազակների գլուխը ֆռացնում։ Թե չէ՝ տան չորս պատերն ես տեսել, սարսա՛ղ։ Տանը դագանակ վերցնելը տղամարդությո՞ւն է։*

*ՈՒՍՏԻԱՆ— Էդ մի գազ լեզուդ էլ որ չլինի՝ օրդ ի՞նչ օր է։*

**ՆԱԶԱՐ**— (Ծոծրակը քորելով և հորանջելով) *Ասում եմ՝ կռվի գլուխ չունեմ։ Հացը հավաքի ու տեղաշորս գցի։ Շուտ քնեմ, շուտ վեր կենամ։ Էգուց Ջախջախլի սարում Քյոռօղլու կռիվն է։ Պիտի գնամ։*

*ՈՒՍՏԻԱՆ— Լեզո՛ւդ որ բլբլում է. էդ լեզվիդ համար, ի՞նչ կա որ... աշխա՛րհք, մարդի՛կ...*

*ՆԱԶԱՐ— Աշխա՛րհք, մարդի՛կ... փի՛, քա՛նի անուն տուր։ Իսկի ոտիս եղունգն արժե՞ն։ Աշխարհքը որ կա՝ իմ գերին է. էնպես, բաց եմ թողել, որ գնան իրենց համար ապրեն։ Որ ուզենամ՝ ոտիս տակ կգցեմ։*

*ՈՒՍՏԻԱՆ— Դո՞ւ աշխարհքը ոտիդ տակ գցես։*

*ՆԱԶԱՐ— Ե՛ս։ Դու ինձ մեր գյուղի քոսոտնե՞րը գիտես։*

*ՈՒՍՏԻԱՆ— Էս որ իսկի մարդու չի հավանում՝ էդ եմ տրաքվում, է՜։*

*ՆԱԶԱՐ— Տրաքվելը դու էն ժամանակ մտիկ, որ ինձ մեծ փառքերի մեջ նստած կտեսնես։*

*ՈՒՍՏԻԱՆ— Երևելի՜ մարդ ես դառնալու՝ աշխա՛րհք զարմացնես։*

*ՆԱԶԱՐ— Սպասի՜. տես, թե քո ջգրու՝ ո՛նց եմ աշխարհքը քանդելու։ Էդ քո ասած երևելի մարդկերանցից է՛լ բարձր պիտի բազմեմ։ Ո՞նց ես, որ հիմի վեր կենամ նստեմ աշխարհքի գլխին։*

*ՈՒՍՏԻԱՆ— Տո, մի տեսեք էս փսլնքոտ քթի տակին ի՞նչ մեծ գոռոզություն կա։*

*ՆԱԶԱՐ— Ի՜ի՜... Մոլանում եմ թե վեր կենամ սրան մի շնաթակ տամ։ Ա՛ղջի, ասում եմ ձենդ կտրի՛։*

*ՈՒՍՏԻԱՆ— Տես մի մեջքին գալի՞ս է։*

**ՆԱԶԱՐ**— (Շարժում անելով) *Տո, դու ո՞ւմ վրա ես խոսում։* (Բայց ոլանալով) *Լա՛վ, մնա՛ էգուց։* (Հանում է չուխան և պատրաստվում է քնելու) *Ափսոս, որ ինձ պես տղամարդու պատիվը չես իմանում։ Քոնն ինչ նստես ու վրաս վռռաս, էլ չես ասում, թե ես ինտեղ ինչ բանի եմ։ Մի*

ՆԱԶԱՐ— Վա՜հ, վա՛հ, վա՛հ, դո՛ւռը, դո՛ւռը, ի՞նչ ես անում։

ՈՒՍՏԻԱՆ— Ուա՛ղ եղի։ Քեզ հետ ապրելու սիրտ չունեմ։

ՆԱԶԱՐ— Դուռը բաց արա՝ թե չէ՝ կջարդեմ։

ՈՒՍՏԻԱՆ— (Լռում է)։

ՆԱԶԱՐ— Բաց արա դուռը, չեմ ծեծի։

ՈՒՍՏԻԱՆ— Ո՞վ ես ծեծողը։ Կրեմ գլուխդ։ (Լռություն)։

ՆԱԶԱՐ— Ուստիան, դո՛ւռը բաց, ավազակները գալիս են։

ՈՒՍՏԻԱՆ— Գնա ճաքի՛, չե՛մ բանա։

ՆԱԶԱՐ— (Ուրիշ կողմից) Բա՛ց արա դուռը, ավազակներն եկան, զենքերս պիտի կապեմ։

ՈՒՍՏԻԱՆ— (Պատից վայր է բերում Նազարի ժանգոտ սուրը, վերցնում է դրոշակը, չուխան և դռան արանքից դուրս է լցնում)։ Ա՛ռ անաստվածներդ, չքվի գնա՛։

ՆԱԶԱՐ— Հիմի էս մթանը ո՞ւր գնամ։

ՈՒՍՏԻԱՆ— Գնա Դաղստա՛ն, գլուխդ պահի։ Էլ քեզ կնիկ չե՞մ։ (Պառկում է)։

ՆԱԶԱՐ— (Վերցնում է չուխան հագնում, զենքը կապում է, դրոշակը բռնում) Ուստիա՜ն, եկա՜ն... (Նայում է անտառի կողմը և կուչ գալիս դռան տակ) Եկա՜ն։ Բը՛, բը՛, բը՛... (Ավելի բարձր) Բը՛, բը՛, բը՛... (Ավելի բարձր) Բը՛, բը՛, բը՛... Ո՞ւմ վրա եք գալիս... Կայծե՛րդ կհանեմ... Բը՛, բը՛, բը՛... Լե՜հ՜յ... (Փախչում է տան հետևը ձախ կողմից)։

ՍԱՔՈ— (Ծառերի միջից ներս գալով աջակողմը, ներմակ փափախը գլխին) Ամա՜ն, աստվածասե՜ր, տո՞ւն է, գե՞ղ է, ո՞վ կա, հա՜սեք, ճամփեն կորցրել ենք։

ՈՍԿԱՆ— (Առաջ գալով նրա հետևից նույնպես ներմակ փափախով) Ա՜յ տղա, ձին կապի ծառից, տեսնենք ո՞ւր ընկանք։

ՍԱՔՈ— Ամա՜ն, Ոսկան, ձեռից գնացինք։ Ջահանդամ-դարասին ենք ընկել։

ՈՍԿԱՆ— Աստված ողորմած է։ Մի՛ վախի, Սաքո։

ՆԱԶԱՐ— (Մոտենալով ձախից, բայց դեռ չի երևում) Քաջ Նազարն եմ հա՜, մի՛ն կզարկեմ, կջարդեմ հազա՛ր։

ՍԱՔՈ— Ա՜ման, Ոսկան, էս ի՞նչ Քաջ Նազար է։

ՈՍԿԱՆ— Չեմ իմանում։ Նստի, ժամ մի գա։ (Կուչ են գալիս թփերի տակ)

ՆԱԶԱՐ— Համբո՞։ Բուրջի ծերի՞ն ես։ Լավ մտիկ տուր, դեմիցը քարվանն է գալիս։ Թե Քյոռօղլունն է, կտրենք։ Էգուց Սարդարի մոտ ճաշի ենք։ Խանն ասենք։ Էս է՝ ձիս թամբում եմ։ Տղե՛րք, դուք էլ պատրաստվեցեք։ (Լռություն։ Իսկն իրեն հարց է տալիս) Քաջ Նազար, էդ ո՞ւմ հետ ես խո-

բյուն) *Չէ՛, չի՛ երևում... Փախա՞վ, ի՞նչ արավ... կըլնի որ փախավ...* (Վստահ) *Հը՛, ո՞վ է ասում, թե քաշ չեմ։* (Գոռում է) *Էհե՜յ, մի՛ն զարկեմ, հազա՛ր կջարդեմ։* (Մոտենալով դռանը) *Ո՜ւստիան, դուռը բաց։* (Լռություն) *է, սրանից դենը հերն անիծած էն տղամարդու, որ կնիկ մարդու անունը տա։ Ես գնացի։ Էհեյ, ճա՛մփա տվեք, խա՛բարդա։ Քաշ Նազարն եկա՜վ։* (Ականջ է դնում։ Ուստիանը լուռ է)։ *Լա՛վ, մնա՛, լուսը բացվի, մի շնաթակ տամ քեզ՝ հետո կերթամ։* (Լռություն) *Շա՛ն կնիկ, գնա՛ցի։* (Նստում է ձին) *Էհե՜յ...*

*ՈՒՍՏԻԱՆ*— (Վեր ցատկելով՝ խլում է դագանակը և դուռը բաց անելով՝ դուրս ելնում)։ *Հերիք, գահլա չտանես։* (Դագանակով ճարվածում է Նազարին ու ձիուն) *Ա՛ռ քեզ, քյոփա՛կ։*

*ՆԱԶԱՐ*— *Է՛, է՛, է՛, ձին կփախցնի՜...* (Ձին փախցնում է նրան) *Փախցրե՜ց... ամա՜ն... հասե՜ք։* (Ձայնը հեռանում է և կանչում)։

*ՈՒՍՏԻԱՆ*— (Ներս գալով) *Դե, հիմի գնա՛ ու սրտանց եղի, աչքդ է՛լ կարեմ։* (Ներս է մտնում, որ քուն մտնի)։

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ԹԱՄԱԴԱ— (Նայելով նրա դրոշակին և երևույթին կասկածոտ) *Համեցեք։* (Իր մոտ նստողներին) *Ա՜յ տղա, ճամփա տվեք հյուրին, անց կենա դեսը։* (Ճամփա են տալիս)։

ՆԱԶԱՐ— (Անվստահ, բայց խրոխտ հայացքով նայում է չորս դին, հազում է և իր դրոշակով գալիս, նստում է Թամադի, Վարժապետի և ծերերի կողքին: Լռություն: Նորից հազում է)։

ԹԱՄԱԴԱ— (Նույնպես հազում է)։

ՆԱԶԱՐ— (Կիսովին վեր է կենում, որ փախչի)։

ՀՅՈՒՐԵՐ— (Փախչելու շարժում են անում)։

ԹԱՄԱԴԱ— (Նազարի վարանոտ շարժումը նկատելով) *Համեցե՜ք, անո՜ւշ արա։*

ՀՅՈՒՐԵՐ— (Մի փոքր հանդարտում են և սկսում ուտել)։

Ա. ՀՅՈՒՐ— (Իր մոտ նստածներին) *Ո՞վ է, ի՞նչ մարդ է։*

Բ. ՀՅՈՒՐ— *Հա, է՜, էս դրոշա՜կը, թո՜ւրը...*

Գ. ՀՅՈՒՐ— *Ինքն էլ սուս ու փուս։*

ՄԻ ԾԵՐՈՒՆԻ— *Սա որ էդպես դրոշակով, թրով նստեց՝ սրա տակին շատ բան կլինի։*

(Լռություն)

ՆԱԶԱՐ— (Հազում է) *Հը՜մ...*

ԲՈԼՈՐԸ— (Նայում են նրան)։

Ա. ՀՅՈՒՐ— *Ի՞նչ ասավ։*

Բ. ՀՅՈՒՐ— *Ասավ, «Հը՜մ»։*

Գ. ՀՅՈՒՐ— *Ի՞նչ ասավ։*

Դ. ՀՅՈՒՐ— *Ասավ, «Հը՜մ».* (Հերթով նույն հարցն ու պատասխանը՝ մինչև մի ծերունուն)։

ՄԻ ԾԵՐՈՒՆԻ— *Որ ասավ, «Հը՜մ»՝ ասել է Քյոռօղլին է։*

Բ. ԾԵՐՈՒՆԻ— (Ձեռքը ճակատին հովանի անելով և մտիկ տալով Նազարին) *Չէ, Քյոռօղլու թոռն է։*

(Լռություն)

ՆԱԶԱՐ— (Հպարտ) *Գյադա՞, Մի բան կուզեմ իմանամ էս ժողովրդից։ Դուք Դաղստանցի՞ եք։*

ԹԱՄԱԴԱ— *Չէ, մենք Ջորբաշենցի ենք։*

ՆԱԶԱՐ— *Աշխարհքի անո՞ւնը։*

ԹԱՄԱԴԱ— *Ջորբաստան։*

ՀՅՈՒՐԵՐ— *Վա՛հ, կռիվ կա՞ր։*

ՍԱՔՈ— *Սուս կացեք, մի ղիամաթ էր՝ որ կուռս դաղարեց։ Պահ, էդքան չարդել կըլնի՞։*

ԹԱՄԱԴԱ— *Հլա մի հաց անուշ արա... Այ տղա, էդ ինչե՞ր ես ասում։*

ՍԱՔՈ— (Չիբուխն է լցնում։ Սաստիկ տարված է պատմելու մարմաջով։ Ամենքն սպասում են հետաքրքիր։ Վառում է չիբուխը, փափատացնում և սաստիկ մեծամիտ ձայնով սկսում) *Էն է՝ ախպեր ջան, ախպերս որ ասեմ՝ ձիս նստել՝ գնում էի Դումանլու, Ջամլըբել։ Ինչպես գիշերվա դառը կեսը կըլներ, մին էլ տեսա, որ ընկել եմ Ղարանլուխ Մեշի Ջահաննամդարասին։ Հիմի, ախպեր ջան, ականջս ձենի՝ ձիուն հարաքյաթ, ղամշուն բարաքյաթ՝ գնում եմ։ Ամա՝ մի մթնագիշեր էլ է, որ աչք աչքի չի գալի։ Մին էլ մի ձեն ընկավ ականջս։ Ասի, յա գազան է, յա ավազակ։ Ականջ դրի, որ՝ գազանի, ավազակի բան չի, սելավի պես գալիս է։ Այ տղա, էս ի՞նչ բան է։ Էս մտքով էի, մին էլ տեսնեմ ի՞նչ, մի զորք է գալի, մի զորք է գալի, ոնց որ ղիամաթ։* (Ունկնդիրները սարսափով նայում են) *Ձեն տվի, ադա, էդ ո՞ւմ զորքն է։ Ձեն չտվին։ Էն է՝ թուրս պլոկեցի, ձիս կրակեցի, ընկա էդ զորքի մեջն ու սկսեցի ղամշիլը։* (Չիբուխն է փափատացնում և թութունը դրատում)։

ՈՍԿԱՆ— (Ներս է մտնում ձախից և տեսնելով, որ ամենքը զբաղված են՝ չխանգարելու համար զգույշ մոտենում է Սաքոյին և հետը կանգնում։ Այս տեսնելով Նազարին՝ ճանաչում է և զարմանում, դրդում իր մոտ նստած հյուրերից մեկին) *Ո՞վ է։*

ՄԻ ՀՅՈՒՐ— *Քաջ Նազարն է։*

ՈՍԿԱՆ— (Սարսափած նայում է Նազարին և լռում)։

ՍԱՔՈ— *Էդպես ղամշեցի մի վախտ, մին էլ տեսնեմ մթան մեջ մի հիավոր ձեն է տալիս։ «Սախկալ-Թոխթան, Ջամուշ-Պատռան, խփի՛»։*

ՆԱԶԱՐ— (Կիսովին վեր է կենում տեղից պատրաստվելով փախչելու։ Հյուրերի ուշքը Սաքոյի վրա է)։

ՍԱՔՈ— *Էս իմանալս էր։ Ոչ ձիս չթողի՞, չհասա՞ ու նրան հենց էնպես ձեռքով ձիախառն գետին չզարկի՞...*

ՆԱԶԱՐ— (Այլայլվում է) *Քը՛, քը՛ քը՛, քը՛։*

ՈՍԿԱՆ— (Անհանգիստ նայում է Նազարին)։

ՍԱՔՈ— *Սա փաթաթվեց ոտիս ու մենակ էսքանը գոռաց. «Ա՛ման, Քյո՛ռօղլի, բա՛շխի»։ Տո՛, քու Քյոռօղլու ընենց ընենցը... Ախպեր ջան, էրան կցեցի ոտքերիս տակ, ը՛մ, հիմի ո՛նց եմ տալի փորին, գլխին, մեջքին, մեջքին, փորին, քթին... շինեցի քյուֆթա... էտեղ լուսնյակը դուրս էկավ։ Մոտիկ տվի որ՝ Քաջ Նազարն է։*

տալիս նրան) *Անունդ վաղուց էինք իմացել, մենակ քեզ չէինք տեսել։ Հիմի մեզ համար մեծ բախտավորություն է, որ տեսանք։*

ՀՅՈՒՐԵՐ— (Հերթով վեր են կենում և մոտենալով ձեռ են տալիս Նազարին) *Բարով եկար, Քաջ Նազար ախպեր։*

Ա. ՀՅՈՒՐ— (Սաքոյին) *Այ տղա, ո՞նց էլ ճանաչեցիր Քաջ Նազարին։*

ՍԱՔՈ— *Տեսա՞ք, ո՞նց լուս գցեցի Քաջ Նազարին։ Այ հա՜յ, Դաղըստանից մինչի Հնդըստան երկու իգիթ եմ ճանաչում. մինը Քաջ Նազարն է, մինն էլ... Քաջ Նազարն ինքը կասի ով է։*

Բ. ՀՅՈՒՐ— *Հասկանում եմ ինչի համար եկած կլինի մեր կողմերը։ Կա ու չկա էն է։*

ՋԱՅՆԵՐ— *Ինչի՞ համար։*

Բ. ՀՅՈՒՐ— *Հետո կասեմ։*

ԱՌՈՒՅԳ ԾԵՐՈՒԿ.— *Գիտե՜մ, գիտե՜մ ինչի համար է։* (Աչքով է անում Նազարին) *էն որ ես ու դու գիտենք։*

ՄԻ ԾԵՐՈՒՆԻ— *Ես հլա ձեն չեմ հանում, սեսնեմ դուք գլխի կընկնե՞ք, թե ով է Քաջ Նազարը։*

Բ. ԾԵՐՈՒՆԻ— *Քաջ Նազարին ո՞վ չի ճանաչում։ Սաղ աշխարհքը գիտի։ Քառասուն տարի է մեր սարերում ման է գալիս Քաջ Նազարը։*

ՀՅՈՒՐԵՐ— *Այ ջա՜ն, այ ջա՜ն, այ ջա՜ն։*

ԹԱՄԱԴԱ— (Նազարին) *է, Նազար ախպե՞ր, մենք էսքան խոսեցինք՝ դու սուս կացար։ Ո՞վ գիտե, մտքումդ ի՞նչ բաղեր գնացիր ու եկար։ Հիմի տեսնենք մեզ համար ինչ ես բերում էդ բաղերից։ Հրամանքդ հիմի որտեղի՞ց ես գալիս։*

ՆԱԶԱՐ— (Հպարտ հազալով) *Ախպորս ասեմ՝ ես հիմի Քաֆրստանու միջից եմ գալիս։ Գնացել էի Բաղր խանի գլուխը կտրելու։ Կտրեցի ու եկա։ Ճամփին էլ Քյարիմ խանի գլուխը կտրեցի։*

ՀՅՈՒՐԵՐ— *Վա՜հ...*

ԹԱՄԱԴԱ— *Դալար կենա կուռդ։ Ժողովուրդ էլ ջարդո՛ւմ ես։*

ՆԱԶԱՐ— *Ճանճի պես, մին զարկում, հազար ջարդում։*

ԹԱՄԱԴԱ— *Ասել է խաների գլուխը կտրելով ու ժողովուրդ ջարդելով մա՜ն ես գալիս։*

ՆԱԶԱՐ— *էդպես է մեր սովորությունը։ Մենք էլ ուրիշ գործ չունենք։ Մեր գործը ջարդելն է։*

ԹԱՄԱԴԱ— *Հիմի աստված որ հաջողի՝ սաղ աշխարհքը ջարդելու ե՞ս։*

ՆԱԶԱՐ— *Մտքներս էդ է։*

ԹԱՄԱԴԱ— *Դալար կենա կուռդ։ Բա որ էդպես է՝ մի խնդիրք պիտի անեմ։*

ՆԱԶԱՐ— Նա՛ լլաթ չար սատանին։ Էդ հսկաները ձեզ էդպես նեղություն տվե՞ն։ Հապա ես ո՞ւր եմ։ (Սաքոյին) Գյադա՞։ Ասա ձիուս դարի տանե էս է, վեր կենամ գնամ դրանց վերջացնեմ։

ՍԱՔՈ— (Մի կողմ) Ասեք գարի տանէ։

ԲՈԼՈՐԸ— Ա՛յ ջան, ա՛յ ջան, ա՛յ ջան։

ՎԱՐԺԱՊԵՏ— (Վեր թռչելով) Ո՜վ հասարակություն, ո՜վ ժողովուրդ, ո՜վ ազգ ամենայն։ Հասե՜լ է ժամանակը։ Քաջակորովն Նազար, սուրբ գործի համար գնում է Հնդկաստանի ազգի վրա, որ մեր պապերի հողը ետ խլի։ Մեծ Նազարն պիտի նստի թագավոր։ Նա վեր է կացել բոլոր աշխարհքի, բոլոր ազգերի դեմ։

ՏԵՐՏԵՐ— Մենք Քաջ Նազարի ազգն ենք, և դրանով, գոհություն աստուծո՝ ամեն ազգից բարձր ենք։

ԱՌՈՒՅԳ ԾԵՐՈՒԿ— Թահո՜ւ... կթողնե՞նք, որ մեր ազգի վրա մեկ ուրիշ ազգ ծուռը մտիկ տա։ Բմբուլները երկինք կհանենք, հա՜...

ՎԱՐԺԱՊԵՏ— (Ընդհատելով, ոտքի է թռչում) Ոտքի՛ կանգնեցե՛ք։ Մա՜հ Հնդկաստանի թագավորին։ Կեցցե՛ Քաջ Նազարը։

ԲՈԼՈՐԸ— (Ոտքի են կանգնում) Կեցցե՛ Քաջ Նազարը։ Ապրե՛ս, Քաջ Նազար։ (Նստում են):

ԹԱՄԱԴԱ— Քա՜ջ Նազար, հիմի ո՞նց ենք անում մեր հարևան հսկաների բանը։

ՆԱԶԱՐ— Ջնջեցե՛ք, գնա՛ց։ Էլ հսկաներ չկան։ Պատրաստվեցեք, գնում ենք։

ԹԱՄԱԴԱ— Գնում ենք։

ԱՌՈՒՅԳ ԾԵՐՈՒԿ— Ես էլ եմ գալիս։

ՄԻ ԾԵՐՈՒԿՆԻ— Հլե ես էլ եմ գալիս։

ԲՈԼՈՐԸ— Մենք էլ ենք գալիս։

ԽՆԱՄԻ ԹԱԹՈՍ— (Հարցական) Հը՞...

ԲՈԼՈՐԸ— (Նրան) Խնամի Թաթոս, գնում ենք հսկաներին ջնջենք։

ԽՆԱՄԻ ԹԱԹՈՍ— Ես էլ եմ գալիս։

ԹԱՄԱԴԱ— (Դուդուկչիներին) Ասա մի «Քաջ Նազարի» ածեք։

ԴՈՒԴՈՒԿՉԻՆԵՐ— (Նվագում են):

ՎԱՐԺԱՊԵՏ— (Նվագի հետ արտասանում է):

Կեցցե՛ս Նազար, ապրե՛ս Նազար,
Որ ջարդում ես հազար, հազար,
Ապրի՛ր դու մեր ազգի համար,
Զարդի՛ր միշտ գերթ, բողկ ու գազար։

ԹԱՄԱԴԱ— Ջա՜ն, վարժապետ, տուր մի, է՜ շնորհքդ թափի։

ԳՅՈՒՂԱՑԻ— (Ներս ընկնելով) Ա՜ման, հասեք, վագր է լույս ընկել անտառը։

ԹԱՄԱԴԱ— (Քահ-քահ ծիծաղում է) «Վա՜գր է լույս ընկել»։

ԲՈԼՈՐԸ— (Նույնպես ծիծաղում են) «Վա՜գր է լույս ընկել»։

ԳՅՈՒՂԱՑԻ— (Շփոթված) Ինչի՞ եք ծիծաղում։ Բան եմ ասում, վագր է լույս ընկել անտառը...

ԹԱՄԱԴԱ— (Հանգիստ ժպիտով) Լույս է ընկել, թող ընկնի... Նազարն էստեղ չի՞, վագրի հոգեառը։

ԳՅՈՒՂԱՑԻ— Ի՞նչ Նազար, ի՞նչ զառաֆաթ... շները փչացրեց, հասեք...

ՍԱՔՈ— (Հազում է և վեր կենալով կամաց-կամաց մոտենում է ձախ մուտքին և հանկարծ փախչում):

ՆԱԶԱՐ— (Դեպի դուրս) Գյադա՛։ Ջո՛ւր տվեք ձիուս։ Էս է վեր կացա։ (Գյուղացուն) Որտեղացի՞ ես, բարեկամ։

ԳՅՈՒՂԱՑԻ— Քյալլագյող գեղից։

ՆԱԶԱՐ— (Գլուխը ծանր շարժելով) Հա՜։ Ի՞նչ է, ի՞նչ վագր է։ Որտե՞ղ և ո՞նց է սիրտ արել մտնի ձեր անտառը։

ԳՅՈՒՂԱՑԻ— Մեր անտառը չի, էս անտառն է մտել, ու հիմի գալիս է...

ՆԱԶԱՐ— (Վեր թռչելով և հազալով) Գյադա՞։

ԹԱՄԱԴԱ— Հը՞, Քաշ Նազար, էսպես բաներ սիրում ես։ Տեսա՞ր ոնց ընկավ բանեց։

ՆԱԶԱՐ— Սիրում եմ... (Մոտենում ման է գալիս) Բը՛, բը՛, բը՛, բը՛... (Գյուղացուն) Ո՞ր կողմից է գալիս, գյադա...

ԳՅՈՒՂԱՑԻ— (Աջ կողմը ցույց տալով) Էս կողմից։

ՆԱԶԱՐ— (Բարձր հազալով վեր է կենում և պատրաստվում է փախչելու) Կայծե՜րդ կհանեմ, հա՜ա՜ա... (Փախչում է ձախ կողմից)։

ԲՈԼՈՐԸ— Ո՞ւր է գնում, ո՞ւր է գնում։

ԹԱՄԱԴԱ— (Ձախ կողմից) Վագրի ճամփան է ուզում բռնի։ Ի՞նչ անշնորհքն եք։ Դո՛ւք բռնեցեք, նա գնա վագրի վրա։ Դե՛սն էկեք։

(Գյուղացիները վազում են դեպի ձախ և մտնում են Նազարի թամակը և պատի պես արգելակում նրան փախչելու)

Քաշ Նա՛զար, դու վագրի վրա գնա, մենք կբռնենք վագրի ճամփան։

ՁԱՅՆԵՐ— (Ձախից) Գա՜լիս է, գա՜լիս է...

(Մեծ մասը փախչում են դեպի աջ)։

ՁԱՅՆԵՐ— (Աջից) Գա՜լիս է, գա՜լիս է...

(Շփոթություն։ Մի մասը փախչում է դեպի ձախ, մյուսը՝ աջ, երրորդը՝ դիմացի կողմը)։

*ԹԱՄԱԴԱ*— *Վագրը մաշկեցեք։ Ի՞նչ անճարակն եք, էդ է՞լ Նազարն անի։*

(Մի քանիսը վագրը քաշում են դեպի խորքը՝ մաշկելու)։

*ՆԱԶԱՐ*— (Ուշքի գալով) *Ո՞ւր է վագրը։*

*ԲՈԼՈՐԸ*— *Սպանեցինք։*

*ՆԱԶԱՐ*— (Նայելով վագրին հազում է ինքն իրեն) *Հա՛, հը՛մ... է՛սպես էր եղել բանը...* (Վագրին դիմելով) *Լավ պրծար էս մի անգամն էլ։* (Բարձր հազալով, գյուղացիներին) *Բա էս անելո՞ւ բան էր, որ արիք։*

*ԲՈԼՈՐԸ*— (Շփոթված) *Ի՞նչ կա։*

*ՆԱԶԱՐ*— *Ի՞նչի սպանեցիք, ո՞վ էր ասում սպանեք։*

*ԲՈԼՈՐԸ*— *Բա չսպանեի՞նք։*

*ՆԱԶԱՐ*— *Ես չէի՞ կարող սպանել։ Ափսո՜ս։ Հազիվ մի ձի արել, նստել քշում էի։ Վագրին էլ մարդ ձեռ տա՞։ Անմնաս անասուն։*

*ԲՈԼՈՐԸ*— *Չէինք իմանում, էս մեկը բաշխի, էլ չենք անի։*

*ՍԱՔՈ*— (Ձախից ներս պրծնելով) *Ո՞ւր է, ի՞նչ վագր է, ասում են վագր է եղել։*

*ԲՈԼՈՐԸ*— *Ուշացա՜ր։ Քաջ Նազարն սպանեց։*

*ՍԱՔՈ*— (Մեծարբերան) *Ջարդուխուրդ կանենք, հա՜... ապա ի՞նչ գիտեք...*

*ՎԱԳՐ ՄԱՇԿՈՂՆԵՐ*— (Ձեռների վրա պարզած առաջ են բերում մորթին) *Այ հա՜յ...*

*ԹԱՄԱԴԱ*— *Բերեք, փռեք Քաջ Նազարի ոտքի տակ։* (Փռում են) *Ապրես, Քաջ Նազար, մեր տեր, մեր փրկիչ։ Էսպես էլ աշխարհքը գցես ոտքդ տակ։* (Գյուղացիներին) *Դե, հիմի վեր կացեք, գնանք Նազարի հետ, ջարդենք հսկաներին։*

*ԲՈԼՈՐԸ*— *Գալիս ենք։*

*ՎԱՐԺԱՊԵՏ*— *Ելե՛ք։*

*ՏԵՐՏԵՐ*— *Ե՛լ, ժողովուրդ։*

*ՎԱՐԺԱՊԵՏ*— *Ո՜վ ազգ ամենայն, գնանք Քաջ Նազարի հետևից, փըրկվենք և ճաճանչավորվե՜նք հայրենյաց փառքով։*

*ՏԵՐՏԵՐ*— *Եվ կամքն աստուծո օրհնյա՜լ եղիցի։*

*ԲՈԼՈՐԸ*— *Դե՛, Քաջ Նազար, առաջ ընկի։ Բերե՛ք Քաջ Նազարի ձին։*

(Բերում են. վագրի մորթին գցում են ձիու վրա, Նազարին նստեցնում են վրան, ձեռքն են տալիս դրոշակը, և շրջապատելով նրան, պատրաստվում են շարժվելու դեպի ձախ)։

*ԹԱՄԱԴԱ*— (Դուդուկչիներին) *Ապա՛ մի զուռնա։*

# ԱՐԱՐ ԵՐՐՈՐԴ

## ՔԱՋ ՆԱԶԱՐԸ ՀՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Խոր անտառ: Հաստաբուն ծառերի բները գերանների պես ցցված մթնեցնում են խորքը: Մի բացված է գոյանում ուղիղ դիմացը, ուր բարձրանում է հսկաների կիկլոպյան ամրոցը: Մի քարե անկանոն սանդուղք է իջնում ամրոցի դռնից: Մեջտեղը բացատ է: Աջ ու ձախ շավիղներ·

*ԽՈՋԵՆԻ*— (Խոշոր աչքերով, փքված հսկա: Գլխաբաց է, մազերն ածիլված, միայն գագաթին մի փունջ կա: Երկար բեղերը հասնում են մինչև ականջները և ավելի: Փուքսի պես է շնչում և երբեմն ինչ-որ ձայն է հանում, նման խոզի խորդալուն: Գլուխը դուրս հանելով ամրոցի պատուհանից՝ դես-դեն է մտիկ տալիս) *Հըա՜մմմ...*

*ԴԱՆԳԻՋ*— (Մույլ, դանդաղաշարժ հսկա, քնատ և ցավոտ աչքերով: Ամրոցի խորքից ձոր է տալիս) *Խոոզե՜ե՜ե՜նիի:*

*ԽՈՋԵՆԻ*— (Նույնպես ձոր տալով) *Ի՞նչ է՜է՜է՜...*

*ԴԱՆԳԻՋ*— *Խոզենի՜ի՜ի՜... լսո՞ւմ ե՜ե՜ ե՜ս...*

*ԽՈՋԵՆԻ*— *Հա՜, հա՜, հա՜... Ի՞նչ է՜է՜է՜է՜...*

*ԴԱՆԳԻՋ*— *Մի մտիկ տուր չորս կողմը, տես ինա, ջինս, մարդ, քարավան, չի՞ երևում:*

*ԽՈՋԵՆԻ*— *Լա՜ա՜ա՜ա՜վ:* (Նայում է չորս կողմը, հորանջում է, կոտրատվում և ապա խորդում) *Հը՜ա՜մմ...*

*ԴԱՆԳԻՋ*— (Խորքից) *Ղուզղուն, Ղոոբուղա...* (Գլուխը դուրս հանելով) *Ղառաղուռա՞...*

*ԽՈՋԵՆԻ*— *Էստեղ չեն, էստեղ չեն:*

*ԴԱՆԳԻՋ*— *Ո՞ւր են:*

*ԽՈՋԵՆԻ*— *Ո՜րսի են, ո՜րսի են, ո՜րսի:*

*ԴԱՆԳԻՋ*— (Մի կերպ հասկանում է, ապա գլուխը կծկելով ուսերի մեջ՝ ներս է ընկնում):

*ԽՈՋԵՆԻ*— (Դեպի ամրոցի խորքը թեքվելով) *Աղջի, Փերիշան...*

*ՓԵՐԻՇԱՆ*— (Միամիտ, խոշոր աչքերով ժպտադեմ հսկա աղջիկ: Խորքից, երկարացնելով մինչև ներս գալը) *Ի՞նչ է՜է՜է՜...*

*ԽՈՋԵՆԻ*— *Մեծ ապերը հրես կգա որսից: Պղինձները դիր կրակին:*

*ՓԵՐԻՇԱՆ*— *Լաա՜ա՜վ...* (Երկարացնում է մինչև ամրոցի խորքը գնալը)

*ԽՈՋԵՆԻ*— (Խորդում է և բեղերը ոլորելով մտիկ տալիս դես ու դեն):

ԴՈԽՈԲՈՒԴԱ— (Խորդալով ցած է դնում բեռը) Հըա՜մմմ...

ԴԱԽԱԴՈՒԽԱ— Հըա՜մմմ... (Նույնպես ցած է դնում բեռը):

ՓԵՐԻՇԱՆ— Մեծ ապեր, մենք բան գիտենք։

ԴՈԽՈԲՈՒԴԱ— Հըա՜մ... Ի՞նչ։

ՓԵՐԻՇԱՆ— Մարդահոտ է գալիս։

ԴՈԽՈԲՈՒԴԱ— (Ցույց տալով ձախ) Հըա՜մմ. ա՜յ, Դուզդունը բերում ... ճամփին գտանք։ Հըա՜մ...

ԴՈՒՋԴՈՒՆ— (Ներս է մտնում ձախից՝ շալակին Տերտերը):

ՓԵՐԻՇԱՆ— Բո՜, էս ի՞նչ բան է։

ԴԱԽԱԴՈՒԽԱ— Ո՜ւր քարշ տվիր սրան, հիվանդություն կբերի հետը։ ... եք դե՛ն գցեք։

ՓԵՐԻՇԱՆ— Ապի, ինձ տվեք՝ խաղամ։

ԽՈՋԵՆԻ— (Մոտենալով Տերտերին, ժպտալով և ճետամբրթիր նայում է ... և ապա գրկում և գցում Դորոնթիի գիրկը):

ԴՈՐՈՆԹԻ— (Գցում է Դուզդունի գիրկը):

ԴՈՒՋԴՈՒՆ— (Գցում է Դառաղուտայի գիրկը):

ԴԱԽԱԴՈՒԽԱ— (Գցում է Դանգիզի գիրկը):

ՓԵՐԻՇԱՆ— (Լաց է լինում) Վեա՜։

ԴԱՆԳԻՋ— Փի՜, մեռելի հոտ է գալիս, դե՛ն գցեք։

ԴԱԽԱԴՈՒԽԱ— Ջո՛ւրը գցեք, թող տանի...

ԴՈԽՈԲՈՒԴԱ— Չէ՛է՛է՛... Կացեք բան պիտի հարցնեմ։

ՏԵՐՏԵՐ— Ա՜ման, օրհնյալներ, բա՛ց թողեք, սիրտս կճաքի։

ԴՈԽՈԲՈՒԴԱ— Կա՜ց... Ինչո՞ւ հարևանություն չեք անում էլ... Ինչո՞ւ ... օր է էլ աղ չեք ուղարկում մեզ... Հըա՜մմմ...

ՏԵՐՏԵՐ— (Վեր թռչելով) Բոլոր աղը մատաղի ենք տվել, օրհնյալ։ Աղ ... մնացել։

ԴՈԽՈԲՈՒԴԱ— Մատա՞ղ... Հը՜, ի՞նչ մատաղ։ Հըա՜մ։

ՏԵՐՏԵՐ— Մի քաջ մարդ է ընկել մեր աշխարհքը, մատաղ ենք անում ...ան, որ նրա պատուհասից մեզ ազատե։

ԴՈԽՈԲՈՒԴԱ— Ի՞նչ մարդ է, անունն ի՞նչ է։ Հըա՜մ։

ՏԵՐՏԵՐ— Քաջ Նազար։

ԴՈԽՈԲՈՒԴԱ— Քաջ Նազա՞ր... Դոոբուզա՞, Քա՜ա՜ջ Նազա՞ր... ...րոնթի, Քա՜ա՜ջ Նազա՞ր... հո՜, հո՜, հո՜, հո՜։ (Հսկայաքար ծիծաղում է։ ...ծաղում են և մյուսները մինչև տեճալը):

ՏԵՐՏԵՐ— Դուք ծիծաղում եք, օրհնյալներ, բայց Քաջ Նազարը գերի ...րել մեր աշխարհքը։ Ջարդում է ու ջարդում։

ԽՈՋԵՆԻ— Հա՛, հա՛, հա՛, հա՛...

ԴՈԽՈԲՈՒԴԱ— Հո՛, հո՛, հո՛, հո՛...

*վեցեք։ Դուք ձեր հսկաներն եք տեսել, չեք տեսել Քաջ Նազարը։ Քաջ Նազարը գալիս է ոչնչացնելու հսկաների ցեղը։* (Երգածայն) *Ահավասիկ ամեն ասեմ ձեզ, և պատմեմ, զոր տեսի աչոք իմոք և լվա ականջոք։ Տեսիլ զարմանահրաշ։ Հինգ հարյուր հսկաներ իմ աչքի առջև չարդեց, փշրեց, փոշի շինեց, տվեց քամուն։* (Տոցից հանելով մի մասնատուփ և պատրուցով հանելով մի փոշի) *Ահա, էս մի հատիկ փոշին մնաց, այն էլ ես վերցրի հիշատակ։* (Լաց է լինում) *Մեա՜ա՜ա՜...*

ԴՈՌՈԲՈՒԴԱ— (Սաստիկ ազդված) *Դորոնթի՜ի՜, մի փոշի է մնացե՞լ... Դառաղուռա... Դուզղո՞ւն...*

ԴԱՌԱԴՈՒՌԱ— (Գլուխը բռնելով) *Գողացա՞վ։ Հըա՜մմ...* (Տերտերին) *Գողացա՞ր... Հըա՜մ...*

ՏԵՐՏԵՐ— *Չէ, աստված մի արասցե։*

ԴԱՌԱԴՈՒՌԱ— (Մոտենալով Տերտերին) *Քեզ չասի՞ թե մի վախեցնի։ Ճզմե՞ե՞մ։* •

ՏԵՐՏԵՐ— (Դոռոբուդայի ֆամակը մտնելով) *Կանիծե՜մ...*

ԴՈՌՈԲՈՒԴԱ— *Բո՜, բո՜...*

ՏԵՐՏԵՐ— *Կանիծեմ, որ ձեզ էլ Նազարը ջնջի, դնի մասնատուփը։* (Ուզում է դուրս գալ հսկաների օղակից) *Մի համփա որ տայիք՝ լավ կլինեի։ Էստեղ մի քիչ շոգ է։* (Հեռում է սարսափից)։

ԴՈՌՈԲՈՒԴԱ— *Չէ՜, չե՜նք թողնի։ Դու մեզ գիր արիր։* (Դոռոբուդային) *Քեզ գիր արեց։ Բռնի ու բաց մի թողնի դրան, մինչև գիրը չանցնի։*

ԴՈՌՈԲՈՒԴԱ— *Հը՜ա՜ա՜մ։* (Շալակում է Տերտերին)։

ԽՈՋԵՆԻ— (Նայելով դեպի ձախ) *Մեծ ապեր, մեծ ապեր, էն ովքե՞ր են։* (Ցույց է տալիս ձախակողմը)։

ԴՈՌՈԲՈՒԴԱ— *Հը՜ա՜ամ։*

ՏԵՐՏԵՐ— *Ա՜ման, Քաջ Նազա՜րն է։*

ՀՍԿԱՆԵՐ— *Հը՜ա՜մմմ...* (Սարսափում են)։

ԴԱՌԱԴՈՒՌԱ— *Բեե՜րդը մտեք։* (Վազում է ամրոցը, մյուսները հետևում են նրան)։

ԴՈՌՈԲՈՒԴԱ— (Գրկած փախցնում է Տերտերին)։

(Բոլոր հսկաները պահվում են ամրոցի մեջ: Ձախից ներս են մտնում Նազարը, Թամաղան, առույգ Տերուկը, Սաքոն, Վարժապետը և մյուս գյուղացիները)։

ՄԻ ԳՅՈՒՂԱՑԻ— *Ախպեր, էս մեր Տերտերը գնաց հսկաներին գտնե՞լ, ինքը ո՞ւր կորավ։*

ՎԱՐԺԱՊԵՏ— *Գնա՜ց շահատակ, ընկա՜վ նահատակ։ Հայրենյա՜ց ամուր Հառա՜չ...*

ԹԱՄԱԴԱ— *Է, լավ, տերտերը կորավ։ Բա հսկանե՞րն ուր կորան։*

*ԹԱՄԱԴԱ—*
*ՎԱՐԺԱՊԵՏ* } (Անհանգիստ շարժում են անում)

*ՆԱԶԱՐ*— (Վեր է թռչում) *Հը՞, հսկանե՞րն են։*

*ԹԱՄԱԴԱ— Չէ՛, դու քո բանը պատմի։*

*ՆԱԶԱՐ— Գինի՛ տվեք։ Էդ հսկաները որ չկան՝ սիրտս շատ տխուր է։ Համա մի անգամ...*

*ՎԱՐԺԱՊԵՏ— Լսի՛ր, ժողովուրդ, լսի՛ր։*

*ՆԱԶԱՐ— Կռիվ եղավ մի անգամ, գյադա, Գոգ-Մագոգաց աշխարհքում։ Հսկաներ եկան վրաս։ Հարյուրը եկան՝ փրթեցի, հազարը եկան՝ փըրթեցի։ Հետո եկա՜ն, եկա՜ն, եկա՛ն... Գալիս են, փրթում եմ, գալիս են, փրթում եմ։ Վերջը ձեռքիս թողի, ինչ ուզում է թող ինքը անի։ Էսպես ջարդելով, ջարդելով հասա Հաբեշստան։ Էն է, երբ զարթնեցի՝ տեսա, որ բոլորին էլ փոշի եմ դարձրել, տվել քամուն։* (Հանում է մի շորի փաթաթած կտոր) *Էս մի հատիկ փոշին է մնացել էդ հսկաներից հիշատակ։ Մինն էլ Տերտերի մոտ է։*

*ՀՍԿԱՆԵՐԸ*— (Գլուխները հանում են և հետաքրքիր նայում են փոշու հատիկին):

*ՆԱԶԱՐ— Էս է՝ էս հսկաների գլուխն էլ կտրեմ ու պրծնեմ։*

*ՀՍԿԱՆԵՐԸ*— (Գլուխները պահում են)։

*ԹԱՄԱԴԱ*— (Գոռում է) *Էյ, հսկաներ, ո՞ր ծակն եք մտել, հիմի՛ դուրս արեք, է՜։*

*ՆԱԶԱՐ— Կամա՜ց, կփախչեն։*

*ԹԱՄԱԴԱ— Վախենում եմ փախած լինեն։*

*ՎԱՐԺԱՊԵՏ— Հաղթությո՜ւն, փախա՜վ թշնամին։ Հերոսակա՜ն հաղթություն։*

*ԹԱՄԱԴԱ*— (Զուռնաչիներին) *Ապա մի զուռնա՛։*

*ԶՈՒՌՆԱՉԻՆԵՐ*— (Ածում են մի զվարթ եղանակ)։

*ՆԱԶԱՐ*— (Վեր է թռչում տեղից և դրոշակը սազ անելով սկսում է պախարոն արտասանել)։

Ձեռս զցեք, հում-հում ուտեմ դրանց ես,
Ոսկորները կրճըր-կրճըր ջարդոտեմ.
Ձեռս զցեք, փոշի շինեմ քամու պես,
Երկինք հանեմ, նետեմ ու փոշին կորցնեմ։
Էյ, որտե՞ղ եք, մեյդա՛ն արեք, հսկանե՛ր,
Գլուխներդ թռացնեմ, զցեմ վեր:

*ԲՈԼՈՐԸ— Ա՛յ ջան, ա՛յ ջան, ա՛յ ջան։*

ՆԱԶԱՐ— Ա՜ա՜ա՜... (Փախչում է դեպի Ղուզղունը):

ՂՈՒԶՂՈՒՆ— Հա՜մմմ... (Բազկատարած սողում է դեպի նա) *Բա՜շխի...*

ՆԱԶԱՐ— *Ա՜ա՜ա՜* (Զանազան կողմեր է վազվզում և հանկարծ վախի հատադրության մեջ գոռում է) *Էհե՜յ...* (Բռնում է ծառի բնից)։

ՂՈՌՈԲՈՒՂԱ— (Բաց թողնելով Տերտերին, չոքեչոք վազում է նրա մոտ) *Օչա՛խդ ենք ընկել, Քա՛աջ Նազար։*

ՆԱԶԱՐ— *Բը՛, բը՛, բը՛...*

ՄՅՈՒՍ ՀՍԿԱՆԵՐԸ— *Օջա՜խդ ենք ընկել, Քաաա՜ջ Նազար, բա՜շխի։*

ՏԵՐՏԵՐ— *Թողություն արա, Քա՛ջ Նազար։*

ՆԱԶԱՐ— (Տերտերին տեսնելով) *Հը՞...*

ՏԵՐՏԵՐ— *Հա՛ղթվել են, խնայիր, մեղավոր են...*

ՀՍԿԱՆԵՐ— *Բա՜շխի, Քաջ Նազար։*

ՆԱԶԱՐ— (Կասկածոտ նայում է Տերտերին, հսկաներին և ապա գլխի ընկնելով՝ ուշքի է գալիս) *Հը՜մ, էսպես էր եղել բանը։ Ապրես, Քաջ Նազար։* (Վախեցած մտիկ է տալիս Ղոռոբուղային)։

ՂՈՌՈԲՈՒՂԱ— (Ճակատը գետնին զարկելով և բարձրացնելով) *Քա՜աջ Նա՜ազար, լսել էինք անունդ, քեզ չէինք տեսել... Շատ աղաչանք ենք անում, դաս դառնաս մեր մեծավորը, մենք էլ կդառնանք քո ծառաը։ Հրամայի, աշխարհքը քանդենք, բերենք ոտդ։ Մենակ բաշխի մեզ։*

ՀՍԿԱՆԵՐ— *Բաաշխի։*

ՆԱԶԱՐ— *Գյադա, ի՞նչ է ձեր աշխարհքի անունը։*

ՏԵՐՏԵՐ— *Հսկաստա՞ն։*

ՆԱԶԱՐ— *Հսկաստան։ Լա՜վ։ Բաշխեցի՛նք։*

ՏԵՐՏԵՐ— (Խաչակնքելով) *Խաղաղություն ամենեցուն։* (Ինքն իրեն) *Հաղիվ ազատվեցինք։ Օրհնյալ լինիս, ո՜վ քաջ։* (Լռություն)։

ՂՈՌՈԲՈՒՂԱ— *Հա՜ա՜մ։ Հրամա՞ն է, վեր կենանք, մեծավոր։*

ՆԱԶԱՐ— *Վեր կենա՞ք։* (Մտածում է) *Վեր կացեք ու... մի քիչ հեռու կանգնեցեք։*

ՂՈՌՈԲՈՒՂԱ— *Թուրդ հանի, մաա՜տաղ, տակովն անցնենք։*

ՆԱԶԱՐ— (Հանում է թուրը և հսկաներն անց են կենում)։

*(Լռություն)*

ՂՈՌՈԲՈՒՂԱ— *Հիմի ի՞նչ կհրամայես, մեծաավոր։*

ՆԱԶԱՐ— *Ոչինչ չեմ հրամայում։* (Դես-դեն է նայում, որ հնար գտնի ձեռ խուչելու: Մեն է գալիս)։

ՂՈՌՈԲՈՒՂԱ— (Հետևում է նրան) *Հիմի ո՞նց է ուզում սիրտդ։ Աղա-յի սուփրան էստե՞ղ բաց անենք, թե ներսը՝ ամրոցում։ Հա՜ա՜մ...*

ՓԵՐԻՇԱՆ— (Արգելելով նրան) *Մի՛ պոկի, մի պոկի՛, փտած է։* (Հըսկաները խոզենուն նետում են դեպի խորքը)։

ՀՍԿԱՆԵՐ— (Վերջացնում են ծառ պոկելը և սկսում են պղինձները դնել խարույկի վրա)։

ՂՈՌՈԲՈՒՂԱ— (Նկատելով Նազարի մտահոգ դեմքը) *Սիրտդ նեղանում է։ Հա՛մմ... Մի արջ բերե՞մ պատռես։*

ՆԱԶԱՐ— (Վախեցած) *Չէ՛, հարկավոր չէ։*

ՂՈՌՈԲՈՒՂԱ— *Լավ խոշորները կան։* (Մյուս հսկաներին) *Հա՛մմմ, մաշը բերե՛ք։*

ՀՍԿԱՆԵՐ— *Բերո՛ւմ ենք։ Հա՛ա՛մ...* (Բերում են պղինձը, դնում Նազարի առաջին)։

ՓԵՐԻՇԱՆ— (Թևերը քշտած՝ ձեռքը կոխում է պղինձը. խառնում է չերեփով)։

ՀՍԿԱՆԵՐ— (Թփթփալով նստում են շուրջը)։

ՂՈՌՈԲՈՒՂԱ— (Նազարին) *Հա՛մմմ... սանո՛ւշ արա, մա՛տաղ, սիրտդ ի՞նչ է ուզում։ Ե՞զ։ Հա՛մմմ...* (Ավելի բարձր) *Ուղտ։ Հա՛մմ.. Փի՞ղ... Հա՛մմ...* (Թևերը քշտած հանում է մսի խոշոր կտորներ և դնում Նազարի առջև) *Անուշ արա։* (Մյուսներին) *Կերե՛ք։* (Ինքը քաշում է մի մեծ կտոր, մյուսները նույնպես թևերը քշտած հարձակվում են պղնձի վրա ու սկսում են լափել)։

ՂՈՌՈԲՈՒՂԱ— *Հա՛ա՛մ... Մուսինետի՛կ, իմաց տուր թագավորին, թող գա կռիվ անենք։ Ասա, Փերիշանին քեզ կնիկ չենք տալու։ Ասա, էլ մեր թագավորը չե՛ս։*

ՄՈՒՆԵՏԻԿ— *Աչքիս վրա։* (Ածում է պարկապզուկը՝ ձախ ձեռքի մատներով, իսկ աջով փչում է զուռնան) *Է՜յ, թագավոր, քեզ իմացում, Փերիշանը քեզ չենք տալիս։ Էլ մեզ թագավոր չես։ Արի կռիվ անենք։*

ՂՈՌՈԲՈՒՂԱ— (Վեր է թռչում) *Հա՛մմմ...*

ՆԱԶԱՐ— (Ցնցվելով) *Մնար մի ուրիշ անգամ, իմանո՞ւմ ես։*

ՂՈՌՈԲՈՒՂԱ— (Դեռ-դեռ ընկնելով, անհամբեր, կռվի տրամադրված) *Իմանո՛ւմ եմ, մատաղ, իմանում եմ...* (Հսկաներին) *Լա՛վ զինվեցեք. կռիվ պիտի տանք... Հա՛մմմ...* (Շտապ հանելով հագնում է զենք ու զրահը։ Հսկաները նույնպես։ Ապա բարձրանում է ամրոցը, այնտեղից դիտում է շրջակայքը. վազում է վար ու դարձյալ պտույտներ գործում ցեսուղեն)։

ՆԱԶԱՐ— (Նրա հետևից ման գալով) *Ը՜, ը՜, գյադա՛, ի՛նչ եմ ասում... Խաղաղությունն ավելի լավ է... Իմանո՞ւմ ես։*

ՂՈՌՈԲՈՒՂԱ— *Հը՞, հա՛։* (Մեքենաբար կրկնում է) *Խաղաղությունն*

*ՄՈՒՆԵՏԻԿ— Թշնամիները երևացի՞ն...*

*ՂՈՌՈԲՈՒՂԱ— Հա՜մ... Բերեք շուտով Նաազարի ձին։*

*ՆԱԶԱՐ— Գյադա, մի ուրիշ անգամ կանեիք։* (Հազում է)։ *Ի՞նչ դրա ժամանակն էր։*

*ՀՍԿԱՆԵՐ— Մեջտեղ բերեք Նազարի ձին,*

*Թշնամիներն երևացին։*

*ԺՈՂՈՎՈՒՐԴ— Ապրի մեր մեծ Քաջն Նազար,*

*Ո՞նց պիտ ջարդի՞ հարյուր հազար։*

(Բոլորը զինված շարժվում են առջակողմը, նսկաները, բացի Ղոռոբուղայից բարձրանում են ամրոցի գլուխը։ Հեռվից լսվում է փողերի ձայն։ Ապա ներգնեան զորքերի գոռոց)։

*ՄՈՒՆԵՏԻԿ— Զորք է գալիս, պա՛հ, պա՛հ, պա՛հ, պա՛հ։*

*ՀՍԿԱՆԵՐ— Զորք է գալիս, վա՛հ, վա՛հ, վա՛հ, վա՛հ։*

*ՂՈՌՈԲՈՒՂԱ— Քաաջ Նազարը էստեղ է, հա՜....*

*ՀՍԿԱՆԵՐ— Փախչենք, ապեր, շա՛տ են, վա՜յ, վա՜յ։*

*ՂՈՌՈԲՈՒՂԱ— Ո՞ւր եք փաախչում, շաան լակոտներ։ Հոգիներե՜րդ կհանեմ, հա՜։ Քաաջ Նազարը կթողնի՞, որ փախչենք։ Հա՜մմմ... Գուրզերդ ամուր բռնեցեք։*

*ՀՍԿԱՆԵՐ— Մե՛ծ ապեր, արի տե՛ս, շատ են։*

*ՂՈՌՈԲՈՒՂԱ—* (Բարձրանում է ամրոցը) *Բո՜օ՜օ՜օ՜... էէս ի՞նչ է։* (Վայր իջնելով և ընկնելով Նազարի ոտները) *Հա՜մմմ... Աման՜ն, Քաաջ Նազար։*

*ՆԱԶԱՐ— Աման՜ն։*

*ՀՍԿԱՆԵՐ—* (Նույնպես ընկնելով Նազարի ոտները) *Աման՜ն, Քաջ Նազար։*

*ՆԱԶԱՐ— Ա՜ման։* (Առանց զենքի դուրս է փախչում)։

*ՂՈՌՈԲՈՒՂԱ— Ո՞ւր է գնում առանց զենքի։ Բռնեցե՜ք։*

*ՀՍԿԱՆԵՐ—* (Բռնում են Նազարին և հետ բերելով զենքեր են կապում նրա վրա)։

(Նստեցնում են)։

*ՂՈՌՈԲՈՒՂԱ— Բերեք մեր ձին։* (Բերում են)։ *Նստեցրե՜ք։*

*ՆԱԶԱՐ—* (Սաստիկ անհանգիստ է։ Զուր կողմն է նայում, որ նամփա գտնի փախչելո՛ւ և երկյուղից ներգնեան ինքն իրեն քաջալերելով ու սարսափի մեջ գլուխը կորցնելով) *Ըըը՜, կռիվ է, քեզ տեսնեմ, հայ-հա՜ա՜ա՜յ։*

*ՂՈՌՈԲՈՒՂԱ— Հի՜մի, մաա՜տաղ, հի՜մի, համբերի՜։*

ՎԱՐԺԱՊԵՏ— *Ազգային ճաշի սուփրան բա՛ց արեք։*

ՄՈՒՆԵՏԻԿ— (Աշտարակից) *Փախած թշնամուց դեսպա՛ն է եկել։*

ԴՈՒՌԲՈՒԴԱ— *Հա՛ա՛մմմ...*

*Նեե՛ղն է ընկել,*
*Կաանչեք, տեսնենք,*
*Վիզը պոկենք։*

(Դեսպանին ներս են բերում)

ԴԵՍՊԱՆ— *Հաղթված, ջարդված մեր քաջ զորքից,*

*Ժողովրդից ու աշխարհքից*
*Խնդիրքով ենք եկել ահա,*
*Քաջ Նազարին խնդրենք հիմա։*

ԴՈՒՌԲՈՒԴԱ— *Հա՛մմմ... ա՛աաա՛...*

ԴԵՍՊԱՆ— *Մեր թագավորն սպանվեց էս կռվի մեջ։ Ժողովուրդն ու աշխարհքը մնացել է անթագավոր։ Հիմի մեր ջարդված զորքը, ողջ աշխարհքը խնդրում է Քաջ Նազարին, որ նա մեր աշխարհքն էլ միացնի ձեր աշխարհքին և դառնա մեր ու ձեր թագավորը։*

ԴՈՒՌԲՈՒԴԱ— (Նազարին) *Քաաջ Նազար, կուզե՞ս թաագավոր դառնաս։*

ՆԱԶԱՐ— (Ուշքի գալով, ձայնը փորն ընկած) *Բերեք, կդառնամ։*

ԴՈՒՌԲՈՒԴԱ— (Դեսպանին)

*Գնա հայտնիր ձեր քաջ զորքին,*
*Ժողովրդին ու աշխարհքին,*
*Որ մեր Նազար մեծավորը,*
*Դառավ մեր-ձեր թագավորը։*

ԴԵՍՊԱՆ— *Երթամ հայտնեմ մեր քաջ զորքին, ժողովրդին ու աշխարհքին։*

(Մեկնում է)։

ՎԱՐԺԱՊԵՏ— *Կեցցե՛ թագավոր փրկիչ Նազարը, ջարդեց հազա՛րը, ջարդի հազա՛րը։*

ԺՈՂՈՎՈՒՐԴ— *Կեցցե՛ Նազար թագավորը։*

(Զուռնաչիները նվագում են)։

ՎԱՐԱԳՈՒՅՐ

*ՄԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ— Երջանկությունը իմ էլ աչքերից քունը խլեց։ Վա-յելում եմ հարատև արթնություն մի, որ դրախտային քնի է օրինակ։*

*ՆԱԶԻՐ— Երջանկությո՜ւն։ Սա թագավոր չէր, այլ երկնային մանա-նա՜։ Եվ անձկալի՜։ Վեց նահանգ սրա օրով ես կցեցի իմ իշխանության կալվածներին։*

*ՎԵԶԻՐ— Չորս նահանգ էլ ես կցեցի։*

*ՋՈՐԱՊԵՏ— Ես կալվածատեր դառա, որ երբեք չէի լինի նախկին օրոք։*

*ՄԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ— Հոգևոր դասն էլ պարարեց օրինավոր։*

*ՆԱԶԻՐ— Միով բանիվ՝ ամենքս լավ դրստվեցինք։*

*ՎԵԶԻՐ— Դու դեռ սպասի՜ր, տեր իմ, է՜լի կդրստվենք։*

*ՄԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ— Աստված մեծ է։ Աղաչենք մի պատերազմ էլ տա։*

*ՆԱԶԻՐ— Այն աստվածը, որ մինը տվեց՝ մյուսն էլ կտա հայրաբար։*

*ՋՈՐԱՊԵՏ— Թագավորներս էլ՝ աստծու տվածից քաջալին դուրս եկա՜վ։ Սպասենք նոր հաղթանակի։*

*ՆԱԶԻՐ— Ուրեմն, տիարք, օգնենք թագավորին իր ծանր պարտակա-նության մեջ։*

*ԲՈԼՈՐԸ— Օգնե՜նք, օգնե՜նք։*

*ՆԱԶԻՐ— Եվ աստվա՜ծ պահե թագավորին։*

*ՍԵՆԵԿԱՊԵՏ—* (Անհանգիստ շարժումներով դուրս է վազում և ներս նայելով) *Գերագո՜ւյնը...*

*ԲՈԼՈՐԸ—* (Երկրպագում են և մնում երեսները գետնին)։

*ՍԵՆԵԿԱՊԵՏ—* (Ներս վազելով ու դողդոջ ձեռներով վարագույրը բաց անելով) *Ահի՜վ կացցուք։*

(Ներս է մտնում Նազարը՝ թագավոր. և շատ հպարտ գլխների վրայից անցնելով՝ առաջանում է դեպի թախտը և կանգնում է նրա մոտ՝ երեսը դեպի պալատականները։ Նրա հետևից՝ նույնպես պալատականների գլխի վրայից անցնելով գալիս է Սափոն, նոր զգեստներով ու դրոշակը ձեռքին կանգնում է նրա հետևը)։

*ՍԵՆԵԿԱՊԵՏ— Երջանիկ ընդունելություն Նազար արքային։ Օր երեն-կյարդ։ Երկյուղածությամբ առա՜ջ մատիք։ Աստվա՜ծ պահե թագավորին։*

*ԲՈԼՈՐԸ—* (Կիսաբոլոր կանգնում են Նազարի առաջ և խոնարհ երկ-րպագում) *Ամե՜ն։* (Մնում են երեսները գետնին)։

*ՍԵՆԵԿԱՊԵՏ—* (Առաջ է գալիս և ոլորած թուղթ բանալով՝ գլուխ է տալիս Նազարին և սկսում կարդալ) *Թագավո՜ր քաջ, արեգա՜կն արդա-րության, ծո՜վ խելաց, կարողության բազուկ, բերան ճշմարտության, համարձակվում եմ կարդալ այսօրվան հրամանը, որ գիշերս հրամայե-*

ՍԵՆԵԿԱՊԵՏ— (Ներս գալով) *Փոթորիկ բարկության, նոր իշխաններն ակնկալում են ունկնդրության։*

ՆԱԶԱՐ— *Հը՞։*

ՆԱԶԻՐ— *Զորքաշենցի Թամադա իշխանը և Ղոռոբուղա Բզեչխը իր խմբով։*

ՆԱԶԱՐ— *Է՛, վե՞րջը...*

ՍԵՆԵԿԱՊԵՏ— *Ասել կուզե՝ իշխանն Սենեկապետ Բռնաշենցի այլ և խոզերինչն և Վարազենի և Համհարզ նորին։*

ՆԱԶԱՐ— (Անհանգիստ շարժումով) *Ովքե՞ր են, չա՞նըմ, ասա նե՞րս գան։*

ՍԵՆԵԿԱՊԵՏ— (Ներս է հրավիրում Թամադային, Ղոռոբուղային և մյուս հսկաներին, բոլորն էլ իշխանական նոր զգեստներով)։

ՆԱԶԱՐ— (Նրանց տեսնելով) *Բո՛, Թամադա՛ն է, Ղոռոբուղա՛ն, էլի՞։ Ճանչե՛ս անեք։* (Նրանց) *Հը՞, եկա՞ք։*

ԹԱՄԱԴԱ— *Եկանք, թագավորն ապրած կենա։*

ՆԱԶԱՐ— *Լա՞վ եք։*

ԹԱՄԱԴԱ— *Փառք աստուծո, լավ ենք, թագավորն ապրած կենա։*

ՆԱԶԱՐ— *Բոլոր զորքաշենցիներիդ և հսկաներիդ մի-մի երկրի իշխան կարգեցի։ Հող ու ժողովուրդ ստացա՞ք։*

ԲՈԼՈՐԸ— *Ստացանք, թագավորն ապրած կենա։*

ՆԱԶԱՐ— *Հիմի ինձանից հրաման։ Բոլոր զորքաշենցիքդ ու հսկաներդ պիտի ապրեք պալատիս մեջ, ղոլամ պիտի դառնաք, անձ պիտի պահեք։ Ձեր հողերը կտաք կառավարչի, ժողովուրդը կաշխատի՝ դուք կուտեք։ Էլ հրաման չէ, որ դուք աշխատեք։ Հիմի ամենքդ ազնիվ եք։ Իմացա՞ք։*

ԹԱՄԱԴԱ— *Իմացանք, թագավորն ապրած կենա։*

ՆԱԶԱՐ— *Ղոռոբուղա, իմացա՞ր։*

ՂՈՌՈԲՈՒՂԱ— *Իմա՜ցա։ Հա՜ա՜մմմ... Թագավո՜ր։*

ՆԱԶԱՐ— *Կամա՜ց։ Ձենդ քաղաքավարի՛ հանի։ Պալատ է, ախոռ չէ։ Հայվա՛ն։* (Ամենքին) *Դե, հիմի սաղ եղեք։* (Սաքոյին) *Իշխան Սաքո՛. դրոշակը թող։*

ՍԱՔՈ— (Դրոշակը տնկում է թախտի ծայրին)։

ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ— (Խոնարհ գլուխ են տալիս ու հեռանում)։

(Սաքոն հեռանում է նրանց, Սենեկապետը հեռանում է արագ)։

ՆԱԶԱՐ— (Լավ ընկողմանելով թախտի վրա) *Ուխխա՜յ... Քե՜ֆ...*

ՍԵՆԵԿԱՊԵՏ— (Ներս է մտնում մի մանկլավիկի հետ, որ ձեռին մատուցարան ունի՝ վրան հիշմիշ։ Սենեկապետը նշան է անում մանկլավի-

բում են Նազարի քիթը) *Այդպես։ Հիմա յոթն կաթիլ հնդկական վարդեջրի կաթեցրեք գնչին շնորհաց աղբյուրի։ Այդպես։ Ղենջակ։* (Սրբում են դունչը) *Երեք կաթիլ արաբական ստաշխենի սքանչելյաց ծոծրակին։ Այդպես։ Ղենջակ։ Ամենայն զգուշությամբ և երկյուղածությամբ երեք անգամ կաթիլ Շիրազի վարդեջուր՝ ամպաշուք հոնքերին և ընչացքներին։ Այդպես։ Ղենջա՛կ։*

*ՆԱԶԱՐ—* (Տամածռելով դեմքը և աչքերը ճպճպացնելով) *Կացե՛ք, կացե՛ք, հայվաննե՛ր, աչքերս լցվեցին։*

*ՍԵՆԵԿԱՊԵՏ—* *Դազա՛ր պահ մի։*

*ՆԱԶԱՐ—* (Հոտոտելով օդի մեջ) *Հը՛մ... Լավ հոտ ունի անիծածը։ Ապա մի էն թասի մեջ մի քիչ ածեք բերեք։* (Բերում են: Խմելով) *Լավն է։ Թո՛... զուր տեղը ինչի՞ եք փչացնում։ Էլ չփչացնեք։ Հարկավոր չէ։ Ամեն օր բերեք, ես կխմեմ։ Հիմի՝ յալլա՛։*

*ՄԱՆԿԼԱՎԻԿՆԵՐ—* (Հավաքում են շշերն ու սրբիչները և գնում: Սենեկապետը հետևում է նրանց):

*ՆԱԶԱՐ—* (Թիկն է տալիս ու ֆիշմիշ ուտելով, սկսում է երգել: Նրան ձայնակցում է Սաքոն) *Աման է՛յ, այ ջա՛ն, ջա՛ն, ջա՛ն, էյ ամա՛ն, ամա՛ն։*

*ՍԵՆԵԿԱՊԵՏ—* (Ներս մտնելով) *Ունկն ողորմածության։ Մի գեղջուկ կին է եկել և հրամանոցդ տեսությունն է խնդրում։*

*ՆԱԶԱՐ—* *Հա, հետո՞։ Իշի՛ թոռ։*

*ՍԵՆԵԿԱՊԵՏ—* *Մի գեղջուկ կին է եկել, կհաճի՞ս արժանացնել իրեն արեգնատեսիլ երեսհաքքիդ։*

*ՆԱԶԱՐ—* *Ջեմ հասկանում ինչ ես ասում, դնա ասա՝* (Երգելով) *Հա՜...*

*ՍԱՔՈ—* (Երգում է) *«Գնա ասա հա՜»...*

*ՍԵՆԵԿԱՊԵՏ—* (Գնում է):

*ՈՍՏԻԱՆ—* (Ներս է մտնում և կանգնում շեմքին):

*ՆԱԶԱՐ—* (Չի նկատում նրան, շարունակում է երգել):

*ՈՍՏԻԱՆ—* (Մի քայլ առաջ է գալիս):

*ՆԱԶԱՐ—* (Նայելով նրա կողմը) *Հը՞, ո՞վ է։*

*ՈՍՏԻԱՆ—* (Առաջ գալով): *Ջես էլ ուզում ճանաչե՞ս... Ե՛ս եմ, Ոստիա՛նը։*

*ՆԱԶԱՐ—* *Փիե՞... Աղջի Ոստիա՞ն, դու ե՞ս։ Արի՛, արի՛։*

*ՈՍՏԻԱՆ—* *Վա՞յ։ Էս դրո՛ւստ է։ Էս ի՞նչ բան է։ Երա՞զ է։* (Առաջ է գալիս և զարմացած նայում Նազարին) *Էս ի՞նչ բանի ես, ա՛յ մարդ։*

*ՆԱԶԱՐ—* *Տեսնում ես, էլի։ Աշխարհքը բանս մեջին։*

*ՈՍՏԻԱՆ—* (Տարակուսելով) *Վա՞յ, ինձ ասում էին, չէի հավատում։ Իսկի էս դրո՞ւստ է։*

*ՆԱԶԱՐ—* *Դրո՛ւստ է, Ոստիան խանում, դրուստ է։* (Մոտենում է և

կապետի ցուցմունքով, սպասավորները հագցնում են Նազարին և այս մատուցարանը դնում Ուստիանի առջև, որ գյուղական կենաց նման խունչիկ-մունչիկ անելով փոցնում է) *Հիմա էլ գնա՛ սովի թագս բեր։* (Սենեկապետը գնում է։ Նազարը ձգվում է թախտի վրա) *Օխխա՜յ... էո՜ֆ... ա՜յ տղա, ի՛նչ լավ բան է թագավորությունը։ Ափսոս չէ՞։ Ի՛նչ էի անխելքացել, էնքան ժամանակ մնացել գեղում վեր ընկած։ Մատս մատիս չեմ կպցնում։ Կե՛ր, խմի՛, քնի՛, վե՛ր կաց, գնա բաղնում մա՛ն արի, եկ նա՛շդ անուշ արա, հետո թի՛նկը տուր բարձին ու նարգիլե քաշի։* (Երգում է) *Ա՜ման, ա՜ման, այ ջա՜ան։*

*ՍԱՔՈ—* (Ձայնակցում է)։

*ՍԵՆԵԿԱՊԵՏ—* (Բերում է թագը և դարձյալ նույն ձևերով դնում Նազարի գլխին, որը դեռ երգում է)։

*ՆԱԶԱՐ— Մի՛ սխմի, հայվա՛ն։* (Ուստիանին) *Հա՛, առավոտից, ախչեր ջան, նստում եմ թախտը ու հրամայում եմ մինչև ճաշ։ Հետո բերում են ճաշը, ու աչքդ բարին տեսնի՝ գնում են առջևդ լավ եղը, մեղրը, կարագը, գաթան, գառան փլավը։ Անո՜ւշ արա։*

*ՈՒՍՏԻԱՆ— Ե՞ս էի, որ չորթան էլ չունեի տանը։*

*ՆԱԶԱՐ— Պալատս, ախպորս ասեմ՝ հարստության ծով է։ Հարյուր ու հինգ հազար ծալք տեղաշոր, լավ զութնի յորղան-դոշակ մենակ ես վերի բլոշկում կա։* (Սենեկապետին) *Գյադա, աշխարհագը բեր, բանեմ։*

*ՍԵՆԵԿԱՊԵՏ—* (Գնում է)։

*ՈՒՍՏԻԱՆ— Վո՜ւյ, ի՞նչ լավ է։ Ասել է մեզ համար կապրենք հիմի։*

*ՆԱԶԱՐ— Կապրենք... քեփ կքաշենք, ասա։* (Երգում է կարճ) *Ա՜ման, ամա՜ն, այ ջաաան։*

*ՈՒՍՏԻԱՆ— Կապրենք ու սրանից հետո էլ իրար դիպչողական խոսք չենք ասի։ Մարդ ու կնիկ ենք՝ ի՞նչ ունենք բաժանելու։ Էսօր-էսօր դու խադավոր ես, ես՝ թագուհի։ Մեզ համար հիմի սազական չի հասարակի պես ժաժ գալը, կռվելը, ես ի՞նչ իմանամ։*

*ՍԵՆԵԿԱՊԵՏ—* (Բերում է աշխարհագունդը սպասավորի ձեռքով, մատուցանում է Նազարին և դուրս ելնում)։

*ՆԱԶԱՐ— Լավ կյանքի մեջ ընկա։ Ուստիան, լավ, ափսոս առաջ եկել։ Ասում եմ երազ է, էլի։* (Դեպի դուրս) *Է՜յ, գյադա, Սենեկապետ* (Սենեկապետը ներս է գալիս) *Մո՛տ արի։* (Թեթև ապտակ է տալիս նրան) *Հը՜...*

*ՍԵՆԵԿԱՊԵՏ— Ի՞նչ կհրամայես, տե՛ր իմ։*

*ՆԱԶԱՐ—* (Քթիցփրթնում թափ է տալիս) *Հը՜...* (Սպասում է) *Ցավե՞ց։*

*ՍԵՆԵԿԱՊԵՏ— Ցավեց, տեր իմ։*

*ՆԱԶԱՐ—* (Բռնում է Սենեկապետի ականջը։ Ուստիանին) *Ածա՛ն, հիմի տես։* (Հուպ է տալիս։ Սենեկապետը աշխատում է դեմքի կծկումները

բան կարգի՞ն է, որ կպրծնես՝ իմաց արա, գնանք բաղչա։ Իշխան Սաքո՛, դրոշակն առ։ (Սաքոն բռնում է դրոշակը) Զարադա՛ր, խազնադա՛ր։

ԶԱՐԱԴԱՐ—
ԽԱԶՆԱԴԱՐ } (Ներս ընկնելով) Հրամայի, թագավորն ապրած կենա։

ՆԱԶԱՐ— Առաջ ընկեք, գնանք տեսնենք տերության գործերը ի՞նչ հալի են։ (Զարադարն ու խազնադարը մեջքները կռացած՝ առաջ են ընկնում։ Նազարը հետևում է նրանց և դուրս ելնելով դիմաց դռնից բարձրանում է ներսից երևացող պատշգամբը և սկսում է դիտել չորսբը։ Սաքոն նրա մոտ բռնում է դրոշակը։ Իսկ Զարադարն ու խազնադարը ծածկվում են պատի այն կողմը)։

ՈՒՍՏԻԱՆ— (Վեր է կենում, որ գնա, բայց մի քան մոտեցնելով կանգ է առնում և դառնում Սենեկապետին) Ի՞նչ ես ասում, գյա՛դա, լսո՞ւմ ես։

ՍԵՆԵԿԱՊԵՏ— Գերապատիվ, այո։ Արթուն է ականջս լսելու զույգն հրամանիդ։

ՈՒՍՏԻԱՆ— Չե՞ս իմանում ո՛նց դառավ թագավոր։ Ախր Նազարս տանը մի քիչ վախկոտ էր։

ՍԵՆԵԿԱՊԵՏ— (Սարսափից ժպտալով) Ականջս չի լսում, համեստափայլ թագուհի։

ՈՒՍՏԻԱՆ— (Բարձր) Ասում եմ, էս մարդս առաջ վախկոտ էր, ո՞նց դառավ թագավոր։ Էլի՞ չլսեցիր։

ՍԵՆԵԿԱՊԵՏ— Կրկին չլսեցի, լուսեղեն, խնայիր, ես այստեղ չե՛մ... ես չկա՛մ...

ՈՒՍՏԻԱՆ— (Շարժվելով դեպի դուռը) Գլուխս մեռնի, թե բան եմ հասկանում։ (Սենեկապետին) Էս դռնո՞վ պիտի գնանք։

ՍԵՆԵԿԱՊԵՏ— Գերաճշմարիտ, այո, այդ դռնով, երանություն տիեզերաց։

ՈՒՍՏԻԱՆ— Որ ասում եմ՝ երազ է։ (Դուրս է գնում։ Սենեկապետը հետևում է նրան)։

ՆԱԶԱՐ— (Այվանից դեպի դուրս) Է՛յ, է՛յ, է՛յ, է՛յ, է՛յ, էդ ո՞վ է էդ գյադեն։ Խարջը չի բերել, ձիաբեռ է տանում տո՞ւն։ Տվե՛ք դրա կարկաժին։ Տվե՛ք էդ հառամզադին, էս է վեր եկա, հա՜ա՜ա՜...

ՍԵՆԵԿԱՊԵՏ— (Վերադառնալով չղջիկի պես կծկվում է վարագույրի մոտ և սպասում։ Ներս են մտնում Նազիր-Վեզիր, ապա և հետզհետե զորավարներ և այլ պալատականներ)։

ՆԱԶԻՐ— (Սենեկապետին գլուխ տալով) Տեր ի՛մ։

ՍԵՆԵԿԱՊԵՏ— (Գլուխ տալով) Տեր ի՛մ։

(Վեզիրը և մյուսները գլուխ տալով Սենեկապետին նույն խոսքն են փոխանակում)

*կապել և հարավից, հյուսիսից, արևելքից և արևմուտքից առաջ են խաղում մեր երկրի վրա։*

ՆԱԶԱՐ— *Է՜, թագավոր եղանք՝ պրծանք։ Էլ ի՞նչ են ուզում։ Նոր բան կա՞։*

ՆԱԶԻՐ— *Ուզում են մեր տերությունն ու թագը խլել։*

ՆԱԶԱՐ— *Թագը խլե՞ն։ Ո՞նց թե...* (Հանելով թագը և տալով Սենեկապետին) *Գյադա, տար պահի։ Տա՛նց կտամ դրանց թագը։* (Սենեկապետը առնում է թագը և տանում)։

ԶՈՐԱՎԱՐ— *Թագավոր քաջ։ Արդյոք զո՞րք կապենք, թե՞ դարձյալ դու մենակ անձնական քաջությամբդ կխորտակես հանդուգն թշնամուն։ Ի՞նչպես կհրամայես։*

ՆԱԶԱՐ— *Ի՞նչ պիտի հրամայեմ։ Գնացեք կռվեցեք։*

ԶՈՐԱՎԱՐ— *Ինչպե՞ս, մե՞նք կռվենք, թագավոր քաջ։*

ՆԱԶԱՐ— *Բա ի՞նչ, ես պիտի՞ կռվեմ։*

ԶՈՐԱՎԱՐ— *Թագավոր քաջ, ես ուզում եմ ասել, որ դու կառաջնորդես՝ և զորքը հետևից կգա։*

ՆԱԶԱՐ— (Ծվտացնելով) *Ծհյո՛ւֆ... պրծա՛վ, էլ Նազարը կռիվ չի՛ գնա։ Ո՛նց որ կուզեք՝ արեք։*

ԶՈՐԱՎԱՐ— *Քաջ հրամայեցիր, թագավոր քաջ։ Բայց եթե դու չգաս՝ զորքը մենակ պիտի գնա՞ թշնամու դեմ։*

ՆԱԶԱՐ— *Թող մենակ գնա։ Ամեն անգամ ե՞ս պիտի գնամ։*

ՆԱԶԻՐ— *Թագավորն ապրած կենա։ Այստեղ մի դժվարություն կա։*

ՆԱԶԱՐ— *Ի՞նչ դժվարություն։*

ՆԱԶԻՐ— *Զորքը շատ կջարդվի։*

ՆԱԶԱՐ— *Ջարդվում է՝ ջարդվի. շատ վեչս է։*

ՆԱԶԻՐ— (Ուրախացած) *Օհ, թույլ ես տալի՞ս...*

ԲՈԼՈՐԸ— (Սաստիկ ուրախացած) *Երջանիկ բան եղավ։*

ՆԱԶԻՐ— *Այսպես՝ առնվազը քառասուն հազար մարդ կջարդվի։*

ՆԱԶԱՐ— *Քառասուն հազա՞ր։ Լավ, մեր աշխարհքում ինչքա՞ն մարդ կա՝ թե որ էդքանը ջարդվի։*

ՎԵԶԻՐ— (Թղթակալը բանալով և նայելով) *Ուղիղ հարյուր հազար րյուր և հազար ինը հարյուր հինգ մարդ։*

ՆԱԶԱՐ— *Որ էդպես է՝ թող ջարդվի։ Գնացեք, ասեք թող կռվեն։*

ԲՈԼՈՐԸ— (Սաստիկ ուրախ) *Աստված պահի թագավորին։* (Գլուխ են տալիս և հեռանում։ Դուրսը լսվում են փողերի ձայներ, ռազմական շռինդ, թմբուկ, կեցցեներ, մունետիկի ձայնը. «Պատերա՛զմ»... և այլն, որ հետզհետե դադարում է)։

ՆԱԶԱՐ— *Հա՛, թագավորական պարտքս կատարեցի։ Հիմի թող նրանք*

*ՈՒՍՏԻԱՆ— Ասում ես բախտի բա՞ն, հը՞...*

*ՆԱԶԱՐ— Դրուստն ես ուզո՞ւմ։ Մի ժամանակ կար, նեղը որ ընկնում էի՝ վախում էի։ Վերջը տեսա, որ ամեն տեղ էլ դուրս եմ պրծնում։ Հիմի էլ տեսնում եմ, որ հե՛րն անիծած... քե՛ֆ արա, մարդիկ էնքան սարսաղ են, որ ամեն տեղ էլ կպրծացնեն։ Սարսաղ աշխարհք է, սարսաղ մարդիկ։ Աշխարհքը էսպես սարսաղ է եկել, սարսաղ էլ պիտի գնա։* (Երգում է) *Ա՜ման, ամա՜ն, այ ջա՜ սան։*

*ՄՈՒՆԵՏԻԿ—* (Դռնից) *Կոչնա՛ա՛ա՛կ։* (Աղմուկ է լսվում, որ հետզհետե մոտենում է)։

*ՆԱԶԱՐ—* (Վեր թռչելով) *Գյադա՞։ Սենեկապե՞տ։* (Սենեկապետը ներս է վազում) *Գյադա, էս ի՞նչ է։*

*ՍԵՆԵԿԱՊԵՏ— Այլակերպում է վիճակը, տեր իմ։*

*ՆԱԶԱՐ— Ղոլամներս կանչի, ի՞նչ ես դուրս տալիս։* (Սենեկապետը դուրս է վազում և իսկույն ներս գալիս Թամաղայի, Սաֆոյի, Ղոռոքուղայի և մյուս նոկաների հետ)։

*ՆԱԶԱՐ— Հա, էստեղ ե՞ք։ Կանգնեցեք էստեղ, տեսնենք ի՞նչ բան է։*

*ՆԱԶԻՐ—* (Ներս գալով) *Կռիվը մեծացավ, արքայից արքա։ Տագնապ է։* (Դուրս է վազում)։

*ՆԱԶԱՐ—* (Մյուսներին) *Գնացեք դռանը կանգնեցեք։* (Թամաղան, Սաֆոն, Ղոռոքուղան դուրս են ելնում)։

*ՈՒՍՏԻԱՆ— Էս ի՞նչ զուլում էր։ Անչախ իմ թագուհի ժամանա՞կս պիտի էդ շները թափվեին վրադ։*

*ՆԱԶԱՐ—* (Անհանգիստ) *Գյադա՞։ Էս էսպես չի լինի։* (Պատրաստվում է փախչելու) *Հը՞։* (Աղմուկը մեծանում է) *Քաղաքը մտան։* (Դեսուդեն է ընկնում փորը բռնած) *Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ...*

*ՈՒՍՏԻԱՆ— Այ մարդ, ի՞նչ եղավ։*

*ՆԱԶԱՐ— Ջահրումար եղավ—թագավորություն չեղավ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ... փութթունա է, տերությունը խառնվեց։*

*ՈՒՍՏԻԱՆ— Հը՞... տերությո՞ւնը... ամա՛ն։* (Դեսուդեն է ընկնում և զանազան թանկագին իրեր է կոխում գրպանը։ Հանկարծ կանգ է առնում և ականջ դնում) *Հե՞։* (Աղմուկը մեծանում է) *Չէ, մեծացավ։* (Ծոցն է դնում զանազան իրեր)։

*ՆԱԶԱՐ— Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ...* (Վազվզում է զանազան կողմեր)։

*ՍԵՆԵԿԱՊԵՏ—* (Ներս վազելով) *Օ՜ ո ո... Գերագույն... օգնության հասիր...* (Դուրս է վազում)։

*ՍԱՔՈ—* (Ներս է վազում) *Բը՛, բը՛, բը՛, բը՛...*

*ՌՈՍՏԻԱՆ*— (Խնդրուքի տալով) *Վա՜յ, ինչ լավ բան է թագավոր-թագուհին։*

*ՆԱԶԱՐ*— *Բա՜, քեֆ սրա՛ն կասեն* (Սաքոյին) *Գյադա՛, բաց արա դուռը։*

*ՍԱՔՈ*— (Բաց է անում և գալիս նորս դրոշակով կանգնում Նազարի մոտ)։

*ՍԵՆԵԿԱՊԵՏ*— (Ներս է մտնում նշանազգեստի գլխարկով և առանձին ձևերով) *Արքայից արքա, Նազիր-Վեզիրը, պալատականները ընդունելություն են խնդրում։*

**ՆԱԶԱՐ**— *Հրաման եմ անում, որ ներս գան։* (Սենեկապետը դուրս է ելնում։ Ներս են գալիս Նազիր-Վեզիրը, զորավարներ) *Ի՞նչ կա, ի՞նչ եք լրար անցել։*

*ՆԱԶԻՐ*— *Թագավորն ապրած կենա։ Ուրախացնում ենք ձեր արքայական սիրտը մեծ ուրախությամբ։ Անարգ թշնամին խորտակված է։*

*ՆԱԶԱՐ*— *Շատ լավ բան է եղել, գյադա՜։*

*ՆԱԶԻՐ*— *Քո ահեղավիթխար տեսքը որ տեսան՝ ոչնչացան։ Տասը թագավորն էլ սպանված են պատերազմի դաշտում։ Մեր քաջարի զորքը, շնորհիվ քո թագավորական խելքի իմաստության և քաջության՝ անօրինակ գրոհով տապալեց թշնամուն։*

*ՆԱԶԱՐ*— *Շատ լավ բան է եղել, գյադա՜։*

*ՎԵԶԻՐ*— *Կեցցե՛ թագավոր քաջը։*

*ԲՈԼՈՐԸ*— *Կեցցե՛ թագավոր քաջը։*

*ՆԱԶԻՐ*— *Թագավո՛ր քաջ։ Ժողովուրդն անհամբեր է երկնային երեսհարքդ տեսնելու։ Աղաչում է, քո հաղթության այս մեծ օրը գոնե մի անգամ երջանկացնես ժողովրդին և անձամբ դուրս գաս նրա ողջույնը ընդունելու։*

*ՆԱԶԱՐ*— *Լավ։* (Վեր է կենում և բարձրանում պատշգամբը. նրան հետևում է Սաքոն դրոշակով)։

*ՍԱՔՈ*— (Ժողովրդին) *Թագավո՛րը։*

*ԺՈՂՈՎՈՒՐԴ*— (Դրսից) *Կեցցե՛ մեր քաջ թագավորը։*

*ՆԱԶԱՐ*— (Ձեռով նշան է անում ժողովրդին, որ լսեն) *Շատ շնորհակալ եմ ժողովրդից։*

*ՆԱԶԻՐ ԵՎ ՄՅՈՒՍՆԵՐԸ*— (Արտասվակալելով) *Ի՜նչ երջանկություն։*

*ԺՈՂՈՎՈՒՐԴԸ*— *Կեցցե, կեցցե, կեցցե՜ե՜ե՜,*
*Կեցցե, կեցցե, կեցցե՜ե՜ե՜։*

*ՆԱԶԱՐ*— *Զորքին և ժողովրդին ճաշ տվեք։*

*ՆԱԶԻՐ ԵՎ ՄՅՈՒՍՆԵՐԸ*— *Ի՜նչ առատաձեռնություն։*

*ՆԱԶԻՐ— Կհամարձակվե՞նք հեռանալ, անձրև կենաց։*

*ՆԱԶԱՐ— Կացեք, գյադեք։ Էգուց առավոտ կգաք, որ ես իմ ողջ տե-րության թագավորական խոսք պիտի ասեմ։ Հիմի հրաման է ինձնից, որ հեռանաք։*

*ԲՈԼՈՐԸ— Աստված պահե թագավորին։* (Գնում են)։

*ՈՒՍՏԻԱՆ—* (Նրանց գնալուն պես՝ վեր է կենում և սկսում ինչ-որ բան որոնել զանազան անկյուններում և գտնելով մի լայն կտավ՝ բերում է մեջտեղ ու կապում ջվալի պես)։

*ՆԱԶԱՐ— Էդ ի՞նչ բանի ես, այ կնիկ։*

*ՈՒՍՏԻԱՆ— Հազիր ես իմ ձեռքով կպահեմ ու մի քնչում կտեղավորեմ։ Դու ասում ես երազ չէ։ Ո՞վ է իմանում։ Աշխարհք է, մին էլ տեսար գուցե ելավ, որ երազ է։ Ջեռնեքս մի բան էլ է կունենանք։*

*ՆԱԶԱՐ— Քեֆ արա, ջանը՛մ. բախտը կբերի։ Ամա՜ն, ամա՜ն, այ չ[illegible]՜աան։*

*ՈՒՍՏԻԱՆ—* (Կապած բոկը քաշելով) *Այ մարդ, խաղի ժամանակը չի։* (Բոկի ծայրը նրան տալով)՝ *Քա՜շի, մի պնդացնենք։ Քա՜շի...* (Երկուսով քաշում են)։

**ՎԱՐԱԳՈՒՅՐ**

ՏԵՐՏԵՐ— Եվ եղիցի՛։

ԲՈԼՈՐԸ— Ամե՛ն։

ՆԱԶԻՐ— Սովեր սատկո։ Երջանիկ միտք է ծագել արքայական գլխիդ ․․եչ։ Հրամայիր՝ կատարենք։

ՆԱԶԱՐ— Հիմի ես հրամանք եմ անում թագավորական։ Գնացեք նոր ․րջ կապեցեք և հրաման տվեք իմ կողմից, որ գնա ողջ աշխարհքի վրա, ․յանի ու բերի ինձ։ Ժողովրդին էլ հրամանք՝ որ նոր հարկեր տա։ Իմա․ա՞ր։

ԲՈԼՈՐԸ— Իմացանք, թագավոր սուրբ։

ՆԱԶԱՐ— Դոռոբուղա, իմացա՞ր։

ԴՈՌՈԲՈՒԴԱ— Հա՛մմմ, իմաացա, թաագավո՛ր։

ՆԱԶԱՐ— Այ զահրումա՛ր քեզ, քար ու քացա՛խ։ Քաղցրացրու ձենդ․ ․․՛, դու էլ, Ջեզավ, որ մի քաղաքավարություն սովորեցնեմ։ Հայվա՛․ ․երտերին) Հոգևոր տեր։ Դու էլ գնա, հոգևոր դասը առ խաչ-խաչվառ․ ․ի ինձ եկեղեցի տար։ Աղոթք սիտի անեմ աշխարհքի փրկության հա․ ․։ (Բոլորին) Դե, հիմի հայդե, թագավորական խորհուրդ ունիմ կնկանս ․․․։

ԲՈԼՈՐԸ— Աստվա՛ծ պահե թագավորին։ (Գնում են, բացի Նազիր-Գե․ ․ից):

ՄՈՒՆԵՏԻԿ— (Դրսից) Պատերա՛ա՛ա՛զմ... (Աղմուկ է լսվում, որին ․․ևում է դոլ-զուռնայի ձայնը):

ՆԱԶԻՐ— (Դուրս է գնում ներքևի պատշգամբը) Լսեցե՛ք, ո՛վ զորք ու ․ողովուրդ։ Մեր ազատարար և սուրբ թագավորը բազմաթիվ թշնամինե․ ․ց մեր երկիրը ազատելուց հետո՝ աստվածային սուրբ հոգու զորությամբ՝ ․․ր է կենում ազատելու՝ ամբողջ աշխարհը՝ անարժան թագավորներից։ ․․․ագույն հրաման է, որ ժողովուրդը հարկ տա և զորքը գնա տիրի ամ․ ․ողջ աշխարհքին։ Հաջողություն թագավորին և հաղթությո՛ւն ձեզ։

ՋՈՐՔ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴ— (Դրսից) Կեցցե՛ մեր քաջ թագավորը։ (Ոտքը․ ․․ մի փողեր, երգ, զուռնա, զենքի շառաչ, որ հեռանում է)։

ՍԵՆԵԿԱՊԵՏ— (Ներս մտնելով) Ժպի՛տ հյուրընկալության, թագուհին ․․րեհաճում է ընդունվելու։

ՆԱԶԱՐ— Հը՞։

ՍԵՆԵԿԱՊԵՏ— Թագուհին գալիս է։

ՆԱԶԱՐ— Գալիս է՝ թող գա. ի՞նչ ես նախրի իշի պես առաջ վազում։ (Սենեկապետը գնում է) «Թագուհին»։ Աղունակի ձո՛ւ է։ Մերաշ չփխվի՛։ (Ներս է մտնում Ուստիանը թագուհու զգեստներով):

ՈՒՍՏԻԱՆ— (Ծանր ու բարակ առաջանալով դեպի Նազարը և նրա

րում են հեռվից) *Էո՜ֆ, Լաղա՜թ։* (Հանկարծ բրնձի հատիկն ընկնում է Նազարի քիթը)։

ՆԱԶԱՐ— (Փռշտալով և դեմքը ծամածռելով) *Է՛, է՛, է՛...*

ՌՈՍՏԻԱՆ— *Ամա՜ն, ի՞նչ է...*

ՄԵՆԵԿԱՊԵՏ— *Արհավի՜րք, արհավի՜րք, կոչնա՜կ... Բրնձի հատիկ ընկավ Գերագույնի քիթը...* (Ներս են վազում բոլոր պալատականները. դրսից լսվում է) *«Արհավի՜րք»։* (Կոչնակ են զարկում)։

ԲՈԼՈՐԸ— *Արհավի՜րք...* (Զոռում են)։

ՆԱԶԱՐ— (Փռշտում է և ազատվում բրնձի հատիկից)։

ՆԱԶԻՐ— *Խոհարարն է մեղավոր։*

ԲՈԼՈՐԸ— *Ի՞նչ ոճիր։*

(Դեպի դուրս)։

ՎԵԶԻՐ— *Կտրեցե՛ք խոհարարի գլուխը։* (Գնում են հրամանը կատարելու)։

ՆԱԶԱՐ— *Փլա՛վ տվեք...*

ՏԵՐՏԵՐ— *Հրաշագործ փրկություն արքային մերո։*

ԲՈԼՈՐԸ— *Փա՜ռք տիրոջ...* (Արտասվում են)։

ՄԵՆԵԿԱՊԵՏ— (Դեպի դուրս) *Ցնծությո՜ւն. ժողովո՜ւրդ...* (Դրսից ուրախության ձայներ, կոչնակ և այլն) *Հայտնվեց հատիկը վեհի քթից։*

ՄԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ— (Ներս գալով) *Թագավոր մեծ, խոհարարի գլուխը կտրեցին։*

ՌՈՍՏԻԱՆ— *Կա՛րեմ բերանը. շատ էլ լավ արին, թագավորական փլավըն էսպե՞ս կեփեն...*

ՆԱԶԱՐ— *Դե, գնացե՛ք, գնացե՛ք, յա՜լլա։* (Բոլորը դուրս են գնում) *Ինչ էի ասո՞ւմ։ Իշի կտորներ։ Թողնո՞ւմ են, որ մարդու միտքը տեղը մնա։ Հա՛։ Փլավից էլ մի քիչ դեսն արեք։* (Հեռացնում են, ուտում է) *Էո՜ֆ։ Գինի լցրեք։* (Նազիր Վեզիր, Զորավար և պալատականներ ներս են վազում)։

ՆԱԶԻՐ— *Թագավոր քա՛չ։ Հազար յոթ հարյուր մարդ կլի ջարդվեց։*

ՆԱԶԱՐ— *Դրանք էլ ի՞նչ հավես արին ջարդվելու։ Փլավի՞ն են քշում։* (Լռություն) է, *լավ, ինչի՞ էին ջարդում։*

ՆԱԶԻՐ— *Չեն կարողանում, տեր իմ։*

ՆԱԶԱՐ— *Գնացեք ասեք կարողանան։ Ջա՛նըմ, կռիվն ի՞նչ բան է, որ չեն կարողանում։ Իշխան Սաքո...*

ՍԱՔՈ— (Վախեցած) *Ի՞նչ է, թագավորն ապրած կենա...*

ՆԱԶԱՐ— *Մի գնա փըթի էդ թշնամուն...*

ՍԱՔՈ— *Բը՛, բը՛, բը՛, բը՛... Գնա՞մ։*

...ոյույնը հենց նոր ավարտեց նարգիլեի առաջին կրակը: Երկու կրակ ևս կավարտի և ես կհայտնեմ:

ԶՈՐԱՎԱՐ— Ուրեմն հուսամ քո անձնվիրության վրա, տե՛ր իմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ— Կատարելապես, տե՛ր իմ:

ԶՈՐԱՎԱՐ— (Գնում է):

(Ներս են մտնում Նազիրը և Վեզիրը)

ՆԱԶԻՐ—<br>ՎԵԶԻՐ— } (Գլուխ տալով Սենեկապետին) Տե՛ր իմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ— (Գլուխ տալով) Տե՛ր իմ:

ՆԱԶԻՐ— Հուսանք, որ նոր լուրերը հայտնել եք արքային:

ՍԵՆԵԿԱՊԵՏ— Ինձ ոչինչ հայտնի չէ: Դուք որևէ բա՞ն գիտեք, տյարք իմ:

ՆԱԶԻՐ— Կատարելապես ոչինչ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ— Ուրեմն ի՞նչ նոր լուր է, տյարք:

ՎԵԶԻՐ— Ներիր, տեր իմ: Կարծես նոր լուր ասիր:

ՍԵՆԵԿԱՊԵՏ— Ոչ, պարզապես սայթաքումն բարբառի:

ՆԱԶԻՐ— Եվ ի՞նչ է քեզ հայտնի, տեր իմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ— Ականջս խուլ է և ինքս այնքան մտազբաղ... (Լռություն) Իսկ...

ՆԱԶԻՐ—<br>ՎԵԶԻՐ— } Հա՞...

ՍԵՆԵԿԱՊԵՏ— Բա՞ն ասիք, տյարք:

ՆԱԶԻՐ—<br>ՎԵԶԻՐ— } Ոչինչ

ՎԵԶԻՐ— Ինչպե՞ս է քո կենցաղավարությունը:

ՍԵՆԵԿԱՊԵՏ— Գերերջանիկ: Աստված պահե թագավորին: (Լռություն) Սո՞ղջ եք, տյարք:

ՆԱԶԻՐ—<br>ՎԵԶԻՐ— } Կատարելապես, տե՛ր իմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ— Այն ժամանակ խնկույն պահիկ մի հեռանամ և արքային նախապատրաստեմ, որ ոչ մի լուր չկա:

ՆԱԶԻՐ— Ճշմարիտ կերպին նշանեցիր, տե՛ր իմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ— (Դուրս է գնում դիմացից, բայց և խսկույն դրանից մտնելով վարագույրին՝ սկսում է այնտեղից ականջ դնել: Երևում է նրա կիսպարանքը վարագույրի ճեղքից):

ՆԱԶԻՐ— (Վեզիրին՝ ցած) Չի քնացել, ականջ է դնում:

ՎԵԶԻՐ— (Ցած) Ավելի լավ: Եվ երևում է, որ գիտե լուրը:

ՍԵՆԵԿԱՊԵՏ— (Ներս է նայում վարագույրի ճեղքից):

ՍԵՆԵԿԱՊԵՏ— *Նազիրը գիտե, թագավոր կենաց։*

ՆԱԶԱՐ— *Կանչի գա Նազիրին։* (Սենեկապետը գնում է)։

ՈՒՍՏԻԱՆ— *Բան չունե՞ս։ Ինչի՞դ են պետք թագուհիները։ Ճամփի՛, գնա՛նք։*

ՆԱԶԱՐ— (Բազմում է բախտի վրա) *Օխա՜յ... էո՜ֆ... Հը, Ուստիա՞ն, աշխարհքի թագավոր ենք դառնում։ Ո՞նց է քո բանը։*

ՆԱԶԻՐ— (Ներս մտնելով և մոտենալով Նազարին մի քիչ կամաց) *Թագավոր սուրբ։ Մեր թշնամի թագավորների թագուհիները տեսնելով, որ իրենց ամուսինները սպանվեցին պատերազմում՝ լսելով ձեր խելքի և քաջության համբավը՝ սիրահարվել են ձեզ և եկել են ընկնելու ձեր ոտքերը և սեր հայցելու։*

ՆԱԶԱՐ— *Սիրո՞ւն կտորներ են։*

ՆԱԶԻՐ— *Լուսնյակի տասնըհինգը։*

ՆԱԶԱՐ— *Կերթաս իմ կողմից խանումներին կասես, որ իրենց վրա սեր եմ կապել, թող ներս հրամմեն։* (Նազիրը գնում է)։

ՈՒՍՏԻԱՆ— *Բան եմ ասում։ Չի՞ լինի, որ չկանչես։*

ՆԱԶԱՐ— *Չէ, ո՞նց կարող եմ։ Թագավորի արք է, ազնի՛վ թագուհի են։*

ՈՒՍՏԻԱՆ— *Ազնիվ թագուհիս որն է, ջանըմ, թագուհին թագուհի չի՞։*

ՆԱԶԱՐ— (Հանգիստ) *Չէ՛։ Կա խամ թագուհի, կա ազնիվ թագուհի։ Ազնիվ թագուհին աշխարհքի թագուհին է։*

ՈՒՍՏԻԱՆ— *Էհ, բան չունե՞ս։ Բան եմ ասում։ Ճամփի, գնա՜նք։*

ՆԱԶԱՐ— *Չէ, թագավորի պարտք է։ Ջանս էլ որ դուրս գա՝ պիտի կատարեմ։*

ՈՒՍՏԻԱՆ— *Լա՜վ պարտք է։ Էդ ի՞նչ պարտք է՝ մի իմանանք։*

ՆԱԶԱՐ— *Բնությանս հակառակ է, որ չհասկացած գործերին խառնվում ես։*

ՈՒՍՏԻԱՆ— *Ինչի՞ չեմ հասկանում։ Լավ էլ հասկանում եմ։*

ՆԱԶԱՐ— (Կեղծ զործնական և հասարակ)։ *Լսիր։ Ուստիան, մի քիչ թագավորական գործ ունիմ, գնա մյուս օթախը։*

ՈՒՍՏԻԱՆ— *Մե՜ղա։ Սիրո՛ւն կնիկները ներս առ՝ թե «թագավորական գո՛րծ ունեմ»։ Էս էղավ թագավորական գո՞րծ։*

ՆԱԶԱՐ— *Էդպե՜ս է, Ուստիան խանում, էդպե՜ս է։*

ՈՒՍՏԻԱՆ— *Ի՞նչն է էդպես։ Էնպես ես խոսում, կարծես թե ես էլ թագուհի չեմ, իրավունք չունեմ։*

ՆԱԶԱՐ— (Սրտնեղ) *Թագուհիները պիտի գան։ Տերության գործ ունիմ, ես հրամայում եմ։ Գնա մյուս օթախը։* (Լռություն)։ (Նազարը սպասում է, որ Ուստիանը գնա։ Սենեկապետը ձայնում է վարագույրի ետևից։ Նազարը [illegible]նում է այդ ու հազում)։

*ՌՈՒՍՏԻԱՆ— Կասեմ՝ վախկոտ ես։*

*ՆԱԶԱՐ— Ո՞վ է վախկոտ։*

*ՌՈՒՍՏԻԱՆ— Դու։*

*ՆԱԶԱՐ— Գտա՛ր վախկոտը, աշխարհքնե՛ր եմ զարզանդեցնում։*

*ՌՈՒՍՏԻԱՆ— Օյիններ են, ջանըմ, սուտ բան է։ Տեսնես ինչ ֆանդեր ես բանացրել։ Հիմի որ բաց անեմ, ո՞նց է բանդ։*

*ՆԱԶԱՐ—* (Հարձակվելով Ռուստիանի վրա) *Ո՛ւյ, քեզ հիմի, հասամ...* մմ... (Խումբը կիսատ՝ ներս են մտնում Նազիր-Վեզիրը, Սենեկապետը, պալատականներ, Թամադա, Ղոռոբուղա և նրանցով շրջապատված երեք թագուհիներ, որ ժպտալով ու խունջիկ-մունջիկ անելով առաջ են գալիս և բարև բռնած կանգնում Նազարի առջև: Ռուստիանին՝ դեմքը թթվեցնելով և կեղծ գործնական) *Ռ՛ուստիան, ժողովք է հիմի, գլուխներս խառն է, մի քիչ գնա էն օթախը։*

*ՌՈՒՍՏԻԱՆ—* (Կեղծ քաղաքավարի) *Հա՞, ժողո՞վք է։ Լա՛վ։* (Վեր է կենում, որ դուրս գնա աջ կողմից) *Ո՛չ բարով վայելես։* (Խեթ նայում է Նազարին):

*ՆԱԶԱՐ—* (Կասկածով նայում է Ռուստիանին և ինչ-որ ուզում է անել, բայց թագուհիների խումբը շլացնում է նրան և նրանց նայելով մոռանում է Ռուստիանին):

*ՌՈՒՍՏԻԱՆ—* (Հեռանալով աջ կողմից՝ մի անգամ էլ մտիկ է տալիս թագուհիներին և մրթմրթում): *Լրբերի՛ն մտիկ, սիրահարվե՛լ են... հո՛ղեմ ձեր գլուխը։* (Դուրս է գնում):

*ՆԱԶԱՐ—* (Ժպտալով) *Սրա՞նք են թագուհիները։ Ինչ էլ փամփլիկնե՛րն են։ Նստեցե՛ք։* (Թագուհիները նստում են) *Ա՛յ, հիմի բաղչում սուփրա կբանան, գնանք ծաղիկների մեջ նստենք քեֆ անենք։* (Սենեկապետին) *Գյադա՞։ Գնա ասա լավ չարազով սուփրա գցեն։ Սազանդար կանչի, գան մեզ բաղչա տանեն։* (Սենեկապետը գնում է և իսկույն վերադառնում: Նազարը դառնում է պալատականներին) *Դուք էլ մեզ ճամփու կդնեք բաղչա ու հետո կերթաք ձեր գործին։ Տերության գործերին լավ աչք կանեք, գործերը կարգին են, թե չէ՝ կաշիներդ մաշկել կտամ, հա՛ռամզադաներ։ Հա՛ա՛ա՛։ Իմացա՞ք։*

*ԲՈԼՈՐԸ— Իմացանք, կենտրոն տիեզերաց։*

*ՂՈՌՈԲՈՒՂԱ— Հա՛մմ, իմացա՛նք։*

*ՆԱԶԱՐ— Քե՞զ ով ասավ բռռաս խանումների մոտ, իշի՛ կտոր։* (Դիմում է թագուհիներին), *է, խանումներս, ո՞նց եք, քեֆներդ, հալներդ։*

*ԹԱԳՈՒՀԻՆԵՐ—* (Խունջիկ-մունջիկ անելով ծիծաղում են):

(Ներս են մտնում սազանդարները և խոնարհ ողջունում են Նազարին)·

*ՆԱԶԱՐ— Ապա՞, գյադա, մի Հերաթի վեր քաշեք տեսնենք։ Խանում-*

ՆԱԶԻՐ— *Ո՛չ, տեր իմ։*

ՆԱԶԱՐ— *Յա... ի՞նչ է ասում։ Գյադա, ո՞վ է իմացել՝ թագավորը պամայի, ժողովուրդը կռիվ չգնա։* (Դառնում է Սաքոյին) *Սաքո, գնա՛։*

ՍԱՔՈ— (Սաստիկ վախեցած) *Գը, գը, գը, գը, գնա՞մ...*

ՆԱԶԱՐ— *Յա՛լլա, հառամզադա։ Ի՞նչ, Թագավոր ես ուզում դառնա՞ս, գնա՛ առաջ ընկի։*

ԲՈԼՈՐԸ— *Իշխան Սաքո՛, հառա՛ջ...*

ՍԱՔՈ— (Գնում է պատշգամբ և դիմում ժողովրդին) *Գյադե՛ք, թը-թը-թագավորը հրամայմայում է։* (Սարսափած ետ է փախչում) *Ամ-մա՛-ա՛-ա՛ն...*

ՆԱԶԱՐ— (Պալատականներին) *Յա՛, յա՛... տո, գնացեք կախեք ժողովրդին։ Սենեկապետ, գնա, Զորապետ, գնա, Նազիր-Վեզիր, Ղոռբուղա։*

ՈՒՍՏԻԱՆ— (Որ ներս էր մտել և լսում էր վերջին խոսքերը։ Թամփելով նրա գլխին) *Ցխե՛մ թագավոր գլուխդ, դու գնա, նրանց ո՞ւր ես ղարկում։*

ՆԱԶԱՐ— (Վախով նայում է Ուստիանին։ Իսկ պալատականները սարսափում են Նազարից և սպասում, թե նա ինչ կանի)։

ՈՒՍՏԻԱՆ— *Դուք էլ մա՛րդ գտաք վախենալու։* (Մահակը բարձրացնում է և հարձակվում Նազարի վրա։ Խփելով) *Ա՛ռ քյո՛փակ...* (Նազարը փախչում է դուրս։ Պալատականները շշմում են)։

ՄԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ— *Տյա՛րք, սա ի՞նչ է, վախեցա՞վ...*

ԵՐԿՐՈՐԴ ՊԱԼԱՏԱԿԱՆ— *Ինչպե՞ս կարող է։ Սրա մեջ մի խոր՛ուրդ կա։ Հիմի հրաշք կպատահի։*

ՆԱԶԱՐ— (Ներս վազելով՝ Ուստիանը հետևից) *Բե՛, բե՛, բե՛, բե՛։*

ԵՐԿՐՈՐԴ ՊԱԼԱՏԱԿԱՆ— *Հիմի հրա՛շք կպատահի։*

ՈՒՍՏԻԱՆ— (Մահակը իջեցնելով գլխին) *Թա՛ղեմ գլուխդ...*

(Նազարը փախչում է աջ)

ՍԵՆԵԿԱՊԵՏ— (Վազելով դեպի Ուստիանը) *Համեստափայլ թագուհի...*

ՆԱԶԱՐ— *Կայծե՛րդ կհանեմ...* (Վազում է ձախ)։

ՍԵՆԵԿԱՊԵՏ— (Վազելով դեպի Նազարը) *Թագավո՛ր քաջ...*

ՈՒՍՏԻԱՆ— (Վազելով Նազարի հետևից և մահակը խփելով) *Խո՛րեմ գլուխդ։*

ՍԵՆԵԿԱՊԵՏ— (Վազելով նրա հետևից) *Համեստափա՛յլ թագուհի...*

ՆԱԶԱՐ— *Կտո՛ր-կտո՛ր կանեմ...* (Վազում մտնում է գահի տակ)։

ՍԵՆԵԿԱՊԵՏ— (Վազելով դեպի նա) *Թագավո՛ր քաջ...*

ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ ԵՎ ՍԱՔՈ— (Շարժում են անում դեպի Ուստիանը, խեղճ-խեղճ ձևով։ Ուստիանը մի հարված է հասցնում Սաքոյի գլխին, մահակը շարժում է մյուս պալատականների կողմը)։

## ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆ

# ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ

Դիցապատմական
ողբերգություն
Հինգ արար

# ԱՐԱՐ ԱՌԱՋԻՆ

## ՀԱՅԿՅԱՆ ԱՂԵՂ

*Պարտեզ արքայական պալատի տանիքին։ Աջ կողմը գահապատվանդան՝ վրան երեք բազկաթոռ, որոնց հենակողերը ներկայացնում են թևավոր ցուլեր։ Գահի վերև Բահաղի կուռքն է, աջ և ձախ կողքերին՝ Իշտարի և Նեբուի կուռքերը։ Պարտեզը զարդարված է ասորա-բաբելական այլ աստվածների կուռքերով։ Խորքում երևում են Նինվեի զմբեթներն ու աշտարակները։ Իշտարի արձանին հենված տագնապահար երկինքն է դիտում Արտաբանը։*

*Մտնում են Ասսարն ու Նիրարը։*

*ՆԻՐԱՐ*

*Ողջո՛ւյն քեզ, Արտաբա՛ն։*

*ԱՐՏԱԲԱՆ*

*Օ՜, իմ ազնիվ բարեկամներ։*

*ԱՍՍԱՐ*

*Մռայլ ես։*

*ԱՐՏԱԲԱՆ*

*Եվ ունենք մռայլության պատճառ։*

*ՆԻՐԱՐ*

*Ո՞ւր ես նայում այդպես մըտասևեռ։*

НИРАР

Բայց նա օգնել է քո ցեղին, ուրեմն քեզ։
Ուստի դու հարկ է, որ նրան հարգես։
Ինչո՞ւ ես այդ բարեկամից հակառակում։

ԱՐՏԱԲԱՆ

Երկու պատճառ ունեմ։ Երկու կասկած կա իմ հոգում.
Եթե Նինոս Արայի հետ հաշտվեց,
Ուրարտացին կուժեղանա,
Գամերների Կապադովկիան կըթուլանա։
Այնուհետև Նինևիայի տիրակալները մեծ
Ուրարտական խորհուրդներով կուղեգըծեն իրենց
Արշավանքները։ Այս է իմ կասկածը առաջին։
Երկրորդ կասկածը ավելի է ցավագին.
Ազնիվ բարեկամներ, Ասսա՛ր, Նիրա՛ր,
Այն մեծ հանգույցը, որ կապել է մեր սրտերն իրար,
Այսօր կարող է խորտակվել ուրարտական սըրով։

ԱՍՍԱՐ

Այսի՞նքըն...

ԱՐՏԱԲԱՆ

Վախենում եմ Շամիրամ տարվի սիրով
Դեպ այս գոռոզ ուրարտացի արքան։

ՆԻՐԱՐ

Այնուհետև՞...

ԱՐՏԱԲԱՆ

Սարսափելի է մտածել անգամ,
Թե ինչ դժվարամարս մի կերակուր կեփվեր,
Եթե միանային ատելություն և սեր
Մի սրտի մեջ և միևնույն առարկայի նկատմամբ։

ԱՍՍԱՐ

Բայց անտեղի է այդ կարգի տագնապ,
Քանի որ Շամիրամ սիրում է քեզ վաղուց։

*Նրանց նժույգների ոտնաձայները խլացան*
*Նինվեայի կանանց աղմուկի մեջ։*
*Կանչում էին ամեն կողմից՝*

*«Հայոց արքա՜ն»,*

*«Ողջույն, Արա՛, մեր դաշնակիցըդ մեծ»...*
*Ես այդ պահին, խոստովանք լինի,*
*Զգում էի միաժամանակ նախանձ և հիացում։*

ՆԻՐԱՐ

*Բայց Արայի վերաբերյալ իզուր ես կասկածում,*
*Ամուսնացած է նա և չափազանց առաքինի։*
*Նրա գեղեցկության համբավը զարդարուն*
*Զիջում է անկասկած այն վիպացյալ սիրուն,*
*Որով հավատարիմ է նա յուր Նուարդին։*
*Եվ Շամիրամ տեղյակ է այդ մասին։*

ԱՐՏԱԲԱՆ

*Եվ այդ իսկ վատ է, որ տեղյակ է նա.*
*Ի խանդ կըբորբոքե Շամիրամին*
*Ուրարտացու դեմքից իսկ առավել հոգին։*
*Եվ Շամիրամ չի հանդուրժի բընավ,*
*Որ հռչակված մի այլ գեղեցկուհի*
*Իրմով երկար սիրահարված պահի*
*Ուրարտացու նըման այրամարդուն։*

ԱՍՍԱՐ

*Բայց դու տեսե՞լ ես Թագուհուն։ Խոսքերըդ ողբալի*
*Իրողությո՞ւն են...*

ԱՐՏԱԲԱՆ

*Ո՛չ, միայն գուշակություն։*
*Նա ինձ կանչեց յուր մոտ և իմ երկյուղն*
*ի բաց վանեց,*
*Երդվեց կրկին սիրով և հավատարմությամբ,*
*Եվ կիտելով հոնքերն, ինչպես մութ ամպ,*

ԱՐՏԱԲԱՆ

*Մխիթարվի՛ր, Ասսար,*
*Դու քո սրով քո վիշտը կամոքես.*
*Բռնակալի գլուխը կործանող հարվածն արդար*
*Վեհ Շամիրամ խորհել ու սահմանել է քեզ։*

ՆԻՐԱՐ

*Բայց ի՞նչ է հրամայում աստվածուհին.*
*Ասա, որ մենք անելիքներըս իմանանք։*

ԱՐՏԱԲԱՆ

*Միայն պատրաստ պահել խռովահույզ ոգին*
*Եվ հավատալ Շամիրամի մեծահընար խելքին*
*Հարվածելու և՛ ձև, և՛ ժամանակ։*
*Մինչ այդ հըլու ծըպիտների գորգով*
*Ծածկենք անդունդը մեր ատելության։*
*Ամեն բան թող հոսի սովորական կարգով,*
*Թող գա և թող գըննա ուրարտացի Արան։*
*Զգո՛ւյշ... կոչնականներն արդեն ժամանեցին։*

Դանդաղ ու հանդիսավոր քայլերով ներս է մտնում Բահալի քրմապետը քրմերի և քրմուհիների ուղեկցությամբ։ Նրանց հետևում են զանազան պալատականներ, զորականներ, մանկլավիկներ, սպասուհիներ։ Բազմությունը կանգնում է բեմի վրա երկու շարքով։

ԲԱՀԱԼԻ ՔՐՄԱՊԵՏ

*Թող հավիտյա՛ն ապրի աստվածային Նինոս։*

ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆ

*Թող հավիտյա՛ն ապրի աստվածային Նինոս։*

ԱԴԱԴՆԱՇՈՒՐ

*Խոնարհվեցե՛ք։ Գալիս են վեհ արքան և թագուհին։*

*Բազմությունն ընկնում է երեսնիվայր։ Մտնում են Նինոսն ու Շամիրամը, բարձրանում ու բազմում են գահի վրա կողք-կողքի։*

Այլ համամիտ նրանց նորաբողբոջ սովորության,
Աշխարհը անվանե՛նք Հայոց աշխարհ,
Իրեն՝ Հայոց արքա։

ՇԱՄԻՐԱՄ

Օ՜, մե՜ծ Նինոս, ընտրյա՜լդ Բահաղի և Ներգալի
Եվ սիրեցյա՜լ իմ ամուսին և իմ աստվա՜ծ,
Ընտրի՛ր ինձ քո իմաստության բաշխաբաշխ,
Արդար էին քո շուրթերով ասված
Բոլոր խոսքերը։

ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Փա՜ռք Նինոս մեծագործին։

ԱԴԱԴՆԱՇՈՒՐ

Հայոց արքան և զորավար Վաշտակ ժամանեցին։

Մտնում է Արան չքախմբով: Կողքին Վաշտակ զորավարը, հետևից Վարուժանը բռնած լայնալիճ աղեղը, ապա Արամանյակը՝ ձեռքին կերպասյա կտորով փաթաթված մի ծանրոց: Բազմությունը խոնարհվում է: Սպառազեն չքախումբը կանգնում է դռների մոտ: Արան, Վաշտակը, Վարուժանը և Արամանյակն առաջ են գալիս: Նինոսն իջնում է գահից և Արային ողջագուրվում:

ԱՐԱ

Ողջո՜ւյն քեզ, մեծ Նինոս, իմ հայր և բարեկամ,
Ողջո՜ւյն քեզ, լուսամայրըդ Շամիրամ,
Բերել եմ ձեզ շընորհքը մեր հայկյան աստվածների
Եվ օրհնությունն իմ բարեկամ արքայամոր։

ՆԻՆՈՍ

Գեղատեսի՛լ Արա, Բահա՜լ թող քեզ լուսավորի,
Թող նետըդ հար դիպո՛ւկ լինի, աշխարհըդ՝
բախտավոր։
Ողջո՜ւյն, Վաշտակ, բարի է ժամըդ ժամանման։

Վաշտակը վերցնում է ծանրոցն Արամանյակից։

ՇԱՄԻՐԱՄ

Իբրև ընծա շատ պերճ էր, արժանի գովասանքին,
Իբրև հարկատվությո՛ւն՝ աղքատ էր չափազանց։

ԱՐԱ

Չքնա՛ղդ Շամիրամ, ինչո՞ւ ես ինձ վիրավորում,
Ինչո՞ւ իմ ընծաները «հարկ» ես անվանում։
Մի՞թե պարտվել են քո զորքից գնդերը հայկազանց։
Մի՞թե ես չեմ պայազատել իմ աշխարհում ազատ
Իմ նախահայրերին․

Վաղընջական հընում

Բախվել են, ճիշտ է, մեր դյուցազնական նախնիք,
Եվ հաղթության արևը երջանիկ
Մեկ ձեզ է փայփայել,
Մեկ մեզ է փայփայել։
Արդ մեծ Նինոս և իմաստուն իմ հայրն Արամ,
Իրենց աստվածների անմահ կամաց վայել,
Դարձան իրար ընկեր և բարեկամ։
Այդ էր օգուտը արամյան երկրի,
Օգուտն էր այդ և ասորաց երկրի։
Եվ ես, Արա և Արամա որդին և զարմ խալդյան,
Ես չեմ սովոր քամահրական այդ բարբառին։
Հոժար սրտով եկել եմ ես Ասորեստան
Եվ ձեզ բերել եմ ոչ թե հարկ ըստրկության,
Այլ ընծաներ հավասարից հավասարին։

ԱՍՍԱՐ

Նա հանդգնում է թագուհու դիմաց։

ՆԻՆՈՍ

Այդ ո՞ր ըստրուկն էր հոխորտաց։
Հանգստացի՛ր, ով դյուցազունըդ, թագուհին
Քամահրելու մտադրություն չուներ։
Հրամայում եմ, ավագնե՛ր և պալատականնե՛ր,
Երկրպագե՛լ իմ դաշնակցին և ինձ հավասարին։

Արդյոք նըմա՞ն էր դիցական կերպարանքին։
Եվ ես հանդգնեցի դիպչել նըրա հոգուն.
Նա բռնկվեց, աչքերի մեջ փայլատակեց
Եվ յուր արքայական փայլով բազմապատկեց
Մարմնի գեղեցկությունը։ Դուք տեսաք
Շքեղ հոգի շըքեղ կեղևի տակ։

ԱՐԱ

Ների՛ր ինձ, վեհըդ Շամիրամ, ես բարկացա։

ՇԱՄԻՐԱՄ

Օ՜, ոչ, շընորհակալ եմ քեզանից, արքա՜,
Դու բարկության պահին այնքան էիր գեղեցկատես,
Որ ես պատրաստ եմ բարկացնել քեզ վերըստին,
Եթե այդ լոկ շըվըրնասեր ներունական գործին։

ՆԻՆՈՍ

Ուրախ եմ ես, բարեկամնե՛ր, որ հաշտվեցինք։
Բուռն ամպրոպից հետո
Երկինքը առավել է գեղեցիկ։
Եվ արդ, աշխարհակալ իմ հարևան,
Ի հատուցումն ընծաներիդ առատության,
Առ այս աքքադական ականակուռ գոտին
Եվ նըրանից կախիր այս սուրն ահա ոսկեպատյան,
Որով կըհարվածես դու քո և իմ ոսոխներին։
Քեզ պահապան Բահալ և Անահիտ աստվածուհին։
Ադադնաշո՛ւր, արքունական իմ պահարաններից
Ընտրի՛ր ազնիվ քարեր և կերպասներ ոսկեերիզ
Հայոց ավանդապաշտ Արքայամոր համար
Եվ թագուհու՝ չքնաղ Նուարդայի համար,
Ընտրի՛ր, ապա, հայոց թագավորի համար
Շքեղ ռազմակառքեր և փըղոսկրյա մահճակալներ,
Ապա հայոց՝ զորքի համար զրահներ,
Որ կըտավից են յոթնատակ հյուսված,
Արմավենու թելից զանգապաններ,
Եվ այն ամենն, ինչով օժտել է մեզ Բահալ աստված։

ԱՐԱ

Ով մե՜ծ Նինոս և Շամիրա՛մըղ մեծամայր,
Ձեր սրբացյալ սիրո հավերժության համար
Խըմում եմ։

ՇԱՄԻՐԱՄ

Ի Գառնի՞ այս Արդյոք հավանեցի՞ր
Սենաարյան արմավենու գինին։
Օ՜, դուք հարուստ եք ըմպելիքներով ընտիր։
Լըսել եմ ձեր հռչակավոր այն հավողի մասին,
Որից բոցափրփուր գինի եք պատրաստում,
Խըմել եմ ձեր գինին՝ պտուղը դեռ չըճաշակած։

ԱՐԱ

Օ՜, թագուհի, դաժան մի վիշտ է ինձ պատում,
Որ ինձ չօգնեց մի հնարամիտ աստված
Այրարատյան հավողը քեզ մատուցելու։
Փխրուն պտուղ է, չի սիրում ճանապարհվել հեռու։
Թոշնում և քայքայվում է խիստ արագ։
Սակայն եթե Նինոս և դու, չքնաղըդ, կամենաք,
Ես կուղարկեմ ձեր վեհ սիրուն ի փոխարեն
Հըմուտ այգեգործներ ու որթատունկը հավողի,
Որ Նինվեի արվարձանները զարդարեն
Արմավիրյան այգիներով։

ՇԱՄԻՐԱՄ

Այդ բաղձալի է, հրաշալի։
Նինոս անշուշտ կընդառաջեր սիրով։

ՆԻՆՈՍ

Կըլիներ սաստիկ ուրախ և շնորհակալ։

ՇԱՄԻՐԱՄ

Իսկ դո՞ւ, Վաշտա՛կ, աչքերդ փայլեցին
Դու արքայիդ բարեխորհուրդ առաջարկին
Հոժա՞ր ես։

Ամենակալ, ամենամայր աստվածուհին
Թո՛ղ հովանի դառնա մեր սուրբ դաշնագրին։

ՇԱՄԻՐԱՄ

Ահա դարձյալ վերցնում եմ ըմպանակ
Բաբելոնյան նըռան գինով լեցուն
Եվ Նինվեի այս արծվագահ երկնքի տակ
Խըմում եմ քույր Նուարդային ի փառք.
Սակայն սաստիկ սովոր է իմ լեզուն
Արդարությամբ հանդիմանել անարդարին.
Արա՛, թեպետև դու հիացմունքի պահին
Թովիչ ես առավել, քան թե ցասման,
Հանդիմանում եմ քեզ հանուն մեր հաշտության,
Որ չես բերել ինձ հյուր ուշանգեղ Նուարդային։

ԱՐԱ

Օ՜, թագուհի, ես բարկանում եմ վերըստին,
Ահա եկա ես աստվածաբնակ Նինվե
Եվ գունատվում եմ Նինոսի իմաստության առաջ,
Կուզես, որ իմ հայոց Աստղիկը նո՞ւյնպես գունատվեր
Սենաարի պայծառ աստղի առաջ։

ՇԱՄԻՐԱՄ

Իշտար քեզ հետ, ով ա՜յրըդ ոգելից.
Ազնըվությունըդ կարծրությունը ժառանգել ես դու
Հայոց դաշունաձև այն ապառաժներից,
Որոնց վըրա խոսում էր իմ դեսպան Ասուր-Գաբրու։

Արտաբանը, Սասարը և փրարը խոսում են շշուկով:

ԱՐՏԱԲԱՆ

Նըկատեցե՜ք, որ Շամիրամ դիմել է հարձակման։

ԱՐԱ

Մի՞թե կարող եմ, դիցուհիդ գեղեցկագույն,
Հակառակել արդար դիտողության.

ԱԴԱԴՆԱՇՈՒՐ

*Անմա՜հ Նինոս, օդում ճախրող արծիվը հարձակվեց*
*Եվ աղավնուն, որ քեզ էր հատկացված, հափշտակեց։*

ՆԻՆՈՍ

*Բահա՜լ... Շամա՜շ և աստվածնե՛ր հզոր իմ*
*հայրերի.*
*Մի ահավոր գուշակություն էր այս․*
*Մահվան պատգամաբերն էր այս թռչունը վայրենի...*

ՇԱՄԻՐԱՄ

*Այս ի՞նչ էր, իրական տեսի՞լք էր, թե՞ երազ...*
*Ներո՛ւ, մեկնի՛ր խորհուրդը պատգամիդ...*
*Խռովահույզ եմ ես, ինչպես գիշերը հարսնության...*
*Աչքիս առաջ փայլատակում է ապագան...*
*Շանթում է ճակատագիրը... Նինոսին... կամ ինձ։*

ԱՐԱ

*Տո՛ւր լայնալիճըս, Վարուժան, և տուր ինձ նե՛տ,*
*Թո՛ղ սնապարծ կոչվեմ ես այսուհետ,*
*Եթե այս գիշատիչն իր որսը վայելե... ահա՜։*

Արձակում է նետը: Բոլորը նետևում են նետի ուղղությանը. Դուրս թռչում և ապա նետս
է վազում Վարուժանը:

ՎԱՐՈՒԺԱՆ

*Ուրախացի՛ր, անմահ Նինոս։ Հրճվի՛ր և դու, արքա՛.*
*Քո նետը շեշտակի հասավ նպատակին։*
*Արծիվն օդում խոցված է սուր նետով Հայկա*
*Եվ ուժասպառ սավառնելով իջնում է արդ գետին։*
*Չի վրիպել երբեք հայկյան աղեղը լայնալիճ։*

Բոլորը նետվում են դուրս՝ դիտելու արծվի անկումը  Մնում են Արան ու Վաշտակը:

ՎԱՇՏԱԿ

*Իզուր դու լարեցիր հայկյան աղեղը լայնալիճ,*
*Իզուր սպանեցիր պատգամախոս արծվին։*

**ՆԻՆՈՍ**

*Գընա՛նք, բարեկամնե՛ր, մեզ ճոխ սեղան է*
*պատրաստված։*

Բազմությունը Նինոսի ճետևից շարժվում է դեպի դուրս։ Շամիրամը մոտենում է Արային։ Երկար նայում են իրար։

**ՇԱՄԻՐԱՄ**

*Աստղի՛կ աստված...*

**ԱՐԱ**

*Աստա՛րդ աստվածուհի...*

**ՎԱՇՏԱԿ**

*Նրանք իրար «Աստղիկ», «Աստարդ» անվանեցին...*
*Բայց չէ՞ որ ըսպանեց Աստարդ յուր Աստղիկին...*
*Օգնի՛ր մեզ, Անահի՛տ...*

ՎԱՐԱԳՈՒՅՐ

Ես կբերեմ Նինվե յուր բարձրաբերձ Ուրարտուից
Ես կփռեմ Ասորեստան նրա ոտքերի տակ։
Ասորեստան ուրարտացու ոտքերի տակ,
Իսկ Ուրարտուն՝ սաուրների...
Նեբո՛ւ, օգնի՛ր դու ինձ,
Չի արևից առաջ դեռ կա գիշերային ամպրոպ...
Արյուն և մահ... շողա՛, ճակատագրի կայծակ...
Շամիրամա սիրո համբավը քառատրոփ
Թո՛ղ սըլանա աշխարհը ծագեծագ,
Թո՛ղ դըղըրդա գալիք դարերի մեջ...

Մտնում է Նինոսը։

## ՆԻՆՈՍ

Դու վերըստին խըռովահո՞ւյզ ես, Շամիրա՛մ։

## ՇԱՄԻՐԱՄ

Այո, Նինո՛ս, իմ սիրեցյալ, մռայլ է իմ հոգին։

## ՆԻՆՈՍ

Ի՞նչ վիշտ է քեզ պատել, իմ թանկագի՛ն,
Խոսի՛ր, թերևըս դարմանել կարողանամ։

## ՇԱՄԻՐԱՄ

Արծիվն է ինձ հուզում...
Նա գուշակում է մի ահեղ հարված։

## ՆԻՆՈՍ

Հանգստացի՛ր, հոգի՛ս. նա չէ՞ որ պատռվեց,
Ընկավ մեր դաշնակցի ձեռքով նետահարված։

## ՇԱՄԻՐԱՄ

Այո՛, տեսա ես այդ սխրանքը մեծ։
Սակայն ինչո՞ւ դա վիճակվեց ուրարտացուն։
Ինչո՞ւ այդ անմոռաց փառքով իրեն շըլացրեց
Ասորական մի գյուղացուն։

Քեզ հինգ օրով նըշանակում եմ թագավոր
Գահիս վըրա։ Հըրամայել եմ ես.
Այսօր կըկատարեն թագադրության հանդես։

ՇԱՄԻՐԱՄ

Այսօ՞ր... ո՛չ, ո՛չ... ինչո՞ւ ես հրամայել։

ՆԻՆՈՍ

Ես կատարել եմ քո սրտի փափագը, իմ անգին։
Թագավորի՛ր և տես, որ դա դժվար է առավել,
Քան երևում է լոկ դըսից երազողին։
Չէի ցանկա, որ իմ սիրո աստվածուհին
Խույրի ծանրության տակ չքնաղ ճակատը կնճռոտեր,
Բայց երբ ուզում ես...

ՇԱՄԻՐԱՄ

Չեզ ուզում... խղճա՛ ինձ, իմ Նինո՛ս, իմ տե՛ր...

ՆԻՆՈՍ

Դու չե՞ս ուզում, ինչո՞ւ։

ՇԱՄԻՐԱՄ

Ես անարժան եմ այդ պատվին։

ՆԻՆՈՍ

Մի՛ պղտորիր հոգիդ, Շամմուրամա՛տ։
Դու մի՞թե չես Սեննարի պայծառ ոգին։
Միթե մենա՞կ իմ վաստակել ես բազմամարդ
Իմ տերությունը։ Քեզ Բահալ նյութել է կին,
Բայց գործերով հասար արանց մեծագույնին։
Զորքերըս Արևելք դու վարեցիր,
Սագաստանի դաշտերն իմ ոտքի տակ առար,
Դու իմ սիրով կայծակեցիր Հարավ,
Խունկով և համեմով զարդարեցիր
Երկրիս հասույթը ճոխ։ Առաջ քան մենք,

*Բայց մեկ օրով և ոչ մի թարթ իսկ առավել*
*Եվ կաշխատեմ այնպես կառավարել,*
*Որ չափսոսաս Հաչորդ առավոտյան։*

Մտնում է Ադադնաչուրը։

### ԱԴԱԴՆԱՇՈՒՐ

*Իմ տե՛ր, կոչնականները լիաթիվ եկան*
*Եվ սպասում են բարձրագույն Հրամանիդ։*

### ՆԻՆՈՍ

*Թող նե՛րս գան։*

Ադադնաչուրը ետ-ետ գնալով կանգնում է մուտքի մոտ և ներս ընդունում պալատականներին։

### ՇԱՄԻՐԱՄ

*Ձանձրացրել է ինձ այս ծերացած կատուն։*

### ՆԻՆՈՍ

*Գուցե և չողոքորթ է նա, բայց Հեզ և բարեմիտ։*

Մտնում են ԲաՀալի քրմապետը, Արտաբանը, Ասսարը, Նիրարը, տաճարական երգիչը և պալատական ամբողջ բազմությունը՝ ձեռքներին զանազան թանկագին իրեր։

### ԲԱՀԱԼԻ ՔՐՄԱՊԵՏ

*Անմա՞Հ Նինոս և Շամիրամըդ իմաստուն,*
*Թո՛ղ սրբանա ձեր սերը Հավիտյան։*
*Խոսի՛ր, Նինոս, Հայտնի՛ր խորՀուրդըդ աշխարՀին։*

### ՆԻՆՈՍ

*ԲաՀալ սաստ, ես անսացի և իմացա։*
*Այն օրվանից, երբ Շամիրամ աստվածուՀին*
*Ճառագայթեց յուր սերը ինձ վերա,*
*Ես ծաղկեցի և ծաղկելով Հզորացա*
*Որպես բազմաստղարթ արմավենին,*

### ԶԱՅՆԵՐ

*Անմա՛հ իշխիր, աստվածամա՛յրըդ Շամիրամ։*

### ՆԻՐԱՐ

*Շամաշակե՛րպըդ Շամիրամ,*
*Ինչպես վայել է քեզ կեցվածքն արքայական։*
*Քո թովչանքով նըման ես դու Նըրան,*
*Որ փեթակում սնվում է իբր մայր։*
*Ապա Նըրան է ենթարկվում կամակատար*
*Մեղուների փեթակը բազմաժիր։*
*Պատրաստ է պարսը քաջերիդ, հրամայի՛ր։*

Բոլորը լուռ մոտենում են գահին, խոնարհվում, ընծաները հանձնում սպասավորներին և ձեռքերը ծոցում դրած վերադառնում տեղերը։

### ԱԴԱԴՆԱՇՈՒՐ

*Անմահըդ Շամիրամ, հըրամայի՛ր,*
*Որ գուսաններն ու պարողները գան,*
*Ինչպես նախակարգել էր այս առթիվ Նինոս արքան։*

### ՇԱՄԻՐԱՄ

*Ծերո՛ւկ, դու ինձ «արքա» չանվանեցիր։*
*Ես այդ ինչպե՞ս արդյոք մեկնաբանեմ,*
*Իբրև խըռովությո՞ւն... լեզուդ սանձի՛ր,*
*Ըստրուկի հետ ես վիճելու սովորություն չունեմ։*
*Դու քո ոտնգները բըթացրել ես անկասկած*
*Արքունական խոհանոցները շատ հոտոտելուց։*
*Լավ... կաշխատեմ լինել վարձահատույց։*
*Սակայն ես առավել քան խորն եմ վշտացած*
*Ի դեպ իմ բարեկամների ժըլատության։*
*Ինձ ասացե՛ք. Նիրա՛ր, Ասսա՛ր և Արտաբա՛ն,*
*Իմ հին և մըտերիմ զինակիցնե՛ր,*
*Արդյոք իմ երջանիկ թագադրության պահին*
*Դուք չունեի՞ք ոչինչ սրտանըվեր*
*Ընծայելու ձեր արքային։*
*Բոլորն այստեղ իրար նըսեմացրին*

## ԱՐՏԱԲԱՆ

Ես, տիրուհի՛, ինչ որ ունեմ վայել ուշադրության,
Անվերադարձ բոլորը պատկանում է քեզ,
Ես քոնն եմ իմ սըրով և իմ սրտով։ Բայց կա մի բան,
Որ բարձր է առավել, քան ամենայն հարըստություն.
Դա կյանքն է։ Ես բերել եմ քեզ քո տենչերով լեցուն
Իմ կյանքը։

## ՇԱՄԻՐԱՄ

Դու... կողոպտեցիր նախորդներիդ։
Բայց գոհ եմ ձեզանից, Նիրա՛ր, Ասսա՛ր և Արտաբա՛ն։
Հաճո էր ինձ, քան ամենայն գոհար ու մարգարիտ,
Ձեր երեքից ամեն մեկից ընծան։
Ես պարտ եմ ձեր սիրուն և հավատարմության
Կյանքով։ Հիշում եմ ես ճակատամարտը Սիպպարում։
Մեր առջևից խելակորույս փախչում էր թշամին,
Երբ ես իմ ռազմակառքն առաջ էի վարում
Եվ հեռացա այնքան, որ ինձ պաշարեցին
էլամիտները։ Տեսնելով իրենց առաջ մի կին,
Նըրանք ձգտում էին ինձ կենդանվույն գերել,
Թեպետ ես պաշտպանվում էի վագրից իսկ
համարձակ։
Նրանց որսապարանն արդեն ճոճվում էր իմ վերև,
Երբ երեքովըդ փոթորկված ինձ օգնության հասաք
Եվ դուրս բերիք օրհասական օղակումից։

## ՆԻՆՈՍ

Օ՜, թագուհի՛, սաստիկ ուրախալի էր ինձ
Կրկին լըսել այդ վեպը։ Այս երեքը, անկասկած,
Մեզ մատուցել են պանծալի ծառայություն։
Ժամանակին մենք վարձատրել էինք սըրանց։
Սակայն այսօր, երբ քո արքայական հոգուն
Այդ փառավոր վերհուշը վերըստին եկավ այցի,
Ուրեմըն քո շըռայլությունը թող չըպակասի
Հերոսներին դարձյալ վարձատրելիս։

ՆԻՆՈՍ

Դու հնարամիտ ես, Շամիրա՛մ, իմաստության մի ծո՜վ
Դու ինքդ որոշիր վայելն ու արժանին։

ՇԱՄԻՐԱՄ

Շնորհակալ եմ, վեհ Նինո՛ս։ Յուրաքանչյուր արքա
Կարիք է միշտ զգում այլոց գովասանքին։
Դա մեզ դարձնում է առավել ինքնավստահ,
Եվ մենք մեր գործերի արդարության վրա
Այլևս չենք տարակուսում։
Արդ իմ խոհերը պարզվեցին։

Տուրտան Զոպպեր պարտվեց գամերական
պատերազմում
Այն պատճառով, որ այս անգամ մենակ էր եղկելին։
Զորաշարժի ուղեգծերը ե՛ս չէի կազմում,
Եվ Արտաբա՛նը չէր վարում մեր այրուձին
Ուրարտական հեծյալների դիմաց։
Տուրտան Զոպպեր մատակ ձիու վրա նստած
Փախավ յուր պարտության դաշտից և մեզ
խայտառակեց։
Բայց գուշակել էր նա արքունիքի զայրույթը մեծ,
Եվ ինքն իրեն դատապարտեց յուր սեփական սրով՝
Շնորհազուրկ մի տուրտանից մեր զորքն ազատելով
Եվ բանալով ուղին բարեբաստիկ մի ընտրության։
Դու, իմ հերո՛ս, նշանակվում ես իմ զորքին
տուրտան։

ՆԻՆՈՍ

Բահալ քեզ ներշնչեց այդ միտքը, ո՜վ աստվածուհի։
Նոր տուրտանի վրա վաղուց ես մտորում էի,
Բայց չէր անցնում մտքովս Արտաբան։

ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Աստվածային նշանակում...

ՇԱՄԻՐԱՄ

Այդ ի՞նչ եք շշնջում, Նինոս պալատական։
Ջրկա դեռ երկու ժամ, ինչ հըպատակ ես իմ գահին,
Արդեն դիմում ես արքունի դավադրության։
Դու ասացիր իշխելը առավել է դժվարին,
Քան այդ կարող է հպատակին թըվալ։
Տեսա՞ր, հըպատակվելն այնքան էլ չէ դյուրին,
Ինչքան կարող էր մտածել մի ինքնակալ։
Դու այպանո՞ւմ ես ինձ։

ՆԻՆՈՍ

Ո՛չ, աննըմա՛նըդ Շամիրամ։
Ես կամենում էի մեկնաբանել միայն,
Թե խըստությունը, այն դեպքում, երբ չի բերում
օգուտ,
Կամ չի հասնում կարգերը տերության,
Վըտանգավոր է։ Ջըլինենք անմըտորեն անգութ
Հանդեպ նըրանց, որ զոհ են լոկ արդար
սըխալմունքի։

ՇԱՄԻՐԱՄ

Ըսքանչելի է։ Բայց ասա, ո՜վ գթառատ հոգի,
Արդյոք Մենոն գործում էր անարդա՞ր՝
Պաշտպանելով պատիվը յուր կընոջ,
Որ դու նըրան ըսպանեցիր այնքան մոլեգնաբար։
Մեկնաբանի՛ր, անգութ, մի խստությո՞ւն էր այդ,
թե՞ ոչ։

ՆԻՆՈՍ

Շամմուրամա՛տ, դու հիշեցնում ես ինձ
Երիտասարդական մի խստություն,
Որ սաստկացած էր իմ սիրո սաստկությունից։

ՇԱՄԻՐԱՄ

Օ՜, սաստկություն սիրո... դու մատչելի ես իմ հոգուն։
Լավ, կա՛մքըդ թող լինի, Նինո՛ս պալատական.

Ամոլ դաշտերն արգասաբեր դարձան քո հրամանով,
Դու քաղաքները պատեցիր անառ պարիսպներով:
Դու երկաթով ժայռերը հարթեցիր,
Բազմաբանուկ ճանապարհներ բացիր
Անդընդախոր կապաններում։
Քեզնից առաջ գազանն իսկ չէր անցնում
Այն տեղերից,
Ուսկից անցան կառքերդ շառաչող,
Դու ծաղկազարդեցիր Նինվեն պայծառաշող,
Ծաղկեցրիր արմավն ու թզենին,
Հոսեց երջանկության նրանց գինին
Սենտարի որդոց համար։
Ներո՛ւ, շնո՛րհք տուր ներքողեմ Շամիրամին,
Առատագութ է նա, ամենամայր...

Մտնում է Ասարը, զինվորների ուղեկցությամբ ներս բերելով բերդակալի գլուխն սկուտեղի վրա, կարմիր ծածկոցի տակ։ Նրան հետևում է Ադադնաշուրը։

*ԱԴԱԴՆԱՇՈՒՐ*

*Ով մե՛ծ Նինոս, ոճիրը կատարված էր, ուշացա։*

*ՆԻՆՈՍ*

*Ավա՜ղ իմ խոլ հիմարությանն, ավա՜ղ իմ սըխալին։*
*Ինչպես համարձակվեց քո ձեռքը, սըրիկա՛։*
*Հանձնի՛ր զենքերըդ անհապաղ և բանալին։*

*ՇԱՄԻՐԱՄ*

*Նինո՛ս, դու մոռանում ես ո՛վ է թագավոր։*

*ՆԻՆՈՍ*

*Վերջացնենք, տիկի՛ն, կատակն աղետավոր։*

*ՇԱՄԻՐԱՄ*

*Վերջացնե՞նք... Օ՜, ո՛չ. դեռ նոր ենք ըսկըսում,*
*Նինո՜ս։*
*Դու հանդգնում ես արքայիդ գործերը այպանե՞լ։*

Երբ Մեննոնին ըսպանելով ինձ կընության առար։
Եվ քեզ համար չեղա ես լոկ մի կին,
Այլ ռազմական ընկեր և զորավար։
Բայց դու նախանձելով իմ վաստակած փառքին,
Ինձ պահեցիր արքունիքում իբրև մի հարճ
Եվ զորքը հանձնեցիր ստրկահաճ
Քո Զոպպերին, որ ջախջախվեր Արա ուրարտացուց։
Հրաժարվելով աքքատական վըրեժխնդիր ոգուց,
Դու խեղճ մի դաշինքով գոռոզացրիր նըրան
Եվ մատնեցիր քո թուլությունը աշխարհին։
Մըտադրությո՞ւնըս... քեզ կասեմ առանց
երկմտության.
Վերականգնել աքքատական աշխարհակալ ոգին,
Ինչ որ դու փշրեցիր անմըտաբար։

**ՆԻՐԱՐ**

Աստվածուհի՛, պատրաստ է արքունիքըդ քեզ համար.
Հըրամայի՛ր։

**ՇԱՄԻՐԱՄ**

Նինոս նըսեմացավ իբրև արքա,
Նա չունեցավ և հեզություն հըպատակին վայել։
Բահաղ ասաց, ես անսացի և կամեցա.
Հըրամայում եմ Նինոսին կառափնատել։

**ՆԻՐԱՐ**

Թո՛ղ կամքըդ...

**ՆԻՆՈՍ**

Ո՛չ, դեռ ես եմ տերը իմ երկրի։
Հըրամայում եմ ձեզ. սըրերը ի պատյա՛ն։

Հանում է սուրը. Ասսարն սկսում է Նինոսի հետ մենամարտել և մի հարվածով թռցնում է սուրը նրա ձեռքից։

**ՇԱՄԻՐԱՄ**

Մի՛ բորբոքվիր, Նինո՛ս, ես քեզ զգուշացրի։
Հիշո՞ւմ ես։

*Արդար է, որ մեռնեմ։ Բայց վախեցի՛ր դու իմ մահից։*
*Ես ոխըս կավանդեմ Նինուաս որդուս, Նըրան,*
*Որին խաբեությամբ որսի ես ուղարկել,*
*Որ դավադրես ազատ և անարգել,*
*Գընա՛նք, իմ դահիճներ, կառափնարա՛ն։*

Վեհափայլ դուրս է գնում։ Նրան հետևում է Ասսարը զինվորների ուղեկցությամբ։

*ԱԴԱԴՆԱՇՈՒՐ*

*Արդարադատ ես, Շամիրա՛մ, իբրև Համմուրաբին։*

*ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆ*

*Եվ իմաստուն իբրև Համմուրաբին։*

*ՇԱՄԻՐԱՄ*

*Շընորհակալ եմ, իմ բարեկամնե՛ր, ազատ եք արդ։*

Բազմությունը դուրս է գնում։ Ասորական երգիչը մրմնջում է ինքնիրեն։

*ԱՍՈՐԱԿԱՆ ԵՐԳԻՉ*

*Այս ի՞նչ ներբողեցիր, տավի՛ղ իմ հանցապարտ...*

*ՇԱՄԻՐԱՄ*

*Ճակատագիրը կատարվեց։*
*Ես թագավոր եմ ինքնակալ։*
*Շնորհակալ եմ ձեզանից, Ներո՛ւ, Բահա՛լ։*
*Իմն է Ասորեստան երկրից երկիր։*
*Իմն են արագահոս գետերը Նաիրյան,*
*Իմն են Ուրարտուի լեռները սեգ*
*Եվ իմն է գեղեցիկ... Արան։*

ՎԱՐԱԳՈՒՅՐ

*Արքայական այգու պարսպի տակ։*
*Դու լա՛վ նայիր, որ թռչելիս չըմոլորվես։*
*Եթե իմ փափագին դու համաձայն վարվես,*
*Ոսկեփոշով կօծեմ փետուրը քո սպիտակ*
*Եվ տոտիկներըդ ես կօծեմ ծիրանագույն*
*Եվ կընծայեմ քեզ բյուրաստինք սիրո աստվածուհու։*

ՁԱՅՆ

*Հե՜յ, Վարուժան...*

ՎԱՐՈՒԺԱՆ

*Գալի՛ս եմ, սպասի՛ր, Միսակ...*

Գնում է։

ԱՍՈՒՐ-ԳԱԲԲՈՒ

*Ինչ հանելուկ են այս մարդիկ ուրարտական.*
*Սեղանը բաց է քո առաջ, իսկ հոգիները՝ փակ։*
*Սրտիս խորքում ուրախանում եմ ես սակայն,*
*Որ առաքված եմ այս երկիրն իբրև դեսպան։*

Մտնում է Նիրարը թիկնապահների ուղեկցությամբ։

ՆԻՐԱՐ

*Ողջո՜ւյն, Ասուր-Գաբբու, ահա տեսնում եմ քեզ նորից։*

ԱՍՈՒՐ-ԳԱԲԲՈՒ

*Ողջո՜ւյն, Նիրար, Բահալ քեզ օգնական։*
*Ի՞նչ բաղձալի համբավ Նինևիայից։*
*Ինչպե՞ս է դուստրը վեհ Բաբելոնի և մեր արքան։*

ՆԻՐԱՐ

*Պայծառափայլ է առավել, քան էր առաջ։*
*Սակայն զգուշացնում եմ քեզ մահվան պատժի ահով,*
*Որ Շամիրամ աստղերից է յուր ծագումն առած,*
*Այլ ոչ Բաբելոնից։ Ապա՝ Ներգուն է մեծ աստված։*
*Կյանքի համար այս խոհը առավել է ապահով։*

Եվ բազմամյա խաղաղության հեռապատկերներով,
Հանգիստ են պարգևել պատերազմի աստվածներին
Եվ նվիրվել աշխարհաշեն մի կառուցման։
Հըզոր եռանդ է բորբոքել Արա ուրարտացին.
Աշտիշատում շինում է նոր մեհյան
Իբրև ընծա յուր Անահիտ աստվածուհուն,
Փորում է Տուշպայի առատաջուր առուն,
Արմավիրում ծաղկավետում է Նուարդի այգին
Եվ նոր պերճանք է հաղորդում ապարանքին։

### ՆԻՐԱՐ

Մըտահոգիչ է այդ և առավել վըտանգավոր,
Քան ամենայն աղմուկ պատերազմի պատրաստության։
Սակայն պատմի՛ր. Շամիրամի պահանջն արտասովոր
Ինչպե՞ս արձագանքվեց այստեղ։

### ԱՍՈՒՐ-ԳԱԲԲՈՒ

Մի բիրտ քարի նըման,
Որ շըպրտում են ջինջ աղբյուրը։ Երբ մեր տիրուհին
Յուր սերն ու գահն առաջարկեց հայոց թագավորին,
Փըշաքաղվեց երկիրն ինչպես փոթորկահույզ մի ծով
Եվ պաշտպանում, աստվածացնում է Նուարդին։

### ՆԻՐԱՐ

Դու հիշեցիր այդ իսկ ժամանակին։
Արդյոք հըզո՞ր է այդ Նուարդ յուր թովչանքով։
Պատմի՛ր, որքան քեզ ձիրք է պարգևել Ներուն.
Զի Շամիրամ տենչում է տենչակեզ՝
Հեռվից գոնե ծանոթանալ հայոց գեղեցկուհուն։

### ԱՍՈՒՐ-ԳԱԲԲՈՒ

Տեսել եմ Նուարդին։ Բայց մի՞թե մեր լեզուն
Կարող է այդ հըմայքը հաղորդել ճշմարտապես։
Եթե դու ինքըդ աչքերով նըրան չըհանդիպես,
Ապա նայի՛ր Անահիտին։ Ահավասի՛կ.

*Աղավնիներ են թռցնում անթիվ և անհամար,*
*Ծվ սեր է որոնում սիրող հոգին։*

*ՆԻՐԱՐ*

*Կեցի՛ր, գալիս է դեպի մեզ չքնաղ մի կին։*

Երգելով մտնում է Նանեն թևին խաղողի լիքը զամբյուղ։

*ՆԱՆԵ*

Սիրով է արեգակը վառ շիկնել,
Սիրուց է վարդը վառ կարմիր,
Սրտիս դիպել են զույգ արեգակներ,
Սերով է սիրտըս վառ կարմիր։
Հաղթել էր Մաժակին հայոց արքան,
Ցնծում էր Արմավիրն Այրարատյան,
Մենք փող էինք հարում, թմբուկ զարկում,
Զորքի առաջ նըժույգ էր ծառացնում
Մի զինավառ պարման։
Նրա սիրով է լուսացել երկինք,
Երկիրն է կանաչել նրա սիրով,
Ով Անահիտ, որ սերն ես բյուրաստիճք,
Դու սերը ամոքիր սիրով։

*ՆԻՐԱՐ*

*Գեղեցկուհի՛, երգում ես հոգեբուխ և քաղցրաձայն։*
*Բայց ի՞նչ պտուղ է այդ։*

*ՆԱՆԵ*

*Հավող է, վեհ օտարական։*
*Ճաշակեցե՛ք, խնդրեմ։*

*ՆԻՐԱՐ*

*Շընորհակալ ենք, ո՜վ գեղեցկուհի,*
*Խոսքերըդ մեր հոգուն հաճո են առավել,*
*Քան այս պտուղը քաղցրահամ։*

**Հեռանում են իրար ուսենու նիպառների ճարված տալով և ջուր ցանելով**

НАНЕ

*Վիշա՛պ, ինչո՞ւ ինձ խայտառակեցիր։*

ՎԱՐՈՒԺԱՆ

*Ների՛ր ինձ, իմ Նանե՛։ Եթե միայն դու իմանաս,*
*Ինչքա՜ն ինձ բարձր ես թռվացել և ինչ անհա՜ս...*
*Դու մի կապույտ երկինք էիր, ես մի ծարավ երկիր,*
*Քո մեկ պագով դու ինձ կանաչեցրիր։*

ՆԱՆԵ

*Այնպես ես հանդգնում, իբրև մարաց վըրա*
*Դու ինքդ կա հաղթանակ տարել,*
*Զիախաղում իբրև թե քեղանից անցնող շըկա,*
*Իբրև թե արջ ես անտառում նետահարել։*

ՎԱՐՈՒԺԱՆ

*Օ՜, իմ Նանե, ես այդ բոլորն արել եմ անկասկած։*
*Բայց քիչ է այդ քո մեկ պագի դիմաց։*
*Հըրամայիր՝ առյուծ նետահարեմ,*
*Կաղնին արմատահան անեմ մկունդ,*
*Մասյաց անդունդներից վիշապի ձագ բերեմ,*
*Մենակ ջարդեմ ասորական մի զորագունդ,*
*Միայն թե ե՛կ ինձ հետ մեհյանն Անահիտի...*
*Գալի՞ս ես...*

ՆԱՆԵ

*Ո՛չ։ Տեսնո՞ւ ես, մեր արքան...*
*Դյութվել է չար վըհուկ Շամիրամա սիրով...*
*Այդպես եք դուք բոլորդ... սուտ է սերը այրական...*
*Իսկ թագուհիս հալվում-մաշվում է օրերով...*

ՎԱՐՈՒԺԱՆ

*Հա՜յ, հա՜յ... դու տեսնեիր Շամիրամին, Նինվեն,*
*Այնքան հարըստություն, ոսկի, գոհարեղեն...*

*Սիրամարգերի պես այնտեղ կանգնած էին*
*Քուրմեր, քըրմուհիներ և պալատականներ։*
*Նինոս գահի վրա կարծես առյուծ լիներ։*
*Եվ Շամիրամ բազմած էր Նինոսի կողքին*
*Կապտաբեհեզ ու ոսկեկար մի պատմուճան հագին,*
*Որ ծալ ի ծալ իջնում էր ուսերից կրունկն ի վայր։*
*Մի ոսկեղեն գոտի, շքեղ, գոհարավառ*
*Սեղմում էր թագուհու իրանը եղեգնից բարակ։*
*Սակայն բոլոր զարդերը, մատանի, մանյակ,*
*Ոչինչ էին նրա շարմաղ երեսի դեմ։*
*Նա հայացքով կարծես ասում էր արևին.*
*«Դու մա՛յր մըտիր, որ ես լուսավորեմ»։*
*Եվ նա այնպես գոռոզ էր և այնպես աստվածային...*
*Բայց երբ նայեց, նայեց, նայեց մեր արքային,*
*Աչքերը փայլեցին սիրուց, և քարացավ...*

ՆԱՆԵ

*Օ՜, Վարուժան... և դու կայի՞ր այնտեղ։*

ՎԱՐՈՒԺԱՆ

*Իհարկե։ Լայնալիճը ես էի պահում։*
*Եվ ես տվի թագավորին այն նետն անշեղ,*
*Որով նա այն արծվին նետահարեց օդում։*
*Իսկ Շամիրամ երկրի վրա սիրուց նետահարվեց։*
*Մեր արքայի այս հաղթանակը առավել էր մեծ,*
*Քան մարական ճակատամարտը։ Բայց ափսոս,*
*Որ նա Շամիրամին մերժեց։*

ՆԱՆԵ

*Շատ լավ արեց։ Պոռոտախո՜ս։*
*Հապա ինչպե՞ս. ելներ վազեր Ասորեստա՞ն,*
*Թողած յուր թագուհուն լալով, յուր հողը անպաշտպան։*
*Դու ինքդ կերթայի՞ր...*

ՎԱՐՈՒԺԱՆ

*Ե՜ս... Ե՞ս, ինչպե՞ս... ես արքա չեմ։*
*Բայց ես կուզենայի, որ մեր հայոց արքան*
*Յուր ձեռքի տակ առներ հզոր Ասորեստան։*

ԱՐԱՄԱՆՑԱԿ

*Նա չի սրտում քեռի՛, Իզուր ես անպատվում նըրան։*
*Այնտեղ էինք, տեսանք բոլորըս հավասար։*

ՋԱՅՆԵՐ

*Տեսա՜նք, տեսա՜նք, տեսա՜նք...*
*Արդար է Վարուժան։*

ԱՐԲԱԿ

*Իսկ դո՞ւ, փքվա՜ծ գեղեցկուհի... տեսա՞ր։*

ՆԱՆԵ

*Ես չեմ տեսել, հայրիկ, վըկա է մայրը ոսկեծամ,*
*Բայց հավատալն է կարևոր լոկ տեսնելուց։*
*Մեր տան վըրա թևել է աղավնին երեք անգամ,*
*Իսկ իմ սրտում թևում էր Վարուժան վաղուց։*

ԱՐԲԱԿ

*Լա՛վ, լա՛վ, այլևս մի՛ ճառիր։ Գընա՛ այգին,*
*Գինի՛ բեր այս վահագնասեր ժողովըրդի համար։*
*Ահա մեր իմաստուն գուսանք ժամանեցին։*
*Շրջա՛ն կազմեք, թո՛ղ ներբողեն։*
*Օրհնյա՜լ է Վարդավառ։*

ՎԱՐՈՒԺԱՆ

*Վարպետ, ինձ կարտոնե՞ս Նանեի հետ գընալ։*

ԱՐԲԱԿ

*Գընա՛, ստամբա՛կ, ձեզ Անահիտ հսկիչ և խնամակալ։*

**Մտնում են գուսանները բամբիռները ձեռքներին: Բազմությունը համակրանքով նրանց ճանապարհ է տալիս:**

ՏԵՐ ԳՈՒՍԱՆ

*Ուրախություն և փա՜ռք հայոց Վարդավառին։*

ԱՐԲԱԿ

Այո, եկվոր ես դու, ուստի և անցավոր։

ՁԱՅՆԵՐ

Ապրի՛ վարպետը։ Վառվեց Կաթմոս վաճառական։

ԿԱԹՄՈՍ

Ինչպես չէ. վառվեցի, և հիմարներն ուրախացան։
Բան եմ ասում, իսկ ասողին լսող է հարկավոր։
Եվ՝ հասկացող։ Եթե Հայոց արքան
Ընդառաջեր Շամիրամա խոհեմ առաջարկին
Եվ իբր աշխարհակալ գնար նստեր Ասորեստան,
Այդ կլիներ օգուտ և փառքը մեր հզորության։
Այնժամ Տոսպա երկաթն ու մեր այրարատյան գինին
Ես կըհասցնեի հընդկաց հարուստ երկրներին...
Գիտե՞ք, թե ինչ անբավ հարստություն
Կարավանիս բարձված կգար Արամա տուն,
Եվ մեր սընդուկներում ինչպես կըզրնգար ոսկին։

ՁԱՅՆ

Արդար ես դու, Կաթմոս վաճառական։ Կեցցե՛ս։

ԿԱԹՄՈՍ

Իսկ այժմ ի՞նչ վաճառական եմ ես,
Ավանակներն առած լաստանավին
Իջնում են Տիգրիսով մինչև Նինվե,
Այնտեղ լաստերըս վաճառում, իսկ լաստերի կաշին
Նույն ավանակներով վերադարձնում եմ տուն,
Եվ այս եղավ վաճառականություն։

ԱՐԲԱԿ

Գիտեմ, թե ինչ ես երազում, Կաթմո՛ս,
Միայն թե կուժ-կուլադ արտահանես Ինդոս,
Թեպետ Հայոց աշխարհը խորտակվի,
Եվ հայ անունը աշխարհում խայտառակվի...

Խաղաց եկավ աշխարհն Այրարատի։
Եվ Բել դեսպան, հրեշտակեց, ասաց.
Հայկ, հալեցրո՛ւ սառնամանիքըդ անթափանց,
Իջի՛ր քո ձյունապատ լեռնագագաթներից
Եվ դաշտի մեջ երկրպագի՛ր դու ինձ,
Ապա ապրի՛ր խաղաղ հովանու տակ։
Ապա եթե կամակորես նորից՝
Իմ շանթերից կըխոնարհվի գլուխը ծեր Մասյաց»։

ՎԱՐՈՒԺԱՆ

*Վա՜յ, ես...*

ԱՐԲԱԿ

*Լռի՛ր, ստամբա՜կ։*

ՏԵՐ ԳՈՒՍԱՆ

«Եվ Հայկ պատասխանեց, ասաց.
Ինչո՞ւ ես գամ և քեզ երկրպագեմ։
Դու մարդ ես, և ապա և ես եմ մարդ։
Ապրենք մեկզմեկից հեռու, մեկզմեկից անպարտ,
Եվ Բել փքվեց, ճեմեց մրրայլանեմ
Եվ զորք համակըմբեց,
Հսկայակույտ կազմեց խառնիճաղանջ,
Խաղաց եկավ պատերազմի։
Եվ Հայկ ելավ պատերազմի։
Նա քաջ էր, գեղեցկուտն, լայնալանջ։
Յոթն անգամ ճակատեցին զորքերը զինավառ,
Յոթն անգամ չըհաղթեցին իրար։
Եվ Բել մտքում ասաց.— Ես կըսպասեմ,
Մինչև հասնեն զորքերըս մեծամբոխ։
Եվ Հայկ տեսավ նրա հոգին դժխեմ
Եվ բորբոքվեց ի ոխ։
Առավ աղեղը լայնալին,
Լարեց աղեղը լայնալին
Եվ սայրասուր երեքթևյան յուր նետը արձակեց։
Եվ նետը սայրասուր՝ թռավ հասավ բռնապետին,
Կրծքի զրահը յոթնածալ՝ ծակեց,

Ծաղկած այգեստանները չորս բոլոր.
Այդ մեծ գործերն են Արայի:
Ապրի՛ մեր քաջ և գեղեցիկ Արան,
Աշխարհասեր, աշխարհաշեն Արան,
Մեր սիրտը՝ երգ, դարերը՝ երգարան,
Անմահը սերն է Արայի»:

## ԶԱՅՆՈՐ

*Ինչ գեղեցիկ երգեց։ Ցնծաց ոսկին,*
*Վառվեց վաճառական Կաթմոս։*

## ԿԱԹՄՈՍ

*Այո, վարձըդ, բարեկա՛մ, մենք տեր ենք մեր խոսքին։*
*Իհարկե, երգըդ վայելուչ էր։ Բայց ափսոս,*
*Որ կար սաստիկ նըկատելի մի թերություն։*
*Չէի՞ր կարող ավելացնել, թե մեր արքան,*
*Այսպես, ասենք, աշխարհակալ է, իմաստուն,*
*Գընաց, տիրեց Շամիրամին, առավ Ասորեստան։*

## ԱՐԲԱԿ (Հարբած օրորվելով)

*Ինչ ես ասում եմ, երգը լավ էր ինձ համար,*
*Քանզի ոմանց ի խայթ այնտեղ չըկար*
*«Ասորեստան»։ Այս երգը իսկ բխում էր իմ սրտից։*
*Միայն ափսոս, որ բան չասավ չքնաղ մեր Նուարդից։*

## ՏԵՐ ԳՈՒՍԱՆ

*Ամեն սերունդ յուր հերթն ունի այս աշխարհի վըրա,*
*Ամեն գուսան յուր երգն ունի, ամեն ծաղիկ՝ մի գույն,*
*Արդ՝ բամբիռի իմ բարեկամ, ես հույժ ուրախացա.*
*Ճարտար էր երգըդ հորինված, հաճո էր իմ հոգուն։*
*Կարող եմ ես հանգիստ մեռնել՝ տալով ավանդըս քեզ.*
*Հայոց երգի ազնիվ ճամփան փառքով շարունակես։*
*Բայց մեր հետև կանգնած է նոր սերունդը։ Ահա,*
*Հայոց Տիկնոջ պատկերը սուրբ ներբողելու է նա։*

Պատանի գուսանը համբուրում է ծեր և տարեց գուսանների ձեռքերը։

ԱՐԲԱԿ

Չընհանդգնես. արդար երգեց այս պատանին։

ԿԱԹՄՈՍ

Գուսա՞նն է որոշողը. մեր արքան
Ի բա՞ց մերժե՛, թե ընդառաջ քայլե Շամիրամին։
Իսկ ես ասում եմ. նըվաճե՛նք Ասորեստան։

ԱՐԲԱԿ

Սըտում ես... դու տենչում ես տենչագին,
Որ կուլ գընանք Սենաարի խառնիճաղանջ ազգին,
Որ մոռանանք Նախնյաց ազատավանդ լեզուն,
Եվ աղոթենք ասորերեն...

ԿԱԹՄՈՍ

Այդ առավել է իմաստուն։
Ինչիս եք հարկ և՛ դուք, և՛ ձեր ուրարտական
Այդ կըռընչյունը։

ԱՐԲԱԿ

Զա՛յնըդ... դավաճա՛ն։

ՁԱՅՆԵՐ

Հանգստացի՛ր, հանգստացի՛ր, գինեվարպե՛տ Արբակ։

ԱՐԲԱԿ

Թողե՛ք, րամբառակին առնեմ ոտքերիս տակ...
Ջարդեմ, փշրեմ, պոկեմ հայրենապիղծ լեզուն...
Հայրենադա՛վ, օտարալեզը՛դ... շո՛ւն...

ԿԱԹՄՈՍ

Կեցի՛ր, կեցի՛ր... փետտեմ ես այս աքաղաղին։

ԾԵՐ ԳՈՒՍԱՆ

Ըսթափվեցե՛ք, գալիս են քըրմապետն ու թագուհին։

ՆՈՒԱՐԴ

*Իսկ դու, իմ Վարուժա՛ն, թամբիր ու պատրաստի՛ր*
*իմ ձին,*
*Ես կամենում եմ մասնակցել ձիարշավին։*
*Եվ այս անգամ իմ մրցակիցը դու ես, լա՞վ։*

ՎԱՐՈՒԺԱՆ

*Պատրաստ եմ, թագուհի՛։*

ՆՈՒԱՐԴ

*Իսկ մինչ այդ՝ մնաք բարյա՛վ։*

ԱՐԲԱԿ

*Քեզ, Անահի՛տ սատար, տիկի՛նդ փառապանծ,*
*Հրամայի՛ր վահագնապաշտ քրմապետին*
*Տրամադրելու յուր բազմափորձ ականջը մեր վեճին։*

ՆՈՒԱՐԴ

*Կա՛ց, քրմապետ և հաշտեցրո՛ւ մարդկանց։*
Գնում է չքախմբի ուղեկցությամբ

ՇՇՈՒԿՆԵՐ

*Ինչ հեզությո՜ւն...*
*Ինչ վեհությո՜ւն...*
*Ինչ գա՜նձ...*

ՔՐՄԱՊԵՏ

*Հանուն Անահիտի եղեք ճշմարտախոս.*
*Վարդավառի այս տոնը համայնապարփակ*
*Ինչո՞ւ եք պղտորել... խոսի՛ր, Արբակ։*
*Մեկնաբանի՛ր, վաճառական Կաթմոս։*

ԱՐԲԱԿ

*Ով խոսակիցդ միաբան հայոց աստվածների*
*Մեր վեճը անձնական դրդապատճառ չունի։*

Արա այնպե՛ս, որ Արամա որդին
Ի բաց մերժե գայթակղությունը ցոփ Շամիրամա։
Քանզի եթե հայոց արքան Ասորեստան գընա,
Կը թառամի Նուարդ՝ պարծանքը մեր հայոց այգու,
Կըթառամես, կաղոտանաս և դու
Օգնի՛ր մեզ, Անահիտ, զի վիշապները վերըստին
Բռնել են երկնքի դարբասը կապուտակ,
Եվ չի գալիս անձրև, և ցասմավառ արևի տակ
Խանձվում է դաշտը ցորյանի և թառամում այգին։
Դու Վահագնից բարեխոսի՛ր, որ արշավե երկինք
Եվ հալածե վիշապներին խարտյաշ յուր շանթերով,
Անձրև՛ տեղա և լիանա՛ երկիրը կենարար ջըրով։
Անսա՛ պաղատանքիս, ո՜, լուսատի՜նք...

### ԿԱԹՄՈՍ

Անսա և ինձ, ո՜վ քաջամայրըդ Անահիտ,
Թո՛ղ ուշանա անձրևը, չորությո՛ւն և սուր արևից,
Զի կարասներըս, կճուճներըս, կուժ-կուլան
Դըրել եմ տոթակեզ կըտուրներիս, որ չորանան...
Արա այնպե՛ս, որ մեր արքան տիրե Շամիրամին
Եվ բաց անի ճանապարհները քո փառքի առաջ,
Վահագըն արշավե, Իշտար դառնա քեզ աղախին,
Եվ ուռճանա վաճառականությունն աստվածահաճ։

### ՁԱՅՆԵՐ

Արքա՛ն... Արքա՛ն... Արքա՛ն...

**Արան և Վաշտակը երևում են պատշգամբում**

### ԱՐԱ

Հանուն Անահիտի, եղեք ճշմարտախոս,
Վարդավառի այս տոնը համայնապարփակ
Ինչո՞ւ եք անպատվել... Խոսի՛ր, Կաթմոս,
Մեկնաբանի՛ր, գինեվարպետ Արքակ։

### ԿԱԹՄՈՍ

Թող շա՜տ ապրի վահագնատուր արքան.

Ըմբոստությունն է յուր արքայի հետ խոսում։
Եվ դու հանդգնեցիր, Կաթմոս վաճառական,
Խորհուրդներովդ հույժ բարեխոստում
Օգնել ինձ... Հեռացե՛ք, արքա եմ ես,
Այլ ոչ նժույգ՝ լծված ռամիկների կառքին։
Ես կընթանամ այնտեղ, ուր տիրապես
Զգտում է իմ վահագնապաշտ հոգին։

ԶԱՅՆԵՐ

Ավա՜ղ, ավա՜ղ մեր հույսերին։

ՎԱՇՏԱԿ

Լռի՛ր, ամբոխ ապերասան։
Եվ մի քննիր գործերը արքայիդ։
Այսուհետև թո՛ղ ոչ մի շինական
Չըհանդգնի ողբալ առ Անահիտ
Արքայական ապարանքի առաջ։
Չքվե՛ք անմիջապես...

Արամ ու Վաշտակը գնում են:

ԱՐԲԱԿ

Եղո՜ւկ. փոխվել են բարեհաճ
Ժամանակները Հայկ նահապետի,
Երբ կարեկցում էին իրար սեպուհ և շինական։
Հիմա տերերը ժանտամիտ են, ամեհի։
Ռամիկն արտոնություն չունի, նրանց եղեռնական
Գործերն իմանալու... Ավա՜ղ, հազա՜ր ավաղ...
Օգնի՛ր դու մեզ, վիշապաքա՛ղ...

ՎԱՐԱԳՈՒՅՐ

*Իսկ ինձանից խըլում ես արդ նըրան.*
*Դու մի՞թե չես հավատարիմ սիրո պաշտպան։*
*Թե՞ քեզ հաղթել է ասորոց Իշտար աստվածուհին՝*
*Ի ստորացում և անարգանք մեր հայկազյան ցեղին…*
*Ների՛ր ինձ… հանդըգնում եմ քո դիմաց…*
*Եթե վանել եմ ամուսնուս իմ անարժան վարքով*
*Եթե ինձնից հըզոր է Շամիրամ յուր հըմայքով,*
*Եթե ճախրել է սերս յուր բընից անվերադարձ,*
*Ապա այնժամ ամրապընդիր դու իմ հոգին,*
*Որ չար մարդիկ իմ արցունքով չուրախանան,*
*Որ չըհասնեն հառաչանքներըս ոսոխին,*
*Չըփըշըրվի իմ կանացի հպարտության*
*Ադամանդյա կեղևը…*
*Պահպանի՛ր դու ինձ,*
*Հուսալքման պահին հասի՛ր, ամենամա՜յր,*
*Եվ ձեռքըս ե՛տ պահիր մահվան ըմպանակից,*
*Որ ես ապրեմ որդուս՝ Անուշավան որդուս համար։*

Տագնապով մտնում է Նանեն։

НАНЕ

*Արքան գալիս է, տիրուհի՛, ըզգաստացի՛ր։*

НОИАРД

*Շնորհակալ եմ, իմ Նանե՛, որ կանխեցիր։*

**Նանեն գնում է, մտնում է Արան մտազբաղ ու երազկոտ։**

АРА

*Նուա՞րդ, իմ աղավնյա՛կըս, արտասվե՞լ ես դու։*

НОИАРД

*Ոչ, աղոթում էի։*

АРА

*Ինչո՞ւ։*

НОИАРД

*Ի կյանքըս քո և մեր Անուշավան որդու։*

/ՆՈՒԱՐԴ

Հատուցելուց առաջ դեռ հարկ է որոշել,
Թե ով է պարտ։ Օ՜, ո՛չ․ իզուր ես դու, Արա՛,
Առնում պարտքի բոլոր ծանրությունը քեզ վրա։
Եթե պարտքից խոսենք՝ ես պարտ եմ առավել,
Քանզի ես քեզանից եմ ըստացել
Ե՛վ քեզ, և՛ մեր Անուշավան որդուն։
Սա չէ՞ որ թանկ է, քան անմահություն։
Շընորհակալ եմ ես հայոց աստվածներից.
Նըրանք տըվել են ինձ այնքան առատ,
Որ եթե այս վայրկյան իսկ մահ տան ինձ,
Դարձյալ ես կանվանեմ նըրանց արդարադատ,
Քանզի մահկանացուն, եթե հասել է նա գագաթ,
Ուրեմըն վաղ կամ ուշ կըթավալվի ներքև։
Միայն անմահների համար է հարատև
Երջանկությունը։

ԱՐԱ

Օ՜, իմ դիցուհի։
Վայել է քեզ անմահ երջանկություն։
Ով թո՛ղ նետահարվի այն սիրտը երերուն,
Որ բաժանված երկու բանակների՝
Պատերազմում է ինքն իր հետ։

ՆՈՒԱՐԴ

Մի՛ անիծիր այդպես.
Ամեն մի պատերազմ մեկի հաղթանակով կըվերջանա։

ԱՐԱ

Ես սարսափում եմ քեզ համար... դըրուժան եմ ես...
Նուա՛րդ, ների՛ր ինձ քո հոգով բարձրագընա...
Ինձ կախարդել է Շամիրամ... Օ՜, ո՛չ․ ինձ մի՛ ներիր,
Այլ անգոսնի՛ր և անեծքով շանթահարի՛ր։

ՆՈՒԱՐԴ

Որ կախարդված ես դու, Արա՛, այդ ես գիտեմ վաղուց։
Դաժան մի վիշտ է այդ մեր աշխարհին և ինձ։

ՆՈՒԱՐԴ

*Օ՜, ես անմիջապես կըհեռանամ, արքայամա՛յր։*

ԱՐՔԱՅԱՄԱՅՐ

*Ես քեզանից չունեմ բընավ իսկ մի գաղտնիք։*
*Բայց արդ եկել եմ չարաոիթ մի հանդիպման,*
*Որով չէի ցանկա հուզել հոգիդ անապական։*
*Ուստի բացակայի՛ր, հոգյա՛կըս, Անահի՛տ ընդ քեզ։*

Նուարդը և Նանեն գնում են

ԱՐԱ

*Լըսում եմ, մա՛յր։*

ԱՐՔԱՅԱՄԱՅՐ

*Դու հարկ է դեռ երկա՞ր շարունակես*
*Ամոթաբեր այս խաղը։ Կա՞ արդյոք վախճան։*

ԱՐԱ

*Վախճա՞ն... Ես վերջացրել եմ, մա՛յր, մերժել եմ*
*ես նրան։*

ԱՐՔԱՅԱՄԱՅՐ

*Մերժե՞լ ես։ Արդ հապա ինչո՞ւ է ժամանել Նիրար։*

ԱՐԱ

*Անշուշտ մի կարևոր գործի համար։*

ԱՐՔԱՅԱՄԱՅՐ

*Մի՛ շըղարշիր, խնդրից մտքերըս մի՛ վանիր ի բաց,*
*Եթե կախարդուհուն իրոք դու լինեիր մերժած,*
*Այսինքըն՝ ոչ միայն խոսքով, այլև սրտով,*
*Նըրա դեսպանը չէր բարեհաճի կրկին։*
*Նա ժամանել է միևնույն իսկ խորհրդով,*
*Այդ քաջահայտ է քեզ, և՛ ինձ, և՛ ամենքին։*

ԱՐԱ

Դարձյալ, օ՜, մայր իմ, պահանջում ես դու անկարելին։
Դաշնակիցներ ենք, շաղկապված ենք սուրբ երդմամբ։
Այսօր ինձ կայցելե Նիրար՝ իբրև պատգամավոր։
Պատգամը ինչ է՝ կիմանանք։

ԱՐՔԱՅԱՄԱՅՐ

Այսօ՞ր։

ԱՐԱ

Այո՛, այսօր։

ԱՐՔԱՅԱՄԱՅՐ

Հետաձգի՛ր։

ԱՐԱ

Անկարելի է, մա՛յր,
Արդեն տրված է խոսքն արքայական։

ԱՐՔԱՅԱՄԱՅՐ

Եվ դու քո մեղսատարփ երազների համար
Պղծում ես ոսկեմայր Անահիտի անապական
Հանդեսը։ Այդ հանցանք է։ Սոսկալի՜։

ԱՐԱ

Մա՛յր, մի՞թե սերն իրոք հանցանք է։ Շատ բարի,
Եթե հանցանք է, արդ՝ ինչո՞ւ է հարսն արեգական
Բոցավառել այս հուրն իմ սրտի մեջ,
Ինչո՞ւ չի մոխրացնում, ինչո՞ւ է նա այրվում անշեջ։

ԱՐՔԱՅԱՄԱՅՐ

Անկամ և թուլամորթ մարդիկ,
Որ չեն կարող սանձահարել մի կիրք,
Այն հորջորջում են սեր, չքմեղանում սիրով։

Ես պարտ եմ Նուարդին...
          Իսկ Շամիրամ...
Կանչում է ինձ յուր անծանոթ հեռուն,
Ուր ինքն է յոթներանգ ծիածանված,
Ուր սավառնում է ոսկեթև երազների մեղուն
Անհայտ ծաղկի, չըճաշակած պտղի պարտեզներում։
Երկու կրակ... երկու աստված...
Օ, Շամիրամ, ես պապիրաթղթով մերժել եմ քեզ.
Ինչո՞ւ ես վերըստին հըղել դեսպան...
Դու խորամանկ ես, խելացի, դու քաջ գիտես,
Որ քեզանից եկած իրերն իսկ աննշան
Նայում են կախարդիչ քո աչքերով
Եվ ինձ դարձյալ բոցավառում սիրով։

Մտնում է Վարուժանը.

ՎԱՐՈՒԺԱՆ

Արքա՛, դու հրամայել էիր կանչել զորավարին։

ԱՐԱ

Այո՛։ Իսկ դու առուն տար իմ նժույգը, Արծվենին,
Մաքրի՛ր, թամբի՛ր և պատրաստի՛ր...

ՎԱՐՈՒԺԱՆ

Լըսում եմ, տե՛ր արքա։

Գնում է։ Մտնում է Վաշտակը։

ՎԱՇՏԱԿ

Օրհնյա՜լ է Վարդավառ։ Դու ինձ կանչե՞լ ես,
                                        իմ արքա՛։

ԱՐԱ

Այո՛, Վաշտա՛կ, ես միշտ կարոտ եմ քո
                                        խորհուրդներին։

*Ինչպես Երասխ հոսում էր դեռ կարկաչաձայն*
*Հայոց լեռների մեջ, Հայոց հովիտներից։*
*Կարծես նա ինձ էր ափսոսում...*
*Կարծես կանչում էր ինձ։*

ՎԱՇՏԱԿ

*Երազդ չարագույժ է, բարեկա՛մ։*
*Երասխ Հայոց տիկինն է, իսկ հեղեղը՝ Շամիրամ։*
*Ըզգուշացի՛ր Շամիրամից.*
*Նա մահացու է քեզ համար և տերության...*

ԱՐԱ

*Բոլորդ նույնն եք բարբառում միաբերան.*
*«Նա մահացու է, մահացու»... Ինչո՞ւ։ Ինչո՞վ։*
*Նա ինձ սիրում է։*
*Մի՞թե մահացնում են սիրելով։*

ՎԱՇՏԱԿ

*Սիրում էր Նինոսին նույնպես...*
*Բայց ըսպանեց նըրան։*

ԱՐԱ

*Ո՛չ։ Չէր սիրում։*
*Նինոս նըրան տիրել էր բռնահաճ։*
*Իսկ ինձ՝ ազատ, ինքնահոժար սիրեց։*
*Նինվեիայից մեր մեկնելուց առաջ*
*Նա ինձ յուր մոտ հրավիրեց*
*Եվ արտասուքը աչքերին՝ ասաց.*
*Արա՛, սիրում եմ քեզ և սըրանից հետո*
*Ես ինչ որ կատարեմ ահեղ կամ փառապ*
*Բոլորը քեզ համար է, քո սիրո։*
*Իսկ դուք նըրան նսերկում եք սևամիտ գրըրույցներով։*
*Պառակտիչնե՛ր։*

ՎԱՇՏԱԿ

*Պառակտիչնե՞ր... Ուրեմըն ե՞ս եմ պառակտիչ.*
*Ո՛չ, թագավո՛ր, արդյոք չըկա՞ր քո մտայնում*

Նա՛ քեզ կիշխե և կըսպանի շուտով կամ ուշ,
Կասպատակե նաև աշխարհըդ բարելից,
Եվ յուր նախնյաց նըման ուխտադըրուժ՝
Քո պերճ քաղաքներից և քո կոթողներից
Կարտաքնչե սեպագիրներըդ սեփական,
Ապա կարձանագրի լեզվով ասորական.
«Այս քաղաքները ես եմ կառուցել»,
«Այս ջրանցքները ես եմ կառուցել»...

ԱՐԱ

Չեմ հավատում, Վաշտա՛կ, մըռայլատես է քո հոգին։
Նախ մի՛ կարծիր, թե ես կարող եմ կատարել մի բան,
Որ հակառակ է հայրենյաց շահին։
Օ՜, ինձ վիշապաքաղ Վահագն է պահապան։
Չեմ հավատում, որ ինձ նենգել կարող է Շամիրամ.
Նա դաշնակից է ինձ և բարեկամ։
Ինչո՞ւ ես ծիծաղում...

ՎԱՇՏԱԿ

Որ զայրացնեմ իմ արքային։
Մանո՛ւկ, լըսի՛ր ինձ. աշխարհում
Հարգում են լոկ հըզոր բազե կամին,
Իսկ թույլ բարեկամին՝ արհամարհում,
Որքան իսկ նա ազնիվ լինի։

ԱՐԱ

Հանգամանքները դու խառնում ես, ծերունի՛,
Ազնիվ եմ ես, բայց թույլ՝ ամենևին։

ՎԱՇՏԱԿ

Կըթուլանաս, եթե ազնվությունըդ ոսկեկար
Չավելացնես ըզգուշությունն իբրև աստառ։
Անզրադառնանք դարձյալ քո երազին,
Կրկնում եմ, ահավոր զուշակություն էր դա,
Շամիրամից քեզ մահառիթ վընաս կըգա։
Սիրի՛ր նըրան, եթե այդքան ծարավ է քո հոգին,

## ՔՐՄԱՊԵՏ

*Ով ոսկեմա՜յրդ Անահիտ, ով Դերկետո՛,*
*Բաշխի՛չդ սրբազան ջրի և ոռոգման,*
*Դու, որ սատարն ես բյուրաստանյա սիրո,*
*Հզոր հովանավորըդ մայրության,*
*Որ վայելում ես Վահագնի փեսայությունը ջինջ։*
*Համայնափայլ արևի տակ չի կատարվում ոչինչ,*
*Որ հակառակ է Վահագնի և քո հավանության։*
*Վարդավառի քո սրբազան այս հանդիսին*
*Ահա դիմում եմ քեզ և Վահագնին վիշապաքաղ,*
*Որ է ասված, և՛ հայր, և՛ ամուսին,—*
*Պահե՛ք հայոց աշխարհը ձեր՝ երանությամբ խաղաղ,*
*Պահպանեցե՛ք ամուսնության երդումն անքակտելի,*
*Տվե՛ք հայոց անդաստանին բերքի առատություն,*
*Պայծառացրե՛ք անունը հայկազյան քաղաքների,*
*Հովանավո՛ր եղեք թագավորին և թագուհուն։*

## ԱՐՔԱՅԱՄԱՅՐ

*Շնորհակալ եմ քեզանից, ոսկեբերա՛ն,*
*Դու, որ գիտես մեր սիրտը աղոթքով դյութել։*
*Հրամայում եմ արդ, որ ծերունին գուսան*
*Երգե հանուն Բիայնայի պայծառության,*
*Ինչպես կռվել են տիտանները Հայկ ու Բել։*

## ԾԵՐ ԳՈՒՍԱՆ

«Եվ Բել-Նեմրովդ ասաց.
Ես եմ ինքնակալ միածին աստված,
Եվ իմն է տիեզերք, և՛ լույս, և՛ ժամանակ,
Ես ինչ որ մտածեմ՝ դուք հարկ է նույնը մտածեք,
Ես ինչ որ կամենամ՝ դուք հարկ է նույնը կամենաք.
Եվ Հայկ պատասխանեց. Երբեք...»:

Մտնում է պալատական մունետիկը·

## ՊԱԼԱՏԱԿԱՆ ՄՈՒՆԵՏԻԿ

*Ազնիվ Ասուր-Զաքքու և իմաստուն Նիրար։*

*Որ մենք հարկադրված ենք՝ ակամա՝*
*Զրկվել մի պահ ձեր ընկերությունից։*
*Դու կա՛ց, Վաշտա՛կ, դու հարկավոր ես ինձ։*

Բազմությունը դուրս է գնում:

*ԱՐՔԱՅԱՄԱՅՐ*

*Նուարդ, իսկ դու ինչո՞ւ ես դուրս գընում։*

*ՆՈՒԱՐԴ*

*Արքայամա՛յր, տերունական գաղտնի դրույցներում*
*Անփորձ, գուցե նաև անօգտակար եմ ես։*

*ԱՐՔԱՅԱՄԱՅՐ*

*Արքա՛, հըրամայի՛ր, որ թագուհին մընա։*

*ԱՐԱ*

*Եվ չեմ իսկ պահանջել, Նուա՛րդ, որ դու բացակայես։*
*Վերադարձի՛ր, նստի՛ր գահիդ վըրա։*

*ՆԻՐԱՐ*

*Ների՛ր, արքա, որ հանդգնում եմ ես*
*Ինձ թույլ տալ մի խոնարհ դիտողություն.*
*Ինձ Արմավիր բերող պատգամը բարձրագույն*
*Կարոտ է մի ունկընդրության՝ սաստիկ սահմանափակ։*

*ԱՐԱ*

*Ազնի՛վ Նիրար, Հայոց արքունիքում*
*Չէիր գտնի դու առավել գաղտնի օթյակ։*
*Ուստի պատմի՛ր, թե ի՛նչ է Շամիրամ առաջարկում։*

Նիրարը բաց է անում պապիրուսը, համբուրում է և հանձնում Ասուր-Գաբբուին, և սկսում է կարդալ:

*ԱՍՈՒՐ-ԳԱԲԲՈՒ*

«Ներում է մեծ հավերժափառ աստված,
Որդին Նուգիմուտի և սիրեցյալը Բահալի,

Արի՛ վեհանձնաբար ինձ հետ հանդիպելու,
Մեր սուրբ դաշինքը նոր երդմամբ ամրացրու,
Ապա խաղաղությամբ վերադարձի՛ր:
Քեզ չեմ հրավիրում Ասորեստան,
Որպեսզի անհընար դավադրության
Մըտապատկերը քեզ չըվախեցնի:
Դու ինքըդ որոշիր անունը ոստանի
Հայոց և ասորոց սահմանների վրա,
Ուր դու նըշում ես բաղձալի տեսակցությունը մեր:
Վերցրո՛ւ քեզ հետ, ինչքան ուզում ես դու, զորագնդեր,
Եվ ինչ որ հարկ է զգուշության համար, արա՛,
Եվ ինչ պայման, որ դու առաջարկես, Արա՛,
Ես այդ իսկ պայմանով քեզ ընդառաջ կըգամ:
Արդ ո՛ղջ եղիր և հաղորդիր սրտանըվեր ողջույն
Արքայամորըդ բարեկամ և թագուհուն:
Քեզ միշտ հավատարիմ և դաշնակի՛ցըդ Շամիրամ»:

Երկարատև լռություն.

### ԱՐՔԱՅԱՄԱՅՐ

*Դու լուռ ես, թագավո՜ր, պատասխանի՜ր։*

### ՎԱՇՏԱԿ

*Ների՛ր, Արքայամա՜յր, և թույլ տո՛ւր ինձ, արքա՛,*
*Առաջ, քան դու խոհերըդ հավաքես ծանրակշիռ,*
*Ես հանդգնեմ դատել։ Առաջարկված է նոր խնդիր*
*Եվ լուծելու դժվարություն չըկա։*
*Շամմուրամատ աստվածուհին*
*Փոխել է յուր պահանջը նախնական*
*Եվ արդ կանչում է մեր թագավորին*
*Մի սիրալիր տեսակցության։*
*Եվ մեր արքան, ըստ իս, չունի պատճառ*
*Այդ հրավերը մերժելու։*

### ԱՐՔԱՅԱՄԱՅՐ

*Մեղա՛ քեզ, ոսկեմա՛յր…*
*Եվ դու, Վաշտակ, բազմահամբավ խելքիդ*
*Ի հաստատում*

*Սակայն կարո՞ղ է իմ զավակը երջանիկ լինել*
*Եվ յուր աշխարհը, տերությունը պահպանել՝*
*Եթե դավաճանի սիրույն, ընտանիքին։*
*Պարծանք է աշխարհի գեղեցկուհուն տիրել,*
*Բայց այրամարդը պանծալի է առավել,*
*Երբ նա նրան զիջում է հայրենյաց պատվին։*
*Իսկ դո՛ւ, արքա՛, լըռո՞ւմ ես տակավին։*
*Մերժի՛ր, հանուն Բիայնայի պայծառության։*
*Մերժի՛ր, անմի՛տ, ապա թե ոչ քեզ կանիծեմ ․․*

## ԱՐԱ

*Մա՛յր, ես եմ ինքնակալ արքայազուն արքան*
*Եվ սարսափին խոնարհվելու սովորըս չեմ։*

Արքայամայրը բաց է անում կուրծքը անիծելու համար

## ԱՐՔԱՅԱՄԱՅՐ

*Ձեզ հետ եմ, ո՛վ տարտարոսի խավար դիցուհիներ,*
*Երբ նա որսի կըբարձրանա ազատ Մասիսն ի վեր…*

## ՆՈՒԱՐԴ

*Մի՛ անիծիր նըրան, Արքայամայր…*
*Սարսափելի է մայրական անեծքը, մահաբեր,*
*Եվ ե՛տ վերցրու, ինչ որ մտքով իսկ ցանկացար,*
*Քանզի ուժերը չարության գործում են անխընա,*
*Այնինչ դանդաղ է կատարվում բարին։*
*Մի՛ անիծիր։ Եթե Արան տենչում է, թո՛ղ գընա,*
*Գուցե և այդ է հարկ աստվածներին։*
*Եթե սիրո բոլոր խոսքերը բոցեղեն,*
*Որ ինձ ասել է մեր նախնյաց լեզվով նվիրական,*
*Նա կամենում է այժըմ մըրմընջալ ասորերեն,*
*Եթե Վահագնատիպ իմ ամուսին Արան*
*Թողնում է ինձ և մեր դեռածաղիկ որդուն,*
*Մի՛ անիծիր նըրան և տո՛ւր ազատություն,*
*Զի սերը հակառակ է բռնության։*
*Եթե տենչում է, թո՛ղ գընա։ Ես կը ներեմ նըրան*

*Հայոց և ասորաց աշխարհներին,*
*Թո՛ղ նա սրբագործե դաշնադրությունը մեր*
*Եվ դարեդար լուսավորե սերունդների ուղին...*
*Այսպե՛ս պատասխանիր, ազնի՛վ Նիրար։*

*ԱՐՔԱՅԱՄԱՅՐ*

*Փա՜ռք Վահագնին, մրրայլը փարատվեց։*

*ՆԻՐԱՐ*

*Օ, ոչ, Արքայամա՛յրդ մեծ,*
*Մրրայլը խտացավ դժբախտաբար,*
*Զի Շամիրամ չունի սովորություն*
*Յուր առաջարկների մերժումը հանդուրժել։*
*Եվ բախտ էր վիճակված լոկ ձեր որդուն՝*
*Առանց պատժվելու Շամիրամին մերժել։*
*Բայց մեկ անգամ։ Երկրորդ մերժումը*
*խիստ էր անխոհեմ...*
*Թեպետ ես կանխելու ջանքերը գործադրեցի։*
*Ուստի ես արդ ուրիշ իմաստություն չունեմ։*
*Շամիրամա վերջին պատգամը հայտնելուց բացի։*
*Ազնիվ դեսպան, շարունակիր խնդրեմ։*

Մեկնում է Ասուր-Գաբրուին պապիրուսաթերթը, որ բաց է անում և սկսում է կարդալ.

*ԱՍՈՒՐ-ԳԱԲՐՈՒ*

«Ներքուն է մեծ հավերժափառ աստված,
Որդին Նուզիմուտի և սիրեցյալը Բահալի
Եվ այլն, և այլն, և այլն..
Շամիրամ ասաց.
Արա՛, երբ գոռոզությամբ ապստամբված՝
Զրկամենաս ընդառաջել դու իմ բարի
Եվ հույժ ներողամիտ առաջարկին,
Ապա դու ինձ կընծայես երկիր.
Բայց այս անգամ նշմարելով իմ երեսի վրա
Ոչ թե սիրո ժպիտ, այլ սպառնալիքի կնճիռ:
Ես կփշրեմ ոգին, թեպետև պաղ երկաթ է նա,
Բանակներիս թափով ճզմախեղդիր

### ԱՐՔԱՅԱՄԱՅՐ

*Քեզ աջակից Վահագըն չարխափան,*
*Եվ աղոթքներըս թիկնապահ և սիրտըս քեզ վահան,*
*Իմ վեհանձնյա՛ որդի, իմ թանկագի՛ն...*

### ՆԻՐԱՐ

*Ավա՜ղ, հարբել ես դու պատանությամբ և մոռացել,*
*Թե ով է Շամիրամ և յուր բանակն ըսպառնալին։*

### ԱՐԱ

*Գնա Ասորեստա՛ն և հիշեցրո՛ւ, թե ով էր Բել,*
*Չմոռանաս նաև աղեղնավոր Հայկի՛ն...*

Ասուրները գնում են

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ԱՐԱՄԱՆՅԱԿ

*Աշխարհազո՞ր քաշեր, մեզ այս բլուրն է վիճակված*
*Իբրև պաշտպանության սահմանագիծ։*
*Արդ՝ հրաման, եթե մեզ մահ է սահմանել աստված,*
*Այն ընդունել կրծքից, այլ ոչ թե կռնակից։*
*Հեռվից նախ ամպրոպենք մեր նետերով երեքթևյան,*
*Իսկ երբ կանցնի ոսոխը հարձակման,*
*Թո՛ղ մեր վիշապաքաղ սըրերն այնժամ փայլատակեն։*

ԿԱԹՄՈՍ

*Արամանյա՛կ, նեղվում է կուրծքըս ասպարից,*
*Հըրամայի՛ր, որ այս փոկերըս քիչ մի արձակեն։*

ԱՐԱՄԱՆՅԱԿ

*Դարձյալ Արամանյակ անվանեցիր դու ինձ,*
*Հարյուրապետ եմ ես, այլ ոչ Արամանյակ նախկին։*
*Ռազմիկ Արբա՛կ, օգնի՛ր քո զինակցին։*

ԱՐԲԱԿ

*Արի՛, Կաթմո՛ս եղբայր, արի՛,*
*Օգնել իրար՝ դա պարտքն է քաջ ռազմիկների։*

ԱՐԱՄԱՆՅԱԿ

*Զոկա՛տ, զգա՛ստ, գալիս է ասպազեն արքան։*

Մտնում է Արամ Վաշտակի և մեծ շքախմբի ուղեկցությամբ՝ ռազմական զգեստավորումով։

ԶՈԿԱՏ

*Կեցցե՛ վահագնատիպ արքան։*

ԱՐԱ

*Այստե՞ղ ես դու, Արբա՛կ։ Եվ դո՞ւ,*
*Կաթմո՛ս վաճառական։*
*Չեղավ, չեղավ, չեղավ, բարեկամնե՛ր։*

Կազմել են հինգ հարյուր հազարանոց բանակ,
Զինված են տեգերով և պարսատիկներով,
Սրբով, աղեղներով և նետերով բազմաքանակ,
Ունեն անթիվ ռազմակառքեր, բաբան և աշտարակ
Եվ Ինդոսից բերած հիսուն փղեր մեծամարմին։
Եվ Շամիրամ, առած այս խառնամբոխը հոծ
Եվ գումարած ռազմի յուր հանճարին
Տուրտան Արտաբանի հանճարը բազմափորձ՝
Եկել է քեզ այցելության։

ԱՐԱ

Անարգ, անարգ, անարգ և դավաճան...
Ո՜, աստվածնե՜ր, ինչո՞ւ եք ձեր պատկերը պարգևում
Տարտարոսյան խուժդուժ հոգիներին։

ՎԱՇՏԱԿ

Արքա՛, թշնամիները Գերեզմանք նըվաճեցին։
Արևի տակ արքունական պերճանք է շողշողում։
Ահա ռազմակառքից իջավ ասպարափայլ մի կին։
Շամիրամի կեցվածքն է դա։ Նա ինքն է՝ անկասկած
Եվ այն բլրան վրա է նա կանգնած.
Որտեղ ժամանակներ առաջ կանգնած էր Բել,
Երբ նահապետն Հայկ նըրան նետահարեց։
Անմա՛հ Արա, դու երջանիկ ժամու ես հանդիպել,
Զի ոտքիդ տակ հայկյան բարձունքն է մեծ,
Եվ քո ձեռքին հայկյան աղեղն է միևնույն,
Վերցրո՛ւ աղեղըդ լայնալիճ, լարի՛ր,
Նըշան բռնիր Բելա դժխեմ ժառանգուհուն
Եվ անվըրեպ նետահարի՛ր։

ԱՐԱ

Տո՛ւր լայնալիճըս, Վարուժա՛ն, և տո՛ւր ինձ նետ,
Ես արդ կըպատառեմ այն կուրծքը լուսատինք,
Որի հետև այնքան խավար կա և աղետ
Ժողովրդոց համար... օգնի՛ր, Վահագըն...
օ՜, երկի՜նք...

*Եթե նա լոկ անոթ է նենգության։*
*Այսպե՞ս... կանգնած ես դու իբրև հանճարակերտ*
*կոթող...*
*Բայց կաշկանդում է ինձ դարձյալ մի բան...*
*Նրա հանդերձի հետ խաղում է խենթացած քամին...*
*Օ, ոչ, Վաշտա՛կ, ես չեմ նետահարի Շամիրամին.*
*Նա կին է։*

ՎԱՇՏԱԿ

*Վա՛յ կործանարար մոլորությանը։*
*Արքա՛, ես ծեր մի զորավար, ապա գուշակ եմ հին.*
*Չսպանելով նետիդ առաջ կանգնած քո ոսոխին,*
*Դու սահմանում ես մեր ոգին և ապագան,*
*Այսինքըն՝ թուլությունը հայկազյան ցեղի։*
*Մի՛ խաթարիր համբավն ապատավանդ այդ աղեղի,*
*Որ քո ձեռքին է արդ ժառանգաբար*
*Եվ քո բազկին է լոկ հնազանդում։*

ԱՐԱ

*Վաշտա՛կ, դու գուշակող ես հին և զորավար։*
*Սակայն սոսյաց նվիրական անտառներում,*
*Տերևների խորհրդավոր սոսափյունից*
*Ես ևս ուսանել եմ հոգեզմայլ գուշակություն։*
*Դու քո իմաստությամբ սովորեցնում ես ինձ՝*
*Սպանելով իմ թշնամուն՝*
*Փրկել նրան իր պարտության ցավի՞ց...*
*Ո՛չ, ո՛չ... ես այդ բարիքը չեմ անի, Վաշտակ։*
*Ահա նրա դրուժան դրոշակներն են հոխորտում*
*Հայոց գարնան ամփիվ արևի տակ։*
*Ես կջարդեմ նրրա բանակը մոլեգին մարտում,*
*Ես կբռնեմ նրրան իբրև գերի ռազմադաշտում,*
*Կըջախջախեմ նրրա ոգին, կփափկացնեմ նրան,*
*Եվ կստիպեմ, որ դաշնակից մնա ինձ*
*մեծ Ասորեստան։*
*Ուրեմն ի մա՛րտ։ Վաշտակ, նիզակավորներով*
*Դու Բահայյան զորքի շարժումը խափանի՛ր,*
*Իսկ ես իմ գնդի հետ քաջակորով*

Ես լոկ մի բան գիտեմ. եթե ոսոխն է քո դիմաց,
Ապա սպանի՛ր։ Եվ ես անշուշտ կսպանեի՝
Եթե իմ նետը այստեղից նըպատակին հասներ։
Բայց մեր աղեղներից նետված նետերն
Անզոր են անցնելու քառորդը այն տարածության
Որ յուր նետով կտրում է Հայկազուն արքան։

ԱՐԲԱԿ

Անշուշտ քո նետը չէր հասնի Հայկյան նետին։

ԿԱԴՄՈՍ

Քոնն է հասնում թերևս, մեծարան։

ԱՐԲԱԿ

Իմ նետը՝ ոչ, սակայն հասնում է իմ հոգին։

ԱՐԱՄԱՆՅԱԿ

Է՜յ, ռազմիկնե՞ր եք դուք, թե՞ իմաստակ աքաղաղներ։

ԿԱԴՄՈՍ

Գուցե ազնիվ հարյուրապետը մեզ մեկնաբաներ.
Արդա՞ր վարվեց արքան՝ չըսպանելով Շամիրամին։

ԱՐԲԱԿ

Որ Շամիրամ տեսնե յուր պարտությունը դառնագին։
Ո՛չ, մեր արքան արդար է, իմաստուն...

ԱՐԱՄԱՆՅԱԿ

Ինձ արդ նետեր են հարկավոր, այլ ոչ դատողություն։
Շարժվում է թշնամին՝ բլուրն ի վեր մագլցելով։
Նետահարե՛լ։

ԿԱԴՄՈՍ

Կեցի՛ր, նա շատ է իր թըվով։ Իսկ մենք...

*Հաղորդելու զորքին քո բարեհաճ*
*Այդ Հրամանը:*

### *ՇԱՄԻՐԱՄ*

*Ես Հրամայում եմ վերըստին:*
*Հաջողության սանդուղքներով բազմասայթաք*
*Ամենևին դու չես գընա հեռու,*
*Եթե Հրամայողին ուսուցանում ես՝ փոխանակ*
*Հրամանը անմռունչ կատարելու:*

### *ԱՍՈՒՐ-ԳԱԲՐՈՒ*

*Լըսում եմ:*

Մտնում է սուրհանդակը.

### *ՍՈՒՐՀԱՆԴԱԿ*

*Տիրուհի, արտոնություն տուր, զեկուցեմ:*

### *ՇԱՄԻՐԱՄ*

*Խոսի՛ր:*

### *ՍՈՒՐՀԱՆԴԱԿ*

*Ուրարտացի Արան դիմեց գրոհի*
*Տուրտան Արտաբանի զորքերի դեմ:*
*Եվ հոտը մեջտեղից կիսող գայլախմբի նըման*
*Մեր զորքը բաժանեց հատվածների:*
*Ճակատամարտը ծանր էր: Ինքը՝ մոլեգնած արքան,*
*Իբրև պըտտուտահողմը ահռելի,*
*Ռազմակառքից կռվի խորքերը մըխրճված՝*
*Հնձում էր աջ և ձախ ուրարտական թրով:*
*Մի պահ մեր դըրությունը ողբալի թըվաց,*
*Աջ թևը մեր զորքի փախավ հուսալքված,*
*Եվ քաջ Տուրտանը յուր զորքի կորուստը կանխելով*
*Մարտի նետեց փըղերը...*

### *ՇԱՄԻՐԱՄ*

*Ինչ... փըղե՞րը...*

*Այսպես եղավ։*

*Ուրարտացիք հանկարծ որոտաձայն,*
*Ինչպես շարքերը բոցավառ կերոններով,*
*Ընկան փղերի մեջ։ Փղերը սոսկահար փախան՝*
*Մերոնց իսկ ոտնատակ տալով ու ճզմելով,*
*Ուրարտացի հանդուգն արքան յուր ահավոր սըրով*
*Կտրեց տուրտանական փըղի կնճիթը մեջտեղից։*
*Եվ այն պահին, երբ զբաղված էր նա մոլեգնաջան՝*
*Դուրս քաշելով պողպատը կենդանու որովայնից,*
*Վըրա հասավ քաջաբազուկըն Արտաբան*
*Եվ թշնամուն անձամբ նետահարեց։*

ՇԱՄԻՐԱՄ

*Օ՛, դավաճան...*

ԹԻԳԼԱՏ

*Նա դեռ շնչում է, տիրուհի։*

Բերում են Արային և դնում Շամիրամի առաջ։

ՇԱՄԻՐԱՄ

*Ավա՜ղ ինձ... հեռացե՛ք։*
*Ահա և դու ընկած ես իմ առաջ... «գերված»։*
*Խոսի՛ր... Արա՛... այրող քո շրթունքները բա՛ց։*
*Դու լուռ ես։ Մի՞թե ձայնըդ չեմ լըսի երբեք...*
*Խոսի՛ր, պատմի՛ր, քեզ ո՞վ նետահարեց, Արա՛,*
*Անարգելով իմ կամքը, իմ հըրամանը արքենի։*
*Եթե նա բյուր անգամ իսկ ինքը յուր վերա*

Երկու հզոր տերությունները զարկելով իրար...
Երբ քո Արմավիրից վերադարձավ Նիրար,
Ինձ իմաստուն խորհուրդ բերեց՝ պաղատելով,
Որ չփորձեմ Ուրարտուին տիրել պատերազմով։
Բայց ես ազնըվախոհ իմ դեսպանին գլխատեցի
Եվ իմ աստվածային արցունքը թափեցի
Հայոց այս ահավոր հեղեղատներն ի վայր...
Բոլորը՝ քո սիրուն, բոլորը՝ քեզ համար...
Եվ ինչ մընաց այս աշխարհակործան խաղից,
Ոճիր և պարտություն... Վա՛յ ինձ... վա՛յ ինձ...
վա՛յ ինձ.. վա՛յ ինձ...

Քարացած նայում է դիակին։

ԱՐՏԱԲԱՆ

Ես հավատում էի սիրո բոլոր խոստումներին։
Կարծում էի, որ դու Հայոց թագավորին
Կանչում էիր Նինվե, որ ըսպանես՝
Երկիրը հեշտ նըվաճելու նըպատակով։
Ավա՜ղ ինձ, չարաչար խաբված եմ ես։
Դու Արային էիր ձգտում քո խռովատենչ հոգով,
Այնինչ ինձ գործածում էիր իբրև հիմար մի զենք։
Եվ արդ ահա պիտանությունըս վերջացավ...
Քանի որ փառքն այսքան ունայն էր... սերըդ՝ նենգ...
Այլևըս միտք չունի ապրել... մնաս բարյա՜վ...

Դաշույնով սպանում է ինքն իրեն: Շամիրամ նույն դիրքով նայում է Արայի դիակին՝ առանց նկատելու Արտաբանի ինքնասպանությունը։ Մտնում է սուրհանդակը։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Աստվածուհի՛, Հայոց հեծելազորը բորբոքված
Յուր արքայի հերոսական մահով,

Եվ խոստացի՛ր նըրանց ի ողջակեզ
Հարյուր պարարտ նըժույգ, երեք հարյուր եզինջ
ու եզ,
Հարյուր կարաս գինի և այլ ըմպելեղեն,
Ե՛վ այն ամենն, ինչ որ ազնիվ է և ընտիր։
Աստծներից ըս, ինչ որ կամենաս, բազմապատկի՛ր։

ԱՍՈՒՐ-ԳԱԲԲՈՒ

Լըսում եմ, տիրուհի՛։

Արայի դին տանում են։

ՇԱՄԻՐԱՄ

Թիգլա՛տ, ընտրի՛ր մի սուրհանդակ։
Տանել հրամանըս Բահալյան զորքի առաջնորդին.
Երկու ջոկատ ըզբաղեցնեն թող հակառակորդին,
Թո՛ղ մեկ ջոկատ առաջ շարժվի, կանգնի բըլուրի տակ,
Այս ձախակողմյան ձորով մի գումարտակ
Թո՛ղ թշնամու թիկունքը թափանցի։

ԹԻԳԼԱՏ

Աստվածուհի,

Ոսոխը ինքն է մեր թիկունքը սողոսկում,
Գուցե թողնես դու այս բըլուրն աղետալի,
Նըրանք մեզ օղակում են, օ՜, սոսկո՜ւմ...

ՇԱՄԻՐԱՄ

Սոսկո՞ւմ ես... Մի՞թե քո երակներում
Աքքատական ազնիվ արյուն չըկա.
Եվ մի՞թե դու անընդունակ ես մեռնելու
Առանց ահ ու դողի, դիրքիդ վըրա։

Նայի՛ր կանաչ երկրիդ վրա,
Եղո՜ւկ, եղո՜ւկ, հազա՜ր եղուկ...

Ողբամայրերի և ռազմիկների ուղեկցությամբ մտնում է սպառազեն Նուարդը և նստում կուլողների մեջտեղ։

ՆՈՒԱՐԴ

*Հրամայում եմ սուսերները ի պատյան։*

ՎԱՇՏԱԿ

*Օ՜, տիրուհի, վըհուկըն Շամիրամ է քո դիմաց.*
*Հրամայի՛ր, շանթահարեմ նըրան։*

ՆՈՒԱՐԴ

*Ոչ, իմաստուն իմ զորավարըդ, կա՛ց։*
*Դեռ ես այստեղ ունեմ դատաստանի հանդես.*
*Ուստի խնդրում եմ ինձ հընազանդես։*

Նուարդը և Շամիրամը կանգնում են դեմ-դիմաց և տևական լռությամբ դիտում իրար։

ՈՂԲԱՄԱՅՐԵՐ

Թառամեցար դեռածաղիկ,
Վայ-վավելե՜ր, վայ-վավելե՜ր...
Վաղազրուն, վաղամեռիկ,
Վայ-վավելե՜ր, վայ-վավելե՜ր...
Աշխարհն աղետ, արցունքն՝ արյուն,
Պղտոր կուլա Տոսպա առուն,
Վայ-վավելե՜ր, վայ-վավելե՜ր...

ՆՈՒԱՐԴ

*Դադարեցրեք ձեր ողբը, ողբամայրե՜ր։*
*Պատասխանի՛ր, ասա ինձ, Շամիրա՛մ,*
*Ո՞ւր է Արան... Հոգին մեր մոտ է և անմեռ,*

ՎԱՇՏԱԿ

Օ՜, Թագուհի՛, ես անկարող եմ դիմանալ
Այս ցոփ կախարդուհու ցնորքներին։

ՆՈՒԱՐԴ

Վաշտա՛կ, պատյա՛ն դիր սուրըդ բարկա․՛ այլ
Եվ հեզությամբ լըռի՛ր, երբ որ խոսում է Թագուհին։
Պատասխանի՛ր ինձ, ո՛վ հըրաշագեղ տիկին.
Արան չէր կամենում պատերազմել քեզ հետ,
Ձեր դաշինքին հավատարիմ էր նա հավետ։
Ինչո՞ւ ուրեմըն դուք ըսպանեցիք նըրան։
Պատասխանի՛ր։

ՇԱՄԻՐԱՄ

Տիկի՛ն, վաղուց եմ ես ընտելացել
Տալու լոկ հարց, այլ ոչ թե պատասխան։

ՆՈՒԱՐԴ

Ես անիծում եմ քեզ և ցեղըդ ամենայն,
Դուք սեր տարաք մեզնից, բերիք ատելություն,
Մենք ձեզ հավատարիմ եղանք, իսկ դուք՝ դըրուժան.
Ուստի թո՛ղ կործանվի Ասորեստան,
Ձեր տեղը թո՛ղ մոխիր մընա և լոկ անուն՝
Իբրև պագշոտության խորհըրդանիշ։

ՎԱՇՏԱԿ

Իսկ այժըմ, Թագուհի, վճռի՛ր արդար պատիժ։

ՆՈՒԱՐԴ

Իսկ ժողովուրդը Արայի՝ նըրա հոգով զինված,
Յուր սեփական մոխիրից հազար անգամ վերածընված,

ՁԱՅՆԵՐ

*Տեսանք, տեսանք... անմահ է դյուցազուն Արան...*

ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆ

*Փառք Արային... Փառք արքային անմահության...*

Արամանյակը ռազմիկների ուղեկցությամբ ներս է բերում ասորական համբավաբերին։

ԱՐԱՄԱՆՅԱԿ

*Ողջո՜ւյն քեզ, թագուհի՛։ Այս մարդը շրջմոլիկ*
*Յուր ասելով եկել է Նինվեից Հայոց աշխարհ,*
*Իբրև բերել է հույժ տերունական գաղտնիք*
*Շամիրամին հաղորդելու համար։*

ՆՈՒԱՐԴ

*Համբավաբե՛ր, դիմի՛ր քո թագուհուն։*

ՀԱՄԲԱՎԱԲԵՐ

*Անմահըդ Շամիրամ... Դավադրությո՜ւն...*
*դավադրությո՜ւն...*
*Ինձ առաքել է քըրմապետը Ներուի։*
*Նինուաս որդիդ և Բահալի քուրմերը նենգաբար*
*Զրկել են քեզ գահից, և քո զավակը պատանի*
*Արդեն միահեծան արքան է Ասորեստանի։*
*Ճեպի՛ր Նինվե, ապա թե ոչ ամեն բան վերջացավ,*
*Բայց մանավանդ ամբոխը ծնրադիր է Նինուասին...*

ՇԱՄԻՐԱՄ

*Ամեն բան վերջացավ...*

Նստում է, քարանում է նույն դիրքով, որով քիչ առաջ նայում էր Արայի դիակին.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Հայ թատերագրության դասական արժեքները *Լևոն Հախվերդյան* . . . . . 3

*Գաբրիել Սունդուկյան* Պեպո . . . 13
*Մուրացան* Ռուզան . . . 83
*Հակոբ Պարոնյան* Պաղտասար աղբար . . . 163
*Շիրվանզադե* Պատվի համար . . . . . . 229
*Վրթանես Փափազյան* Ժայռ . . . . . . . . 299
*Լևոն Շանթ* Հին աստվածներ . . . . . . . . . 369
*Դերենիկ Դեմիրճյան* Քաջ Նազար . . . . . . . 445
*Նաիրի Զարյան* Արա Գեղեցիկ . . . . . . . . . . . 519

ИБ 2832

Հանձնված է շարվածքի 3.08.84 ։ Ստորագրված է տպագրության 18.01.85։
ՎՖ 09487։ Ֆորմատ։ Թուղթ՝ տպագր. № 2։ Տառատեսակ «Գրքի սովորական»։ Տպագրությունը՝ բարձր։ 37,2 պայմ. տպ., մամ.։ 28,7 հրատ. մամ.։ Տպաքանակ 30 000 Պատվեր՝ 2333։ Գինը 2 ռ. 60 կոպ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван 9, ул Теряна, 91

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65։

Типография № 1 Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжиой торговли. Ереван, ул Алавердяна, 65.